

ՀԱԿՈՒՔ ՉԱՔՐՅԱՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հայոց ցեղասպանությունը, ցեղասպանության
թուրքական ժխտողականությունը, կեղծարարությունն
ու հայատյացության դրսևորումները

ՊՐԱԿ Բ

Modus
Vivendi

ԵՐԵՎԱՆ 2017

9 (47.925)
9-31
h2

գրադարան

ՀԱԿՈՒ ՉԱՔՐՅԱՆ

ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

5839

Հայոց ցեղասպանությունը,
ցեղասպանության թուրքական
ժխտողականությունը, կեղծարարությունն ու
հայալոյսացության դրսևորումները

ՊՐԱԿ Բ



www.modusvivendicenter.org

ԵՐԵՎԱՆ
2017



ժողովածուն հրատարակվում է **Գուգարաց Թեմի Առաջնորդ, Գերաշնորհ Տեղապետ Արք. Չուլջյանի** քաջալերանքով, օրհնությամբ ու մեկենասությամբ, ի հիշարակ յուր ծնողներ աղիյամանցի **Սարգիս** և ուրֆացի **Վարդանուշ Չուլջյանների**:

Չ 317 Չաքրյան Հ. Հոդվածների ժողովածու. Հայոց ցեղասպանությունը, Ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, կեղծարարությունն ու հայատյացության դրսևորումները: Պրակ Բ: Երևան, Ասողիկ, 2017: 300 էջ:

Երկհատոր այս ժողովածուն ընդգրկում է Հ. Չաքրյանի 2001-2013թթ. «ԱԶԳ» օրաթերթում հրատարակված հոդվածները, որոնք առնչվում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, Ցեղասպանությանը Քեմալ Աթաթուրքի մոտեցման, թուրքական ժխտողականության, կեղծարարության և հայատյացության խնդիրներին: Ժողովածուի մեջ տեղ են գտել Թուրքիայում Հայոց ցեղասպանությունը ճանաչող մտավորականների, Ցեղասպանության հարցին յուրովի մոտեցում ցուցաբերող թուրք իսլամականների, ինչպես նաև քուրդ գործիչների և հեղինակների խոստովանության բնույթ կրող հրատարակումների թարգմանությունները: Միաժամանակ անդրադարձ է կատարվել ասորիների, պոնտացի հույների ցեղասպանություններին և Դերսիմի զանգվածային կոտորածներին, ինչպես նաև հայ և թուրք հեղինակների աշխատություններին: Նախատեսված է Հայոց ցեղասպանության խնդիրներով հետաքրքրվող պատմաբանների և ընթերցողների համար:

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝
Դավիթ Օ. Աբրահամյանի

ՀՏԴ 32.001:93/94
ԳՄԴ 66.0+63.3



ISBN 978-9939-50-365-3
«Ասողիկ» հրատարակչություն

Հոդվածների ժողովածու. Հայոց ցեղասպանությունը, Ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, կեղծարարությունն ու հայատյացության դրսևորումները: Պրակ Բ
© Հակոբ Չաքրյան, 2017

Collected Articles: The Armenian Genocide – Turkish Denial, Falsification and Armenophobia. Part II [in Armenian]
© Hakob Chaqryan, 2017

ՄՈՒՍՏԱՏԱ ԱՔԵՄԱԼ ԱԹԱԹՈՒՐՔՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

23.02.2002

ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԻՔԻՅՈՒՄ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԵՎ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԿԱՅԵԼ Է ՔԵՄԱԼ ԱԹԱԹՈՒՐՔԸ

Վերջին համարներում «Ազգը» անդրադարձավ Հայաստանում Իսրայելի դեսպան Ռիվկա Կոհենի անփառունակ հայտարարությունների առնչությամբ ՀՀ ԱԳՆ-ի բողոքի նոտային և դրա պատասխանին, որը տվել է Իսրայելի ԱԳՆ-ն: Անդրադարձում փորձ արվեց ցույց տալ, թե ինչպես թուրքական պետությունն ուրանում է Մեծ եղեռնի իրողությունը, հրեականը՝ իր ժխտողական դիրքորոշմամբ հիմնավորում է ուրացումը, իսկ Բեռնար Լուիսի, Հի Լայնի, Հիթ Լաուրիի նման պատմաբաններ «գիտական հիմքի» վրա են դնում իրենց թուրք գործընկերների կեղծարարությունը:

Հարկ է, սակայն, նշել, երբ խոսքը վերաբերում է իսրայելցի պատմաբան Հի Լայնին և նրա ազգակից Բեռնար Լուիսին, ապա հարցի էությունը սուկ կեղծարարության գիտական հիմքով չի սահմանափակվում: Թուրքական մամուլի վկայությամբ, վերջիններս թուրք պատմաբաններին խորհուրդ են տալիս փոխանակ հայերի կոտորածը ժխտելու՝ առաջ քաշել «հայ-թուրքական փոխադարձ կոտորածների» տեսակետը և աշխատել դրա վրա:

Աշխատանքները շարունակվում են: Հատկանշական է, որ դրանց, պատմաբաններից բացի, մեծ նպաստ են բերում նաև հայտնի թուրք լրագրողները: Թերևս նրանցից «Հյուրիեթի» գլխավոր խմբագիր Էրթուրդուլ Օզքյոքն առավել հայտնի է: Ուստի Մեծ եղեռնի հարցում թուրք հասարակությանն ապակողմնորոշելու նրա հնարավորությունները անհամեմատ մեծ են, քան պատմաբաններինը:

Ի տարբերություն Օզքյոքի, թուրք սոցիոլոգ Թաներ Աքչամը հայտնի է նաև Հայաստանում: 2001թ. դեկտեմբերի 14-ին «Ակօում» հրատարակված հոդվածով, որը կրում է «Տարօրինակ գրություն՝ տարօրինակ տրամաբանությամբ» խորագիրը, նա քննադատում է թե Օզքյոքին և թե ելակետ ընդունելով ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի իթթիհադականների օրոք իրենց տներից միլիոնավոր քրիստոնյաների արտաքսման և սպանության մասին խոստովանությունը՝ փաստորեն, արժանի պատասխան է տալիս ինչպես թուրք լրագրողներին, այնպես էլ պատմաբաններին, որոնք ոչ միայն ժխտում են Հայոց ցեղասպանությունը, այլև դրա միջազգային ճանաչումը դիտում են իբրև խարդավանք և դավադրության դրսևորում ընդդեմ թուրք ժողովրդի: «Թուրք-հայկական

հաշտեցման հանձնաժողովը» վերականգնելու միտումների առկայությամբ չափազանց ուշագրավ է դառնում հոդվածում Աքչամի «Թուրք-հայ-ամերիկյան գործարար միության» ստեղծմանն առնչվող տեղեկությունը: Ստորև թարգմանաբար ներկայացնում ենք Աքչամի հոդվածի մեզ հետաքրքրող հատվածը.

«Օգբյորքի հոդվածում թերևս «թուրքի, թրքության մասին թուրքերի ճառախոսությունն» արտահայտությանն առավել համապատասխանում է «մեր ժողովրդին մարդկության պատմության մեջ իբրև «ցեղասպան» ներկայացնելու ձգտում ունեցող ֆանատիկներ» արտահայտությունը: Ըստ երևույթին, հենց սա է մեր թուրքերի գլխավոր խնդիրը: Այս կարգի ճառախոսությունների պատճառով է, որ պատմության մեջ իրագործված սպանությունները չենք կարողանում մարդասպանություն անվանել: Դրա համար էլ առ այսօր շարունակում ենք մեր վրա կրել պատմական այդ բիծը:

Իմանալով այս ամենի մասին, ակամա վերհիշում ես Մուստաֆա Քեմալի՝ 1926թ. օգոստոսի 1-ին Los Angeles Examiner թերթին տված հարցազրույցը: Ահա թե ինչ է ասել Մուստաֆա Քեմալն իթթիհարականների մասին. «**Ես այս ինտրիգաններից ցույց կտամ, որ մարդասպանների կամ սրանց մահաշունչ ծրագրերի միջոցով անհնար է կործանել Թուրքիայի Հանրապետությունը: Երիտթուրքական կուսակցության այս թափթփուկները, որոնց պեպք է պատասխանարկության ենթարկել իրենց տներից զանգվածաբար արտաքսված և դաժանորեն սպանված մեր միլիոնավոր քրիստոնյա հպարակների կյանքի համար, իրենց խելոք չեն պահել հանրապետական օրենքների ներքո: Նրանք, որ մինչ այդ սովոր էին թալանի, գողության, կաշառակերության, թշնամաբար հակադրվեցին օգրակար գործ կատարելու և իրենց ապրուստն ազնիվ քրտինքով վաստակելու ամեն գաղափարին կամ առաջադրանքին:**

Ընդդիմադիր կուսակցության կեցվածքով, երկիրը մեր ժողովրդի կամքին հակառակ Աշխարհամարտի մեջ ներքաշած այս փարրերը, որոնք էնվեր փաշայի արյունահեղ կրքերին հագուրդ տալու համար թուրք երիտասարդությանը խեղդել էին արյան ծովի մեջ, լկտիաբար սպառնացվին իմ և կառավարության անդամների կյանքին»:

Հիմա Օգբյորքին պեպք է հարցնել՝ Թուրքիային վարկաբեկող այդ երգչախմբի մեջ Մուստաֆա Քեմալն էլ տեղ ունի, թե՛ մենք մեզ ենք վարություն անում, երբ հրաժարվում ենք մարդասպանին ըստ արժանավույն մարդասպան կոչել»:

Այլ թուրքական իշխանություններին հիշեցնում է Քեմալ Աթաթուրքի ելույթը Փետրվարի 28-ին ԵԽ-ն հաստատեց «Կանաչների» խմբի շվեդ պատգամավոր Պեր Գարտոնի պատրաստած «Հարավկովկասյան զեկուցագիրը», որը կոչ է անում թուրքական իշխանություններին ճանաչել ՀՅ-ն: Այդ մասին մեզ նույն օրվա հաղորդագրությամբ տեղեկացրել էր «Նոյյան տապան» գործակալությունը մասնավորապես նշելով, որ զեկուցագրով Թուրքիային հիշեցվում է 1987թ. հունիսի 15-ին ԵԽ-ում ՀՅ-ի ճանաչումը, և շեշտվում են Հայաստանի համար Ադրբեջանին տրամադրվող թուրքական ոսպնական օժանդակության բացասական հետևանքները, ինչպես նաև հայկական պետության մեկուսացումը:

Հատկանշական է, որ այս մեկուսացումն անմիջականորեն պայմանավորվում է քաղաքական այն աջակցությամբ, ինչը Թուրքիային է տրամադրում պաշտոնական Վաշինգտոնը: Այլ կերպ՝ ԵԽ-ն ՀՀ-ի նկատմամբ թշնամական քաղաքականություն որդեգրած Թուրքիային աջակցելու համար անուղղակի դատապարտում է Վաշինգտոնին:

ԵԽ-ի «Հարավկովկասյան զեկուցագիրը», ցավոք, ՀՀ-ում ԶԼՄ-ների պատշաճ ուշադրությանը չարժանացավ: Հակառակ դրան, թուրքական պետհեռուստատեսությունն ու մամուլը դեռ փետ. 27-ին զեկուցագրի բովանդակությանն էին անդրադառնում՝ մատնանշելով, թե ԵԽ-ն ինչպես է թեկուզ անուղղակի Վաշինգտոնին դատապարտում: Թուրքական հեռուստատեսության անդրադարձում, որը հազեցած էր մեկնաբանություններով, նշվեց. «Զեկուցագրով ԵԽ-ն գտնում է, որ ԹՀ-ն ՀՀ-ի համար սպառնալիք է, ԱՄՆ-ն աջակցում է նրան: Թուրքական շրջափակումն այլ ելք չի թողնում հայերին, քան Իրանի հետ մերձեցումը, պետք է աջակցել հայ-իրանական մերձեցմանը»:

Ինչ վերաբերում է ՀՅ-ի ճանաչմանը, ըստ նույն աղբյուրի, ինչպես նաև «Սարահ» թերթի, ԵԽ-ն ճանաչման հարցում Հայաստանի հետ հաշտվելու կոչ է արել Թուրքիային՝ պատճառաբանելով, թե 1921թ. ապրիլի 10-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովում՝ Մեջլիսում, ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն իր ելույթով արդեն ճանաչել էր: Պետհեռուստատեսությամբ կտրականապես հերքվեց զեկուցագրում Քեմալ Աթաթուրքի ճանաչմանն առնչվող այս տվյալը՝ ավելացնելով. «Նա չէր կարող ճանաչել այսպես կոչված հայերի ցեղասպանությունը, քանի որ 1921թ. ապրիլի 10-ին Մեջլիսը նիստ չի գումարել»:

ՀՅ-ի հարցում, չնայած այլ տվյալների առկայությանը, կարևորը Քեմալ Աթաթուրքի ելույթը չէ, այլ եվրոպական այն երկրների

դիրքորոշումը, որոնք դեռ չեն ճանաչել այդ ցեղասպանությունը: Ի դեպ, ԵՄ-ի զեկուցագրով ուշադրություն է հրավիրվում այս հանգամանքին և ընդգծվում, որ ՀՅ-ի ճանաչումը եվրոպական այլ երկրներում կարևոր քայլ է լինելու, որպեսզի դա ճանաչի նաև Թուրքիան: Եւ վերջապես, զեկուցագիրը Հայաստանը շրջափակելու համար դատապարտում է Թուրքիային:

ՀՅ-ն ճանաչելու մասին Թուրքիային հասցեագրված ԵՄ-ի կոչը թուրքական քաղաքական շրջանակներում նույնացվում է ճնշում գործադրելու հերթական փորձի հետ: Ըստ նրանց, դրա նպատակը հայ-թուրքական հարաբերությունների բարելավումն է: Ուրեմն, մենք գործ ունենք բարելավման եվրոպական նախաձեռնության հետ, ինչը, ըստ երեւոյթին, ավելի նախընտրելի է, քան ամերիկյանը:

Հարկ է, սակայն, նշել, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավման անհրաժեշտ նախապայմանը Հայաստանի շրջափակման վերացումն է: Թերևս այդ առումով զեկուցագրում Հայաստանի մեկուսացման մասին պատահական չի նշվում: Ամենևին պատահական չեն նաև արտաքին աշխարհ դուրս գալու համար Թուրքիան Հայաստանի միակ պատուհանը ներկայացնելու նկրտումները:

Հայաստանը մեկուսացված չէ, այլապես ԵՄ-ն իր զեկուցագրում Հայաստան-Իրան մերձեցման մասին չէր արտահայտվի: Քանի որ Իրանի հետ մերձեցման շնորհիվ առնվազն կարելի է Պարսից ծոց դուրս գալ, ուստի Թուրքիան Հայաստանի համար արտաքին աշխարհ դուրս գալու միակ պատուհանը լինել չի կարող: Հայաստանը մեկուսացման խնդիր չունի, բայց որ եվրոպական երկրները նրան թուրքական միջանցքով եվրոպա դուրս բերելու խնդիր ունեն, ակնհայտ է: Այս դեպքում վերջիններս նույն միջանցքով Անդրկովկաս են ներթափանցում, որտեղից էլ Միջին Ասիա ներթափանցելու հնարավորություն են ձեռք բերում: Այլ կերպ՝ նրանց ներթափանցումը Հայաստանն է ապահովում:

Այնուամենայնիվ, ԵՄ-ի վերոհիշյալ զեկուցագիրը ՀՅ-ի միջազգային ճանաչման առումով չափազանց դրական տեղաշարժ է: Ինչ վերաբերում է Հայաստանի միջոցով Անդրկովկաս ներթափանցելու եվրոպական միտումներին, ապա դրանք էլ դրական են դարձնում ինչպես Անդրկովկասում և Միջին Ասիայում, այնպես էլ Մերձավոր ու Միջին Արևելքում միանձնյա ռազմական ներկայության պաշտոնական Վաշինգտոնի միտումները և այն մրցակցությունը, որ նշված տարածաշրջաններում ԱՄՆ-ի հետ ծավալում է ԵՄ-ն:

04.09.2002

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ ԱԹԱԹՈՒՄԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՐ»

Յեղասպանության թուրքական ժխտողականության հերթական դրսևորում

«Ակօսը» օգոստոսի 23-ի համարում տեղեկացնում է «Հայկական հարցը Աթաթուրքի բնութագրմամբ» գրքի մասին, որը ս.թ. ապրիլին Անկարայում հրատարակել է «Բիլգի» հրատարակչությունը: 280 էջանոց այս գիրքը կազմել է պաշտոնաթող գնդապետ Իսմեթ Գյորգուլուն: Նա ներկայումս Անկարայի «Բաշքենթ» համալսարանի դասախոսներից է, որտեղ «Քեմալական սկզբունքների և բարեփոխումների» պատմություն է դասավանդում:

Գիրքը, ինչպես առաջաբանում գրում է կազմողը, պատրաստվել է «Հայկական հարցի և այսպես կոչված ՀՅ-ի առնչությամբ Քեմալ Աթաթուրքի մոտեցումները երևան հանելու առաջադրանքով, որպեսզի հնարավոր լինի նրա մոտեցումներով նպաստել հարցին»: Այնուհետև նա ավելացնում է. «Այս օրերին, երբ աշխարհում և հատկապես ԵՄ-ում լուրջ քննության է ենթարկվում մեր երկրի զբաղեցրած տեղը, հայկական հարցի Աթաթուրքի մոտեցումը ստանում է տարբեր կարգի պնդումներին սպառիչ պատասխանի բնույթ»:

Գիրքն ընդգրկում է Աթաթուրքի հրապարակումներում հայերին առնչվող բոլոր հատվածները: 1917-24թթ. առնչվող հատվածում՝ հայերի տեղահանության մասին Աթաթուրքն ասում է. «1915թ., երբ ռուսական բանակը մեր դեմ լայնածավալ հարձակման էր անցել, ցարական իշխանությանը ծառայող դաշնակցական հայ կոմիտեները թուրքական զորքերի թիկունքում գտնվող հայ բնակչության շրջանում ապստամբություն էին հրահրել: Թշնամու քանակական և նյութական գերակշռության տակ նահանջելիս մենք մեզ երկու կրակի արանքում էինք զգում: Մեր մատակարարման ճանապարհները փակվում, վիրավոր զինվորները դաժանորեն սպանվում և թուրքական գյուղերն ահաբեկչական հարձակումների էին ենթարկվում: Համաշխարհային հանրությունը, որը խաղաղ ժամանակներում ռազմական գործողությունների թատերաբեմից միանգամայն հեռու գտնվող Իդլանդիայի նկատմամբ Անգլիայի վերաբերմունքին աչք էր փակել, չի կարող հայ բնակչության տեղահանության առնչությամբ հարկադիր ընդունված որոշման համար մեզ մեղադրելու իրավական որևէ հիմքեր ունենալ: Հակառակ զրպարտություններին՝ տեղահանվածները ողջ են, եթե Անտանտի տերությունները մեզ նոր պատերազմ չպարտադրեին, ապա նրանք վաղուց վերադարձած կլինեին իրենց տները»:

Վերոհիշյալ գիրքը ձեռքի տակ չունենք, ուստի ավելորդ են դրա բովանդակության շուրջ հետևությունները: Պարզապես ասենք, որ գրքում մեջբերված վերոհիշյալ խոսքերն ակնհայտորեն ՀՅ-ի թուրքական ժխտողականությունը պայմանավորում են Աթաթուրքի անունով:

ԹՈՒՐԲԻԱՅՈՒՄ ՎԵՐԱՆՈՒՄ ԵՆ ՏԱԲՈՒՆԵՐԸ

Պա կհանգեցնի Քեմալ Աթաթուրքի գործունեության վրա դրված տաբուի վերացմանը

Մայիսի 20-ին «Ազգը» ընթերցողի ուշադրությանն էր ներկայացրել հայտնի թուրք հասարակագետ, պատմաբան Թաներ Աքչամի «Ակօսում» հրատարակված հոդվածը, որտեղ հեղինակը կարծիք է հայտնում, որ Թուրքիայում բոլոր տաբուները վերացել են՝ բացառությամբ հայկականի: Վերացած տաբուների թվում Աքչամը նշում է երկրում դասակարգերի առկայության, քրդերի գոյության, թուրքական հասարակության վրա իսլամական մշակույթի ազդեցության և ԶՆԻ-ի գործունեության վրա դրվածները՝ ավելացնելով. «Մնացել է 1 տաբու, դա հայկականն է, դրա վերացումը պետական ներկա համակարգի ժողովրդավարացման անհրաժեշտ նախապայմանն է»:

Հայկական ասելով Աքչամը նկատի ուներ ՀՅ-ի վրա դրված տաբուն, որի վերացմանը Թուրքիայում նպաստում է ինքը: Թե դա ե՞րբ կվերանա՝ դժվար է ասել: Բայց որ երկրում տաբու է դրված նաև Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի գործունեության վրա, իսկ Աքչամը «Թուրքիայի Հանրապետության 5 գլխավոր տաբուները» թվարկելիս դա մոռանում է, ակնհայտ է: Աթաթուրքի գործունեության վրա դրված տաբուի վերացմանն էլ նպաստում են թուրք իսլամականները, որոնց այդ հարցում ակամա աջակցում են եվրոպական գործիչները:

Այդ գործիչներից պետք է նշել Եվրահանձնաժողովի արտաքին հարաբերությունների գծով պատասխանատու անդամ Քրիս Պատենին, որը Օքսֆորդի իսլամական ուսումնասիրությունների կենտրոնում ԵՄ-Թուրքիա հարաբերություններին նվիրված ելույթ է ունեցել և խստորեն քննադատել Քեմալ Աթաթուրքի գործունեությունը: Այդ մասին մայիսի 25-ին Օքսֆորդից NTV-ի ինտերնետային էջում տեղեկացնում է թղթակիցը:

Ըստ տեղեկության, Քրիս Պատենն ասել է, որ ԵՄ-ին անդամակցելու համար անդամակցող երկիրը եվրոպական պետք է լինի և առաջնորդվի եվրոպական արժեքներով, ապա և ընդգծել. «Ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Մուստաֆա Քեմալի ժառանգությունը հակասում է ԵՄ-ի արժեքներին»: Պատենը, պայմանավորելով Թուրքիայում խորքային պետության ստեղծման անմիջականորեն Քեմալ Աթաթուրքի անվամբ, պետականության քեմալական ըմբռնման արդյունք է համարել բանակի անվիճելի դերը երկրի քաղաքական կյանքում: Նա նշել է, որ այդ դերը ոչ մի կերպ չի համապատասխանում ԵՄ-ի արժեքներին:

Բանախոսը ներկաների ուշադրությունը հրավիրել է կրոնական և էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ Աթաթուրքի որդեգրած

դիրքորոշման վրա: Նա ընդգծել է, որ Աթաթուրքը Թուրքիայում այդ տարրերին ընկալում էր որպես անջատողականների և կառավարման գինվորական մեթոդներով կարողանում էր իշխել նրանց վրա:

Եվրահանձնաժողովի արտաքին հարաբերությունների գծով պատասխանատու անդամ Քրիս Պատենը, այնուամենայնիվ, արտահայտվել է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության օգտին և դա պատճառաբանել քաղաքակրթությունների երկխոսության, ինչպես նաև քրիստոնյա-մահմեդական շփումների անհրաժեշտությամբ:

Պատենի քննադատությունը, ինչպես որ ենթադրվում էր, բուռն հակազդեցություն առաջ բերեց Անկարայում: Նույն օրը, այսինքն՝ մայիսի 25-ին պաշտոնական Անկարան, ի դեմս ԵՄ-ում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ, արտակարգ և լիազոր դեսպան Օղուզ Դեմիրալիի, պաշտոնական նամակ հղեց Քրիս Պատենին և դատապարտեց նրան Օքսֆորդի իսլամական ուսումնասիրությունների կենտրոնում ունեցած ելույթի համար:

Այդ մասին մայիսի 25-ի երեկոյան տեղեկացրել է թուրքական հանրային հեռուստատեսությունը՝ հենվելով Բոյուսեյի թղթակցային գրասենյակի տվյալների վրա: Համաձայն այդ տվյալների, Դեմիրալիը նամակում անընդունելի է համարել Թուրքիայում խորքային պետության ստեղծման պայմանավորումը Քեմալ Աթաթուրքի անվամբ, պատճառաբանելով, որ «խորքային պետություն» հասկացությունը երկրում շրջանառության մեջ է դրվել 80-ական թվականներին:

Դեմիրալիը միաժամանակ ընդգծել է, որ Աթաթուրքը Թուրքիայում ստեղծել է ժամանակակից, ժողովրդավարական և իրավական հիմքեր ունեցող պետական համակարգ: Ինչ վերաբերում է «երկրի էթնիկ և կրոնական փոքրամասնություններին որպես անջատողականների դիտարկելու Քեմալ Աթաթուրքին Պատենի վերագրած պնդումներին», ապա Դեմիրալիը դրանք համարել է թյուրիմացություն և հիշեցրել, որ Լոզանի պայմանագիրը Աթաթուրքի օրոք է ստորագրվել և ազգային փոքրամասնություններին շնորհել է լայն իրավունքներ:

Պատենի վերոհիշյալ քննադատությունները դեռևս Թուրքիայում Քեմալ Աթաթուրքի գործունեության վրա դրված տաբուի վերացում չեն նշանակում: Սակայն վիճարկելով այդ գործունեությունը, ստեղծում են վերացման նախադրյալներ: Հատկանշական է, որ Անկարայի հակազդեցությունն էլ, ինչի արտահայտությունն է դարձել ԵՄ-ում Թուրքիայի մշտական ներկայացուցիչ Դեմիրալիի նամակը, նպաստում է վիճարկումների ծավալմանը: Մնում է սպասել, թե երբ կվերանա Քեմալ Աթաթուրքի գործունեության վրա դրված տաբուն Թուրքիայում:

ԱՃԱԿՈՒՄԻ ԾԱՂԱՆԿԱՐՆԵՐ ԱՎԱՏՐԱԼԻԱՅՈՒՄ՝ ԶԵՆՔԻՆ «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԹԵՐԹԻԿՈՎ

Սեպտեմբերի երկրորդ կեսին, երբ իսլամական աշխարհը բուռն հակազդեցությամբ արձագանքում էր Հոռմի պապ Բենեդիկտոս 16-րդին Մուհամմեդ մարգարեին հասցեագրած վիրավորական արտահայտությունների համար, իսկ արմատական որոշ շրջանակներ դիմում էին հակաքրիստոնեական արարքների, Ավստրալիայի ֆինանսների նախարար Պիտեր Կաստելլոն մահմեդական երկրներին մատնացույց է անում Քեմալ Աթաթուրքի ստեղծած ժամանակակից Թուրքիան:

Նախարարը, ինչպես սեպտեմբերի 23-ի համարում նշել է «Չամանը», ասում է. «Աշխարհիկ Թուրքիան, որն ստեղծել է Դարդանելի ճակատամարտի փառապանծ հերոս Քեմալ Աթաթուրքը, օրինակ է ծառայում իսլամական աշխարհի համար: Նա իբրև օրինակելի պետություն, առաջնորդողի դեր պետք է կատարի այդ աշխարհում»:

Ֆինանսների նախարարի խոսքերին էլ արձագանքում է ավստրալական մամուլը, և թերթերից մեկում հրապարակվում Դենիս Ալթմանի հոդվածը կից ծաղրանկարներով: Հոդվածագիրը Աթաթուրքի գովերգումը ծիծաղելի է համարում և նշում է, որ նրա մտքած սահմանափակումների վերացումը հսկայական ժամանակ է պահանջել Թուրքիայից:

Սահմանափակումների պարագայում խնդրո առարկան կրոնական ազատություններն են: Ըստ Ալթմանի, Աթաթուրքը կրոնական առաջընթացի ճանապարհին լուրջ խոչընդոտ է եղել և չի ցանկացել, որ ժամանակակից Թուրքիայում կրոնը ունենա հասարակական դերակատարում, ուստի բռնարարքների է դիմել, որոնք ցնցող են ինչպես աշխարհիկ, այնպես էլ հավատացյալ ավստրալացիների համար:

Ինչ վերաբերում է 4 ծաղրանկարներին, որոնց նույն «Չամանը» արձագանքել է սեպտեմբերի 30-ի համարում, ապա դրանք ավստրալական թերթում հրապարակվել են «Կաստելլոն վերակենդանացնում է Աթաթուրքին» խորագրով: Դրանցից երկրորդում Ավստրալիայի ֆինանսների նախարարը գերեզմանից հանում է Աթաթուրքի կմախքը, որի ձեռքին հայտնաբերվում է «Հայոց ցեղասպանություն» մակագրությամբ թերթիկը:

ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՐԸ ԴՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ Է ՏՎԵԼ ԹՄԱՆԵՐ ԱՔՉԱՄԻ ՆՈՐ ԳՐՔԻՆ
Ցեղասպանությանը նվիրված այս գրքի «Ամոթահարույց գործողություն» վերնագիրը հեղինակը վերցրել է Աթաթուրքի ելույթից

Հայ հասարակությանը քաջ հայտնի Թաներ Աքչամը «Ամոթահարույց գործողություն» վերնագրով հրատարակման է պատրաստել Հայոց ցեղասպանությանը նվիրված իր հերթական աշխատությունը: Հրատարակիչներն աշխատության ճանաչողությանը նպաստելու համար դիմել են հոշակավոր թուրք վիպասան Օրհան Փամուքին, իսկ նա տվել է հետևյալ կարծիքը. «Այս գիրքն Օսմանյան կայսրությունում հայերի կազմակերպված բնաջնջման անթերի հաշվետվությունն է»: Փամուքի կարծիքը տեղադրվել է Թաներ Աքչամի աշխատության շապիկում: Թեև աշխատությունը դեռևս հրատարակման գործընթացում է, սակայն թուրքական «Սաբահ» թերթը հոկտեմբերի 29-ի համարում անդրադարձել է Փամուքի կարծիքին և ընթերցողի ուշադրությունն է հրավիրել «կազմակերպված բնաջնջում» արտահայտության վրա:

«Սաբահի» անդրադարձին էլ Մ. Նահանգներից արձագանքել է Թաներ Աքչամը, նախագգուշացնելով թուրքական թերթին, որ Փամուքի վերոհիշյալ կարծիքը նոր չէ, նա այդ մասին արտահայտվել է երկու տարի առաջ նախքան «մեկ միլիոն հայի և 30.000 քրդի սպանության» մասին 2005թ. փետրվարին արած հայտարարությունն ու Նոբելյան մրցանակի արժանանալը: Կարծիքը գրքի շապիկում օգտագործվել է վիպասանի թույլտվությամբ:

Թաներ Աքչամը միաժամանակ նշել է, որ կարծիքի համար Օրհան Փամուքին դիմել է ոչ թե ինքը, այլ հրատարակչությունը՝ նախապես նրան ուղարկելով աշխատության մեքենագիր տարբերակը: Վերջում, ինչպես հոկտեմբերի 30-ին ընդգծում է «Սաբահը», Թաներ Աքչամն ասել է, որ Հայոց ցեղասպանությանը նվիրված այս նոր աշխատության «Ամոթահարույց գործողություն» վերնագիրն ինքը վերցրել է Քեմալ Աթաթուրքի 1920թ. ապրիլի 24-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի ամբիոնից արված ելույթից:

Աքչամին առարկել է Ստամբուլի համալսարանի դասախոս Մեհմեդ Փերինչեքը, թե նա աղճատել է Աթաթուրքի խոսքերը՝ տարանջատելով ընդհանուր համատեքստից «ամոթահարույց գործողություն» արտահայտությունը: Հատկանշական է, որ «Քայնաք» հրատարակչության հրատարակած 8 հատորյա «Աթաթուրքի երկերի լիակատար ժողովածուի» վերջին հատորում տեղ գտած «ամոթահարույց գործողություն» ձևակերպումը Թուրքիայի ազգային մեծ ժողովի հրատարակությունում ներկայացվել է «իրավիճակ» ձևակերպմամբ:

Համեմատության կարգով «Սաբահը» մեջբերում է կատարում երկու հրատարակություններից: Ահա թե, ըստ «Քայնաք» հրատարակության, ելույթում ինչ էլ ասել Քեմալ Աթաթուրքը. «Երկրի իրավիճակը հայրնի է բոլորին: Նրա ո՞ր ժամանակահատվածում է հայերի դեմ կոտորած կատարվել կամ կատարվում է: Չեմ ուզում անդրադառնալ աշխարհամարտի սկզբնական փուլին, Անվրանյի պետություններն արդեն, բնականաբար, նկատի չունեն անցյալի ամոթահարույց գործողությունները (ստորությունը)»:

Որքան էլ Փերինչեքն առարկի, «Աշխարհամարտի սկզբնական փուլում», այսինքն՝ 1918թ.-ին տեղի ունեցած «ամոթահարույց գործողությունները (ստորությունը)», ինչի մասին արտահայտվել է ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Աթաթուրքը, ակամա պետք է վերաբերի հայկական զանգվածային կոտորածներին: Ինչ վերաբերում է Օրհան Փամուքին, ապա նրա Նոբելյան մրցանակին արժանանալը միանշանակ չի ընկալվել Թուրքիայի քաղաքական շրջանակներում: Շատերը դա պայմանավորել են «մեկ միլիոն հայի սպանության» մասին Փամուքի հայտարարությամբ, իսկ «Գորշ գայլերը», համարելով նրան գրական սադրիչ, գրել են. «Ոմանք մրցանակից են հրաժարվում, ոմանք էլ՝ հայրենիքից»:

Ի դեպ, Նոբելյան մրցանակին արժանանալու համար Օրհան Փամուքին շնորհավորել էին Ռեջեփ Թայիփ Էրդողանը, ԱԳ նախարար Աբդուլլահ Գյուլը, Մեջլիսի նախագահ Բյուլենթ Արընչը, բայց Թուրքիայի Հանրապետության նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերն՝ ոչ:

04.04.2007

«ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ» ՎՐԱ ԳՐՎԱԾ ՏԱԲՈՒՎ ԿԵՐԱՑՈՒՄԸ

ՎԻՃԱԿԵԼԻ Է ԳՐԱՆՈՒՄ ԱԹԱԹՈՒՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Վիճարկման սպառնալիքը սրիպում է թուրքերին դիմել խարդավանքների

Մարտի 29-ի համարում «Ազգը» անդրադառնալով «Ադրբեջանցի թուրքերի դեմ հայերի իրագործած ցեղասպանությունը» թեմայով Բաքվում Թուրք-ադրբեջանական կանանց միության կազմակերպած «գիտաժողովին» կարծիք էր հայտնել, որ աշխարհում կան պետություններ, որոնց հասարակություններում բռնությունը պաշտամունքի առարկա է դարձել: Մեր թերթն այս պետություններից առանձնացրել էր Թուրքիային և Ադրբեջանին, ապա և ավելացրել. «Երբ սրանց չի հաջողվում բռնության միջոցով հասնել չարանենգ նպատակի, սկսում են խարդավանքների դիմել»:

Այսպես կոչված միջազգային տվյալ «գիտաժողովը», որին հրաժարվել էր մասնակցել նույնիսկ Միջին Ասիայի թուրքալեզու հանրապետությունը, հրավիրվել էր մարտի 27-ին: Մարտի 31-ին գիտաժողովին հետևել է «1918-ին Ադրբեջանում թուրքերի նկատմամբ հայերի

իրագործած ցեղասպանության» 89-րդ տարեկիցի միջոցառումները: Այս «ցեղասպանությունը», ըստ թուրքական հանրային հեռուստատեսության, սկսվել է 1918թ. մարտի 30-ին, և հայերը երկու օրում իբր 17.000 մարդ են ոչնչացրել Բաքվում: Սպանություններն այնուհետև ծավալվել են ողջ Ադրբեջանում և առաջիկա 3 ամիսներին հայերի կատարած կոտորածները խլել են «50.000 ադրբեջանցի մահմեդական թուրքերի կյանքը»:

Այս խարդավանքները միջազգային որևէ արձագանքի չեն արժանանում: Թուրքական հանրային հեռուստատեսությունը այդ մասին նշելիս չի թաքցնում իր դժգոհությունը. «Յավուք Արևմտյան երկրները տարիներ շարունակ օրակարգում պահելով հայերի անհիմն պնդումները, լռության են մատնում Անդրկովկասում թուրքերի դեմ կատարված կոտորածները»:

Ըստ երևույթին, թուրքական քաղաքական շրջանակների խնդիրը ոչ այնքան խարդավանքներով արևմտյան երկրներին ապակողմնորոշելն է, որքան դրանք ծառայեցնելը հայատյացությունը բնակչության ենթագիտակցության մեջ ամրապնդելու նպատակին, որ սկսել են թուրքերի նկատմամբ հայերի իրագործած «ցեղասպանության» վերաբերյալ միջոցառումներ կազմակերպել նաև գյուղերում:

Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է Իգդիրի Ալիջան գյուղի միջոցառմանը, որը գուցե տարօրինակ թվա, սակայն կազմակերպվել է հենց ապրիլի 1-ին: Հանրահավաքի բնույթ կրող այս միջոցառումը նախաձեռնել է «Հայերի իրագործած կոտորածներից տուժածների» միությունը: Դրան մասնակցել են նաև Նախիջևանի պետական համալսարանի որոշ դասախոսներ: Ելույթ ունեցողները նշել են, որ միջազգային ասպարեզում փորձ է արվում հայկական անհիմն պնդումներով մոռացության տալ թուրքերի նկատմամբ հայերի իրագործած ցեղասպանությունը, բարձրացվել է «Հայոց ցեղասպանությունը միջազգային սուտ է» մակագրությամբ ցուցապաստառ: Ինչ վերաբերում է Ալիջան գյուղի բնակիչներին, ապա նրանք էլ, թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, «անիծել են հայերի բռնարարքները» հակահայկական կարգախոսներով, որպեսզի այդ բռնարարքների վրա հրավիրեն միջազգային հանրության ուշադրությունը:

Ակամա հարց է ծագում, ինչո՞ւ «Թուրքերի նկատմամբ հայերի իրագործած ցեղասպանության» խարդավանքները ծառայեցնել հայատյացությունը թուրք բնակչության ենթագիտակցության մեջ ամրապնդելու նպատակին, երբ դրանք դրսում որևէ ուշադրության չեն արժանանում: Պատասխանը միանշանակ է. թուրքական հասարակության հարաճուն հետաքրքրությունը վերացման սպառնալիքի առջև է կանգնեցնում Թուրքիայում «հայկական խնդիրների» վրա դրված տաբուն:

Քանի որ ժամանակակից ԹՀ-ի ստեղծման համար մղվող ազգային պատերազմներում Աթաթուրքը հենվել է իթթիհատականների վրա և նրա մերձակա շրջապատը կազմել են «Teskilat-i Mahsusa»-ի անդամները, որոնց մի մասին օսմանյան ռազմական ատյանը 1919թ. հեռակա կարգով դատապարտել էր մահապատժի, իսկ մյուսին հայտարարել հետախուզման մեջ հայերի բնաջնջումն իրագործելու մեղադրանքով, ուստի «հայկական խնդիրների» վրա դրված տաբուի վերացումը անխուսափելի է դարձնում նաև Աթաթուրքի կյանքի և գործունեության վրա դրված տաբուի վերացումը:

Վերացման դեպքում ակնհայտ կդառնա թուրքական ազգային պետության ստեղծման գործում իթթիհատական և «Teskilat-i Mahsusa»-ի մարդասպանների լուրջ դերակատարությունը, Աթաթուրքի շրջապատի բնութագրի հետ կպարզվի նաև շրջապատողների էթնիկ ծագումը, որոնց մեջ զգալի թիվ են կազմում «ոյրնմենները»:

14.11.2007

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԳՐՈՒՄՆ

ԱԹԱԹՈՒՐԻ ԻՐԱՐԱՆՅՈՒՄ Է ԱՈԱԶՅՐԵԼ ԹՈՒՐԻԱՅՈՒՄ

Մեջլիսի փոխնախագահը մեղադրել է Թուրքական լեզվի ընկերությանը

«Ազգը» նախորդ համարում, անդրադառնալով Քեմալ Աթաթուրքի ճառերի ժողովածուին, նշել էր, որ Թուրքիայի Հանրապետության հիմնադրի՝ հայերին վերաբերող ելույթում «կոտորած» արտահայտությունը փոխարինվել է «ցեղասպանություն» բառով, ինչը մեծ աղմուկ է բարձրացրել երկրում: Ինչո՞ւ, որովհետև երկհատոր այս ժողովածուն 1987-ին հրատարակել է Թուրքիայի ազգային մեծ ժողովը՝ Մեջլիսը, որտեղ կատարված վերոհիշյալ փոփոխությունը նկատվել է 20 տարի հետո միայն:

Թուրքիայի համար միանգամայն անախորժ այս աղմուկին հետևել են փոխադարձ մեղադրանքները: Մեջլիսի փոխնախագահ, մշակույթի, արվեստի և հրատարակչության հանձնաժողովի նախագահ Նևզաթ Փաքդիլը հրավիրել է մամուլի ասուլիս, տեղի ունեցածը համարելով թյուրիմացություն, դրա համար մեղադրել է Թուրքական լեզվի ընկերությանը:

Նա, ինչպես նոյեմբերի 13-ի համարում նշում է «Թերջուման» թերթը, մասնավորապես ասել է. «Իննդրո առարկա ժողովածուն 1987-ին կազմել էր Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահի խորհրդական Սեդաթ Թյուզունները: Ժողովածուին հավանություն էր տվել Թուրքական լեզվի ընկերությունը, որից հետո միայն Մեջլիսը դա հրատարակել և տարածել է: Եթե դուք ուսումնասիրելու լինեք վերոհիշյալ ընկերության հաջորդաբար 1984, 1988 և 2005-ին հրատարակած թուրքերեն բացատրական բառարանները, ապա

կտեսնեք, որ դրանցում արաբական «համատարած կոտորած» բառի համար, որպես թուրքական տարբերակ, օգտագործվել է «ցեղասպանություն» արտահայտությունը: Հետևաբար այս ամենի պատասխանատուն «կոտորածը» «ցեղասպանություն» բառով փոխարինող Թուրքական լեզվի ընկերությունն է:

Հատկանշական է, որ այս ընկերությունը ևս, ինչպես Թուրքական պատմական ընկերությունը, ստեղծվել էր Քեմալ Աթաթուրքի անմիջական կարգադրությամբ:

16.11.2007

«ՆՍԱՇՐՔԱՆԻ ԲԱՅԱՆՆ՝ ԱԹԱԹՈՒՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԹՈՒՐԻԱՅՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԺՈՂՈՎՈՒՄ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԵՐԿՀԱՏՈՐ Է

Այնպեղ բացի Հայոց ցեղասպանությունից, անդրադարձ է կատարվում նաև Սևրի պայմանագրին և Մեծ Հայաստանին

Ինչպես տեղեկացրել էինք նոյեմբերի 13-ի և 14-ի համարներում, ցեղասպանություն բառի օգտագործումը Թեմալ Աթաթուրքի ժողովածուում իրարանցում էր առաջացրել Թուրքիայում, ինչի համար Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի մշակույթի, արվեստի և հրատարակչության հանձնաժողովի նախագահ Նևզաթ Փաքդիլը մեղադրել էր Թուրքական լեզվի ընկերությանը:

Ինչո՞ւ: Այն պատճառով, որ 1987-ին Մեջլիսի տվյալ հանձնաժողովի կազմած ժողովածուն կարծիքի համար ներկայացվել էր Լեզվի ընկերություն և արժանացել հավանության: Փաքդիլը նշելով այդ մասին, միաժամանակ ընդգծել էր, որ ընկերության կազմած թուրքերեն բացատրական բառարանի 1988 և 2005թթ. հրատարակություններում «katilam» բառին, որը արաբական փոխառություն է, տրված է հետևյալ սահմանումը. «զանգվածային սպանություն, կոտորած, ցեղասպանություն»: Ժողովածուի հրատարակիչը Աթաթուրքի ճառը նոր սերնդին անաղարտ թուրքերենով ներկայացնելու համար սկզբնական տարբերակը զտել է արաբական և պարսկական փոխառություններից, այսպիսով, «katilam» բառը դարձել է «ցեղասպանություն», որն էլ վերագրվել է Քեմալ Աթաթուրքին:

Նոյեմբերի 11-ին թյուրիմացության համար Լեզվի ընկերությանը մեղադրող Փաքդիլը հաջորդ օրվա մամուլի ասուլիսում նշել է, որ Մեջլիսում «թյուրիմացությունը» վերացնելու որոշում է ընդունվել, համաձայն դրա, Աթաթուրքի ճառերի նոր հրատարակություններում ուղղվելու են ցեղասպանություն արտահայտությունները: Ինդիլը, սակայն, Աթաթուրքին ցեղասպանություն բառի օգտագործման վերագրումը չէ, այլ նրա ժողովածուի հրատարակության ինտերնետային տարբերակի նույնությամբ տեղադրումը Մեջլիսի կայքէջում և ինչպես հրատարակության մեջ, այնպես էլ ինտերնետային

տարբերակում տեղ գտած այս «թյուրիմացության» բացահայտումը 20 տարի ուշացումով միայն:

Այլ կերպ, ՀՅ-ի ճանաչման դեմ կատաղի պայքար մղող Մեջլիսը իր իսկ հրատարակությամբ ոչ միայն Աթաթուրքին է վերագրել 1915-ի իրադարձությունները որպես Յեղասպանություն բնութագրումը, այլև դա 20 տարի շարունակ պահպանել է կայքէջում: Անկախ թյուրիմացությունը վերացնելու Մեջլիսի նոյեմբերի 12-ին ընդունած որոշումից, երեկվա տվյալներով, ցեղասպանություն արտահայտությունները պահպանվում էին Աթաթուրքի ճառի ինտերնետային տարբերակում: Հատկանշական է, որ նոյեմբերի 11-ի առավոտյան կայքէջի համապատասխան հատվածը փակվել էր այցելուների առջև, իսկ երեկոյան վերստին բացվել: Ընդ որում, առանց փոփոխության, ինչի վրա նոյեմբերի 13-ին տեղեկագրում հատուկ ուշադրություն էր հրավիրել Անկարայում գործող ԵՌՈՒԿ-ի ՀՀԻ-ն:

Ինչ վերաբերում է ժողովածուին, ապա դա 1987-ին «Նստաշրջանի բացման Աթաթուրքի ելույթները Թուրքիայի ազգային մեծ ժողովում» վերնագրով հրատարակել է Մեջլիսի մշակույթի, արվեստի և հրատարակչության հանձնաժողովը: 266 էջանոց այս ժողովածուն երկհատոր է, ունի նախաբան, անձնանունների և տեղանունների ցանկ, ներառում է Աթաթուրքի ելույթները Մեջլիսի 1-5-րդ նստաշրջաններում, որոնք գումարվել են 1920-38թթ.:

Քեմալ Աթաթուրքը հայերին և Հայաստանին, ինչպես նաև Սևրի պայմանագրին, Կարաբեքիրի Հայաստան արշավանքին ու Կարսի պայմանագրին անդրադարձել է 1920թ. ապրիլի 24-ի առաջին և 1924թ. օգոստոսի 13-ի 2-րդ նստաշրջանի բացման ելույթներում:

Ըստ Մեջլիսի հրատարակության, ահա թե ինչ էլ ասել նա ժողովածուի I հատորի 41-րդ էջում. «Անգլիայի քաղաքական ներկայացուցիչը մեր կառավարությանը հանձնեց Անգլիայի ԱԳՆ-ի նուրան, որպեսզի ասված էր. «Նախ դադարեցրեք Անվանյի պետությունների և հույների դեմ իրականացվող գործողությունները: Եվ երկրորդ՝ հրաժարվեք Թուրքիայում հայերի դեմ իրականացվող ցեղասպանությունից: Մեր այս երկու պահանջների կատարման դեպքում ձեզ է հանձնվելու Սրամբուլը: Պահանջների անտեսումը վարդաբարձույն անդրադարձն է ունենալու հաշտության պայմանների վրա»: Պարոնայք, ինչ խոսք, այս պահանջները դավադրական էին և անկեղծությունից զուրկ, որով հեղինակը երկու դեպքում էլ իրականությունը չէին համապատասխանում»:

Աթաթուրքը նույն էջում մանրամասնում է անգլիական 1-ին պահանջը, իսկ 42-րդում շարունակում. «Երկրորդ պահանջը երկրում կատարվող ցեղասպանությանը վերջ տալու մասին էր: Հայերի նկատմամբ այդպիսի մոտեցում չկար և հեղևությունը սխալ էր: Բոլորս գիտենք մեր երկրի իրողությունները: Ո՞ր շրջանում է հայերի դեմ


ցեղասպանություն կատարվել կամ կատարվում է: Չեմ ուզում անդրադառնալ Առաջին աշխարհամարտի սկզբներին: Իրականում Անվանյի պետություններն էլ, բնականաբար, նկատի չեն ունեցել անցյալի դեպքերը: Այսօր մեր երկրում ուրնձգությունների իրականացում են նկատվում, որ դրանից հրաժարվելու պահանջ ներկայացնեն մեզ»:

Ժողովածուի 43-րդ էջում Աթաթուրքը մեծ տերություններին մեղադրում է «հայերի ցեղասպանություն հորինելու և այդ մասին ի լուր աշխարհի հայտարարելու» մեջ, պայմանավորելով այս ամենը շահախնդիր շահագրգռություններով: Իսկ 47-ում ավելացնում. «Քանի դեռ Անապոլիայում բնակեցված հայերն ու հույները չեն հակադրվել մեր կառավարության հրահանգներին և ազգային նպատակներին, նրանք ի սկզբանե պաշտպանված են եղել ամեն փեսակի ուրնձգություններից, երկրում նրանց համար ապահովվել են բառի բուն իմաստով երջանիկ ու խաղաղ կյանքի բոլոր պայմանները: Մեր քաղաքակրթական կարևոր պարտքն ենք համարել հայերին ամեն փեսակի հարձակումներից պաշտպանելը և իշխանության բոլոր մարմիններին զգուշացրել ենք հայ ժողովրդի անդորրը պահպանելու ուղղությամբ, նույնիսկ այն օրերին, երբ արաբքին աշխարհի հեղ խզված էր Անապոլիայի կապը, իսկ մեր վեհ հայրենիքի շահերից բխող միջոցառումների իրականացումը՝ դարձել անհրաժեշտություն»:

54-55 էջերում Աթաթուրքը Մեջլիսին հիշեցնում է. «Արևմուտքում՝ հույները, հարավում՝ ֆրանսիացիներն ու նրանց զինած և մեր դեմ հրահրած հայերը, իսկ արևելքում Հայաստանի հայությունը բռնության և կոտորածների էին ենթարկում մեր երկրի բռնազավթված վայրերի, սահմաններին և ռազմաճակատին հարող շրջանների մահմեդական բնակչությանը: Արևելքում մեր բանակների շնորհիվ հաղթանակ ենք տարել Հայաստանի դեմ, իսկ արևմուտքում պարտության մատնել հույներին: Արևելյան բանակի ազդեցիկ գործողությունները հնարավորություն տվեցին մեզ հեղ վերցնել մեր ազգային ստրկության կարևոր պարճառը հանդիսացող Կարսը, Արդահանը և Արդվինը»:

57-58 էջերում Աթաթուրքը ավելացնում է. «Անվանյի պետությունները հարկ համարեցին բանակցությունների սեղանին նստել մեզ հեղ այն ժամանակ, երբ մեր ժողովուրդը իր վճռական ու հեղևողական պայքարով ապացուցեց, որ Սևրի պայմանագիրը չի կարող որևէ կերպ կիրառվել Թուրքիայում: Չնայած թշնամիների մեկ տարվա համառ ջանքերին, ներկայումս փաստացի և բարոյապես վերացված են Սևրի պայմանագրի բոլոր դրոյթները»:

1924-ի օգոստոսի 13-ի Մեջլիսի գումարման 2-րդ նստաշրջանի բացմանը Քեմալ Աթաթուրքը վերստին անդրադարձել է Հայաստանի խնդրին, ասելով. «Պարոնայք, արևելքում՝ Տրապիզոնը, իսկ հարավում Ադանան ներառող Մեծ Հայաստանից այլևս հեղք անգամ չի



մնացել: Հայերը պարփակվել են իրենց բուն սահմաններում: 1877-ի արշավանքով թուրքական հայրենիքից փարանջարված Կարսը, Արդահանը, Արդվինը վերստին հայտնվել են մեր դրոշի ներքո»:

Ի դեպ, Աթաթուրքի երկհատոր ժողովածուի նախաբանը գրել է Մեջլիսի նախագահ Նեջմեթդին Կարադամանը, որտեղ նշում է, որ ելույթները արաբատառ բնագրից լատինատառ տարբերակով ժամանակակից թուրքերենի է վերածել Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահության հատուկ խորհրդական Սեդաթ Թյուզունները, որպեսզի մատչելի լինի նոր սերնդին:

06.06.2008

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՏԱԲՈՒ Է ԹՈՒՐԿՈՒՅՑՈՒՄ

Դրա վերացումը ենթադրում է նաև ինքնակամ վերացնել Քենալ Աթաթուրքի կյանքի և գործունեության վրա դրված փաթեռն

Տաբուն նախնադարյան համայնական հասարակության մեջ սրբագործված արժեքների համակարգ էր, որոնց խախտումը ենթարկվում էր «գերբնական ուժերի» պատժին: ԹՀ-ում այդ ուժերին փոխարինում են սահմանադրության 301 և 305-րդ հոդվածները: Դրանք, բարեփոխված տարբերակները ներառյալ, պատիժ են սահմանում «թուրք ազգին հրապարակավ նսեմացնողների» համար, իհարկե, առանց պարզաբանելու, թե որո՞նք են նսեմացման դրսևորում համարվող դեպքերը: Համենայն դեպս, ներկա պահին վերոհիշյալ հոդվածներով քրեական 9 գործ է հարուցված հայտնի հրատարակիչ և մարդու իրավունքների պաշտպան Ռազմի Զարաքոլուի դեմ: Ընդ որում, այդ գործերի մեծամասնությունը ուղղակի առնչվում է ՀՅ-ի հարցին:

Թեև ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը հարցի վերարժարժման նախադրյալներ է ստեղծել ԹՀ-ում, սակայն վերարժարժումները ոչ մի կերպ չեն հանգեցնում դրա անաչառ ուսումնասիրության համար նույնիսկ նախապայմանների ստեղծմանը: Ուսումնասիրել 1915-ի իրադարձությունները, ենթադրում է երկրում հիմնավորել թուրքական ժխտողականությունը, որը դեռևս ցեղասպանության հարցում Թուրքիայի պաշտոնական թեզն է: Հատկանշական է, որ թուրքական պաշտոնական շրջանակներում պատմաբան են համարվում այս թեզի ջատագովները միայն: Նրանք, ովքեր հակադրվում են պաշտոնական թեզին կամ հանդգնում հրապարակավ արտահայտվել հայերի ցեղասպանության մասին, պիտակավորվում են որպես «հայամետ» կամ «թուրք ազգին հրապարակավ նսեմացնելու» մեղադրանքով կանգնում են դատարանի առջև:

Եղել են դեպքեր, երբ հայերի տեղահանության թեմայով Ստամբուլի վարչապետարանին առընթեր գործող օսմանյան

արխիվում ուսումնասիրություն կատարելու համար հարցաքննության են ենթարկվել թուրք գիտնականները: Նրանց վտարել են աշխատանքից, նույնիսկ գրկել Թուրքիայի քաղաքացիության իրավունքից, ինչպես, ասենք, Մեհմեդ Ուլուրշըքին, որի մասին այս տարի Ստամբուլում «Հայկական հարցը լուծված է» վերնագրով լույս տեսած վերջին աշխատության մեջ պատմում է Թաներ Աբչամը:

Հայկական հարցը տաբու է Թուրքիայում: Քանի որ դա ներառում է հայերի տեղահանությունը, բնաջնջումն ու ունեցվածքի յուրացումը, ուստի ինքնաբերաբար տաբու է դառնում նաև հարցի ուսումնասիրությունը: Դրա ծավալման դեպքում, ինչ խոսք, հենց թուրք գիտնականները կբացահայտեն տեղահանության և բնաջնջման կազմակերպիչներին, օսմանյան արխիվային փաստաթղթերով կհաստատվի ցեղասպանության իրողությունը և դա շրջանառության մեջ կդրվի թուրք պատմագրության մեջ: Այդ ընթացքում թուրքերի երիտասարդ սերունդն էլ կիմանա, թե ո՞ւմ միջոցներով են հարստացել աշխարհի 100 մեծահարուստների ցուցակում ընդգրկված «թուրք» ընտանիքները, ի՞նչ է նշանակում «տեղահանության հաշվին հարստացածներ» (tehcir zenginleri) հասկացությունը և դա ի՞նչ հանգամանքներում է տարածվել ժողովրդի մեջ Առաջին համաշխարհայինի և քեմալական ազգային պատերազմների տարիներին:

Եթե թուրք գիտնականները օսմանյան արխիվային փաստաթղթերով հաստատեն ՀՅ-ի իրողությունը և դա շրջանառության մեջ դրվի թուրք պատմագրության մեջ, ապա թուրքական ժխտողականության դիրքերը կսպառվեն նաև Թուրքիայում և կառավարող շրջանակները կհայտնվեն ցեղասպանության պաշտոնական թեզից հրաժարվելու հարկադրանքի տակ:

Հարկ է սակայն նշել, որ ՀՅ-ի հարցի ուսումնասիրության պարագայում Թուրքիայի խնդիրը սուկ ժխտողականության դիրքերի սպառումը կամ պաշտոնական թեզից հրաժարվելու հարկադրանքը չէ, այլ 1908-ին երիտթուրքական հեղափոխության առաջնորդները, «Իթթիհադ վե Թերաքքի» կուսակցության կենտրոնական կոմիտեի գործիչները, «Թեշքիլաթ-ը Մահսուսայի» (հատուկ կազմակերպություն) անդամները, ինչպես նաև հայկական կոտորածներին մասնակցելու համար 1919-ին օսմանյան ռազմական ատյանում դատապարտվածները, որոնց զգալի մասին Մեծ Բրիտանիայի ռազմածովային ուժերի հրամանատարությունը աքսորել էր Մալթա:

Վերոհիշյալ առաջնորդների, գործիչների, անդամների, դատապարտվածների և աքսորյալների ճնշող մեծամասնությունը, կազմելով Աթաթուրքի մերձավոր շրջապատը, վերջինի հետ զինակցի կարգավիճակով կազմավորել են Ազգային մեծ ժողովը՝ Մեջլիսը, մասնակցել քեմալական ազգային պատերազմներին, ապա և հանրա-

պետական կարգեր հռչակել Թուրքիայում, զբաղեցնելով բարձր պաշտոններ, այսպես կոչված, թուրքական ազգային պետության օրենսդիր, գործադիր, զինվորական իշխանություններում:

Մինչդեռ նրանք, լինելով ՀՅ-ի ծրագրման, կազմակերպման և իրագործման անմիջական մասնակիցներ, արյունարբու մարդասպաններ էին: Թուրք գիտնականների ուսումնասիրության արդյունքում սրանց ինքնության բացահայտումը ենթադրում է ընդունել, որ Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքը շրջապատված էր հայ ժողովրդի դահիճներով և դա հաստատել օսմանյան արխիվային փաստաթղթերով:

Այլ կերպ, հայկական հարցի տարուի վերացումը Թուրքիայում ենթադրում է ինքնական վերացնել նաև Քեմալ Աթաթուրքի կյանքի և գործունեության վրա դրված տաբուն, իսկ դա անխուսափելիորեն կհանգեցնի ինչպես քեմալական պատերազմների և Թուրքիայի Հանրապետության կազմավորման պատմության վերանայմանը, այնպես էլ թուրքական պետության հիմնադիրների բնութագրի և էթնիկ պատկանելության բացահայտմանը:

27.09.2008

ՔԵՄԱԼ ԱԹԱԹՈՒՐԿԸ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՆԱՆԵՐԻՆ ՈՉ ԹԵ ՓՐԿԵԼ Է, ԱՅԼ ՀԱՆԴԻՄԱՆԵԼ ՓՐԿՈՂՆԵՐԻՆ

Անգլիական «Էկոնոմիստ» հանդեսը իզուր է փորձում արդարացնել նրան
Սեպտեմբերի 26-ի համարում հայ-թուրքական հարաբերություններին անդրադարձել է նաև անգլիական «Էկոնոմիստ» հանդեսը և, ինչպես վկայում է BBC-ն, գրել է. «Ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և պատերազմից հետո հարյուրավոր հայ կանանց և երեխաներին փրկել է օսմանյան ստորաբաժանումների զանգվածային կոտորածներից»:

Հանդեսը անդրադարձ է կատարել նաև նախագահ Աբդուլլահ Գյուլի երևանյան այցին, նշելով, որ հայ-թուրքական հարաբերություններում հավանական տեղաշարժը կփոխի ուժերի հարաբերակցությունը Կովկասում, ապա և ավելացրել է. «Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը կնպաստի տարածաշրջանում Թուրքիայի հեղինակության աճին: Դա միաժամանակ կարող է կանխել 1915-ի կոտորածները իբրև ցեղասպանություն բնութագրող բանաձևի անցկացումը ԱՄՆ-ի Կոնգրեսում: Այս հանգամանքը, ինչ խոսք, կվշտացնի ցեղասպանության միջազգային ճանաչման համար պայքարող հայկական սփյուռքին, որտեղ ոմանք երկու երկրների մերձեցումը համարում են պատմությունը վերանայելու միջոցով Թուրքիայի արդարացմանը նպատակամղված «թուրքական թակարդ»: Հիրավի

Թուրքիայում «բազները» ճնշում են գործադրում Հայաստանի վրա, որ կատարելապես իրաժարվի ցեղասպանության մասին հիշատակելուց: Ավելին, նրանք պահանջում են, որ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավումը պայմանավորվի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցում առաջընթացի արձանագրման նախապայմանով: Սակայն Գյուլն առնվազն վճռական է՝ շարունակելու բռնած ուղին»:

Գյուլի վճռականությունը կերևա ժամանակի ընթացքում: Սակայն Քեմալ Աթաթուրքը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հարյուրավոր հայ կանանց և երեխաներին ոչ թե փրկել է, այլ անգլո-ամերիկյան զորքերի ճնշման տակ Սիրիայից նահանջելու ճանապարհին «տեղահանված հայերի տեսուչ» նշանակված Հասան Ամջային, ասելով. «*Բանակի թիկունքում մի՞թե վրանգավոր չէք համարում այսքան մեծ թվով հայերի կուտակումը*»: Այս փաստը 2007-ի օգոստոսի 19-ին «Հասան Ամջա» վերնագրով հոդվածում արձանագրել է «Բիրգյուն» թերթի հեղինակ Ումիթ Բայազողլուն:

Համաշխարհայինի ավարտին Քեմալ Աթաթուրքն արդեն իր շուրջն է համախմբել ՀՅ-ն ծրագրած իթթիհաթական ղեկավար գործիչներին, անմիջականորեն իրականացրած «Հատուկ կազմակերպության» մարդասպաններին, որոնց ղեկավար Նազիմը ներառյալ, և Ազգային մեծ ժողովի պատգամավորի կարգավիճակ է շնորհել հայ ժողովրդի այն դահիճներին, որոնց՝ հայերի զանգվածային կոտորածներին անմիջականորեն մասնակցելու մեղադրանքով օսմանյան ռազմական ատյանը 1919-ին դատապարտել էր, իսկ անգլիական զորահրամանատարությունը, ելնելով ատյանի դատապարտման վճռից, նրանց աքսորել էր Մայթա:

Ավելին, Աթաթուրքը Քյազիմ Կարաբեքիրին բռնացիորեն հրամայել է. «*Բարոյապես և ֆիզիկապես ոչնչացնել Հայաստանը*»: Ի դեպ, ինքը նույնպես «Իթթիհաթ վե թերաքքի» կուսակցության ղեկավար կազմում էր, 1908-ի երիտթուրքական հեղափոխությունն իրականացնող «Սալոնիկյան» բանակի հրամանատարներից, այնուհետև ծառայել էր նաև «Հատուկ կազմակերպությունում»:

26.11.2009

«ԵԹԵ ԵՍ ՖԱԵԻՍ ԵՄ, ԱՊԱ ԻՆՉՊԵ՛Ս ԱՆՎԱՆԵԼ ԴԵՐՍԻՄԻ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՃՆՇՈՂ ԱԹԱԹՈՒՐԿԻՆ, ՆԱ Է՛՛՛ Ե ՖԱԵԻՍ»
Հայրարարում է ժողովրդահանրապետական կուսակցության փոխնախագահ Օյմենը

«Ազգը» նոյեմբերի 20-ի և 21-ի համարներում անդրադարձավ ժողովրդահանրապետական կուսակցության փոխնախագահ, նախկին դեսպան Օնուր Օյմենի Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝

Մեջլիսի նոյեմբերի 10-ի նիստում ունեցած ելույթին: Հիշեցնենք, որ այդ նիստում նախնական քննարկման էր դրվել վարչապետ Էրդողանի կառավարության «Քրդական նախաձեռնությունը»: Դրա իրականացման անհրաժեշտությունը հիմնավորելու համար ԹՀ վարչապետը, նկատի առնելով PKK-ի հետ կոիվներում զոհվածներին, ասել էր. «Անհրաժեշտ է լուծել քրդական հարցը, որպեսզի մայրերն այլևս չարտասվեն երկրում»:

Պատասխան ելույթով ամբիոնին էր մոտեցել Օյմենը և հարցրել վարչապետին. «Մի՞թե Աթաթուրքը բանակցությունների սեղանին նստեց Շեյխ Սաիդի հետ: Նա բանակցե՞լ է Դերսիմի ապստամբության պարագլուխների հետ: Մայրերը չե՞ն արտասվել Դերսիմի ապստամբության օրերին: Դուք այդպես եք ասում, որովհետև ահաբեկչության դեմ պայքարելու հանդգնություն չունեք»:

Օյմենի խոսքերը բուն հակազդեցություն էր առաջացրել հատկապես ալավիների շրջանում, որոնց թվաքանակի մասին տվյալները տատանվում են 7-20 միլիոնի միջև: Համենայնդեպս, 1980-ի սեպտեմբերի 12-ի պետական հեղաշրջումից հետո գեներալ Քենան Էվրենի կարգադրությամբ անցկացված գաղտնի հաշվառման տվյալներով, Թուրքիայում կար 12 միլիոն ալավի:

Խնդիրն, իհարկե, ալավիների թվաքանակը չէ, այլ քրդական հարցի կարգավորման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու փոխարեն Քենալ Աթաթուրքի օրինակին հետևելու և PKK-ին գեներալ ուժով ճնշելու Օյմենի կոչը վարչապետ Էրդողանին: Սա այն դեպքում, երբ կառավարությունը 1937-38թթ. Դերսիմի ապստամբությունը ճնշել է շուրջ 90.000 դերսիմցիներին սպանելու գնով: Թերևս դա է պատճառը, որ վարչապետ Էրդողանը, հակառակ Դերսիմի իրադարձությունները որպես ապստամբություն որակելու Թուրքիայի պաշտոնական թեզին, օգտագործեց «Դերսիմի կոտորած» արտահայտությունը և դարձավ «Հյուրիեթի» գլխավոր խմբագիր Էրթուրդուլ Օսքյոքի երկիմաստ հարցադրման թիրախ. «Եթե «Դերսիմի միջադեպը» կոտորած է, ապա ի՞նչ բնութագիր ենք տալու Հայկական հարցին»:

Նոյեմբերի 22-ին «Արդարություն և բարգավաճում» կուսակցության քաղաքային վարչությունների խորհրդակցության ժամանակ վարչապետ Էրդողանը, եթե ոչ Օսքյոքին, ապա գոնե Օյմենին մեկ անգամ ևս պատասխանեց. «Պարզորոշ ասեմ... ստատուս-քվոյի օգտին արտահայտվել, կնշանակի լինել սպանությունների, արյունահեղ կոիվների, ավերվածության, անարդարության, անիրավացիության և անօրինականության մասնակիցը... «Մայրերն, իհարկե, արտասվելու են», ասելը անխղճություն է... սպանությունները, կոտորածները, խոշտանգումները, ինչպես նաև քարանձավներում անմեղ

մանուկների մորթոտումը հաստատել, նույնիսկ գովաբանել է: Սրանք, երբ նեղն են ընկնում, թաքնվում են Աթաթուրքի թիկունքում: Շահարկում են նրա անունը: Համոզված եմ, որ իմ ալավի եղբայրները կպատռեն շահարկողների դիմակը»:

Մինչ վարչապետ Էրդողանը Թուրքիայի պաշտոնական թեզն անտեսելու գնով Դերսիմի իրադարձությունները զանգվածային կոտորած էր անվանում, ալավիներն Օյմենին նույնացնելով Հիտլերի հետ, անվանեցին ֆաշիստ, իսկ նա «Չամանի» նոյեմբերի 17-ի համարում հրապարակված հարցազրույցով պատասխանեց նրանց. «Մի՞թե ֆաշիստ էր նաև Աթաթուրքը»:

Հարցազրույցի Աթաթուրքին վերաբերող հատվածը կարևոր է Թուրքիայում Աթաթուրքի տաբուի վերացման առումով: Իսկ դրա վերացումը անմիջականորեն այդ տաբուով պայմանավորված հարցերը երկրում ազատորեն վերարձարծելու, ինչպես նաև այդ հարցերում, որոնց թվում է նաև Հայոց ցեղասպանությունը, պաշտոնական թեզը գոնե մասնակի վերագնահատման առումով: Այդ իսկ պատճառով էլ նպատակահարմար ենք գտնում Օյմենի հետ «Չամանի» արած հարցազրույցի Աթաթուրքին վերաբերող հատվածը:

Թղթակցի «Դերսիմում ավելի քան 90.000 մարդ սպանվեց, որոնց մեծ մասն անմեղ էին, այդ մասին են վկայում պատմությունն ու ակադեմիկները: Դուք անտեսո՞ւմ եք այս ամենը» հարցին ի պատասխան, Աթաթուրքի հիմնադրած «Իթթիհադ վե Թերաքիի» իրավաժառանգորդ, Ժողովրդահանրապետական կուսակցության փոխնախագահ Օնուր Օյմենն ասում է. «Պատմությունը թողնենք պատմաբանների հայեցողությանը: Ապստամբությունների ժամանակ աշխարհը միշտ էլ ականատես է եղել դրամաների: Երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև օրս քաղաքացիական պատերազմների և ապստամբությունների հետևանքով ավելի քան 18 միլիոն մարդ է սպանվել աշխարհում: Մեզ համար ցավալի է Դերսիմում գեթ անմեղ մեկ մարդու սպանությունը: Իմ ասածն այն է, որ «Արդարություն և բարգավաճում» կուսակցության մեթոդը Աթաթուրքի մեթոդը չէ, ինչպես ներկայացնում են: Ե՞ս եմ ճնշել Դերսիմի ապստամբությունը: Ինչո՞ւ Աթաթուրքն այդպես վարվեց: Ջելալ Բայարը վարչապետն էր: Ֆեզի Չաքմաքը՝ Ջու ԳՇ-ի պետ: Նրանք ֆաշիստ էին: Որևէ մեկին վշտացնելու մտավախությամբ մեր իմացածը պահում ենք մեր մեջ: Որևէ մեկին չվիրավորելու համար չենք փորփորում պատմությունը: Իհարկե, չեմ ընդունում, երբ ինձ Հիտլերի հետ են նույնացնում»:

ՔԱՆԻ ԴԵՌ ԶԻ ՎԵՐԱՅԵԼ ԱԹԱԹՈՒՐՔԻ ՏԱԲՈՒՆ, ԹՈՒՐՔԵԱՆ ԿԱՌԱՉԱԾ ԿՄՆԱ ԺԵՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Այս հանգամանքը առաջնային է դարձնում ժխտողականության հարցի ուսումնասիրությունը

Հակառակ հայաստանյան որոշ գիտնականների ենթադրություններին, թե ՀՅ-ն լիարժեք ուսումնասիրված է, և հայ պատմագրությունը սպառիչ պատասխան է տվել բոլոր հարցերին, այնուամենայնիվ, դրանցից շատերն առ այսօր բաց են մնում:

Չուսումնասիրված հարցերից թերևս պետք է առանձնացնել քեմալականների իթթիհատական ծագումն ու օսմանյան ցեղասպան քաղաքականության ժառանգականությունը, թուրքական ժողովրդական զանգվածների և քրդական աշիրաթների մասնակցությունը հայերի կոտորածներին, «Թեջիլաթ-ը Մահսուայի» գլխավորությամբ պետական կառույցների և բանակի դերը, Մուսթաֆա Քեմալի մերձակա շրջապատի հայասպան դիմագիծն ու Թուրքիայի Հանրապետության հիմնադիր կազմի անմիջական մեղսակցությունը, ՀՅ-ի թուրքական ժխտողականությունը, ճշմարտության ուրացման հարցում պետություն-հասարակություն համերաշխությունը ԹՀ-ում ժխտողականության խորքային արմատները, հայերի ունեցվածքի պետական և ժողովրդական հափշտակումը, համայնքային «լքյալ կալվածքների» փոխանցումը պետական զանձարան, հայ երեխաների կյանքը «փրկելու» թուրքական դրսևորումների նկրտումը, ինչպես նաև հայկական հարցի անմիջական առնչությունը Քեմալ Աթաթուրքի տարուի հետ:

Ամենևին ուսումնասիրված չեն նաև ինչպես ԹՀ-ում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, մասնավորապես ԱՄՆ-ում, Ավստրալիայում և Եվրոպայում գործող «ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարող» կազմակերպությունները, որոնք հակահայ քարոզչությամբ ժխտողականությունը մասսայականացնելու, դրան միջազգային հնչեղություն հաղորդելու և դա ՀՅ-ի նախաձեռնություններին հակադրելու միջոց են դարձել թուրքական պետության համար:

Այս կազմակերպությունները բազմաբնույթ են: Բացի «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի» միությունից, ռազմավարական կենտրոններից, հիմնադրամներից, ինչպիսին՝ «Թուրքերի ցեղասպանության ուսումնասիրման» հիմնադրամն է, և պաշտոնաթող սպաների միություններից, ազգային կոմիտեներից, ՀՅ-ի ճանաչման դեմ պայքարում ԹՀ-ում ներգրավված են քաղաքական կազմակերպություններին առընթեր «օջախները», իսկ արտերկրում, այսպես կոչված, քաղաքացիական ՀԿ-ներն ու «Քեմալական մտածողության» միության մասնաճյուղերը: Միայն ԱՄՆ-ում «Թուրքական ֆորումի» հովանու ներքո կա այդպիսի շուրջ 100 կազմակերպություն:

Ինչ վերաբերում է Թուրքական պատմական ընկերությանն ու երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ սրանք էլ էրզրումի «Աթաթուրք» համալսարանի գլխավորությամբ «հիմնավորում» են թուրքական ժխտողականությունը: Նշված բոլոր միությունները, կազմակերպությունները, հիմնադրամները Թուրքիայում թե արտերկրում վայելում են թուրքական պետության հովանավորությունը, իսկ վարչապետարանին առընթեր «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի համակարգման խորհուրդը» վերահսկում է սրանց գործունեությունը: Ըստ երևույթին թուրքական ՁՈւ ԳՇ-ի ռազմավարական հետազոտությունների կենտրոնն էլ ուղղորդում է այդ խորհրդին: Այլ կերպ, ժխտողականության հիմնավորման գործին լծված է նաև Թուրքիայում գործադիր և օրենսդիր իշխանություններին վերահսկող գլխավոր շտաբը:

Որքան էլ ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը սպառի թուրքական ժխտողականության դիրքերը կամ նախկին ԱԳ նախարար Իյթեր Թուրքմենը, նախկին դեսպան Յալըմ Էրալիը, տարբեր մտավորականներ, ինչպիսիք են Ջենգիզ Աքթարը, Մուրադ Բելգեն ընդգծեն, որ Հայաստանը երբևէ չի հրաժարվի ցեղասպանության ճանաչման քաղաքականությունից, ընդ որում բացառելով պատմաբանների համատեղ հանձնաժողովում 1915-ի իրադարձությունների շուրջը հայկական կողմի հետ ընդհանուր լեզու գտնելու հնարավորությունը, այնուամենայնիվ ԹՀ-ն ժխտողականությունից հրաժարվելու որևէ նախանշաններ չի ցուցաբերում: Ընդհակառակը, ճանաչման գործընթացի ծավալմանը զուգընթաց ցեղասպանության թուրքական ժխտողականությունը հետզհետե ագրեսիվ է դառնում:

Ըստ երևույթին Թուրքիան այլ հնարավորություն էլ չունի, որովհետև ժխտողականությունից հրաժարվել նրա համար կնշանակի ինքնակամ վերացնել երկրում Հայկական հարցի վրա դրված տարուն: Դա թուրք գիտնականների առջև կբացի ՀՅ-ն ոչ թե ժխտողականության դիրքերից, այլև գիտականորեն որպես պատմական հարց ուսումնասիրելու հեռանկարը:

Թուրքիայում ՀՅ-ի հարցի գիտական ուսումնասիրության դեպքում կբացահայտվի ճշմարտությունը թուրք հասարակության համար: Կպարզվի, որ քեմալականների ազգային պետությունը ստեղծվել է այլ ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքում, Մուստաֆա Քեմալը շրջապատված է եղել հայ ժողովրդի դահիճներով, հետևաբար ժամանակակից Թուրքիայի հիմնադիրները մարդասպաններ են:

Այս ամենը անհրաժեշտ կդարձնի ինչպես քեմալականների ազգային պատերազմների, այնպես էլ Թուրքիայի Հանրապետության ստեղծման պատմության վերանայումը: Այսպիսով անխուսափելի կդառնա Աթաթուրքի տարուի վերացումը ԹՀ-ում: Այլ կերպ, քանի դեռ

այդ տարուն գոյություն ունի, ԹՀ-ն չի կարող առերեսվել սեփական պատմության հետ: Հետևաբար նա կառչած է մնալու ՀՅ-ի ժխտողականությունից: Այս հանգամանքը ցեղասպանության միջազգային ճանաչման ներկա փուլում առանձնակի կարևորում է թուրքական ժխտողականությունն ուսումնասիրելու նշանակությունը: Քանի որ ժխտողականությունը հիմնավորում, քարոզում, միջազգայնորեն տարածում են «ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարող» թուրքական կազմակերպությունները, ուստի և մեզ համար առաջնային է դառնում նաև այս կազմակերպություններին ուսումնասիրելը:

22.06.2011

ԳՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԷՐ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԱԹԱԹՈՒՐԻՔԻ 80 ՏԱՐԻ ՔՈՂԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Դրա ամբողջական տեքստը հրապարակվել է միայն վերջերս

Օրերս Թուրքիայում լույս է տեսել Աթիլա Օրալի «Աթաթուրքի գրաքննության ենթարկված նամակը» գիրքը: 80 տարի քողարկված 21-էջանոց այս նամակը ժամանակակից Թուրքիայի հիմնադիրը հասցեագրել է Թուրքական պատմական ընկերությանը:

Նախքան նամակին անդրադառնալը նշենք, որ Թուրքական պատմական ընկերությունը Քեմալ Աթաթուրքի նախաձեռնությամբ ստեղծվել է 1932-ին: Հիմնադիր կազմի անդամները Աթաթուրքի հոգեդուստր Աֆեթ Ինանի գլխավորությամբ ձեռնամուխ են եղել կամայականորեն թուրքացնել ինչպես փոքր, այնպես էլ Առաջավոր Ասիայի այնպիսի հնագույն ժողովուրդներին, ինչպիսիք են խեթերը, շումերները, աքայացիները, աքքադացիները, խուրիները: «Թուրքացումից» չեն խուսափել նաև արիացիները, արիական լեզուն և մշակույթը:

Այս մոտեցումը պատահական չէր, այլ պայմանավորված էր ոչ թուրք ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքում թուրքական ազգային պետություն ստեղծելու և բազմազգ երկրում նորաստեղծ պետության միասնականությունն ապահովելու քաղաքական առաջադրանքով: Այլ կերպ, թուրք գիտնականների առջև խնդիր էր դրվել գիտականորեն հիմնավորելու թուրքերի իրավունքները Փոքր Ասիայի տարածքի նկատմամբ, մասնավորապես ապացուցելու, որ թուրքերն ունեն տեղական ծագում, իսկ ԹՀ-ի բազմազգ բնակչությունը՝ քրդերը, լազերը, արաբները և այլն, ռասայական միասնություն:

Թուրքական պետության միասնականությունն ապահովելու համար թուրքերի տեղական ծագումն ապացուցելու խնդիրը թուրք գիտնականների առջև Քեմալ Աթաթուրքն էր դրել: Սակայն վերջիններիս անհեթեթության հասնող կեղծարարությամբ պայմանավորված նացիոնալ-շովինիստական ագրեսիվ տեսությունը խիստ քննադատության ենթարկվեց Արևմուտքի գիտական շրջանակներում:

1938-ին Աթաթուրքի մահից հետո Թուրքիայում հետզհետե ասպարեզ իջան պանթուրքիստները, որոնք էլ սկսեցին տիրել նախաձեռնությանը Թուրքական պատմական ընկերությունում:

Եթե նացիոնալ-շովինիստ պատմաբանները մարդկային մշակույթային ամեն մի դրսևորման մեջ տեսնում էին «թուրքական ոգի», ապա պանթուրքիստները թուրքալեզու բոլոր ժողովուրդներին հայտարարեցին միասնական մեկ ազգ և ազգի վաղեմի օրրանը համարեցին այն ամբողջ տարածքը, որը բնակեցված է թուրքերի հետ էթնիկ, պատմական առնչություն ունեցող ժողովուրդներով:

Արևմտյան գիտնականների քննադատությանը չդիմացավ պանթուրքիստ պատմաբանների ոչ պակաս հակազիտական տեսությունը: Սակայն ժամանակի ընթացքում Արևմուտքի և Թուրքիայի միջև հաստատվեցին սերտ կապեր: Այս պայմաններում աստիճանաբար նվազեց նշված տեսությունների քաղաքական պահանջարկը: Այդ ընթացքում վերստին միջազգային ասպարեզում հայտնվեց ՀՅ-ի ճանաչման հարցը: Դա ստիպեց, որ Թուրքական պատմական ընկերությունը վերագնահատի իրավիճակը: ՀՅ-ն դարձավ ընկերության զբաղմունքի հիմնական առարկան, իսկ ժխտողականության հիմնավորումը՝ գլխավոր առաջադրանքը վերջին տասնամյակներում, ինչի մասին, ի դեպ, վկայում են առաջադեմ որոշ թուրք գիտնականներ:

Գալով 16-17 օգոստոսի, 1931 թվագիր նամակին, ապա դրա ամբողջ տեքստը առաջին անգամ հրապարակվել է Օրալի գրքում, որի առնչությամբ հեղինակը, ըստ «Հաբերթուրքի» հունիսի 19-ի համարի, ասում է. «Թուրքական պատմական ընկերությունը ընդամենը մի քանի տող է հրապարակել նամակից: Այդ տողերի մեջ ուրույն տեղն ունի Աթաթուրքի հանրահայտ արտահայտությունը. «Պատմություն գրելը այնքան է կարևոր, որքան պատմություն կերտելը: Եթե գրողը հավատարիմ չմնա կերտողին, ապա ճշմարտությունը, որն անփոփոխ է միշտ, մարդկությանը շփոթեցնող բնույթ կստանա: Դուք համամիտ եք ինձ հետ»: Նույնիսկ գրաքննության է ենթարկվել այս արտահայտությունը: «Դուք համամիտ եք ինձ հետ» նախադասությունը կրճատելուց հետո միայն Աթաթուրքի խոսքը արձանագրվել էր Թուրքական պատմական ընկերության կենտրոնական վարչության շենքի մարմարե ցուցանակի վրա»:

Այնուհետև Օրալը գրքից արած մեջբերումներով շարունակում է. «Ինդրո առարկան դասագրքերն էին: Աթաթուրքը միջնակարգ դպրոցների համար պատմության դասագիրք պատրաստելու հանձնարարական է տալիս Թուրքական պատմական ընկերությանը: Ընկերությունը ձեռնամուխ է լինում դրան: Դասագրքի «Իսլամի պատմություն» և «Թուրքերի տեղը իսլամում» բաժինները գրի է առնում Եգիպտոսի Ալ Ազհար հոգևոր համալսարանի շրջանավարտ Ջաքիր

Կադիրին: Սակայն Աթաթուրքը, պատճառաբանելով, թե այս բաժինները գրված են արաբական ազգայնականության ոգով, առարկում է: Նա կարգադրում է խմբագրական փոփոխություններ կատարել տեքստում: Սակայն փոփոխությունները նրան չեն բավարարում և նա մոլեգնում է: Ապա և ասում. «Ի՞նչ նպատակ է հետապնդում արաբական բանակին գերի ընկած մարդկանցից ստրուկների (ղուլամ) դասակարգ ստեղծելու և այս ստրուկների թուրքական ծագումն ընդգծելու նկրտումները, առանց ճշմարտությունը պարզելու չի կարելի այս բաժիններն ընդգրկել պատմության դասագրքերում: Պարոն Թևֆիք (Թուրքական պատմական ընկերության նախագահ) Ջաքիր Կադիրիի տխմար ծանոթագրությունները սրբագրելիս հաշվի առեք այս հանգամանքը: Ավելի լավ է առհասարակ գիրք չգրել, քան գրելու համար զոջալ: Գիտության ոլորտում կասկածամիտ լինելը Եգիպտոսի Ալ Ազհար մզկիթում կրթվածների գրածին հավատալուց անհամեմատ լավ է»: Ծագումով Ջաքիր Կադիրի Ուզանը Թուրքիստանից է, ծնվել է 1878-ին, գրի առած բաժնում նա տուրք է տվել Ալ Ազհար մադրասայի շեյխերի տեսակետներին:

21.03.2013

«1915-ԻՆ ՔԵՄԱԼԱՎԱՆՆԵՐԻՑ ՇԱՏԵՐԸ ՀԱՐՍԱՑԵԼ ԵՆ, ԹԵՐԵՎՍ ԴԱ Է ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՐՔԻՆՆԵՐԻ ԱՌԵՐԵՍՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ»

Հարցազրույցում ասում է Թաներ Աքչամը՝ պարզաբանելով փոխհարուցման իմաստը

«Ազգի» մարտի 16-ի համարում թուրքական իրականության առանձնահատկությունը դարձած հայատյացության դրսևորումներին անդրադառնալիս, որոնք ամենաայլանդակ տեսքով արտահայտվել էին Խոջալուի «կոտորածի» այսպես կոչված ոզեկոչման ստամբուլյան հանրահավաքում, ընդարձակ մեջբերումներ էինք արել Թաներ Աքչամի հետ «Թարաֆի» հարցազրույցից, հրապարակված՝ այդ թերթի մարտի 12-ի համարում:

Թղթակցի հարցերին ի պատասխան Աքչամն ասում էր, որ մոտենում է ՀՅ-ի 100-րդ տարելիցը, ուստի հանրահավաքը կազմակերպվել է 2015-ին ընդառաջ, հայերի կոտորածին բացի պետությունից մասնակցել է նաև թուրք հասարակությունը, հայերի ունեցվածքը լուրջ դեր է խաղացել Անատոլիայում հայկական կոտորածների կազմակերպման առումով, մարդիկ, մտածելով, թե զայլու են իրենց ձեռքից խլելու հարստությունը, վախենում են փոխհատուցումից, եթե օրակարգի խնդիր դառնա, ապա փոխհատուցման գործընթացն այդպիսի զարգացում չի ունենալու:

Ակամա հարց է ծագում. ինչպիսի՞ զարգացում է ունենալու: Հարցին Աքչամը պատասխանում է հարցազրույցի «Թարաֆ» թերթի

մարտի 14-ի համարում հրապարակված 3-րդ մասում: Հարցազրույցի այս հատվածում թղթակցուհու հարցերն արտացոլում են 2015-ի շեմին Թուրքիայի ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի առավել ծավալումից, և դրա հետևանքներից բխող մտավախությունները, իսկ Աքչամը պատասխաններով շարադրում է Յեղասպանության ճանաչումից հրաժարվելու հետևանքները Թուրքիայի համար, փոխհատուցման հավանական տարբերակները, Յեղասպանության կազմակերպիչների նկատմամբ քեմալականների դիրքորոշումն ու պատմության հետ առերեսման առջև կանգնած խոչընդոտները:

Շարադրանքն ամբողջությամբ առնչվում է Յեղասպանության հետևանքների վերացման Աքչամի տեսակետներին, իսկ հետևանքների վերացումը, իբրև առանձին հարց, հավանաբար միջազգային օրակարգ կմտնի աշխարհում Յեղասպանության լիարժեք ճանաչումից հետո: Անկախ Աքչամի պատասխանների բնույթից, շոշափվող թեման հետաքրքրական է, ուստի հարցազրույցի 3-րդ հատվածը ներկայացնում ենք հարցուպատասխանի ձևով:

- Մոտենում է ապրիլի 24-ը: Հայկական հարցն աշխարհում վերստին կմտնի՞ օրակարգ:

- Այո, առավելագույն ձևով, որովհետև բոլորն ասում են սրում:

- Ձեր կարծիքով, Հայկական հարցի առնչությամբ այս տարի ի՞նչ կանի ԱՄՆ-ը:

- Հավանաբար նոր բան չի անի, որովհետև 2012-ին ԱՄՆ-ում նախագահական ընտրություններն են: Ընտրություններից առաջ Օբաման հազիվ թե փոխի վերաբերմունքը, բայց 2015-ին, իմ համոզմամբ, նա կարտասանի ցեղասպանություն բառը:

- Ի՞նչ կփոխվի, եթե ԱՄՆ-ը ճանաչի Յեղասպանությունը:

- Շատ բան, որովհետև միջազգային ասպարեզում Թուրքիան կարողանում է ազատ խաղալ՝ շնորհիվ ԱՄՆ-ի, Անգլիայի և Իսրայելի թույլտվության: Եթե այս եղակը ճանաչի Յեղասպանությունը, ապա Թուրքիան այսքան անկաշկանդ ձևով խաղալ չի կարողանալու: Ժխտողականությունը աշխարհում կմեկուսացնի Թուրքիային: Նա կհայտնվի Հարավային Աֆրիկայի Հանրապետության երբեմնի ռասիստական կարգավիճակում կամ կնմանվի մեր օրերի Հյուսիսային Կորեային: Պարտադիր չէ, որ Թուրքիան ևս «Յեղասպանություն» ասի: Սակայն նա պարտավոր է 1915-ը ընդունել որպես մարդկայնության դեմ կատարված մեծագույն հանցագործություն և ներողություն խնդրել:

- Մեր հողերում կոտորածի հետևանքով հարստության տերերը փոխվեցին: Ներողություն խնդրելու դեպքում մի՞թե չի առաջանա հայկական ունեցվածքը վերադարձնելու և փոխհատուցում վճարելու խնդիրը:

- Երբ Աթաթուրքը ափ իջավ Սամսունում (1919-ի մայիսի 19-ին, սկսելու ազգային պատերազմները), նամակով դիմեց քուրդ աղաներին և զգուշացրեց. «Հայերը կգան և հետ կվերցնեն իրենց ունեցվածքը»: Հայերի վերադարձը և իրենց ունեցվածքին տեր կանգնելու վախը լուրջ ազդակ հանդիսացան ազատագրական պատերազմում: Ունեցվածքն իրականում անհնար է վերադարձնել, թող ոչ ոք չխաբի թուրք մարդուն: Փոխհատուցման հարցը հնարավոր է լուծել երկու կառավարությունների բանակցություններով միայն: Ընդ որում՝ լուծումը պետք է բավարարի երկու հասարակություններին էլ: Դրան կարող է հասնել երկու կառավարությունների կազմած համատեղ հանձնաժողովը, որի քննարկումները մատչելի պետք է լինեն հասարակությանը, որովհետև փոխհատուցումը բարոյական կատեգորիա է, զուտ փող չի ենթադրում:

- *Ի՞նչ պետք է հասկանալ փոխհատուցում ասելով:*

- Ներողություն խնդրելը, Անատոլիայում առկա հայկական հետքը երևան հանելը, Հայաստանին սոցիալ-տնտեսական օգնություն տրամադրելը, նրան Տրապիզոնի նավահանգստից օգտվելու հնարավորություն տալը կամ, ինչպես Հրանտ Դինքն էր առաջարկում, ԵՄ-ին Հայաստանի հետ համատեղ անդամակցելու՝ Թուրքիայի պատրաստակամությունը:

- *Ինչո՞ւ Թուրքիան չի կարողանում լուծել Հայկական հարցը: Դրան խոչընդոտում են Ադրբեջանի հետ հարաբերությունները:*

- Դա, ինչ խոսք, դեր խաղում է: Սակայն կան մի քանի այլ պատճառներ: 90 տարի շարունակ մեր պետությունը սուտ է ասել մեզ: Մարդկանց ուղեղը լվացել են ազգայնամոլությամբ: Եթե պետությունը 90 տարի հետո ասի, որ սուտ է խոսել, ապա մարդիկ կզայրանան: Դրա հետ ԹՀ-ի հիմնադիրների մի զգալի հատված, ցավոք, մասնակցել է 1915-ին կամ էլ հարստացել այդ թվերին:

- *Մենք գիտենք, որ հայերի ունեցվածքը եղել է երկրի երեկվա և այսօրվա մեծահարուստների հարստացման աղբյուրը: Մե՞ծ է նրանց թիվը ազգային պայքարը ձեռնարկողների (նկատի ունի քեմալականներին) մեջ:*

- Այո, սրանք իթթիհադական կադրերն են: Զինադադարից հետո (1918-ի հոկտեմբերի 30-ին) կամ մնալու էին Ստամբուլում և 1915-ի պատճառով դատաստանի առջև կանգնելու, կամ էլ անցնելով Անատոլիա՝ դառնալու էին ազգային ազատագրության հերոս: Նրանք նախընտրեցին 2-րդ տարբերակը: Իհարկե ասածս բոլորին չի վերաբերում: Բոլորն անխտիր մեղավոր չեն: Սակայն կա մի սովոր հատված, որը 1915-ին ուղղակի մասնակցել կամ 1915-ին հարստացել է: Ներկա պահին հենց դա է 1915-ի հետ առերեսման գլխավոր դժվարությունը:

ԱՐԽԻՎՆԵՐ, ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐ

18.05.2002

ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ԲԱՅՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԵՂԾԻՔ ԵՆ

Դրա վկայությունը «Տեղեկություն ձեռք բերելու իրավունքի մասին» օրենքն է Թուրքիան ՀՅ-ի հարցին հիվանդագին մոտեցում է ցուցաբերում: Հարցի չեզոքացման հրամայականը ստիպում է նրան կեղծիքի դիմել: Սակայն կեղծարարությունը բախվում է Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Թուրքական իշխանությունները, «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպության նախագահ Այի Էրթեմի դիպուկ արտահայտությամբ, հետզհետե համոզվում են, որ «արևը չի կարելի ցեխով ծածկել»: Դա նրանց հանում է հավասարակշռությունից: Այս պայմաններում նրանք ցեղասպանության հարցին իրենց մոտեցումը վերանայելու դիմաց կեղծարարության ձևն ու բովանդակությունն են փոխում և ամեն կերպ փորձում դրա մեջ ներգրավել սփյուռքահայ գիտնականներին:

ՀՅ-ի թուրքական կեղծարարության նորահայտ ձևի և նոր բովանդակության առումով հատկանշականը ս.թ. ապրիլի 24-ի նախօրեին Թուրքիայում «հայկական անհիմն պնդումների դեմ» ձեռնարկված գրոհի բնույթ կրող հակաքայլերն են: Դրանցից կարելի է առանձնացնել հայկական հարցը դպրոցական ծրագրերում ընդգրկելու և համապատասխան դասագրքերի պատրաստումը ԱԱԽ-ի գլխավոր քարտուղարության փորձագետներին հանձնարարելու Թուրքիայի պետական աստիճանների որոշումը: Ինչի մասին ապրիլի 12-ի համարում տեղեկացնում էր «Ակօսը»:

«Ակօսին» ապրիլի 19-ի համարում լրացրեց «Զամանը», նշելով. «Վարչապետարանին առընթեր հատուկ խումբն արխիվային փաստաթղթերի հիման վրա բացահայտեց, որ հայ ավագակախմբերն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 518.105 թուրք են սպանել: Թուրքիայի և Ադրբեջանի արխիվներում պահպանվող 89 փաստաթղթերն ամփոփվել են երկհատորյա աշխատության մեջ»: Ըստ «Զամանի», Անկարայում Թուրքիայի պետական արխիվների գլխավոր վարչության շենքում կազմակերպվել է փաստաթղթերի ցուցադրումը, և դրա առնչությամբ Մարմարա խմբի ռազմավարական և սոցիոլոգիական հետազոտությունների հիմնադրամը հենց ապրիլի 19-ին հանդիպում է իրավիթել:

Հանդիպմանը հետևել է մարտի 20-21-ին Անկարայում ԵՌՈՒԿ-ին կից գործող ՀՀԻ-ի կազմակերպած «Հայագիտական ուսումնասիրությունների թուրքական կոնգրեսը»: Եթե կոնգրեսին, ինչպես այդ

մասին ապրիլի 26-ի համարում նշում է «Ակօսը», հրավիրվել է 120 պատվիրակ, այդ թվում՝ ԱՄՆ-ից, որոնք շուրջ 100 զեկուցում են կարդացել, ապա հանդիպմանը մասնակցել են պաշտոնաթող թուրք գեներալներ, նահանգապետներ, Թուրքիայի նախկին դեսպաններ, թուրքական ներքին և արտաքին գործերի նախարարությունների բյուրոկրատներ, ինչպես նաև Պետական արխիվների գլխավոր վարչության պետ Յուսուֆ Սարընայը:

Հանդիպումը վարել է հայտնի քաղաքագետ պրոֆ. Հասան Բյունին, որտեղ Սարընայի հետ ելույթ է ունեցել Թուրքիո հայոց պատրիարք Մեսրոպ Բ. Մուֆաֆյանը: ՀՅ-ի հարցին Թուրքիայի հիվանդագին մոտեցումը հիմք է տալիս ենթադրելու, որ թուրքական դպրոցներում հայկական հարցի ուսուցումը ընթանալու է թուրքերի նկատմամբ հայերի կատարած «եղեռնը» ուսուցանելու ուղղությամբ, ապա այդ եղեռնի մասին վկայող «փաստաթղթերի» ցուցադրումը Պետական արխիվների գլխավոր վարչության շենքում կանխորոշել է ինչպես հանդիպման, այնպես էլ Կոնգրեսի աշխատանքների ընթացքը: Այսպիսով, Թուրքիան սկսել է ի լուր աշխարհի աղաղակել. «Մենք մեր արխիվները բացում ենք, իսկ հայերը՝ ոչ»: Այս առումով պատահական չէր Կոնգրեսի եզրափակիչ հայտարարության «գիտական ուսումնասիրությունների նպատակով հայկական արխիվները բացելու» Հայաստանին հասցեագրված կոչը:

Հայկական արխիվները փակ չեն, հետևաբար բացելու մասին կոչերը որպես թուրքական խորամանկության դրսևորում, այլ երկրների գիտական շրջանակներին ապակողմնորոշելու նպատակ են հետապնդում: Ինչ վերաբերում է իր պետական արխիվները բացելու Թուրքիայի հայտարարություններին, ապա դրանք ընդամենը կեղծիք են: Համոզվելու համար կարելի է անդրադառնալ «Ռադիկալ» թերթի 1998թ. հուլիսի 10-ի համարին, որտեղ «Մի՞թե օսմանյան արխիվները պետական գաղտնիք են» խորագրի տակ փորձ է արվում վերլուծել թուրքական նոր օրենքի (որն այդ պահին նախագծի տեսք ուներ) «Պետական գաղտնիքի» մասին 35-րդ հոդվածը և դրա ձևափոխումն անմիջականորեն պայմանավորում է ՀՅ-ի շուրջ ծավալվող բանավեճերի աշխուժացմամբ:

Ըստ «Ռադիկալի», հոդվածի առաջին պարբերությունում բառացի նշվում է. «Քաղաքացիների տեղեկություն ձեռք բերելու իրավունքը չի տարածվում պետական գաղտնիքի բնույթ կրող և գաղտնիության աստիճանը վարչապետարանի որոշմամբ կանոնակարգվող այն գիտելիքների և փաստաթղթերի հետ, որոնց բացահայտումն ակնհայտ վտանգ է ներկայացնում պետության ապահովության, նրա արտաքին հարաբերությունների, ազգային անվտանգության ու

պաշտպանության համար, նախահանրապետական շրջանին վերաբերող օսմանյան արխիվների վրա»:

Ակամա հարց է ծագում, եթե տեղեկություններ ձեռք բերելու իրավունքի մասին օրենքով պետական գաղտնիք են համարվում օսմանյան արխիվները և դրանց դռները փակվում են նույնիսկ թուրք գիտնականների առջև, ապա արխիվների բացման կեղծիքը ի՞նչ նպատակ է հետապնդում: Ըստ երևույթին, նպատակը հայ գիտնականների հետ «այսպես կոչված ՀՅ-ի պնդումները» համատեղ քննարկելն է, որպեսզի «պնդումների սնանկությունն» ապացուցելիս նրանք ապացուցման մասնակիցը դառնան: Ինչպե՞ս, ՀՅ-ի հարցը թուրքերի նկատմամբ հայերի կատարած «եղեռնին» առնչվող նյութերի վրա ուսումնասիրելով:

Հարկ է սակայն նշել, որ այդ նյութերը ևս օրենքով պետական գաղտնիք համարվող օսմանյան արխիվներում են գտնվում: Ուրեմն, «Տեղեկություններ ձեռք բերելու իրավունքի մասին» օրենքը թերի է: Քանի որ թերիությունը ենթադրում է խախտում, այդ իսկ պատճառով թուրքերը «արխիվների բացման» հայտարարություններով և՛ օրենքն են շրջանցում, և՛ թե օտարերկրյա՝ հատկապես հայ գիտնականներին արխիվային նյութեր ուսումնասիրելու հնարավորությունից չզրկելու համար այդ նյութերն օրենքի խախտման գնով դուրս են բերում օսմանյան արխիվներից:

20.06.2002

ԹՈՒՐԿԻԱՆ ԾԱՀԱՐԿՈՒՄ Է ԱՐԽԻՎՆԵՐԻ ԲԱՅՄԱՆ ԿԵՂԾԻՔԸ

Թվում է, թե դա նրան կհամոզի կեղծարարության սնանկության մեջ

ՀՅ-ի հարցին Թուրքիան հիվանդագին մոտեցում է ցուցաբերում: Թերևս այդ մոտեցման պատճառով է, որ նա ցեղասպանության պատմական իրողությունը հետևողականորեն ժխտելիս համառորեն ուրանում էր նաև Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ կատարված կոտորածները: ՀՅ-ի միջազգային ճանաչման փորձերը, սակայն, փաստի առջև կանգնեցրին թուրքերին: Նրանք հետզհետե համոզվեցին, որ ցեղասպանությունը ժխտելով նույնիսկ կոտորածներն ուրանալու իրենց մոտեցումը սնանկ է: Այսպիսով, մոտեցման վերանայումն անխուսափելի դարձավ, վերանայման հարցում թուրքերին օգնության հասան Սորբոնի համալսարանի պրոֆ. Ռոբեր Մանթրան և իսրայելցի պատմաբան Իցիահ Ֆրեյդմանը:

Նրանք խելք-խելքի տալով գտան, որ ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարի արդյունավետ ձևն առանց ժխտողական մոտեցումից հրաժարվելու կոտորածների հարցում ճկունության ցուցաբերումն է: Ճկունությունը, ըստ նրանց, ենթադրում էր. «Ոչ թե կոտորածների փաստը հերքել, այլ պնդել, որ

կոտորածներ եղել են, սակայն կոտորվել են նաև թուրքերը»: Թուրքիան հետևեց Մանթրայի և Ֆրեյդմանի արժեքավոր խորհուրդներին: Քանի որ թուրքական ժխտողականությունն ուժի մեջ էր մնում, ուստի մոտեցման վերանայումն ընդամենը հանգեցրեց կեղծարարության ձևի և բովանդակության փոփոխության:

Այդ առումով պատահական չէին «Օսմանյան Թուրքիայում հայերի գազանությունների» վերաբերյալ գրքերի հրատարակումն ու «Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 518 105 թուրք սպանելու հայ ավազակախմբերի» արարքի վարչապետարանին առընթեր «Հատուկ խմբի» ջանքերով բացահայտումը, ինչպես նաև սպանությունների առնչությամբ թուրքական և ադրբեջանական արխիվներում հայտնաբերված 8-9 փաստաթղթի ամփոփումը երկհատորյա «աշխատության» մեջ:

Վերոնշյալ գրքերն ու աշխատությունը ոչ այլ ինչ են, քան Մանթրայի և Ֆրեյդմանի խորհուրդներով հագեցված թուրքական կեղծիքի հերթական դրսևորում: Դրան հետևեց ս.թ. ապրիլի 20-21-ին Անկարայում նախագահ Ահմեդ Նեջրեթ Սեզերի հովանավորությամբ գումարված Հայկական ուսումնասիրությունների կոնգրեսը: Հատկանշական է, որ եթե Սեզերը կոնգրեսին հղած ուղերձում ընդգծում էր. «Գիտական ուսումնասիրությունների համար մեր արխիվները բաց են: Կոչ են անում բոլոր գիտնականներին օգտվել այդ արխիվներից», ապա կոնգրեսի մասնակիցները եզրափակիչ հայտարարության մեջ «հայկական արխիվները բացելու» պահանջով դիմեցին Հայաստանին:

Սեզերի ուղերձը կոնգրեսի հայտարարության հետ համադրելու դեպքում դժվար չէ կոահել ի լուր աշխարհի աղաղակելու թուրքական նկրտումները, թե «մենք մեր արխիվները բացում ենք, իսկ հայերը՝ ոչ»: «Ազգը» մայիսի 18-ի համարում «Թուրքական արխիվների բացման հայտարարությունը կեղծիք է» խորագրով անդրադարձել էր այդ նկրտումներին և անհեթեթություն համարել ինչպես Սեզերի ուղերձում, այնպես էլ կոնգրեսի հայտարարության մեջ տեղ գտած կոչերը:

Ակամա հարց է ծագում ինչո՞ւ, որովհետև հայկական արխիվները փակ չեն, որ բացելու հարկ լինի: Ի դեպ, «Ալյոսի» հունիսի 7-ի համարում, պատասխանելով Հրանտ Տինքի հարցերին, Յեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ. Լավոնտի Բարսեղյանը թուրք պատմաբանների ուշադրությունը հրավիրել է այս հանգամանքի վրա և ընդգծել, որ վերջին շրջանում թուրքական կողմն անընդմեջ աղմուկ է բարձրացնում, թե Հայաստանի արխիվներն իբր փակ են: Ուրեմն արխիվների բացման Հայաստանին ներկայացված պահանջները օտարերկրյա գիտնականներին ապակողմորոշելու նպատակին են ծառայում: Ինչ վերաբերում է գիտական ուսումնասիրությունների համար Թուրքիայի արխիվները բացելու հայտարարություններին,

ապա դրանց անհեթեթությունն էլ պայմանավորվում է թուրքական օրենսդրության «Պետական գաղտնիքի մասին» 35-րդ հոդվածով, ըստ որի «Քաղաքացիների տեղեկություն ձեռք բերելու իրավունքը չի տարածվում նաև նախահանրապետական շրջանին վերաբերող օսմանյան արխիվների վրա»:

Օրենքի մասին 1998թ. հուլիսի 10-ի համարում տեղեկացրել էր թուրքական «Ռադիկալ» թերթը՝ «Մի՞թե օսմանյան արխիվները պետական գաղտնիք են» խորագրով: Ահա «Չաման» թերթը ս.թ. հունիսի 17-ի համարում «Պետական արխիվները ոչնչացվում են» խորագրով տեղեկացնում է. «Թեև 2002թ. մարտի 1-ի կանոնադրությունը նախատեսում է 30 տարվա վաղեմություն ունեցող պետական փաստաթղթերի տրամադրումն ուսումնասիրողներին, բայց և այնպես փաստերը ցույց են տալիս, որ անտարբերության պատճառով ուսումնասիրության արժանի որևէ փաստաթուղթ չի մնացել»:

Ինչպես գրում է «Չամանը», Սեյրուկյան համալսարանի թուրքագիտության ինստիտուտի թուրքերի պատմության ամբիոնի վարիչ դոկտ., պրոֆ. Յուսուֆ Քյուչուքդաղը, ահագանգելով արխիվների անմխիթար վիճակի մասին, ասում է. «Սա Թուրքիայի համար ամոթ է: Աթաթուրքի ժամանակակից հանրապետությունն ստեղծվեց մեծ իղեպներով, սակայն, չգիտես ինչու, ոչ մի կերպ հանրապետական արխիվ չի ստեղծվում: Այսպես շարունակելու դեպքում 50-100 տարի հետո անհնար է լինելու գրել մեր օրերի պատմությունը»:

«Չամանը» նշում է, որ այս տեսակետը սուկ Քյուչուքդաղին յուրահատուկ չէ, այլ գերիշխում է ժամանակակից Թուրքիայի պատմությունն ուսումնասիրող բոլոր պատմաբանների և արխիվային մասնագետների մեջ: Ըստ «Չամանի», Մարմարայի համալսարանի նորագույն շրջանի մասնագետ դոկտ., պրոֆ. Վահդեթին Էնգինն իր հերթին դժգոհել է, որ արխիվային նյութերի անհասանելիության, աղբյուրների բացակայության պատճառով հանրապետական Թուրքիայի պատմության գծով ասպիրանտներին դժվարանում են թեմա առաջարկել: Այնուհետև նա ընդգծել է. «Թուրքիայի Հանրապետության արխիվներն այն աստիճանի են ավերված, որ պատմագրությանը զբաղվելն անհնար է դարձել»: Նույն համալսարանի դոցենտ Օղուզ Իչինսոյը լրացրել է նրան, որ արխիվների վիճակի բարելավման համար երկրում ավելի քան 60 տարի որևէ քայլ չի ձեռնարկվել:

Ինչո՞ւ: «Չամանն» այդ հարցին չի պատասխանում, պարզապես արձանագրում է Թուրքիայում արխիվային փաստաթղթերի 3-4 տարվա պարբերականությամբ ոչնչացման փաստը: Ընդ որում, ոչնչացումը պետական հիմնարկներով չի սահմանափակվում, այլ տարածվում է նաև Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի արխիվներում պահպանվող փաստաթղթերի վրա: Օրինակ՝ 1980թ. սեպտեմբերի

12-ի գինվորական հեղաշրջումից հետո ոչնչացվել են Թուրքիայի քաղաքական կյանքում գործունեության շուրջ 20 տարվա ավանդույթ ունեցող «Արդարություն» կուսակցության արխիվային բոլոր նյութերը:

Քանի որ անհնար է պետական գաղտնիքի մասին օրենք ընդունելով դա տարածել նախահանրապետական շրջանի օսմանյան արխիվների վրա և 3-4 տարվա պարբերականությամբ ոչնչացնել արխիվային փաստաթղթերը, և թե գաղտնիք համարվող ու ոչնչացվող փաստաթղթերի համար օտարերկրյա գիտնականներին երկիր հրավիրելը, ուստի արխիվների բացման հայտարարություններն ավելի քան անհեթեթ են: Ուրեմն, ԹՀ-ն նման հայտարարություններով ոչ միայն կեղծիք է դիմում, այլև ՀՅ-ն վիճարկման ոլորտ ներքաշելու մղումով հայկական արխիվները բացելու պահանջ է ներկայացնում ՀՀ-ին, թերևս նա դրանով շահարկում է կեղծիքը՝ կարծես համոզվելու, որ կեղծարարության հնարավորությունները ամենևին անսահմանափակ չեն:

06.11.2003

ԹՈՒՐԿԵՐԸ ԲՆԱՋՆՋԵԼ ԵՆ ՆԱՐԵԿԱՎԱՆՔԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

Արթուր Գրիգոր Նարեկացու գերեզմանը

Հոկտեմբերի 3-ի և 7-ի համարներում «Ազգը», հենվելով Ստամբուլում հրատարակվող «Մարմարա» թերթի և ինտերնետային «հայ թերթի» հաղորդագրությունների վրա, տեղեկացրել է Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանի Վան կատարելիք այցի ծախողման մասին, որը նախատեսվում էր Ար. Գրիգոր Նարեկացու մահվան 1000-րդ տարելիցի առթիվ դեպի Նարեկ գյուղ կազմակերպված ուխտագնացության շրջանակներում: Միաժամանակ մեր թերթը կարծիք է հայտնել, որ Մութաֆյան պատրիարքի մասնակցությունն ուխտագնացությանը ոմանց անհանգստացնում է Թուրքիայում: Սակայն դա չէր խանգարել, որ ուխտագնացները, թեկուզ առանց Ամենապատիվ սրբազանի, Վան ուղևորվեն:

Մենք տեղեկացրել էինք նաև ուղևորության մասին: «Ակոս» շաբաթաթերթն էլ հոկտեմբերի 10-ի համարում Լորա Բայթար ստորագրությամբ անդրադառնում է ուղևորության մանրամասներին: Պարզվում է, որ ուխտագնացության նախաձեռնողը Մեսրոպ Բ Մութաֆյանն է, ուղևորության ծրագրինը՝ նմանապես, ըստ որի ուխտագնացները 1-ին և 2-րդ օրը, այսինքն՝ հոկտեմբերի 2-ին և 3-ին այցելելու էին Վանի պատմամշակութային հուշարձանները, որոնք մեծապես հայկական սրբատեղիներ են նաև, այնուհետև Վանա լճի Լիմ (Ատիր), Կտուց և Աղթամար կղզիները, 3-րդ օրը նրանց էր միանալու Ամենապատիվ սրբազանը, որպեսզի հիշատակի հոգեհանգստյան պաշտոնը մատուցի Նարեկացու շիրիմին:

Ըստ Լորա Բայթարի, Մութաֆյան պատրիարքի բացակայության և անբարենպաստ եղանակի պատճառով հոգեհանգստյան պաշտոնը

մատուցվել է ոչ թե Նարեկ գյուղում, այլ Աղթամար կղզում: Թղթակցուհու վկայությամբ, Լիմ կղզում ուխտագնացները տեսել են 1622թ. Ներսես Մոկացու հիմնադրած վանքի ավերակները և կողոպտված հայկական գերեզմանոցը՝ փշրված խաչքարերով: Կտուց կղզում պատկերը մոտավորապես նույնն է եղել, իսկ Աղթամարի Ար. Խաչ եկեղեցում նրանք մոմ են վառել և կատարել հոգեհանգստի արարողություն:

Հոկտեմբերի 4-ին ուխտագնացներն ուղևորվել են Ար. Գրիգոր Նարեկացու ծննդավայր Նարեկ գյուղը: Լորա Բայթարը նշում է, որ անձրևը տհաճ անակնկալ էր մատուցել ուխտագնացներին: Նրա խոսքերով, ավելի քան տհաճ է եղել, երբ նրանք հասնելով գյուղ՝ Նարեկավանքի երբեմնի հսկա համալիրի տեղում տեսել են նորակառուց մի մզկիթ, իսկ Նարեկացու շիրիմի վրա՝ մի ախոռ: Փաստորեն, շիրիմը հայտնվել է ախոռի մեջ, որտեղ ուխտագնացները լապտերի լույսի տակ հազիվ նշմարել են հատակին մթության մեջ անհետացած 1000-ամյա տապանաքարը:

Եթե խոսքն անակնկալի կամ, ինչպես «Ակոսի» թղթակցուհին է նշում, հիասթափության մասին է, ուրեմն Նարեկավանքի կիսավեր փլատակների հավասարեցումը գետնին և Նարեկացու շիրիմի վրա ախոռի կառուցումը կատարվել է բոլորովին վերջերս: Այլապես նորակառուց թուրքական մի մզկիթ՝ ախոռով հանդերձ, ոչ կզարմացներ ուխտագնացներին, ոչ էլ նրանք անակնկալի գալով՝ կհիասթափվեին: Այլապես Պոլսո հայոց պատրիարքը նախապես իմանալով այդ ամենի մասին Ար. Գրիգոր Նարեկացու ծննդավայր ուխտագնացություն չէր կազմակերպի: Տվյալ դեպքում ուխտագնացության կազմակերպումը դեպի Աղթամարի Ար. Խաչ եկեղեցի անհամեմատ նպատակահարմար կլիներ և թուրքական շահագրգիռ շրջանակները կծերբազատվեին դրան Ամենապատիվ սրբազանի մասնակցությունը խոչընդոտելու համար պատճառներ հորինելու պարտավորությունից:

Հետևաբար Նարեկավանքի ավերակների վրա մզկիթի կառուցումից, ինչպես նաև ախոռի կառուցումով Նարեկացու գերեզմանի սրբապղծումից անտեղյակ էր նաև Մութաֆյան պատրիարքը: Ակամա հարց է ծագում՝ իսկ ովքեր էին տեղյակ: Ըստ երևույթին նրանք, ովքեր Պոլսո հայոց պատրիարքի թոհչքը Վան հայ ուխտագնացների հետ արգելեցին: Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ հանկարծ Մութաֆյան պատրիարքն էլ հանկարծակիի գալով չհիասթափվի: Հասկապես այդ օրերին, երբ թուրքական «Հաբերանալիզ» ինտերնետային թերթի վկայությամբ, Թուրքիայի հույն ուղղափառ, կաթոլիկ, ասորական, առաքելական և ոչ առաքելական հայկական եկեղեցիների ներկայացուցիչները պահանջագրով ԵՄ դիմելու վճռականություն էին հայտնում, իսկ Մեսրոպ Բ Մութաֆյանը հակադրվում էր նրանց: Պոլսո հայոց

պատրիարքի միջամտության շնորհիվ էր, որ «Հաբերանայիզի» դիպուկ արտահայտությամբ՝ «Թուրքիան ձերբազատվում է ազգային փոքրամասնությունների առնչությամբ մի մեծ գլխացավանքից»:

Ըստ երևույթին, թուրքերն էլ փոխհատուցման կարգով Մուսաֆյան պատրիարքին են ձերբազատել տհաճ անակնկալից և ծախողել նրա ուղևորությունը: Սակայն Ամենապատիվ սրբազանի՝ միջադեպի առթիվ դժգոհությունը նոր տհաճություններ է պատճառել նրան: Հոկտեմբերի 4-ի և 5-ի համարներում թուրքական «Ենիչաղ» թերթը դժգոհությանն արձագանքեց համապատասխանաբար «Հայոց պատրիարքն էլ քիթը ցցեց», «Չարամիտ տերտեր», իսկ «Թերջումանը»՝ «Պատրիարք, չափդ իմացիր» խորագրով: Սրանք չմոռացան հիշեցնել ԱՍԱԼԱ-ի «ահաբեկչության», ինչպես նաև այն մասին, որ Պոլսո հայոց պատրիարքը Թուրքիայի Հանրապետության քաղաքացի է:

Հատկանշական է, որ Ամենապատիվ պատրիարքին «չափն անցնելու մեջ» մեղադրեց նաև «Ակօսն» առաջնորդող հոդվածով և հարկ համարեց նախազգուշացնել նրան, որ միջադեպի առթիվ դժգոհությունն ընդամենը վնաս է պատճառում պատրիարքական աթոռին: Ուստի արարքն անհասկանալի է: Այլ կերպ՝ Մեսրոպ Բ Մուսաֆյանի նկատմամբ անհանդուրժողականության դրսևորումներով «Ակօսը», կամա թե ակամա, տուրք տվեց թուրքական նշված թերթերի սանձարձակություններին:

Ինչ վերաբերում է Սբ. Գրիգոր Նարեկացու շիրիմի սրբապղծմանը, ապա «Ակօսի» թղթակցուհին, արձանագրելով Նարեկացու գերեզմանի վրա ախոռի, իսկ Նարեկավանքի տեղում մզկիթի կառուցման փաստը, գրում է. «Բայց ոչինչ, թող լինի: Այն, որ մուսթ ախոռի մեջ թեկուզ լապտերի օգնությամբ գերեզմանաքարը տեսանք, բավական էր Նարեկացու ներկայությունը մեր սրտերում զգալու համար: 1000-ամյա գերեզմանաքարի պահպանումից բխող երախտագիտությամբ գյուղից հեռացանք: Անհույս, բայց հոգու խաղաղությամբ բաժանվեցինք Գրիգոր Նարեկացու ծննդավայրից»:

Եթե մենք Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մուսաֆյանի դժգոհության նկատմամբ «Ակօսի» առաջնորդողի անհանդուրժողականությունը համադրենք Սբ. Գրիգոր Նարեկացու գերեզմանի սրբապղծմանն այդ թերթի թղթակցուհու ցուցաբերած հանդուրժողականության հետ, ապա չենք դժվարանա հանգել որոշակի եզրակացության: Սակայն հարցը հանդուրժողականությունը չէ, այլ այն երախտագիտությունը, որին գերեզմանը սրբապղծողներն են արժանանում: Իսկ դա արդեն ոչ թե եզրակացություն է ենթադրում, այլ մտածելու տեղիք է տալիս, քանի որ դրանով աղավաղվում է երախտագիտության իմաստը:

Չնայած թուրքական իշխանությունների հայտարարություններին, թե «ՀՅ-ի անհիմն պնդումների դեմ պայքարը Թուրքիայի արտաքին քաղաքականության ամենակարևոր առաջնահերթություններից է», և ցեղասպանությունը ճանաչող երկրների դեմ ձեռնարկած քայլերին, ճանաչման գործընթացը հետզհետե ծավալվում է: Հատկանշական է, որ աստիճանաբար ճանաչողների թվում են հայտնվում Թուրքիայի ավանդական դաշնակիցները: Դրա վառ օրինակը «Հայկական կոտորածների» վերաբերյալ բանաձևի ընդունումն էր գերմանական Բունդեսթագում:

Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացն սպառում է թուրքական ժխտողականության դիրքերը: Գործընթացի ծավալումը հանգեցնում է հակաքայլերի սպառմանը: Այս ամենը որպես հավելյալ լարվածություն անդրադառնում է Թուրքիայի վրա: Լարվածության թուլացման հրամայականով իշխանություններն ստիպված ծանրաբեռնում են պաշտոնական թեզի պաշտպաններին, իսկ վերջիններս այլ ելք չեն գտնում, քան դիմել կեղծիքների:

Անկարայում գործող ԵՌՈւԿ-ի նախկին աշխատակից Հաթեմ Ջաբբարլըն այդ պաշտպաններից է: Ինտերնետային «Հաբերանայիզի» հունիսի 21-ի համարում հրապարակած հոդվածով նա ոչ միայն կեղծիքների է դիմում, այլև դրանք հայաստանյան անանուն գործչի խոսքերով «հիմնավորելիս», Մեծ եղեռնի ողջ պատասխանատվությունը ՀՅԴ-ի վրա բարդելու համար հայտարարում է, թե դաշնակցականները չեն բացում իրենց արխիվները:

Ջաբբարլի կեղծիքները նոր չեն, սակայն դրանց մատուցման ձևերը նորություն են: Թերևս դրա համար էլ մասնակի կրճատումներով ներկայացնում ենք նրա հոդվածը: Ահա թե ինչ է գրում. «Այսպես կոչված հայերի ցեղասպանության 90-րդ տարելիցը հանդիսացող ապրիլի 24-ն այս տարի Հայաստանի և աշխարհի բազմաթիվ երկրների թվում նաև Թուրքիայում է նշվել: Թող ոչ ոք չզարմանա, որովհետև 2005թ. ապրիլի 24-ին Թուրքիայի մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղը հաղորդագրությամբ վշտակցել է ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդին: Իսկ մասնաճյուղի նախագահ Էրեն Քեսքինը ելույթ ունենալով ժողովրդի ժողովրդավարական, Սոցիալիստական հեղափոխության, Աշխատանքի կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցած համաժողովում նշել է, թե «20-րդ դարի սկզբներին Անատոլիայի բնակչության 20%-ը կազմող ոչ մահմեդականների թիվն այսօր նվազել է մինչև 0,02%-ի»,

թերևս դրանով էլ մեղադրել է Թուրքիայի Հանրապետությանը: Եվրոպայի թուրք բանվորների կոնֆեդերացիայի նախագահ Օզգյուր Ջանը, որը պատկանում է «ցեղասպանության քարոզչությունից» քաղաքական և նյութական շահեր ակնկալող որոշ մտավորականների և հասարակական գործիչների թվին, միանալով նրան՝ մամուլի ասուլիսում 1915թ. հայերի դեմ իրագործված ցեղասպանության համար ցավակցություն է հայտնել և պահանջել, որ Թուրքիան «հայ ժողովրդից ներողություն խնդրի»: Մամուլի վերոհիշյալ կոնֆերանսին մասնակցող Միջազգային մշակութային փոխանակման ֆեդերացիայի նախագահ Յաշար Արիֆն իր համերաշխությունն է հայտնել Ջանին և մասնակիցների ներկայությամբ առաջարկել է ՀՅ-ի հուշարձան կանգնեցնել Ստամբուլում: Նրա այս առաջարկը հրապարակավ պաշտպանել է Եվրոպական խորհրդարանի անդամ, Գերմանիայի Բունդեսթագի պատգամավոր Ջեմ Օզդեմիրը»:

Վերոհիշյալ փաստերը շարադրելուց հետո Ջաբբարլըն կանխակալ մոտեցում է վերագրում հայերին և հիմնավորման համար գրում է, որ ցեղասպանության հարցը նրանց համար յուրատեսակ տարու է դարձել, ուստի Հայոց ցեղասպանությունը, ինչպես Աստծո գոյությունն է, չի կարելի վիճարկել հայկական իրականությունում:

Այնուհետև նա անբարոյականության մեջ է մեղադրում ՀՀ-ին, հայկական սփյուռքին և այն երկրներին, որոնք ճանաչել են ՀՅ-ն, պատճառաբանելով, թե նրանք ապակողմնորոշելու համար համաշխարհային հասարակական կարծիքը, գիտակցաբար թուրքական արխիվները ներկայացնում են իբրև փակ: Հեղինակը միաժամանակ անհասկանալի է համարում առ այսօր պաշտոնապես ՀՀ-ի արխիվների գլխավոր վարչություն չդիմելու թուրքական կառավարության գործելակերպը, թերևս դրանով էլ փորձում է ընդգծել, որ հայկական արխիվներն իբր փակ են:

Ջաբբարլըն, ի գիտություն թուրքական կառավարության, կարևորում է հայաստանյան արխիվներում թուրք գիտնականների աշխատանքը և ավելացնում. «Կարևոր է նաև մեկ այլ հարց՝ դա 19-րդ դ. վերջին, 20-րդ դ. սկզբին հայ ժողովրդի ողբերգության համար պատասխանատու ՀՅԴ կուսակցության արխիվների փակ լինելն է: Իրականում 20-րդ դ. սկզբներին կատարված իրադարձությունների բուն դերակատարների անունները պահպանվում են Դաշնակցական կուսակցության արխիվներում: Քանի որ դաշնակցականները գիտեն, թե ովքեր են նրանք, այդ իսկ պատճառով համառորեն չեն բացում իրենց արխիվները»:

Վերջում հեղինակը եզրակացնում է. «Իհարկե, Հայաստանում կան մարդիկ, որոնք չեն հավատում, որ հայերի դեմ ցեղասպանություն է իրագործվել: Սակայն, եթե նրանք այդ մասին հրապարակավ արտա-

հայտվեն, այլևս չեն կարող Հայաստանում ապրել: Լավագույն դեպքում կենթարկվեն քաղաքական լինչի»: Նա շատ ուշագրավ այս հետևությունը հաստատում է ավելի քան ուշագրավ օրինակով. «Լևոն Տեր-Պետրոսյանի իշխանության օրոք ՀՀ նախագահի և վարչապետի խորհրդականների պաշտոնն զբաղեցրած հայ գործիչը, որն այսօր Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպության ղեկավարն է, Թուրքիայի ամենալուրջ վերլուծական կենտրոնում հյուրընկալվելիս ելույթ ունեցավ և ամենայն լրջությամբ ու անկեղծությամբ ասաց, որ թուրքերը հայերին ցեղասպանության չեն ենթարկել: Տվյալ դեպքում կարևորը հայ խորհրդականի ցեղասպանության պնդումների անհիմն լինելը հաստատող խոսքերը չեն, այլ դրանք արտահայտելու ձևը: Նա, որի անունը ես չեմ տալիս՝ չվտանգելու համար նրա կյանքը, այս խոսքերն արտաբերելիս համաժողովի դահլիճում վախվորած իր շուրջն էր նայում և նախագահուշացնում, որ ցեղասպանության մասին իր տեսակետները հանկարծ չսպրդեն մամուլ»:

04.11.2006

ԹՈՒՐԿԻԱՆ ԶԻ ԳԱՂՏՆԱԶԵՐԾՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՎԱԾՔՆԵՐԻ

ԳՐԱՆՑԱՄԱՅՑԱՆՆԵՐԸ

Ինչպես գաղտնագրեծի, եթե առ այսօր թուրք ժողովրդից քողարկվում է Քեմալ Աթաթուրքի օրագիրը

«Ազգը» սեպտեմբերի 20-ի համարում «Թուրքիան չի ցանկանում գաղտնագրեծել օսմանյան կալվածքների գրանցամատյանները» վերնագրով տեղեկացրել էր, որ գաղտնագրեծմանը մասնավորապես հակադրվում է ԱԱԽ-ն, պատճառաբանելով, թե դրանք ժամանակակից թուրքերենի վերածելն ու հրապարակելը կշահագործվի էթնիկ և քաղաքական նպատակներով՝ առավել ևս ցեղասպանությանն առնչվող պահանջներով:

Միաժամանակ նշվել էր, որ այս խորհուրդը գաղտնի նամակով նախագահուշացրել է հողային գրանցման և կադաստրի գլխավոր վարչությանը, սահմանափակելու այս փաստաթղթի մատչելիությունը, և դրանք ոչ մի դեպքում, թեկուզ մասնակի, չբազմացնելու և չհանձնելու արխիվային հիմնարկներին:

«Ազգի» այս տեղեկության համար հիմք էր ծառայել Նուրայ Բարաջանի «Հյուրիեթի» սեպտեմբերի 19-ի համարում հրապարակած հոդվածը: Դրանից պարզվում է, որ դեռևս անցյալ տարի որոշվել է թվայնացնել օսմանյան կալվածքների գրանցամատյանների փաստաթղթերը, թարգմանելով ժամանակակից թուրքերեն: 2005թ. օգոստոսի 17-ին հողային գրանցման և կադաստրի գլխավոր վարչության պետի տեղակալ Նիհաթ Շահինը նամակով որոշման մասին իրազեկել է ազգային անվտանգության խորհրդի զորահավաքի և

պատերազմական պատրաստությունների ծրագրավորման բաժնին: Օգոստոսի 26-ին հույժ գաղտնի մակագրությամբ դիմումին պատասխանել է բաժնի պետ, գեներալ Թայյար Էլմասը, անելով վերոհիշյալ նախագգուշացումը:

Նուրայ Բաբաջանի «Հյուրիեթում» հրապարակած հոդվածին Պոլսո «Հայթերթ» կայքէջում «Ինչը ումից է քողարկում ԱԱԽ-ն» վերնագրով արձագանքում է Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի պրոֆ. Բասքըն Օրանը: Ինքն էլ պատասխանում է իր հոդվածի վերնագրում բարձրացրած հարցերին, գրելով. «Ինչն է քողարկում ԱԱԽ-ի գրությունը: Ասում են, որ 1915թ. հայկական կոտորածների հետևանքները: Երանի թե հարցն այսքան պարզ լիներ: Իհարկե, այս գրությամբ հիմնականում փորձ է արվում քողարկելու 1915թ., սակայն քողարկման բուն սուբյեկտը «նախնական կապիտալի կուրակման» գործընթացն է: Ումից քողարկել, անկասկած թուրքերից, որովհետև օտարներն այդ մասին անգիր գիտեն: Ինչո՞ւ: Այն պարճատու, որ 1915թ. բացահայտման դեպքում ինքնաբերաբար բացահայտվելու է այս ողջ գործընթացը բոլոր մանրամասներով, հետևաբար շարունակում են բարձի տակ դնել»:

Օրանը հոդվածում իբրև «նախնական կապիտալի կուտակման» օրինակ բերում է 1915թ. տեղահանության ընթացքում հայերի ունեցվածքի կողոպուտն ու դրա վերածումն «ազգային կապիտալի»: Քյուրշաթ Բումինը «Ենի շաֆաքի» հոկտեմբերի 29-ի համարում կատարյալ սկանդալ է համարում ԱԱԽ-ի գրությունը, որը գեներալ Էլմասի ստորագրությամբ ներկայացվել էր հողային գրանցման և կադաստրի գլխավոր վարչություն, ապա և ընդգծում է. «Այս սկանդալն էլ հանձնվելու է արխիվ»:

Բումինը զարմանքով է նշում, որ անմիջականորեն «պատմական հիշողության թարմացմանն» առնչվող կարևորագույն այս հարցին «Հյուրիեթից» հետո ընդամենն անդրադարձել են «Բուգյուն», «Սթար», «Ռադիկալ» և «Ջաման» թերթերը, որոնցից առանձնացնում է Էթիեն Մահճուլայանի ստորագրությամբ «Ջամանում» հրապարակված հոդվածը: Բումինն ուղղակի մեջբերում է հոդվածագրի հետևյալ հարցադրումները. «Օսմանյան կալվածքների գրանցամատյանների թվայնացման առնչությամբ հողային գրանցման և կադաստրի վարչությունն ինչո՞ւ է դիմում ազգային անվտանգության խորհրդին, այն էլ զորակոչի և ռազմական պատրաստության ծրագրավորման բաժին: Հարյուրավոր տարիների վաղեմություն ունեցող այս գրանցամատյաններն ինչ առնչություն կարող են ունենալ ներկայիս ռազմական պատրաստության հետ: Այս բաժնի աշխատակազմը որտեղի՞ց գիտի վերոհիշյալ վարչությունում պահպանվող գրանցամատյանների բովանդակությունը: Եվ վերջապես ինչո՞ւ է «գաղտնի» ԱԱԽ-ի հղած

պատասխան նամակը վարչությանը և ո՞րն է գրանցամատյաններում գինվորականներին հայտնի տվյալները հասարակությունից քողարկելու նպատակը»:

Այնուհետև Բումինը, հենվելով Այշե Հյուրի «Ռադիկալում» հրապարակած հոդվածի վրա, գրում է. «Օտար հեղինակները մի կողմ, հայ ուսումնասիրող Տիգրան Ղույումջյանի հաշվարկներով հայերն այդ թվերին 14,5 մլրդ ֆրանկի արժողությամբ հարստություն են թողել, որը ներկայումս համարժեք է 100 մլրդ դոլարի: Սա մի՞թե, ինչպես Մահճուլայանն է նշել, հողերից, տներից, հարստությունից զրկված շուրջ 2 մլն հայերի ունեցվածքի կողոպուտման վկայությունը չէ: Հետևաբար օսմանյան կալվածքների գրանցամատյանների նկատմամբ ԱԱԽ-ի գրաքննությունը ոչ այլ ինչ է, քան անարգանք այն մարդկանց նկատմամբ, որոնց զրկել են ողջ ունեցվածքից»:

Ի դեպ, ԹՀ-ում գրաքննություն կիրառվում է ոչ միայն այդ գրանցամատյանների, այլև 1919թ. հուլիսի 23-օգոստոսի 7-ը էրզրումում, իսկ նույն թվի սեպտեմբերի 4-12-ը Սվազում Մուստաֆա Քեմալի հրավիրած Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության միության կոնգրեսների նյութերի նկատմամբ: Դրանք թուրքական ՁՈւ ԳՇ-ի արխիվում են, դրանց հետ է նաև Աթաթուրքի օրագիրը:

Հատկանշական է, որ մինչ Թուրքիայի ԱԳ նախարար Աբդուլլահ Գյուլը Ֆրանսիայի Ազգային ժողովում ՀՅ-ի ժխտումը պատժող օրինագծի ընդունման առնչությամբ ի լուր աշխարհի հայտարարում էր, թե Թուրքիան վաղուց բացել է իր բոլոր արխիվները, այդ թվում՝ բանակի, թուրքական որոշ թերթեր հարցնում էին. «Ինչո՞ւ առ այսօր չեն հրապարակվել Էրզրումի և Սվազի կոնգրեսների նյութերը, ո՞րն է ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքի օրագիրը թուրք ժողովրդից քողարկելու պատճառը»:

Կարծում ենք, կոնգրեսների և օրագրի վերաբերյալ այս հարցադրումներն ու օսմանյան գրանցամատյանների վերաբերյալ գրաքննությունը պարզորոշ ցույց են տալիս, որ ԹՀ-ում բոլոր արխիվների, բանակինը ներառյալ, բացման մասին Գյուլի հայտարարությունն ընդամենը պատրանք է: Քանի որ դա պարզունակ է նաև, ուստի դրանով կարելի է ոչ թե ապակողմնորոշել միջազգային հանրությանը, այլ հերթական անգամ խոստովանել ՀՅ-ի հարցում թուրքական ժխտողականության դիրքերի սպառման մասին:

22.11.2006

ԵՄ-Ն ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱԿԱԾՔՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՍՅԱՆՆԵՐԻ

ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՀԱՆՔԵԼՈՒ ԹՈՒՐԿԻԱՅԻՑ
Այդ մասին հայտարարել է Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչ Օլի Ռենը «Ազգը» սեպտեմբերի 20-ի համարում «Թուրքիան չի ցանկանում գաղտնագրել օսմանյան կալվածքների գրանցամատյանները»

վերնագրով տեղեկացրել էր, որ գաղտնագերծմանը մասնավորապես երկրում հակադրվում է ազգային անվտանգության խորհուրդը, թե դրանց ժամանակակից թուրքերենի վերածումն ու թվայնացման միջոցով հրապարակումը կշահարկվի էթնիկ և քաղաքական նպատակներով՝ հատկապես ՀՅ-ին առնչվող պահանջներով: Միաժամանակ նշվել էր, որ այս խորհուրդը գաղտնի նամակով նախազգուշացրել է հողային գրանցման և կադաստրի գլխավոր վարչությանը, սահմանափակելու համար այս փաստաթղթերի մատչելիությունն ու ոչ մի դեպքում չբազմացնելու և չհանձնելու արխիվային հիմնարկներին:

ԱԱԽ-ի այս մոտեցմանը բուռն հակազդեցությամբ արձագանքել էին «Հյուրիեթ», «Բուզյուն», «Սթար», «Ռադիկալ», «Ջաման» և «Ենի շաֆաք» թերթերը, ինչպես նաև մտավորականները, որոնց թվում մեր հայրենակից էթեն Մահնուպյանը: Նոյեմբերի 4-ին արձագանքեց նաև «Ազգը», թե «Թուրքիան ինչպե՞ս գաղտնագերծի օսմանյան կալվածքների գրանցամատյանները, եթե առ այսօր թուրք ժողովրդից խնամքով քողարկում է Քեմալ Աթաթուրքի օրագիրը, այդ թվում 1919թ. հուլիսին և սեպտեմբերին համապատասխանաբար էրզրումում և Սվազում քեմալականների հրավիրած կոնգրեսների նյութերը:

Քողարկման պարագայում խնդիրն, ինչ խոսք, «Ազգը» չէ, ոչ էլ թուրքական թերթերն ու երկրի մի քանի մտավորականները, այլ ԵՄ-ն: Նոյ. 15-ին կայքէջում «Եվրոնյուսի» թուրքական տարբերակ «Աբհաբերը» «ճգնաժամ ԵՄ-ի և ԱԱԽ-ի միջև «օսմանյան գրանցամատյանների» հարցում» վերնագրով տեղեկացրել է, որ Եվրոհանձնաժողովի ԵՄ-ի ընդարձակման գծով պատասխանատու Օլի Ռենը նույնպես արձագանքել է ԱԱԽ-ի օսմանյան կալվածքների գրանցամատյաններին առնչվող վերոհիշյալ գաղտնի նամակին:

Օլի Ռենն ի պատասխան ԵՄ ձախակողմյան խմբակցության շվեդ ներկայացուցիչ Ենս Հոլմի գրավոր հարցադրման, ասել է, որ ինքը տեղյակ է այդ նամակի մասին, որտեղ ազգային անվտանգության խորհուրդն ի դեմս գեներալ Թայյար Էլմասի նախազգուշացրել է հողային գրանցման և կադաստրի գլխավոր վարչությանը, որպեսզի կանխի օսմանյան կալվածքների գրանցամատյանների շահարկումն էթնիկ և քաղաքական նպատակներով, ինչպես նաև ցեղասպանության պահանջներով:

Այնուհետև Ռենը նշել է այս մոտեցման հակասումը ԵՄ-ին անդամակցության փաստաթղթի սկզբունքներին, որի կարճաժամկետ հեռանկարի առաջնահերթությունների մեջ ընդգծվում է թափանցիկության կենսական նշանակությունը Թուրքիայի հասարակական կառավարման բարեփոխումներում: Վերջում Ռենը եզրակացրել է. «Եվրոհանձնաժողովն այդ առումով բացատրություն է պահանջելու թուրքական իշխանություններից»:

Ի դեպ, ըստ «Աբհաբերի», ԵՄ շվեդ անդամ Ենս Հոլմը Եվրոհանձնաժողովին հասցեագրած գրությամբ ընդգծել է 1915թ. իրադարձությունների բացահայտման անհրաժեշտությունը և հարցրել. «Երբ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարություններով՝ «երկրի բոլոր արխիվների բացման» տպավորություն է ստեղծում, ազգային անվտանգության խորհուրդն արգելում է օսմանյան կալվածքների գրանցամատյանների գաղտնագերծումը: Մի՞թե սա ակնհայտ հակասություն չէ»:

22.05.2008

«ՄԵՆԵ ԿԿՃԱՐԵՆԵ ԳՈՒՍԱՐԸ, ԱՐԽԻՎՆԵՐԸ ԲԱՑԵՐ»

Բացման համար ՀՅԴ-ին իբր 20 մլն դոլար է առաջարկել Թուրքական պարմական ընկերության նախագահ Հալաչոլուն

«Ազգը» մայիսի 16-ի համարում, անդրադառնալով Ֆրանսիայի Մասոնական Մեծ Արևելք օթյակի ՀՅ-ի ճանաչման նախաձեռնությանը, նշել էր, թե ինչպես մեծ վարպետ Ժան-Միշել Քիյարդեն «կատարյալ անհեթեթություն» է անվանել «1915-ի իրադարձությունների ուսումնասիրման համար հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողով» ստեղծելու Անկարայի առաջարկը, իսկ մեծ վարպետին թուրք-իսլամականների հակազդեցությունը բացատրելու համար գրել էր՝ «Մինչդեռ պատմաբանների հանձնաժողովը ներկա պահին ՀՅ-ի ճանաչման դեմ Անկարայի քաղաքական ամենաշոշափելի խաղաթուղթն է»:

Այլ կերպ, Անկարան առաջնահերթ նշանակությամբ հենց այդ խաղաթուղթն է շահարկում: Երկրորդ խաղաթուղթը, թերևս, արխիվներն են, որոնց բացումն էլ շահարկում են գիտական շրջանակները Թուրքական պատմական ընկերության նախագահ պրոֆ. Յուսուֆ Հալաչոլուի բարձր հովանավորությամբ: Շահարկման վերջին օրինակը Սեֆա Քափլանի «Մենք գումարը կվճարենք, բացեք արխիվները» վերնագրով «Հյուրիեթի» մայիսի 19-ի համարում հրապարակված հոդվածն է: Հեղինակը գրում է. «Դառնալով սփյուռքահայերի քննադատությունների թիրախ, մշտապես պաշտպանվողի դերում հայտնված Թուրքական պատմական ընկերության նախագահ պրոֆ. Հալաչոլուն անցնում է հակահարձակման: Մինչև օրս թուրքական կողմին հասցեագրված «Բացեք արխիվները» կոչը Հալաչոլուն ուղղում է սփյուռքահայերին, 1915-ի իրադարձությունների թերևս ամենակարևոր աղբյուրներից մեկի՝ Բուստոնի հայկական արխիվի (ՀՅԴ կենտրոնական արխիվն է) բացման համար անհատույց 20 մլն դոլար է առաջարկում, բայց՝ ապարդյուն»:

Առաջարկի առնչությամբ, Հալաչոլուն ասել է. «Արխիվների բացման համար դաշնակներին 20 մլն դոլար առաջարկեցի: Այս գումար»

րով միանգամայն հնարավոր էր դասակարգել արխիվային փաստաթղթերը: Սակայն ոչ ոք տեղից չչարժվեց: Բոստոնի դաշնակցական արխիվը չափազանց կարևոր է: Այնտեղ կարելի է գտնել առ այսօր մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հարցերի պատասխանը: Առաջարկիս մասին հայտնել եմ օտար լրագրողներին և ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամներին: Միաժամանակ առաջարկս իրենց ընկերներին փոխանցելու խնդրանքով դիմեցի լոնդոնաբնակ Արա Սարաֆյանին և Հիլմար Կայգերին: Մինչ այդ դաշնակներն ասում էին. «Գումար չունենք, վավերագրերը չենք կարողանում դասակարգել, այդ իսկ պատճառով էլ արխիվը չենք բացում»: Ես էլ դրա համար առաջարկեցի. «Անհրաժեշտ գումարը մենք կվճարենք, միայն թե արխիվները բացվեն»: Մինչև օրս ծպտուն չեն հանել: Մինչդեռ այս արխիվների բացումը խիստ կարևոր է պարզելու համար, թե ի՞նչ կատարվեց հայերի հետ 1915-ին, որքա՞ն հայ մահացավ, որքա՞նը՝ քսոսրվեց: Մենք ուսումնասիրություններ կատարեցինք ամերիկյան, ռուսական, անգլիական, ֆրանսիական և պարսկական արխիվներում: Ես փորձում եմ գտնել «1915-ին ի՞նչ կատարվեց հայերի հետ» հարցի պատասխանը: Արի տես, որ չեմ կարողանում օգտվել կարևորագույն երեք աղբյուրներից, որովհետև փակ են Երևանի և Բոստոնի արխիվները, իսկ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի արխիվից օգտվում են միայն որոշակի մարդիկ»:

Հալաչօղլուն, ըստ Քափլանի, արխիվների բացումից խուսափելու հայերի, այսպես կոչված, վերաբերմունքը մեկնաբանել է հետևյալ կերպ. «Արխիվների բացումը կնշանակի Ցեղասպանության հայկական պնդումների շուրջը բանավեճերի ծավալում: Քանի որ հայերն այդ մասին քաջատեղյակ են, ուստի ամեն կերպ խուսափում են քննարկումներից»:

Թուրքական պատմական ընկերության նախագահի ասածները նորություն չեն: Հայտնի են նաև ՀՅ-ն միջազգային ճանաչման ներկա փուլում վիճարկման ոլորտ ներքաշելու նրա նկրտումները: Սակայն նախքան հայկական արխիվները կամայականորեն փակելը, ավելի տրամաբանական կլիներ, որ նա իր երկրում նպաստեր Աթաթուրքի և թուրքական ՁՈՒ ԳՇ-ի արխիվների բացմանը զոնե թուրք գիտնականների առջև, որովհետև ԹՀ-ի կազմավորման 85 տարիների ընթացքում Աթաթուրքի արխիվից օգտված թուրք գիտնականների թիվը 2 է, իսկ գլխավոր շտաբի արխիվից, հատուկ թույլտվությամբ, օգտվում են միայն հատուկ նշանակության գիտնականներ:

Թերևս մեզ համար ավելի հետաքրքրականը Հալաչօղլուի «մահմեդականացված» հայերի մասին վկայություններն են: Նա, «Հուրիեթի» հեղինակի փոխանցմամբ, ասել է, որ Լոզանի պայմանագրով ազգային փոքրամասնության կարգավիճակ ստացած Թուրքիայի 60.000

հայ քաղաքացիներից զատ, Անատոլիայում շուրջ 500.000 հայ է բնակվում: Այնուհետև, Հալաչօղլուն ավելացրել է. «Արխիվային փաստաթղթերի վկայությամբ, տեղահանության ընթացքում բազմաթիվ մահմեդական ընտանիքներ խնամակալության տակ են վերցրել 90-95.000 հայ կանանց և երեխաներին, որոնք ժամանակի ընթացքում իսլամ են ընդունել: Կան նաև տեղահանությունից, ինչպես նաև տեղահանության ժամանակ կատարվող հարձակումներից և սպանություններից փրկվելու համար տեղաբնիկ ձևացողներ: Նրանք փոխում էին իրենց հայկական անունները և այդպես գոյություն պահպանում: Այդ խմբին է պատկանում Հրանտ Դինքի ընտանիքը: 1970-ականների կեսերին նրանք սկսեցին վերականգնել իրենց հայկական անունները: Անատոլիայում բոլորն էլ գիտեն, թե ով է հայ: Հրանտն ասում էր, որ նրանց թիվն այնտեղ 500.000 է: Ամերիկյան արխիվներն ուսումնասիրելիս այդ փաստն ակնհայտ երևում է»:

05.06.2008

«ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ԱՐԽԻՎԸ ԹՈՂ, ՕՍՄԱՆՅԱՆՈՎ ԶԲԱՂՎԻՐ»

Կոչ են անում թուրք մտավորականները Թուրքական պատմական ընկերության նախագահ Հալաչօղլուին

ՀՅ-ի ճանաչման գործընթացի ծավալումը, երևան հանելով ժխտողականության սնանկությունը, թուրքական պաշտոնական շրջանակներին փաստորեն զրկել է հակաքայլերի հնարավորությունից: Գործընթացի ծավալումը կասեցնելու հրամայականով այդ շրջանակներն սկսել են կառչել երկու հաղթաթղթից: Առաջինը «1915-ի իրադարձությունների ուսումնասիրման համար հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու» ԹՀ-ի վարչապետ Էրդողանի առաջարկն է, երկրորդը՝ ՀՀ-ի և հայերին հասցեագրվող ամբաստանությունները, թե հայկական արխիվները փակ են:

Ամբաստանությանը իրականի տեսք տալու համար Թուրքական պատմական ընկերության նախագահ պրոֆ. Յուսուֆ Հալաչօղլուն «Հուրիեթին» հայտարարել էր. «Բոստոնի ՀՅԴ կենտրոնական արխիվի բացման համար անհատուց 20 մլն դոլար առաջարկեցի, սակայն ոչ ոք տեղից չչարժվեց»:

Թուրքական թերթը այս հայտարարությանն անդրադարձել էր նախ՝ մայիսի 19-ին նրա հետ արված հարցազրույցում, իսկ մայիսի 20-ի համարում առաջարկը դարձնելով առաջնորդող լուր, առաջին էջում գրել էր, որ Հալաչօղլուն մարտահրավեր է նետում հայկական սփյուռքին, ընդ որում առանց նշելու, թե վերջինը ե՞րբ է առաջարկ արել, ո՞ւմ է ներկայացրել, հանդիպե՞լ է առաջարկի հասցեատերերին, կո՞ն ոչ, նրա փոխարեն ո՞վ է կատարել այդ պարտականությունը:

Այս բացթողումները, սակայն, չէին խանգարել, որ Հալաչօղլուի մարտահրավերի մասին «Հուրիեթի» հրապարակումը մեծ ոգևորու-

թյուն առաջ բերի թուրք հասարակությունում: Ինչո՞ւ: Այն պատճառով, որ 20 մլն դոլարը, անկախ առաջարկի ամբարտավան ոճից, լուրջ բնույթ էր հաղորդում դրան և դարձնում համարձակ: Միաժամանակ հասարակությունը դրանով համոզվում էր, որ Հալաբոյուն մտահոգված է միայն ճշմարտության բացահայտմամբ, ուստի պետք է դիմի համարձակ քայլերի:

«Ազգը» մայիսի 22-ին արձագանքեց Հալաբոյունի առաջարկին, իսկ մայիսի 30-ին «Բոստոնի ՀՅԴ կենտրոնական արխիվը բաց է» վերնագրով ներկայացրեց արխիվի պատասխանատու Թաթուլ Սոնեց-Փափազյանի պատասխանը, որ հրապարակվել էր «Արմինյըն ոփորթերի» մայիսի 24-ի համարում:

Չնայած թուրքական հասարակական կարծիքի ոգևորությանը, Հալաբոյունի առաջարկը նաև հակադեցություն առաջ բերեց թուրք մտավորականների շրջանում: Դրան արձագանքեցին «Թարաֆ» թերթի մայիսի 25-ի համարում «Դաշնակների արխիվը թո՛ղ, օսմանյանով զբաղվիր» վերնագրով Այշե Հյուրը, «Էվրենսելի» մայիսի 27-ի համարում «Պատմաբանները հագիվ թե հանգուցալուծեն այս թնջուկը» վերնագրով Ռազրի Ջարաբոլուն, իսկ «Ենի ակտուելի» մայիսի 29-ի համարում «Պատմաբանները առաջարկ ունեն Բոստոնի հայկական արխիվին 20 մլն դոլար տրամադրող Թուրքական պատմական ընկերության նախագահ Յուսուֆ Հալաբոյունին» վերնագրով Ստամբուլի «Բիլգի» համալսարանի դասախոսները, որոնց խնդրանքով՝ նաև Թաներ Աբչամը, որն ասել է. «Իմ կարծիքով, առաջարկն ինքնին չափազանց անհարգալից է: Ի վերջո հայտնի է արխիվի հասցեն: Եթե առաջարկ ես անում, ապա պաշտոնապես պետք է դիմես, այլ ոչ թե թերթերի միջոցով դրա մասին հայտարարես»:

Այշե Հյուրը հոգվածում Հալաբոյունի առաջարկին հակադրում է Աբչամի այս տարի «Հայկական հարցը լուծված է» վերնագրով լույս տեսած աշխատությունը, որտեղ գրքի հեղինակը կարծիք է հայտնել, թե ցեղասպանության թուրքական թեզը նույնիսկ օսմանյան արխիվներն են հերքում, որքան էլ դրանք գտված լինեն: Հոգվածագիրը, ելնելով այս կարծիքից, գրում է. «Եթե Հալաբոյուն դաշնակցական արխիվի մասին ելույթով չի փորձում հասարակական ուշադրությունը շեղել Աբչամի գրքից, ապա թուրք հասարակությանը ևս որոշակի ժամանակով զբաղեցնելու առաջադրանք է կատարում: Գուցե Թուրքական պատմական ընկերությունը չի ընկալում, սակայն համաշխարհային հասարակական կարծիքն այդ հարցում (Հայոց ցեղասպանության) որոշակի տեսակետ արդեն ունի: Հակառակ պաշտոնական շրջանակների պնդումներին, թուրքական կողմը դեռևս չի բացել իր արխիվները: Օրինակ, երկրում արգելված է խնդրո առարկա ժամանակահատվածին առնչվող անշարժ գույքի առավաճառքի մատյան-

ների ուսումնասիրությունը: Ինչ վերաբերում է ԳԾ-ի ռազմական պատմության, ռազմավարության ուսումնասիրման և վերահսկողության գլխավոր վարչության արխիվին, ապա այնտեղ ներթափանցելը գրեթե անհնար է: Թեև հայերի տեղահանությունն ուսումնասիրելու համար խիստ կարևոր է նաև վարչապետարանին առընթեր օսմանյան արխիվը, սակայն քարտագրման աշխատանքների անավարտ վիճակի և կառավարական քաղաքականության պատճառներով հնարավոր չէ նյութերի ազատ օգտագործումը: Ժամանակին հարցաքննել էին արխիվում աշխատող գիտնականներին, վավերագրերը չէին տրամադրում, նույնիսկ արխիվից էին վտարում նրանց»:

Այշե Հյուրը, վկայակոչելով Աբչամի վերոհիշյալ աշխատությունը, հերքում է ցեղասպանության թուրքական թեզին ի նպաստ Հալաբոյունի արտահայտած տեսակետը, ընդգծելով, որ օսմանյան ռազմական ատյանը 1397 հանցագործների նկատմամբ պատժամիջոցներ է կիրառել, ներառյալ մահապատիժը, ոչ թե հայերի դեմ բռնություն գործադրելու, այլ վերջիններիս թողած գույքը կողոպտելու, թալանի, գողության, կաշառակերության և ունեցվածքը յուրացնելու մեղադրանքով:

Հոգվածագրին լրացնում է Ջարաբոլուն, գրելով. «Չափազանց հետաքրքրական է ՀՅ-ի հարցին Թուրքական պատմական ընկերության նախագահ Հալաբոյունի մոտեցումը: Քանի որ հազարավոր տարիներ աշխարհագրական միևնույն վայրում բնակվող մի ամբողջ ժողովուրդ գոլորշանալ չէր կարող, ուստի նա ճարահատյալ հասկացնում է, թե հայերի մի մասը կրոնափոխ եղավ, փոխեց ինքնությունը: Եթե այդ հատվածի վրա ավելացնելու լինենք սփյուռքում բնակվողներին, ապա կստացվի, որ հայերը չեն անհետացել, հետևաբար «հայերի ցեղասպանություն» լինել չի կարող: Սակայն չստացվեց: Այս պայմաններում նա այլ բացատրություն չգտավ, քան հայերի տեղահանությունը պայմանավորելը ՀՅԴ-ի գործունեությամբ: Չէ՞ որ ամեն ինչում հեղափոխականներն են մեղավոր: Այս մոտեցմամբ ՀՅԴ արխիվի բացման դեպքում դաշնակցականները դառնալու են 1915-ի իրադարձությունների գլխավոր պատասխանատուն: Ազգայնականները օգտագործում են այս հնարքը: Իհարկե, տեղահանության ճանապարհին հիվանդությունների, ավազակային հարձակումների հետևանքով հայերի կրած «աննշան կորուստներն» էլ շատ բնական է: Հալաբոյուն ասում է. «Մենք գումար ենք առաջարկել, թող ՀՅԴ-ն արխիվները բացի»: Մինչդեռ ինքը հրաժարվել էր համատեղ աշխատանքներ կատարելու շվեդ պատմաբան Գունթի առաջարկից, երբ աշխատանքների իրականացման համար կար հատկացված գումար, ավելին, դա համապատասխանում էր «պատմաբանների համատեղ ուսումնասիրությունների» մասին վարչապետ Էրդողանի առաջարկի ոգուն»:

Ինչ վերաբերում է «Բիլգի» համալսարանի դասախոսներին, ապա նրանք էլ, ի դեմս դոցենտ Լևենթ Յըլմազի, Հալաբոյունին են դիմում

հետևյալ կոչով. «Եթե այդքան գումար ունեք աջ, ձախ բաժանելու, ապա հատկացրեք վարչապետարանին առընթեր գործող արխիվին, որ ավարտվի վավերագրերի քարտագրումը, դրանք թվայնացվեն և օգտագործելի դառնան գիտնականների համար»: Այնուհետև դասախոսները թուրքական պատմական ընկերության նախագահին հիշեցնում են Աքչամի գրածը. «Վարչապետարանին առընթեր Ստամբուլում գործող արխիվում աշխատում են մի քանի լուրջ պատմաբաններ: Սակայն նրանք, որպես արխիվի ղեկավարներ, չեն կարողանում կատարել իրենց պարտականությունը: Օրինակ՝ նրանցից Մեհմեդ Ուլուջըքը զրկվել է արխիվում աշխատելու իրավունքից, զրկվելով նախապես ԹՀ-ի քաղաքացիությունից, և տեղափոխվել Գերմանիա: Երբ նա, որպես գերմանահպատակ, արխիվում ուսումնասիրություններ կատարելու համար եկել էր Թուրքիա, նրա մուտքը երկիր հենց օդանավակայանում արգելել և նույն ինքնաթիռով հետ էին ուղարկել:

Ի դեպ, «Բիլգի» համալսարանի դոցենտն իր հերթին պատմում է, որ Աքչամին էլ զրկել են թուրքական ԶՈւ ԳՇ-ի արխիվից օգտվելու հնարավորությունից և ավելացնում. «Օսմանյան արխիվները բառիս բուն իմաստով մաքրվել են, ոչնչացվել փաստաթղթերը: Որոշ փաստաթղթեր էլ անհետ կորել են: Եթե այդպես է, ապա կարելի էր ուսումնասիրել 1914-ի և 1916-ի գույքագրման մատյանները և համեմատել դրանք»: Սակայն պատմաբանի այս պահանջն էլ բախվում է անշարժ գույքի և կադաստրի գլխավոր վարչության, ինչպես նաև ազգային անվտանգության խորհրդի արգելքին: Ի վերջո, որքան էլ մաքրագարդված լինեն օսմանյան արխիվները, պահպանվող վավերագրերի քննական ուսումնասիրությունը բավական է լինելու թուրք գիտնականներին, որ նրանք թեկուզ իրենց համար բացահայտեն 1915-ի իրադարձությունների ճշմարտությունը:

14.09.2011
ԲԵՐՔՈՒՅՆ ԸՎՎԱՍԽԱՑՆՈՒՄ Է ՕՍՄԱՆՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՄԱՄԻՆ

Կարևորը, սակայն, հավաստիացման համադրումն է ցեղասպանության հարցում հայերին աջակցելու Լիբերմանի պարտապարականության հետ Երբ ՀՀ-ԹՀ հարաբերությունների նորմալացման գործընթացը թուրքական նախապայմանների պատճառով վերադարձավ ելման կետ, որոնցից էր ՀՅ-ի հարցի քննարկումը համատեղ հանձնաժողովում, «Վիկիլիքսը» հրապարակեց Ստամբուլում ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոսարանի գաղտնի հաղորդագրությունը:

Օգոստ. 30-ին «Վիկիլիքսի» կայքէջում տեղադրված այդ հաղորդագրության հեղինակը, ինչպես սեպտ. 12-ի համարում նշում է «Հյուրիեթը», Ստամբուլում ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոս Դևիդ Արնթթն է, որը նա պետքարտուղարություն է ուղարկել 2004-ին: Հաղորդագրությունը

կրում է «ՀՅ-ն ու օսմանյան արխիվները» վերնագիրը, որտեղ դրանց անթերիության մակարդակը ճշտելու համար դիմում են «Սաբանջի» համալսարանի պրոֆ. Հալիլ Բերքթայի կարծիքին:

«Հյուրիեթի» վկայությամբ, Բերքթայն ասում է, որ օսմանյան արխիվները «մաքրագարդվել» են երկու անգամ: Առաջինը 1918-ին, երբ անգլիական զորքերը օկուպացրին Ստամբուլը, երկրորդը՝ նախագահ Թուրգութ Օզալի պաշտոնավարման տարիներին: Բերքթայը նախ նշում է, որ Օզալի կարգադրությամբ օսմանյան արխիվները բացվել են պաշտոնաթող դեսպան Մուհարրեմ Նուրի Բիրգիի գլխավորությամբ մի խումբ դիվանագետների և գեներալների առջև, ապա հավաստիացնում. «արխիվներն ուսումնասիրելուց հետո Նուրի Բիրգին, նկատի ունենալով հայերին, մեր ընդհանուր բարեկամներից մեկին ասել է, որ հիրավի մորթել ենք նրանց»:

Անկախ Հալիլ Բերքթայի հավաստիացումներից, օսմանյան արխիվներում ՀՅ-ին առնչվող փաստաթղթերի ոչնչացումն ակնհայտ է: Այդ մասին հրապարակումներով հանդես են եկել նաև բազմաթիվ այլ գիտնականներ, ընդ որում հենց թուրքական մամուլում:

Ինչ վերաբերում է «Վիկիլիքսին», ապա այս կայքէջն էլ միջազգային հնչեղություն է հաղորդում Թուրքիայի արխիվներում պահպանվող օսմանյան փաստաթղթերը պարբերաբար ոչնչացնելու թուրքական դրսևորումներին: Միջազգային հնչեղության հանգամանքը կարևոր է, սակայն ավելի կարևորը՝ ցեղասպանության մասին արխիվային փաստաթղթերի ոչնչացման վերաբերյալ այս բացահայտման համադրումն է Թուրքիային «պատժելու» Իսրայելի ԱԳ նախարար Ավիգդոր Լիբերմանի ծրագրի հրապարակման հետ, որի դրույթներից երկրորդը ենթադրում է աջակցել հայկական լոբբին ՀՅ-ի միջազգային ճանաչման հարցում և զորավիզ լինել Հայաստանին «Արարատ լեռան վրա հսկողության շուրջը Թուրքիայի հետ վեճում»:

Լիբերմանի ծրագիրը սեպտեմբերի 9-ին հրապարակել է իսրայելական «Եդիոտ Ահրոնոթ» թերթը (այս մասին նախորդ համարում գրել է «Ազգ»-ը), իսկ «Վիկիլիքսին» Բերքթայի հավաստիացումը՝ սեպտեմբերի 12-ին «Հյուրիեթը»:

27.09.2011
«ԻՆՋԻՈՒԻԲ» ՈՒՋՄԱԲԱՋԱՆ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ Է ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ԿԱՎՎԱԾՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Կայիֆոռնիայի դատարանի պաշտպանական ներկայացնելու պահանջին Թուրքիայի փոխարեն արձագանքում են թուրքական Գյուղադնությունը և Կենտրոնական բանկերը

Ադանայի մոտակայքում տեղակայված ամերիկյան «Ինջիուլիք» ռազմաբազայի տարածքը հայապատկան կալվածք է: 1915-ին, երբ տեղահանվում և ցեղասպանության են ենթարկվում արևմտահայու-

թյունը Օսմանյան կայսրությունում, հայկական եկեղեցիներն ու վանքերը հրկիզվում կամ ավերվում են, հիվանդանոցի, դպրոցի, թատրոնի շենքերը պետականորեն առգրավվում են, առգրավվման են ենթարկվում ցեղասպանության գոհը դարձած հայերի ողջ ունեցվածքը, ներառյալ անձնական իրերն ու կահ-կարասին, բնակարանները, խանութները, արհեստանոցները, արտերը: Շքեղ առանձնատներն անցնում են թուրք ավագանուն, իսկ ընդարձակ հողատարածքները՝ պետության ձեռքը: Ընդ որում, քեմալականները հայերի ունեցվածքից բաժին են հատկացնում և թռչակ նշանակում Թալեթի, Էնվերի, Ջեմալի և հայ ժողովրդի այլ դահիճների ընտանիքներին: Այս հատկացումներն ու նշանակումները հաստատվում են Մեջլիսի ընդունած օրենքով, կալվածքների և հողատարածքների առգրավվումը՝ նմանապես:

«Ինջիռլիք» ռազմաբազայի տարածքը, ինչպես երեկ նշել է «Հաբերթուրք» թերթը, պատկանել է Տիգրան էֆենդիին և Կալինե (Կարինե) խաթունին, որոնց ամերիկաբնակ ժառանգներ Ալեքս Բաբայանը, Անաիս Հարությունյանը և Ռիթա Մահտեսյանը 100 մլն դոլարի փոխհատուցման պահանջով ԹՀ Գյուղատնտեսության բանկի և ԹՀ ԿԲ-ի դեմ հայտ են ներկայացնում Կալիֆոռնիայի դաշնային դատարան:

Ինչո՞ւ Գյուղատնտեսության և Կենտրոնական բանկերի դեմ: Նախքան այդ հարցը պարզաբանելը, նշենք, որ հայցվորները Ադանայում ունեցել են պապենական 4 հողատարածք և բնակելի տներ, 496 հա ընդհանուր մակերեսով: 1915-ին այս տարածքը առգրավվումից հետո հանձնվել է Գյուղատնտեսության բանկին, իսկ 1923-ին, այսինքն՝ ԹՀ-ի հռչակումից հետո՝ Կենտրոնական բանկին:

Նրանք դաշնային դատարան ներկայացրած դիմումում նշել են, որ ներկա պահին իրենց պապենական կալվածքը «Ինջիռլիք» ռազմաբազայի մաս է կազմում, 4 հողատարածքի և բնակելի տների արժեքը 63,9 մլն դոլար է, սակայն բազայի տեղակայման դիմաց ԱՄՆ-ից բանակից ստացված վարձի և 1915-ից ի վեր կուտակված տոկոսների հետ այդ գումարն աճել է, ուստի Թուրքիան որպես փոխհատուցում պետք է վճարի 100 մլն դոլար:

Կալիֆոռնիայի դաշնային դատարանը, համարելով Թուրքիայի դեմ հարուցված փոխհատուցման հայցը հիմնավոր, գործին ընթացք է տվել: Ավելին, այս տարվա մարտին մինչև սեպտ. 19 պաշտպանական ներկայացնելու պահանջով պաշտոնապես Թուրքիային է դիմել, սակայն Թուրքիայի ԱԳՆ-ն պատճառաբանելով, թե ինքնիշխանության հանգամանքը չի կարող որևէ պետությանը մյուսին դատելու իրավունք տալ, մերժում է դատարանի պահանջը:

Հակառակ ԱԳՆ-ի պաշտպանական ներկայացնելու պարտականությունը ստանձնում են Գյուղատնտեսության և Կենտրոնական բանկերը, որպեսզի, «Հաբերթուրքի» արտահայտությամբ, խուսափեն

«փոխհատուցման սպառնալիքից»: Այսպիսով վերջնաժամկետի վերջին օրը՝ սեպտ. 19-ին այս բանկերը պատասխան գրությամբ պաշտպանական են ներկայացնում Կալիֆոռնիայի դաշնային դատարան:

Գրության մեջ նշվում է, որ հայ ընտանիքը՝ պատճառաբանելով, թե իրենց պապական կալվածքն առգրավվել է 1915-ի տեղահանության ժամանակ, առգրավվման պատասխանատվությունը փորձում է քարդել Թուրքիայի վրա, մինչդեռ Թուրքիայի Հանրապետությունը ստեղծվել է 1923-ին, հետևաբար թուրք-օսմանական օրենքներն ու որոշումները չեն կարող պարտավորեցնող լինել նրա համար:

Այս բանկերը դատարանին հիշեցնում են Գյուղատնտեսության բանկի 1863-ին, իսկ Կենտրոնական բանկի՝ 1930-ին կազմավորման հանգամանքը, ընդգծելով, որ իրենք ունեն օտարերկրյա հիմնարկի կարգավիճակ, ուստի ամերիկյան դատարանը չի կարող դատական գործ հարուցել, մասնավորապես որ դա հակասում է Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև փոխհատուցման պահանջների առնչությամբ ստորագրված համաձայնագրին:

Միաժամանակ թուրքական բանկերը փոխհատուցման պահանջի տեսանկյունից անբավարար համարելով դատարանին հայցվորների ներկայացրած փաստաթղթերը, մասնավորապես Տիգրան էֆենդիի և Կարինե խաթունի անձնագրերի օրինակները և օսմանյան արխիվներից քաղված սեփականատիրոջ վկայականները, ժառանգակալությունն ապացուցելու առումով, պահանջում են կարճել գործը, ընդգծելով, որ այդ գործի վաղեմության ժամկետն արդեն լրացած է:

Եթե վաղեմության ժամկետի խնդիր լիներ, ապա Կալիֆոռնիայի դաշնային դատարանը Ալեքս Բակայանի, Անաիս Հարությունյանի և Ռիթա Մահտեսյանի հայցին ընթացք չէր տա, առավել ևս պաշտպանական ներկայացնելու պահանջով չէր դիմի Թուրքիային: Թեև «Հաբերթուրքը» հայցը վերագրում է Թուրքիայի Գյուղատնտեսության և Կենտրոնական բանկերին, իրականում դրա հայցատերը բանկերը չեն, այլ հենց թուրքական պետությունը, այլապես դատարանը պաշտպանական կպահանջեր բանկերից: Ըստ երևույթին իրատեսական է նաև փոխհատուցում ստանալը: Հակառակ դեպքում այս բանկերը Թուրքիայի ԱԳՆ-ի մերժած պաշտպանական ինքնական Կալիֆոռնիայի դատարանին չէին ներկայացնի, նրանց չէր մտահոգի «փոխհատուցման սպառնալիքը», ոչ էլ նրանք պաշտպանականում հստակ կընդգծեին, որ դա Թուրքիայի Հանրապետության անունից չի ներկայացվել:

Փոխհատուցում ստանալու առումով կարևոր է նաև ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև փոխհատուցման պահանջների առնչությամբ ստորագրված համաձայնագիրը, ինչպես նաև ամերիկյան «Ինջիռլիք» ռազմաբազայի տեղակայումը հայապատկան կալվածքի տարածքում:

800.000 ՕՍՄԱՆՅԱՆ ՈՍԿԵՂՐԱՄ ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Ո՞ւմ էր պատկանում, ինչպե՞ս է ձեռք բերվել այդ հարստությունը և ի՞նչ միջոցներով է էյլագիզից փոխադրվել Շվեյցարիա

Որքան էլ ժխտողականության հարցում թուրք հասարակությունը համերաշխ լինի թուրքական իշխանությունների հետ, այնուամենայնիվ, ՀՅ-ի միջազգային ճանաչման ամեն մի դրսևորում հավասարակշռությունից հանում է թե՛ մեկին և թե՛ մյուսին: Հիվանդագին երևակայությունը դառնում է նրանց բնորոշ գիծը: Դա պատահական չէ, այլ հանցագործի հոգեբանության հետևանք, որովհետև ժամանակակից ԹՀ-ի հիմնադիր Աթաթուրքը բացառապես շրջափակված էր հայ ժողովրդի դահիճներով, իսկ ընչաքաղց թուրքական ժողովրդական զանգվածներն անմիջականորեն մասնակցել էին ՀՅ-ին: Մեծ եղեռնի 100-րդ տարելիցն ավելի է բորբոքում թուրքերի հիվանդագին երևակայությունը, նրանք սկսում են ակտիվացնել հայկական դավադրության որոնումները:

Որոնումների պարագայում խոսքը էյլագիզի գործարար Սաիդ Ալի Բայրաքի հոր շվեյցարական Credit Suisse բանկում պահվող 800.000 օսմանյան ոսկեդրամի մասին է: 6 տոննա կշռող այդ ոսկեդրամները բանկին են հանձնվել 1980-ի սեպտ. 12-ի զինվորական հեղաշրջման նախօրեին, շվեյցարական բանկը հայտարարել է, որ ոսկիների աղբյուրն անհայտ է, խարդախության հոտ է փչում դրանից:

Սակայն Անկարայի համալսարանի պրոֆ. Չաղրը Էրհանը փոխանակ մտածելու, թե 6 տոննա քաշ ունեցող 800.000 ոսկեդրամն ի՞նչ հանգամանքներում է հայտնվել էյլագիզի գործարար Բայրաքի հոր ձեռքում, ինչո՞ւ և ի՞նչ միջոցներով ու ճանապարհով է հասել Շվեյցարիա, մտահոգություն է հայտնում, թե Բայրաքը որպես ժառանգ տարիներ շարունակ, պայքարելով հանդերձ, չի կարողանում բանկից ստանալ իր հոր ոսկիները, ապա և ավելացնում. «Հետաքրքրական է, «աղբյուրն անհայտ», այս ոսկիներից խարդախության հոտը փչելու մասին արտահայտվելիս, ի՞նչ նկատառումներով է առաջնորդվել շվեյցարական բանկը»:

Ի դեպ, էյլագիզի ոսկիների հարցը հոկտեմբերի 17-ի համարում արծարծվել էր «Միլլիթեթ» թերթում: Համենայն դեպս, պրոֆ. Էրհանի «Թյուրքիե» թերթի նոյեմբերի 8-ի համարում հրապարակված հոդվածը, որն արտատպել է Ստամբուլի «Հայթերթ» կայքէջը, հետաքրքրական է: Ահա թե ինչ է գրել. «էյլագիզի գործարար Սաիդ Ալի Բայրաքը տարիներ շարունակ պայքարում է, որ շվեյցարական բանկից ստանա հորից ժառանգած 800.000 օսմանյան ոսկեդրամը: Թուրքիայում Շվեյցարիայի դեսպան Ռայմոնդ Կունցը, ստացած հրավերին համապատասխան, էյլագիզում հանդիպել էր Բայրաքի հետ և քննարկել ոսկիների ճակատագիրը:

Մի՞թե այս պատմությունը չափից դուրս տարօրինակ չէ: Մի կողմ թողած այն հարցը, թե 6 տոննա կշռող այս ոսկիները ինչպես են փոխադրվել Շվեյցարիա, ուզում եմ հարցնել. «Ո՞րն է 800.000 օսմանյան ոսկիների աղբյուրը»:

էյլագիզի քաղաքացու հանգուցյալ հայրը «նացիստական ոսկիները որպես ավանդ ընդունող Շվեյցարիան կընդունի նաև իմ ոսկիները» տրամաբանությամբ դրանք հանձնել է բանկ: Սակայն չկասկածեք, որ այդպիսի ոչ մի առիթ բաց չթողնող հայկական լոբբին արդեն լուսարձակի տակ վերցրած պետք է լինի շվեյցարական բանկերում պահվող «աղբյուրն անհայտ» էյլագիզի ոսկիները:

Հոկտեմբերի վերջերին էյլագիզում բնակվող մեր քաղաքացին հայտարարելով իր հոր ունեցած 800.000 օսմանյան ոսկեդրամի մասին, իսկույն հայտնվել էր օրակարգում: Ավելին, Շվեյցարիայի դեսպանն այցելել էր նրան, նույնիսկ ոսկիների վերադարձման համար միջամտել էր վարչապետ Էրդողանը:

Ըստ մեր քաղաքացու, նրա հայրը 1980-ի սեպտեմբերի 12-ի հեղաշրջման նախօրեին 6 տոննա կշռող այս ոսկիները ցամաքային ու ծովային ճանապարհներով հասցրել էր Շվեյցարիա: Նշեմ, որ 800.000 օսմանյան ոսկու արժեքը ներկայումս 4 մլրդ լիրա է կազմում (մոտ 3,5 մլրդ դոլար):

Հենց թերթում կարդացի ոսկիների մասին, զգացի, որ այստեղ տարօրինակ բան կա: Մեկը 800.000 օսմանյան ոսկեդրամ ունենա, առանց Թուրքիայում կամ արտասահմանում ներդրում կատարելու պահի մինչև 1980թ., ապա նախապես «իրազեկվի» սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջման մասին և հեղաշրջումից մի քանի օր առաջ դուրս հանի Թուրքիայից:

Որքան ինձ հայտնի է, Թուրքիայի Հանրապետության առաջին շրջանում ոչ ոք «առձեռն» այդպիսի գումար չի ունեցել: 1924-ին հիմնադրված IS բանկի կապիտալը 250.000 լիրա է, իսկ անգլիացիները Մոսուլից հրաժարվելու համար 1926-ին 500.000 լիրա էին առաջակել Թուրքիային, որը չընդունվեց: Այսինքն խնդրո առարկա գումարը պետությունից գաղտնի տարիներ շարունակ պահելն անգամ ինքնին մեծ խնդիր է:

Մեր քաղաքացու վկայությամբ, նրա հայրը 6 տոննա կշռող ոսկե դրամները թաքցրել է «իրենց տան տակ փորած փոսում»: Եթե այս գումարը վերջինը վաստակել է շնորհիվ առևտրի, ապա հանրապետության շրջանում օսմանյան ոսկեդրամով ինչպե՞ս է առևտուր արել: Ինչո՞ւ այսքան մեծ ծավալի առևտրի դիմաց չի հայտնվել հարկատուների ցուցակում: Ինչո՞ւ է թաքցրել գումարը կամ ինչո՞ւ չի փոխանակել, չի դրել թուրքական բանկում, ներդրում չի արել և գործարան չի կառուցել: Գուցե այս ոսկեդրամների աղբյուրն իսկապես խնդրահարույց է:

Երբ մեր քաղաքացու հանգուցյալ հայրը մտածում էր «նացիստական սուկինները պահող Շվեյցարիան կպահի նաև իմ սուկինները», մի՞թե չգիտեր, որ այդ սուկինները հրեաներին էր պատկանում, այլ ոչ թե նացիստներին: Միլիոնավոր մարդկանց համակենտրոնացման ճամբարներում ոչնչացնող նացիստներն առգրավել էին իրենց զոհերի ունեցվածքը և հատուկ հետաքրքրություն ցուցաբերել սուկինների նկատմամբ: Ի դեպ, 90-ականներին նացիստների առգրաված սուկինների շվեյցարական բանկերում պահպանման շուրջը քաղաքական փոթորիկ էր բարձրացել: Այդ սուկինների հետ կապված շվեյցարական բանկերը ստիպված էին ֆինանսական որոշ գաղտնիքներ հայտնել ԱՄՆ-ին ու Անգլիային: «Հուլոքոստի զոհերի» անունը կրող բազմաթիվ կազմակերպություններ ընկել են այս սուկինների հետևից: Առեղծվածն առ այսօր չի բացահայտվել: Դեռ դատավարություններն էլ շարունակվում են:

Ահա թե ինչո՞ւ էին զարմացել, կարդայով 800.000 օսմանյան սուկեդրամի մասին: Եթե այդ սուկինները շվեյցարական բանկերում դրվել են «նացիստական սուկինների» օրինակով, ապա այս գումարի աղբյուրն անհայտ լինելու առումով պետք է տեղիք տա լուրջ մտահոգության: Թալեաթ փաշան «Գաղտնի թղթածրարում» 1915-ին Մամուրաթուլպազիզից (Էյլազիզ) տեղահանված հայերի թիվը 70.000 է նշում: Այդ հայերից ոչ մեկն այլևս Էյլազիզ չվերադարձավ: Տեղահանվել են նաև քաղաքի ունևոր հայ ընտանիքները: Գրեթե յուրաքանչյուր հայ ընտանիք «տեղահանությունից հետո վերադառնալու» հույսով փոխանակ ունեցած սուկին իր հետ վեցնելու, թողել է մահմեդական վատահեղի հարևանի մոտ կամ թաղել ապահով մի տեղ, ինչի մասին տարիներ շարունակ բերնեբերան պատմում են: Այդպիսի պատմություններ պատմում են նաև Արևելյան Անատոլիայի այլ քաղաքներում: Ավելին, ԱՄՆ-ի քաղաքացի բազմաթիվ հայեր իրենց պապերի թաղած սուկինները գտնելու նկատառումով հաճախ են այցելում այս շրջանները:

2015-ին լրանում է այսպես կոչված ՀՅ-ի 100-րդ տարելիցը: Հայերը կարևոր նշանակություն են տալիս այդ տարելիցին: Կասկածից վեր է, որ այդ առումով որևէ առիթ բաց չթողնող հայկական լոբբին արդեն լուսարձակի տակ վերցրած պետք է լինի «աղբյուրն անհայտ» այս սուկինները: Էլ չենք խոսում շվեյցարական Credit Suisse բանկի մասին, որը հայտարարում է. «Ոսկինները խնդրահարույց են: Խարդախության հոտ է փչում»: Հետևաբար չի կարելի վարչապետին խառնել այսպիսի մութ գործերի մեջ, որի ծայրը քիչ թե շատ հայտնի է, թե ո՞ր է տանելու: Առավել ևս չի կարելի վարչապետին դնել այնպիսի իրավիճակում, որ նա հայտնվի «աղբյուրն անհայտ» գումարի հետևից ընկնողի կարգավիճակում, ինչը, հեղինակության առումով, Թուրքիայի համար կարող է լուրջ խնդիր դառնալ առաջիկայում»:

Եզրակացնում է Թաներ Աքչամը

Նոյեմբերի 23-ին 1937-38թթ. Դերսիմի կոտորածների համար վարչապետ Էրդողանը պետության անունից ներողություն էր խնդրել դերսիմցիներից, պահանջելով, որ այդպես վարվի նաև այդ թվերին երկրում միանձնյա իշխելու պատճառով կոտորածների պատասխանատվությունն անմիջականորեն իր վրա կրող ժողովրդահանրապետական կուսակցությունը:

«Ազգի» նախորդ համարում, անդրադառնալով այս հարցին, նշել էինք, որ կոտորածի համար պետության ներողությունը իրավագիտական ընթացակարգ է պահանջում, իսկ Էրդողանն ընդամենը բանավոր ներողություն է խնդրել: Բայց և այնպես նա դրանով նախադրյալներ է ստեղծել, որ Դերսիմի կոտորածների հետ երկրում աշխուժորեն վերարձարծվեն այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կոտորածներին Քեմալ Աթաթուրքի մասնակցությունը, սեփական պատմության հետ Թուրքիայի առերեսման անհրաժեշտությունն ու թուրքական արխիվների բացումը:

Ի դեպ, եթե 1915-ի իրադարձությունների այսպես կոչված անաչառ ուսումնասիրության համար ԹՀ-ի ղեկավարները արխիվները բացելու պահանջ են ներկայացնում ՀՀ-ին, ժողովրդահանրապետական կուսակցությունն էլ Էրդողանի կառավարությունից է պահանջում բացել թուրքական արխիվները, որպեսզի հնարավոր լինի ուսումնասիրության միջոցով բացահայտել ճշմարտությունը Դերսիմում:

Այսինքն, երբ Թուրքիայում իրողության հետ առերեսման խնդիր է ծագում, թուրք պետական գործիչներն ու քաղաքական շրջանակները հարցից խուսափելու համար կառչում են արխիվներից: Տվյալ պարագայում խոսքը ժողովրդահանրապետական կուսակցության մասին է, որն ունի նաև Դերսիմի կոտորածներին Աթաթուրքի մասնակցությունը արխիվներից կառչելու միջոցով քողարկելու խնդիր:

Ավամա հարց է ծագում ո՞րն է կուսակցության արխիվները բացելու պահանջի առնչությունն այս պահանջը որպես քողարկման միջոց օգտագործելու հետ: Նոյեմբերի 29-ին BIA լրատվական գործակալության տված հարցազրույցում այդ հարցին պատասխանել է Թաներ Աքչամը, ընդգծելով, որ Թուրքիայի ԱԳՆ-ի և թուրքական ԶՈՒ ԳԾ-ի արխիվներն առ այսօր փակ են, վարչապետ Էրդողանը հագիվ թե ի վիճակի լինի բացել դրանք:

Ի պատասխան թղթակցի հարցին, Աքչամն ասում է, որ «արխիվները բացել» արտահայտությունը կարող է միանգամայն խաբուսիկ լինել, վարչապետարանին առընթեր գործող, օսմանյան

և հանրապետական շրջաններին վերաբերող արխիվներն արդեն բաց են: Ցանկացողը կգնա և կվերցնի այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են:

Այնուհետև նա ավելացնում է. «Այստեղ որևէ խնդիր չկա: Խնդիրը արխիվներում պահպանվող փաստաթղթերի դասակարգումն է: Ոչ բոլոր փաստաթղթերն են տրամադրվում ուսումնասիրողներին: Այլ կերպ, եթե վարչապետարանին առընթեր գործող արխիվներում պահպանված, բայց ընթերցողին չտրամադրված վավերագրերն առ այսօր չեն ոչնչացվել, ապա դրանք պետք է դասակարգել և օգտագործման ներկայացնել: Օրինակ, ՀՅ-ի շրջանում «տիրագուրկ կալվածքների» մասին վիլայեթներից ուղարկված ամենշաբաթյա զեկուցագրերին առնչվող թղթածրարները մինչև հիմա քողարկվում են: Առ այսօր փակ է նաև ԱԳՆ-ի արխիվը, ինչը 21-րդ դարում կատարյալ անոթ է: Իմ կարծիքով, Ահմեդ, Դավութօղլուն պետք է վերջ տա այս ամոթին: Մի կողմից տարածաշրջանին և աշխարհին արդարության դասեր ես տալիս, իսկ մյուս՝ փակի տակ ես պահում քո նախարարության արխիվները... Տեսականորեն բաց, սակայն պրակտիկորեն փակ են ՁՈՒԳԸ-ի արխիվները: Մինչդեռ արխիվների մեջ կարևորագույնը հենց դրանք են: Սակայն, չեմ կարծում, որ վարչապետն ի զորու լինի բացել գլխավոր շտաբի արխիվները: Իմ խորին համոզմամբ, այս արխիվներում պահպանվող վավերագրերը երբևէ չեն տրամադրվի ուսումնասիրողներին: Հավանաբար Դերսիմի կոտորածներին առնչվող փաստաթղթերը չեն ոչնչացվել, որովհետև պետությունն այս հարցում չափազանց ինքնավստահ էր: Ինչ վերաբերում էր Հայկական հարցին, ապա 1918-ից, ինչպես նաև 1980-ից հետո արխիվները մաքրագարդել են և ոչնչացրել հարցին առնչվող կարևորագույն վավերագրերը: Դա մենք գիտենք: Մնացած փաստաթղթերը կարելի է, վարչապետի կարգադրությամբ, հրատարակել: Թեև մինչև օրս հրատարակություններ կատարվել են, սակայն դրանցում ընդգրկված բոլոր վավերագրերը, ցավոք, քարոզական նպատակի են ծառայում: Պետք է վերջ տալ այս ամենին»:

28.03.2012

ԷՐԶՐՈՒՄԻ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ ԷՐ ՀՐԱՎԻՐՎԵԼ

ՔԵՄԱԿԱՎԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

Պոլսո հայոց պատրիարքարանը շենքը վերադարձնելու հայտ է ներկայացնում

Մարտի 13-ին Կ. Պոլսո հայոց պատրիարքարանը Էրզրումի Սանասարյան վարժարանն ու Ստամբուլի Սանասարյան քարվանսարայը հետ ստանալու ակնկալիքով դիմում է ներկայացրել դատարան: Պատրիարքարանի իրավունքների պաշտպան Այի Էլբեյօղլուն,

ինչպես մարտի 24-ին տեղեկացրել է «Թարաֆ» թերթը, ասել է, որ աղքատ և որբ աշակերտների կարիքները հոգալու համար ռուսահպատակ բարերար Մկրտիչ Սանասարյանի ստեղծած Սանասարյան հիմնադրամի ողջ ունեցվածքը 1936-ին փոխանցվել էր հիմնադրամների գլխավոր վարչություն, պատճառաբանելով, թե հիմնադրամը կորցրել է իմաստը, ուստի նպատակին ծառայել չի կարող, և դա անհնար է հանձնել երկրորդ կառույցի (պատրիարքարանի) տնօրինությանը:

Այնուհետև Էլբեյօղլուն ընդգծել է. «Որպեսզի Սանասարյան հիմնադրամը կորցնի իմաստը, անհրաժեշտ է, որ երկրում աղքատ ոչ մի հայ երեխա չմնա: Միաժամանակ համայնքային կալվածքները հնարավոր է փոխանցել 2-րդ կառույցներին, դրա առնչությամբ վճռաբեկ դատարանը վճիռ ունի կայացրած»: Վերջում նա խիստ կարևոր է համարել հիմնադրամի ունեցվածքի հանձնումը պատրիարքարանին, նշելով, որ դա կնշանակի նաև Սվազի և Էրզրումի համայնքապատկան այլ կալվածքների հանձնում:



Ի դեպ, Սանասարյան հիմնադրամին առընթեր գործող համանուն դպրոցը այն շենքն է, որտեղ 1919-ի հուլիսի 23-ին Մուստաֆա Քեմալի (Աթաթուրք) գլխավորությամբ հրավիրվել էր քեմալականների առաջին կոնգրեսը: Մուստաֆա Քեմալին անձամբ Էրզրում էր կանչել հայ ազգի դահիճ Քյազիմ Կարաբեքիրն ու կոնգրեսում առաջնահերթ նշանակությամբ քննարկվել էր հայկական պետականության ստեղծումը կանխարգելելու հարցը:

Ինչ վերաբերում է Սանասարյան քարվանսարային, ապա դա, ինչպես «Թարաֆն» է նշում, ժամանակին եղել է Ստամբուլի անվտանգության գլխավոր վարչության շենք, որտեղ կատարվել էին անասելի խոշտանգումներ:

23.06.2012

«ՓՈՒՆԱՆԱԿ ԹՈՒՐԿԻԱՅԻՑ ՓՈՒՏՀԱՏՈՒՑՈՒՄ ՊԱՀԱՆՁԵԼՈՒ, ՀԱՅԵՐԸ ԹՈՂ ԳԻՄԵՆ ԱՆԳՆԱՅԻՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻՆ»

Հայրարարում է Թուրքական պարմական ընկերության աշխատակից պրոֆ. Չիչեքը

Երեկ «Բուզյուն» թերթը անդրադարձել էր I համաշխարհայինի տարիներին տեղահանված հայերի «տիրագուրկ կալվածքների» վաճառ-

քից գոյացած 5 միլիոն օսմանյան ոսկու ճակատագրին: 1915-ին 22 մլն դոլարի հավասարազոր այդ գումարը, որի ներկայիս արժեքը, ըստ թուրքական թերթի, կազմում է 1.3 մլրդ ստեռլինգ, իթթիհատականները փոխանցել են Բեռլինի «Ռայխսբանկ» այն էլ՝ Ջեմալի, Էնվերի և Թալեաթի կեղծ անուններով բացված հաշվեհամարին, սակայն այդ գումարը որպես ռազմատուգանք յուրացրել են Անտանտի երկրները:

Ի դեպ, հայ ժողովրդի երևելի բոլոր դահիճները, որոնք 1918-ի Մուդրոսի պայմանագրի ստորագրումից հետո փախել էին արտասահման, կեղծանուններ էին օգտագործում: Նրանցից Էնվերը, Թալեաթը և Ջեմալն ունեին մի քանի կեղծանուն: Ավելին՝ խուսափելու համար հայ վրիժառուների հաշվեհարդարից, Թալեաթը նույնիսկ բեղերն էր սափրել, դեն շաքրտելով ֆեար:

Համենայն դեպս, ինչպես «Բուզյունն» է վկայում, Անտանտի երկրների հայկական ոսկիները յուրացնելու փաստը, «տիրազուրկ կալվածքներին» առնչվող վավերագրերը 2 տարի ուսումնասիրելուց հետո, բացահայտել է Թուրքական պատմական ընկերության հայկական ուսումնասիրությունների բաժնի աշխատակից պրոֆ. Քեմալ Չիչեքը:

Օգտվելով առիթից, նշենք, որ պրոֆ. Չիչեքը Հայկական հարցի վերաբերյալ բազմաթիվ «աշխատությունների» հեղինակն է, որոնցից թերևս կարելի է նշել նրա 2004-ին հրատարակված «Հայեր. աքսոր և արտագաղթ» և 2005-ին լույս տեսած «Հայերի բռնի արտագաղթը 1915-1917թթ.» գրքերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքական պատմական ընկերությունը վերջին տասնամյակներում լծված է «ցեղասպանության հայկական պնդումների դեմ» պայքարելու, ինչպես նաև ՀՅ-ի հարցում Թուրքիայի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականությունը հիմնավորելու գործին, կարծում ենք, ինքնին հասկանալի են դառնում պրոֆ. Չիչեքի շատ գիտական այսպես կոչված աշխատությունների և՛ բնույթը, և՛ բովանդակությունը, և՛ առաջադրանքը:

Նույնը պետք է ասել հայերի ոսկիների յուրացման փաստի մասին նրա արած բացահայտումների առնչությամբ: Նա փաստը «Բուզյունին» պարզաբանելիս ասեալ թե ինչ է ասում. «Հայերին վերագրվող 5 միլիոն օսմանյան ոսկին իբրև ռազմատուգանք յուրացնելիս Անգլիան և նրա դաշնակիցները որևէ փաստաթուղթ չեն թողել ճշտելու, թե այդ գումարը որտեղ է ծախսվել: Որքան ինձ հայտնի է, սփյուռքահայերը տեղյակ էին այս 5 միլիոնի մասին, որովհետև Կանադայում բնակվող

մի խումբ հայ երիտասարդներ, օգտվելով Բրիտանիայի քաղաքացիություն ունենալու հանգամանքից, կարողացել են Անգլիայից 5.000 ստեռլինգ գանձել: Քանի որ վճարել է, ուստի Անգլիան ընդունած պետք է լինի յուրացված գումարի՝ հայերին պատկանելու փաստը: Այլապես հայերին ինչո՞ւ գումար վճարել: Ավելին, անգլիացի փոխգնդապետ Կորբինը, որը եղել է «Հայերի բարեկամների» միության քարտուղարը, վկայակոչելով հայերին, պնդել է, որ 1930-ին արդեն այդ գումարից 200.000 ոսկի էր մնացել: Չեմ հասկանում, թե հայկական սփյուռքը փոխանակ Թուրքիայից փոխհատուցում պահանջելու, ինչո՞ւ առգրավված գումարը չի պահանջում Անգլիայից և նրա դաշնակիցներից: Փոխհատուցման բուն հասցեատերը Անտանտի երկրներն են և հատկապես՝ Անգլիան»:

Թուրքական պատմական ընկերության հայկական ուսումնասիրությունների բաժնի աշխատակից պրոֆ. Չիչեքի այս խոսքերը ավելորդ են դարձնում ամեն մի մեկնաբանություն: Բայց որ ժողովրդական «Գող՝ սիրտը դող» ասացվածքը միանգամայն արտացոլում է նրա հոգեվիճակը, ակնհայտ է:

Ինդիքը, սակայն, Չիչեքի հոգեվիճակը չէ, այլ ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը և ծավալման պայմաններում թուրքական ժխտողականության դիրքերի սպառումը: Այս 2 փաստերը, այսինքն՝ գործընթացի ծավալումն ու դիրքերի սպառումը եթե համադրելու լինենք, ապա դժվար չի լինի կոսիտել, որ ՀՅ-ի ճանաչման փուլը միջազգային ասպարեզում թևակոխում է Մեծ եղեռնի հետևանքների վերացման փուլ և դա ընդունում է թուրք պրոֆեստորը:

Այլապես նա չէր փորձի փոխել ցեղասպանության համար փոխհատուցման հարկադրանքի տակ գտնվողների հասցեն:

12.06.2013

**ԹԱԷՍԻՄԻ «ԳԵՋԻ» ԱՅԳԻՆ ԵՂԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՀԱԿՈՐ
ԳԵՐԵՋՄԱՆՈՑԻ ՏԱՐԱԾԸ**

1919-ին այնպեղ է կառուցվել Մեծ եղեռնի առաջին հուշարձանը

Երեկ առավոտյան Ստամբուլի Թաքսիմ հրապարակի «Գեզի» գրոսայգում ցուցարարները վերստին բախվեցին ուստիկանության հետ: Բորբոքված կրքերը չեն հանդարտվում, ոչ էլ կհանդարտվեն, որքան էլ վարչապետ Էրդողանն այսօր ընդունի բողոքի ցույցերը համակարգող «Թաքսիմի պլատֆորմի» ղեկավարներին: Ինդիքը այգու հատման ենթակա ծառերը, այսինքն՝ բնապահպանությունը չէ,

այլ աշխարհիկ քեմալականների հակազդեցությունը իսլամամետ կառավարությանը, որը դրսևորվում է վարչապետ Էրդողանի Թաքսիմ հրապարակը վերակառուցելու նախագծի շուրջը:

Տուցարարները չեն հաշտվում հրապարակում Աթաթուրքի անվան մշակույթի պալատը քանդելու և այնտեղ պատմական «Սելիմիե» զորանոցը վերականգնելիս նաև մզկիթ կառուցելու մտքի հետ, հակառակ դրան՝ վարչապետ Էրդողանը համառոտ է: Հարկ է նշել, որ այսօր Աթաթուրքի պալատի առնչությամբ Էրդողանին հակադրվող քեմալականներն էլ 30-ականներին «Գեզի» այգին կառուցելու համար քանդել էին հայկական Սուրբ Հակոբ գերեզմանոցն ու հարակից Խոր Վիրապ եկեղեցին, բարեկարգման համար որպես շինանյութ օգտագործելով գերեզմանաքարեր:

16-րդ դարի այդ գերեզմանոցը զբաղեցրել է 56.000մ² տարածք, իսկ հարակից կառույցները՝ 5.000մ²: 1915-ին գերեզմանոցը հայտարարվել է «լքյալ գույք»: Հետագայում, ըստ ամենայնի 1918-ի Մուդրոսի գինադարից հետո, թեև հետ է հանձնվել համայնքին, սակայն 1926-ին Բերայի քաղաքապետարանը փակել է գերեզմանոցը և որոշել փոխադրել մեկ այլ տեղ: Որոշումը Սուրբ Հակոբ գերեզմանոցի առգրավման ազդակ է հանդիսացել: 1931-ին Բերայի քաղաքապետարանը գերեզմանոցի հետ առգրավվել է նաև Սուրբ Հակոբ հիմնադրամին պատկանող հարակից շինությունները՝ խանութներով և ավտոտնակներով հանդերձ:

Ապարդյուն են անցել Կ. Պոլսո հայոց պատրիարքարանի, թաղական խորհրդի և հիմնադրամի դիմումները դատարան: 1934-ին Ստամբուլի դատարանը վճռել է գերեզմանոցը հանձնել քաղաքապետարանի տնօրենությանը, որն էլ 1938-ին հիմնովին քանդել է՝ վերածելով ամայի հողատարածքի: 1939-ին նույն ճակատագրին է արժանացել նաև Խոր Վիրապ եկեղեցին: Գերեզմանաքարերը օգտագործվել են «Գեզի» զբոսայգու և Էմինոնյու հրապարակի կառուցապատման նպատակով:

Այս տվյալները քաղել ենք Արմավենի Միթոլոլուի «Հասարակական պատմություն» հանդեսում հրապարակված հոդվածից, որը հունիսի 8-ին արտատպել էր Ստամբուլի «Հայթերթ» կայքէջը: Քրդական «Ֆըրաթ» լրատվական գործակալությունն էլ հունիսի 9-ին հրապարակեց «Ո՛չ ռասիզմին և ազգայնամոլությանը» նախաձեռնության խոսնակ Ջենգիզ Ալզանի նույն օրը «Գեզի» այգում արած հայտարարությունները:

Ալզանը նշել է, որ 1560-ին սուլթան Սուլեյման 1-ի՝ որպես գերեզմանոց հայկական համայնքին հատկացրած այս տարածքը թալանվեց, 1940-ին արդեն հայերը զրկված էին տարածքի նկատմամբ ամեն մի իրավունքից: Ապա նա շարունակում է. «Գեզի զբոսայգու այն աստիճանները, որոնց վրա այսօր ցատկոտում են, այստեղ թաղված հայերի գերեզմանաքարերն են»:

Ալզանը ուշադրություն է հրավիրում նաև 1919-ին, այսինքն՝ ցեղասպանությունից 4 տարի անց այգու տարածքում Մեծ եղեռնի առաջին հուշարձանի կառուցման փաստին՝ նշելով, որ դա այնուհետև քանդել են: Ապա Ալզանը ընդգծում է. «Այս փաստերը ծանոթ չեն հասարակական լայն շրջանակներին: Մենք ցանկացանք, որ փաստերի մասին նշվի ազատության պայքարի խորհրդանիշը դարձած «Գեզի» զբոսայգում: Մինչ դիմադրությունը զբոսայգում շարունակվում է, ցուցարարները մեզ համար անսովոր ձևով քրդերից ներողություն են խնդրում: Իսկ հայերին նրանք գրեթե չեն ճանաչում, որովհետև վերջիններիս բնաջնջել են: Անկախ բնաջնջումից, տասնյակհազարավոր հայեր դեռ կան: Նրանք ջանում են ապացուցել իրենց պապերի բնաջնջումը այս հողերում: Մենք էլ պիտի ջանանք, որ մարդիկ հիշեն ցեղասպանությունը, առերեսվեն ցեղասպանության հետ և իրազեկ լինեն իրողությանը: Ուզում ենք, որ «Գեզի» զբոսայգի այցելողները 1919-ին այստեղ կանգնեցված ցեղասպանության հուշարձանի մասին իրազեկված հեռանան: Հուսանք, որ մի օր նույն տեղում ցեղասպանության նոր հուշարձան կկառուցվի»:

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐԶԱԿԱՆ
ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐԶԻՎՅԻ
ԽՐԱՆՈՒՍՈՒՄԸ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

11.04.2001

**ՇԻՄՈՆ ՊԵՐԵՍԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԲԱՆԻ
ԿԵՑՎԱԾՔ Է ԸՆԴՌՈՒՆՈՒՄ. «ՉԻ ԿԱՐԵԼԻ ԽԵՂԱԾՅՈՒՐԵԼ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»**

Երեկ պաշտոնական այցով Անկարա ժամանեց Իսրայելի ԱԳ նախարար և փոխվարչապետ Շիմոն Պերեսը: Թուրքական պետհեռուտատեսության հաղորդման համաձայն, Չանքայայի նստավայրում նրան ընդունեց Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը, ապա վարչապետ Բյուլենթ Էջլիթը: Այնուհետև Պերեսը հանդիպեց իր թուրք գործընկերոջը՝ Իսմայիլ Ջեմին: Վերոհիշյալ աղբյուրը նշեց, որ Պերեսը Թուրքիայի ղեկավարների հետ հանդիպումներում քննարկել է միջինարևելյան խաղաղ կարգավորմանն առնչվող խնդիրներ:

Ակնհայտ է, որ Միջին Արևելքում խաղաղ կարգավորումը Իսրայելը Պաղեստինի միակողմանի զիջումներով է պայմանավորում: Եթե ԱՄՆ-ը ենթադրվող զիջումները պաղեստինցիներին պարտադրելու համար տարածաշրջանում Իսրայելի ռազմական գերազանցությունն է ապահովում, ապա Թուրքիան վերջինի հետ ռազմական և ռազմավարական դաշինքի մեջ ամեն կերպ նպաստում է, որ արաբ-իսրայելական հակամարտությունը սահմանափակվի պաղեստինցիների հետ իսրայելցիների հակամարտության շրջանակներով: Այդ ընթացքում անխուսափելի է դառնում իսլամական, առավել ևս արաբական աշխարհից Թուրքիայի մեկուսացումը:

Ներկա փուլում իսրայելա-պաղեստինյան հարաբերությունների լարվածությունը սրվում է: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա ֆինանսական ճգնաժամը կազմալուծման շեմին է կանգնեցնում նրա տնտեսությունը: Դրությունը գոնե մասնակիորեն փրկելու համար թուրքական կառավարությունը առնվազն 15 մլրդ դոլարի ֆինանսական օգնության կարիքն է զգում: Ուրեմն Շիմոն Պերեսի այցն Անկարա ժամանակացույցի առումով կարևոր նշանակություն է ստանում: Հատկապես, երբ ամերիկացիները զլանում են պահանջվող գումարը տրամադրել Թուրքիային: Իսրայելը վերջինին, ինչ խոսք, 15 մլրդ դոլար չի տրամադրի, բայց միանգամայն կարող է նպաստել, որ ամերիկացիները տրամադրեն: Դրա համար անհրաժեշտ է, որ Թուրքիան իր հերթին Իսրայելի պաղեստինյան քաղաքականությանը նպաստի: Հետևաբար, Պերեսն Անկարայում Թուրքիայի ղեկավարների հետ ոչ թե միջինարևելյան խաղաղ կարգավորման գործընթացին առնչվող

խնդիրներ է քննարկել, այլ Պաղեստինի հարցում թուրքական կառավարությունից պահանջել է ի նպաստ Իսրայելի նոր ձեռնարկումներ: Դա, ըստ երևույթին, Թուրքիային շողորթութելու պարտավորության առջև է կանգնեցրել Պերեսին, որպեսզի վերջինը ցեղասպանության հարցում պաշտպանի Թուրքիայի թեզերը:

Անկարա մեկնելուց առաջ, ինչպես վկայում է թուրքական պետհեռուտատեսությունը, Պերեսը հանդես է եկել հայտարարությամբ, մասնավորապես ասելով. «Պատմությունը պետք է թողնել պատմաբաններին: Անիմաստ է պնդել, թե հայերը հրեաների նման ցեղասպանության են ենթարկվել: Ցեղասպանության հարցում հայերի նույնացումը հրեաների հետ անընդունելի է: Պատմությունը չի կարելի խեղաթյուրել»:

Ժողովրդական առածն ասում է. «Ձեռքը ձեռք է լվանում»: Հարցը սակայն առածը չէ, այլ պատմությունը պատմաբաններին թողնելու Պերեսի հայտարարությունը: Թերևս կարելի էր հավատալ դրա անկեղծությանը, եթե նա, լինելով ԱԳ նախարար, պատմությունը խեղաթյուրելու կարծիք չհայտնեց: Զե՞ որ Պերեսը դրանով պատմաբանի կեցվածք է ընդունում: Եթե նա պատմաբան չէ, ապա ՀՅ-ի հարցն է քաղաքական: Ուրեմն դա չի կարելի պատմաբանների հայեցողությանը թողնել:

28.06.2001

ԹՈՒՐԶԵՐԸ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ «ՀԱՅԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ»

ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

*Պաշտոնական Վաշինգտոնի և հրեական կառույցների թուրքամեդ
դիքորոշումը կառուցման գրավականն է*

1915թ. ՀՅ-ի հարցը քանի դեռ շարունակում է արծարծվել եվրոպական երկրների խորհրդարաններում, շարունակվելու է հարցի արծարծմանը Թուրքիայի հակազդեցությունը, և նա չի հրաժարվելու հակաքայլերից: Հարցը, սակայն, հակազդեցության թուրքական դրսևորումները չեն, ոչ էլ նրա հակաքայլերի սնանկությունը, ինչը պարզորոշ երևաց, երբ ՀՅ-ն ճանաչելու հարցում Ֆրանսիայի օրինակին հետևեցին Իտալիայի և Շվեյցարիայի խորհրդարանները, այլ այն աներևակայելի հերյուրանքները, որոնք ճանաչման գործընթացը կասեցնելու համար Թուրքիան տարածում է հայերի վրա:

«Արևելյան Անատոլիայում խաղաղ թուրք բնակչության դեմ հայերի կատարած ցեղասպանության» թուրքական պնդումները իբրև հերյուրանք ոչ այնքան աներևակայելի, որքան ծիծաղելի են: Սակայն դա չխանգարեց, որպեսզի նրանք Կարսի, Իգդիրի, Էրզրումի պես քաղաքներում կառուցեն թուրքերի նկատմամբ այսպես կոչված հայերի կատարած ցեղասպանության հուշարձաններ: Ըստ երևույթին ՀՅ-ի

միջազգային ճանաչման գործընթացի ծավալմանը զուգընթաց այդպիսի հուշարձանների թիվը Թուրքիայում աճելու է, հնարավորության սահմաններում թուրքերը փորձելու են նմանօրինակ հուշարձաններ կառուցել երկրի սահմաններից դուրս, օրինակ, ԱՄՆ-ում:

Համենայն դեպս, նրանք արդեն ԱՄՆ-ում սկսել են համանման նախաձեռնություն ցուցաբերել: Այդ մասին «ԱՄՆ-ում նոր հուշարձան» խորագրով հունիսի 18-ի համարում տեղեկացնում է թուրքական «Ենի մեսաժ» թերթը: Ահա թե ինչ է գրում. «Թուրք-ամերիկյան միությունների համագումարը, որ Միացյալ Նահանգներում բնակվող թուրքերին համախմբելու նպատակով է ստեղծվել, օրերս 40 հոգանոց մի պատվիրակություն ուղարկեց Թուրքիա: Ճանապարհորդության շրջանակներում պատվիրակությունը եղավ Իզմիրում, որտեղ այցելեց տեղի Յեղասպանության հուշարձան ու համանուն թանգարան: Վերոհիշյալ համագումարի նախագահ դոկտ. Օրհան Քայմաքչալանն ասաց, որ իրենց կազմակերպությունը Վաշինգտոնում պատրաստվում է ցեղասպանության ենթարկված թուրքերի հուշարձան կառուցել այն հուշարձանի կողքին, որը ԱՄՆ-ի հայկական լրբբիներն էին կառուցել»:

Որքան հայտնի է, Վաշինգտոնում Մեծ եղեռնի հուշարձան գոյություն չունի: Թե ե՞րբ կկառուցվի, դժվար է ասել: Բայց որ ԱՄՆ-ի մայրաքաղաքում «թուրքերի նկատմամբ հայերի կատարած ցեղասպանության» հուշարձան կառուցելու հարցում թուրք-ամերիկյան միությունների համագումարը վճռականորեն է տրամադրված, ակնհայտ է: Նկատի ունենալով ՀՅ-ի հարցում պաշտոնական Վաշինգտոնի թուրքամետ դիրքորոշումն ու ցեղասպանության բանաձևերի չեզոքացմանը նպաստելու ԱՄՆ-ի հրեական կառույցների հավաստիացումները Թուրքիայի ղեկավարներին, թվում է, թե բոլորովին անհիմն չէ խնդրո առարկա հուշարձանի առնչությամբ վերոհիշյալ համագումարի վճռականությունը: Ուրեմն դա կկառուցվի, իսկ Վաշինգտոնի թուրքամետ դիրքորոշումն ու հրեական կառույցների հավաստիացումները կդառնան թուրքերի նկատմամբ այսպես կոչված հայերի կատարած ցեղասպանության հուշարձանի կառուցման գրավականը:

17.07.2001

ԿԵՂԾԻՔԸ ԲԱՂԱՔԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԳԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ

ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՐՁ ԹՈՒՐԻԱՅՈՒՄ

Հուլիսի 13-ին «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» միտումներին անդրադառնալիս «Ազգը», հիմք ընդունելով դրա հիմնադիր անդամներից Օզդեմ Սանբերքի «նպատակը ոչ թե ճշմարտությունը գտնելն է, ապագայի նոր հորիզոններ բացելն ու փոխըմբռ-

նումները խորացնելը» խոսքերը, կարծիք էր հայտնել, թե կեղծիքը որպես «ապագայի նոր հորիզոններ բացելու» նախապայման գերադասելի է դառնում ճշմարտությունից, իսկ փոխըմբռնման խորացումը ենթադրում է ՀՅ-ի ուրացման հարցում աջակցել թուրքերին:

Վերոհիշյալ կարծիքը հիմնավորվել է Թուրքիայի ԱԳՆ-ի «Պատմության հետ հաշտվելու և իր հարևանների նկատմամբ թշնամական քաղաքականությունից հրաժարվելու» կոչով, որը նոյեմբերի 13-ին ուղղվել էր Հայաստանին: Դրան էր հետևել նոյեմբերի 22-ին նույն նախարարության մշակած և կառավարության քննարկմանը ներկայացրած «Հայկական հարցի չեզոքացման» նախագիծը: Սա նույնպես կարևոր փաստ է, սակայն վերոհիշյալ կարծիքի հիմնավորման առումով առավել կարևորը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ս.թ. փետրվարի 21-ին ընդունած օրինագիծն է, որը պաշտոնապես դատապարտում է ՀՅ-ի ճանաչումը:

Թուրքիայի ԱԳՆ-ի վերոհիշյալ կոչն ու «Հայկական հարցի չեզոքացման» նախագիծը, ինչպես նաև Մեջլիսի խնդրո առարկա օրինագիծը ոչ մի կասկած չեն հարուցում ՀՅ-ի հարցը համաշխարհային հանրության ուշադրությունից դուրս մղելու, դրա միջազգային ճանաչումը խոչընդոտելու համար միջոցների մեջ խտրություն չդնելու Թուրքիայի վճռականության մասին:

«Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» ստեղծումն այս առումով պատահական չէ: Հարկ է սակայն նշել, որ տվյալ դեպքում խոսքը սոսկ քաղաքական միջոցառումներին չի վերաբերում: Թուրքերը ՀՅ-ի հարցը քաղաքական ոլորտից ակադեմիական ոլորտ տեղափոխելու նկրտումներով նույնիսկ չեն խորշում քաղաքականացնել գիտական միջոցառումները: Դրանք նպաստում են թուրքական կեղծիքի քաղաքականացմանը: Այս պայմաններում կեղծարարությունն ականա վերածվում է քաղաքականության:

ՀՅ-ի կեղծարարությունը Թուրքիայում վաղուց է պետական քաղաքականություն դարձել: Ինչ վերաբերում է թուրքական կեղծիքի քաղաքականացմանը, ապա նոր չեն նաև դրա փորձերը: Սակայն այս փորձերին Մեջլիսի անմիջական մասնակցությունը համեմատաբար նոր երևույթ է: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ հունիսի 27-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հանրապետական նախկին Սենատի սրահում կազմակերպված շնորհանդեսին: Դրա համար առիթ էր ծառայել օրերս Մեջլիսի հովանավորությամբ անգլերենով հրատարակված «Հայերն օսմանյան վերջին շրջանում» ժողովածուն: Հունիսի 29-ին «Ակօսը», տեղեկացնելով այդ մասին, չակերտների մեջ ընթերցողին տեղյակ է պահում, որ գիրքը հրատարակվել է «Թուրքիայի Հանրապետությանը և ժողովրդին ուղղված

մեղադրանքները պատմական ճշմարտությունների լույսի տակ գիտական փաստարկներով հերքելու» նպատակով:

Ըստ «Ակօսի» շնորհանդեսին մասնակցել են թուրք պետական գործիչները, Թուրքիայում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչները, տարբեր համալսարաններից խնդրին առնչվող ֆակուլտետների ղեկավանները, Թուրքական պատմական ընկերության անդամներն ու ինչպես թուրք, այնպես էլ օտարերկրյա մամուլի ներկայացուցիչները:

Շնորհանդեսին ելույթ է ունեցել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Օմեր Իզգին, ընդգծելով. «Գիրքը գալիս է փաստելու, որ թուրքերը հայերի նկատմամբ ցեղասպանություն չեն գործել»: «Հայերը օսմանյան վերջին շրջանում» ժողովածուն հրատարակությանն է պատրաստել Թուրքական պատմական ընկերությունը, իսկ Մեջլիսի մշակույթի, արվեստի ու հրատարակման խորհուրդը ձեռնամուխ է եղել դրա առաքմանն աշխարհի տարբեր երկրների խորհրդարաններ, համալսարանների գրադարաններ և միջազգային կազմակերպություններ: Միաժամանակ ծրագրվում է առաջիկայում դա հրատարակել թուրքերեն:

Ժողովածուն ներառում է թուրք և օտարերկրյա բազմաթիվ գիտնականների, հետազոտողների և գրողների հոդվածները: Դրա խմբագիրներն են պրոֆեսորներ Թուրքայա Աթայովը, Իլթեր Օրթայլըն և Սթանֆորդ Շուն: Ի դեպ, շնորհանդեսի ավարտին Օմեր Իզգին ժողովածուի մասնակիցներին պարգևատրել էր հուշամեդալներով:

Գիտականի համարում ունեցող յուրաքանչյուր ժողովածուի շնորհանդեսը, ինչ խոսք, գիտական երևույթ է: Բայց երբ կեղծիքը իբրև գիտություն է ներկայացվում, ապա շնորհանդեսը դրա հետ թե՛ քաղաքականացվում և թե՛ վերածվում է կատարյալ կեղծարարության:

16.10.2001

ԹՈՒՐԿԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՓԷ ՍՏԱՆՈՒՄ

Առաջարկվում է ապրիլի 21-ը նշել «թուրքերի եղենի» օր

Հայերի և Հայաստանի նկատմամբ թշնամանքը օրինաչափություն է թուրքական իրականության մեջ: Դա սուկ ԹՀ-ի հայաստանյան քաղաքականությամբ չի արտահայտվում: Թշնամանքի հարցում թուրքական պետական կառույցներին են միանում մամուլի ներկայացուցիչները, հրատարակչությունները, որոնց համատեղ ջանքերով իրար հետևից լույս են տեսնում գիտնականի հավակնություն ունեցող, բայց գիտության հետ որևէ առնչություն չունեցող հեղինակների ստորագրությամբ բազմաթիվ գրքեր:

Սրանք որևէ արժեք ներկայացնել չեն կարող, բայց որ հայերի և ՀՀ-ի նկատմամբ ԹՀ-ում առկա թշնամանքը մշտապես վառ են պա-

հում և դրանով հարևան երկու ժողովուրդների միջև մշտական ատելություն բորբոքելու թուրքական ազգայնամոլության ցինիկ պահանջները բավարարում, ակնհայտ է: Հատկանշական է, որ այս կարգի հրատարակությունները ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի ծավալմանը զուգընթաց կտրուկ աճել են, իսկ «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» ստեղծումը թափ է հաղորդել դրան:

Այդպիսի գրքերի մասին մեզ պարբերաբար տեղեկացնում է «Ակօսը»: Դրանցից կարելի է առանձնացնել Ս. Քեմալ Էրմեթինի «Թուրքերի ցեղասպանությունը» գիրքը, որը 2001թ. հունվարին լույս է տեսել Ստամբուլում, 216 էջ է: Գրքում հեղինակն իր առջև խնդիր է դնում ցույց տալ «հայկական հարցում հայերի նենգափոխումները» և թուրք խաղաղ բնակչության դեմ կատարված զանգվածային այն «զազանությունները», որոնք վերջիններս իբր խնամքով շարունակում են քողարկել ինչպես աշխարհից, այնպես էլ սեփական ժողովրդից: Նախաբանում հեղինակն ընդգծելով դա՛ գրում է, որ ինքը նպատակ ունի հայ ժողովրդին, հատկապես երիտասարդությանը հաղորդակից դարձնել ճշմարտությանը:

Գիրքը կառուցված է այն թեզի վրա, ըստ որի «ցեղասպանության են ենթարկվել ոչ թե հայերը, այլ թուրքերը»: Առանձին զլովներով հեղինակը շարադրում է «հայկական հարց կոչված իրադարձությունների պատմությունը», զուգահեռներ է անցկացնում «հայերի և նացիստների» միջև, ապա և անդրադառնում է «հայերի կատարած սպանություններին և զազանություններին»: Վերջաբանում հեղինակն առաջարկում է յուրաքանչյուր տարվա ապրիլի 21-ը նշել իբրև թուրքերի ցեղասպանության օր՝ պատճառաբանելով, թե այդ օրն իբր Վանի կոտորածների առնչությամբ ցար Նիկոլայ II-ը շնորհավորական հեռագրով ողջունել է հայերին, և Վանում կանգնեցնել «թուրքերի եղենը» խորհրդանշող հուշարձան:

13.12.2001

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Թուրքական պատմական ընկերությունը դառնում է դրա առաջամարտիկը

Վերջին շրջանում հաճախակի են դարձել հայերի դեմ ուղղված գիտական «աշխատությունների» հրատարակումները Թուրքիայում: Սրանք գիտության հետ որևէ առնչություն չունեն: Պարզապես համապատասխանում են Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ Թուրքիայի որդեգրած թշնամական քաղաքականության ոգուն, միաժամանակ արդարացնում այն սպառնալիքները, որոնք իբրև հայատյացության դրսևորում թուրքական իրականության մեջ հակադրվում են ՀՅ-ի միջազգային ճանաչման քայլերին:

Դրա վառ արտահայտությունը հետևյալ «աշխատություններն» են. Ջեմալ Փաշա՝ «Հուշեր», Ստամբուլ, 2001թ., 429 էջ, Սեֆա Քոյունջու՝ «Դոն Քիշոտի սինդրոմն ու հայոց ցեղասպանության կատակերգությունը», Ստամբուլ, 2001թ., 250 էջ, Ս. Քեմալ Էրմեթին՝ «Թուրքերի ցեղասպանությունը», Ստամբուլ, 2001թ., 216 էջ: Սրանցից «Ազգը» ժամանակին անդրադարձել է Էրմեթինի «աշխատությանը»: Ջեմալ փաշան որպես հայ ազգի դահիճ՝ հայտնի անուն է, Քոյունջուն իր գրքում ՀՅ-ի ճանաչումը Ֆրանսիայում կատակերգություն համարելով, նախագահ ժակ Շիրակի գլխավորությամբ ֆրանսիացի խորհրդա-րանականներին նույնացնում է Դոն Քիշոտի հետ:

Նշված աշխատություններին ծանոթացել ենք «Ալօսի» էջերից: Ստամբուլում լույս տեսնող այդ շաբաթաթերթը նոյ. 16-ի համարում մեզ ծանոթացնում է ևս մեկ «աշխատության», դա Յուսուֆ Հալաջօղլուի «աշխատությունն» է, որը կոչվում է «Հայերի տեղահանությունը և ճշմարտություններ» (1914-1918թթ.), լույս է տեսել 2001թ. Անկարայում, 106 էջ է: Վերոհիշյալ հրատարակությունների մեջ թերևս սա ամենա-ծանրակշիռը պետք է համարել, որովհետև Թուրքական պատմական ընկերությունն է հրատարակել, իսկ հեղինակն այդ ընկերության նախագահն է: Ահա թե ինչ է գրում «Ալօսը» սրա մասին.

«Հայերի տեղահանության վերաբերյալ ճշմարտությունը բացահայտելու առաքելությամբ հրատարակված աշխատությունների շարքին ավելացավ ևս մեկը: Յուսուֆ Հալաջօղլու ստորագրությամբ Թուրքական պատմական ընկերության հրատարակած աշխատության խորագիրը՝ «Հայերի տեղահանությունը և ճշմարտություններ», բացահայտում է դրա նպատակը: Նախաբանում Հալաջօղլուն տալիս է նախանշաններն այն հիմքի, որի վրա կառուցվել է գիրքը, գրելով. «Նրանք, ովքեր դարասկզբում պաշտպանելով հայերին՝ իրենց առջև Հայաստան սրտեղծելու խնդիր էին դրել, այսօր ցեղասպանության հարցում կշտամբում են Թուրքիային, անցյալի անհաջողությունների համար վրեժխնդիր լինում այնպես, ինչպես քրդական պետություն սրտեղծելու համար աջակցում են PKK-ի ահաբեկչական կազմակերպությանն ու քրդական ազգայնամոլությանը: Քանզի, ինչպես նշվում է գրքում, անցյալում այն առաջադրանքը, ինչ դրվել էր «հայկական բարեփոխումների» անվան տակ, արդեն քրդերի համար է դրվում, այս պայմաններում քրդական հեռուստատեսության, քրդերենի ուսուցման, մշակութային իրավունքի տրամադրման մասին իրավունքները դուրս են գալիս անմեղ պահանջների շրջանակներից և նույնանում հայերի համար ներկայացված պահանջներին: Մի՞թե պատմությունը նորից է կրկնվում»:

Յուսուֆ Հալաջօղլուն գրում է, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան զորքերին դավաճանող հայերի

տեղահանությունը պետք է դիտարկել ոչ այլ կերպ, քան յուրաքանչ-յուր պետության ինքնապաշտպանության բնական իրավունք և ավելացնում է. «Օսմանյան պետությունը պատերազմի ընթացքում որպես կանխարգելիչ միջոց ստիպված սկսեց ռազմական գործողությունների մերձակա շրջանների հայերին տեղահանել: Այնուհետև այս տեղահանությունը, բացառությամբ կաթոլիկություն և քրդականություն դավանողների, որբերի, միայնակ կանանց և երեխաների, տարածվեց մյուսների վրա, քանի որ հայ ավազակախմբերը ոչ մի կերպ չէին հրաժարվում սպանություններ գործելուց և օտարերկրյա ներկայացուցիչներին օսմանյան պետության մասին շարունակում էին գաղտնիքներ հաղորդել»:

Ընդգծելով, որ օսմանյան արխիվները բաց են ուսումնասիրողների առջև, Հալաջօղլուն իր աշխատությունը եզրակատարում է հետևյալ հարցով. «Եթե, ինչպես պնդում են, 1.5 մլն մարդ իսկապես սպանվել է, մի՞թե սպանվածներին անհրաժեշտ էր լինի թաղել ընդհանուր գերեզմաններում: Որպե՞ղ են այդ գերեզմանները: Ինչո՞ւ թուրքերին պարկանող ընդհանուր գերեզմաններ հայտնաբերվում են, բայց Վան քաղաքի հրկիզված ավերակների ֆոնին, որոնք մեր աչքի առջև են դեռ, հայերի որևէ ընդհանուր գերեզման առ այսօր չի հաջողվում հայտնաբերել»:

20.02.2002

ՀԱՅՅՈՒՆ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐԿԱԿԱՆ ԿԵԴՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՆ ԵՆ ԽՐԱՆՈՒՍՈՒՄ

Հայաստանում Բարայելի դեսպանը նպաստում է դրա ծավալմանը

Փետրվարի 4-ին «Ազգը» տեղեկացրեց, որ ԱՄՆ-ում տպագրության է պատրաստվում «Հայաստան. մեծ խաբեություն. քրիստոնյա-ահաբեկիչ պետության առեղծվածը» խորագրով գիրքը, ընդգծելով դրա բացահայտ հակահայկական բնույթը: Ի դեպ, 2001թ. մարտի 30-ին ԱՄՆ պետդեսպարտամենտը պաշտոնական հայտարարությամբ Հայաստանը հայտարարել էր «ագրեսոր» պետություն, իսկ արցախահայությանը՝ «անջատողականներ»: Եթե Հայաստանի այսպես կոչված ագրեսորությունը համադրենք Արցախի հայությանը վերագրվող անջատողականության հետ, ապա կստացվի, որ հայկական պետությունն իր էությամբ «քրիստոնյա-ահաբեկիչ» պետություն է:

Այլ կերպ՝ տպագրության պատրաստվող այս գրքի տրամաբանությունը միանգամայն համապատասխանում է Հայաստանի և հայերի նկատմամբ ԱՄՆ պետդեսպարտամենտի տրամադրություններին: Ելնելով մեծ եղեռնի հարցում թուրքական, իսկ Արցախի՝ համառորեն թուրք-ադրբեջանական տեսակետներով առաջնորդվելու պաշտոնական Վաշինգտոնի դիրքորոշումից, այսպիսի գրքերի հրատարակումն

ԱՄՆ-ում զարմանք պատճառել չի կարող: Զարմանալին թերևս գրքի հեղինակ Սեմյուել Ուիմսի իռլանդական ծագումն է, որովհետև նմաններին խրախուսում են ԱՄՆ-ի հրեական որոշ կառույցներ, և այդ խրախուսանքին առհասարակ արձագանքում են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Հի Լայնը, Բեռնար Լուիսը և նմանները: Սրանց շարքերն անընդհատ համալրվում են:

Հայաստանում Իսրայելի դեսպան Ռիվկա Կոհեն՝ 1915թ. Մեծ եղեռնը ընդամենը ողբերգություն համարելու, փաստորեն ժխտելու վերջին հայտարարությունը և նրա՝ «չարժե Հոլոքոստի հետ համեմատել» արտահայտությունը ցույց է տալիս, որ Յեղասպանության թուրքական կեղծարարությունը հիմնավորող գիտնականները պետականորեն հովանավորվում են, իսկ Իսրայելն այդ առումով միանալով Թուրքիային և ԱՄՆ-ին, թե հովանավորողների շարքն է համալրում և թե պաշտոնական բնույթ հաղորդում այդ հովանավորչությանը:

Փետրվարի 15-ին ՀՀ ԱԳՆ-ն բողոքի նոտայով դատապարտեց դեսպան Կոհենի՝ ՀՅ-ի մասին հայտարարությունը և անընդունելի համարեց պատմական իրողությունը հերքելու կամ նսեմացնելու ամեն մի փորձ, ընդգծելով. «Հայաստանը երբեք նպատակ չի ունեցել զուգահեռներ անցկացնելու ՀՅ-ի և հրեական Ողջակիզման միջև, համարելով, որ մարդկայնության դեմ գործած յուրաքանչյուր հանցագործություն «եզակի» է՝ իր ուրույն քաղաքական, իրավական, պատմական, բարոյական հետևանքներով»:

Ի գիտություն Իսրայելի դեսպանի, 1915թ. հայերը կյանքից և ունեցվածքից բացի կորցրեցին նաև իրենց հայրենիքը, որովհետև նրանք ցեղասպանության էին ենթարկվել պատմականորեն հայկական տարածքում, իսկ հրեաները՝ գերմանական: Այսինքն՝ ՀՅ-ի հետևանքներն ավելի քան ծանր են եղել, ուստի դրա համեմատությունը Հոլոքոստի հետ առնվազն անարդարություն է:

Հատկանշական է, որ եթե Իսրայելի դեսպանը, ԹՀ-ին դրական ազդանշան հաղորդելու մղումով, ընդ որում ՀՀ-ից, հայտարարությամբ ժխտում է Մեծ եղեռնի փաստը, ապա Հի Լայնը, Բեռնար Լուիսը և նմանները, որոնց, ցավոք, աջակցում են շատ աշխարհահռչակ, բայց ամերիկահպատակ մեր մի շարք հայրենակիցները, ոչ միայն հիմնավորում են Յեղասպանության թուրքական կեղծարարությունը, այլև արժեքավոր խորհուրդներ են տալիս թուրքերին, որպեսզի նրանք իրենց կեղծարարությունը միջազգային ասպարեզում տարածելիս կարողանան որոշակի առաջընթաց ապահովել:

Թուրքական թերթերն այս խորհուրդներին երախտագիտությամբ են անդրադառնում: «Ակօսն» էլ 2001թ. դեկտեմբերի 14-ի համարում անդրադառնում է Հիթ Լաուրիի «Դեսպան Մորգենթաուի հուշագրությունների հեղինակները» վերնագրով աշխատությանը, որը վերջերս

թարգմանաբար հրատարակվել է Ստամբուլում: Խոսքը 1913-16թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի մասին է: Նա 1915-ից Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեի փոխնախագահն էր: Մեծ եղեռնի օրերին Մորգենթաուն, հանդիպելով հայ ազգի դահիճներից Թալեթա և Էնվեր փաշաներին, ամեն կերպ փորձել էր կանխել արևմտահայության բնաջնջումը: Իր հուշագրություններում փաստական նյութերի հիման վրա նա նկարագրել է արևմտահայության ողբերգությունը՝ դա համարելով «պատմության ամենասարսափելի իրադարձությունը»:

Լաուրին իր գրքում Մորգենթաուի հուշագրությունները պայմանավորելով հակաթուրքական քարոզչության առաջադրանքով՝ առաջաբանում նշում է. «Այս գիրքը չի գրվել, որպեսզի Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան Թուրքիայում հայերի հետ կատարվածը Յեղասպանություն որակվի կամ հերքվի: Գրքի խնդիրը Մ. Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուի «Հուշագրությունների» իբրև սկզբնաղբյուր օգտագործման նպատակահարմարությունն է՝ լուսաբանելու համար տվյալ ժամանակահատվածի պատմությունը»:

Հեղինակը գտնում է, որ Մորգենթաուն՝ արդարացնելու համար պատերազմի մեջ մտնելու ԱՄՆ-ի քաղաքականությունը, երկրում հակազերմանական և հակաթուրքական հասարակական կարծիք ձևավորելու մղումով գրի է առել քարոզչական նպատակներ հետապնդող իր «Հուշագրությունները»: Ապա նա ավելացնում է. «Իմանալով այս ամենի մասին, սկամա մտածում ես, այն հայ երիտասարդները, ովքեր 1970-80թթ. թուրք դիվանագետների նկարմամբ ահաբեկչական գործողություններ էին կատարում, մի՞թե Մորգենթաուի «Հուշագրությունների» ազդեցության տակ չէին»:

Լաուրին առաջ քաշելով այն տեսակետը, թե Մորգենթաուն «Հայկական հեքիաթի տարածմանը նպաստել է Լորդ Բրայսի և Յոհաննես Լեփսիուսի հետ համարել ջանքերով», իր գրքի պատրաստմանը ցուցաբերած աջակցության համար երախտագիտություն է հայտնում ծանոթ հակահայ Զապին Մկ Քարթին: Վերջում նա ավելացնում է. «Գիտնականները պարտավոր են երևան հանել ճշմարտությունը, օգնել դրա բացահայտմանը և դա պահպանել, այլ ոչ թե կառչել երևակայության արդյունքներից կամ համարարած արելություն սերմանելու համար սուրը ներկայացնել իբրև ճշմարտություն: Հենրի Մորգենթաուն մահացավ 44 տարի առաջ: Կարծում ենք, նրա գիրքը դեռ ներկայումս ժամանակը վաղուց է եկել, նույնիսկ անցնում է»:

Հիթ Լաուրիի տեսակետները մեկնաբանության կարիք չեն զգում: Պարզապես Մեծ եղեռնի թուրքական կեղծարարությունը հիմնավորելու համար կեղծարարության մեջ է մեղադրվում Հենրի Մորգենթաուն:

Թուրք պատմաբանները դա վաղուց են արել: Հարկ է սակայն նշել, որ Լատուրին անկախ էթնիկ ծագումից, ամերիկյան քաղաքացի է, ոչ թե՛ ԹՀ-ի, իսկ ծագումով հրեա Մորգենթաուն եղել է ԱՄՆ-ի դեսպանը: Հաճախ առաջադրանքը բխում է նպատակից: ՀՅ-ի հարցում ԹՀ-ին աջակցելու պաշտոնական Վաշինգտոնի և Իսրայելի նպատակն ընդհանուր է: Ուրեմն, պետք է ընդհանուր լինի նաև Սեմյուել Ուիմսի, Բեռնար Լուիսի, Հի Լայնի, Հիթ Լատուրիի և նրանց նմանների առաջադրանքը, որովհետև նրանք ծառայում են միևնույն նպատակին:

21.02.2002

**ՄԵԾ ԵՂԵՆՆԻ ՀԱՐՑՈՒՄ ԻՍՐԱՅԵԼԻ ԵՎ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ
ՀԱՄԱՀՈՒՆՉ ԵՆ**

Հայաստանում Իսրայելի դեսպան Ռիվկա Կոհենի անփառունակ հայտարարությունները, որոնցով նա ոչ միայն հերքում էր, այլև փորձում ամեն կերպ նսեմացնել Հայոց ցեղասպանությունը, բուռն հակազդեցություն առաջ բերեց հայ հասարակության մեջ: Այդ առումով ՀՀ ԱԳՆ-ի բողոքի նոտան, որտեղ անընդունելի է համարվում «ՀՅ-ի իրողությունը հերքելու կամ նսեմացնելու յուրաքանչյուր փորձ», պատահական չէր:

Իսրայելի ԱԳՆ-ն իսկույն պատասխանեց նոտային, ընդգծելով, որ Հոլոքոստը եղել է ծրագրված, ուստի եզակի երևույթ է մարդկության պատմության մեջ, իսկ հայ ժողովուրդը ողբերգության զոհ է դարձել, հայերի սպանող պետք չէ համեմատել ցեղասպանության հետ: Միաժամանակ նշվեց, որ Մեծ եղեռնի և Հոլոքոստի համեմատության անհամատեղելիությունը չի նվազեցնում հայերի ողբերգության մեծությունը: Այլ կերպ, Իսրայելի ԱԳՆ-ն հայ ժողովրդին խելք է սովորեցնում, ընդ որում՝ առանց կարեկցանքի մասին մոռանալու:

Իսրայելի ԱԳՆ-ի պատասխանը այնքան ցինիկ է, որքան ՀՅ-ի առնչությամբ դեսպան Կոհենի հայտարարություններն են: Սա զարմանալի չէ. Ռիվկա Կոհենին դեսպան է նշանակել ԱԳՆ-ն, և նա պետք է արտահայտի Իսրայելի պաշտոնական տեսակետը, ինչը միանգամայն համահունչ է հայերի և Հայաստանի, առավել ևս ՀՅ-ի հարցում թուրքական պետության պաշտոնական տեսակետի հետ:

Ուրեմն Իսրայելի իշխանությունները ՀՅ-ն ժխտելով ոչ միայն փորձում են Հոլոքոստը մարդկության պատմության մեջ իբրև եզակի երևույթ ներկայացնել, որպեսզի հրեաներն աշխարհին ներկայանան իբրև բացառիկ ժողովուրդ, այլև առաջնորդվում են Թուրքիայի աջքին սիրունատես երևալու մղումով: Մղումի պարագան հույժ կարևոր է, որովհետև անկախ Հոլոքոստից, արդեն ապահովվում է բացառիկու-

թյունը: Ուստի անիմաստ է Հոլոքոստի եզակիությունը պայմանավորել ՀՅ-ի փաստի հերքումով: Ի վերջո, ՀՀ-ում իշխանափոխությունից հետո ՀՅ-ի միջազգային ճանաչումը որպես ռազմավարական հիմնախնդիր թե՛ նրա արտաքին քաղաքականության օրակարգում հայտնվեց ու ամրապնդվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի 1998 և 2000թթ. ՄԱԿ-ի, իսկ 1999-ին Ստամբուլում ԵԱՀԿ ամբիոնից կատարած հստակ ձևակերպումներով, և թե՛ արժանացավ եվրոպական այնպիսի պետությունների դրական արձագանքին, ինչպիսիք են Ֆրանսիան, Իտալիան, Վատիկանը:

Այս պետությունները, ճանաչելով ՀՅ-ն, դրա հետ ակնհայտորեն անտեսեցին ԹՀ-ի հակազդեցությունը, հետևաբար ճանաչման պայմաններում պարզորոշ երևաց թուրքական հակաքայլերի սնանկությունը: Ակնհայտ է, որ ԹՀ-ի աջքին սիրունատես երևալու Իսրայելի մղումը չի կարող հայկական իշխանություններին ստիպել, որպեսզի նրանք հրաժարվեն ՀՅ-ի միջազգային ճանաչմանը հետամուտ լինելու իրենց դիրքորոշումից: Սա իրատեսական չէ: Ուրեմն Իսրայելը պետք է վերանայի իր դիրքորոշումը և Հոլոքոստը մարդկության պատմության մեջ եզակի երևույթ ներկայացնելու փորձեր կատարելիս դրանց արդյունավետությունը չպայմանավորի ՀՅ-ի փաստը հերքելու կամ նսեմացնելու փորձերի հաճախականությամբ:

Չափազանց կարևոր է նաև վերանայման հանգամանքն այն առումով, որ ՀՅ-ն ճանաչելու քաղաքական ամեն նոր նախաձեռնություն սահմանափակելու է Մեծ եղեռնը հերքելու կամ նսեմացնելու Իսրայելի հնարավորությունները, ինչը հետզհետե երևան է հանելու վերջինիս ժխտողական դիրքորոշման սնանկությունը: Դրա հետ կասկածի տակ է դրվելու Հոլոքոստն աշխարհին իբրև եզակի երևույթ ներկայացնելու փորձերի արդյունավետությունը: Այս պայմաններում եթե Թուրքիայի աջքին սիրունատես երևալու Իսրայելի առաջադրանքը մնա ուժի մեջ, միևնույն է, դա թուրքական կողմի արձագանքին չի կարող արժանանալ: Կասկածից վեր է, որ թուրքերին հետաքրքրում է ՀՅ-ի ճանաչման նախաձեռնությունների չեզոքացումն ու չեզոքացմանը հրեաների աջակցությունը, ոչ թե Իսրայելի շողորոթությունը:

Հրեաներն աշխարհի բացառիկ ժողովուրդն են, թե ոչ՝ դժվար է ասել: Բայց որ Թուրքիայի աջքին սիրունատես երևալու և Հոլոքոստին «եզակի» բնույթ հաղորդելու համար ՀՅ-ն ամեն կերպ հերքելու կամ նսեմացնելու փորձերով Իսրայելը որպես պետություն ավելի քան բացառիկ է դառնում՝ ակնհայտ է:

«ՀԱՅԵՐԸ 518.105 ԹՈՒՐՔ ԵՆ ՍՊԱՆԵԼ»

Պնդում է պաշտոնական Անկարան

Ապրիլի 12-ի համարում «Ակօս»-ը «Թուրքիան հայկական պնդումների դեմ նոր պայքարի սեմին» խորագրով տեղեկացնում է ՀՅ-ի հարցի առնչությամբ թուրքերի ձեռնարկած նոր գրոհի մասին: Պետության բարձրագույն ատյաններում տիրող տեսակետին համապատասխան Հայկական հարցը տարրական դպրոցներից սկսած դասավանդվելու է աշակերտներին և տեղ է գտնելու ինչպես հասարակագիտության, այնպես էլ պատմության դասագրքերում: Ըստ տեղեկության, Թուրքիայի այս քայլը դիտվում է հայկական պնդումների դեմ իբրև հակազդեցության դրսևորում և երկրում առ այսօր տիրող դիրքորոշման վերանայում: Ենթադրվում է, որ դասագրքերը Թուրքիայի ազգային կրթության նախարարության և Բարձրագույն կրթության խորհրդի համակարգմամբ պատրաստելու է Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարության փորձագետներից կազմված հատուկ հանձնախումբը:

Մինչ դասագրքերի պատրաստումը, ուսուցիչները պետք է հետևեն ՀՅ-ի թեմայով հատուկ դասընթացների, և նրանց համար սեմինարներ են կազմակերպվելու: Դասագրքերում ընդգծվելու է «հայերի և թուրքերի հազարամյա բարեկամությունը, դրա կացնահարումը հայ կոմիտեների ապստամբություններով», միաժամանակ մեծ տեղ է տրվելու «թուրք և հայ ժողովուրդները բարեկամներ են» թեմային:

Որ դասագրքերը ՀՅ-ի հարցում թուրքական կեղծարարությունը քարոզելու նպատակով են պատրաստվում, կասկածից վեր է: Ի դեպ, թուրքերը նույնիսկ հարկ չեն համարում թաքցնել իրենց նպատակը: Օրինակ, «Հյուրիեթում» Օքթայ Էքշին ապրիլի 7-ի համարում «Վերջապես խելքի ենք գալիս» խորագրով գրում. «Հանրապետական Թուրքիան նոր սերունդներին կանխակալ թշնամական զգացում չսերմանելու համար ամեն կերպ խուսափեց այլ ժողովուրդների և նրանց կատարած կոտորածների մասին տեղեկություններ հաղորդելուց: Այդ իսկ պատճառով մեր երեխաներն արտասահմանում, հատկապես արևմտյան երկրներում, բախվելով ՀՅ-ի մեղադրանքներին, չէին կարողանում ըստ արժանվույն պատասխանել: Հիմա արդեն պարզորոշ երևում է, որ այդ դիրքորոշումը սխալ է, որովհետև ոչինչ չսովորեցնելով նրանց անպաշտպան ենք թողնում: Անհրաժեշտ է մեր երեխաներին գիտելիքներով զինել, որպեսզի կարողանան պաշտպանվել»:

Ակամա հարց է ծագում. ո՞ր գիտելիքների մասին է խոսքը: Այդ հարցին ապրիլի 19-ի համարում պատասխանում է «Զամանը» և գրում. «Վարչապետարանին առընթեր գործող հատուկ խումբը

արխիվային փաստաթղթերի հիման վրա բացահայտել է, որ հայ ավագակախմբերը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին 518.105 թուրք են սպանել: Թուրքիայի և Ադրբեջանի արխիվներում պահպանվող այս փաստաթղթերը, որոնց ճշգրիտ թիվը 89 է, ամփոփվել են երկհատորյա աշխատության մեջ»:

Ինչ վերաբերում է վերոհիշյալ հատուկ խմբին, ապա դա, ըստ «Զամանի», «հայերի կատարած կոտորածներն ուսումնասիրելու նպատակով է ստեղծվել», իսկ դրա մեջ ընդգրկվել են Թուրքիայի պետական արխիվների գլխավոր վարչության այն մասնագետները, որոնք օսմաներենի են տիրապետում: Նույն աղբյուրի համաձայն, փաստաթղթերը ցուցադրվում են վերոհիշյալ վարչության շենքում:

Մեզ մնում է ավելացնել, որ կեղծարարությունն, ըստ երևույթին, սահմաններ չունի: Իսկ թուրք կեղծարարները ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացը կասեցնելու համար միջոցների մեջ խտրականություն չեն դնում:

ԹՈՒՐՔԻԱՆ ՍԿՍԵԼ Է ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԱՆՍԻԶԱԿԱՆՈՐԵՆ ՆԵՐԳՐԱՎԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ

Քանի դեռ ՀՅ-ի հարցը չէր դրվել ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում, ԹՀ-ն դրան հակադրում էր թուրք գիտնականների կեղծարարությունը: Սակայն Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը փաստի առջև կանգնեցրեց նրան: Գործընթացի ծավալումը ԹՀ-ին հետզհետե համոզեց, որ կեղծարարությունը, որքան էլ պետականորեն հովանավորվի և ներգրավվեն այլազգի գիտնականներ, առանց պետական կառույցների աջակցության ցեղասպանության դեմ պայքարի արդյունավետ միջոց դառնալ չի կարող:

Գործընթացի ծավալումը ստիպեց Թուրքիային վերանայել դիրքորոշումը: Քանի որ դիրքորոշման հիմքում կեղծարարությունն էր, ուստի վերանայումն ընդամենը հանգեցրեց կեղծարարական ձևի և բովանդակության փոփոխությանը: Այսպիսով, երկրում պետականորեն հովանավորվող կառույցների կողքին ստեղծվեցին պետական հատուկ կառույցներ, որոնց էլ հանձնարարվեց «այսպես կոչված ՀՅ-ի անհիմն պնդումների դեմ» պայքարը:

Թուրքիայում պետականորեն հովանավորվող կառույցներից կարելի է առանձնացնել ԵՌՈՒԿ-ին կից գործող ՀՀԻ-ն: «Ազգը» բազմիցս անդրադարձել է դրա գործունեությանը: Ինչ վերաբերում է պետական կառույցներին, ապա դրանցից էլ առանձնանում է վարչապետարանին առընթեր «հատուկ խումբը»: Խմբի մասին ապրիլի 19-ի համարում տեղեկացրել էր թուրքական «Զաման»

թերթը, ընդգծելով, որ դա ստեղծվել է «թուրքերի նկատմամբ հայերի կատարած կոտորածներն ուսումնասիրելու նպատակով և դրա մեջ ընդգրկվել են Պետական արխիվների գլխավոր վարչության այն մասնագետները, որոնք օսմաներենի են տիրապետում»:

«Աքշամն» էլ մայիսի 17-ի համարում տեղեկացնում է «Ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի համակարգման խորհրդի» մասին, ավելացնելով, որ դա անցել է գործնական աշխատանքի: «Աքշամի» տվյալներով, խորհրդի նախագահն է փոխվարչապետ Դելթթ Բախչելին, իսկ դրա աշխատանքները համակարգում է Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարի առաջին տեղակալը:

Վերոհիշյալ խորհրդի կազմում ընդգրկվել են թուրքական ՁՈւ ԳՇ-ի վարչության պետը (թերթը չի ճշտում՝ ո՞ր վարչության), արդարադատության, ՆԳ և ԱԳ նախարարությունների խորհրդականները, ԱՄՆ գլխավոր քարտուղարության ինչպես ազգային անվտանգության քաղաքականության, այնպես էլ հասարակության հետ կապերի բաժինների ղեկավարները, Ազգային հետախուզության կազմակերպության խորհրդականը (որը փաստացի ղեկավարն է), Պետական արխիվների գլխավոր վարչության տնօրենը և Թուրքական պատմական ընկերության նախագահը:

Ըստ «Աքշամի»՝ Բախչելին վճռականորեն նշել է, որ նորաստեղծ խորհուրդը ի վիճակի է լինելու հերքել Ցեղասպանության անհիմն և հանիրավի պնդումները, որոնց դեմ-հանդիման կանգնել է Թուրքիան: Թերթն այլ մանրամասներ չի հաղորդում: Սակայն ակնհայտ է, որ նորաստեղծ այդ խորհուրդն ու «հատուկ խումբը» ՀՅ-ի կեղծարարության հարցում աշխատանքի բաժանում են կատարել: Եթե խորհուրդն իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնելու է ՀՅ-ի հարցը չեզոքացնելու, ապա խումբը կենտրոնանալու է թուրքերի նկատմամբ հայերի կատարած «կոտորածների» վրա՝ երևան հանելով արխիվային նորանոր «փաստաթղթեր»:

20.05.2003

ԹՈՒՐԿԻԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ԲԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ

ՎԱՌՈՒՅՑՆԵՐԻՑ, ՆԵՐԳՐԱՎՈՒՄ Է ՆԱԵՎ ԵՐԿԻՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻՆ

«Ազգը» 2002թ. հունիսի 4-ի համարում «Թուրքիան սկսել է կեղծարարության մեջ անմիջականորեն ներգրավել պետական կառույցներին» խորագրով տեղեկացրել էր, որ ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի ծավալման պայմաններում երկրում պետականորեն հովանավորվող կառույցների կողքին ստեղծվում են պետական հատուկ

կառույցներ, որպեսզի դրանց հանձնարարվի «այսպես կոչված ՀՅ-ի անհիմն պնդումների» դեմ պայքար մղելու պարտականությունը:

Տեղեկության համար հիմք էին ծառայել թուրքական «Ջաման» թերթի 2002թ. ապրիլի 19-ի և «Աքշամի» մայիսի 17-ի համարները: Միաժամանակ «Ազգը» պետականորեն հովանավորվող կառույցներից առանձնացրել էր ԵՌՈւԿ-ի ՀՀԻ-ին, իսկ անմիջականորեն պետական կառույցներից՝ «հատուկ խմբին», որն ստեղծվել էր վարչապետարանին առընթեր:

Ինչպես երևում է, պետականորեն հովանավորվող կառույցներն ու պետական հատուկ կառույցները թուրքերին չեն բավարարում, որ «այսպես կոչված ցեղասպանության անհիմն պնդումների» դեմ պայքարի մեջ ուղղակիորեն ներգրավվում են երկրում գործող համալսարանները, և նրանց գործունեությունը պետականորեն համակարգվում է: Այսպիսով, Բարձրագույն ուսումնական խորհրդին կից Անկարայում ստեղծվում է «Թուրք-հայկական հարաբերությունների ազգային կոմիտեն», որի կանոնադրությունը ս.թ. ապրիլի կեսերին հրապարակվում է «Պաշտոնական թերթում» և մտնում է ուժի մեջ:

Կանոնադրության հրապարակումը, ըստ թուրքական օրենքների, կոմիտեի գործունեության նախապայմանն է: Ինչ վերաբերում է բարձրագույն ուսումնական խորհրդին, ապա դա վերահսկում է երկրի պետական թե՛ մասնավոր բոլոր համալսարանների գործունեությունը: ՀՅ-ի պարագայում կարևորը, ինչ խոսք, «Թուրք-հայկական հարաբերությունների ազգային կոմիտեի» գործունեությունն է: Այդ մասին ապրիլի 18-ի համարում տեղեկացնում է «Ակօսը»՝ վկայակոչելով «Պաշտոնական թերթին»:

Ավելին՝ «Ակօսը» կոմիտեի ստեղծման առնչությամբ այդ թերթից կատարում է հետևյալ մեջբերումը. «Կոմիտեն ստեղծվել է բարձրագույն ուսումնական հաստատություններում թուրք-հայկական հարաբերությունները, հայերի մշակույթը, քաղաքականությունը, հասարակական կառուցվածքը և պատմությունը գիտականորեն ուսումնասիրելու ու կատարված ուսումնասիրություններին գնահատական տալու հիմնական նպատակով»:

Միաժամանակ նշվում է, որ կոմիտեն ստանձնել է համապատասխան թեմայով նոր ուսումնասիրությունների կատարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը՝ նպաստելու համար հայկական հետազոտությունների նկատմամբ հետաքրքրությունների աճին: Դա պետք է խրախուսի նաև ընթացքի մեջ գտնվող գիտական աշխատությունները, ապահովի թուրք և օտարերկրյա

գիտնականների միջև կապերի ամրապնդումը և համակարգի ուսումնասիրություններն ու ուղղություն ցույց տա:

Կոմիտեի առաջադրանքների թվում է բարձրագույն ուսումնական հաստատություններում և դրանց շրջանակներից դուրս հայերի պատմությանը, մշակույթին, տնտեսությանը, քաղաքականությանը, արտաքին հարաբերություններին, լեզվին և գրականությանը նվիրված աշխատանքների վերահսկումը, ինչպես նաև վերոհիշյալ հաստատություններին համապատասխան առաջարկների ներկայացումը: «Թուրք-հայկական հարաբերությունների ազգային կոմիտեն», «Ալօսի» տվյալներով, ձեռնամուխ է լինելու օսմանյան արխիվների բացմանը, խրախուսելու է անկողմնակալ թուրք և օտարերկրացի գիտնականների աշխատանքն արխիվներում՝ ցույց տալով վերջիններիս անհրաժեշտ աջակցություն:

Կոմիտեի կազմում ընդգրկվել են 14 գործիչներ, որոնցից 2-ն ընտրվել են Բարձրագույն ուսումնական խորհրդի կազմից, 7-ը՝ հայկական և կովկասյան թեմաներով ուսումնասիրություններ կատարող համալսարանական և ոչ համալսարանական գիտնականներից, իսկ 5-ը՝ պետական և մասնավոր կառույցների աշխատակիցներից, որոնք արտոնված են արտակարգ լիազորություններով: Ընտրությունները կատարվել են վերոհիշյալ խորհրդի որոշմամբ, իսկ կոմիտեի աշխատանքները ֆինանսավորվելու են նույն խորհրդի բյուջեից կատարվող ամենամյա հատկացումներով:

«Թուրք-հայկական հարաբերությունների ազգային կոմիտեի» ստեղծումը ցույց է տալիս, որ ՀՅ-ի հարցում ԹՀ-ի ժխտողական դիրքորոշումն ուժի մեջ է: Քանի որ «1915թ. ցեղասպանության մասին չհիշատակելը» դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար ՀՀ-ին նրա առաջադրած առաջին նախապայմանն է, ուրեմն ուժի մեջ են մնում նաև նախապայմանները:

Հարցը, սակայն, սոսկ ԹՀ-ի ժխտողականությունը չէ, ոչ էլ նախապայմանները, այլև ՀՀ-ին նրա հետ հաշտեցնելու ամերիկյան նախաձեռնություններն ու «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» գործունեությունը վերականգնելու ձգտումները: Կոմիտեի ստեղծումով ԹՀ-ն ցույց է տալիս, որ ՀՀ-ի հարցում առաջընթաց որևէ քայլ, առավել ևս զիջում չի պատրաստվում կատարել: Ուրեմն, հայ-թուրքական հաշտեցման քաղաքական նախաձեռնությունները, որպես ճնշման միջոց, կշարունակեն անդրադառնալ հենց ՀՀ-ի վրա, որպեսզի վերջինս զիջի: Իսկ հանձնաժողովը դարձյալ կընդառաջի ԹՀ-ի ազգային շահերին՝ հետամուտ լինելով ՀՅ-ի ճանաչման գործընթացը կասեցնելու, ինչպես նաև սփյուռքը պատակտելու առաջադրանքին:

03.09.2003

**ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՆՈՐ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է
ԱՆՈՒՄ**

*Դրանք հայերի նկատմամբ թուրքերի «անսահման մեծահոգության»
հերթական վկայությունն են*

ԹՀ-ում խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորված յուրաքանչյուր կառավարություն ՀՀ-ի հետ, այսպես կոչված, մերձեցման միտումներ է ցուցաբերել: Թեև այդ միտումները, որպես կանոն, զարգացում չեն ստացել, սակայն թուրքական կառավարությունները կարողացել են դրանք ծառայեցնել քաղաքական նպատակներին: Քանի որ ԹՀ-ի հայկական քաղաքականությունը բնույթով հակահայկական է, ուստի կառավարությունների վերոհիշյալ միտումներն անխուսափելիորեն հանգեցրել են ՀՀ-ի և հայ ժողովրդի նկատմամբ թուրքական թշնամանքի նոր դրսևորումների:

Այս ամենի առումով, բացառություն չկազմեց Մեջլիսի նոյեմբերի 3-ի ընտրությունների արդյունքում ձևավորված իսլամամետ «Արդարություն և բարգավաճում» կուսակցության կառավարությունը, որը գլխավորում է վարչապետ Էրդողանը: Հայաստանի հետ մերձեցման նրա միտումներն արտահայտվեցին ԹՀ-ի հայկական սահմանի բացման պատրաստակամությամբ: Կառավարությունը, սակայն, դրա համար ՀՀ-ին մի շարք նախապայմաններ առաջադրեց, որոնք էլ ի չիք դարձրին նրա միտումները: Այսպիսով, հայ-թուրքական հարաբերությունները վերադարձան ելման կետ:

Ինչ վերաբերում է ՀՀ-ի և հայ ժողովրդի նկատմամբ թուրքական թշնամանքի նոր դրսևորումներին, ապա դրանք արտահայտվեցին ՀՅ-ի հարցում: Դրա արտահայտիչը դարձավ Թուրքական պատմական ընկերության նախագահ դոկտ., պրոֆ. Յուսուֆ Հալաջօղլուն: Այդ մասին օգոստոսի 28-ի համարում վկայում է թուրքական «Ջաման» թերթը:

Ըստ «Ջամանի», այդ ընկերությունը ձեռնամուխ է եղել փաստաթղթերով ապացուցել, որ պնդումներին հակառակ, Առաջին համաշխարհայինի տարիներին հայերը ցեղասպանության չեն ենթարկվել, այլ նավերով ու տարբեր փոխադրամիջոցներով հեռացել են Օսմանյան կայսրության տարածքից: Պարզվում է, ընկերությունն այդ ուղղությամբ աշխատանքներ է կատարում և պատրաստվում է դրանց արդյունքները վերածել գրքի, իսկ 2003թ. վերջերին՝ հրատարակել:

«Ջամանի» վկայությամբ հրատարակման պատրաստվող գիրքը տեղեկություններ է պարունակում այն հայերի մասին, որոնք կովելով անգլիական և ֆրանսիական զորքերի շարքում, զոհվել էին: Այնուհետև թերթը գրում է. «2001թ. ԱՄՆ-ի անմիջական աջակցությամբ

ստեղծված «Յեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի համակարգման խորհուրդը» թափ հաղորդեց աշխատանքներին: Այլ կողմից բացվում են Առաջին համաշխարհայինի տարիներին երկրի արևելյան վիլայեթներում հայ ավազակախմբերի կոտորածների զոհերին պատկանող զանգվածային գերեզմաններ, իսկ մյուս կողմից՝ ակադեմիական ուսումնասիրություններ են կատարվում: Թուրքական պատմական ընկերության նախագահ Հալաչօղլուն ասաց, որ «անցյալ տարի ընկերությունը հայկական բաժին է բացել և ձեռնամուխ է եղել երկրից արտագաղթած հայերի մասին ուսումնասիրությունների»:

Հալաչօղլուն նշել է, որ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի արխիվներում պահպանվող փաստագրական նյութերի հիման վրա հաջողվել է ապացուցել Օսմանյան կայսրությունից 1 մլն 400 հազար հայի արտասահման գաղթելու փաստը: Այնուհետև նա շարունակել է. «Քաղաք առ քաղաք հետազոտելով, պարզեցինք, որ 1918թ. Անատոլիայում 650.000 հայ էր բնակվում: Մեզ հաջողվեց հայտնաբերել արխիվային փաստաթղթեր, որոնք վկայում են հայերի ԱՄՆ, Արգենտինա, Ավստրիա, Ֆրանսիա և այլ երկրներ արտագաղթի մասին: Օրինակ, ուսումնասիրվել են այդ թվերին ԱՄՆ մեկնող նավերի ուղևորների ցուցակները: Պարզվում է, հայերը ոչ թե սպանվել են, այլ գաղթել»:

Հալաչօղլուն այս խոսքերով ամփոփում է Թուրքական պատմական ընկերության շրջանակներում կատարվող չափազանց ակադեմիական ուսումնասիրությունների արդյունքները, ըստ որոնց ՀՅ-ն անհեթեթություն է, քանի որ 1 մլն 400 հազ. հայ Առաջին համաշխարհայինի տարիներին իբր Եվրոպա և ԱՄՆ է գաղթել: Սա նոր հայտնագործություն է: Ինչ վերաբերում է այսպես կոչված թուրքերին պատկանող զանգվածային գերեզմաններին, ապա դրանց պեղումները, որոնք սկզբնավորվել էին Թուրքիայի 7-րդ նախագահ գեներալ Քենան Էվրենի պաշտոնավարության տարիներին, այսինքն՝ սկսած 1980թ., թափ են ստացել: «Չամանի» տվյալներով պեղումների ընթացքում թուրքերին պատկանող ընդհանուր գերեզմաններում թուրք հնագետները հայտնաբերել են նաև հայ երեխաների կմախքի մասեր, ընդգծելու համար, որ թուրք տղամարդկանց, կանանց, ծերերին առանց խորականության սպանող հայ ավազակախմբերը ժամանակ առ ժամանակ սպանել են նաև յուրալիների:

Ոչ պակաս նոր է նաև այս հայտնագործությունը: Եթե առաջինը թուրք հասարակական կարծիքի ուշադրության ներկայացրել է Հալաչօղլուն, ապա երկրորդը ներկայացնում է Անկարայի համալսարանի դոկտ., պրոֆ. Էնվեր Քոնուքչուն: Նա մատնանշում է. «Պեղումները հնագետների և արվեստի պատմության մասնագետների մասնակցությամբ գիտականորեն ենք կատարում: Մամուլն ուշադրությամբ հետևում է մեր աշխատանքներին: Երբեմն օտարերկրյա ՋԼՄ-ներից մեզ

ևս դիմում հարցնելու, թե զանգվածային գերեզմաններից միայն թուրքերի կմախքներ են դուրս գալիս, մի՞թե հայերի կմախքների չեք հանդիպում: Ցավոք, հայ ավազակները չեն խորշել մահմեդականների հետ նաև իրենց ազգակիցներին սպանելուց»:

Քոնուքչուն որպես ապացույց բերել է այդպիսի գերեզմաններից մեկում հայ աղջիկների կմախքների մասերի հայտնաբերման փաստը: Դա նշանակում է, որ թուրքական իրականության մեջ հայտնագործությունները զուգորդվում են մեծահոգության հետ այնպես, ինչպես սահմանների բացման թուրքական կառավարության պատրաստակամությունը զուգորդեց քաղաքական առաջադրանքով:

Ասում են, ամեն ինչ չափի մեջ է լավ: Սակայն, երբ խոսքը հայերին և Հայաստանին է վերաբերում, թուրքական քաղաքական շրջանակները մեծահոգության հարցում ձեռք-ձեռքի են տալիս գիտական շրջանակների հետ: Նման մոտեցման նրանց մեծահոգությունը չափ ու սահման չի ճանաչում և դառնում է անսահման: Մեծահոգության անսահմանությունը հիմք է տալիս նեթադրելու, որ Թուրքիայի հայկական քաղաքականության հետ կրման կետ է վերադառնում ՀՅ-ի թուրքական ժխտողականությունը:

Վերադարձը դիրքերի սպառման նշանն է: Ուրեմն, բացի Թուրքիայի հայկական քաղաքականությունից, իր դիրքերը սպառել է նաև Յեղասպանության ժխտողականությունը: Այլապես, Թուրքական պատմական ընկերության պես գիտականի հավակնություն ունեցող մի հաստատություն և դրա գիտնականի հավակնություններով նախագահը ցանցառություններից կառչելով, հայտնագործությունների հորձանուտում չէին հայտնվի:

21.05.2004

ԹՈՒՐԿԻԱՆ ՓՈՐՁՈՒՄ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՈՒՆԸ ՔՈՂԱԲԿԵԼ

ՏԵՂԱՇՆՈՒԹՅԱՄԲ

Դա որպես կեղծարարության դրսևորում հազիվ թե ծառայի նպատակին Թուրքիան ՀՅ-ի փաստը հետևողականորեն ժխտելիս կտրականապես հակադրվում էր նաև հայկական կոտորածների փաստին: ՀՅ-ի միջազգային ճանաչման նախաձեռնությունները ցույց տվեցին դրա սնանկությունը: Նախաձեռնություններին հակադրվելու հրամայականը ստիպեց թուրքերին վերանայել կեղծարարության ձևերը: Վերանայման հարցում նրանց օգնության հասան ֆրանսիացի թուրքագետ Ռոբեր Մանթրան և իսրայելցի պատմաբան Իցիահ Ֆրեյդմանը:

Մանթրան թուրքական «Թեմփո» շաբաթաթերթի 1998թ. հունիսի 25-ի համարում թուրքերին առաջարկեց հայկական կոտորածներին հակադրել այսպես կոչված թուրքական կոտորածները՝ ասելով.

«Չպետք է հերքել կոտորածների իրողությունը, այլ շեշտել, որ կոտորածներ եղան, բայց թուրքերն էլ կոտորվեցին»: Ֆրեյդմանն իր հերթին «Աքսիոն» հանդեսի 1998թ. հունիսի 20-ի համարում թուրքերի ուշադրությունը հրավիրեց հայերի կատարած կոտորածների վրա, թե «հայերն իրենց թուրք հարևանների նկատմամբ, որոնց հետ գոյակցում էին դարեր շարունակ, բռնությունների դիմեցին՝ կատարելով չարագործություններ: Էնվեր փաշան, վերագրավելով կայսրության հայաբնակ շրջանները, ինչ խոսք, վրեժ լուծեց, բայց հայերին չեն մորթել»: Ըստ երևույթին Մանթրայի շատ իմաստուն առաջարկությունն էր Ֆրեյդմանի չափից դուրս արժեքավոր խորհուրդը տեղ էին հասել, որ թուրքական պատմագրությունը հայկական կոտորածները հերքելու ուղղությամբ աշխատելու փոխարեն սկսեց երևան հանել «թուրքերի նկատմամբ հայերի իրագործած եղեռնին» առնչվող փաստեր:

1998-ին ՀՅ-ի միջազգային ճանաչումը դարձավ Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի խնդիր: Ճանաչմանն արձագանքեցին Ֆրանսիայի գլխավորությամբ եվրոպական մի շարք երկրներ, որոնց վերջերս միացավ նաև Կանադան: Այլ կերպ՝ ցեղասպանության ճանաչման գործընթացը սկսեց հետզհետե ծավալվել: Դա կասկածի տակ դրեց որպես կեղծարարության դրսևորում «թուրքերի նկատմամբ հայերի իրագործած եղեռնին» առնչվող փաստերի վրա հենվելու արդյունավետությունը: Դրանով պարզորոշ երևաց, որ նպատակին չեն ծառայում ֆրանսիացի թուրքագետի առաջարկությունն ու իսրայելցի պատմաբանի խորհուրդը:

Այս պայմաններում թուրքերն այլ ելք չգտան, քան ՀՅ-ն քողարկել հայերի տեղահանությամբ: Քողարկման առումով հատկանշական են Թուրքական պատմական ընկերության նախագահ և «Հայերի անհիմն պնդումների դեմ պայքարի խորհրդի» անդամ Յուսուֆ Հալաչոյլուի «Հայկական տարագրությունը» և «Աքսոր և արտագաղթ» գրքերը, որոնք լույս են տեսել վերջերս: Ի դեպ, երկու գրքերն էլ հրատարակել է Թուրքական պատմական ընկերությունը, պարզապես Հալաչոյլուն առաջինը գրել է, իսկ երկրորդը՝ խմբագրել:

Հալաչոյլուն իր գրքում տեսակետ է առաջ քաշում, թե իբր 1914-18թթ. 658.000 հայեր Օսմանյան կայսրությունից արտագաղթել են Ռուսաստան, Իրան, ԱՄՆ, Ավստրալիա, Հնդկաստան, Արգենտինա, Ֆրանսիա և այլ երկրներ: Ըստ հեղինակի, նույն թվերին դաշնակիցների բանակներում ծառայող հայ զինվորներից 200.000-ը զոհվել է: Իսկ 1918թ. իրենց նախկին բնակավայրերը վերադարձածների հետ կայսրության սահմաններում իբր 644.900 հայ է բնակվել:

Նա այս թվերը գումարում և կարծիք է հայտնում, որ հայերի թիվն Օսմանյան կայսրությունում արտագաղթածների, զոհվածների և

տարագրությունից վերադարձածների հետ 1 մլն 492 հազար 900 էր, ուստի 1.5 մլն հայի բնաջնջման պնդումները հերյուրանք են: Նրա տեսակետները նորություն չեն: Պարզապես նա ընդունում է, որ տեղահանվել են ոչ միայն Ռուսաստանի սահմանակից շրջանների հայերը, այլև կայսրության մյուս շրջաններինը, տեղահանությունը համարում է «թերևս դարաշրջանի ամենակազմակերպվածը», ապա և խոսում է տեղահանությունից խուսափելու համար կրոնափոխ եղած հայերի մասին:

Հալաչոյլուի գիտական անաչառության այս մտավարժանքների հիմքում ՀՅ-ն տեղահանությամբ քողարկելու միտումներն են: Ինչ վերաբերում է «Աքսոր և արտագաղթ» գրքին, ապա դրանով էլ ընդամենը միտումներն են «հիմնավորվում»: Ամերիկյան, անգլիական, գերմանական և օսմանյան արխիվային փաստաթղթերի հիման վրա գրված այս գիրքը փորձում է «մաթեմատիկական հաշվարկներով» հերքել ՀՅ-ի փաստը: Ինչպե՞ս: Ապացուցելով, որ 1914թ. Օսմանյան կայսրության սահմաններում բնակվող 1.5 մլն հայերի թիվը 1918-ին կազմել է 1 մլն 479 հազար:

1915թ. տարագրության որոշումը գրքում պայմանավորվում է Օսմանյան կայսրության դեմ Վանի, Բիթլիսի, Մարաշի և այլ վայրերի հայության ապստամբությամբ, իսկ որոշման համար հիմք են ընդունվում գերմանական հրամանատարության «համառ պնդումները» և ընդգծում, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղահանվել են 500.000 հայեր, նրանց 400-500 հազարը իբր մնացել են բնակության վայրերում, 200.000-ը զոհվել է, բայց ոչ միայն որպես զինվոր ռազմական գործողությունների, այլև Անատոլիայում լայն տարածում ունեցող համաճարակների հետևանքով:

Վերոհիշյալ աշխատությունները մեկնաբանության կարիք չեն զգում, պարզապես հերթական անգամ ապացուցում են, որ ՀՅ-ի հարցում Թուրքիայի ռազմավարությունը մնում է նույնը, մարտավարությունն է փոփոխության է ենթարկվում: Հարկ է, սակայն, նշել, որ անկախ այդ փոփոխությունից, կեղծարարություն է ցեղասպանության քողարկումը տեղահանությամբ, իսկ դա, որպես կանխարգելիչ միջոց, հազիվ թե կասեցնի ՀՅ-ի միջազգային գործընթացի ծավալումը:

20.01.2007

«1915-ԻՆ ՄՊԱՆՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ 8.500 Է»

Դեկտեմբերի 19-ի համարում «Ազգը» նշել էր, որ ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը ոչ միայն բացահայտում է թուրքական ժխտողականության սնանկությունը, այլև փաստի առջև է կանգնեցնում Թուրքիային. այս պայմաններում թուրքերը դուրս են

գալիս հավասարակշռությունից, դրան է հետևում հայկական պատմամշակութային արժեքների յուրացման փորձերի աշխուժացումը:

Իրացման փորձերի աշխուժացումը որպես կանոն զուգորդվում է պատմական ճշմարտությունների խեղաթյուրման փորձերի աշխուժացմամբ, իսկ այդ փորձերում առանձնակի ակտիվությամբ աչքի է ընկնում թուրքական պատմական ընկերության նախագահ, դոկտ. պրոֆ. Յուսուֆ Հալաչոյուն: Թուրքական շրջանակները ըստ արժանվոյնի գնահատում են ՀՅ-ի ժխտողականությանը նրա մատուցած ծառայությունները թե ոչ, դժվար է ասել: Բայց որ նրա անսպառ երևակայության արդյունքը հանդիսացող անհերքելի փաստերով հեզնանքի առարկա է դառնում նաև թուրքական պատմագրությունը, կասկածից վեր է:

Ինչպես հունվարի 16-ի համարում նշել է «Հուրիեթը», պրոֆ. Հալաչոյուն նախորդ օրը մասնակցել է «Ադանայի շրջանի օկուպացումն ու ազատագրումը» թեմայով ադանացիների միության կազմակերպած շատ գիտական կոնֆերանսին: Նա այնտեղ, ըստ թուրքական թերթի, բազմափորձ հաշվապահի ճշգրտությամբ ասել է. «Տեղահանության ընթացքում ավազակախմբերի հարձակումների հետևանքով սպանված հայերի թիվը առավելագույնս 8.500 է: 37.000 հայ մահացել է համաճարակներից, հակառակ դրան, Էրզրումից մինչև Կարս, Բիթլիսից մինչև Արդահան ընկած տարածքում սպանվել են 530.000 մահմեդականներ: Մենք ձեռքի տակ ունենք հայերի ցեղասպանության պնդումները հերքող լուրջ փաստաթղթեր: Ավելին, 1915 թվին ստեղծված ռազմական ատյանը քննել է 1673 մեղադրյալի գործը, որոնցից 67-ին դատապարտել է մահապատժի, 68-ին՝ ցմահ, իսկ 524-ին տարբեր ժամկետներով բանտարկության: Ըստ միջազգային իրավունքի, եթե պետական իշխանությունները պատժում են հանցագործներին, ապա ինքնըստինքյան վերանում է ցեղասպանության մեղադրանքը»:

Պետք է ասել, որ օսմանյան ռազմական այս ատյանը ստեղծվել էր ոչ թե 1915թ.-ին, ինչպես ներկայացնում է պրոֆ. Հալաչոյուն, այլ 1919թ.-ին Կ. Պոլսում հենց ՀՅ-ի մեղավորներին բացահայտելու և պատժելու նպատակով:

Այլ կերպ, պրոֆ. Հալաչոյուն պատմական ճշմարտությունները խեղաթյուրելիս նաև ստում է: Ըստ երևույթին, նրա ստերը տարակուսանք են առաջացրել դահլիճում, որ կոնֆերանսի մասնակիցները հարցրել են. «Ինչո՞ւ են տեղահանվել հայերը, որոնց հետ գոյակցել էինք 850 տարի»: Հալաչոյուն այս հարցին պատասխանելիս սուտը համադրել է խեղաթյուրման հետ և ասել. «Թուրքերին Անատոլիայից վտարելու համար զաղրթատեր պետությունները օգտագործել են հայերին: Միսիոներական

գործունեության հետևանքով, սկսած 1820-ականթթ., նրանք դարձել են բողոքական և կաթոլիկ: Հայերը կովել են թուրքական 20 հազարանոց զորքի դեմ և ֆրանսիական բանակի կետր տարածաշրջանում կազմում էին հայ կամավորները»:

29.03.2007

«ԱՂԻԲԵՋԱՆՑԻ ԹՈՒՐԵՐԻ ԳԵՄ ՀԱՅԵՐԻ ԻՐԱԳՈՐԾԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ ԹՈՒՐԷ-ԱԴԻԲԵՋԱՆԿԱՆ «ԳԻՏԱԺՈՂՈՎ» ԲԱԶԿՈՒՄ

Աշխարհում կան պետություններ, որոնց հասարակություններում րոնությունը պաշտամունքի առարկա է դարձել: Այդ պետություններից պետք է առանձնացնել այսպես կոչված «մեկ ազգին» վերագրվող Թուրքիային և Ադրբեջանին: Երբ սրանց չի հաջողվում րոնության միջոցով հասնել չարանենգ նպատակի, սկսում են դիմել խարդավանքների, բարձրացնելով դրա շուրջն աղմուկ-աղաղակ:

Ինչ վերաբերում է թուրքական և ադրբեջանական հասարակություններին, ապա դրանցից առաջինը «Մենք բոլորս Օգյուն Սամասթենք» բացականչություններով փառաբանում է մարդասպանությունը, իսկ երկրորդը ազգային հերոս է հռչակում մարդասպանին, ինչպես հռչակեց Ռամիլ Սաֆարով կոչված ստահակին:

Թուրքիայում և հատկապես Ադրբեջանում կանայք լուրջ մասնակցություն չունեն իշխանությունների ձևավորմանը: Սակայն դա չի խանգարում, որ նրանք ակտիվ դեր ստանձնեն պետականորեն կազմակերպվող խարդավանքներում: Խոսքը տվյալ դեպքում մարտի 27-ին Բաքվում Թուրք-ադրբեջանական կանանց միության «31 մարտ 1918. ադրբեջանցի թուրքերի դեմ հայերի իրագործած ցեղասպանությունը» թեմայով կազմակերպված միջազգային «գիտաժողովի» մասին է:

Թուրքական հեռուստատեսության տվյալներով «միջազգային» այս գիտաժողովին մասնակցել են քաղաքական և գիտական գործիչներ Ադրբեջանից, Թուրքիայից, «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունից» և Իրաքից: Իրաքի պարագայում պետք է ենթադրել, որ մասնակիցները թուրքմեններ են, որոնց ուղղորդում է ԹՀ-ն:

Գիտաժողովում ելույթ է ունեցել Ադրբեջանում Թուրքիայի դեսպան Հուսեյն Ավնի Կարսլոջլուն, պահանջելով վերլուծել պատմական իրողություններն ու աշխարհին իրազեկել ճշմարտությունը: Մյուս բանախոսներն իրենց ելույթներում անդրադարձել են «Խոջալուի ցեղասպանությանը» և ընդգծել, որ «աշխարհն անտեսում է այս փաստը, ինչպես նաև հայերի կատարած այլ կոտորածները», որոնց վրա պետք է ուշադրություն հրավիրել այդ նույն մեթոդներով, ինչն անում է Արևմուտքը:

«31 մարտ 1918. աղբրեջանցի թուրքերի դեմ հայերի իրագործած ցեղասպանությունը» թեմայով Բաքվում հրավիրված «միջազգային գիտաժողովն» ավարտվել է համատեղ հայտարարության ընդունմամբ: Սա դրա տեքստը. «Աղբրեջանի Հանրապետությունը որպես 1918-1920թթ. կազմավորված Աղբրեջանի ժողովրդական հանրապետության իրավաժառանգորդ, պատժելու է ինչպես այդ տարիներին, այնպես էլ 1988թ.-ից հետո կատարված կոտորածների և ցեղասպանությունների պատասխանատուներին: Հայաստանն ահաբեկչական երկիր է, թուրքերի նկատմամբ թշնամական քաղաքականությամբ տարածաշրջանում և աշխարհում սպառնում է խաղաղությանը: Առանց մարելու ահաբեկչական այս օջախը, աղբրեջանական տարածքներն օկուպացումից ազատելու և չեզոքացնելու Հայաստանի հողային պահանջներն Աղբրեջանի ու Թուրքիայի նկատմամբ, անհնար է անվտանգություն ապահովել տարածաշրջանում»:

08.05.2008

«ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԳՈՐԾԵԼ ԵՆ ՀԵՆՑ ՀԱՅԵՐԸ»

Հոր մահվան տարելիցին հայտարարում է Քյազիմ Կարաբեքիրի դուստր Թիմսալը

Քեմալ Աթաթուրքի զինակիցներից Քյազիմ Կարաբեքիր փաշան հայ ժողովրդի դահիճներից է: Ինչպես մայիսի 5-ին ամենօրյա տեղեկագրում նշել է Անկարայում գործող ԵՌՈւԿ-ի ՀՀԻ-ն, Ստամբուլի Օսմանգազի թաղի թաղապետարանի նախաձեռնությամբ մշակույթի տանը նշվել է Կարաբեքիրի մահվան 60-րդ տարելիցը: Միջոցառմանը հրավիրվել է փաշայի դուստր Թիմսալ Կարաբեքիրը, որն էլ ներկաներին է պատմել հոր մասին, ավելացնելով. «Իրականում ցեղասպանություն էին կատարել հայերը»:

Ըստ Թիմսալի, 1920-ի դեկտեմբերի 2-ին Գյումրիում Ալեքսանդրապոլի պայմանագիրն ստորագրելիս, Քյազիմ Կարաբեքիրը հայկական պատվիրակության ղեկավարին (Առաջին Հանրապետության վարչապետ Ալեքսանդր Խատիսյանին) հարցրել է. «Այսպիսի կարճիկ հասակով ինչպե՞ս հանդգնեցիր գլուխ բարձրացնել օսմանյան հսկա կայսրության դեմ», և ստացել է հետևյալ պատասխանը. «Մեզ խաբեցին փաշա: Իմպերիալիստական ուժերը խոստումներ տվեցին, մեծ Հայաստան խոստացան մեզ: Ես հիմա հրաժարվում եմ Սևրի հանիրավի պահանջներից և ստորագրում եմ առաջադրված պայմանագիրը»:

Թիմսալը նշել է, որ Քյազիմ Կարաբեքիրին ճանաչում էին որպես «որբերի հոր», այնուհետև «մեծ սուտ» է համարել «ցեղասպանության հայկական պնդումները», ապա և շարունակել. «Եվրոպական բոլոր երկրներն ու Ամերիկյան ծափահարում են սրանց (հայերին): Եթե ես

Եվրոպայում ասեմ, որ հայերի ցեղասպանությունը սուտ է, ինձ իսկույն կձերբակալեն: Այդ նույն Եվրոպյան խոսքի ազատության քողի տակ պաշտպանում է մեզ նսեմացնողներին: Սա է Եվրոպայի իսկական դեմքը: Մինչդեռ Եվրոպական և ամերիկյան արխիվային փաստաթղթերում միանշանակ հերքվում է «թուրքերի վատ վերաբերմունքը հայերի նկատմամբ»: Չնայած դրան, հայերը չեն հրաժարվում այդ կեղտոտ ստից, մտածելով, թե կանցնի: Նրանց նպատակը ՀՅ-ի միջազգային ճանաչման, պահանջատիրության և փոխհատուցման իրականացումն է: Վայրագաբար իրագործված ցեղասպանության մասին են խոսում, մոռանալով, որ այդ ցեղասպանությունը կատարվել է մեր երկրում և մեր մարդկանց դեմ: Հորս հուշերը դրա ականատեսի աչքերով արված անժխտելի վկայություններն են»:

Ինչո՞ւ չեն հրապարակում այդ վկայությունները, հայտնի չէ: Բայց որ Քեմալ Աթաթուրքը «Հայաստանը ֆիզիկապես և բարոյապես ոչնչացնելու» հրաման է տվել Քյազիմ Կարաբեքիրին, անժխտելի է: Ի դեպ, վերջինի «Ինչպե՞ս ոչնչացրի Հայաստանը» վերնագրով գիրքը Թուրքիայում բազմիցս վերահրատարակվել է: 1965-ին Նյու Յորքում հիմնադրված Սեֆարադների մշակույթի ուսումնասիրության կենտրոնը՝ FASSAC-ն էլ պաշտոնական կայքէջում հրապարակել է օսմանյան հրեաների, այսինքն՝ սալոնիկյան ծագումով առերևույթ կրոնափոխ «ոյնմենների» ցանկը, որը պատրաստել է Ստամբուլում ծնված հրեական ծագումով պրոֆ. Դանիել Կազեզը: Այդ ցանկում, ինչի մասին 2007-ի սեպտեմբերի 11-ի համարում «Մի՞թե Կարաբեքիրը հրեա էր» վերնագրով վկայում է թուրքական «Սաբահ» թերթը, նշված է նաև Քյազիմ Կարաբեքիրը: Իսլամական կայքէջերը հաստատելու համար վերոհիշյալ կենտրոնին, ավելացնում են, որ փաշայի սկզբնական անունը եղել է Մուսա (Մովսես) Քյազիմ, ինչպես ասենք Թալեաթ փաշայինը՝ Մեհմեդ Թալեաթ Սաի: Նա Կարաբեքիր ազգանունը ստանալուց հետո հրաժարվել է Մուսա անունից:

10.10.2008

«ԵՐԿՈՒ ՀԱՅ ԲԺԻՇԿ ԿՈՒՐԱՅՐԵԼ ԵՆ 15.000 ԹՈՒՐԲԻ»

Թուրք պարմաբանն այդ մասին գիրքի, չունենալով բավարար գիտելիքներ Թուրքիայի Հանրապետության պարմության մասին

Որքան էլ բարենպաստ մթնոլորտ ստեղծվի ՀՀ-ԹՀ երկխոսության համար, թուրքական որոշ շրջանակներ ոչ մի կերպ չեն հրաժարվում հայկական դավադրության որոնումներից: Այդ շրջանակներում զգալի թիվ են կազմում հայ հասարակությանը հայտնի և անհայտ «գիտնականները»: Այսպես կոչված պատմաբան Ջեզմի Թուրթսները հենց այդ գիտնականներից է: Նա քրոնաջան ուսումնասիրություններով «հայտնաբերել է», որ Առաջին համաշխարհային

պատերազմի տարիներին երկու հայ բժիշկ գիտակցաբար կուրացրել են անգլիացիներին գերի ընկած 15.000 թուրք զինվորներին:

Յուրթսները թուրք զինվորների կուրացումն ապացուցող փաստաթղթեր է հայթայթել նաև անգլիական և ավստրիական արխիվներից: Նա «այս վայրագությունը որչ աշխարհին պատմելու» կոչ է արել Թուրքիայի ազգային մեծ ժողովին, իսկ Անգլիայից և Ավստրիայից պահանջել է ներողություն խնդրել:

Յուրթսների այս հայտնագործությունը փորձել է ի լուր աշխարհի տարածել թուրքական «Իլիաս» գործակալությունը, սակայն դրան սեպտեմբերի 30-ին արձագանքեց Նյու Յորքի turkishny.com կայքէջը: Սա նշանակում է, որ այս կայքէջը հայկական «դավադրության» որոնումների առումով պետք է գերազանցի թուրքական կենտրոնական թերթերին, որովհետև վերջիններս հարկ չէին համարել անդարդառնալ Յուրթսների հայտնագործությանը:

Ինչ է, ըստ Յուրթսների, տեղի ունեցել: 1917-ի նոյեմբերին Գազայի ճակատամարտում օսմանյան զորքերը ծանր պարտություն են կրել անգլիացիներից, ինչի հետևանքով 13.000 թուրք զինվոր սպանվել է, իսկ 12.000-ը գերի ընկել: Հեջազի ռազմաճակատում անգլիացիները, ջախջախելով թուրքերին, գերի են վերցրել 150.000 զինվորների, որոնց համար Եգիպտոսում ստեղծել են համակենտրոնացման ճամբարներ, որոնց պատասխանատու հայ բժիշկներ Արսեն Խորենն ու Լևոն Սամվելը իբր քիմիական նյութ են խառնել լոգանքի ջրին և գիտակցաբար կուրացրել են գերիներից, ոչ ավել և ոչ պակաս, 15.000-ին: Երբ կուրացածները, ազատվելով գերությունից, վերադարձել են Անկարա, ապա Ադրիանապոլսի պատգամավորներ Ֆաիքն ու Շերեֆը նրանց անմխիթար վիճակի մասին զեկուցագիր են ներկայացրել Մուստաֆա Քեմալին: Պատմաբան Յուրթսներն, իր իսկ խոսքերով, «այդ զեկուցագրին ծանոթացել է Թուրքիայի ազգային մեծ ժողովի 1921-ի մայիսի 27-ի նիստի ցուցանակներում», որոնք պահպանվում են Թուրքական պատմական ընկերության արխիվում:

Ի գիտություն Յուրթսների, ասենք, որ 1921-ին քեմալականների խորհրդարանը կոչվում էր Ազգային մեծ ժողով, որովհետև դեռևս քեմալական Թուրքիան չէր հռչակվել Թուրքիայի Հանրապետություն: Քեմալական խորհրդարանը Թուրքիայի ազգային մեծ ժողով անունը ստացավ 1923-ի հոկտեմբերի 29-ից հետո, երբ երկրում հռչակվեցին հանրապետական կարգեր: Հետևաբար Յուրթսները հայ բժիշկներով զբաղվելու փոխարեն պետք է զբաղվի Թուրքիայի Հանրապետության պատմությունը սերտելով:

10.03.2009

**ԹՈՒՐԿԵՐԻ «ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆՁԵՂՈՒԹՅՈՒՆ
ՀԱՂՈՐԳԵԼՈՒ ՆԿՐՏՈՒՄՆԵՐ ԱՄՆ-ՈՒՄ**

Թուրքիայի համար հեռանկարային այս գործին սիրահոժար լծվել են Յուրթսի համալսարանն ու Ամերիկայի թուրքական կոալիցիան

Ուրբաթ օրվա համարում «Մարտի 15-ին՝ Թալեաթ փաշայի սպանության օրը, «հարգանքի տուրք» հայ ժողովրդի դահիճներին» վերնագրով հոդվածում տեղեկացրել էինք նաև 2007-ի մարտի 17-ին Հաազայում ստեղծված «Թուրքերի նկատմամբ իրագործված ցեղասպանությունների ուսումնասիրման» հիմնադրամի՝ TGRF-ի մասին:

Համանման մեկ այլ կազմակերպություն, «Անատոլիայում թուրքերի դեմ կիրառված կոտորածների ուսումնասիրության միություն»՝ ATUKAD անվան տակ դեռևս 2002-ին ստեղծվել էր Թուրքիայում: Միության հիմնադիր նախագահն է Մեհմեդ Ավջըերը: Հատկանշական է, որ այս անձնավորությունը միաժամանակ «Անատոլիայի պատմության ուսումնասիրության կենտրոն» միության՝ ATAMER-ի նախագահն է նաև: Ավելին՝ ATAMER-ի հիմնադրման տարեթվի մասին տվյալներ չի հաղորդվում: Պարզապես այս կազմակերպությունը ATUKAD-ի հետ որպես պաշտոնական կայքէջ միևնույն atukad.org.tr հասցեն է ներկայացնում:

Ինդիրը, սակայն, թուրքերի դեմ իրագործված ցեղասպանությունների կամ կոտորածների ուսումնասիրման թուրքական կառույցների ստեղծումը չէ, այլ այսպես կոչված ցեղասպանություններին ու կոտորածներին միջազգային հնչեղություն հաղորդելու թուրք-ամերիկյան նկրտումներն են: Թուրքիայի տեսանկյունից շատ շնորհակալ, ինչպես նաև բավականին հեռանկարային այս գործին միահամուռ ջանքերով լծվել են Յուրթսի համալսարանն ու Ամերիկայի թուրքական կոալիցիան՝ TCA-ը:

Ինչպես մարտի 5-ին նշել է Նյու Յորքի Turkishny.com կայքէջը, Յուրթսի համալսարանը բացել է «Արդի էթնիկ զման արմատները: Օսմանյան կայսրության փլուզումը, Բալկաններում և Կովկասում ազգային պետությունների կազմավորումը» թեմայով ուսումնասիրության ծրագիր, որն իրականացվելու է Ամերիկայի թուրքական կոալիցիայի նյութական աջակցությամբ: Ծրագրի ղեկավար, պրոֆ Հաբան Յավուզը հայտարարել է, որ ուսումնասիրությունները կենտրոնանալու են Թուրքիայի նախահանրապետական շրջանի, ինչպես նաև Օսմանյան կայսրության Բալկաններում և Կովկասում վարած պատերազմների վրա, որոնց հետևանքով պետությունը զգալի տարածքներ կորցրեց, իսկ մահմեդական բնակչությունը էթնիկ հիմունքներով ենթարկվեց կոտորածների և բռնազաղթի: Այդ ընթացքում Ամերիկայի

թուրքական կոալիցիայի նախագահ Լինկոլն Մակքարթին ընդգծել է ծրագրի կարևորությունը Թուրքիայի և շրջակա երկրների գծով մասնագետներ պատրաստելու առումով:

Նյու Յորքի թուրքական կայքէջը ծրագրին անդրադառնում է «Քննության առարկա է դառնում սպանված թուրքերի հարցը» վերնագրով և ծրագրի ուղղորդմանը նպաստելու համար կազմավորված խորհրդի կազմում նշում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի ժողովրդահանրապետական կուսակցության պատգամավոր, ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան Շյուքրյու Էլեքդադի, Թուրքիայի պետական արխիվների գլխավոր տնօրեն պրոֆ. Յուսուֆ Սարընայի և Անկարայի «Բիլքենթ» համալսարանի պրոֆ. Նորման Սթոնի անունները:

04.03.2011

«ՀԱՅԵՐՆ ԱՆԱՏՈՒԲԱՅՈՒՄ 500.000 ԹՈՒՐԿ ԵՆ ՍՊԱՆԵԼ»

Թուրքական պատմական ընկերության նախորդ նախագահը խորասուզվել է հայրնագործությունների մեջ

Երեկ Կ. Պոլսոս հայոց պատրիարքարանի անմիջական վերահսկողության տակ գտնվող «Հայ թերթ» կայքէջը հրապարակել է գերմանաբնակ թուրք մտավորական Դոդան Աքհանլու հոդվածաշարի առաջին մասը: Նա գրել է. «Մենք՝ թուրքերս, որքան հպարտանանք, տեղին է: Հավերժ պետականություն ենք ունեցել: Ո՞վ է ասում, որ թուրքերը ոչ մի հայտնագործություն չեն արել: Անցյալ դարի առաջին քառորդին, դեռ 1915-ը ամբողջովին չբոլորած, այնպիսի հայտնագործություն ենք արել, որ զարմացած գերմանացիները այդ հայտնագործությունը կիրառելու համար սպասել են մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Մեր հայտնագործությանը թուրքերի և քրդերի հետ մասնակցեցին նաև Բալկաններից, Կովկասից փախած գաղթականները, կարճ ասած բոլոր տգետ արարածները, դուրս գալով մարդաորսի, փաշաների մեղսակիցը եղան, արյունոտ ձեռքերով ապականեցին իրենց խիղճն ու ցեղին»:

Հայտնագործության պետականորեն հովանավորման, մի քիչ էլ ֆինանսական խրախուսման դեպքում, նորի համար նախադրյալներ են ստեղծվում: Նորի պարագայում խոսքը վերաբերում է Թուրքական պատմական ընկերության նախորդ նախագահ, Անկարայի «Գազի» համալսարանի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն և հայտնի կեղծարար, պրոֆ. Յուսուֆ Հալաջօղլուին: Օրերս Բաբերթում (Բայբուրթ) նա հանդես է եկել «Կովկասյան քաղաքականությունն ու թուրք-ադրբեջանական հարաբերությունները Հայաստանի հետ» թեմայով դասախոսությամբ:

Ինչպես երևում է, Հալաջօղլուն ոչ թե հարաբերություններին է անդրադարձել, այլ կրկնել է ՀՅ-ի վերաբերյալ թուրքական պետության ծամծամված թեզերը, թե Անգլիան, Ֆրանսիան կենսական շահեր էին հետապնդում Օսմանյան կայսրության տարածքներում, Ռուսաստանը՝ նմանապես, որը «Թուրքիայում հայկական պետության կազմավորման» խոստումներով իր կողմը գրավեց հայերին, որոնք էլ ապստամբելով Վանում, Էրզրումում, Բիթլիսում, Արդահանում և Բայբուրթում, սպանեցին շուրջ 500.000 թուրքի:

Այնուհետև Հալաջօղլուն շարունակել է. «Թեև մենք փաստաթղթերով ապացուցել ենք հայերի կատարմամբ իրականացված կոտորածները, սակայն նրանք առ այսօր շարունակում են պնդել, որ Թուրքիան իրենց ենթարկել է ցեղասպանության: Իրականում մեղավորը հայերը չեն, այլ այն պետությունները, որոնք խրախուսում են հայերին»:

14.03.2012

«ՀԱՅ ՀՐՈՍԱԿԱՅԻՄԲԵՐԸ 518.000 ՄԱՐԴՈՒ ԵՆ ՍՊԱՆԵԼ»

Հայրարարում է Հալաջօղլուն՝ ընդգծելով, որ մինչև 1915-ի մայիսը սպանել էին նաև 128.000 թուրքի

Փետրվարի 26-ին Ստամբուլի «Թաքսիմ» հրապարակում վարչապետ Էրդողանի կառավարությունը կազմակերպել էր Խոջալուի «կոտորածի» ռեկոնստրուկցիայի հանրահավաք, որը վերածվեց հայատյացության ցույցի: Հանրահավաքի մասնակից թուրք-ադրբեջանական հրոսակների շուրջ 100-հազարանոց խառնամբոխը ոչ միայն հայերին վիրավորող, հանգուցյալ Հրանտ Դինքի հիշատակն անարգող ցուցապատառներն էր բարձրացրել, այլև քաղաքականություններով փառաբանել էր մարդասպան Օզյուն Մամաթին և կրել սպիտակ բերետ, ինչպիսին Դինքին սպանելու պահին իր գլխին էր դրել Սամաթը:

Այլ կերպ, հանրահավաքում հրոսակաբարո թուրք խառնամբոխը շարունակել է հիանալ վարձու մարդասպանով: Հաշվի առնելով, որ ադրբեջանցի հրոսակն էլ հային սպանելու համար Ռամիլ Սաֆարով կոչված տականքին ազգային հերոս է հռչակել, ապա կարելի է ասել, որ հրոսակաբարո թուրք խառնամբոխն ու ադրբեջանական ուսմակը հիրավի մեկ ազգ են, և սրանց միավորում է մարդ սպանելու անասնական բնազդը:

Իսնդիրը, սակայն, թուրքական խառնամբոխի և ադրբեջանական ուսմակի հայատյացությունը չէ, այլ հանրահավաքում Խոջալուի այսպես կոչված կոտորածի ռեկոնստրուկցիայով հայ ժողովրդին

վիրավորելու, թուրքական պետական կառույցների մասնակցությամբ սպանված Հրանտ Դինքի հիշատակը անարգելու ստորոպյան օրինականացումը, որն արեց Թուրքիայի ՆԳ նախարար Շահինը՝ ակտիվորեն մասնակցելով «ոգեկոչման» հանրահավաքին:

Ստամբուլի այս հանրահավաքն իրականում Ֆրանսիայի Սենատի ընդունած ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրինագծի արձագանքն էր, թուրքական ժխտողականության դիրքերի սպառումը կասեցնելու անգորության խոստովանություն, ինչպես նաև Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի յուրահատուկ պատրաստություն, այլապես էրդոդանի կառավարությունը հանձն չէր առնի դրա կազմակերպումը:

Այս ամենի առումով չափազանց հատկանշական է Քյոթահիայի «Դումլուփընար» համալսարանի մարտի 11-ին «Թուրք-հայկական հարաբերություններ» թեմայով կազմակերպված միջոցառումը, որին իբրև բանախոս մասնակցել է Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ և Մեջլիսի Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր, պրոֆ. Յուսուֆ Հալաջօղլուն:

Հալաջօղլուի դասախոսության մասին, ինչպես նշում է «Սոնդաքի-քա» կայքէջը, հաղորդագրությամբ տեղեկացրել է համալսարանի ռեկտորատը: Համաձայն դրա, Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Հալաջօղլուն ասել է. «Հայ հրոսակախմբերը 518.000 մարդու են սպանել: 1914-ի մայիսից մինչև 1915-ի մայիսը, այսինքն մինչև տեղահանություն նրանք սպանել էին ևս 128.000 թուրք մահմեդականի: Այս 128.000-ը խաղաղ բնակիչներ և գյուղացիներ էին: Այդ նույն կոտորածը իրականացրին նաև Խոջալուում: Սարգսյանը որպես պատերազմի հանցագործ անհապաղ պետք է կանգնի միջազգային դատարանի առջև: Նրանք, ովքեր «ցեղասպանություն չի եղել» ասելու համար դատապարտում են թուրքերին, չգիտես ինչու անտեսում են իրենց աչքի առջև տեղի ունեցած և բազմիցս տեսագրված իրողությունը: Միայն Վանում սպանվել է 80.000 մարդ: Հայերը նրանց միջից վերցրել էին 50 երիտասարդ կանանց, որ տանեն Ադթամար կղզի, սակայն այս կանայք իրենց պատիվը փրկելու համար խեղդամահ եղան Վանա լճում»:

Ակամա հարց է ծագում. ի՞նչ առնչություն ունեն Հալաջօղլուի ասածները «թուրք-հայկական հարաբերություններ» թեմայով կազմակերպված դասախոսության հետ, թե Հալաջօղլուն ակամա խոստովանում է, որ այդ հարաբերությունների ընթացքը Թուրքիայում՝ օսմանյան թեքնալական, մշտապես կանխորոշել է բռնության նկատմամբ թուրք մարդասպանի հակվածությունն ու հայերին բնաջնջելու նրա մոլուցքը:

18.04.2012

«1915-Ի ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՁՈՒԹՅԱՄԲ ԹՈՒՐԿԻԱՆ
ԳԵՌԵՎՍ ԱՐԿԱՐԱՑՎԵԼ ԷՐ ՄԱԼԹԱՅՈՒՄ»

Հայտարարել է ԵՄ-ի գծով պերնախարար Բաղըըը

Ապրիլի 14-ին Թուրքիայի ԵՄ գծով պետնախարար և գլխավոր բանակցող Էգեմեն Բաղըըը եղել է Մալթայում, այցելել այն կալանավայրը, որտեղ բանտարկված էին Հայոց ցեղասպանությանը մասնակցելու մեղադրանքով 1919-20թթ. անգլիական հրամանատարության կողմից աքսորված օսմանյան ավելի քան 120 պետական ու զինվորական գործիչներ: Սրանց թվում էին Սաիթ Հալիմ փաշան, Էնվերի աներոդդին՝ Քյազիմ բեյը, Էնվերի հայրը՝ Հաջի Ահմեդ փաշան, պանթուրքիզմի հիմնադիր Զիա Գյոքալփը, Մոսուլի նահանգապետ Ռահմի բեյը, Սվազի նահանգապետ Մեմդուհ բեյը և հայ ժողովրդի արյունարբու այլ դահիճներ:

Մալթան այն ժամանակ Անգլիայի գաղութն էր, իսկ անգլիական կառավարությունը մուֆ գործարքի մեջ մտնելով քեմալական դարձած նախկին իթթիհադականների հետ, 1921-22թթ. ազատ էր արձակել այս մարդասպաններին, որպեսզի համալրեն Մուստաֆա Բեմալի շուրջ համախմբված դահիճների շարքը: Թերևս այս հանգամանքով է պայմանավորված առ այսօր Աթաթուրքի տաքուի անձեռնմխելիությունը Թուրքիայում:

Համենայն դեպս, Մալթայում կալանավայր այցելելուց հետո, ըստ «Հաբերդար» կայքէջի, Բաղըըը հայտարարել է. «1919-ին Մալթա են արքորում պատասխանատու գործիչներին և այնտեղ 1915-ի ողբերգության պատճառով նրանց կանգնեցնում են դատարանի առջև: Անգլիացի դատախազի և Անգլիայի դեսպանի գրությունները լուրջ հետևությունների հիմքեր են տալիս: Մեղադրյալների մեջ կան օսմանյան նախկին նախարարներ, բանակի նախկին հրամանատարներ և բարձրաստիճան այլ պատասխանատու գործիչներ: Եվ դատարանը որոշում է կարճել ամբաստանյալներին 1915-ի առնչությամբ հարուցված գործը: Այդ որոշումն ընդունող դատավորը անգլիացի է: Այլ կերպ, 1915-ի իրադարձությունների առումով Թուրքիան արդարացվում է Մալթայում: Հետևաբար մեր ազգին ցեղասպանության մեջ մեղադրելը որևէ մեկի գործը չէ»:

Կայքը Բաղըըը խոսքերին տալիս է հետևյալ մեկնաբանությունը. «Մինչ հայկական սփյուռքը, այսպես կոչված, ցեղասպանության պնդումների տարելիցը հանդիսացող ապրիլի 24-ին պատրաստվում է աշխարհն իրար խառնել, Անկարան նրա քարոզարշավին մտադիր է հակադրել Մալթայի փաստաթուղթը»:

Փաստաթղթի պարագայում խոսքը ԱՄՆ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Ռ. Քրեյգիի 1921-ի հուլիսի 13-ին ԱԳ նախարար լորդ.

Կուրզունին հղած հեռագրի մասին է, որտեղ դեսպանը ափսոսանք է հայտնել, որ աքսորյալների մեղադրանքը հաստատող փաստեր չեն հայտնաբերվել: Թե ինչպե՞ս է նա Վաշինգտոնում փաստեր հայտնաբերելու, չգիտենք: Բայց այս գործիչներին նախքան Մայթա աքսորելը հայերի ջարդը ծրագրելու, կազմակերպելու և իրականացնելու մեղադրանքով 1919-ին դատապարտել էր օսմանյան ռազմական ասոյանը, ակնհայտ է:

20.03.2013

«ՎԵՐՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏԵՐԻՆ» ԿԱՐԳԱՅՈՍՈՒՎ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

Դա ապրիլի 27-ին կկազմակերպի Երիտասարդ թուրքերի միությունը

Նյու Յորքը հակահայ գործունեության որջ է դարձել արտերկրի թուրքերի համար: Սրանց մեջ ի՞նչ թիվ են կազմում սաբաթայականները, այսինքն՝ սպրինկյան ծագումով առերևույթ մահմեդականություն ընդունած հրեաները, չգիտենք: Բայց որ սաբաթայականները Թալեթի, Էսվերի, Ջեմալի գլխավորությամբ անմիջականորեն մասնակցել են ՀՅ-ի ծրագրմանը, կազմակերպմանն ու իրականացմանը Օսմանյան կայսրությունում, չմոռանալով, իհարկե, յուրացնել հայապատկան ամենահարուստ կալվածքներն՝ ամենաարժեքավոր գույքով հանդերձ, և ցեղասպանության հարցում Թուրքիայի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականության առավել ազդեցիկ պաշտպաններն են, ակնհայտ է:

Ազդեցիկությունը պայմանավորված է Հոլոքոստի բացառիկությունն ապահովելու, ինչպես նաև ցեղասպանության ծրագրմանը, կազմակերպմանն ու իրականացմանը անմիջականորեն մասնակցած հայ ժողովրդի սաբաթայական դահիճներին պաշտպանության տակ առնելու նկրտումներով: Օգտվելով առիթից նշենք, որ Նյու Յորքից է նաև Թուրքիայի ԵՄ գծով նախարար Էգեմեն Բաղըշը, որի համար գործելակերպ է դարձել ամբարտավան հայտարարություններով Թուրքիայի քրիստոնյաներին, էթնիկ և կրոնական խմբավորումներին հրապարակավ վիրավորելը:

Վերջերս նա Շվեդիայում ասորական ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերի համար «երազախաբությամբ զբաղվելու» մեջ էր մեղադրել հանդիպմանը հրավիրված ասորիներին, որոնց թվում՝ շվեդական խորհրդարանի ասորի պատգամավորին: Հարկ է նշել, որ խնդիրը սոսկ Բաղըշի ամբարտավանությունը չէ, այլ նրա ամբարտավան ոճի հակադրությունը քրիստոնյաների, էթնիկ և

կրոնական այլ խմբավորումների հարցերում վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի չափավոր ոճին:

Համենայն դեպս ապրիլի 27-ին Նյու Յորքում Թուրք-ամերիկյան միությունների ֆեդերացիայի անդամ թուրքական կազմակերպությունները պատրաստվում են «Վերջ հայկական ստերին» կարգախոսով հանրահավաքի: Ի դեպ, այս հանրահավաքը նախածեռնել է երիտասարդ թուրքերի միությունը: Մարտի 18-ին այդ մասին հայտնեց Նյու Յորքի Turkishny.com կայքէջը, Նյու Յորքում է նաև ԱՄՆ-ում գործող այս տիրահոչակ միության կենտրոնակայանը:

Ըստ Նյու Յորքի թուրքական կայքէջի՝ Երիտասարդ թուրքերի միության նախածեռնությամբ «Վերջ հայկական ստերին» կարգախոսով կազմակերպվող հանրահավաքը տեղի կունենա քաղաքի հանրահայտ «Թայմս սքվերում»: Հանրահավաքին, բացի Թուրք-ամերիկյան միությունների ֆեդերացիայի հովանու ներքո գործող թուրքական կազմակերպություններից, կմասնակցեն Նյու Յորքի «Ադրբեջան» և Ամերիկա-ադրբեջանական միություններն ու Թուրք-ադրբեջանական եղբայրության խումբը:

Հանրահավաքի առնչությամբ Երիտասարդ թուրքերի միությունը իր իսկ նախագահի՝ Թուլգա Թեքմանի ստորագրությամբ տարածել է հաղորդագրություն, որտեղ, ըստ կայքէջի, ասված է.

«ԱՄՆ-ի թուրքական համայնքը միասնաբար ոչ ասելով հայկական ստերին ու զրպարտություններին, պետք է տեր կանգնի մեր ազգային դատին: Ճշմարտությանը պետք է իրազեկ լինի համաշխարհային հասարակական կարծիքը: Ապրիլի 27-ը փառապանծ թուրքական դրոշի ներքո համախմբվելու և մեկ սիրտ, մեկ բռունցք դառնալու օր է: Մենք՝ Երիտասարդ թուրքերի միության անդամներս, երկամյա ծրագիր ենք կազմել, որ հանրահավաքներով, կոնֆերանսներով, սեմինարներով, ցուցահանդեսներով, վավերագրական ֆիլմերի ցուցադրությամբ պատասխան տանք ատելության արշավներին:

Ինչպես հոջալուի կոտորածի ոգեկոչման հանրահավաքին մենք ուսուսի աջակցել ենք ադրբեջանցի եղբայրներին, այնպես էլ «Վերջ հայկական ստերին» կարգախոսով կազմակերպվող հանրահավաքին ակնկալում ենք ադրբեջանցիների գլխավորությամբ թուրքեստանցի, ույլուր, ուզբեկ, թուրքմեն, մեսխեթցի թուրք, բոսնիացի, դրիմցի, չեչեն և կարաչայցի եղբայրների մասնակցությունը, որը պիտի բազմապատկի մեր ուժը:

Եկեք լինենք միասին, միասնաբար ոչ ասենք հայկական ստերին, նկեք համատեղ հիշենք մեր շեհիդներին: Ամեն ինչ հանուն ավելի հզոր Թուրքիայի: Շեհիդին տեր կանգնելը հայրենիքին տեր կանգնել է»:

24.04.2013

«ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄՈՏ 8.500 ՀԱՅ Է ՍՊԱՆՎԵԼ»
Հայրարարել է թուրքական ժխտողականության պարագլուխներից պրոֆ.
Հալաջօղլուն՝ պատրաստանելով «Չամանի» հարցերին

Երեկ մեր թերթը «Տեղահանության ընթացքում 800.000 հայ է սպանվել» խորագրով ներկայացրել է Թաներ Աքչամի հետ «Չամանի» հարցազրույցը: Այսօր կներկայացնենք Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ, Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր, պրոֆ. Յուսուֆ Հալաջօղլուի հարցազրույցը, որը հենց նույն օրը՝ ապրիլի 21-ին է հրատարակվել «Չամանում»: Ուշագրավ է «Տեղահանության ընթացքում մոտ 8500 հայ է սպանվել» վերնագիրը:

Երկու հարցազրույցն էլ վարել է «Չամանի» թղթակից Սամեր Ալթընթաշը: Սակայն երկու իրարամերժ տեսակետների ներկայացումը միևնույն թերթի նույն օրվա համարում չպետք է տպավորություն ստեղծի, թե Թուրքիայում առկա են հակասական մոտեցումներ ՀՅ-ի հարցին: Ժխտողականությունն այդ հարցում Թուրքիայի պաշտոնական թեզն է, դրա շուրջը գոյություն ունի իշխանություն-հասարակություն համերաշխությունը, չնայած ժխտողականության դիրքերի սպառնանք, պայմանավորված ցեղասպանության միջազգային ճանաչմամբ, թուրքական իշխանությունները շարունակում են համառորեն հրաժարվել պատմության հետ առերեսումից:

Ավելին, այս տարվա սկզբներին անցկացված հարցախույզի արդյունքներով, Թուրքիայի բնակչության 68%-ը շենքում հայ հարևան չի ուզում ունենալ, մոռանալով, որ 75 մլն-անոց երկրում թուրքահայերի թիվը ընդամենը 60.000 է, իշխանություններն այդ 60.000-ի դեմ են հրահրում 75 միլիոնի ատելությունը և միայն հատուկենտ մտավորականներ են, որ իբրև թուրք արտահայտվում են ՀՅ-ի ճանաչման օգտին:

Հայաստանի ծովում այդ մտավորականները նույնիսկ մեկ կաթիլ անգամ չեն, որոնցից թերևս պետք է առանձնացնել Ռազրի Զարաքուլին: Ինչ վերաբերում է ժխտողականներին, ապա նրանց մեջ կան հարյուրավոր պատմաբաններ, գիտության, կրթության, արվեստի գործիչներ, նախկին դեսպաններ, որոնց համալրում են ժխտողականությունը հիմնավորող գիտական հիմնարկները, պետական կառույցները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, այսպես կոչված, քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ու հասարակական հիմունքներով գործող միությունները:

Ի դեպ, այս միությունները գործում են նաև արտերկրում, դրանց թիվը միայն ԱՄՆ-ում հասնում է 100-ի, իսկ գործունեությունը «Թուրքական ֆորումի» միջոցով համակարգում է Թուրքիայի ԱԳՆ-ն, հա-

վանաբար հետախուզական կառույցների հովանու ներքո: Այսինքն՝ Թուրքիան գոնե ՀՅ-ի հարցում չի վերափոխվում: Վերափոխվելու թերևս գլխավոր նախապայմանը ժխտողականությունից հրաժարվելն է, սակայն այս պետությունը շարունակում է սեփական պատմության հետ առերեսումից հրաժարվել:

Հալաջօղլուն դրա վառ ապացույցն է: Ժամանակին գլխավորել է ժխտողականությունը հիմնավորող մի ընկերություն, ապա և ընտրվել Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավոր: Ահա թե ինչ է գրել հարցազրույցը վարող Ալթընթաշը.

«Առաջ մենք գիտեինք ապրիլի 23-ի (Ք. Աթաթուրքը այդ օրը նվիրել է թուրք երեխաներին) մասին միայն, հաջորդ օրը մեզ համար նշանակություն չուներ: Հետագայում մեր առօրյա մտավ ապրիլի 24-ը, որ Հայկական հարցն է հիշեցնում մեզ: Գաղտնիք չէ, որ հայկական լրբքին տեղահանության 100-րդ տարելիցի՝ 2015-ի համար պատրաստություն է տեսնում, պատրաստվում է Թուրքիայի դեմ միջազգային բուռն արշավ ձեռնարկել:

Անելիքների մասին հարցրեցինք հայկական հարցում հակադիր դիրքորոշում ունեցող Հալաջօղլուին և Աքչամին: Հալաջօղլուն ասաց. «Ծպտյալ հայերը հետզհետե ի հայտ են գալիս: Թուրքիան այս հարցում աչալուրջ պետք է լինի»:

- Որքա՞ն է Օսմանյան կայսրությունում տեղահանված հայերի թիվը:

- Տեղահանության որոշումն ընդունվել է 1915-ի մայիսի 25-26-ին:

Հունիսի 16-ից սկսեց տեղահանությունը Անատոլիայի տարբեր վայրերից, չհաշված Վանն ու Կարսը, որովհետև այս վիլայեթներն օկուպացված էին: Հետևաբար արևելյան շրջանները գերծ են մնացել տեղահանությունից, ցանկացողները անցել են ռուսական կողմ: Մնացած շրջաններից Սիրիա են տեղափոխվել 500.000 հայ, ոմանք էլ ապաստանել են հարևան վիլայեթներում: Այսինքն, ընդհանուր առմամբ, տեղահանության է ենթարկվել 600.000 հայ:

- Քանի՞ մարդ է զոհվել տեղահանության ընթացքում:

- Քարավանների թվակազմը տատանվում էր 500-2000-ի միջև: Որոշ քրդական և արաբական աշիրաթների ձեռնարկած հարձակումների հետևանքով քարավաններում սպանվածների թիվը առավելագույնս 8000-8500-ի սահմաններում պետք է լինի: Սակայն սա 100%-անոց հաշվարկ չէ:

- Ինչպե՞ս էին իրականացվում սպանությունները:

- Քարավանները հաճախ ենթարկվում էին հարձակումների: Նկատի առնելով այս հանգամանքը, պետությունը պահակախմբեր կցեց քարավաններին, որոնք առաջանում էին ժանդարմների ուղեկցությամբ: Շնորհիվ դրա, մահացության ցուցանիշը չէր աճում:

- Հավատարմ եք, որ 1915-ին ցեղասպանություն է իրագործվել և ինչու:

- Որպեսզի 1915-ը համարվի ցեղասպանություն, պետությունը դիտավորյալ սպանած պետք է լիներ տվյալ էթնիկ խմբին պատկանող մարդկանց: Ընդհակառակը, սկսած 1915-ի աշնանից, անձամբ Թալեաթ փաշայի ստորագրությամբ հանցագործության մեջ ամբաստանվող, հարձակումներ իրականացնող և հայերի ունեցվածքը կողոպտող 1673 մարդ կանգնել է ռազմական ատյանի առջև: Դատավարությունը ավարտվել է 1916-ի փետրվար-մարտ ամիսներին: 67 մարդ դատապարտվել է մահապատժի, 68-ը՝ տաժանակրության, 524 մարդ՝ 2.3 և 5 տարի ազատազրկման: Այսինքն՝ օսմանյան պետությունը պատժել է մեղավորներին, ուստի անհնար է դա ցեղասպանություն որակելը: Հակառակ պնդումների, թուրքական կողմը հայերի դեմ որևէ դիտավորություն չի ունեցել: Ավելին, գերմանական արխիվներում բառացի նշված է հետևյալը. «Եթե չլիներ թուրքական բանակը, ապա քրդերը կսպանեին հայերին»: Այս փաստը ցույց է տալիս, որ թուրքական բանակը, այսինքն պետությունը, պաշտպանության տակ է առել հայերին: Հնարավոր է, որ, ինչպես հայերն են պնդում, սպանված լինի 1.5 մլն մարդ: ՄԱԿ-ի տվյալներով, որն այդ ժամանակ Ազգերի լիգա էր կոչվում, 1922-ի նոյեմբերին Թուրքիայում բնակվում էր 280.000 հայ, շուրջ 100.000 հայ մահմեդականություն էր ընդունել, այլ երկրներ գաղթած հայերի թիվն էլ 17.873 էր: Նշանակում է, 1 մլն 200 հազար հայ ողջ էր մնացել: Եթե այս ցուցանիշը համեմատելու լինենք Առաջին աշխարհամարտի տարիների հայ բնակչության թվի հետ, ապա տարբերությունը կկազմի շուրջ 250-300 հազար: Նրանցից 190.000-ը Ռուսաստանում, այսինքն Թուրքիայի սահմաններից դուրս, 160.000-ը Էջմիածնում, 30.000-ը՝ Ախալքալակում խոլերայից է մահացել: Այլ կերպ, ասածներս ոչ թե կոտորածի, այլ համաճարակի ու սովի պատճառով մահացածների ցուցանիշներն են: Տեղահանության ընթացքում առանձին խմբերի սպանած հայերի թիվը շուրջ 8000 է կազմում: Հետևաբար հայերի ցեղասպանության զտանցանքներն ինքնատիվության սուտ են:

- Ի՞նչ կասեք հայերի ձեռքով սպանված թուրքերի մասին:

- Այս հարցը ուշադրության կենտրոնում է: Նախքան տեղահանության որոշման ընդունումը, այսինքն 1915-ի ավարտից առաջ, 1 տարում, հայերի ձեռքով սպանվել են 128.000 թուրքեր և մահմեդականներ: Հայերը ռուսների աջակցությամբ գրավել էին Վանը: Քաղաքն ընկավ մայիսի 17-ին: Տեղահանության որոշումից առաջ Վանի վիլայեթում սպանվել է 80.000 մարդ: Հետևաբար ճիշտ չէ այն տեսակետը, թե հայերը տեղահանության պատճառով զայրացել և վրեժխնդիր են եղել թուրքերից: Տեղահանությունից հետո հայ չեթների գոհը դար-

ծած մարդկանց թիվը այս ամենի վրա գումարելուց հետո ստացվում է 518.000: Ընդ որում Առաջին աշխարհամարտը դեռ շարունակվում էր:

- Ինչպե՞ս կլուծվի Հայկական հարցը:

- Ակնհայտ է, որ հարցը գիտականորեն չի լուծվելու, որովհետև հայերը խուսափում են բանավեճից: Պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու Թուրքիայի առաջարկը ոչ հայերն են ընդունել, ոչ էլ եվրոպական այն երկրները, որոնք խորհրդարանի որոշումով ճանաչեցին ցեղասպանությունը: Հարցը քաղաքականացված է, ուստի լուծումն էլ քաղաքական պետք է լինի: Եվրոպացի խորհրդարանականներին պետք է Թուրքիա հրավիրել և նրանց քացատրել իրավիճակը, հասկացնելով, որ այլապես վերանայելու ենք մեր հարաբերությունները:

- Ինչպիսի՞ն են ձեր սպասումները տեղահանության 100-րդ փարեյիցին՝ 2015-ին:

- Ծպտյալ հայերը սկսել են հետզհետե ի հայտ գալ: Թուրքիան պետք է աջալուրջ լինի այս հարցում: Օրինակ, կարող է օրակարգ մտնել ունեցվածքի խնդիրը: Սա երկրի ղեկավարությունից աջալրջություն է պահանջում: Պաշտոնական շրջանակներում խոսում են արտերկրի հայությանը Թուրքիա վերադարձնելու շուրջը: Մինչդեռ Լոզանի պայմանագրի որոշումով անհնար է համարվել հայերի վերադարձը: Մարդասիրական թվացող այսպիսի հրավերներն անհարիր են պետություններին: Պետք է լրջորեն քննել դիմացինի վերաբերմունքը»:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ԺԻՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԺԻՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉ ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ԴՐԱՏԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

14.03.2002

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԻՏՈՒՄՆ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ
Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՐԵԼՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐՈՎ

Մարտի 7-ին լուսանջելեսաբնակ հայերն Իսրայելի հյուպատոսության առջև կազմակերպել են բողոքի ցույց՝ արտահայտելու իրենց վրդովմունքը դեսպան Ռիվկա Քոհենի հայտարարության առթիվ: Հիշեցման կարգով նշենք, որ փետրվարի 8-ին Հայաստանում Իսրայելի դեսպան Քոհենը հենց Երևանում հայտարարել էր, թե Հոլոքոստը եզակի երևույթ է, որովհետև եղել է ծրագրված՝ ողջ հրեա ժողովրդին բնաջնջելու հրեշավոր նպատակով, և ոչինչ համեմատելի չէ դրա հետ: Նա 1915թ. ՀՅ-ն որակել էր ողբերգություն:

Փետրվարի 15-ին ՀՀ-ի ԱԳՆ-ն հայտարարության առնչությամբ բողոքի բավականին լուրջ նոտա էր ներկայացրել Իսրայելի ԱԳՆ-ին, իսկ վերջինս նույն կոշտությամբ պատասխանել էր նոտային՝ մի անգամ ևս ընդգծելով Հոլոքոստի ծրագրվածության պարագան:

Լուս Անջելեսի հայության վրդովմունքը հասկանալի էր, քանի որ հանձին դեսպան Քոհենի ՀՅ-ն ժխտում է իսրայելյան պետությունը: Ինչ վերաբերում է ժխտման պատճառներին, ապա դրանց մեջ առանձնանում են Հոլոքոստի բացառիկությունն ապահովելը, ՀՅ-ի հարցում Իսրայելի ռազմաքաղաքական դաշնակից Թուրքիայի հետ համերաշխությունը վերահաստատելը, ինչպես նաև խնայելը այն սալոնիկցի հրեաներին, որոնք հեղեղելով իթթիհադականների շարքերը՝ անմիջականորեն մասնակցել են թե՛ 1915թ. կոտորածների ծրագրմանը և թե՛ իրագործմանը:

Հարկ է, սակայն, նշել, որ սրանք ՀՅ-ն ժխտելու ընդհանուր պատճառներն են: Քանի որ ցեղասպանության հարցում Իսրայելի ժխտողական դիրքորոշումը հայտնի է և նոր չի ձևավորվել, ուստի դեսպան Քոհենը Երևանում նման հայտարարություն անելու համար պետք է ունենար նաև մասնավոր պատճառներ: Որո՞նք են դրանք: Ըստ երևույթին, Վրաստանում ԱՄՆ-ի ռազմական ներկայության հաստատման այս օրերին, ինչը ենթադրում է Անդրկովկասում Թուրքիայի ռազմական ներկայության ամրապնդումը, Հայաստանի հետ հարաբերությունները գիտակցաբար սրելու միտումներն են:

Դրանց հիմքում թերևս հայ-ռուսական զինակցությունն է, Իրանի Իսլամական Հանրապետության և արաբական աշխարհի հետ ՀՀ-ի

մերձեցումը, վերջինի միջոցով ԵՄ-ի Անդրկովկաս ներթափանցելու հեռանկարը և այն դժգոհությունը, որն Իսրայելում առաջ է բերում հայկական իշխանությունների իսրայելյան քաղաքականությունը:

Իսրայելի հարաբերությունները ԵՄ-ի հետ բավականին սառն են, իսկ վերջինս ոչ միայն ակտիվանում է Մերձավոր և Միջին Արևելքում, այլև Անդրկովկասում հանուն ազդեցության ծավալվող ռուսամերիկյան մրցապայքարին ակտիվորեն մասնակցելու լուրջ հայտ է ներկայացում: Երախորհրդարանի փետրվարի 28-ի նիստը, որտեղ ընդունվեց «Հարավկովկասյան զեկուցագիրը», պատահական չէր: Ամենկին չէր կարող պատահական լինել զեկուցագրի «ՀՅ-ի հարցում Հայաստանի հետ հաշտվելու» Թուրքիային հասցեագրված կոչը:

Հատկանշական է, որ Հայաստանում Իսրայելի դեսպան Քոհենի ՀՅ-ի մասին անփառունակ հայտարարությունը նախորդում էր ԵՄ-ի վերոհիշյալ նիստին: Ուրեմն դեսպանն իր հայտարարությամբ նախահարձակ միջոցների է դիմում՝ կանխավ հակակշռելու համար զեկուցագրի Թուրքիային ուղղված կոչը, և նա ՀՅ-ի առնչությամբ թուրքերին ԵՄ-ի «ոտնձգություններից» պաշտպանելիս միաժամանակ փորձում է իբրև դժգոհության դրսևորում սաստել Հայաստանին: Չմոռանանք, որ հայկական իշխանությունները թեև չեն դատապարտում Պաղեստինի նկատմամբ Իսրայելի որդեգրած պետական ահաբեկչության քաղաքականությունը, բայց հավանություն էլ չեն տալիս դրան: Ինչ վերաբերում է Երուսաղեմի հայկական հատվածին, ապա դրա բնակչության համար ընդունելի է պաղեստինյան վերահսկողությունը և ոչ թե իսրայելականը:

Հայաստանի հետ Իսրայելի հարաբերությունների կանխամտածված սրումը հազիվ թե ստիպի հայկական իշխանություններին, որպեսզի նրանք վերանայեն հայ-ռուսական զինակցության, ինչպես նաև Իրանի և արաբական աշխարհի հետ մերձեցման հարցերում մեր հանրապետության դիրքորոշումը: Դա չի նպաստի, որ Հայաստանը Պաղեստինի նկատմամբ Իսրայելի որդեգրած քաղաքականությանն աջակցի: Ոչ էլ դրանով Երուսաղեմի հայկական հատվածը նախապատվությունը կտա իսրայելական վերահսկողությանը: Բայց որ ծրագրված չլինելու պարագայում ՀՅ-ն ՀՅ-ն վերաձվում է սովորական կոտորածների, ակնհայտ է: Ահա թե ինչու այդ մասին ՀՀ-ում Իսրայելի դեսպանից բացի, ՀՀ ԱԳՆ-ի բողոքին պատասխան նոտայում իր պարտքն է համարում ընդգծել նաև Իսրայելի ԱԳՆ-ն:

Հարցը, սակայն, սոսկ վերջիններս չեն, այլ Ժիրայր Լիպարիտյանի, Ռոնալդ Սյունիի պես մեր որոշ հայրենակիցները: Թեև սրանք ՀՅ-ն հրապարակավ չեն ժխտում, սակայն մերժելով դրա ծրագրված լինելու փաստը, թե՛ տուրք են տալիս Իսրայելի նկրտումներին և թե՛ հայի ազգանունով հիմնավորում են Ցեղասպանության թուրքական

ժողովականությունը: Այս պայմաններում ՀՅ-ն դառնում է շահարկման առարկա, իսկ դրա սովորական կոտորածների վերածվելու փորձերով ժխտումն իբրև դժգոհության դրսևորում պայմանավորվում է Հայաստանի հետ հարաբերությունները գիտակցաբար սրելու Թեյ Ավիվի միտումներով: Այդ ընթացքում սրման միտումները ստանում են հայկական իշխանությունների վրա ճնշում գործադրելու արդյունավետ միջոցի երանգ:

24.04.2002

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԹՈՒՐԻՔԻԱՅԻ

ԺԵՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՆՈՒՄ Է ԱՆՓՈՓՈՒՄ

Փոփոխության է ենթարկվում թուրքական կեղծարարությունը

Թուրքիան հետևողականորեն ժխտում է ՀՅ-ի պատմական իրողությունը: Ժխտման համար մատնացույց էին արվում թուրքական պետության տարածքում բնակվող մի քանի տասնյակ հայեր, պատճառաբանելով, թե ցեղասպանության պարագայում ինչպե՞ս են նրանք ողջ մնացել: Իսկ կոտորածներն անմիջականորեն վերագրվում են հայերի դավաճանությանը, որպեսզի արդարացվեն դրանք: Ինչ վերաբերում է ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին, ապա թուրքական իշխանությունները դրան հիվանդագին հակազդեցություն են ցուցաբերում և համարում Թուրքիայի նկատմամբ դավադրության դրսևորում:

«Ազգը» ժամանակին արձագանքել է ինչպես ժխտողականության, այնպես էլ գործընթացը կանխարգելիչ նախահարձակ միջոցներով կասեցնելու թուրքական միտումներին: Պարզապես ասենք, որ ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի կասեցումը թուրքերի տեսանկյունից անմիջականորեն պայմանավորված է ժխտողական դիրքորոշման հիմնավորումով: Դա իր հերթին պայմանավորում է ՀՅ-ի թուրքական կեղծարարությունը, այսպիսով դա դառնում է ցեղասպանության հարցում Թուրքիայի դիրքորոշումը գիտականորեն հիմնավորելու թերևս միակ միջոցը:

Հարկ է, սակայն, նշել, որ ժխտողական դիրքորոշման պարագայում կարևորը սոսկ միջոցը չէ, այլ դրա արդյունավետ օգտագործումը: Դա ենթադրում է կեղծարարների պետական հովանավորությունը, իսկ Թուրքիան ոչ միայն հովանավորում է, այլև գիտական, քաղաքական և հասարակական նախաձեռնություն է ցուցաբերում, կազմակերպում է տարբեր միջոցառումներ, ապահովում դրանց սփյուռքահայ որոշ գիտնականների մասնակցությունը, հրատարակում է ինչպես թուրք, այնպես էլ օտար հեղինակների միտումնավոր աշխատությունները:

«Ազգն» անդրադառնում է նաև այդպիսի աշխատություններին: Դրանք լույս են տեսնում ոչ միայն Թուրքիայում, այլև դրա սահմաններից դուրս: ՀՅ-ի թուրքական կեղծարարությունը հիմնավորելու հարցում առանձնակի ակտիվությամբ աչքի է ընկնում ամերիկյան պատմագրությունը: Եթե դրա ներկայացուցիչներից Հի Լայնը, Հիթ Լատրին, Ջասթին Մլքարթին և այլք ճանապարհ են հարթում թուրքերի համար, որպեսզի վերջիններս կեղծարարությունը, իբրև պատմական ճշմարտություն, միջազգային ասպարեզ դուրս բերեն, ապա ֆրանսիացի թուրքագետ Ռոբեր Մանթրան և իսրայելցի թուրքագետ Իցիահ Ֆրեյդմանը Թուրքիային մատնանշում են ՀՅ-ի պատմական բեռը թոթափելու ուղիները:

Մանթրան, պատասխանելով թուրքական «Թեմփո» շաբաթաթերթի հարցերին, դրա 1998թ. հունիսի 25-ի համարում Անկարային առաջարկում է հավասարապես ընդունել հայկական և թուրքական կոտորածների իրողությունը: Ապա նա խելք է սովորեցնում, ասելով. «Չպետք է հերքել կոտորածների փաստը, այլ ասել, որ կոտորածներ եղան, բայց թուրքերն էլ կոտորվեցին»: Ինչ վերաբերում է Ֆրեյդմանին, ապա նա «Աքսիոն» շաբաթաթերթի 1998թ. հունիսի 20-ի համարում, ընդգծելով հայերի նկատմամբ անձնական հակակրանքը, թուրքերի ուշադրությունը հրավիրում է վերջիններիս «կատարած» կոտորածների վրա, ապա բառացի ավելացնում. «*Հայերն իրենց թուրք հարևանների նկատմամբ, որոնց հետ դարեր շարունակ համարեղ գոյակցել էին, բռնությունների դիմեցին և կատարեցին չարագործություններ: Էնվեր փաշան, վերագրավելով երկրի հայաբնակ շրջանները, ինչ խոսք, վրեժ լուծեց: Բայցևայնպես, հայերին չեն մորթել*»:

Ըստ երևույթին, Մանթրայի խորիմաստ առաջարկությունն ու Ֆրեյդմանի արժեքավոր խորհուրդը տեղ են հասել, որ վերջին տարիներին թուրքերն սկսել են ոչ այնքան հայկական կոտորածները հերքել, որքան երևան հանել «թուրքերի նկատմամբ հայերի կատարած եղեռնին» առնչվող փաստեր: Ուրեմն ՀՅ-ի հարցում Թուրքիայի ժխտողականությունը մնում է անփոփոխ, պարզապես փոփոխության է ենթարկվում թուրքական կեղծարարությունը, իսկ դրա հիմքում դրվում են «հայերի զազանությունների» մասին տարաբնույթ հրատարակությունները:

26.07.2005

ՓԵՐԻՆՉԵՔԸ ՁԵՐԲԱԿԱՎԵԼ Է ՇՎԵՅՏԱՐԻԱՅՈՒՄ

«Հայոց ցեղասպանությունը միջազգային մեծ սույր է» հայտարարության համար

Հուլիսի 24-ին լրացավ Լոզանի պայմանագրի ստորագրման 82-րդ ամյակը, որը իրավական հիմք հաղորդելով քեմալական ազգային

պատերազմներին, ճանաչել էր ժամանակակից Թուրքիայի տարածքային ամբողջականությունն ու պետական անկախությունը: Տարեդարձն առանձնակի ակտիվությամբ նշվել է ինչպես Թուրքիայում, այնպես էլ Շվեյցարիայում: Հատկանշական է, որ Լոզանի 82-րդ ամյակին նվիրված միջոցառումները Թուրքիայում կազմակերպել են ընդդիմադիր ժողովրդահանրապետական և Ձախ-ժողովրդավարական կուսակցությունները, իսկ Շվեյցարիայում՝ Բանվորական կուսակցությունն ու Քեմալական մտածողության միությունը:

Թուրքական հանրային հեռուստատեսությունն այդ միջոցառումները պայմանավորեց վերջին շրջանում Լոզանի պայմանագրի վիճարկմամբ, իսկ կառավարամետ «Ենի շաֆաք» թերթը՝ երկրում քեմալական սկզբունքների անձեռնմխելիության համար պայքարող քաղաքական ուժերի «Արդարություն և բարգավաճում» կուսակցության իշխանությունների դեմ սադրիչ գործունեությամբ՝ նշելով, թե «միջոցառումները վերածվեցին ուժի ցուցադրման»:

Համենայն դեպս, հուլիսի 23-24-ին Վինթերթուրում և Լոզանում «Լոզան-2005» անվամբ կազմակերպված միջոցառումներին բացի Բանվորական կուսակցության և Քեմալական մտածողության միության անդամներից, եվրոպաբնակ թուրքերից, մասնակցել է Թուրքիայից ժամանած 200 հոգանոց մի մեծ խումբ, կազմված գիտական և հասարակական գործիչներից, ինչպես նաև «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» նախկին նախագահ Ռաուֆ Դենքթաշը: Նրանք «Կեցցե՛ անկախ Թուրքիան», «Կորչի՛ ամերիկյան իմպերիալիզմը» կարգախոսներով Լոզանում երթ են կազմակերպել, որն ավարտվել է հանրահավաքով:

Ըստ «Հյուրիեթի», միջոցառումներին մասնակցելու ցանկություն է ունեցել Թուրքական պատմական ընկերության նախագահ Յուսուֆ Հալաջօղլուն, սակայն շվեյցարական դատախազության կալանման որոշումը նրան գրկել է այդ հնարավորությունից: Մեր կողմից ավելացնենք, որ ՀՅ-ն ժխտելու համար Հալաջօղլուի նկատմամբ Շվեյցարիան դեռևս մայիսի սկզբներին հետախուզում էր հայտարարել: Մայիսի 7-ին «ՀՅ-ն միջազգային մեծ սուտ է» խոսքերով նրան էր պաշտպանել Բանվորական կուսակցության նախագահ Դողու Փերինչեքը:

Հուլիսի 23-ին Վինթերթուրում, երբ Փերինչեքը կրկնում է այս խոսքերը, քաղաքի դատախազի սանկցիայով շվեյցարական իրավապահ մարմինները ելույթի պահին, հենց դահլիճում նրան ձերբակալում են և հարցաքննելու համար տանում դատախազություն: Հարցաքննությունը տևում է շուրջ 3,5 ժամ: Թուրքիայի ԱԳՆ-ի միջամտությամբ Փերինչեքն ի վերջո ազատ է արձակվում:

ԱԳ նախարար Աբդուլլահ Գյուլը խստագույնս դատապարտում է Թուրքիայում գործող քաղաքական կուսակցության առաջնորդի

ձերբակալությունը և ի պատասխան «Հյուրիեթի» հարցի, մատնանշում. «Տեղեկանալով մեծարգո Փերինչեքի ձերբակալության մասին, իսկույն միջամտել ենք: Նրա հարցաքննությանն անմիջականորեն ներկա է եղել Յյուրիխում Թուրքիայի գլխավոր հյուպատոս Մեհմեդ Էմրեն: Ես իրադարձությունների մասին ամբողջ գիշեր իրազեկել եմ մեծարգո վարչապետ Էրդողանին: Թուրքիայում գործող քաղաքական կուսակցության ղեկավարի նկատմամբ ցուցաբերված այս մոտեցումն անընդունելի է»:

18.01.2006

ՀԱՅՅՈՑ ՑԵՂԱՍԳԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ԺՄՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ՄՊԱՌՆԵԼ Է ԻՐ ԴԻՐՔԵՐԸ

Դրա անվերջ հիմնավորմամբ կապառվի նաև հիմնավորմանը լծված հասարակությունների գործունեությունը

Հունվարի 11-ի համարում «Ազգը», անդրադառնալով Թուրքիայի նախորդ տարվա օրակարգային խնդիրներին, դրանց մեջ առանձնացրել էր ԵՄ-ին անդամակցության բանակցությունները, որոնք սկզբնավորվեցին հոկտեմբերի 3-ին: Միաժամանակ նշվել էր, որ 2006թ.-ին բանակցությունների հետ երկրի օրակարգում էին Հայաստանի հետ հարաբերությունների և ՀՅ-ի խնդիրները:

Ցեղասպանության հարցի առումով թերևս հատկանշական է «Օսմանյան հայերը կայսրության անկման շրջանում» թեմայով գիտաժողովը, որը հասարակական և քաղաքական որոշ շրջանակների հակազդեցության պատճառով հնարավոր եղավ Ստամբուլի «Բիլգի» համալսարանում հրավիրել միայն սեպտեմբերին՝ 4 ամիս ուշացումով, ընդ որում, վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի անմիջական միջամտությամբ:

Թեև դրան հետևել էր թուրքական ժխտողականության հիմնավորմանը նպատակամղված այլընտրանքային գիտաժողովների հրավիրումն Անկարայում, Ստամբուլում և Կեսարիայում, սակայն դրանք այն հնչողությունը չէին ունեցել, ինչ ցեղասպանության թուրքական պաշտոնական թեզը վիճարկող «Բիլգի» համալսարանի գիտաժողովը: Ավելին, քանի որ այլընտրանքային գիտաժողովների մասնակիցները որպես ժխտողականության հիմնավորման միջոց այլ ելք չէին գտնում, քան պաշտոնական թեզի հակառակորդներին հարձակումների թիրախ դարձնելը՝ ուստի Թուրքիայում թեզի վիճարկելիության արժարձումները շարունակական բնույթ էին ստանում: Դա ինքնաբերաբար հանգեցնում էր ՀՅ-ի հարցի ակտիվ վերարժարմանը երկրում:

Վերարժարձումներն անխուսափելի էին դարձնում «Հայկական հարցի» վրա դրված տաբուի վերացումը Թուրքիայում, իսկ վերաց-

ման պայմաններում անխուսափելիորեն բացահայտվում էր թուրքական ժխտողականության սնանկությունը: Այլ կերպ, այլընտրանքային գիտաժողովի կազմակերպիչները ՀՅ-ի Թուրքիայի պաշտոնական թեզը հիմնավորելու առաջարկով ակամա թափ էին հաղորդում թուրք հասարակությունում դրա վիճարկումներին, նպաստում թուրքական ժխտողականության դիրքերի սպառնալու: Որպես հետևանք այս ամենի, Հայկական հարցի վրա դրված տարուն վերանում և ՀՅ-ի հարցը մշտապես զբաղեցնում էր երկրի օրակարգը:

Նոր տարվա առաջին օրերին, չնայած Թուրքիայում թոչնագրիպի բռնկումներին, թուրքական թերթերում լույս են տեսել հայկական խնդիրների վերաբերյալ մի շարք հոդվածներ: Այս փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ ՀՅ-ի հարցն օրակարգային կլինի նաև 2006թ.-ին: Դա, ինչ խոսք, կպայմանավորի նաև ժխտողականության մուտքը Թուրքիայի օրակարգ:

Այս հանգամանքն, անկախ դիրքերի սպառումից, անհրաժեշտ է դարձնում ժխտողականության հիմնադրույթների բացահայտումը: Բացահայտման առումով թերևս հատկանշական է դեկտ. 19-ին Ստամբուլում «Հայերի անհիմն պնդումների դեմ պայքարի ֆեդերացիայի» ASEF-ի կազմակերպած այսպես կոչված գիտաժողովը, որին, «Օզգյուր գյունդեն» թերթի վկայությամբ, պարտադիր է եղել պատմության ուսուցիչների մասնակցությունը: Մասնակիցներն, ըստ թերթի, ՀՅ-ի փաստին հակադրել են հետևյալ հակափաստարկները.

«Օսմանյան կայսրությունում հայերին վատահում էին պետական բարձր պաշտոններ, հետևաբար անիմաստ է պետության վատահոությունը վայելող ժողովրդին ցեղասպանության ենթարկել:

Հայերը պետք է դատապարտեն ոչ թե թուրքերին կամ Թուրքիային, այլ ԱՄՆ-ին, Գերմանիային, Անգլիային, Ֆրանսիային և Ռուսաստանին, որովհետև նրանց տեղահանության պատճառ դարձած պատերազմն այդ պետություններն են սկսել և զինել վերջիններին:

Առաջին համաշխարհային պատերազմը մեծ ողբերգություն էր, որի ընթացքում սպանվել է 40 մլն մարդ, որից միայն 2.5 միլիոնը զինվորականներ են, իսկ մնացածները՝ խաղաղ բնակիչներ:

Օսմանյան կայսրությունը գործել է հնչակյան և դաշնակցական հանցախմբերի դեմ, այլ ոչ թե հայ բնակիչների:

Թուրքիայում ի հայտ եկած զանգվածային գերեզմանների գերակշռող մեծամասնությունը պատկանում է հայերի զոհը դարձած թուրքերին և մահմեդականներին:

Օսմանյան վարչակազմը բանակի պահեստներից պարեն է տրամադրել տեղահանված հայերին: Ինչո՞ւ նրանց կոտորի:

Ինչ իմաստ ունի ավելորդ կռվի մեջ մտնել հայերի հետ, երբ կայսրությունը տարբեր ռազմաճակատներում պատերազմում էր 6 պետության դեմ:

Եթե 1.5 մլն հայ զոհվեր, ապա այսօր չպետք է ողջ մնար գեթ մեկ հայ:

ԱՄՆ գաղթող հայ տղամարդիկ իրենց հետ չեն տարել կանանց: Նյու Յորք և Բալթիմոր տեղափոխված 82.000 հայերի ճնշող մեծամասնությունը տղամարդիկ էին:

Համագործակցելով ռուսների հետ, հայերն սպանել են 530.000 թուրքի: Ամենայն հավանականությամբ, հայերի զոհն են դարձել նաև 300.000 սպանվածներ ևս, դեռևս ապացուցված չլինելու պատճառով վերջին թիվը չենք գումարում նախորդին:

Եվրոպական խորհրդարանները երկակի ստանդարտ են կիրառում հայկական կոտորածների հարցում:

Տեղահանության ընթացքում արժեքավոր իրերն իրենց հետ տանող հայերը ենթարկվել են ավազակախմբերի հարձակումներին, նրանց պաշտպանելու համար զոհվել են հարյուրավոր թուրք զինվորներ:

Օսմանյան կառավարությունն իրադարձությունների առնչությամբ ռազմական ատյանի առջև է կանգնեցրել 528 զինվորականի և ոստիկանի, 170 վարչական աշխատողի, 975 ավազակի, որոնցից 67-ը կախաղան է հանվել, իսկ 524-ն ազատագրվել է, անմեղ է գտնվել 227 մարդ, 674 մարդու գործը կարճվել է դատավարության ձգձգման պատճառով: Մի՞թե կարող է ցեղասպանություն իրագործել այն պետությունը, որը դատարանի վճռով պատժում է մեղավորներին»:

ՀՅ-ի հարցի ակտիվ վերարժարծումը Թուրքիայում հանգեցրեց թուրքական պաշտոնական թեզերի վիճարկմանը: Թվում է, թե դրանց «անվերջ հիմնավորումն» էլ պետք է վիճարկելի դարձնի այն հաստատությունների գործունեությունը, որոնք կատարում են հիմնավորման պետական առաջադրանքը:

11.05.2006

ՖԻԼՍՈՒՍՈՒԹԻՆԻՍՏԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՄԵՐԺԵԼ Է

ԺԵՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՏԺԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ

Չնայած դրան, օրինագծին շարունակում են հակադրել Թուրքիան և թուրք մրավորականները, որոնց թվում Հրանտ Դինքն ու Էթեն Մահճուլայանը

Երեկ Ֆրանսիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում քննարկման դրվեց «1915թ. ՀՅ-ի ժխտումը» պատճելի հանցանք համարող և ժխտողների համար 1 տարվա ազատագրկում ու 45.000 եվրո տուգանք նախատեսող օրենքի նախագիծը: Հոդվածը պատրաստելու պահին հայտնի դարձավ, որ հանձնա-

ժողովը ձայների մեծամասնությամբ մերժել է նախագիծը: Սակայն, ինչպես այդ մասին նշում է «CNN-Turk»-ը, անկախ նախագծի նկատմամբ հանձնաժողովի դիրքորոշումից, միևնույն է, դա մայիսի 18-ին կքննարկվի Ֆրանսիայի խորհրդարանի լիազումար նիստում:

Ի դեպ, որպեսզի նախագիծն օրենքի ուժ ստանա, պետք է հաստատվի նաև Ֆրանսիայի Սենատում: Չնայած հանձնաժողովում նախագծի մերժմանը, այնուամենայնիվ, Թուրքիայի քաղաքական շրջանակները մեծ են համարում դրա ընդունման հավանականությունը խորհրդարանում: Հավանականության հանգամանքն ստիպել է թուրքական իշխանություններին նախագծի դեմ ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ, իսկ իշխանություններին աջակցել են 9 թուրք մտավորականներ և Թուրքիայում գործող ֆրանսիական ֆիրմաների ղեկավարները:

Այս ամենի մասին «CNN-Turk»-ից բացի տեղեկացնում են թուրքական հանրային հեռուստատեսությունն ու համանուն NTV-ն: «Ազգն» էլ մայիսի 7-ին տեղեկացրել էր, որ Ֆրանսիայում գործող թուրքական զանազան միություններ նախորդ օրը ֆրանսիական տարբեր թերթերում գովազդային կարգով հրապարակել են բաց նամակ՝ կանխելու համար օրինագծի ընդունումը:

Նամակի հրապարակմանը հետևել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Մեհմեդ Դյուլգերի գլխավորած պատվիրակության գործուղումը Փարիզ, որի կազմում է ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցության պատգամավոր, նախկին դեսպան Օնուր Օյմենը: Թուրքական պատվիրակությունը ներկայումս բանակցություններ է վարում ֆրանսիացի խորհրդարանականների հետ:

Հարկ է սակայն նշել, որ մինչ Մեջլիսի պատվիրակության գործուղումը Փարիզ, մայիսի 8-ին ԹՀ-ի ԱԳՆ-ն խորհրդակցության նպատակով Անկարա էր կանչել ինչպես Ֆրանսիայում ԹՀ-ի դեսպան Օսման Քորույթուրքին, այնպես էլ Կանադայի դեսպան Այդեմիր Էրմանին: Վերջինս Անկարա էր կանչվել Կանադայի վարչապետ Ստեֆան Հարպերի ապրիլի 21-ի հայտարարության մեջ «Հայոց ցեղասպանություն» արտահայտությունն օգտագործելու առնչությամբ:

Համենայն դեպս, Փարիզի նկատմամբ Անկարայի դիրքորոշումը հետզհետե կոշտ բնույթ է ստանում, իսկ ֆրանսիական թերթերն, արձանագրելով այդ փաստը, նշում են, որ դիրքորոշման կոշտացումը կարող է հանգեցնել թուրքական շուկաներում Ֆրանսիայում արտադրված ապրանքների բոյկոտին: Այդ ընթացքում, ինչպես վկայում է թուրքական հանրային հեռուստատեսությունը, ապրիլի 9-ին Թուրքիայում գործող ֆրանսիական որոշ ֆիրմաների ղեկավարները հանդիպում են վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի

հետ: Նրանք վերոհիշյալ օրինագծի առնչությամբ իրենց համերաշխությունն են հայտնում Թուրքիայի վարչապետին և նրան հանձնում այն նամակի պատճենը, որն ուղարկել են Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակին: Հանդիպման վերջում Էրդողանը դիմելով ֆրանսիացի գործարարներին, ասում է. «Եկեք 10 օր ևս միասին աշխատենք և համատեղ ջանքերով խափանենք օրինագիծը»:

Ինչ վերաբերում է 9 թուրք մտավորականներին, որոնց մասին «CNN-Turk»-ի հետ նշում է նաև թուրքական NTV-ն, ապա նրանց թվում են Ահմեդ Ինսալը, Էլիֆ Շաֆաքը, Հալիլ Բերքթայը, Մյուգե Գյոչեքը, Ռազլի Զարաքոլուն, Մեծ եղեռնի 90-րդ տարելիցին նվիրված գիտաժողովի մասնակիցներ Բասքըն Օրանը և Մուրադ Բելգեն, ինչպես նաև մեր պոլսահայ հայրենակիցներ, «Ալոս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքըն ու «Ջաման» թերթի սյունակագիր հեղինակ Էթեմ Մահճուլայանը:

Վերոհիշյալ մտավորականներն օրինագծի դեմ բաց նամակ են գրել «Լիբերասիոնին», թե «անկախ նպատակներից, այս օրինագծի ընդունումը կվնասի պատմական հարցերի շուրջը մտքերի փոխանակությանը և ավելի կխոչընդոտի գործը նրանց, ովքեր Թուրքիայում փորձում են նպաստել համապատասխան գործընթացին»: Վերոհիշյալ օրինագիծն, ըստ նրանց, ոտնձգություն է նաև խոսքի և մտքի ազատության դեմ: Հատկանշական է, որ ֆրանսիական թերթն այդ նամակը հրապարակել է անվճար:

Ինչ ընթացք կունենա «1915թ. ՀՅ-ի ժխտումը» օրենքով պատժող նախագծի քննարկումները Ֆրանսիայի խորհրդարանում կամ ֆրանսիական Սենատն ինչպիսի՞ վերաբերմունք կցուցաբերի դրան, ցույց կտա ժամանակը: Պարզապես գիտենք, որ մայիսի 18-ին Ֆրանսիայի Սենատի լիազումար նիստում օրինագծի քննարկման օրը խորհրդարանի շենքի առաջ Հայ դատի հանձնախումբը ցույցի է պատրաստվում, իսկ Ֆրանսիայում գործող թուրքական միությունները նույն վայրում պատասխան ցույցով հայերին հակազդելու պատրաստակամություն են հայտնում:

12.05.2006

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ ԳԱՏԱԳԱՐՏՈՒՄ Է ՆԱԵՎ ԼՈՒԴՆԱԲԵՆԱԿ ԱՐԱ ՍԱՐԱՅՅԱՆԸ

Այն էլ՝ «Գորշ գայլերի» երբեմնի խոսափող «Ջաման» թերթում

Նախորդ համարում «Ազգը», հիմք ընդունելով թուրքական աղբյուրները, տեղեկացրել էր, որ Ֆրանսիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը մերժեց «1915թ. ցեղասպանության ժխտումը» պատժելի հանցանք համարող օրենքի նախագիծը: Նույն աղբյուրներն այնուհետև նշեցին, որ օրինագիծն

իրականում դրվել է իրավական հարցերի հանձնաժողովի օրակարգում և մերժվել առանց քննարկումների:

Հանձնաժողովի որոշումը պարտավորեցնող չէ, հետևաբար անկախ մերժումից օրինագիծը մայիսի 18-ին կքննարկվի և քվեարկության կդրվի Ֆրանսիայի խորհրդարանում: Թերևս դա է պատճառը, որ չեն դադարում օրինագծին հակազդելու թուրքական դրսևորումները:

Խոսքն առաջին հերթին վերաբերում է Փարիզ գործուղված ԹՀ-ի ազգային մեծ ժողովի պատվիրակության բանակցություններին, ԹՀ-ում գործող ֆրանսիական որոշ ֆիրմաների համար վարչապետ Էրդողանի կազմակերպած ընդունելությանը, «Լիբերասիոն» թերթում 9 մտավորականների հրապարակած բաց նամակին, ինչպես նաև Ֆրանսիայում և Գերմանիայում ԹՀ-ի դեսպաններին խորհրդակցելու նպատակով Անկարա կանչելու ԱԳՆ-ի գործելակերպին:

Երեկ դեսպանները վերադարձել են իրենց պաշտոնավարման վայրը: Դրան է նախորդել Թուրքիայի նախագահ Սեզերի նամակը Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակին: Ըստ «Հյուրիեթի», նամակում Սեզերը գոհունակությամբ է արձանագրել Շիրակի նպաստը թուրք-ֆրանսիական հարաբերությունների զարգացմանը, ընդգծել է պատմական խնդիրները պատմաբանների հայեցողությանը թողնելու անհրաժեշտությունը, ապա նշել, որ օրինագիծը հակասում է մտքի ազատության Ֆրանսիայի կարևորած սկզբունքին:

Նախագահ Սեզերը Ֆրանսիայի նախագահին հիշեցրել է «ցեղասպանության պնդումների առնչությամբ համատեղ հանձնաժողով ստեղծելու» ՀՀ-ին ԹՀ-ի արած առաջարկի մասին: Անկախ բովանդակությունից նամակում ԹՀ-ի նախագահը, այնուամենայնիվ, օգտագործում է «ցեղասպանություն» բառը: Ի տարբերություն նրան, ԹՀ-ում ՀՏ-ի ճանաչման հակումներով հայտնի թուրք մտավորականները, որոնց միացել են նաև Հրանտ Դինքն ու Էթեմ Մահճուպյանը, «Լիբերասիոնին» հղած նամակում, որի թուրքերեն տարբերակը հրապարակել է նաև «Ռադիկալ» թերթը, ոչ մի կերպ չեն հիշատակում ցեղասպանության մասին, նախընտրելով 1915թ. իրադարձությունները բնութագրել վայրագություն:

Այս նամակը մասնավոր մոտեցման կարիք ունի: Պարզապես ասենք, որ եթե վերոհիշյալ օրինագիծը դատապարտելու առումով Դինքն ու Մահճուպյանը միացել են թուրք մտավորականներին, ապա Պոլսո մեր հայրենակիցներին էլ միացել է Լոնդոնում գործող «Կոմիտաս» ինստիտուտի տնօրեն Արա Սարաֆյանը: Այլ կերպ՝ օրինագիծը թուրք գիտնականների հետ դատապարտել է նաև լոնդոնաբնակ մեր հայրենակիցը, ընդ որում դատապարտելու

համար նախընտրել է «գորշ գայլերի» երբեմնի խոսափող «Զաման» թերթը, պատասխանելով ապրիլի 11-ին Բյուրեսելում դրա հարցերին:

Մինչ պատասխաններին անդրադառնալը, «Զամանը» նշում է, որ Սարաֆյանը բուռն հակազդեցություն է ցուցաբերել ֆրանսիական օրինագծին: Նա միաժամանակ մտահոգություն է հայտնել, որ օրինագծի ընդունումը վերջ կտա Թուրքիայում (հայկական խնդիրների շուրջը) ծավալվող բանավեճերին, և ինքը սկզբունքորեն դեմ չէր լինի ստորագրել թուրք մտավորականների հրապարակած նամակը:

Սարաֆյանը նշել է, որ օրինագիծը Ֆրանսիայում օրենքի ուժ ստանալու դեպքում լուրջ վնաս կհասցնի ԵՄ հետ Թուրքիայի հարաբերություններին, դա կհանգեցնի ազգայնականության վերելքին, ինչի հետևանքով մեծապես կտուժի ժողովրդավարացման գործընթացը երկրում: Ըստ Սարաֆյանի, ինչպես հայ, այնպես էլ թուրք ազգայնականների շահերից բխող այդ իրավիճակը հարցի լուծմանը նպաստելու փոխարեն դա կդարձնի հարատև:

Սարաֆյանը պաշտոնական Փարիզից պահանջել է նախ հաշտվել իր անցյալի հետ և տարօրինակ է համարել օրինագծին առնչվող Ֆրանսիայի քայլը, պատճառաբանելով, թե այս երկիրը դեռևս Ալժիրի և Ռուանդայի խնդիրներ ունի: Նա Ֆրանսիային մեղադրել է Ալժիրում իրագործած ցեղասպանության համար ներողություն չխնդրելու և Ռուանդայի ցեղասպանությանն անմիջականորեն մասնակցելու մեջ:

Սարաֆյանը քննադատել է նաև հայկական սիյուռքին և Թուրքիային: Նա ընդգծել է, որ թուրքական կառավարությունները, մերժելով հայկական հարցի գոյությունը, «նպաստել են արմատական ազգայնականների հայկական ճակատի հզորացմանը»: Այնուհետև Սարաֆյանը ավելացրել է. «Բուն ողբերգությունն այն է, որ ներկայիս թուրքական կառավարությունը հայկական հարցի կարգավորման ուղղությամբ լուրջ ջանքեր է գործադրում և գրաքննության չի ենթարկում հայկական խնդիրների շուրջը երկրում ծավալվող բանավեճերը»:

Լոնդոնաբնակ մեր հայրենակից Արա Սարաֆյանի պատասխանները միանգամայն համընկնում են վերոհիշյալ նամակում թուրք մտավորականների արտահայտած տեսակետներին: Խնդիրը սակայն մտավորականներով չի սահմանափակվում, որովհետև «Լիբերասիոնում» հրապարակված նրանց նամակն էլ բովանդակային առումով գրեթե չի տարբերվում ժակ Շիրակին Թուրքիայի նախագահի հղած նամակից: Սա նշանակում է, որ թուրք մտավորականների նամակը ստորագրելու պատրաստակամությամբ Սարաֆյանը մեծապես բավարարում է նաև թուրքական պաշտոնական շրջանակների պահանջները:

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ Սարաֆյանը հայկական ազգայնականությունը նույնացնում է «գորշ գայլերի» նեոֆաշիստական ազգայնամոլության հետ, հավասարության նշան է դնում ՀՅԴ միջազգային ճանաչման համար պայքարող սփյուռքի և ցեղասպանության փաստը համառորեն ժխտող Թուրքիայի միջև, ճանաչման նախաձեռնությունները դիտարկում է որպես խոչընդոտ ինչպես Թուրքիայում հայկական հարցի լուծման, այնպես էլ երկրի հետագա ժողովրդավարացման համար և վերջապես ճանաչման նախաձեռնությունների հետ դատապարտում է նաև նախաձեռնության հեղինակներին, թերևս դրանով էլ դրական ազդանշաններ է հաղորդում պաշտոնական Անկարային և շահագրգիռ միջազգային ուժերին:

Ի դեպ, «Չամանը» վերջում նշում է, որ թուրքական արխիվներում աշխատելու Սարաֆյանի թույլտվությունը չեղյալ էր հայտարարվել: Նա, ըստ թուրքական թերթի, «չնայած սփյուռքի բոտն հակազդեցությանը, մասնակցեց Ստամբուլի համալսարանի կազմակերպած «հայկական գիտաժողովին» և վերջերս ստացավ «առանց նախապայմանի» արխիվներում աշխատելու իրավունք»:

03.06.2006

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՄ ՕՐԻՆԱԳԾԻ
ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԵՎ ՀՈՒՆԱՌԱՅՈՒՄ**

Դա նախադրյալներ կստեղծի, որ այս մոտեցումը միասնական դառնա ԵՄ-ի երկրների համար

Մայիսի 10-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի իրավական հարցերի հանձնաժողովը մերժել էր «1915թ. ՀՅԻ ժխտումը» պատժելի հանցանք համարող և ժխտողների համար մինչև մեկ տարի ազատազրկում ու 45.000 եվրո տուգանք սահմանող օրենքի նախագիծը: Մերժումը, սակայն, չէր խանգարել, որ մայիսի 11-ին հենց հաջորդ օրը Բելգիայում Լիբերալ բարենորոգչական կուսակցության պատգամավորները համանման օրինագիծ ներկայացնեն երկրի Սենատին, ըստ որի «ՀՅ-ն ժխտելու, չհաստատելու կամ կասկածի ենթարկելու համար նախատեսվում է 8 օրից մինչև 1 տարի կալանք և 26.500 եվրո տուգանք»:

Բելգիայի Սենատը դեռևս օրակարգ չի մտցրել օրինագիծը: Այդ ընթացքում Ֆրանսիայի Ազգային ժողովը մայիսի 18-ի լիագումար նիստում օրինագծի քվեարկությունը մինչև հոկտեմբեր, այսինքն՝ նոր նստաշրջանի հետաձգելու դիտավորությամբ քննարկումը միտումնավոր ձգձգել էր: Թուրքական թերթերը քվեարկության հետաձգումը համարելով հաղթանակ, գոհունակությամբ նշել էին, որ դա ձեռք է բերվել Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի,

իրանսիական կառավարության և հատկապես Ազգային ժողովի նախագահ Ժան-Լուի Դերբեի ջանքերով:

Հակառակ թերթերի, Թուրքիայի ԱԳՆ-ն, ի դեմս խոսնակ Թանի, դժգոհությամբ արձագանքեց օրինագծի քվեարկության հետաձգմանը, պատճառաբանելով, թե քվեարկության հետաձգումը դեռևս չի նշանակում օրինագիծը հանել Ֆրանսիայի խորհրդարանի օրակարգից: ԱԳՆ-ի դժգոհության պարագայում խնդիրը սուկ օրինագծի օրակարգում պահպանումը չէր, այլ այն գինը, որը Թուրքիան քվեարկությունը Շիրակի, նրա կառավարության և Դերբեի միջամտությամբ հետաձգելու համար վճարել էր կամ վճարելու է Ֆրանսիային:

Թե ի՞նչ գին է դա, դժվար է ասել: Բայց որ ՀՅ-ի ժխտումը օրենքով պատժելու նախաձեռնություն ցուցաբերվել է նաև Հոլանդիայում, անժխտելի փաստ է: Թուրքական «Չաման» թերթը հունիսի 2-ի համարում, անդրադառնալով դրան, նշում է, որ ՀՅ-ի ժխտման համար պատիժ սահմանող օրինագիծը, որը մշակել էր ներկայացուցիչների պալատում պատգամավորական երեք տեղ ունեցող Քրիստոնեական միասնության կուսակցությունը, վերջինի նախաձեռնությամբ ներկայացվեց խորհրդարան:

Օրինագիծը ժխտողների համար նախատեսում է մինչև մեկ տարի քանտարկություն և դրամական տույժ, որի չափը սահմանելու է դատարանը: Օրինագծի հեղինակներն, ըստ «Չամանի», ընդգծել են, որ դա ամենևին չի հակասում խոսքի և մտքի ազատության իրավունքին: Սա նշանակում է, որ վերջիններս դրանով Թուրքիային նախապես զրկել են ժխտողականությունը որպես պատժելի հանցանք դիտարկող օրինագծին հակադրվելու և հակադրությունը պատճառաբանելու հնարավորությունից:

Կասկածից վեր է, որ Բելգիայից հետո համանման նախաձեռնության ցուցաբերումը նաև Հոլանդիայում կխթանի օրինագծի առաջիկա քվեարկությունը Ֆրանսիայի Ազգային ժողովում, միաժամանակ որպես միասնական մոտեցման դրսևորում ընդդեմ ժխտողականության կնպաստի ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի հետագա ծավալմանը Եվրոպայում և նախադրյալներ կստեղծի, որ այս մոտեցումը միասնական դառնա եվրոպական երկրների համար:

27.06.2006

**«ՔԱՆԻ ԳԵՆ ԹՈՒՐԲԻԱՆ ՈՒՐԱՆՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԸ, ՀԱՐՅԸ ԼՈՒԾՈՒՄ ԶԻ ԳՏԻՒ»**

Հայրաբարում է Ամենայն հայոց կաթողիկոսը Պոլսոս հայոց պատրիարքարանում

«Ազգը», հետևելով Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ Ներսիսյանի Ստամբուլ կատարած այցին, տեղեկացրել էր, որ դա

սկսվել է միջադեպերով: Տիաճ միջադեպեր տեղի էին ունեցել նաև հունիսի 22-ին, երբ Վեհափառ հայրապետը զուգ պատրիարքների ուղեկցությամբ այցելել է Իշխանաց կղզիներից Հեյբեյիադայի Տրիադա վանքն ու հույն հոգևոր ճեմարանը: 2 առանձին խումբ ի նշան բողոքի ցույց էր կազմակերպել վերոհիշյալ կղզում:

Հարկ է սակայն նշել, որ ինչպես Ստամբուլի օդանավակայանի մուտքի մոտ, այնպես էլ Հեյբեյիադայում կազմակերպված ցույցերը դուրս են եղել Վեհափառ հայրապետի տեսադաշտից, ոչ էլ նա տեսել է ցուցարարներին: Այլ կերպ՝ թուրքական անվտանգության ծառայությունները թեև չեն կանխարգելել ցույցերը, բայց և այնպես «հոգացել են», որ ցուցարարները հանկարծ չանհանգստացնեն Ամենայն հայոց կաթողիկոսին:

Հակառակ միջադեպերին միանգամայն հաճելի է հույն ուղղափառ եկեղեցու հոշակումը «քույր եկեղեցի» Վատիկանում, առավել ևս դա Հռոմի պապ Բենեդիկտոս XVI-ն է անում, ընդ որում հունիսի 24-ին Ամենայն հայոց կաթողիկոսի Տիեզերական պատրիարք Բարդուղիմեոս Ա-ի հրավերով Ստամբուլ այցելելու պահին: Հաճելի պետք է համարել նաև նույն օրը Ստամբուլի Չրադան պալատում Վեհափառ հայրապետի պատվին տրված պաշտոնական ընթրիքը, որին ներկա են եղել պատրիարքական աթոռի միաբանները, քահանաները, պոլսահայ մտավորականները, բարերարներն ու ազգային գործիչները:

Ելույթ ունենալով ընթրիքին, Մեսրոպ արք Մուֆաֆյանը, Ամենայն հայոց կաթողիկոսի առաքելության շնորհիվ, ՀՀ-ի և սփյուռքի միացման մաղթանք է հայտնել, այնուհետև ընդգծել է, որ ՀԱԵ-ն իր 4 նվիրապետական աթոռներով մեկ է, սակայն իրականություն է նաև պարագաների և պատմության բերմամբ նրա ՀՀ-ում բնակվող անդամների կողքին շատ ավելի մեծ թիվ կազմող հավատացյալների առկայությունը, որոնք տարածված են աշխարհով մեկ:

Ի դեպ, աշխարհով մեկ տարածված հավատացյալներ ունեն հույն ուղղափառ, ռուսական, անգլիկան և այլ եկեղեցիները, էլ չենք խոսում կաթոլիկ եկեղեցու մասին: Քանի որ հավատացյալների առկայությունը տարբեր երկրներում միասնության առումով չի խանգարում այս եկեղեցիներին, ուստի ամենապատիվ պատրիարքի ընդգծված աչալրջությանը պետք է վերագրել սփյուռքահայերին Հայ առաքելական եկեղեցու միասնությանը հակադրելու նրա դիտավորությունը:

Դիտավորություն պետք է համարել նաև «Լրաբերի» արձագանքը Վեհափառ հայրապետի պատասխան ելույթին: Պոլսո հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթը, անդրադառնալով պոլսահայ համայնքի նվիրվածությանն ու կապվածությանը, Ամենայն հայոց կաթողիկոսի տված գնահատականին, գլանում է նշել, որ այլ

նվիրվածությունն ու կապվածությունն անմիջականորեն առնչվում է Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հետ:

Հատկանշական է, որ «Լրաբերը» գլացել է նշել նաև հունիսի 25-ին Պոլսո հայոց պատրիարքարանի Սբ. Աստվածածին աթոռանիստ մայր տաճարում, ինչպես Ամենայն հայոց կաթողիկոսի մատուցած պատարագի և քարոզի, այնպես էլ ժամերգության ավարտին պատրիարքարանում հրավիրված մամուլի ասուլիսի մասին: Պատարագի մասին նշում է թուրքական NTV-ին, իսկ մամուլի ասուլիսի՝ համանուն կենտրոնական թերթերը:

Ըստ «Միլիթերի» Վեհափառը ասել է, որ ՀՅ-ն պատմական իրողություն է և անհրաժեշտ է ճանաչել: «Ենի շաֆաքի» տվյալներով ի պատասխան թուրք լրագրողի, թե Ստամբուլում գիտաժողովներ են հրավիրվում ՀՅ-ի թեմայով և հարցի շուրջը գիտնականները ծավալում են բանավեճեր, նա ասել է. «Գիտնականները այդ հարցը 90 տարի շարունակ քննարկել են: Սակայն մեր ժողովրդի համար ցեղասպանությունը քննարկման ենթակա հարց չէ: Համանման գիտաժողովները մեզ համար ողջունելի են, եթե դրանք թուրք հասարակությանը հարցի առնչությամբ իրազեկելու նպատակ են հետապնդում: Սակայն եթե դրանք քաղաքականացված բեմադրություն են, ապա դրական արդյունքի չեն հանգեցնի»:

Թուրք լրագրողը հիշեցրել է, որ ՀՅ-ի հարցը քննարկվում է նաև արտասահմանում: Ամենայն հայոց կաթողիկոսը պատասխանել է նրան. «Ցեղասպանությունը համամարդկային խնդիր է, ուստի միանգամայն տրամաբանական պետք է համարել դա: Քանի դեռ Թուրքիան ուրանում է պատմական իրողությունը, հարցը լուծում չի գտնի: Եթե որևէ հարց ապացուցված է, ապա չեն քննարկում, այլ աշխատում են դրա ընդունման համար անհրաժեշտ քայլերի ուղղությամբ»:

Վերջում վեհափառ հայրապետը 5-օրյա համատեղ աշխատանքի համար շնորհակալություն է հայտնել թուրք լրագրողներին: «Ենի շաֆաքը» ասուլիսը լուսաբանել է «Կաթողիկոսը հաստատական է», իսկ «Միլիթերը»՝ «Կաթողիկոսը պահանջեց ճանաչել ցեղասպանությունը» վերնագրերով: Իսկ «Ձամանը», ըստ որի Վեհափառ հայրապետը բողոքի ցույցերի առնչությամբ հույս է հայտնել, որ հաջորդ անգամ այդպիսի ցույցեր չեն կազմակերպվի, ասուլիսին անդրադառնում է «Հայոց կաթողիկոսի սաղրիչ հայտարարությունը» վերնագրով:

Թուրքական այս թերթը նաև ավելացնում է. «Մինչ Գարեգին Բ-ն Թուրքիային մեղադրող հայտարարություն էր անում, Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մուֆաֆյանը ապրիլին Կեսարիայում «Էրֆինս» համալսարանի կազմակերպած գիտաժողովում «կատարված ողբերգության համար» արևմտյան մեծ տերությունների հետ մեղադրել էր հայկական կուսակցություններին և հայոց ազգային ժողովին:

Ավելին, համարելով միակողմանի մեղադրանքը ոչ բարոյական, Մեսրոպ Բ-ն ընդգծել էր. «Եթե մենք շովինիստ ենք և ուզվածս ենք նկարագրի տեր, ապա մեզ համար խիստ դժվար կլինի ճշմարտությունների մասին արտահայտվելը»:

11.01.2007

ԳԵՐՄԱՆԻԱՆ ԶԳՏՈՒՄ Է ՊԱՏԺԵԼԻ ԴԱՐՉՆԵԼ ԲՈՒՐ

ՑԵՂԱՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՐԱՑՈՒՄԸ ԵՄ-Ի ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Դա Հայոց ցեղասպանության հարցում եվրոպական այս կառույցի միասնական քաղաքականության դրսևորում է նաև

2000թ. նոյեմբերի 8-ին Ֆրանսիայի Սենատը որոշեց հաստատել 1915թ. ՀՅ-ն հրապարակավ ճանաչելու մասին Ազգային ժողովի դեռևս 1998թ. մայիսի 29-ին ընդունած օրինագիծը: 2001թ. հունվարի 29-ին Սենատի որոշումը ստորագրությամբ վավերացրին նախագահ Ժակ Շիրակն ու վարչապետ Լիոնել ժոսպենը: Այսպիսով, ՀՅ-ն օրենսդրորեն ճանաչվեց Ֆրանսիայում:

2006թ. հոկտ. 12-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը, որը ՀՅ-ի ճանաչման օրենքն ընդունել էր, օրենքով պատիժ սահմանեց դրա ուրացման համար: Թեև Գերմանիան խուսափում էր ՀՅ-ի ճանաչումից, մինչ այդ ընդամենը դատապարտել էր ցեղասպանությունը, այն էլ անուղղակի, այնուամենայնիվ հունվարի 1-ից, դառնալով ԵՄ նախագահող երկիր, սկսել է Հոլոքոստը ներառյալ բոլոր ցեղասպանությունների ուրացումը քրեորեն պատժելու նախաձեռնություն ցուցաբերել:

Երեկ այդ մասին կայքէջում տեղեկացրել է «Եվրոնյուսի» թուրքերեն տարբերակ «Աբհաբերը»: «Գերմանիան պահանջում է քրեորեն պատժել «ցեղասպանությունների» ուրացումը» վերնագրով «Աբհաբերը» տեղեկացնում է, որ պահանջը ներկայացված է ԵՄ-ի անդամ բոլոր երկրներին:

Սա նշանակում է, որ ՀՅ-ն օրենքով ճանաչելու և դրա ուրացման համար պատիժ սահմանելու Ֆրանսիայի որոշմանը Գերմանիան ոչ միայն արծագանքում է, այլև փորձում ֆրանսիական որոշումները դարձնել պարտավոր ԵՄ-ի համար: Գերմանական այս նախաձեռնությունը ՀՅ-ի հարցում ԵՄ-ի միասնական քաղաքականությունն ապահովելու հերթական դրսևորում է: Նկատի ունենալով Ֆրանսիայի հետ նաև Գերմանիայի առանցքային դիրքը այս միության կազմում, պետք է ընդգծել նաև միասնական քաղաքականության առումով գերմանական նախաձեռնության առանձնահատուկ նշանակությունը:

Ըստ «Աբհաբերի», ԵՄ- ում բոլոր ցեղասպանությունների ուրացումը պատժելի դարձնելու գերմանական նախաձեռնության մասին հայտարարել է Գերմանիայի արդարադատության նախարար Բրիջիտ Յուպրիսը: Նա ասել է, որ այս նախաձեռնությունը նպատակ է հետա-

պնդում հասնել բռնություն և ատելություն հրահրելու, ինչպես նաև ցեղասպանությունները ժխտելու նման ազգայնամուլ և օտարների նկատմամբ թշնամանք առաջացնող մոտեցումները պատժելու առնչությամբ ԵՄ-ի երկրներում գործող օրենքների գոնե նվազագույն ներդաշնակությամբ: Երբ նրան հարցրել են, թե այս նախաձեռնությունը ենթադրո՞ւմ է Հոլոքոստի և մյուս ցեղասպանությունների ուրացումը բնութագրել որպես հանցագործություն, Գերմանիայի արդարադատության նախարարը միանշանակ պատասխանել է. «Այո, ենթադրում են»:

31.01.2008

ՇՎԵՅԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԳՈՐԾ Է ՀԱՐՈՒՑԵԼ ԲՐԻՏԱՆԱՑԻ

ՊԱՏՄԱԲԱՆԻ ԳԵՄ

Պարճառը Հայոց ցեղասպանության հրապարակավ ուրացումն է

Ինչպես հունվարի 29-ին տեղեկացնում էր թուրքական BIA լրատվական գործակալությունը, Շվեյցարիայի դաշնային դատարանը Յյուրիխի դատախազության միջնորդությամբ «Հայերի ցեղասպանությունն ուրանալու» մեղադրանքով քրեական գործ է հարուցել բրիտանացի պատմաբան, Անկարայի «Բիլքենդ» համալսարանի դասախոս Նորման Սթոնի դեմ: Տեղեկության համաձայն, դատախազությունը դաշնային դատարան էր դիմել 2007-ի հունվարի 15-ին, ընդգծելով, որ Սթոնը շվեյցարական «Weltwoche» շաբաթաթերթի 2006-ի հոկտեմբերի 26-ի համարում հրապարակած հոդվածով ժխտել է ՀՅ-ի փաստը:

Ինչո՞վ պայմանավորել քրեական գործի 1 տարվա ուշացումով հարուցումը: Պարզվում է, դրա պատճառը Բանվորական կուսակցության նախագահ Դոլու Փերինչեքն է: Ինչպես հայտնի է, 2007-ի մարտի 9-ին Լոզանի քրեական դատարանը ՀՅ-ն որպես «միջազգային սուտ» բնութագրելու համար նախկին մտիստ, ապա և թուրքական գաղտնի ծառայությունների գործակալ Փերինչեքին դատապարտել էր 3 ամսվա ազատազրկման և տուգանել 12.000 շվեյցարական ֆրանկով:

Թեև Լոզանի դատարանը հետաձգել էր Փերինչեքի ազատազրկման վճռի ի կատար ածումը, ինչպես նաև տուգանքի 9.000-անոց մասնաբաժնի վճարումը, սակայն գործը կարճելու թուրք գործչի դիմումը նախ մերժվել էր Վուդի, ապա և դաշնային վճռաբեկ դատարանում: Այլ կերպ, Յյուրիխի դատարանը Սթոնի գործին ընթացք տալու համար սպասել էր Փերինչեքի գործով Շվեյցարիայի վճռաբեկ դատարանի եզրակացությանը:

Համենայն դեպս Յյուրիխի դաշնային դատարանը Նորման Սթոնի դեմ քրեական գործ է հարուցել շվեյցարական քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածով, որն ուժի մեջ էր մտել 2005-ի հունվարի 1-ից: Հոդվածը մինչև 3 տարվա ազատազրկում և

տուգանք է նախատեսում նրանց նկատմամբ, ովքեր կփորձեն կրոնական կամ էթնիկ պատկանելության համար նսեմացնել մարդկանց, վիրավորել նրանց արժանապատվությունը, ինչպես նաև կուրանան ու կժխտեն ինչպես ցեղասպանությունը, այնպես էլ մարդկանց դեմ կատարված ոճրագործությունը:

31.01.2008

ԼԻՈՆՈՒՄ «ԿԱՆԱՋՆԵՐԻ» ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿԻՑ ՀԱՆՎԵԼ Է ԹՈՒՐԲ

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՆՈՒՆԸ

Պարզվում է՝ այդ թեկնածուն Հրանտ Դինքի գինակից Բասքըն Օրանի դուստրն է

Մարտին Ֆրանսիայում տեղական իշխանության մարմինների ընտրություններն են: Այդ մարմիններում ընտրվելու համար տարբեր կուսակցություններից առաջադրվել են նաև ֆրանսաբնակ թուրք թեկնածուներ, որոնց թիվը 15-ի է հասնում: Թուրքիայի իշխանությունները, ինչ խոսք, եվրոպական երկրներում խրախուսում են թուրք թեկնածուների առաջադրումը և թուրքական տարբեր կազմակերպությունների միջոցով աջակցում նրանց:

Սակայն, հակառակ թուրքական իշխանությունների ջանքերին, ընտրություններում առաջադրվող թուրք թեկնածուները երբեմն բախվում են խոչընդոտների, ինչի հետևանքով դուրս են մղվում առաջադրվածների ցուցակից: Օրերս «Կանաչների» միությունը, որը ընտրություններին մասնակցելու Սոցիալիստական կուսակցության հետ դաշինք կազմած, ընտրացուցակից հանել էր Լիոնի արվարձաններից Վիյորբանում առաջադրված այդպիսի թեկնածուներից մեկին: Մինչդեռ ցուցակը հունվարի 12-ին հաստատել էր Վիյորբանի սոցիալիստ քաղաքապետ Ժան Պոլ Բրեն:

Ակամա հարց է ծագում ինչո՞ւ: Հարցին հունվարի 28-ի համարում պատասխանել էր «Չամանը», գրելով. «Վիյորբանի քաղաքապետ Ժան Պոլ Բրեն «ցեղասպանության» օգտին արտահայտվելու համար հայ համայնքի ներկայացուցիչների հետ էր ծանոթացրել «Կանաչներին» միության անդամ երիտասարդ կնոջ: Թեև հանդիպմանը թուրք գործիչը ճանաչել էր «ցեղասպանությունը», սակայն զգուշացրել էր համայնքի ներկայացուցիչներին, որ ճանաչման հայտարարությունը չի կարող հրապարակվել կրկնել, ինչի պատճառով նրա անունը հանվել էր քաղաքային խորհրդի համար առաջադրվողների ցուցակից»:

Թուրքական թերթը դա համարում է սկանդալ և միաժամանակ նշում, որ կատարվածի առնչությամբ զարմացած երիտասարդ թուրք կինը թեկուզ նեղ շրջապատում ՀՅ-ն ճանաչելու պատճառով որոշել է առայժմ զաղտնի պահել իր անունը: Ըստ երևույթին նա շատ արագ վերանայել է իր որոշումը: Այլապես նույն «Չամանը» հաջորդ օրվա

հունվ. 29-ի համարում չէր գրի, որ երիտասարդ թուրք կինը Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի պրոֆ. Բասքըն Օրանի դուստր Սըրմա Օրանն է: «Չամանի» հունվ. 29-ի համարի տվյալներով, Վիյորբանի քաղաքապետ Ժան Պոլ Բրեն ոչ միայն դուստր Օրանին ծանոթացրել է լիոնահայ համայնքի ներկայացուցիչների հետ, այլև պահանջել է Լիոնի ցեղասպանության հուշարձանի առջև հարգանքի տուրք մատուցել զոհերի հիշատակին: Միջնակարգ կրթությունն Անկարայում Շառլ դը Գոլի անվան ֆրանսիական դպրոցում ստացած Սըրմա Օրանը ավարտել է Լիոնի համալսարանը: Ներկայումս նա աշխատում է Լիոնի քաղաքապետարանում:

Իր դստեր հետ կատարվածը որպես «խայտառակություն» որակող պրոֆեսոր Բասքըն Օրանը, որը Հրանտ Դինքի սպանության տարեփոխի արարողություններին մասնակցելու համար հրավիրվել է Փարիզ, դա պայմանավորել է հակախլամականության, հակաթուրքականության դրսևորումներով: Նա չի անդրադարձել ՀՅ-ի ուրացման համար պատիժ սահմանող օրինագծին, որը Ֆրանսիայում ընդունվել էր անցյալ տարի, ինչպես նաև օրենքի տարածմանը Ֆրանսիայի բոլոր քաղաքացիների, առավել ևս տեղական իշխանության մարմիններում առաջադրվող իր դստեր վրա:

Ի դեպ, պրոֆ. Բասքըն Օրանը 2005-ին Երևանում մասնակցել է Մեծ եղեռնի 90-րդ տարեփոխին նվիրված միջազգային գիտաժողովին: Նա ոչ միայն հանգուցյալ Հրանտ Դինքի մտերիմ ընկերն է և սյունաշարի հեղինակ «Ակօսում», այլև գինակիցը, որովհետև պայքարել է Թուրքիայում ՀՅ-ի ճանաչման համար, պայմանով, որ ՀՀ-ն ու հայկական սփյուռքը, ելնելով «Թուրքիայում ժողովրդավարության ամրապնդման» հեռանկարից, զերծ մնան հարցը միջազգային ասպարեզում բարձրացնելու գայթակղությունից: Այս մոտեցումը, ըստ հանգուցյալ Դինքի մտերիմ ընկերոջ, ծանր կացության մեջ է դնում նաև այն թուրք մտավորականներին, որոնք Թուրքիայում որպես ցեղասպանություն են որակում 1915-ի իրադարձությունները:

17.03.2010

ԺԻՏՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐԲԵՐԻ ՍՊԱՆՈՒՄԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է

ԹՈՒՐԲԵԱՅԻ ՀԱԿԱՔԱՅԼԵՐԻ ՍՊԱՆՄԱՆԸ

Դա երկրի իշխանություններին մղում է փրամաբանությունից զուրկ սանձարձակ հայտարարությունների և անհավասարակշիռ գործողությունների

Ազգը նախավերջին համարում «Հիվանդագին արձագանք Շվեդիայի խորհրդարանի որոշմանը. չեղյալ է հայտարարվել Թուրքիայի վարչապետի այցը Ստոկհոլմ» վերնագրով հիշեցրել էր, որ մարտի 4-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին

հարաբերությունների հանձնաժողովում ՀՅ-ի օրինագծի ընդունումից հետո մարտի 11-ին ցեղասպանության ճանաչման բանաձևն ընդունեց Շվեդիայի խորհրդարանը, դրան նույն օրը հետևեց ՀՅ-ի բանաձևի ներկայացումը Իսպանիայի խորհրդարան:

Համանուն բանաձև ներկայացվել է նաև Մեծ Բրիտանիայի խորհրդարան, որն ապրիլի 30-ին քննարկման է դրվելու Համայնքների պալատում: Այլ կերպ, անկախ Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման արձանագրությունների ստորագրումից, ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացը հետզհետե ծավալվում է: Դա, ինչ խոսք, հանգեցնում է թուրքական ժխտողականության դիրքերի սպառնալու: Ստեղծված իրավիճակում թուրքական իշխանությունները փոխանակ վերանայելու ՀՅ-ի նկատմամբ որդեգրած ժխտողական դիրքորոշումը, ճանաչման գործընթացը կասեցնելու փորձեր են կատարում:

Քանի որ դրանց հիմքում դրվում է խորհրդարանի որոշման վրա վարչակարգի կամ կառավարության միջոցով ազդելու գործելակերպը, ուստի այդ փորձերն ակամա դառնում են տվյալ երկրի գործադիր և օրենսդիր իշխանություններին միմյանց հակադրելու միջոց և ձախողվում են:

Մինչդեռ խորհրդարանները, որպես ընտրվող մարմին, հաշվետու են ոչ թե կառավարության, այլ ժողովրդի առջև, և նրա կամքն են արտահայտում, իսկ կառավարությունները նշանակովի են: Որքան էլ նրանք պետության շահերն արտացոլեն, այնուամենայնիվ, հաշվետու են խորհրդարանի առջև: Եթե նույնիսկ Թուրքիային հաջողվի որևէ երկրի խորհրդարանում վարչակարգի կամ կառավարության միջամտությամբ կասեցնել ցեղասպանության բանաձևի ընդունումը, միևնույն է, այդ միջամտությունը չի կարող հարատև լինել, որովհետև օրինական հիմք չունի, այսինքն՝ ապօրինի է, պայմանավորված թուրքական կողմի հետ վարվող սակարկությունների արդյունքներով:

Թերևս դա է պատճառը, որ ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը թուրքական ժխտողականության դիրքերի հետ սպառում է նաև Թուրքիայի հակաքայլերը: Դա երկրում փակուղու առջև է կանգնեցնում ինչպես իշխանություններին, այնպես էլ ընդդիմությանը: Մինչ կառավարությունը նախազգուշացնում է ԱՄՆ-ին և Շվեդիային, թե հայկական բանաձևի ընդունումը կվնասի երկկողմ հարաբերություններին և բացասաբար կանդրադառնա Հայաստանի հետ նորմալացման գործընթացի վրա, ընդդիմությունը որպես փոխհատուցում պահանջում է ամերիկյան և շվեդական ընկերությունների գրկումը պետպատվերից և «Ինջիոլիք» ռազմաբազայի փակումը, ինչպես արվել է Թուրքիայի ազգային մեծ ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի մարտի 15-ի նիստում:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ում և Շվեդիայում հայկական բանաձևերի ընդունման առնչությամբ հանձնաժողովին պարզաբանումներ տալու նպատակով նիստին մասնակցող ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն պահանջներին պատասխանում է. «Ահաբեկչության (PKK-ի) դեմ պայքարում ԱՄՆ-ն մեծապես աջակցում է մեզ, հետևաբար չի կարող խնդրո առարկա լինել «Ինջիոլիք» ռազմաբազայի փակումը»:

Թերևս նա դրանով Թուրքիայի հակաքայլերի սպառնալուծության խոստովանություն է անում: Փոխադարձ մեղադրանքներով Թուրքիայում սրվում է իշխանություն-ընդդիմություն պայքարը: Այսպիսով, ՀՅ-ի հարցը ոչ միայն ներքաշվում է այդ պայքարի մեջ, այլև դրա սրման պատճառ է դառնում: Դա կաշկանդում է կողմերին, որին հետևում են տրամաբանությունից զուրկ սանձարձակ հայտարարություններ և անհավասարակշիռ գործողություններ:

Այդ գործողություններից թերևս ամենահատկանշականը, ինչպես նշել էինք նախորդ համարում, ՀՅ-ի հարցում «հստակ դիրքորոշում» որդեգրելու պահանջով Վաշինգտոնին դիմելու, որպեսզի ցեղասպանության բանաձևը չդրվի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի լիազումար նիստի օրակարգում, իսկ նախագահ Օբաման ապրիլի 24-ի ուղերձում «ցեղասպանություն» բառը չարտասանի, ԱՄՆ վարչակարգից գրավոր և բանավոր երաշխիքներ պահանջելու Անկարայի գործելակերպն է:

Ինչ վերաբերում է սանձարձակ հայտարարություններին, ապա դրանց մասին էլ մարտի 15-ի համարում վկայել է «Ռադիկալը»՝ գրելով. «Երբ ՀՅ-ի բանաձևն ԱՄՆ-ի գլխավորությամբ ընդունվեց արևմտյան մի շարք երկրների խորհրդարաններում, ԱԳ նախարար Դավութօղլուն, որին համեմատում էինք եվրոպացի պաշտոնակիցների հետ, ազգի հոգին դարձավ մեր գլխին: Ձեռնամուխ է եղել մեծ տերությունների առջև թուրքի ուժը ցուցադրելու սուրբ գործին: Սուր է ճոճում աջ ու ձախ, կախաղան է հանում և իջեցնում, ազգայնամոլությամբ նույնիսկ Օնուր Օյմենին է գերազանցում:

Ինչ է պատահել, մեծարգո տեր: Հայկական նախաձեռնությունից էիր խոսում, առաջնորդում էիր Հայաստանի պատմական հանդիպումը: Պատմության առջև անցկացրած ժխտողական ջղաձգումներով մեր հասարակությունը նմանվում է հասունության ընթացքը մերժող երեխային: Դավութօղլուն ասում է. «Թուրք ժողովուրդը տեր կանգնեց Հրանտ Դինքին: Եթե որևէ թուրք Հայաստանում նման ձևով մեռներ, մի՞թե Հայաստանը տեր կկանգներ այդ թուրքին»: Այսպիսի խեղված տրամաբանությամբ կարո՞ղ ես արդյոք խաբել աշխարհի որևէ երկրի: Ցավոք, թուրք ժողովուրդը տեր կանգնեց ոչ թե Հրանտին, այլ նրա աճյունին: Իսկ պետությունն էլ Հրանտին սպանողներին է տեր կանգնել:

Արտգործնախարարին լրացնում է վարչապետը. «Մենք մերժում ենք ցեղասպանության պնդումները, որովհետև մեր հայրերը չէին կարող ցեղասպանություն իրագործել», ասելով բացականչելիս, առանց զգալու, որ իր ասածները որևէ կերպ չեն առնչվում ո՛չ միջազգային, ո՛չ էլ մարդկանց միջև հարաբերությունների կարգավորման կամ հաղորդակցվելու պատրաստակամության տրամաբանությանը, իսկույն հոխորտում է. «Թուրքիան այս հարցերում զգայուն է, թույլ չի տա, որ իր արժանապատվության հետ խաղան»: Ինչո՞ւ: Որովհետև մեր հայրերը չէին կարող ցեղասպանություն իրագործել: Որքա՞ն համոզիչ, որքա՞ն գիտական խոսքեր են: Մինչդեռ նա վերջերս Դերսիմի ջարդից էր խոսում: Դա համարում էր պետության մեղքը և առերեսման կարիք զգացող աղետ: Ի՞նչ է ստացվում, երբ խոսքը վերաբերում է քրդերին, մեր հայրերը փոխադարձաբար կոտորած իրագործում են, երբ «գյավուրներին»՝ ապա հարցի էությունն իսկույն փոխվում է: Այսինքն՝ մահմեդականները կարող էին իրար կոտորել, սակայն քրիստոնյաներին մատով անգամ չեն դիպել: Ինչպես երևում է, մոտալուտ ընտրությունները իթթիհատական են դարձրել բոլորին»:

30.06.2010

**ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐԿ ԺՈՂՈՎԱԾՐԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՉԷ**

*Այլ՝ Թուրքիայում Հայոց ցեղասպանության ուրացման
հարցում պետական իշխանություն-ժողովուրդ համերաշխությունն ու
համադարձ հայապրացությունը*

Հունիսի 16-23-ը երևանում «Հրանտ Դինք» միջազգային հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպվել էր «Թուրքիա-Հայաստան լրագրողների երկխոսություն»: Այս ծրագրի շրջանակներում երևան այցելած մի խումբ լրագրողներ հունիսի 17-ին եղել էին «Ազգի խմբագրությունում: Վերջին օրը նրանք այցելել են նաև Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն:

Այստեղ նրանց հարցերին պատասխանել է կենտրոնի տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը, և կիսապաշտոնական «Անադոլու» գործակալության թղթակից Մեդաթ Շենայի վկայությամբ, նա ասել է, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները օրեցօր զարգանում են, երկու երկրների հարաբերությունների գործընթացն այլևս դուրս է եկել դյուրին և արագ կարգավորման հունից, սակայն կարելի է պաշտոնական բնույթ հաղորդել ոչ պաշտոնական հարաբերություններին, բացել սահմանները և մշակութային կապեր հաստատել: Ըստ Կիրակոսյանի, կողմերի միջև շարունակվում են դիվանագիտական գաղտնի շփումները, որոնք կհարատևեն

ամառվա ընթացքում, Հայաստանը շտապողականություն է դրսևորել՝ ակնկալելով թուրքական կառավարությունից ընդառաջ քայլ, հայ-թուրքական արձանագրությունները թուրքական կողմի համար ածանցվում են PKK-ի, Կիպրոսի նման խնդիրներին, իսկ հայկական կողմը դրանց տալիս է առաջնահերթ նշանակություն:

Կիրակոսյանն անդրադարձել է նաև ԱՄՆ նախագահի հետ Թուրքիայի վարչապետի վերջին հանդիպմանն, ասելով. «Մեծարգո էրդողանն ու Օբաման քննարկել են երկու երկրների հարաբերությունները արձանագրությունների վավերացումից անկախ կարգավորելու հարցը»:

Վերջում նա ավելացրել է. «Ներկայումս Թուրքիան Իսրայելին հակադրվող միակ երկիրն է տարածաշրջանում: ԹՀ-ի հետզհետե հզորացման դեպքում Հայաստանը էլ ավելի անկարևոր կդառնա, թեև ԹՀ-ի և ՀՀ-ի միջև փակ է սահմանը, սակայն մենտալիտետի սահմանները բաց են մնում: Սկսել ենք միմյանց ճանաչել, սովորում ենք մեր ընդհանուր պատմությունը: Սա ինքնին կարևոր ձեռքբերում է: Մտավոր սահմանի բացումը նախքան ֆիզիկականի բացումը չափազանց կարևոր է: Թուրքական կառավարությունը գերազնահատում է հայկական սփյուռքին, ընդ որում առանց հասկանալու: ԹՀ-ն ունի գաղտնի մի զենք, որը դեռևս չի օգտագործում: Կա նաև գաղտնի մի կամուրջ Երևանի ու Ստամբուլի միջև, և այդ կամուրջը միաժամանակ գործում է Ստամբուլի և Սփյուռքի միջև. դա պոլսահայությունն է: ԹՀ-ի պատմության մեջ առաջին անգամ երկրի կրթության նախարարը մասնակցեց ազգային փոքրամասնությունների վարժարանում կազմակերպված ավարտական հանդեսին: Սա շատ ուշագրավ երևույթ է, հայ համայնքին կարելի է ավելի արդյունավետ օգտագործել»:

Ռազմավարական և ազգային հետազոտությունների ազգային կենտրոնի տնօրեն Ռիչարդ Հովհաննիսյանի տեսակետները կարելի է ընդունել վերապահումներով միայն: Այն առումով, որ Թուրքիան տարածաշրջանում Իսրայելին հակադրվող միակ պետությունը չէ: Մինչ այդ Իրանն ու Սիրիան են հակադրվել, և վերջիններիս հակադրությունն ունի տասնյակ տարիների վաղեմություն: Պարզապես պաշտոնական Վաշինգտոնի համար նախընտրելի է Իսրայելին հակադրվողի դերում տեսնել Թուրքիային:

Շեղահետե հզորացման դեպքում ԹՀ-ն կդառնա մրցակից Հարավային Կովկասում հանուն ազդեցության միմյանց հետ մրցակցող ԱՄՆ-ի, ԵՄ-ի և Ռուսաստանի համար, իսկ դա կհանգեցնի որպես կանխարգելիչ գործոն ՀՀ- ռազմավարական նշանակության աճին, հատկապես Ռուսաստանի պարագայում, քանի որ տարածաշրջանում ռուսական ներկայությունը ինքն է ապահովում:

Թուրքական կառավարությունն իրականում չի գերազնահատում Սփյուռքին, ընդամենը գերազնահատելու տպավորություն է ստեղծում, որ Սփյուռքի ուռճացված կարողություններով քողարկի ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի հետզհետե ծավալումն ու թուրքական ժխտողականության դիրքերի սպառումը:

Նախքան միմյանց ճանաչելու և ընդհանուր պատմությունը միասին սովորելու մասին խոսելը, կարծում ենք, պետք է հաշվի առնել ցեղասպանության ուրացման հարցում Թուրքիայի պետական իշխանության և թուրք հասարակության միջև առկա համերաշխությունն ու հայերի համատարած կոտորածներին թուրքական ժողովրդական զանգվածների սիրահոժար մասնակցությունը, ինչպես նաև անմեղ կանանց և երեխաների նկատմամբ մարդասպան այս ոհմակների դրսևորած անասելի վայրագությունը:

Այլ կերպ, խնդիրը հայ և թուրք ժողովուրդների ընդհանուր պատմությունը չէ, այլ Թուրքիայում ՀՅ-ի հարցին պետության և ժողովրդի ժխտողականության դիրքերից ընդհանուր մոտեցումը: Ինչ վերաբերում է պոլսահայության «գաղտնի զենքին», թուրքական պետությունը այդ զենքը միշտ էլ օգտագործել և օգտագործում է: Պարզապես երկրում արմատակալած հայատյացությունն ու պետական հասարակական շրջանակների «հայկական դավադրության» որոնումները սահմանափակում են օգտագործման արդյունավետությունը: Կարծում ենք, նախքան օգտագործելը Թուրքիան պետք է հրաժարվի «դավադրության» որոնումներից, պոլսահայությանը ձերբազատի պատանդի կարգավիճակից և հաղթահարի հայատյացությունը:

15.07.2011

«ԹՈՒՐԻՔԻԱՆ ԱՄՆ-ՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱՏՐՈՒՄ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ»

Հայրապարտում է Թաներ Աբջամը և փոխադարձաբար մեղադրվում

Ամերիկաբնակ Թաներ Աբջամը այն հազվագյուտ թուրք պատմաբաններից է, որը ոչ միայն ՀՅ-ի հարցին նվիրված ուսումնասիրություններ է կատարում, այլև թուրքական սպառնալիքներն անտեսելու գնով ամեն կերպ պայքարում է Թուրքիայում ՀՅ-ի ճանաչման համար: Անցյալ ամիս նա, մասնակցելով Արիզոնայի «Գլենդ» հանրային գրադարանում կազմակերպված միջոցառմանը, ինչպես հուլիսի 13-ին նշել է «Միլիտերը», հայտարարում է, որ Թուրքիան ցեղասպանության ժխտողականության տարածումը խրախուսելու համար փողեր է բաժանում ամերիկացի որոշ գիտնականներին:

Աբջամը ասել է, որ ԱՄՆ-ում թուրքական կառավարությունը շատ ագրեսիվ ու համակարգված քարոզարշավ է ծավալում, դեկտեմբերին ինքը եղել է Թուրքիայում և հանդիպել Թուրքիայի ԱԳՆ-ի հետ համագործակցող մի անձնավորությանը, որն էլ իրեն ասել է. «2004-2005-ին ամերիկացի մի պրոֆեսոր հանդիպման ընթացքում թուրք պետական գործիչներին զգուշացրեց, որ ցեղասպանության հայկական թեզերի դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցը դրանց գիտական աշխատություններով հերքումն է»: Ըստ Աբջամի, Թուրքիայի ԱԳՆ-ն հավանություն է տվել այս մտքին և հսկայական գումարներ է ուղարկել ԱՄՆ:

Այդ անձնավորությունը Թուրքիայից վարձատրվող գիտնականների անուններն է տվել Աբջամին, որն էլ առանց անուններ տալու ընդգծել է, որ վարձատրման գործարքին վերաբերվող փաստաթղթերը Թուրքիայի ԱԳՆ-ի արխիվներում են: Աբջամը թերևս նշել է Մայքլ Գյունտերի անունը, որն իր վերջին աշխատության մեջ արտահայտվելով 600.000 հայի մահվան մասին, այդուհանդերձ գրել է, որ դա ցեղասպանություն չէր: Ի դեպ, Գյունտերի գրքի մասին զովեստով են խոսել այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Հաբան Յավուզը, Գյունտեր Լևին, Ջերեմի Սոլթը, Էդվարդ Էրիկսոնը, որոնք մեղադրվում են Թուրքիայի ԱԳՆ-ից գումարներ ստանալու մեջ:

Որքան էլ Աբջամը Գյունտերից բացի այլ անուններ չնշի, այնուամենայնիվ «Վաթանը» հեռախոսակապ է հաստատել Թուրքիայից աշխատավարձի կարգով վարձատրվող այն գիտնականների հետ, որոնց անունից թուրքական թերթի հարցերին պատասխանել է Յուբահ համալսարանի արտաքին հարաբերությունների բաժնի աշխատակից դոկտ. Հաբան Յավուզը:

Նա, ինչպես հուլիսի 14-ին գրել է «Վաթանը», մասնավորապես ասել է. «Գյունտերի վերջին գիրքը խիստ անհանգստացրել է Թաներ Աբջամին, որովհետև հերքում է նրա թեզերը: Միաժամանակ ցույց է տալիս, որ Աբջամը ինչպես է խեղաթյուրում հայկական պնդումներին առնչվող աղբյուրները: Որոշել ենք դատական միջոցների դիմել Աբջամի դեմ, պայմանավորվելով այն դատապաշտպանի հետ, որը դատարանում շահել էր սփյուռքահայերի դեմ Լևինի դատը: Մենք մեր աշխատավարձը համալսարանից ենք ստանում և որևէ առնչություն չունենք ԹՀ-ի ԱԳՆ-ի հետ: Իսկ Աբջամը, բոլորին է հայտնի, աշխատավարձ է ստանում սփյուռքահայ արմատական մի կառույցից: Աբջամը մեզ մեղադրելիս դարձնում է դաշնակների և հնչակների նշանառության թիրախ: Մեր կյանքը վտանգված է: ԱՍԱԼԱ-ի նման կառույցներ ԱՄՆ-ում աճում են, իսկ հայկական սփյուռքը հետզհետե դառնում է ավելի արմատական: Աբջամն աշխատատես անձնավորություն է, սակայն կատաղի ցատում կա նրա մեջ: ԹՀ-ում բանտարկված լինելու

պատճառով ատելությամբ է լցված թուրքական հասարակության և թուրքերի պատմության դեմ: Թերևս այդ ցասումն էր պատճառը, որ կինը լքեց նրան: Աքջամը լիովին փոխհատուցում է սխյուռքից ստացած գումարը: Ամերիկայում դուք չեք գտնի սխյուռքահայերի ֆինանսավորած մեկ այլ անձնավորություն, որն Աքջամի պես կրակոտ լինի ցեղասպանության թեզը պաշտպանելու հարցում»:

04.02.2012

**ՊԱՏՇԱԿ ԶԷ, ՈՐ ՖՐԱՆՍԻԱՆ ՀՐԱՄԱՐՎԻ ՄԵՆԱՍԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ,
ԱՌԱՎԵԼ ԵՎՍ՝ ԸՆԿՐԿԻ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԱՌՁԵՎ**

Հունվարի 23-ին Ֆրանսիայի Սենատը ձայների գերակշռող մեծամասնությամբ ընդունեց ցեղասպանությունների, այդ թվում՝ ՀՅ-ի ժխտումը քրեականացնող օրինագիծը: Ենթադրվում էր, որ հունվարի 30-ին օրինագիծը կներկայացվի Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին, նա կստորագրի, որից հետո կիրառարակվի պաշտոնաթերթում և օրենքի ուժ կստանա: Այդ դեպքում արդեն ենթակա չէր լինի Սահմանադրական դատարանում բողոքարկման:

Սակայն, հակառակ ենթադրության, հենց հունվարի 30-ին Սենատի ընդունած օրինագիծը 77 սենատորների ստորագրությամբ, որոնց միացել են նաև Ֆրանսիայի Ազգային ժողովի 65 պատգամավորներ, բողոքարկվեց Սահմանադրական դատարանում: Օրինագծի ընդունման առնչությամբ Ֆրանսիային և ֆրանսիացիներին ամոթանք տվող, իսկ նախագահ Սարկոզիին ամենասանձարձակ արտահայտություններով անձնական վիրավորանք հասցնող Թուրքիայի ղեկավարների մոայլ դեմքը դրա բողոքարկման պարագայում միանգամայն պայծառացավ:

Ինչպես թուրքական լրատվամիջոցներն են նշել, ԹՀ-ի Ազգային մեծ ժողովի նախագահ Ջեմիլ Չիչեքը, նկատի ունենալով օրինագծի բողոքարկման դիմումը, դա բնութագրել է որպես խոսքի ազատության սկզբունքին հետամուտ լինելու դրսևորում և դրական զարգացում:

Դրա առնչությամբ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ասել է. «Համոզված եմ և հույսով, որ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը ողջամտություն կդրսևորի և կհանգի այնպիսի եզրակացության, ինչը չի հակասի Ֆրանսիայի արժեքներին, ե՛ս սկզբունքներին և խղճի խայթ չի առաջացնի»:

Համենայն դեպս, Ֆրանսիայի Սահմանադրական դատարանն ընդունել է բողոքարկման դիմումը: Հետևաբար 30 օրվա ընթացքում նա կամ պետք է մերժի դիմումն ու օրենքի ուժ ստանա օրինագիծը, կամ բողոքն ընդունի և չեղյալ հայտարարի Սենատի որոշումը, կամ էլ փոփոխություն մտցնի օրինագծի տեքստում, որ ելման կետ վերադարձնի օրինագծի ընդունման գործընթացը:

Բողոքն ընդունելու դեպքում ՄԴ-ն հակադրվելու է Ֆրանսիայի Ազգային ժողովին, Սենատին և կառավարությանը: Քանի որ երկրում գործում է Հոլոքոստի ժխտումը պատժող օրենք, ուստի նա երկակի ստանդարտ է կիրառելու Հոլոքոստի ու ՀՅ-ի նկատմամբ, թերևս դրանով էլ, որպես խտրականության դրսևորում, ոտնահարելու է մարդու իրավունքները, հարվածի տակ դնելով ֆրանսիական կառավարության վարկն ու Ֆրանսիայի միջազգային հեղինակությունը:

Ի՞նչ որոշում կընդունի Սահմանադրական խորհուրդը օրինագծի առնչությամբ, ցույց կտա ժամանակը: Բայց որ օրինագիծը մերժելու դեպքում մերժումն աշխարհում կվերագրվի ոչ թե Սահմանադրական դատարանին, այլ՝ անմիջականորեն Ֆրանսիայի Հանրապետությանը, միջազգային հանրությունը մերժումը կընկալի Ֆրանսիայի ընկրկումը ԹՀ-ի առջև, Ֆրանսիան կհեղինակագրվի և դա հատկապես նկատելի կլինի Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, ակնհայտ է:

Այլ կերպ, Ֆրանսիան մեծ տերություն է: Հետևաբար նրան պատշաճ չի լինելու Ազգային ժողովում, ապա Սենատում ընդունված օրինագծից հրաժարվելը, առավել ևս տեղի տալը Թուրքիայի ճնշումներին: Թերևս դա է ստիպել Նիկոլա Սարկոզիին նախարարների խորհրդի նիստում հայտարարել, որ Սահմանադրական դատարանում խթե օրինագիծը մերժվի, ապա ինքը ձեռնամուխ կլինի նոր օրինագծի մշակման: Միաժամանակ նա հիշեցրել է Հոլոքոստի ժխտման համար երկրում պատիժ սահմանող օրենքի գործունեության մասին:

Թեև ցեղասպանությունների, այդ թվում՝ ՀՅ-ի ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունումով Ֆրանսիան ստանձնում է ժխտողականության դեմ պայքարի առաջամարտիկի դերը աշխարհում, սակայն ընդունման գլխավոր պատճառը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման նկատմամբ նրա, ինչպես նաև եԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող մյուս երկրների՝ ԱՄՆ-ի ու Ռուսաստանի, ԵՄ-ի և առհասարակ միջազգային հանրության շահագրգռություններն են, եթե, իհարկե, ընդունենք, որ միջազգային հանրություն ասելով պետք է հասկանալ միջազգային ուժերին:

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ սեփական պատմության հետ Թուրքիայի առերեսումը Հայաստանի և Թուրքիայի միջև միջպետական առողջ հարաբերություններ հաստատելու նախապայմանն է: Դա հավանաբար ամբողջությամբ չի վերացնի, բայց գոնե կնպաստի, որ թուլանա հայ ժողովրդի անվստահությունը թուրք ժողովրդի նկատմամբ, որն առաջացել է ոչ միայն Հայոց ցեղասպանությանը թուրքական ժողովրդական զանգվածների անմիջական մասնակցությամբ, այլ՝ ցեղասպանության ժխտողական հարցում իշխանություններին թուրք հասարակության ցուցաբերած անվերապահ համերաշխության պատճառով:

Ակնհայտ է, որ ֆրանսիական օրինագիծը սպառում է ՀՅԼ հարցում Թուրքիայի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականության դիրքերը: Դիրքերի սպառման պայմաններում թուրքական պետությունը ակամա զրկվում է ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին պաշտոնական թեզ հակադրելու և ժխտողականության միջոցով գործընթացի ծավալումը կասեցնելու հնարավորությունից: Դրանով միաժամանակ սահմանափակվում է նաև Թուրքիայի սեփական պատմության հետ առերեսումից խուսափելու հնարավորությունը և նա ակամա կանգնում է պատմական իրողության հետ հաշտվելու և այդ իրողությունը պաշտոնապես ճանաչելու փաստի առջև:

08.02.2012

ՅՅՈՒՐԻՍԻ ԴԱՏԱՍԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ Ե ՄԿՍԵԼ ՆԱԽԱՐԱՐ ԲԱՂՉԻ ԴԵՄ

Թուրքիայի խնդիրը, սակայն, ոչ այնքան նախաքննությունն է, որքան ժխտողականության քրեականացման փարածումը եվրոպական այլ երկրներում

Հունվ. 28-ին, Երբ ավարտվել են Տնտեսական համաշխարհային ֆորումի աշխատանքները, Թուրքիայի ԵՄ գծով նախարար և գլխավոր բանակցող Էգեմեն Բաղըշը Դավոսից անցել է Յուրիխ և այնտեղ ի պատասխան ֆրանսիական օրինագծին առնչվող հարցին, հայտարարել է. «Այդ մեծարգո վարչապետն արդեն ասել է այն, ինչ անհրաժեշտ էր: Ֆրանսիայի Սենատի որոշումը մեզ համար ոչինչ է: Որքան գիտեմ, այսպես կոչված ցեղասպանության ժխտումը քրեականացրել է նաև Շվեյցարիան: Այսօր ես Շվեյցարիայում եմ և ասում եմ, որ 1915-ի իրադարձությունները ցեղասպանություն չեն: Թող գան և ձերբակալեն ինձ»:

Թեև Բաղըշին չեն ձերբակալել, սակայն Յուրիխի դատախազությունը նախաքննություն է սկսել նրա դեմ: Այս մասին փետրվարի 6-ի համարում գրել է «Նյու Յուրիխեր ցայթունգ» թերթը, ընդգծելով, որ նախաքննության համար հիմք է ծառայել շվեյցարահայ համայնքի բողոքը:

Յուրիխի պետական դատախազ Քրիստինե Բրաունշվայգը հաստատել է թուրք նախարարի դեմ նախաքննություն սկսելու տեղեկությունը: Նա, ինչպես թուրքական «Եվրոակտիվ» կայքն է նշում, հայտարարել է. «Անցյալ շաբաթ դիմում ստացանք, որտեղ նշվում էր, որ պրոն Բաղըշը խախտել է Շվեյցարիայի քրեական օրենսգրքի ռասիզմին առնչվող 261-րդ հոդվածը: Դատախազությունը լուրջ ընդունեց դիմումը և նախաքննություն սկսեցինք: Հիմա պարզում ենք՝ Էգեմեն Բաղըշը ժխտե՞լ է ցեղասպանությունը, թե՞ ոչ:

Միաժամանակ ճշտելու ենք՝ նա ունի՞ դիվանագիտական անձեռնմխելիություն: Եթե պարզվի, որ նա օրենքի խախտում է կատարել և չունի դիվանագետի անձեռնմխելիություն, ապա նրա դեմ քրեական գործ ենք հարուցելու»:

Բաղըշի դեմ Յուրիխի դատախազության նախաքննությունը բռուն հակազդեցություն է առաջացրել Թուրքիայում: Փետրվարի 6-ին բացատրության պահանջով արտագործնախարարություն է հրավիրել Թուրքիայում Շվեյցարիայի դեսպանը: Դրան հետևել են Շվեյցարիային դատապարտող ելույթները:

Թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, փոխվարչապետ Բեքիր Բոզդաղն ասել է. «Փաստը ցույց է տալիս, թե այդ երկրում որքան թերի են իրավական պետության և ժողովրդավարության ըմբռնումները: Մի՞թե նախարարը չի կարող տեսակետ արտահայտել: Սա ի՞նչ տխմարություն է: Բաղըշն անկախ պետության նախարար է: Ինչպես երևում է այդ երկիրն առանձնապես չի հանդուրժում ազատությունները: Բայց ոչինչ, կտվորեն»:

Նրան հավելել է «Արդարություն և բարգավաճում» կուսակցության փոխնախարար Օմեր Չելիքը, նշելով. «Մեծարգո Բաղըշը պարզապես կարծիք է հայտնել: Թուրքիայի Հանրապետության նախարարի դեմ հարցաքննությունը սկսելը դատախազի գործը չէ: Ըստ երևույթին, դատախազը կարծում է, թե ինքը ինկվիզիցիայի դատարանի նախագահն է»:

Ինչ վերաբերում է Բաղըշին, ապա նա հետևյալ կերպ է արձագանքել. «Գործը դեռ նախաքննության փուլում է: Պաշտոնական որևէ գրություն չեմ ստացել: Այդ մասին իմացել եմ մամուլից: Եթե Շվեյցարիան որոշել է բեմադրություն կազմակերպել, թող իմանա, մենք այդ թատրոնում դեր չենք ստանձնելու: Թող Յուրիխի դատախազությունն իզուր ժամանակ չվատնի: Ես Թուրքիայից կօգնեմ նրանց: Ես Յուրիխում ասել եմ, որ 1915-ի իրադարձությունները ցեղասպանություն չեն: Եթե հարցնելու լինեն, ապա հաջորդ այցերի ժամանակ Շվեյցարիայում նույնն եմ կրկնելու: Դեռ լույս աշխարհ չի եկել այն ուժը, որն ի վիճակի լինի ձերբակալել Թուրքիայի Հանրապետության նախարարին: Շվեյցարական առաձն ասում է. «Շատ խոսում է նա, ով քիչ է մտածում»: Ցավոք, քիչ են մտածում ոչ միայն Շվեյցարիան, այլ եվրոպական մի շարք երկրներ: Շվեյցարիան ԵՄ անդամ չէ, հետևաբար նրա որոշումը չպետք է վերագրել ԵՄ-ին»:

Որքան էլ թուրք պետական գործիչները փորձեն հոխորտալ Շվեյցարիայի վրա, Յուրիխի դատախազության նախաքննությունը ԵՄ-ի գծով նախարար Բաղըշի դեմ լուրջ հարված է հասցնում թուրքական ժխտողականությանը և հակակշռում այն ճնշումները,

որոնք ՀՅ-ի ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունման համար Թուրքիան գործադրում է Ֆրանսիայի վրա:

Այս նախաքննությունը, ամենայն հավանականությամբ, օրինագծի բողոքարկման դիմումը քննարկելիս, նախագոյական ազդակ կհանդիսանա նաև Ֆրանսիայի Սահմանադրական դատարանի համար: Թուրքիայի խնդիրը, սակայն, ոչ այնքան Բաղըջի դեմ Շվեյցարիայում դատախազության սկսած նախաքննությունն է, որքան դրանով Ֆրանսիայի Սենատի ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ ընդունելու որոշման ամրապնդումն ու դրա եվրոպական այլ երկրներում տարածման հավանականությունը:

Թերևս այդ առումով հատկանշական պետք է համարել թուրքական «Սթար» թերթի երեկվա հրապարակումը, որտեղ մատնանշված է. «Գուցե Գերմանիան, լինելով ցեղասպանության հանցանքը գործած առաջին երկիրը պատմության մեջ, չհետևի Ֆրանսիայի օրինակին: Սակայն կանցելը Անգելա Մերկելը թե ու թիկունք տալով Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին, ցույց է տալիս, որ կանգնած է ֆրանսիական օրինագծի թիկունքում: Եթե Սահմանադրական դատարանը Ֆրանսիայում չեղյալ չհայտարարի օրինագիծը, ապա նրա օրինակին կհետևեն Ավստրիայի նման Գերմանիայի ուղեծրում գտնվող ԵՄ-ի երկրները»:

01.03.2012

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԻ ԽՆԴԻՐԸ ԽՈՍԹԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՉԷ

Այլապես այդ սկզբունքը կտարածվեր նաև Հոլոքոստի ժխտման, ֆաշիզմի կամ նացիզմի քարոզչության վրա

Փետրվարի 26-ին Ստամբուլի «Թաքսիմ» հրապարակում Խոջալուի, այսպես կոչված, կոտորածի պատրվակով տասնյակիազարավոր թուրք ազգայնամոլներ, ադրբեջանցի հրոսակների մասնակցությամբ կազմակերպված հանրահավաքը վերածեցին հայատյացության ցույցի, բարձրացնելով «Հյուսիսն ու հարավը միանա, Հայաստանը՝ վերանա», «Այսօր «Թաքսիմում», վաղը՝ Երևանում. մի օր գիշերով հանկարծակի կգանք», «Ղարաբաղի կամավոր զինվորներն ենք», «Այն ընդ ական, ատամն ընդ ատաման. վրեժխնդրություն», «Հրանտի վիժվածքները մեզ չեն ընկճի», «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» մակագրությամբ ցուցապատառներ:

Վարչապետ Էրդողանի կառավարությունը, ապահովելով հանրահավաքին ՆԳ նախարար Իդրիս Նաիմ Շահինի և Ստամբուլի նահանգապետ Հուսեյն Ավնի Մուլթուփի մասնակցությունը, փաստորեն թագադրեց հային հրապարակավ վիժվածք անվանող թուրք-ադրբեջանական ստահակների խառնամբոխին:

Մինչ առաջադեմ թուրք մտավորականները Խոջալուի «կոտորածի» պատճառաբանությամբ հանրահավաքը հայերի նկատմամբ ռիսկալիության ցույցի վերածելու համար դատապարտում էին Էրդողանի կառավարությանը, իսկ Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղի՝ ընդդեմ ռասիզմի և խտրականության հանձնաժողովը, ինչպես նախարար Շահինի, այնպես էլ հանրահավաքի կազմակերպիչի դեմ քրեական գործ հարուցելու պահանջով դիմում էր ներկայացնում դատարան, լրացավ Սումգայիթի ջարդերի սկզբնավորման 24-րդ տարելիցը:

Հենց այդ օրն էլ՝ փետրվարի 28-ին, Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը խոսքի ազատությունը սահմանափակելու պատճառաբանությամբ չեղյալ համարեց ցեղասպանությունների, այդ թվում՝ ՀՅ-ի, ժխտումը քրեականացնող օրինագիծը: Դրանով օրինագծի ընդունման գործընթացը վերադարձավ ելման կետ: Թեև նախագահ Նիկոլա Սարկոզին կառավարությանը հանձնարարել է օրինագծի նոր տեքստ պատրաստել, սակայն առջևում նախագահական ընտրություններն են, հետևաբար մարտի 6-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը, ապա և Սենատը արձակուրդ են գնում:

Այլ կերպ, օրինագիծը չեղյալ հայտարարելու որոշմամբ, Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը գոնե մինչև նախագահական ընտրությունների ավարտը Անկարային ազատում է հոգսերից: Սումգայիթի ջարդերի տարելիցի օրը ընդունված այս որոշումն Անկարայում ընկալվեց որպես հաղթանակ, ոգևորեց հայ սպանելու համար մարդասպան ստահակին ազգային հերոս հռչակող ադրբեջանցիների ոհմակին և մեծ գոհունակություն պատճառեց Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուին:

Դավութօղլուն որոշման առնչությամբ ողջունեց Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդին, դա վերագրեց ֆրանսիական պետության միջազգային հեղինակությունը վտանգող և երկու ժողովուրդների միջև անջրպետի առաջացման սպառնալիք պարունակող վտանգը կանխարգելելու ողջամտությանը, հույս հայտնեց, որ այդ որոշումն օրինակ կհանդիսանա եվրոպական մյուս երկրների խորհրդարանների համար:

Այնուհետև նա, թուրքական NTV-ի վկայությամբ, ասաց. «Առկա խնդիրը (ցեղասպանության) անկեղծորեն քննարկելու մթնոլորտ է ստեղծվել: Սա թուրքերի և հայերի համար պատեհ առիթ է: Այն առիթը, որը պատմության մեջ բազմիցս ընդհանուր վիշտը միասնաբար կրած 2 ժողովուրդներին տալիս է գրկախառնվելու հնարավորություն»:

Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշման առթիվ հաղորդագրությամբ հանդես եկավ նաև Թուրքիայի ԱԳՆ-ն, դիտարկելով դա իբրև պատմության քաղաքականացման

նկրտումները մերժող, խոսքի և հետազոտության ազատությանը նպաստող, իրավական պետությանն արժանավայել և միջազգային իրավունքի նորմերից բխող ողջունելի քայլ: Հաղորդագրությամբ ԱԳԼ-ն միաժամանակ հույս հայտնեց, որ Ֆրանսիան հետայսու կորդեգրի «Հայաստանի և Թուրքիայի միջև առկա պատմական վեճի արդար և գիտական քննարկմանը նպաստող, այլ ոչ թե քանավեճը սրող» դիրքորոշում:

Մերժված օրինագիծը ցեղասպանությունների, այդ թվում՝ ՀՅ-ի ժխտման համար մինչև 1 տարի ազատազրկում և 45.000 եվրո տուգանք էր սահմանում: Քանի որ Հոլոքոստի ժխտման համար մինչև 2 տարի ազատազրկում նախատեսող օրենքը գործում է Ֆրանսիայում, ուստի Սահմանադրական խորհուրդը չեղյալ հայտարարելով նշված օրինագիծը, ոչ թե պաշտպանում է խոսքի ազատության սկզբունքը, այլ անսկզբունքայնություն է դրսևորում և կիրառում է երկակի ստանդարտ:

Տեղասպանությունը մարդկայնության դեմ կատարված հանցագործություն է, իսկ ժխտողականությունը ցեղասպանության ակնհայտ քարոզում: Դրա քրեականացումը իրականում բխում է ՄԱԿ-ի ցեղասպանության հանցանքի պատժման և կանխարգելման կոնվենցիայից: Քանի որ կանխարգելման նախապայմանը ցեղասպանության փաստի ճանաչումն է, իսկ համանման հանցանքի պատժման՝ ժխտողականության քրեականացումը, ուստի խոսքի ազատության սկզբունքը չի կարող գործել մարդկայնության դեմ կատարված հանցագործությունների պարագայում, ինչպես, օրինակ՝ չի գործում ֆաշիզմի կամ նացիզմի գովերգության դեպքում:

Հետևաբար, ցեղասպանությունների, այդ թվում՝ ՀՅ-ի ժխտումը քրեականացնող օրինագիծը չեղյալ հայտարարելու Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի որոշումը չի կարող որևէ առնչություն ունենալ խոսքի ազատության սկզբունքի կամ այդ երկրի սահմանադրության 33-րդ հոդվածի հետ: Խորհրդի այդ որոշմամբ, ժխտումը խրախուսվում և դրանով քաղաքականացվում է մարդկայնության դեմ կատարված հանցագործության ցեղասպանության քարոզումը:

Այս գործելակերպը հազիվ թե նպաստի Ֆրանսիայի միջազգային հեղինակությանը: Սակայն դա ֆրանսիացիների խնդիրն է, որովհետև Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը հակասահմանադրական է ճանաչել Ֆրանսիայի Ազգային ժողովի ու Սենատի ընդունած օրինագիծը: Այսինքն՝ օրինագծի և՛ ընդունման, և՛ մերժման նախաձեռնությունը պատկանում է Ֆրանսիային, այլ ոչ թե Հայաստանին:

Ակամա հարց է ծագում, եթե խնդիրը խոսքի ազատության սկզբունքը չէ, ապա ինչո՞ւ Ֆրանսիայի Սահմանադրական

խորհուրդը մերժեց օրինագիծը և ի՞նչն էր պատճառը, որ նախագահ Սարկոզին հապաղեց ժամանակին ստորագրել Սենատում ընդունված օրինագիծը, որպեսզի կանխի դրա բողոքարկման հնարավորությունը Սահմանադրական դատարանում:

Առաջին հարցին երեկ պատասխանել է «Ֆայնենշըլ թայմսը», գրելով. «Հարցը (օրինագծի) առանցքային է, որովհետև Սիրիայի առաջնորդի պաշտոնազրկման հարցում երկու երկրներն էլ (Ֆրանսիան ու Թուրքիան) ունեն ընդհանուր նպատակ: Սիրիայի հարցում միջազգային քաղաքականության համար ուղեցույց հանդիսացող «Սիրիայի բարեկամների» խմբի առաջիկա նիստը գումարվելու է Ստամբուլում, իսկ հաջորդը՝ Ֆրանսիայում»:

Ինչ վերաբերում է նախագահ Սարկոզին, ապա օրինագծի հարցում նրա անկեղծությունը չի կարող կասկած հարուցել: Եթե դա այդպես է, ապա օրինագիծը ժամանակին ստորագրելուց նրա հապաղելը այլ բացատրություն չի կարող ունենալ, քան անձնական պատասխանատվությունից խուսափելը: Ակնհայտ է, որ օրինագիծն անմիջապես ստորագրելու պարագայում նախագահ Սարկոզին անմիջականորեն իր վրա էր կրելու դրա՝ օրենքի ուժ ստանալու ողջ պատասխանատվությունը:

21.12.2012

«ԱՅԼԸՆՏԲԱՆՔԱՅԻՆ ՅՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ» ՀՆԱԲԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ
ԹՈՒՐԿԻԱՅԻՆ, ԿՆՇԱՆԱԿԻ ԽՐԱՏՈՒՄԵԼ ԹՈՒՐԿԱԿԱՆ
ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

«այդարարում են թուրք մրավորականները՝ նախազգուշացնելով Դանիայի թագավորական գրադարանին

Նոյեմբերի 19-ին «Ազգը», «Դանիական մամուլում տպագրվել է թուրք գիտնականների նամակ-բողոքը Թուրքիայի ժխտողականության քաղաքականության դեմ» վերնագրով, տեղեկացրել էր, որ Դանիայի թագավորական գրադարանը որոշումով որպես այլընտրանքային տարբերակ ՀՅ-ի ցուցադրության, թուրքական կողմին տրամադրել է ցեղասպանության ժխտողականության ցուցադրությունը ներկայացնելու հնարավորություն:

«Ազգը» այդ մասին տեղեկացել էր «Արմենպրեսի» հաղորդագրությունից, որին էլ իրազեկել է ՀՅ-ի թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը՝ ընդգծելով, որ թուրք գիտնականների նամակ-բողոքը՝ ընդդեմ գրադարանի տնօրենության, լայն արձագանք է գտել դանիական հասարակության մեջ:

Sesonline.net կայքէջն էլ նույն օրը հրապարակեց դանիական մամուլում տպագրված նամակ-բողոքի տեքստն ու այն գիտնականների անունը, որոնք ստորագրել են նամակը, նախապես տեղեկացնելով,

որ Դանիայի թագավորական գրադարանը թուրքական կողմին ցեղասպանության ժխտողականության թեման ներկայացնելու հնարավորություն է տվել Թուրքիայի կառավարության դիմումի հիման վրա, որին նամակ-բողոքով արձագանքել են թուրք մտավորականները:

Նամակում ասված է. «Ցավում ենք, որ Դանիայի թագավորական գրադարանը, որպես այլընտրանք ՀՅ-ի ցուցադրության թուրքական կառավարությանը «այլընտրանքային ցուցադրություն» ներկայացնելու հնարավորություն է տվել: Ճիշտ չեն այն տեսակետները, թե 1915-ի իրադարձությունների շուրջը երկու տարբեր թեզ կամ կարծիք գոյություն ունեն: 1915-ին ավելի քան 1 մլն օսմանյան հպատակ հայեր տեղահանվել են հայրենի օջախից և գիտակցաբար ոչնչացվել որդեգրած քաղաքականությամբ: Թուրքական կառավարության արարքն այսօր ոչ այլ ինչ է, քան պատմական իրողությունը ժխտելու հերթական դրսևորում:

Պատմության հետ առերեսումը ժողովրդավարության անվերապահ նախապայմանն է, իսկ Թուրքիայում կառավարությունները ավելի քան 90 տարի շարունակ ճշմարտությունը քողարկում և վարում են ժխտողականության քաղաքականություն: Նրանք հետևողականորեն հալածում և ճնշում են սեփական պատմության հետ առերեսման կոչ անող մտավորականներին, որոնցից էր 2007-ին սպանված Հրանտ Դինքը:

Տալով թուրքական կառավարությանը «այլընտրանքային ցուցադրության» հնարավորություն, դուք, փաստորեն, խրախուսում եք մտավորականներին հալածելու և ճնշելու նրա քաղաքականությունը: Պատմության հետ առերեսումից համառորեն իրաժարվող և ժխտողականությունը սկզբունք դարձրած կառավարությանը ցուցաբերած ձեր աջակցությունը համարժեք է ռասիստական վարչակարգերին ցուցաբերվող աջակցությանը: Հիշեցնենք, որ այս վերաբերմունքով դուք խոչընդոտ եք հանդիսանում Թուրքիայի ժողովրդավարեցմանն ուղղված նախաձեռնություններին: Պատմությունը ժխտելու Թուրքիայի դիրքորոշումը միաժամանակ խոչընդոտ է Միջին Արևելքի խաղաղության, ժողովրդավարության ու կայունության համար: Գրադարանից պահանջում ենք անհապաղ վերանայել Թուրքիային «այլընտրանքային ցուցադրության» հնարավորություն տրամադրելու մոտեցումը»:

Նամակը ստորագրել են Թաներ Աքչանը, Ջենգիզ Աքթարը, Ամեդ Ալթանը, Մուրադ Բելգեն, Հայիլ Բերքթայը, Իսմայիլ Բեշիքչին, Ֆաթմա Մյուզե Գյոչեքը, Օմեր Լաշիները, Բասքըն Օրանը և այլն: Նրանց թվում են Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայդեմիրը և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի քուրդ պատգամավոր Սըրրը Աքքըքը:

ՕՐԱՄԱՆ ԱԿԱՄԱ ԽՐԱՄՈՒՍՈՒՄ Է ԹՈՒՐԲԱԿԱՆ
ԺԵՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եթե որևէ հարց սակարկության առարկա է դառնում, հարցի շուրջը համաձայնության գալը կողմերից մեկի համար ենթադրում է գին վճարել: Մինչև հիմա Թուրքիան «ցեղասպանություն» բառի դիմաց ինչ գին է վճարել պաշտոնական Վաշինգտոնին, չգիտենք, բայց որ գնից զատ միաժամանակ հսկայական էներգիա է ծախսել և մի քանի ամիս շարունակ ապրել է ապրիլի 24-ի խուճապը, անհերքելի փաստ է:

Թուրքիայի այս տարվա վստահությունը նախագահ Օբամայի ուղերձի առումով ըստ երևույթին պետք է պայմանավորված լիներ «Ազատ Սիրիայի բանակի» մարդասպանների ցուցաբերած անվերապահ աջակցությամբ, PKK-ի հետ հաշտեցման ձեռնարկումներով և հատկապես Թուրքիա-Իսրայել հարաբերությունները վերականգնելու պատրաստակամությամբ:

Նշված հարցերում ԱՄՆ-ի շահագրգռության մասին Վաշինգտոնը բազմիցս հայտարարել է: Թերևս Օբամայի ուղերձում «ցեղասպանություն» արտահայտությունը չօգտագործելու գինը Թուրքիան այս տարի վճարել է՝ ընդառաջելով ԱՄՆ-ի շահագրգռություններին: Սակայն դա չի խանգարել, որ Թուրքիայի ԱԳՆ-ն հենց ուղերձի իրապարակման օրը՝ ապրիլի 24-ին հանդես գա հայտարարությամբ և խնդրահարուց համարելով դատապարտի նախագահ Օբամայի ուղերձը, թե դա կանխակալ է, կանխարգելում է պատմության ճիշտ ըմբռնումն ու խրախուսում իրադարձությունների անաչառ ուսումնասիրությունից խուսափող հայկական կողմին:

Ինչո՞վ բացատրել Թուրքիայի ԱԳՆ-ի այս հայտարարությունը՝ Ռարաք Օբամայի ուղերձի բովանդակությամբ: Ուղերձում ԱՄՆ նախագահը մատնանշում էր 1.5 մլն հայերի բնաջնջումը կամ դեպի մահ տանող բռնի տեղահանությունը Օսմանյան կայսրությունում, փաստերի լիակատար բացահայտ և արդար ընդունման կոչ էր անում, ընդգծում էր, որ 1915-ի առնչությամբ չի փոխել իր դիրքորոշումը:

Այլ կերպ՝ նախագահ Օբաման ուղերձում առանց արտասանելու տվել է ցեղասպանության սահմանումը: Ինչ վերաբերում է իր դիրքորոշումը անփոփոխ պահպանելու հանգամանքին, չմոռանանք, որ նա նախքան նախագահ ընտրվելը 1915-ի իրադարձությունները բազմիցս ցեղասպանություն էր որակել: Օբաման դիրքորոշման մասին նշելիս Թուրքիային հասկացնում է, որ 1915-ի իրադարձությունները իր համոզմամբ ցեղասպանություն են, եթե ինքը չի օգտագործում այդ բառը, ապա դրա պատճառը ոչ թե իրագործված ցեղասպանության մասին կասկածանքն է, այլ քաղաքական հաշվարկները:

Թերևս այս ամենի առումով կարելի է համաձայնել Ամերիկայի հայկական համագումարի կարծիքին. «Նախագահ Օբաման վերահաս-

տառեց ՀՅ-ի լիակատար բացահայտ և արդար ճանաչման կարևորությունը»: Չպետք է, սակայն, մոռանալ, որ ՄԱԿ-ի կոնվենցիան կոչվում է «ցեղասպանությունների կանխարգելման և պատժման» կոնվենցիա: Որքան էլ նախագահ Օբաման ուղերձում տու գեղասպանության սահմանումը, «Մեծ Եղեռն» բառակապակցությանը թուրքիային ձերբազատում է ՄԱԿ-ի Ցեղասպանության կոնվենցիան ստորագրելու միջոցով ստանձնած պարտավորություններից:

Ավելին, ուղերձում «ցեղասպանություն» բառի փոխարինումը «Մեծ Եղեռն» արտահայտությամբ նախադրյալներ է ստեղծում, որ ՀՅ-ի բանաձևերը շարունակ մերժվեն ԱՄՆ Կոնգրեսում, իսկ այդ մերժումով անտղակի խրախուսվի թուրքական մերժողականությունը:

Ի վերջո, որքան էլ ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացը սպառնան փաստի առջև կանգնեցնի թուրքական ժխտողականության դիրքերը, դրանց լիարժեք սպառնան համար անհրաժեշտ է, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Դրա անհրաժեշտ նախապայմանն էլ ցեղասպանության ԱՄՆ-ի, Անգլիայի և Իսրայելի կողմից ճանաչումն է: Այդ դեպքում արդեն ժխտողականությունից կառչելը իմաստ չի ունենա Թուրքիայի համար, Ցեղասպանության միջազգային ճանաչումը կդառնա անհամեմատ լիարժեք, և թուրքական կողմը ստիպված կլինի տեղի տալ սեփական պատմության հետ առերեսվելու նախագահ Օբամայի հորդորներին:

05.06.2013

**ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՐԱՑՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆՈՂ ՕՐԻՆԱԳԻԾ
ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԱՐԱՐՈՒՄ**

Օրինագիծը ներկայացրել է երկրում իշխող կուսակցությունը

Խնդրո առարկա օրինագիծն իրականում մշակվել էր ռասիզմի դեմ պայքարի նպատակով, որն այնուհետև լրացրել է ցեղասպանությունների, այդ թվում՝ ՀՅ-ի ուրացումը քրեականացնող հոդվածով: Հոդվածը 3-36 ամիս կալանք և 5-20 հազար եվրո տուգանք է սահմանում նրանց, ովքեր կարհամարհեն կամ կնսեմացնեն Հունաստանի ընդունած ցեղասպանությունները:

Հիշեցնենք, որ Հունաստանի խորհրդարանը 1994-ին ճանաչել էր «Պոնտոսի հույների», 1996-ին՝ «1915-ի Հայոց», իսկ 1998-ին՝ «Փոքր Ասիայի» ցեղասպանությունները: Այս ամենին «Ցեղասպանության վիճելի օրինագիծ» վերնագրով հունիսի 3-ին անդրադարձել է թուրքական էլեկտրոնային «Հաբերլեր» թերթը, մեկնաբանության համար դիմելով Ռազմավարական հետազոտությունների միջազգային կենտրոնի ԵՄ գծով փորձագետ Մուստաֆա Քուլալային:

Փորձագետը նշել է, որ համանման բանաձևերը նախկինում էլ ներկայացվել են Հունաստանի խորհրդարան, վերջին օրինագծի

նախաձեռնողը երկրում իշխող «Ժողովրդավարության» նոր կուսակցությունն է, օրինագիծը իբրև «ցեղասպանություն է բնութագրում հայկական պնդումները, քեմալականների ազատագրական պատերազմը»: Սա, ըստ թուրք փորձագետի, նշանակում է, որ Հունաստանը քաղաքականություն է ձևավորում, ելնելով պատմության սեփական ընկալումից, խորհրդարանին ներկայացված օրինագիծը հայկական հարցի առնչությամբ Ֆրանսիայի խորհրդարանի ընդունած օրինագծի մյուս տարբերակն է:

Այնուհետև Քուլալայը շարունակել է. «Խնդրո առարկա օրինագիծը հակասում է ԵՄ-ի արժեքներին և մարդու իրավունքներին: Օրենքի ուժ ստանալու դեպքում լուրջ հարված է հասցնելու Հունաստանում խոսքի ազատությանը: Այս օրինագծով հույն քաղաքական գործիչները փորձում են սեփական ժողովրդի ուշադրությունը շեղել տնտեսական ճգնաժամից: Հունաստանում հետզհետե ուժեղանում են ռասիստական հակումներն ու այլատյացության դրսևորումները: Օրինագիծը խոսքի ազատությանը հակասում է նաև միջազգային տեսանկյունից: Խորհրդարանները չեն կարող օժտված լինել ազատությունները սահմանափակելու լիազորություններով: Նրանք պատմական իրադարձությունների առնչությամբ վճիռ կայացնելու իրավունք չունեն»:

Այս խոսքերը Թուրքիայում հաճախ են ծամծմվում: Ինչ վերաբերում է պատմական իրադարձություններին և խորհրդարանների առնչություններին, որոնց անհամատեղելիությունը անընդմեջ շեշտում են նաև թուրք պետական, քաղաքական և գիտական գործիչները, ապա պետք է նշել, որ «Ցեղասպանությունների կանխարգելման և պատժման» կոնվենցիան ընդունել է ՄԱԿ-ը, նկատի առնելով այն, որ դա հանցագործություն է ընդդեմ մարդկայնության: Եթե ցեղասպանությունները լինեին պատմաբանների խնդիրը, ապա ցեղասպանության կոնվենցիան ՄԱԿ-ի փոխարեն կընդուներ որևէ հեղինակավոր համալսարանի պատմության ինստիտուտը:

**ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ
ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐԱ.
Հրանտ Դինքի, Սևակ Շահինի սպանություններն ու
Սամաթիայի գազանությունները**

16.07.2003

«ՍԱՐԻ ԱՂՋԻԿ» ԲԱԶՄԱՏԵՐԻԱՆՈՑ ՖԻԼՄԸ, ՍՅԵՆԱՐԻՍՏԻ ՊՆԴՄԱՄԲ,
ԵՎ ՓԱՍՏԱՎԱԿԵՐԱԳՐԱԿԱՆ Է, ԵՎ ԱՆԱԶԱՌ

ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացը թուրքերի նկատմամբ իբր հայերի իրագործած ցեղասպանությամբ հակակշռելու թուրքական նկրտումները հայտնի են: Դրանք միջազգային որևէ արձագանք չեն գտնում, ավելին՝ դրանց տարակուսանքով են վերաբերվում մի շարք թուրք մտավորականներ: Այնուամենայնիվ, թուրքական պաշտոնական շրջանակները շարունակում են կառչել թուրքերի մտացածին ցեղասպանությունից, և իրենց իսկ հորինած պնդումներին քիչ թե շատ լրջություն հաղորդելու մղմամբ, բազմասերիանոց, այսպես կոչված, փաստավավերագրական ֆիլմ են նկարահանում: Իսկ դա ցուցադրում է թուրքական հանրային հեռուստատեսությունը:

Խոսքը «Սարի աղջիկ» բազմասերիանոցի մասին է: «Ազգը» նախորդ համարներում մասնակի անդրադարձել էր ֆիլմին: Հուլիսի 14-ի համարում դրան անդրադառնում է նաև թուրքական «Ջաման» թերթը: «Ջամանի» վկայությամբ «Սարի աղջիկը» բազմասերիանոցի սցենարիստ Գյուլայ Դեղերլին գանգատվել է, որ հայերը քարոզչության նպատակներով իբր շուրջ 400 ֆիլմեր են նկարահանել, իսկ թուրքերն ընդամենը՝ մեկ: Դեղերլին միաժամանակ ընդգծել է, որ այս անհամաչափությունն առկա է նաև հրատարակությունների ոլորտում, որովհետև, ըստ նրա, հայերի հրատարակած քարոզչական բնույթի 7000 անուն գրքի փոխարեն թուրքերը դրա մեկ տասներորդի չափ են հրատարակել:

«Սարի աղջիկ» բազմասերիանոցի նկարահանման համար հատկացվել է 650.000\$, և դա սկսած ապրիլի 24-ից 7 առանձին մասով եթեր է հեռարձակվել: Բազմասերիանոցի ամփոփ տարբերակը թարգմանվել է անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն, հայերեն, ենթադրվում է, որ դա կներկայացվի օտարերկրյա խորհրդարաններին, ինչպես նաև համանուն ՋԼՄ-ներին:

Բազմասերիանոցի նկարահանումները կատարվել են 13 երկրներում՝ այդ թվում ԱՄՆ-ում, Անգլիայում, Ռուսաստանում, Հայաստանում, Ադրբեջանում, Սիրիայում, Իսրայելում և Լիբանանում: Ընդ որում նկարահանող խումբը եղել է Մայր աթոռ սբ. Էջմիածնում,

Անթիլիասի Մեծն տանն Կիլիկիո կաթողիկոսարանում, ինչպես նաև Պոլսո հայոց պատրիարքարանում: Ինչ վերաբերում է Թուրքիայում կատարված նկարահանումներին, ապա դրանք ընդգրկել են 25 նահանգներն ու 123 գյուղերն ու գավառները: Նկարահանումների համար օգտագործվել են ինչպես վարչապետարանին առընթեր օսմանյան արխիվները, այնպես էլ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի արխիվային փաստաթղթերը:

Ակամա հարց է ծագում՝ ինչո՞ւ: Այդ հարցին Դեղերլին պատասխանում է. «Հայերի նկարահանած ֆիլմերում թուրքական կողմի տեսակետները մշտապես անտեսվել են, այդ իսկ պատճառով խեղաթյուրվել են պատմական իրողությունները: Հայերն արդեն ունենալով ֆինանսական հզոր կարողություններ Կանադայում, Արգենտինայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և Ավստրալիայում, լրբիստական բուռն գործունեություն են ծավալում և սերտորեն համագործակցում են տվյալ երկրի գաղտնի ծառայությունների հետ»:

Այլ կերպ, Դեղերլին գտնում է, որ թուրքերի նկարահանած «Սարի աղջիկ» ֆիլմը ոչ միայն փաստավավերագրական է, այլև անաչառ: Ինչո՞վ է դա բացատրվում: Ըստ երևույթին հենց ֆիլմի սցենարիստ Դեղերլիի «անաչառության» մտավարժանքներով:

08.10.2003

«ԹՈՒՐԹԵՐԻ ՆՎԱՄԱՄԲ ՀԱՅԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՎՈՒ ԵՂԵՆԻՑ» ԹԵՄԱՅՈՎ
ՇԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԳՐՈՒՄ ՊՈԼՍՈ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻՆ
Պոլսահայ մրավորականները դատապարտում են Թուրքիայի
իշխանություններին

Ինչպես հայտնի է, Թուրքիայի կրթության նախարարությունը ապրիլի 14-ի «ՀՅ-ի անհիմն պնդումների դեմ պայքարի շրջանակներում» շրջաբերականով երկրի թուրքական բոլոր կրթօջախներում, այդ թվում նաև հայկական վարժարաններում պարտադրել է «թուրքերի նկատմամբ հայերի իրագործած եղեռնի» թեմայով շարադրություններ գրել: «Ազգը» ժամանակին արձագանքել է: Հոկտեմբերի 6-ի համարում արձագանքում է նաև պոլսահայ «Մարմարա» թերթը:

«Մարմարան» գոհունակությամբ է արձանագրում, որ Թուրքիայում կան առողջ դատողության տեր մեծ թվով մարդիկ, որոնք հասարակական կարևոր խնդիրների շուրջ միավորվում են: Այդ խնդիրների թվում նշվում է հայ-թուրքական հարաբերությունների պատմությունը: Ակնհայտ է, որ վերոհիշյալ շրջաբերականն առաջին հերթին պետք է հուզեր պոլսահայ համայնքին: Ահա, համայնքի 360 անդամներ, որոնք մտավորականության ներկայացուցիչներ են, ստեղծում են «Պատմությունը որպես հաշտության ազդակ» խմբակը, որն էլ ձեռնամուխ է լինում թուրք-հայկական հարաբերություններում

իշխանությունների գործադրած քաղաքականությունը դատապարտող բողոքագրի պատրաստմանը:

Բողոքագիրն ստորագրողները, որոնց թվում է «Մարմարայի» խմբագրապետ Ռոբեր Հատտեճյանը, պահանջում են, որ ժամ առաջ վերջ տրվի «կրթության նախարարության կողմից երիտասարդ ուղեղների վրա գործադրված ճնշմանը և դպրոցական դասագրքերից մաքրվեն նյութին առնչվող ժխտական բոլոր տվյալները»:

Օգտվելով առիթից նշենք, որ շարադրության մասին շրջաբերականին նախորդել էր 2002թ. հունիսի 14-ի հրահանգը, ըստ որի պատմության դասագրքերում հայերին, հույներին, ասորիներին առնչվող խնդիրները հակաթուրքական քարոզչությանը դեմ պայքարի քողի տակ կատարելապես աղավաղվել են: Աղավաղումների գլխավոր թիրախ է դարձել Հայկական հարցը, որն էլ իր հերթին դպրոցական դասագրքերը վերածել է հայ ժողովրդի նկատմամբ ատելություն և թշնամանք սերմանելու միջոցի:

Վերոհիշյալ խմբակի անդամները, շրջաբերականը դատապարտելիս, Ստամբուլի «Նազըմ հիքմեթի» անվան սրահում կազմակերպված մամուլի ասուլիսով միաժամանակ խստագույնս դատապարտել են աղավաղումներն ու ազգային փոքրամասնությունների նկատմամբ թշնամանք և ատելություն սերմանելու դրսևորումները: Միաժամանակ նրանք ուշադրություն են հրավիրել պատմության դասագրքերում տեղ գտած «Հայկական կեղծ ցեղասպանության» կամ «Պոնտոսի հույների և ասորիների ցեղասպանության պնդումների դեմ» պարբերությունների վրա:

24.08.2004

«ԳՈՐԸ ԳԱՅԼԵՐԻ» ՆԵՐԿԱՅԻՍ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱԸԶԵԼԻՆ ԸԱ՞Յ Է ԹԵ՞ ՀԱՅ ԻՆԵՆԸ ՈՐԱՅԵ ԽԱՆԳԱԳՐԾՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐԵՖԻԱՅՈՒՄ՝ ՄԱՐՂԿԱՆՑ ՎԱՐԿԱՔԵԿԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Թուրքիայում ժամանակ առ ժամանակ վիճարկվում են պետական կամ քաղաքական այս կամ այն գործչի էթնիկ ծագումն ու կրոնական պատկանելությունը: Խոսքը տվյալ դեպքում ոչ այնքան «ոյրնմենեթի», այսինքն՝ կրոնափոխ հրեաների, որքան այդ գործիչներին հայկական ծագում և քրիստոնեական պատկանելություն վերագրելու մասին է: Ինչո՞վ են պայմանավորված մեղադրանքի բնույթ կրող այս վերագրումները: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ երբ Ամնեղ Նեջդեթ Սեզերը Թուրքիայի նախագահ էր ընտրվում, իսլամական շրջանակներն առաջ էին քաշել նրա Քյոթահիայի քրիստոնեական թաղամասում ծնված լինելու վարկածը:

Այդպիսի վարկածների մի մասը հրապարակվել է մամուլում, իսկ մյուսը՝ տարածվել խոսակցությունների ձևով: Ըստ երևույթին վերջին վարկածների թվին պետք է դասել «Մայր հայրենիք» կուսակցության

ուսկին նախագահ, ԹՀ նախկին ԱԳ նախարար, ապա և վարչապետ Մեսութ Յըլմազին վերագրվող համջենահայությունը, ինչպես նաև ներկայիս փոխվարչապետ և ԱԳ նախարար Աբդուլլահ Գյուլի վրացական ծագումը: Ավելին, 1917թ. Կիպրոսում ծնված «Գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության խարիզմատիկ առաջնորդ Ավիարսլան Թյուրքեշը կենդանության օրոք մեղադրվում էր, թե թուրքական ընտանիքում որդեգրված հայ որբ է եղել:

Նույնը վերաբերում է ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքի որդեգիր դուստր, թուրքական ռազմաօդային ուժերի առաջին կին օդաչու Սաբիհա Գյոքչենին, այն տարբերությամբ, որ վերջինի հայկական ծագումն ի տարբերություն Թյուրքեշի, բուն քննարկումների տեղիք տվեց երկրում: Հատկանշական է, որ քննարկումներին ակտիվորեն մասնակցեցին թուրքական թերթերը, ՀԿ-ները և քաղաքական տարբեր շրջանակներ՝ տարբեր արձագանքներով:

Սաբիհա Գյոքչենին հայկական ծագում վերագրելը ոմանք համարեցին լկտի ոսնձգություն ինչպես Քեմալ Աթաթուրքի հիշատակին, այնպես էլ Թուրքիայի խորհրդանիշներին, ոմանք էլ՝ ակնհայտ զրպարտություն՝ ընդգծելով, որ նա որդեգրման պահին Սաբիհա էր կոչվում, այլ ոչ թե Երջանիկ:

Սաբիհա Գյոքչենի հայկական ծագման շուրջ երկրում ծավալվող քննարկումներն այնպիսի անախորժ աղմուկ բարձրացրին, որ թուրքական ՁՈւ ԳԾ-ը հարկ համարեց միջամտել, պաշտոնապես հայտարարելով. «Նրա հայկական ծագումն էական չէ, նույնիսկ ավելի լավ, քանի որ դրանով պարզորոշ երևում է, թե Աթաթուրքը երկրում գերծ է եղել կրոնական կամ էթնիկ ամեն մի խտրականությունից»:

Վերոհիշյալ հայտարարության իմաստը հետևյալն է՝ Սաբիհայի հայկական ծագումը հանդուրժելի է, պայմանով սակայն, որ նա հայ չիամարվի: Եթե այս մոտեցումը համադրենք նրա հայկական ծագումը որպես զրպարտություն դիտարկելու մոտեցման հետ, ապա ակնհայտ կդառնա, որ ԹՀ-ում հայ լինելը ոչ այլ ինչ է, քան հանցագործություն: Ի գիտություն Հայաստանում հայի ազգանունով թուրք-աղբբեջանական քարոզչություն ծավալող հայատյաց թափափուկների ասենք, որ հանցագործության և հայության նույնացման հետևությունն արել են թուրք մտավորականները, այլ ոչ թե մենք, և այդ փաստն արձանագրողների թվում է «Հյուրիեթի» գլխավոր խմբագիր Էրթուղյուր Օզքոքը:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ Թուրքիայում այս կամ այն գործչին հայկական ծագում վերագրելը նրան ծագման միջոցով վարկաբեկելու արդյունավետ միջոց է: Դրա վառ ապացույցը վերջերս Ազգայնական շարժում կուսակցության ներկայիս նախագահ Դևլեթ Բահջեթիի հայկական ծագման մասին պնդումներն են, որոնք

տեղիք են տվել ներկուսակցական բուռն բախումների: Դրանց մասին, հիմք ընդունելով «Վաքիթ» թերթի հրատարակումը, օգոստոսի 13-ի համարում տեղեկացնում է «Ակօսը»:

Ըստ շաբաթաթերթի տեղեկության, թուրք պատմաբան Ջեզմի Յուրթսևերը հանգամանալից ուսումնասիրել է Բահչեյի տոհմաբանությունը և արդյունքները հրատարակել է մամուլի ասուլիսում: Նա ասել է, որ Բահչեյի հայկական ծագման և քրիստոնեական պատկանելության մասին պնդումներն ամենևին չեն համապատասխանում իրականությանը: 2003թ. ապրիլին Յուրթսևերը դիմել է Քոզան (հայկական Սիսի թուրքական անվանումն է, այսինքն՝ Բահչեյին Սիսում է ծնվել) գավառի քաղաքապետարան՝ կապված Բահչեյի ծննդյան վկայականի հետ, ապա նրա ցեղի ծագումնաբանության հանգամանքները ճշտելու համար ուսումնասիրություններ է կատարել օսմանյան արխիվներում:

Յուրթսևերն ասուլիսի վերջում ասել է. «Օսմանյան արխիվային փաստաթղթերը հերքում են Բահչեյի հայկական ծագման անփառունակ պնդումները: Դրանց ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նա ծագում է թուրքմենական Ֆաթթահիլ ցեղից և օսմանյան շրջանում նրա նախնիները եղել են Ուրհայից Մարաշ ընկած տարածքի ավատատերերը: Համոզված եմ, որ նենգափոխելով պատմությունն ու պարզունակ ճշմարտությունը, ոմանք Բահչեյի քաղաքական կյանքին վերջ տալու համար նրան նկատմամբ հայկական զենքն են կիրառում»:

02.10.2004

*«ՀԱՅԵՐԻ ԳԵՏ ՓՈՔՐԻԿ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԸ ՀԵՐՈՄՆԵՐ ՁԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ»
Թուրքիայի պաշտոնաթղթի ղեկավարի այս խոսքերին բուռն հակազդեցություն է ցուցաբերում թուրք մտավորականը*

«Ազգը», նախորդ համարում «Ադրբեջանական կամակորության հերթական դրսևորումները Կարսում» խորագրով անդրադարձել էր սեպտ. 24-26-ին հրավիրված «Կարսի քաղաքային համագումարին» և «Կովկասյան մշակութային տոնահանդեսին»՝ մասնակցությամբ Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի և Հայաստանի ներկայացուցիչների: Համագումարում Թուրքիայի հայկական սահմանի բացման անհրաժեշտության մասին թուրք բանախոսի ընդգծումը խիստ գայրացրել էր Կարսում Ադրբեջանի հյուպատոս Ջեյնալովին: Ջայրանալու առումով վերջինին էր միացել Բաքվի կոնսերվատորիայի պրոռեկտոր Օլամովան, թե «եթե շատ են ուզում սահմանների բացումը, թող հրաժարվեն Ղարաբաղի բռնագրավումից»:

Ջեյնալովի և Օլամովայի սանձարձակություններն էլ ըստ երևույթին գայրացրել էին «Հաբեր թուրքին», որ սեպտեմբերի 29-ին ինտերնետային էջում ընդվզել էր ադրբեջանական կողմին

մեղադրում էր այդ ձեռնարկումներին հակադրվելու մեջ և նրան դատապարտում որպես բարի կամքի դրսևորում Կարսում կազմակերպված համագումարն ու տոնահանդեսն իր կամակորություններին հարմարեցնելու նկրտումների համար:

Ադրբեջանցիները հայատյացության հարուստ փորձ ունեն և դրա կիրառման ոչ մի առիթ բաց չեն թողնում: Հետևաբար «Հաբեր թուրքին» ընդվզումը հազիվ թե գսպի նրանց: Հատկապես այն դեպքում, երբ հայատյացության դրսևորումներն անսովոր չեն նաև թուրքական իրականության համար: Հարկ է սակայն նշել, որ հայատյացությունն անկախ ակնկալիքներից, ընդամենը հակազդեցություն է առաջ բերում և առանձին թուրք հեղինակներ «Հաբեր թուրքին» օրինակով քննադատում են դրա թուրքական դրսևորումները:

Հատկանշական է, որ երբ առանձին թերթեր այդ դրսևորումներն են քննադատում, ապա թուրք մտավորականներն էլ՝ թերթերին: Սա նշանակում է, որ թուրքական իրականությունում հայատյացության դրսևորումների քննադատությունը կարևոր է թուրք հասարակության առողջացման, ինչպես նաև թուրքական մամուլում առողջ դատողության արմատավորման առումով, որպեսզի դա ձերբագատի երկրի ազգային փոքրամասնություններին սաղրանքի միջոց դարձնելու գայթակղությունից:

Հայատյացության դրսևորումների պարագայում խնդրո առարկան «Հայրենասերի սեղանի գիրքը» մատենաշարի «Հունական պատրիարքարանը մեր մեջքի դաշյունն է» փոքրածավալ երրորդ աշխատությունն է, իսկ մամուլի քննադատության՝ «Հյուրիեթը»: Ի դեպ, հույների հետ հայերին էլ դավաճան հռչակող այս գրքի քննադատությունը «Հյուրիեթին» չի ձերբագատում քննադատության ենթարկվելուց:

«Հյուրիեթը» հուլիսի 23-ի համարում գլխավոր խմբագրի՝ Էրթուրուլ Օսքյոքի ստորագրությամբ անդրադառնալով «Հունական պատրիարքարանը մեր մեջքի դաշյունն է» գրքույկին, հարցնում է. «Եկեք ենթադրություն անենք, ո՞վ կարող է այսպիսի գրքույկ հրատարակել: Արմատական կազմակերպությունը, թե՛ ծայրահեղ ազգայնամոլ միությունը: Գուցե մոլեռանդ մի անձնավորություն: Չսխալվեք, գրքույկը հրատարակել է Անկարայի առևտրի պալատը, այսինքն՝ մի կազմակերպություն, որը ներկայացնում է մայրաքաղաքում առևտրի զբաղվող մարդկանց: Դրա նախաբանն անձամբ գրել է պալատի նախագահ Սիևան Այգյունը: Մի՞թե այս երկրում հայրենասիրությունը պետք է փաթեթավորվի այսպիսի անգրագիտությամբ կամ դառնա գաղափարախոսական շարքային դատարկաբանությունների արդյունք: Մարդկանց գրգռող այս սաղրիչ մոտեցումը, առավել ևս գրքույկով դրա վերագրումն Անկարայի առևտրի պալատի բոլոր անդամներին, մեծ վնաս է, նաև՝ խիստ վտանգավոր»:

Ակամա հարց է ծագում, եթե «Հյուրիեթը», այն էլ գլխավոր խմբագրի ստորագրությամբ, ազգայնամոլության թուրքական դրսևորումները որակում է «վտանգավոր» և դրանք համարում սադրիչ, ապա ինչո՞ւ է մեղադրվում սադրանքի մեջ: Ըստ երևույթին խնդիրը սուկ «Հյուրիեթը» չէ, այլ հայատյացության վարակի տարածումը Թուրքիայի պետական, քաղաքական և դիվանագիտական շրջանակներում: Թերևս այդ առումով պատահական չէ Լյուբեֆի հարցազրույցին Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղի ազգայնամոլության դեմ պայքարի հանձնաժողովի անդամ Այշե Գյունայսուփ արձագանքը, որը սեպտեմբերի 24-ին ինտերնետային էջում է տեղադրել «ԲԻԱ» լրատվական կենտրոնը:

Արձագանքում Գյունայսուն փաստում է, որ Թուրքիայում մամուլի պատմությունը լի է ամոթալի էջերով, որպես օրինակ նշելով «Հյուրիեթի» օգոստոսի 9-ի համարը, որտեղ նախկին դեսպան Լյուբեմը, պատասխանելով թղթակցի հարցերին, ասում է. «Հայերի պես փոքրիկ ժողովուրդները հերոսներ չեն ունենում»:

«Ինչպես ենք որոշելու, շարունակում է Գյունայսուն, թե ո՞ր ժողովուրդն է փոքրիկ, որը՝ մեծ, կամ ժողովրդի մեծությունը «հերոսների» քանակով ենք չափելու, թե՞ արվեստի, մշակույթի գործիչների քանակով, այսինքն՝ քաղաքակրթության մակարդակով: Ո՞ւմ ենք որպես հերոս համարելու՝ լավ կովոդի՞ն, լավ մարդ սպանողի՞ն, մեծ արվեստագետի՞ն, թե՞ մեծ գիտնականին: Չէ՞ որ քեզ համար հերոսը ինձ համար կարող է մարդասպան լինել: Մի՞թե մեծը սեփական երկրի քաղաքացուն բռնարարքի ենթարկելու համար Եվրոպայի մարդու իրավունքների դատարանի որոշմամբ դատապարտվող, գործած հանցանքն ընդունող և դրա համար տուգանք վճարող վարչակարգի դեմ որևէ հակազդեցություն չցուցաբերող ազգն է: Եկեք չխճճվենք այսպիսի հարցերով: Պարզապես ասենք, որ այս երկրում, ցավոք, շատերը ի վիճակի են հայերի պես մեծ անհատականություններ ունեցող օրինակելի մի ժողովրդի համար օգտագործել տգիտությունից և ազգայնամոլությունից բխող «հերոսներ չունեցող փոքրիկ ժողովուրդ» արտահայտությունը»:

Տևն Այշե Գյունայսուփի հակազդեցությունը նախկին դեսպանին ամենևին չի ենթադրում թուրքական իրականությունում հայատյացության դրսևորումների վերացումը: Բայց և այնպես, այդ հակազդեցությունը զգալի սահմանափակում է հակահայկական ելույթներով թուրք հասարակությանը թունավորելու ազգայնամոլ շրջանակների հնարավորությունները: Այնուամենայնիվ, սա նկատելի տեղաշարժ է: Ի վերջո, պատմական ճշմարտությունների նկատմամբ թուրք ժողովրդի դիրքորոշումը մեծապես պայմանավորված է լինելու նրա հայատյացությունից ձերբազատվելու կարողություններով:

16.10.2004

«ՀՐԵԱՆԵՐԸ ՀԱՄՈՋՎԱԾ ԵՆ, ՈՐ ԱՄԵՆԱԾԻՇԸ ԱՅՆ

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՎՐԱ ԹՔԵԼՆ Է»

Հավասարում է քրիստոնյաների հարցերով Երուսաղեմի քաղաքապետի նախկին խորհրդական Սամուել Ալիփարը

Հոկտեմբերի 10-ին Երուսաղեմում մի խումբ երիտասարդ հրեաներ հարձակվում են հայ հոգևորականների թափորի վրա: Հարձակումը կատարվում է կրոնական երթի ընթացքում: Երիտասարդներից մեկը ստահակին յուրահատուկ լվտիությամբ նախ թքում է թափորն ընդառաջող Երուսաղեմի հայոց պատրիարքարանի լուսարարապետ Նուրհան արք. Մանուկյանի թունած խաչի, այնուհետև՝ նրա վրա, ապա և ապտակում:

Թեև Նուրհան սրբազանը պատասխան ապտակ է հասցնում հրեա ստահակին, սակայն քաշքշուկի հետևանքով ջարդվում է նրա պանակեն, որը տոնական ծիսակատարություններին, սկսած 17-րդ դարից, կրում էին հայ բարձրաստիճան հոգևորականները:

Հատկանշական է, որ այս լվտի հարձակումը կատարվում է ծիսակատարությանը հետևող հոծ բազմության և հայ հոգևորականների թափորն ուղեկցող Իսրայելի ոստիկանության ներկայությամբ: Այս ամենը խոր վրդովմունք է առաջացնում Երուսաղեմի հայկական համայնքում, երբ Իսրայելի ոստիկանությունը հարցաքննում է արքեպիսկոպոս Մանուկյանին՝ պատճառաբանելով, թե հարվածել է իր վրա թքող հրեային:

Թեև ոստիկանությունն առայժմ զերծ է մնում Նուրհան սրբազանի դեմ քրեական գործ հարուցելու գայթակրությունից, սակայն նրան պատժելու նկատառումով ձեռնամուխ է լինում լրջորեն քննարկելու հայ հոգևորականի նկատմամբ հնարավոր պատժամիջոցների կիրառման հարցը: Հարցաքննում են նաև հրեային, գործը դատարան հանձնելու մտադրությամբ:

Հայ հոգևորականների վրա հրեա ստահակների լվտի հարձակմանը իսկույն արձագանքեց պաղեստինյան «Վաֆա» գործակալությունը և հոկտեմբերի 10-ի հաղորդագրությամբ տեղեկացրեց, որ Պաղեստինի առաջնորդ Յասեր Արաֆաթը հեռախոսազրույց է ունեցել Մանուկյան արքեպիսկոպոսի հետ և հետաքրքրվել նրա առողջությամբ: Հոկտեմբերի 12-ին այդ հաղորդագրության հիման վրա միջադեպին անդրադարձավ «Ազգը», նույն օրվա և նախորդ համարներում՝ իսրայելական «Հասրեցը», իսկ հոկտեմբերի 13-ին՝ Պոլսո «Մարմարա» օրաթերթը:

«Վաֆա» գործակալությունն ընդամենն արձանագրել է հարձակման փաստը: «Հասրեցը» նշում է, որ բացի երիտասարդ հրեաներից, քրիստոնյաների վրա թքում են նաև մեծահասակները, և

այս իրողության հետ հայ հոգևորականների պես հույն հոգևորականները նույնպես հաշտվել են:

Այսինքն՝ Երուսաղեմում ստահակների խնդիրը՝ երիտասարդ թե մեծահասակ, հայերը չեն, այլ բոլոր քրիստոնյաները, բայց և այնպես, նրանք առանձնակի վերաբերմունքի են արժանանում: Դրա մասին իսրայելական թերթում անձամբ վկայում է հրեաների հետ քրիստոնյաների մերձեցման կենտրոնի ղեկավար Դանիել Ռասինգը, պատմելով, որ հրեական «Պուրիմ» տոնի օրերին հայ հոգևորականները չեն հանդգնում դուրս գալ իրենց բնակարաններից: Ըստ «Հասարեցի», քրիստոնյաների հարցերով Երուսաղեմի քաղաքապետի նախկին խորհրդական Սամուել Ավիտարն այս երևույթը որակել է «մեծ խայտառակություն» և ավելացրել. «Ես փորձում եմ որևէ բան անել, սակայն անօգուտ, որովհետև հրեաներն ուղղակի համոզված են, որ հոգևորականների վրա թքելն ամենաճիշտ բանն է, ինչ իրենք են անում»:

Ի դեպ, թքել սիրում են նաև ուղտերը: *Իմանալով այդ մասին, պարզապես դժվարանում ենք կողմնորոշվել, թքելն ուղտի՞ն է նմանեցնում հրեաներին, թե՞ անասնական բնազդ է թքելու հրեական համոզմունքը:* Համենայն դեպս, որքան էլ Նուրհան սրբազանը «Մարմարային» հայտնի, որ «Երուսաղեմի հայ հոգևորականները, վարժված լինելով այդպիսի տգեղ վերաբերմունքին, թեև ջանում էին անտեսել դա, սակայն վերջին միջադեպը հանդուրժել չեն կարող», այնուամենայնիվ, չհանդուրժելու այլընտրանքը քաղաքը լքելն է:

Ահա թե ինչու Ավիտարը խոստովանում է քրիստոնյա հոգևորականների վրա թքելու հրեաների համոզմունքի մասին, Երուսաղեմի քաղաքապետարանը միջադեպի պատասխանատվությունը բարդում է հայ հոգևորականների թափոռն ուղեկցող ոստիկանության վրա, իսկ ոստիկանությունը թափոռը հարձակումից պաշտպանելու փոխարեն մտածում է Նուրհան սրբազանին պատժելու մասին: Թերևս դրանով էլ քաջալերում է ստահակներին:

Այդ առումով պատահական չէ, որ հրեաների լկտիությունը չի սահմանափակվում հայ հոգևորականներին անարգելով միայն, ոչ էլ անարգանքն է նոր: Դեռևս հունվարին Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանը քրիստոնյա համայնքների ներկայացուցիչների հետ Իսրայելի ՆԳ նախարար Աբրահամ Պորագիի հանդիպմանը գանգատվել էր, թե «հրեաները հայիոյում և թքում են հայերի վրա, երբ մեր ժողովուրդն անցնում է փողոցով»: Պորագին փորձել էր ճշտել. «Ինչո՞ւ համապատասխան քայլեր չեն ձեռնարկվում, որպեսզի ծայրահեղական հրեաները չանարգեն հայ պատրիարքին և հայությանը»: Ոստիկանության սպաները պատասխանել էին. «Միջոցների բացակայության պատճառով չենք կարող հսկել յուրաքանչյուր վանականի»:

Այս փաստը հունվ. 13-ի համարում արձանագրել էր «Հասարեցը»: Ապրիլին Երուսաղեմի պատրիարքարանը վերստին դիմել էր Իսրայելի ՆԳ նախարարին, բայց ապարդյուն: Ըստ երևույթին նախարարը ոստիկանությանը տրամադրելու միջոցներ չի ունեցել, որ հարձակումները շարունակվում են: Միջոցների բացակայությունը հասկանալի է, պարզապես հարց է ծագում. եթե առանց միջոցների անհնար է վերահսկել վանականներին, ապա հոկտ. 10-ին Իսրայելի ոստիկանությունն ինչպիսի՞ առաքելությամբ էր ուղեկցում հայ հոգևորականների թափոռը:

Հարցի պատասխանը միանշանակ է. Իսրայելի ոստիկանությունը քաջալերում է Երուսաղեմի հայոց պատրիարքին, հայ հոգևորականներին, հայկական համայնքին անարգող ստահակներին, որպեսզի արժանանա ՆԳ նախարարի քաջալերանքին: Սա հիմք է տալիս նեթադրելու, որ Իսրայելում ստահակները վայելում են պետության հովանավորությունը, նրանց հարձակումները հայերի և քրիստոնյա հոգևորականների վրա պետականորեն են կազմակերպվում: Այսպիսով, վերջիններիս վրա թքելու, նրանց ապտակելու, հայիոյելու լկտիությունը դառնում է պետական քաղաքականություն:

Ի՞նչ կարելի է ակնկալել մի պետությունից, որի բնակիչները ճշմարտության որոնումներում համոզվում են, որ ամենաճիշտն այլ հոգևորականի վրա թքելն է: Թքելու պարագան կարևոր է, դրա ճշմարտացիության մեջ հրեաների համոզմունքն առավել ևս: Այն ստումով, որ նրանք դրանով հասարակական պատվերի երանգ են հաղորդում Իսրայելի վերոհիշյալ քաղաքականությանը, նպաստում դրա հետագա ամրապնդմանը:

20.10.2005

«ԵԿԵՂԵՑԻՆ ՔԱՆԳԵՑԻՆ, ՈՐ ՄՋԿԻԹ ԿԱՌՈՒՑԵՆ»

Այս վերնագրով թուրքական «Միլլիթթ» թերթը հոկտեմբերի 19-ի համարում տեղեկացնում է, որ Դիարբեքրի Քուլի գավառի գյուղերից Արզունում պահպանման ենթակա հայկական եկեղեցին քանդվել է, որ տեղում մզկիթ կառուցվի: Մզկիթի կառուցումն առանձին քաղաքացիների բողոքի պատճառով կասեցված է: Ըստ «Միլլիթթի», նախ հանրապետական շրջանում հայերին պատկանող Արզուն գյուղի պատմական այս եկեղեցու քարերը նախապես քանդվել էին՝ տներ կառուցելու նպատակով, ինչի հետևանքով եկեղեցին ավերվել էր և դառնալով ծիսակատարությունների համար ոչ պիտանի՝ լքվել:

Այնուամենայնիվ, մշակութային արժեքների և բնապահպանության խորհուրդը կիսավեր եկեղեցին և կից հայկական գերեզմանոցն ընդգրկել էր պահպանման ենթակա պատմական հուշարձանների ցանկում: Սակայն շինարար Քերեմ Էմրեն, որը նույն գյուղի բնակիչ է,

համազյուղացիների հավանությամբ հիմնահատակ քանդում է եկեղեցին, ինչպես նաև գերեզմանոցի մի մասը և սկսում մզկիթ կառուցել եկեղեցու քարերն օգտագործվում են որպես մզկիթի հիմնաքար:

Մզկիթի շինարարությունն սկսվել է մայիսի 10-ին: Սակայն որոշ քաղաքացիների բողոքի հիման վրա Քուլփի քաղաքապետարանն ու Դիարբեքրի թանգարանի քաղաքային վարչությունը միջամտել են, պարզելով, որ շինարարությունն ապօրինի է, և թեկուզ ուշացումով կասեցման որոշում ընդունել:

Գյուղապետ Սադրը Թուրանը մզկիթի ապօրինի շինարարության առնչությամբ «Միլլիեթին» ասել է. «Ես փորձեցի կանխել եկեղեցու տեղում մզկիթի կառուցումը: Մզկիթի համար այլ տեղ հատկացրի և ասացի, որ գյուղում արդեն գործող երկու մզկիթ կա: Դրանով հանդերձ, շինարար էմրեն գյուղացիներին հավաքելով, ուղարկեց մեր տուն: Նրանք ինձ մեղադրեցին, թե ես մզկիթին դեմ եմ, հետևաբար հայ պետք է լինեմ, որից հետո չկարողացա դիմադրել ճնշումներին և տեղի տվեցի»:

Օգտվելով առիթից նշենք, որ վերոհիշյալ Քուլփը հայկական Խուլփ բնակավայրն է, որը մինչև 1915թ. վարչականորեն ենթակա էր Մուշ գավառին:

20.10.2005

ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՅԵՐԸ ՎՐԱՅԻ ՍՏԱՀԱԿԻ ՀԱՄԱՐ ՔԾՆԱՆՔԻ ՄԻՋՈՑ ԴԱՌՆԱԼ
Սակայն քծնանքը երբեք քաղաքական գործոն չի դառնա

Եղբայրական Վրաստանի բարեկամությունը Հայաստանի և հայ ժողովրդի համար երբեմն ավելի վտանգավոր է եղել, քան թշնամական Ադրբեջանի ատելությունը: Դա թերևս պայմանավորված է անպատժելիության մթնոլորտում լկտիացած վրաց ստահակի հարմար առիթի դեպքում իսկույն լկտվելու անզուսպ հակումներով: Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ հոկտեմբերի 12-ին Ախալքալաքում «Ախալքալայի ազատագրման բրիգադի» տարածած թռուցիկներին:

Դրանցում հայերին սպառնում են սպանել, նրանց վտարում հայրենի հողերից, մեղադրում են վրացական օդը թունավորելու մեջ, «անհավատարիմ շուն» են անվանում և ռուսների «վարձու շնագայլ», միաժամանակ հրճվանքով հիշեցնում են 1915թ. ցեղասպանության մասին, թե հայերին բնաջնջել են:

Հատկանշական է, որ 1993թ. սկզբներին հայ ժողովրդի վրա հոխորտալիս ցեղասպանության օրինակով նրան փորձել էր սաստել նաև Թուրքիայի նախագահ Թուրգուօ Օզալը, որը նույն տարվա ապրիլին հանկարծամահ եղավ: Օզալի մահն առ այսօր ատեղծված է մնում երկրում:

Այլ կերպ, ցեղասպանության մասին հիշեցնելը սուկ վրացի ստահակներին յուրահատուկ երևույթ չէ: Սակայն նրանց միանգամայն յուրահատուկ պետք է համարել դարավոր հարևանին ԹՀ-ի միջոցով սպառնալու գործելակերպը: Թերևս այդ առումով պատահական չէր թռուցիկների զարդարումը թուրքական պետությանը խորհրդանշող կիսալունսի և աստղի նկարներով, առավել ևս դրանց տարածումը հենց հոկտեմբերի 12-ին, երբ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի վրացական հատվածի բացման համար Վրաստանում էր գտնվում Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը:

Ըստ երևույթին վրաց ստահակն ինքնապահովության համար նախընտրում է լկտվել տիրոջ ներկայությամբ, հատկապես երբ համոզված է լինում, որ այդ տերը՝ ի դեմս Թուրքիայի, չի հրաժարվել հայերի նկատմամբ ցեղասպանության քաղաքականությունից: Ինքնապահովության համար երախտապարտության զգացումը ստահակին կանգնեցնում է տիրոջը քծնելու պարտադրանքի տակ, հայերին «անհավատարիմ շուն» և «վարձու շնագայլ» անվանելը դառնում է քծնանքի միջոց:

Եթե որևէ ժողովուրդ զուրկ է արժանապատվությունից, ապա նա կարող է քծնել օտար պետությանը: Սակայն չի կարող քծնանքը քաղաքական գործ դարձնել, որովհետև ապարդյուն է: Այս պարզ ճշմարտությունը հասկանալու համար որոշակի արժանիք է պետք: Մինչդեռ արժանապատվությունից զուրկ վրաց ստահակի միակ արժանիքը թրությունն է, այլապես նա ընդամենը 70.000 բնակչություն ունեցող Աբխազիայում կրած խայտառակ պարտությունը մոռացության տալով, հայերի վրա չէր հոխորտա, ոչ էլ ցեղասպանության մասին կհիշեցներ նրանց: Ինչո՞ւ, այն պարզ պատճառով, որ 1918թ. դեկտեմբերին, երբ Գերմանիայի զորակցության խոստումներով թևավորված վրաց ստահակները, օգտվելով Հայաստանի անելանելի կացությունից, բազմահազար գաղթականության սովյալ և թշվառ վիճակից, Ադրբեջանի մշտական դավերից, ներխուժեցին Լոռի-Փամբակ, հայկական զորքերը Դրոյի հրամանատարությամբ ընդամենը 3 օրում ոչ միայն մաքրեցին հանրապետության տարածքը, այլև կատարելապես ջախջախեցին նրանց:

Ավելին, վրացական ճակատի հրամանատար, գեներալ Ծուլուկիձեն առաջինն էր դիմել փախուստի՝ ստեղծելով տագնապալի իրավիճակ ինչպես Վրաստանում, այնպես էլ մայրաքաղաք Թբիլիսիում: Քանի որ 1915թ. ցեղասպանությունից արյունաքամ եղած հայ ժողովուրդը իր մեջ ուժ էր գտել Սարդարապատի հերոսամարտով արժանի դաս տալ թուրք մարդասպանին, ուստի վրացի հրոսակը դիմեց անգլո-ֆրանսիական ուժերի հրամանատարությանը, այլապես Թբիլիսիի ճակատագիրը կանխորոշված էր:

Հետևաբար հայ ժողովրդին 1915թ. ցեղասպանության մասին հիշեցնելու փոխարեն պետք է հիշել 1918թ. դեկտեմբերին Հայաստան ներխուժած վրացական զորքերի ջախջախումն ու հետևություններ անել, թե ովքեր և ինչ հանգամանքներում են կանգնեցրել հայկական զորքերի հաղթական մուտքը կիսով չափ լքված Թբիլիսի:

Հարցը սակայն սուկ վրացի ստահակը չէ, այլ Զավախքում տիրող ամենաթողության մասին Վրաստանի նախագահ Միխայիլ Սասկաշվիլու հայտարարությունը, թե «այժմ մենք վերահսկողություն ենք սահմանում, ինչը նշանակում է, որ որոշակի փուլում հնարավոր են բախումներ»: Ակնհայտ սադրանքի բնույթ կրող այս հայտարարությունը պետք է պայմանավորել վերջին շրջանում ամերիկյանի գլխավորությամբ արևմտյան մամուլում Սասկաշվիլու հասցեին հաճախակի հնչող քննադատություններով: Դրանք դժգոհության արտահայտություններն են: Ըստ ամենայնի, Վրաստանի նախագահին չի հաջողվում վերացնել Արևմուտքի դժգոհության պատճառները, և նա Իլիամ Ալիևի նման փորձում է ապավինել Թուրքիայի աջակցությանը, նախապես իմանալով հայ-վրացական հարաբերությունների սրման հարցում վերջինի շահագրգռությունները:

Այլապես, Ախալքալաքում գործող «Վիրք» կուսակցության ղեկավար Դավիթ Ռատակյանը «Ախալքալաքի ազատագրման բրիգադ» ստորագրությամբ տարածված թռուցիկները Վրաստանի հատուկ ծառայությունների գործը չէր համարի:

28.10.2005

«ՌԵԿՏՈՐ ԱՇԽԱՏՆԵՐ ԳԵՏԵ Է ՀՊԱՐՏԱՆԱ ԻՐ ՀԱՅՎԱԿԱՆ ԾԱԳՈՒՄՈՎ»

Որովհետև նա Հակոբ Վարդովյանի թոռն է

Հոկտ. 26-ին «Ազգը», անդրադառնալով Վանի համալսարանի ղեկավար, դոկտ., պրոֆ. Յուզել Աշքընի Թուրքիայում դատարանի որոշմամբ կալանման հարցին, նշել էր, որ Թուրքիայում իշխող «Արդարություն և բարգավաճում» կուսակցության պատգամավոր Ռամազան Թոփրաքը կալանքի պատճառները բացահայտելու փոխարեն բացահայտել էր նրա հայկական ծագումը, որպեսզի արդարացին կալանքը:

Եթե Աշքընի կալանքին բուռն հակազդեցություն էր ցուցաբերել Ոստանական բարձրագույն խորհուրդը՝ նախագահ Էրդողան Թեզիչի գլխավորությամբ, իբրև համերաշխության նշան Թուրքիայում գործող 77 համալսարանների ղեկավարների ուղեկցությամբ այցելություն կազմակերպելով Վան, ապա պատգամավոր Թոփրաքին էլ հակազդել էր Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը և խստագույնս դատապարտել վերջինի արարքը:

Թեև նույն օրը երեկոյան թուրքական հանրային հեռուստատեսությամբ Թոփրաքն արդարացավ, թե ինքը ղեկավարի ազգային

պատկանելության հարցը չի շոշափել, պարզապես լրագրողն է խեղաթյուրել իր խոսքերը, այնուամենայնիվ, նրան դատապարտեց նաև Թուրքիայի ազգային մեծ ժողովի «Արդարություն և բարգավաճում» խմբակցության փոխնախագահ Էյուփ Ֆաթսան:

Նա «սփյուռքահայերը Վանին են հավակնում, իսկ մենք այնտեղ հայկական ծագումով ղեկավար ենք նշանակում» խոսքերի համար դատապարտելով Թոփրաքին, ըստ «Միլիթթի», ասել է. «Մարդիկ կարող են ունենալ տարբեր էթնիկ ծագումներ: Մանավանդ որ մեր երկրում բնակվում են մեր հայ քաղաքացիները: Միանգամայն բնական պետք է համարվի որպես քաղաքացիների նրանց տարբեր պաշտոնների հատկացումը: Մինչ այդ մենք Մեջլիսում հրեական ծագումով պատգամավորներ ենք ունեցել: Կարծում եմ, Թուրքիան ժողովրդավարության մակարդակով ունի այս ամենը մարսելու հասունություն»:

Այլ կերպ անկախ հերքումից, Թոփրաքն, ըստ ամենայնի, մատնացուց է արել Վանի համալսարանի ղեկավարի հայկական ծագումը: Ինչո՞վ է դա պայմանավորված: Այդ հարցը դեռևս հունիսի 10-ի համարում բարձրացրել էր իսլամական «Վաքիթ» թերթը՝ պարզելով, որ Աշքընը հայ թատերական նշանավոր գործիչ Հակոբ Վարդովյանի թոռն է, որը հայտնի է Գյուլի Հակոբ անունով: Նույն թերթն այն օրերին, երբ ղեկավարները երկօրյա այցով Վանում էին գտնվում, աղաղակում էր, թե հայկական ծագումով ղեկավարը Վանի համալսարանում Նոր կտակարաններ էր բաժանում ուսանողներին:

«Վաքիթում» Հակոբ Վարդովյանի հետ ղեկավար Աշքընի արյունակցական կապի շահարկումներին էլ հակազդում են թուրք թատերական գործիչները: Նրանցից Մեթին Անդը հոկտեմբերի 26-ին «Միլիթթում» ասել է. «Գյուլի Հակոբը թուրքական թատրոնին ավելի մեծ ծառայություններ է մատուցել, քան (դրա հիմնադիրի համարում ունեցող) Մուսիին Էրթուրդուլը: Չնայած երկրում դրամատուրգների բացակայությանը, նա ստեղծել էր այնպիսի մի թատրոն, որին առաջադիմությամբ զիջում են Թուրքիայի ներկայիս պետական թատրոնները: Գյուլի Հակոբը թուրքական թատրոնի պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի, պետք է կանգնեցնել նրա արձանը»:

Քննադատ Այշեգյուլ Յուքսեյլը լրացրել է Անդին. «Պրոֆ. Յուզել Աշքընի Թուրքիայում ղեկավարի պաշտոնին արժանացած գիտնական է: Գյուլի Հակոբը թուրքական թատրոնի արդիականացման անգնահատելի ծառայություններ մատուցած թատերական գործիչ է: Էթնիկ ծագումը չի կարող նսեմացնել նրա ծառայությունները»: Թատրոնի ռեժիսոր Դիքմեն Գյուրունն իր հերթին նշել է, որ Գյուլի Հակոբի ծառայություններն անհնար է երկու բառով ամփոփել, եթե ղեկավար Աշքընը նրա թոռն է, ապա պետք է հպարտանալ դրա համար: Իսկ թատրոնի դերասան Նեդրեդ Գյուլեյնչը ընդգծելով իր

առանձնակի համակրանքը Աշքընի նկատմամբ, դա պայմանավորել է Հակոբ Վարդոլյանի հետ վերջինի արյունակցական կապով:

«Միլիտերը», ներկայացնելով թատերագետների վերոհիշյալ տեսակետները, միաժամանակ նշում է. «Թատրոնի դերասան և ռեժիսոր Հակոբ Վարդոլյանը 1840-1902թթ. ապրել է Ստամբուլում: Չիներով հանդերձ փայլուն դերասան, ստեղծած և ղեկավարած թատրոններով մեծ հաջողություններ ձեռք բերած Վարդոլյանն առաջին անգամ բեմ է բարձրացել 1861-1862թթ. Նաում Էֆենդիի հայկական ստեղծագործություններ բեմադրող Արևելյան թատրոնում: 1882թ. Աբդուլ Համիդի կարգադրությամբ ընդգրկվել է պալատական նվագախմբում: Իր ցանկությամբ մահմեդականություն է ընդունել և ստացել է «Գյուլի Յակուբ Էֆենդի» անունը: Մինչ մահը «Յըլդըզի» պալատում բնակվող Գյուլի Հակոբի շիրիմը Բեշիքթաշի «Յահյա Էֆենդի» գերեզմանոցում է:

Մեր կողմից ավելացնենք, որ Հակոբ Վարդոլյանը մահմեդականություն է ընդունել ոչ թե հինքնական, այլ դա նրան պարտադրվել է պալատ տեղափոխվելու համար: Այդ իսկ պատճառով Վարդոլյանի մահմեդականությունը եղել է առերես: Նա ոչ միայն չի խզել իր կապը պոլսահայ համայնքի հետ, այլև պալատական նվագախմբում ընդգրկվելուց 8 տարի հետո երկրորդ անգամ ընտանիք է կազմել և ամուսնացել հայուհու հետ: Նրա երկրորդ ամուսնությունից ծնվել է անվանի ջութակահար, թուրքական սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր Նեջիփը, որն արդեն հանրապետական Թուրքիայում, ըստ երևույթի և ազգանունի օրենքի համաձայն, ստացել է Աշքըն ազգանունը:

Ի դեպ, 1962թ. Թուրքիայում նշվել է Նեջիփ Աշքընի ստեղծագործական գործունեության 50-ամյակը: Վանի համալսարանի ռեկտոր Յուջել Աշքընը հենց Նեջիփ Աշքընի որդին է, ուստի միանգամայն իրավացի պետք է համարել նրան վերագրվող հայկական ծագումը: Ինչ վերաբերում է հայկական ծագումը որպես մեղադրանք օգտագործելուն, ապա պետք է ասել, որ Թուրքիայում ՀՅ-ի վրա դրված տաբուի վերացումը թեև պատմական փաստի ճանաչում չի ենթադրում, սակայն նախադրյալներ է ստեղծում առանձին գործիչների համար, որպեսզի նրանք համարձակորեն արտահայտվեն իրենց էթնիկ ծագման կամ ազգային բուն պատկանելության մասին: Հետևաբար Աշքընի հայկական ծագման վերաբերյալ շահարկումները կնպաստեն համանման ծագում ունեցող նոր գործիչների բացահայտմանը երկրում:

30.05.2006

«ՈՐՈՇԵԼ ԷԻՆԷ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ՍՏԱՄԲՈՒԼ ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ»

Մայիսի 17-ին Անկարայում Դատական գերագույն խորհուրդ էր ներխուժել «Գորշ գայլերի» երբեմնի գրոհային Ալիարսլան

Արսլանը և ատրճանակով կրակել խորհրդի երկրորդ վարչության անդամների վրա, որոնցից 4-ը վիրավորվել էին, իսկ 5-րդը մահացել էր հիվանդանոցում:

Ահաբեկչական այս հարձակումը լայն արձագանք էր գտել ինչպես Թուրքիայում, այնպես էլ ԱՄՆ-ում, ԵՄ-ում և աշխարհի այլ երկրներում: Մայիսի 24-ին «Ազգը», անդրադառնալով վարչապետ Էրդողանի կառավարությանը վարկաբեկելու նկրտումով իրագործված այս հարձակմանը, նշել էր, որ դրա բուն կազմակերպիչները նախկին զինվորականներ են:

Մայիսի 25-ին Անկարայում թուրքական ոստիկանությունը ձերբակալել էր նաև Արսլանի մերձավորներից Էրհան Թիմուրօղլուն, որը մասնակի ընդունելով դատարանի հարուցած՝ «երկրում սահմանադրական կարգերը բռնի ուժով տապալելու, մարդասպանության փորձ կատարելու, պայթուցիկ նյութեր պահելու և օգտագործելու» մեղադրանքները, կալանվել է:

Կառավարամետ «Ենի շաֆաք» թերթի տվյալներով, դատարանում Թիմուրօղլուն նշել է, որ Ալիարսլան Արսլանի հետ վաղեմի բարեկամներ են, և ինքը հիացած է նրանով: Այնուհետև նա շարունակել է. «Արսլանը հրաշալի անձնավորություն է: Ես նրա աջ թևն եմ: Անկարա էինք եկել Արսլանի անձնական մեքենայով: Մեր նպատակը Դատական գերագույն խորհրդի երկրորդ վարչության պետին սպանելն էր: Այս հարցը հարձակման նախօրյակին մանրամասն քննարկել էինք: Եթե չձերբակալվեր Արսլանը, ապա Ստամբուլում իրականացնելու էինք մի շարք գործողություններ: Որոշել էինք սպանություններ կատարել Ստամբուլի հայերի շրջանում»:

12.10.2006

«ԱՊՐԻ ԻՄ ՈՐԳԻՆ, ՈՐ ՔԱՀԱՆԱ Է ՍՊԱՆԵԼ ՀԱՆՈՒՆ ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄԵՐ ԱԶԳԻ ԵՎ ԱԼԼԱՀԻ»

2006թ. փետրվարի 5-ին Տրապիզոնի Սանտա Մարիա կաթոլիկ եկեղեցում կիրակնօրյա ժամերգությունից հետո աղոթքի պահին ատրճանակի երկու կրակոցով սպանվել էր քահանան՝ Անդրեա Սանտորոն: Ձերբակալված մարդասպանը կանգնել էր դատաստանի առջև: Հոկտեմբերի 9-ին ավարտվել է դատավարությունը: Դատարանը նախ որոշել է ցմահ բանտարկել մարդասպանին, ապա դատապարտել է 18 տարի 10 ամիս ազատազրկման, նկատի ունենալով, որ նա դեռ 18 տարեկան չկա:

Թուրքական մամուլը խուսափում է նշել մարդասպանի անունը, որ դեռևս հաճախում էր միջնակարգ դպրոց: Սակայն փոխարենը նշում է, որ դատավճռի հրապարակումից հետո նրա մայրը՝ Նեջմիեն լրագրողներին ասել է. «Կեցցե իմ որդին, նա կարող է ոչ միայն 18,

այլ 20 տարի բանտարկվել, որովհետև բանտարկվում է մեր պետության և մեր ազգի համար: Նա հանուն Ալլաիի է բանտարկվում, հետևաբար չեմ հանդիմանում նրան»: Մարդասպանի ավագ եղբայր Ալին հավելել է իր մորը. «16 տարեկան երեխային դատապարտում են 18 տարվա բանտարկության: Ողջ-ողջ թաղում են եղբորս: Այս գործը սրանով չի ավարտվելու»:

Արդարությունը պահանջում է ասել, որ թուրքական կենտրոնական թերթերը, մասնավորապես «Հուրիեթը», «Միլիեթը», «Ռադիկալը» և իսլամամետ «Ենի շաֆաքը» խստագույնս դատապարտել են մայր կոչված այս տականքին: Համեմատության կարգով նշենք, որ հակաիբրանայան պատերազմի օրերին հրեա մայրերն էլ ռազմաօդային բազա էին տանում իրենց երեխաներին, մակագրելու համար հրթիռների վրա. «Նվեր իսրայելցի երեխաներից լիբանանցի երեխաներին»:

23.01.2007

**ՀՐԱՆՏ ԴԻՆԻՔԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՅԵԼ Է ԹՈՒՐԻՔ
ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ**

Պոլսահայ համայնքին մրահոգում են սպանության շահարկումներն ու նորանոր սպառնալիքները

«Ակօսի» գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը ցնցել է առաջադեմ թուրք մտավորականներին, առավել ևս պոլսահայ համայնքին: Այդ սպանության հետևանքով մտավորականները կորցրել են միջազգային հեղինակություն վայելող իրենց զինակցին, իսկ համայնքը՝ իր ամենահանդուգն ներկայացուցչին:

Թեև թուրքական մամուլն ընդհանուր առմամբ ատելությամբ դատապարտում է Դինքի սպանությունը և համերաշխություն հայտնում համայնքին, համերաշխության հարցում մամուլին է միանում նաև վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդոդանն, ընդգծելով, որ Դինքի դեմ բարձրացած արյունոտ ձեռքերը երկարացվել են իրենց դեմ և իրենք գիտակցում են դավադիր այս սադրանքի պատասխանատվությունը, այնուամենայնիվ, թուրքական առանձին թերթեր, գործիչներ և ստահակներ չեն հրաժարվում սադրանքներից, որոնց պատճառով սգի մեջ հայտնված համայնքի ցնցումը վերածվում է տագնապի:

Թերթերի պարագայում խոսքը վերաբերում է «Թերջումանին», որը հունվարի 21-ի համարում գրել է, որ Դինքին սպանող Օզյուն Սամսաթն իբր ծագումով հայ է և զարմանում, թե ինչո՞ւ նրա ծնողները հեռուստատեսությամբ ուրացել են իրենց ծագումը: «Թերջումանի» այս սադրանքին, որը տեղ է գտել թուրքական մասնավոր որոշ հեռուստատեսությունների հաղորդումներում, արձագանքել է Պոլսոս հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մուֆաֆյանը:

Նա մասնավորապես ասել է. «Մենք սգի մեջ ենք և Հրանտ Դինքի աճյունը դեռևս չենք հանձնել հողին: Գուցե չափազանց մեծ

լավատեսություն կլիներ մեր կողմից ցավակցություն ակնկալելը հասարակության բոլոր խավերից, բայց և այնպես սպասում էինք, որ կցուցաբերվի նվազագույն հարգանք»:

Մուֆաֆյան պատրիարքի հետ «Թերջումանին» խստագույնս դատապարտել են նաև թուրքական կենտրոնական թերթերը, սակայն «Մայր հայրենիք» կուսակցության հիմնադիրներից Հասան Ջելալ Գյուզելը, որը Թուրքոլիթ Օզալի իշխանության օրոք նախարարի պաշտոններ էր վարում, «Ռադիկալի» հունվարի 21-ի համարում Հրանտ Դինքի սպանության պատասխանատվությունն անուղղակիորեն բարդում է սիյուռքահայության վրա: Գյուզելը պատճառաբանում է, թե Հրանտ Դինքն ի տարբերություն հայկական սիյուռքի, թուրքերին չէր մեղադրում ցեղասպանության մեջ, այլև հակադրվում էր նման ծայրահեղություններին, այդ իսկ պատճառով սիյուռքում նրան չէին սիրում:

Այդ ընթացքում մի խումբ ստահակներ, ինչպես «Միլիեթի» հունվարի 22-ի համարում վկայում է Ջան Դյունդարը, Գատրեզյուդի Սք. Թագվոր հայկական եկեղեցու պատին գրում է. «Մի Հրանտ մեռավ, հերթը մյուս Հրանտներինն է: Սատկի կեղտոտ հայր»:
Հեղինակը նշում է, որ ոստիկանությունը խանգարել է նրանց, ովքեր մամուլին փոխանցելու համար փորձել են լուսանկարել այս գրությունը:

Այնուհետև նա ավելացնում է. «Եկեղեցում հավաքվածների տագնապի մասին խոսելը, կարծում եմ, ավելորդ է: Սարսափելի է, բայց միաժամանակ ճշմարտություն: Սադրիչները կարող են հպարտանալ իրենց հանճարեղ ստեղծագործությամբ»:

23.01.2007

**ՄՏԱՎՈՐԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՅՏՆԻ Է ԴԻՆԻՔԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ**

Վարչապետ Էրդոդանը խոստանում է բացահայտել դրա բուն կազմակերպիչներին

Այսօր Ստամբուլի «Բալըքը» հայկական գերեզմանատանը հողին կհանձնվի թուրքահայ ականավոր մտավորական, «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի աճյունը: Հանգուցյալի դագաղը նախ կդրվի խմբագրատանը, ապա հուղարկավորության մասնակիցները նրան երթով կուղեկցեն մինչև Պոլսոս հայոց պատրիարքարանի Սք. Մարիամ Աստվածածնի մայր եկեղեցի, որտեղ էլ կկատարվի հուղարկավորության արարողությունը:

Հուղարկավորությանը հանգուցյալ Դինքի զինակիցների գլխավորությամբ կմասնակցեն Ստամբուլի հասարակայնության ականավոր ներկայացուցիչներ, հասարակական-քաղաքական կազմակերպությունների պատվիրակություններ, կրոնական գործիչներ, ինչպես նաև հայերի, քրդերի և թուրքերի հոծ բազմությունը:

ինչ վերաբերում է պետական գործիչներին, ապա նախապես հայտնի էր Ստամբուլի նահանգապետի ու քաղաքապետի հետ Թուրքիայի ներքին գործերի և արդարադատության նախարարների մասնակցությունը: Պատրաստվում էր մասնակցել նաև Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Սակայն նա պիտոսանքով նշեց, որ այդ ժամին ինքը պաշտոնական այցով Թուրքիայում գտնվող Իտալիայի վարչապետ Ռոմանո Պրոդիի հետ կատարելու է Բոլոնի թունելի բացումը, որը կառուցել է իտալական «Աստալդի» ընկերությունը:

Այդ ընթացքում հայտարարվել է, որ Դինքի հուղարկավորությանը մասնակցելու հրավեր է արվել Հայաստանի իշխանություններին, Հայ առաքելական եկեղեցու և հայկական սփյուռքի ներկայացուցիչներին, ստանալով հրավերին դրական պատասխաններ: BBC-ն, նշելով Հայաստանի և Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունների բացակայությունն, ընդգծել է, որ հրավերը կատարվել է ԱԳ նախարար Աբդուլլահ Գյուլի անմիջական կարգադրությամբ:

Ինչպես հայտնի է, Հրանտ Դինքի սպանությունը կատարվել էր հունվ. 19-ին «Ակօսի» խմբագրատան մայրին: Թուրքական անվտանգության ուժերը նախ հրապարակել էին մարդասպանի լուսանկարը, ապա սպանությունից 32 ժամ հետո Սամսուն քաղաքի ավտոկայանում ավտոբուսի մեջ ձերբակալել նրան: Մարդասպանը 17-ամյա ոմն Օգյուն Սամսաթն է: Նա ձերբակալության պահին ավտոբուսով վերադառնում էր Տրապիզոն: Նրա հետ սպանությանը մասնակցելու կասկածանքով նույն ավտոբուսում ձերբակալվել էին երկու, իսկ Տրապիզոնում չորս հոգի, որոնց ինքնաթիռով տեղափոխել էին Ստամբուլ:

Օգյուն Սամսաթը խոստովանել է հանցանքը: Հայտնի է նաև պատվիրատու Յասին Հայալի անունը, որը մարդասպանին դրդել է սպանության և ատրճանակ տրամադրել: Ոստիկանությունը, թուրքական մամուլի դիպուկ արտահայտությամբ, տակնուվրա է անում Ստամբուլը, որ ձերբակալի նաև նախկին հանցագործ Հայալին: Մարդասպանի ձերբակալությունից հետո Դինքի սպանության գործը հանձնվել է ահաբեկչության դեմ պայքարի վարչության կազմակերպված հանցագործությունների բաժին:

Հարցն, իհարկե, սուկ Դինքի սպանության պատվիրատու Հայալի ձերբակալությունը չէ, այլ դրա բուն կազմակերպիչների բացահայտումը: Թեև Սամսունում մարդասպանի ձերբակալության լուրը լրագրողներին տեղական ժամանակով 04-ին անձամբ հայտնելիս, վարչապետ Էրդողանը խոստացել է սպանության բուն կազմակերպիչներին բացահայտելու կառավարության վճռականության մասին, այնուամենայնիվ, թուրքական մամուլը ելնելով նախորդ սպանությունների փորձից, նախընտրում է առայժմ զգուշավորությամբ վերաբերվել բացահայտման խոստումներին:

«ԱՏԱԲՈՒՆԵ ԵՐԲԵՎԷ ԱՅՄՊԻՍԻ ՀՈՒՎԱՐԿՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՏԵՍԵԼ. Հրանտ Դինքին դեպի հավերժություն ուղևորել է ավելի քան 100.000 մարդ»

Հունվ. 23-ին Ստամբուլում թուրքահայ համայնքի գլխավորությամբ թուրքերի, քրդերի, ալավիների, հույների, ասորիների հոծ բազմությունը վերջին հրաժեշտը տվեց ականավոր լրագրող, հրապարակախոս Հրանտ Դինքին: Հուղարկավորության ողջ ընթացքն ուղիղ եթերով հեռարձակվում էր թուրքական հանրային հեռուստատեսության 2-րդ ալիքով, թուրքական և միջազգային այլ հեռուստակայաններով:

Հանգուցյալի դագաղը դրվել էր «Ակօսի» խմբագրատանը: Հուղարկավորության արարողությունը կատարվել էր Պոլսո հայոց պատրիարքարանի Սբ. Մարիամ Աստվածածնի մայր եկեղեցում: Թուրքական և միջազգային լրատվամիջոցների վկայությամբ «Ակօսի» գլխավոր խմբագրի խմբագրատնից ձգվող 8 կմ-անոց երթին մասնակցել է 100.000 մարդ, սգո թափորի երկարությունը հասել է 3 կմ-ի:

Նույն թափորը ևս 8 կմ-անոց երթով Սբ. Մարիամ Աստվածածնի եկեղեցուց շարժվել է «Բալըքը» հայկական գերեզմանատուն, որը հայ համայնքին դեռևս 1453թ. Կ. Պոլսո նվաճումից հետո տրամադրել էր սուլթան Մեհմեդ Երկրորդը: Հրանտ Դինքի հուղարկավորությանն Էրդողանի կառավարության անունից մասնակցել են պետնախարար, փոխվարչապետ Մեհմեդ ալի Շահինը, ՆԳ նախարար Աբդուլբազիթ Աքսուն, Ստամբուլի նահանգապետ Մուամեր Գյուլերը, Շիշլիի քաղաքապետը, ինչպես նաև հույն և հրեա ազգային փոքրամասնությունների, ասորի, ալավի և կրոնական այլ խմբավորումների հոգևոր ներկայացուցիչներ:

Մասնակիցների թվում են եղել Ձախ-ժողովրդավարական կուսակցության գլխավոր նախագահ Զեքի Սեզերը, քրդամետ ժողովրդավարական հասարակարգ կուսակցության գլխավոր նախագահ Ամեդ Թյուրքը, Դիարբեքրի քաղաքապետ Օսման Բայդեմիրը, պատգամավորներ, այլ կուսակցությունների և ՀԿ-ների պատվիրակություններ: Մասնակցել են նաև Թուրքիայում Մեծ Բրիտանիայի դեսպանը՝ ուղեկցությամբ գլխավոր հյուպատոսի, Ստամբուլում ԱՄՆ-ի, Հոլանդիայի, Եվեդիայի, Հունաստանի հյուպատոսները, գերմանական Կանաչների միության և ԵՄ-Թուրքիա միջխորհրդարանական հանձնաժողովի համանախագահները, Հայաստանի և հայկական սփյուռքի ներկայացուցիչներ, որոնց գլխավորել են հոգևոր առաջնորդները:

Հունվարի 24-ին թուրքական կենտրոնական թերթերն առաջին էջերում են անդրադարձել Հրանտ Դինքի երկրի համար աննախադեպ հուղարկավորությանը՝ հաճախ ամբողջ էջը նվիրելով սգո արարողությանը: «Հյուրիեթը», նշելով հուղարկավորությանն ավելի քան 100.000 մարդու մասնակցության մասին՝ մեջբերել է հանգուցյալ Դին-

քի այրու՝ Ռաքելի խոսքերը, սգո արարողությանը «Միլիթեն» անդրադարձել է «Ըստ ձեզ Հրանտը մահացել է», «Ռադիկալը»՝ «Ստամբուլը Ստամբուլ դառնալուց ի վեր այսպիսի հուղարկավորություն չէր տեսել», «Չամանը»՝ «Ողջ Թուրքիան ուղևորեց նրան» վերնագրերով, իսկ «Վարթանը»՝ «Ժողովուրդն այստեղ էր, որտե՞ղ էիք դուք» վերնագրով դիմել է ընդդիմադիր ժողովրդահանրապետական, «Ճշմարիտ ուղի», «Ազգայնական շարժում» և իշխող «Արդարություն և բարգավաճում» կուսակցությունների նախագահներին, ապա և ավելացրել. «Գլխավոր չորս կուսակցությունների առաջնորդները չեն մասնակցել հուղարկավորությանը, վախենալով ժողովրդի աջակցությունից»:

Ի դեպ, երեկ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն այցելելով Հրանտ Դինքի բնակարան ու Պոլսո հայոց պատրիարքարան, անձամբ ցավակցություն է հայտնել տկն Ռաքելին և Մեսրոպ Բ Մովսեսյան պատրիարքին:

26.01.2007

ԸՆԴՈՒՄՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԱՊՐԱՆՈՒՄ Է «ԲՈՒՈՐՍ ՀԱՅ ԵՆՔ, ԲՈՒՈՐՍ ՀՐԱՆՏ» ԿԱՐԳԱՆՈՒՄԸ

Իսկ վարչապետ Էրդողանը մեղադրում է ազգայնականներին. «Աստիճակով հոգին առնելու դեպքում մարդասպան ես դառնում»

Հունվարի 23-ին Ստամբուլում Հրանտ Դինքի հուղարկավորության ավելի քան 100.000 մասնակիցներ, որոնց թիվը հունվ. 25-ի համարում 200.000 էր ներկայացնում թուրքական «Սթար» թերթը, հնչեցրել էին «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ» կարգախոսը: Դրա հնչեցումը հունվարի 24-ին մամուլում խստագույնս քննադատել էր «Մեծ միասնություն» կուսակցության նախագահ Մուսիին Յազըջըղլուն:

Այս կուսակցությունը ավելի ծայրահեղական է, քան «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպությունը՝ Ազգայնական շարժում կուսակցությունը: Հակառակ դրան, Քեմալ Աթաթուրքի հիմնադրած ժողովրդահանրապետական կուսակցությունը համարվում է ժողովրդավարության և աշխարհիկ կարգերի երաշխիքը Թուրքիայում, անդամակցելով միաժամանակ Սոցիալիստիկ Միությունների միության:

Այս ամենը, սակայն, չի խանգարում կուսակցության փոխնախագահ, Թուրքիայի ազգային մեծ ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ և նախկին դեսպան Օնուր Օյմենին, որ նա Դինքի սպանությունը դատապարտելիս վերհիշի ԱՍԱԼԱ-ի զոհը դարձած 40 թուրք դիվանագետների մասին:

Թուրքական հանրային հեռուստատեսության տվյալներով Օյմենը նշել է. «Առ այսօր բացահայտված չեն մեր ընկերներից շատերին սպանողները: Երբ Գալիփ Բայրարը սպանվեց և նրա աճյունը տեղափոխեցին Թուրքիա, մեր հանգուցյալ ընկերոջ հուղարկավորությանը ընդա-

մենը մասնակցեցին ընտանիքի անդամները ու ԱԳՆ-ի աշխատակիցները, այլ ոչ թե տասնյակ հազարավորներ: Ինչ խոսք, պետք է հարգել սպանվածների հիշատակը, դատապարտել սպանությունները, սակայն չպետք է մոռանալ նաև մյուս զոհերին և ուժ գտնել բացականչելու՝ «Մենք բոլորս Բայրար ենք, բոլորս էրեզ» կարգախոսը»:

Այդ առումով ժողովրդահանրապետական կուսակցության փոխնախագահ Օյմենին է միացել Ազգայնական շարժում կուսակցության նախագահ Դելթե Բահշեյին: Ինչպես երեկվա համարում նշում է «Սաբախը», նա դատապարտել է նրանց, ովքեր Դինքի սպանության առնչությամբ պահանջել են քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի վերանայումն ու մեղադրել ազգայնականներին: Բահշեյին ասել է. «Դինքի սպանությունը նողկալի արարք է: Սակայն չի կարելի սպանության համար թուրքական պետությանը մարդասպան հոշակել և հաշիվ պահանջել նրանից, ինչն արել են սպանությունից անմիջապես հետո սև դրոշներով փողոցներն հեղեղած խմբավորումները: Հատկանշական է, որ այս շրջանակները իբրև թուրք ազգի ներկայացուցիչներ ոչ մի դեպքում չեն հայտնվում մեր նահատակների թաղման ժամանակ, սակայն ելնելով սպանվածի էթնիկ (հայկական) ծագումից, կարողանում են համապատասխան կարգախոս հնչեցնել, ինչը բացատրության կարոտ թյուրիմացություն է»:

Բահշեյին «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ» կարգախոսը քննադատելիս դատապարտել է նաև երկրում ազգայնականներին հնարավոր հանցագործ որակելու դրսևորումները: Թեև Ազգայնական շարժում կուսակցության նախագահը անուն չի նշել, սակայն վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ազգայնամոլ շրջանակներին հասցեագրված նույն օրվա մեղադրանքով ակամա հստակեցրել է, թե ում դեմ են ուղղված նրա խոսքերը: Ահա թե Ստամբուլի արդյունաբերողների միությունում ինչ է ասել Թուրքիայի վարչապետը. «Ազգայնականությունը վիճարկման մշտական առարկա է: Ես չեմ ընդունում որպես ազգայնականներ նրանց, ովքեր ո՛չ օրենք են ճանաչում, ո՛չ իրավունք, հեշտությամբ սպանում են անպաշտպան մարդկանց, առանց գիտակցելու՝ հանուն ինչի, և դա համարում են ազգայնականություն: Քացի Աստծուց, ոչ ոք չի կարող առնել Աստծո տված հոգին և չպետք է առնի: Նման փորձի դեպքում ինքներդ կբացահայտեք ձեր բուն դեմքը, դառնալով մարդասպան, դահիճ և բռնատեր»:

Ի դեպ, մինչ ելույթը վարչապետ Էրդողանը Հրանտ Դինքի սպանության առթիվ ցավակցություն հայտնելու համար այցելել էր հանգուցյալի բնակարան և Պոլսո հայոց պատրիարքարան, որտեղ Մեսրոպ Բ Մովսեսյան պատրիարքին ասել էր, որ մարդասպանի ձերբակալությունը բավարար չէ, և իրենք ներկայումս աշխատում են սպանության բուն կազմակերպիչներին բացահայտելու ուղղությամբ:

Միաժամանակ նա խոհեմ հայտարարությունների համար իր երկրի անունից շնորհակալություն էր հայտնել ինչպես Պոլսո հայոց պատրիարքին, այնպես էլ «մեծարգո» տիկին Ռաբել Դինքին:

27.01.2007

«ԹՈՒՐԻ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ ԲՐԻԳԱԴՐ» ՏԵՐ Է ԿԱՆԳՆՈՒՄ ՀՐԱՆՏ

ԴԻՆԷԻՆ ՍՊԱՆՈՂՆԵՐԻՆ

Նախորդ համարում «Ազգը» տեղեկացրել էր, որ «Թուրք վրիժառուների բրիգադը» սպառնում է պայթեցնել «Ակօսի» շենքը Հունվարի 26-ին էլ կառավարամետ «Ենի շաֆաքը» տեղեկացրել է այն փաթեթի մասին, որը վերոնշյալ բրիգադը իբրև պայթուցիկ տեղադրել էր Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի մուտքի մոտ: Երբ անվտանգության ծառայությունները փաթեթը վնասագերծելու նպատակով «պայթեցրել» են դա, դրա միջից ընդամենը դուրս է եկել «Թուրք վրիժառուների բրիգադի» ստորագրությամբ մի հաղորդագրություն, որտեղ գրված է. «Ազատ արձակել մեր Օգյուն և Յասին եղբայրներին»:

Խոսքը Հրանտ Դինքին սպանող Օգյուն Սամասթի և սպանության պատվիրատու Յասին Հայալի մասին է: «Ենի շաֆաքն» այս ամենին անդրադառնում է «Օգյունին և Յասինին «Թուրք վրիժառուության բրիգադն» է տեր կանգնում» վերնագրով և նշում, որ Թուրքիայում այս բրիգադը կազմավորվել է նախքան 1980թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումը:

Բրիգադը, ըստ թուրքական թերթի, հեղաշրջմանը հաջորդող տարիներին միառժամանակ լուռ է մնացել, սակայն հետագայում ստանձնել է ինչպես Մարդու իրավունքների միության նախագահ Աքըն Բիրդալի դանակահարության, այնպես էլ Դիարբեքրի կենտրոնական զբոսայգու ավտոբուսի կանգառում հեռահար կառավարման ռումբի պայթեցման պատասխանատվությունը: Ի դեպ, ռմբահարությունը տեղի էր ունեցել 2006թ. սեպտեմբերի 12-ին, որի հետևանքով զոհվել էր 10 հոգի, մեծամասնությամբ՝ երեխաներ:

30.01.2007

«ՄԵՆՔ ԲՈՒՐՄ ՀՐԱՆՏ ՁԵՆՔ, ԻՄ ԱՆՈՒՆԸ ՄԻՆԱՆ Է»

Հայտարարում է Անկարայի առևտրի պալատի նախագահը

Հունվարի 23-ին Ստամբուլում ակնավոր թուրքահայ լրագրող Հրանտ Դինքի հուղարկավորությանը մասնակցել էին հարյուր հազարավոր հայեր, թուրքեր, քրդեր, ալավիներ, ասորիներ և ազգային փոքրամասնությունների այլ ներկայացուցիչներ: Մասնակիցները կրում էին «Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք ենք» գրությամբ պաստառներ:

Չնայած սգո արարողության կազմակերպիչների նախազգուշացումներին, հուղարկավորության մասնակիցներն, այնուամենայնիվ, եկեցրել էին «Մարդասպանը 301-րդ հողվածն է», «Մարդասպան պետություն», «Ֆաշիստական իշխանություններ» ձևակերպմամբ կարգախոսներ, ինչպես նաև սպանության անչոթությամբ ուղղակի դատապարտել էին Թուրքիայում առկա ազգայնականությունը:

«Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք» գրությամբ պաստառների, առավել ևս վերոհիշյալ կարգախոսների և ազգայնականության դատապարտման նկատմամբ մոտեցումը երկրում միանշանակ չէ: Ինչպես պաստառներն, այնպես էլ կարգախոսներն ու Դինքի սպանության վերագրումն ազգայնական շրջանակներին, խստագույնս դատապարտել էին «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպություններ՝ «Ազգայնական շարժում» և «Մեծ միասնություն» կուսակցությունները:

Դատապարտման հարցում վերջիններին էր միացել ժողովրդահանրապետական կուսակցությունը: Հատկանշական է, որ Անկարայի առևտրի պալատի նախագահ Սինան Այգյունն էլ միացել է այս կուսակցությանը: Թեև թուրքական «Թերջուման» թերթը Այգյունի հայտարարություններին «Մենք բոլորս Հրանտ չենք, իմ անունը Սինան է» վերնագրով անդրադարձել է դեռևս հունվարի 26-ին, սակայն չպետք է մոռանալ Հայաստան-Թուրքիա հարաբերություններում Անկարայի առևտրի պալատի ստանձնած ակտիվ դերի մասին:

Ինչ վերաբերում է պալատի նախագահ Սինան Այգյունին, ապա որպես կանոն Անկարայում նա է ընդունում հայաստանյան պատվիրակություններին, ընդ որում՝ ոչ միայն գործարար, այլև հասարակական և քաղաքական կազմակերպությունների, որոնց թվում է եղել Հայաստանի երիտասարդական կուսակցության պատվիրակությունը:

Քանի որ Այգյունը հայաստանյան պատվիրակություններին ընդունում է հայ-թուրքական հարաբերություններին նպաստելու պատրաստակամությամբ, ուստի ժամանակավրեպ չենք համարում նրա «Թերջուման» թերթի հունվարի 26-ի համարում հրապարակված հայտարարություններին անդրադառնալը:

Ըստ թուրքական թերթի, Անկարայի առևտրի պալատի խորհրդի նիստում Այգյունը, դատապարտելով Հրանտ Դինքի սպանությունն, ասել է. «Ես այդ կարգախոսներն անձամբ լսել եմ այնտեղ, ըստ որոնց սպանության համար մեղավոր էր համարվում թուրքական ազգայնականությունը, մարդասպան էր հռչակվում 301-րդ հողվածը, թուրքական պետությունը... Ահավասիկ, մարդասպանը ձերբակալված է, հայտնի է նրա անունը: Թուրքիայի Հանրապետությունն իբրև պետություն երբեք մարդասպան չի եղել, չի լինելու»:

Այնուհետև նա շարունակել է. «Հուլարկավորությանը բարձրադաս կամ պաստառներից մեկի վրա գրված էր. «1.5 մլն + 1», դրանով փորձ էր արվում ասել, թե 1.5 մլն հայերին մորթած թուրքերն սպանել են ևս մեկին: Ասել էի, կրկնում եմ, որ մենք թուրք ազգի ներկայացուցիչներն ենք և այս երկրում բնակվում ենք շուրջ 1.000 տարի: Բոլորս Հրանտ չենք, իմ անունը Սինան Այգյուն է, և մենք Հրանտ չենք»:

Վերջում Անկարայի առևտրի պալատի նախագահն ասել է, որ ժողովուրդը չի հասկանում քրեական նոր օրենսգրքի 301-րդ հոդվածի իմաստը, և ինքն այս հոդվածը շրջանակի մեջ է առել և առանց որևէ մեկնաբանության կախել իր աշխատասենյակի մոտքի մոտ:

06.02.2007

«ՔԻՉ ԷՐ ՄՆՈՒՄ ՄԱՐԴԱՍՊԱՆԻ ԶԱԿԱՏԸ ՀԱՄԲՈՒՐԵՆ»

Անվտանգության ծառայություններն, ըստ «Ռադիկալի», հերոսացնում են Հրանտ Դինքին սպանող Սամասթին

Հրանտ Դինքի սպանությունից 36 ժամ հետո Սամսունի ավտոկայանում անվտանգության ուժերին հաջողվել էր ձերբակալել Օգյուն Սամասթին: Թուրքական կենտրոնական թերթերը, հրապարակելով մարդասպանի լուսանկարը, հարց էին բարձրացրել, թե նրան ո՞վ է լուսանկարել այն շրջանակի ֆոնին, որի վրա պատկերված Թուրքիայի դրոշմը գարդարում է Քեմալ Աթաթուրքի հետևյալ խոսքերը. «Հայրենիքի հողը սուրբ է, չի կարելի թողնել ճակատագրի քմահաճույքին»:

Տրապիզոն տեսուչներ գործուղող Էրդողանի կառավարությունը փետրվարի 1-ին, CNN-ի տվյալներով, Անկարայից նաև Սամսուն էր գործուղել երեք տեսուչ: Նրանք պարզել են, որ Սամասթը լուսանկարվել է Սամսունի անվտանգության վարչության ահաբեկչության դեմ պայքարի բաժնում: Ըստ երևույթին, «Պետության ազգային խորհրդանիշների մասին» օրենքը ոտնահարելու մեղադրանքով դատական գործ կհարուցվի մարդասպանին լուսանկարողների դեմ: Խնդիրը, սակայն, սոսկ լուսանկարը չէ, ոչ էլ այդ լուսանկարով Սամասթի հերոսացումը, այլ այն տեսաժապավենը, որը փետրվարի 1-ին հեռարձակվել է թուրքական մասնավոր հեռուստատեսություններից մեկով:

Տեսաժապավենում ոստիկանության և ժանդարմերիայի ներկայացուցիչները ոչ միայն իբրև հերոսի են դիմավորել Սամասթին, այլև նրա հետ, վերոհիշյալ շրջանակի ֆոնին, նկարվելու համար հերթի են կանգնել, ձեռքը տալով ԹՀ-ի դրոշմը: Ընդ որում, «Հյուրիերթն» ու «Միլիտերը» երեկվա համարներում առաջին էջից լուսաբանելով այս ամենը, դա որակել են որպես «սկանդալ», «Փոստան»՝ խայտառակություն, իսկ «Ռադիկալը»՝ «Քիչ էր մնում մարդասպանի ճակատը համբուրելին» վերնագրով պարզաբանել է այս խայտառակության էությունը:

Փետրվարի 2-ին ժանդարմերիայի գլխավոր հրամանատարությունը հերքել է մարդասպանի լուսանկարմանն առնչվող հրապարակումների իսկությունը, խստագույնս դատապարտել մամուլին, իսկ Սամսունի ահաբեկչության դեմ պայքարի բաժնում արված տեսագրության առնչությամբ հայտարարել. «Այդ տեսագրության հրապարակումը թուրքական ԶՈՒ-ի վարկաբեկմանը նպատակամղված միտումնավոր արարք է»:

07.02.2007

«ԲՈՒՈՐՄ ՏԲԱՊԻՋՈՆՑԻ ԵՆՔ, ԲՈՒՈՐՄ՝ ԹՈՒԲՔ, ԲՈՒՈՐՄ՝ ՕԳՅՈՒՆ ՍԱՄԱԹ, ԲՈՒՈՐՄ՝ ԱԼԻ ԱՂՋԱ»

Մարդասպաններին հերոսացնում են նաև թուրք զանգվածները

«Ազգը» նախորդ համարում «Քիչ էր մնում մարդասպանի ճակատը համբուրելին» վերնագրով տեղեկացրել էր, որ Սամսունի անվտանգության վարչության ահաբեկչության դեմ պայքարի բաժնում ինչպես են հերոսացրել Հրանտ Դինքի սպանության մեղադրանքով ձերբակալված Օգյուն Սամասթին: Երեկվա համարում «Միլիտերն» էլ գրել է մարդասպան Սամասթի և սպանության պատվիրատու Յասին Հայալի հերոսացման նոր դրսևորումների մասին, միաժամանակ ընդգծելով, որ այդ դրսևորումները զուգորդվում են Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքին, Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մուրաֆյանին և «Զաման» թերթի հեղինակ Էթիեն Մահճոպյանին հասցեագրված սպառնալիքներով:

Մինչ դրանց բովանդակությանն անդրադառնալով, ասենք, որ ականավոր լրագրող Հրանտ Դինքի սպանության գործով Անկարայից Սամսուն գործուղված տեսուչներն ահաբեկչության դեմ պայքարի բաժնում մարդասպանի հերոսացմանը մասնակցելու համար պաշտոնից հեռացրել էին մի ոստիկանի, իսկ նույն բաժնի ժանդարմերիայի սերժանտը տեղափոխվել էր այլ քաղաք:

Փետրվարի 5-ին Դինքի սպանության առնչությամբ Ստամբուլի անվտանգության վարչության թերագումները հետաքննող տեսուչների եզրակացության հիման վրա պաշտոնից ազատվել է նաև նույն վարչության հետախուզության բաժնի պետ Ահմեդ Իլիան Գյուլերը: Նա իր վրա է վերցրել Դինքի սպանությունից դեռևս 11 ամիս առաջ «իրազեկիչի» տվյալների հիման վրա Տրապիզոնից արված նախազուլաացումներին ընթացք չտալու ողջ պատասխանատվությունը: Իրանով էլ Գյուլերը փրկել է Ստամբուլի անվտանգության վարչության պետ Ջելալթեթին Ջերրահին, որից հետո տեսուչները հարկ չեն համարել հարցաքննել վերջինին:

Թուրքական թերթերը, անդրադառնալով այդ փաստին, նաև նշում են, որ պաշտոնից ազատված հետախուզության բաժնի պետ Գյուլերն այժմ թևն էր Ստամբուլի անվտանգության վարչության պետ Ջերրահի:

Ինչ վերաբերում է հերոսացման նոր դրսևորումներին, այս «Միլիտերը» գրում է, որ «Փելիթիսպոր» ֆուտբոլային թիմի կայքէջը որտեղ խաղում էր Դինքի սպանության պատվիրատու Յասին Հայալը, լի է ինչպես մարդասպան Սամասթին, այնպես էլ Հայալին գովերգող նամակներով: Թուրքական թերթը զարմանալի է համարում այն, որ վերոհիշյալ զազրեյի նամակները, չնայած կենտրոնական մամուլի ահազանգին, շարունակում են պահպանվել ֆուտբոլային այս թիմի կայքէջում:

«Միլիտերի» հրապարակումից պարզվում է, որ «Փելիթիսպոր» ֆուտբոլային թիմի կայքէջում ֆորում է բացվել, որի մասնակիցները վիրավորական արտահայտություններով սպառնալիս մատնացույց են արել Փամուքին, Մուրաֆյան պատրիարքին, թե հերթը նրանցն է, ավելացնելով. «Թուրքական կրակոցին են դատապարտված թուրքերի բոլոր թշնամիները»:

«Միլիտերի» ուշադրությունն են գրավել կայքէջում ֆորումի մասնակիցների հետևյալ արտահայտությունները. «Օգյուն Սամասթ, ես մշտապես քո կողքին եմ», «Բոլորս տրապիզոնցի ենք, բոլորս՝ թուրք, բոլորս՝ Օգյուն Սամասթ, բոլորս՝ Մեհմեդ Ալի Աղջան»: Ինչպես հայտնի է, «գորշ գայլերի» երբեմնի գրոհային Ալի Աղջան 80 ականթթթ. մահափորձ էր կատարել Հոռմի երջանկահիշատակ Հովհաննես-Պողոս Երկրորդ պապի դեմ:

«Միլիտեր» այս ամենի մասին տեղեկացնում է «Սահմուկեցուցիչ արտահայտություններ ինտերնետում» վերնագրով: Իսկ թերթի հեղինակ Ջան Դյունդարն էլ տեղեկացնում է, որ մարդասպանի հերոսացման դրսևորումները սոսկ տրապիզոնցիներով չեն սահմանափակվում:

Ահա թե ինչ է գրում նա. «Ընկերս պատմեց, երբ Հրանտ Դինքի հուղարկավորությանը 100.000 մասնակիցներ «Բոլորս հայ ենք» կարգախոսով ցույց էին անում, ցուցարարներին կցված ոստիկանը հեռանալով կողքինի ականջին զարմացած փսփսում է. «Որքան շատ է հայերի թիվը Թուրքիայում...»:

Նախորդ օրը Աֆիոնկարահիսարի Աթաթուրքի անվան մարզադաշտում, երբ տրիբունաները միաձայն սկսեցին գոռալ. «Մենք բոլորս Օգյուն ենք», ոմանք էլ վերջինի օրինակով սպիտակ գլխարկներ դրեցին, ականա մտածեցի. «Որքան շատ է մարդասպանների թիվը Թուրքիայում»:

Չարմանալին սոսկ անմարդկային այս բարբարոսությունը չէ, այլ ծափահարություններով բարբարոսության ողջունումը տրիբունաներում... Դավադիր սպանության պատասխանատվության համրեղ հանուր ստանձնումն ու դրսևորվող անխղճությունը, որը հազիվ թե հնարավոր լինի մարսել:

Անցյալ շաբաթ հետևում էինք Հրանտ Դինքին սպանողներին: Այս շաբաթ զբաղվում ենք մարդասպանության տրիբունաները լցրած թեկնածուներով: Քանի դեռ մեր դեմ կանգնած են զանգվածներ, որոնք հպարտորեն գոռում են՝ մենք ենք սպանել, ի՞նչ իմաստ ունի, թե ատրճանակից ո՞վ է կրակել կամ որ բաժանմունքում ովքե՞ր են մարդասպանի հետ լուսանկարվել:

15.05.2007

«ՍԱ ՎԵՐՁԻՆ ՀՈՒՇԱԳԻՐՆ Է, ՉԻ ԿՐԿՆՎԵԼՈՒ»

Հայերին զգուշացնում է քեմալական ազգայնականությունը

Երեկ «Գլոբալ հայ» լրատվական ծառայությունն «Ազգի» խմբագրությունը ուղարկեց այն հաղորդագրության պատճենը, որն Ստամբուլի Թուփգափու թաղամասում գործող Սբ. Լևոն Վարդուխյան հնգամյա դպրոցին ֆաքսով հասցեագրել է ստամբուլաբնակ ոմն Թեմել Մալաթյալը: Դրա առաջին էջում հետևյալ մակագրությունն է. «Ուղարկված է խնդրին առնչվող բոլոր հիմնարկներին: Այս շարժումն սկսել ենք ձեռնարկել թուրք ազգի ապագայի և միասնության հարատևության համար: Հարգանքներով»:

Երկրորդ և երրորդ էջերում «Վերջին նախագգուշացումն ու հուշագիրը» վերնագրով շարադրված է հաղորդագրության տեքստը, որտեղ «անջատողական» այլ խմբավորումների մեջ առաջինն սպառնալիքի են ենթարկվում հայերը, ընդ որում նաև Հրանտ Դինքի սպանության բացահայտմանը հետամուտ լինելու համար:

Հաղորդագրության մեջ նշվում է. «Որքան էլ ցավալի լինի միջադեպը, պետությունը կատարել է սպանությունն իրագործողներին իրավապահ մարմիններին հանձնելու իր պարտականությունը: Ավելին, պահանջել և ոմանց թերացումների համար պաշտոնանկ անել բոլորին նշանակում է առաջնորդվել պատասխանատու բոլոր գործիչների անդորրը խախտելու մտայնությամբ: Մոռանալով միևնույն ազգի մասը կազմելու հանգամանքը, սպանությունից հետո բացականչելը. «Մենք բոլորս հայ ենք» բոլորս Հրանտ Դինք», շովինիզմի դրսևորում է և ապստամբության նպատակամղված գործողության փորձ: Չմոռանալ, որ այս երկրում բացի մեր հայ քաղաքացիներից կան նաև հայաստանցի հայեր, որոնց ընդհանուր թիվը շուրջ 100.000 է, և հայտնի են ինչպես նրանց բնակության հասցեն, այնպես էլ աշխատանքային վայրը: Հետայսու ցանկանում ենք մեր հայ քաղաքացիներին տեսնել ՀՅ-ի կամ այլ իրադարձությունների առնչությամբ համարտությունը հրապարակավ ասողի և թուրքական պետությունը պաշտպանողի դերում: Ուշիուշով հետևելու ենք մատնանշված դերի կատարմանը, այլապես դաժաղների մեջ նորից դուրք եք հաշվելու, թե մամանակին որքան հայ կար և որքան էր թուրքերի թիվը: Այս հողը

երբեք չներեց դավաճանությունը և չի ներելու: Ով կողմ չէ՝ մեր դրախտ հայրենիքին, կոչչանա»:

Տեքստն ավարտվում է հետևյալ ասույթով. «Չկա պաշտպանության գիծ, այդ գիծը ողջ տարածքն է: Եթե խնդրո առարկան հայրենիքն է, ապա մնացածը՝ մանրամասնություն», Մուսաբախ Քեմալ Աթաթուրք: Ասույթին է հաջորդում «Սա վերջին հուշագիրն է չի կրկնվելու» նախադասությունը:

Թուրքական ազգայնականության հերթական դրսևորումը հանդիսացող այս հաղորդագրությունն անստորագիր է: Սակայն դրա վերջում գետեղված Քեմալ Աթաթուրքի ասույթից ակնհայտ է դառնում, որ գործ ունենք ազգայնականության քեմալական տարատեսակի հետ: Քանի որ քեմալական ազգայնականները ծառայում են «խորքային պետության» նպատակներին, իսկ այդ պետությանը վերահսկում է թուրքական ԶՈւ ԳՇ-ի հատուկ նշանակության գործողությունների վարչությունը, ուստի հաղորդագրությունը պետք է վերագրել ներկայումս երկրում ծավալվող քաղաքական ճգնաժամին պատճառ դարձած բանակին:

17.05.2007

«Ի՞նչ ԱՆԵՆՔ, ՈՐ ՉԱՆՔԱՅԱՅԻ ՊԱԼԱՏԻ ԱՌԱՔԻՆ ՏԵՐԸ ՀԱՅ Է Ե՛ՂԵԼ, Մի՞թե սա ենթադրում է, որ հայ լինի նաև վերջին տերը, իսկ աշխարհակազմի անդամները՝ հրեա»

Երեկ լրացավ Թուրքիայի Հանրապետության նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի լիազորությունների ժամկետը: Քանի որ նոր նախագահ դեռևս չի ընտրվել, ավելին՝ դրա շուրջը երկրում քաղաքական ճգնաժամ է առաջացել, ուստի Սեզերն առայժմ կշարունակի պաշտոնավարել: Ե՞րբ կընտրվի Թուրքիայի նոր նախագահը, դժվար է ասել, որովհետև հայտնի չէ՝ ի՞նչ ընթացակարգով է ընտրվելու նա. համաժողովրդական քվեարկությամբ, թե՛ Մեջլիսում պատգամավորների ձայներով:

Պարզապես գիտենք, որ խորհրդարանական վաղաժամկետ ընտրությունները Թուրքիայում նշանակվել են հուլիսի 22-ին, իսկ Մեջլիսը հավանություն է տվել սահմանադրական փոփոխությունների այն փաթեթին, որը նախատեսում է նաև երկրի նախագահի համաժողովրդական քվեարկությամբ ընտրությունը:

Նախագահի ընտրության ընթացակարգի շուրջը լուրջ բանավեճեր են ծավալվում Թուրքիայում: Մինչ այդ վիճարկվում էր, թե նախապես ում է պատկանել Չանքայայի ամառանոցը, որը հետագայում վերածվեց նախագահի նստավայրի: Վիճարկումների առումով ուշագրավ է Յալչըն Սոների «Չանքայայի պալատի առաջին սեփականատերը հայ էր» վերնագրով «Հյուրիեթի» մարտի 25-ի

համարում հրապարակված հոդվածը: Դրան «Ենի չաղի» մարտի 26-ի համարում «Թող հայ լինի նաև Չանքայայի վերջին տերը» վերնագրով արձագանքել էր Արսլան Բուլուբը:

Նախքան վիճարկումներին անդրադառնալը, նշենք, որ Չանքայա է կոչվում Անկարայի վրա իշխող այն բլուրը, որտեղ Թուրքիայի նախագահի նստավայրն է: Թուրքերեն «չան» բառը նշանակում է գանգ, իսկ «քայա»՝ ժայռ: Այս հանգամանքը հիմք է տվել որոշ թուրք պատմաբաններին ենթադրելու, որ ժամանակին խաղողի և մրգատու այգիներով ծածկված Չանքայայում եղել է եկեղեցի, չի քացառվում, որ հենց հայկական:

Համենայն դեպս, այն հողատարածքը, որի վրա հետագայում կառուցվել է Չանքայայի պալատը, Անկարայում հայտնի է եղել «Ղասաբյանի ամառանոց» անունով: Հողվածագիրը գրում է, որ Ղասաբյանն Անկարայի մեծահարուստ ոսկերիչներից էր, նաև՝ առևտրական: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբներին, երբ նա լքում է քաղաքը, ապա նրա կղմնդարձածկ երկհարկանի քարե ամառանոցն ու այգին անցնում են Անկարայի հայտնի ընտանիքներից Բուլգուրլուզադներին:

1919թ. դեկտեմբերի 27-ին ժամանելով Անկարա, Մուստաֆա Քեմալը մինչև 1921թ. մարտի 13-ը բնակվում է շտապ կայանի վերածված գյուղատնտեսական դպրոցի սենյակներից մեկում, որտեղից էլ դեկավարում է ազգային պատերազմները: Նրա մերձավորներն զգալով քաղաքի կայարանի անմիջական հարևանությամբ գտնվող այս դպրոցի անհարմարությունը, նրան են առաջարկում Ղասաբյանի ամառանոցը: Դա դուր է գալիս Մուստաֆա Քեմալին, որից հետո ամառանոցը գնում են և նվիրում նրան: Նույն տարվա հունիսին նա տեղափոխվում է մասնակի վերանորոգված այդ ամառանոցը:

1922թ. օգոստոսի 26-ին ջախջախելով հունական զորքերին, թուրքական բանակը սեպտեմբերի 9-ին ներխուժում է Իզմիր: Այստեղ բանակի գլխավոր հրամանատար Մուստաֆա Քեմալը ծանոթանում է Լաթիֆե խանումի հետ: 1923թ. հունվարի 29-ին Իզմիրում նրանք ամուսնանում են, իսկ փետրվարի 20-ին ժամանում Անկարա: Իզմիրի ամենաերևելի ընտանիքներից մեկում ծնված, եվրոպական կրթություն ստացած Լաթիֆե խանումին զարմանք է պատճառում տարրական հարմարություններից զուրկ Չանքայայի ամառանոցը, և նա ձեռնամուխ է լինում դրա վերակառուցմանը:

Սակայն 1925թ. օգոստոսի 5-ին, բաժանվելով Քեմալ Աթաթուրքից, Լաթիֆե խանումը լքում է Անկարան: Վերանորոգման անվերջ աշխատանքներից հոգնած Աթաթուրքը որոշում է ամառանոցում կառուցել նախագահի նստավայրին պատշաճ շենք: Աշխատանքները 1930թ.-ին հանձնարարվում են ավստրիացի ճարտարապետ Կլեմեն

Հուլյանյաններին, որը, որպես հրեա, նացիստների հետապնդումից փրկվելու համար ապաստանել էր Թուրքիայում: Աշխատանքներն ավարտվում են 1932թ. հունիսին, կառույցն արտաքին գույնի պատճառով ստանում է «Վարդագույն պալատ» անունը: Այս կառույցը 1936թ.-ին համալրվում է «Ապակեպատ» պալատով:

Չանքայան նոր շինություններով են համալրում նաև Քեմալ Աթաթուրքի իրավահաջորդները: Արձագանքելով Յալչընի «Չանքայայի առաջին սեփականատերը հայ էր» հոդվածին, Բուլուբն առարկում է ոչ այնքան դրա բովանդակությանը, որքան գործած տպավորությանը: Նա մատնանշում է. «Երբ դու գրում ես Չանքայայի պալատի առաջին տերը հայ էր, իսկ ճարտարապետը՝ հրեա, ապա պալատը նախորդ տերերին վերադարձնելու հարց ես բարձրացնում: Հայերին Անկարա են բերել սելջուկները, իսկ Ստամբուլ՝ օսմանցիներն, այսինքն՝ թուրքերը: Նրանք ունեցվածքի արժեքը չիմացան, անցած թող լինի»:

Այնուհետև Բուլուբն հիշեցնելով Աթաթուրքի պատգամի մասին, հարց է բարձրացնում. «Մի՞թե այսօր այդ պատգամին համապատասխան թուրքական պետությանը ղեկավարում են թուրքերը», շարունակելով. «Արտաքուստ այդպես է թվում, իրականում պատկերը բոլորովին այլ է: Երկրի տնտեսությունը տնօրինում են Անգլիայի, ԱՄՆ-ի և Իսրայելի ենթակայության տակ գտնվող Արժուպային միջազգային հիմնադրամն ու Համաշխարհային բանկը, իսկ արտաքին քաղաքականությունը՝ նշված միջազգային ուժերի հետ նաև՝ ԵՄ-ն: Ինչու: Որով հետև որքան էլ թուրքական անուններ կրեն, երկրում իշխանության ղեկն իսկապես իրենց ձեռքում պահողների սրտում և ուղեղում թուրքականի նշույլ անգամ չկա: Ի՞նչ անենք, որ Չանքայայի առաջին տերը հայ է եղել: Ուզո՞ւմ եք, որ վերջին տերն էլ հայ լինի, իսկ նախագահականի աշխատակազմի անդամները՝ հրեա: Թուրքական պետությունը պետք է որ կառավարեն թուրքերը»:

19.05.2007

«ՄԱՀ ՀԱՅԵՐԻՆ»

«Ազգի» հրապարակմանը այս վերնագրով է արձագանքում թուրքական «Վաթան» թերթը

Մայիսի 14-ին «Գլոբալ հայ» լրատվական ծառայությունն «Ազգի» խմբագրություն է ուղարկել այն հաղորդագրության պատճենը, որը ֆաքսով հասցեագրվել է Պոլսո Թոփգափու թաղամասի Սբ. Լևոն Վարդուխյան դպրոցին: Հաջորդ օրվա համարում «Սա վերջին հուշագիրն է, չի կրկնվելու» վերնագրով մեր թերթը հրապարակեց սպառնալից այս նամակը:

Մայիսի 16-ին «Մահ հայերին» վերնագրով այդ նամակին անդրադարձել է նաև թուրքական «Վաթան» թերթը և գրել.

«Պարզվեց, որ Հրանտ Դինքի սպանությունից հետո Թուրքիայի հայկական դպրոցներին և հայ գործարարներին հաշվեհարդարի սպառնալիքով նամակներ է ուղարկվում»:

«Վաթանը» միաժամանակ արձագանքել է «Գլոբալ հայի» մեր խմբագրություն ուղարկած նամակի հրապարակմանն «Ազգում», ապա և ավելացրել. «Հայկական այս լրատվամիջոցները նամակը մեկնաբանել են իբրև ամենացայտուն ապացույց այն ճնշումների և սպառնալիքների, որոնց ենթարկվում են Թուրքիայի հայերը»:

Պետք է ասենք, որ այս մեկնաբանության վերագրումը «Ազգին» իրականությանը չի համապատասխանում: Մենք, նկատելով, որ նամակը մեկնաբանության կարիք չունի, իսկ հայերի նկատմամբ ճնշումները թուրքական իրականության մեջ սովորական երևույթ են, որոշեցինք մեկնաբանելու փոխարեն բացահայտել նամակի հեղինակներին, որովհետև դա անստորագիր էր: Նամակի ավարտը Աթաթուրքի հանրահայտ ասույթներով օրև է կասկած չէր թողնում, որ դա քեմալական ազգայնականության հայատյաց հերթական դրսևորումն է:

19.07.2007

«ՎԱՐՉԱՊԵՏ ԷՐԴՈՂԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԷՐԶՐՈՒՄԸ ՀԱՆՁՆԵԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»

Էրզրումցիներին նախազգուշացրել է ժողովրդահանրապետական կուսակցությունը

Հուլիսի 22-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի վաղաժամկետ համընդհանուր ընտրություններում վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի խլամամետ «Արդարություն և բարգավաճում» կուսակցության հաղթանակը կասկած չի հարուցում: Միանգամայն հնարավոր է համարվում նաև նրա միանձնյա իշխանությունը երկրում: Թերևս դա է պատճառը, որ թուրքական քաղաքական շրջանակները վիճարկում են ոչ թե ընտրություններում Էրդողանի կուսակցության հաղթանակը կամ դրանց արդյունքում նրա միանձնյա իշխանությունը, այլ Մեջլիսում բացարձակ մեծամասնություն ապահովելու հավանականությունը:

Այս հանգամանքը խիստ մտահոգում է Թուրքիայում դեռևս Քեմալ Աթաթուրքի ճնավորած քաղաքական ընտրախավին, որն իբրև վերկուսակցական ուժ գործել է քեմալական ազգայնականության քողի տակ, և անկախ կառավարությունների փոփոխությունից, միշտ էլ արտոնյալ վիճակում է եղել: Ահա թե ինչու անմիջականորեն բանակի հովանավորած այս ընտրախավին ծառայող պետական և կուսակցական կառույցները փորձում են աներևակայելի հերյուրանքներով վարկաբեկել ինչպես վարչապետ Էրդողանին, այնպես էլ նրա կուսակցությանը:

Այս կառույցներից պետք է առանձնացնել Թուրքիայի քաղաքացիական ընտրախաղի նոր պես գրոհային ծառայող «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպությանը՝ Ազգայնական շարժում կուսակցությանը և հատկապես բանակի համար խոսափողի դեր կատարող ժողովրդահանրապետական կուսակցությանը, որի պաշտոնական գաղափարախոսությունը քեմալական ազգայնականությունն է:

Այս կուսակցությունը, ինչպես հուլիսի 8-ի համարում նշել է «Ենի մեսաժ» թերթը, գովազդային ցուցապաստառներ է տեղադրել Էրզրումում: Այդ ցուցապաստառներում, որոնք պատրաստվել են Էրզրումից ժողովրդահանրապետական կուսակցության պատգամավորության թեկնածու Էրբաշար Օզոյի նախագծով, ժամանակակից Թուրքիայի հետ պատկերվել է նաև «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագրին համապատասխան ձևափոխված Թուրքիայի քարտեզը: Երկրորդում մասնատված Թուրքիայի մի հատված ընդգրկվել է Քուրդիստանի, իսկ մյուսը՝ Էրզրումը ներառյալ, Հայաստանի սահմաններում:

Ցուցապաստառների վերևում եղել են՝ «Ժողովրդահանրապետական կուսակցության իշխանությունը թույլ չի տալու, որ մեր պետությանը մասնատեն», իսկ ներքևում՝ «Դուք գիտե՞ք, որ «Մեծ Մերձավոր Արևելք» նախագծի համանախագահ վարչապետ Էրդողանը պատրաստվում է Հայաստանին հանձնել Էրզրումը» մակագրությունները:

Ցուցապաստառները խիստ զայրացրել են Էրզրումցիներին: Հուլիսի 13-ին ընդառաջելով նրանց դիմումը, Էրզրումի քաղաքապետարանը հավաքել է դրանք և այդ մասին պաշտոնապես հայտարարել, ընդգծելով. «Անջատողականության դրսևորումներ պարունակող վահանակները, որոնք քաղաքում դժգոհության և մտահոգության պատճառ են դառնում, չեն կարող օգտագործվել քարոզարշավի նպատակներով»:

19.09.2007

ՀԵՏԱԲՆՆՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՆՏ ԴԻՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՎԵՐԳՈՂ

ԵՐԳՉԻ ԳԵՄ

Տրապիզոնցի է նաև նա, ինչպես մարդասպանն ու սպանության պատվիրարուն

Վերջին օրերին թուրքական լրատվամիջոցների ուշադրությունը գրավել է հասարակության լայն շրջանակներին անձանոթ երգիչ Իսմայիլ Թյուրուֆը: Դրդապատճառն այն ձայնակավառակն ու տեսահոլովակն են, որոնք թողարկվել են Թյուրուֆի երգով: Օզան Արիֆի խոսքերով գրված երգում «Ակօսի» գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանությունը գովերգելու համար Թյուրուֆը առաջ է բերել ինչպես հանգուցյալի ընտանիքի դատապաշտպանների, այնպես էլ թուրք մտավորականների և թուրքական մամուլի հակազդեցությունը:

Ավելին, դատապաշտպաններից Ֆեթիյե Չեթինը համարելով երգի թողարկումը հանցագործության ակնհայտ դրսևորում, պահանջել է, որ իրավապահ մարմինները միջոցներ ձեռնարկեն երգչի, երգի խոսքերի հեղինակի, ձայնակավառակն ու տեսահոլովակը թողարկող ընկերության դեմ և փակել այն կայքէջը, որտեղ տեղադրվել է այս ամենին առնչվող տեսագրությունը:

Սեպտեմբերի 17-ին Ստամբուլի դատախազությունը հետաքննություն է սկսել Օզան Արիֆի, Իսմայիլ Թյուրուֆի և նրանց դեմ, ովքեր երգի տեսագրությունը ներկայացրել են You Tube կայքէջին: Այսօր Արիֆն ու Թյուրուֆը ցուցմունքի համար հրավիրվել են դատախազություն: Դրա առնչությամբ «Վաթան» թերթին տված հարցազրույցում Թյուրուֆն ասել է, որ ինքը չի գովերգում Հրանտ Դինքի սպանությունը, գրպարտություն են գովերգության մասին հրապարակված նյութերը, դատապարտում է գրպարտողներին և չի զղջում երգի համար: Այնուհետև նա ավելացրել է. «Երգից չեմ հրաժարվի: Շարունակելու եմ երգել: Ինդիրը ոչ թե երգն է, այլ տեսահոլովակն ու դրանում պատկերված լուսանկարներն են: Մի՞թե կարելի է առաջնորդվել «Եթե հայ է, ուրեմն պետք է ազգի դավաճան լինի» տրամաբանությամբ»:

Ի դեպ, ձայնակավառակը թողարկող ընկերությունը կոչվում է «Օզյուն», որը Դինքին սպանող Սամասթի անունն է նաև: Մարդասպանի անվան հետ երգի խոսքերում հիշատակվում է նաև սպանության պատվիրատու Հայալի Յասին անունը: Երգում դատապարտվում են «հայամետները» (քեմալական ազգայնականներն այսպես են անվանում ՀՅ-ի հարցում Թուրքիայի պաշտոնական թեզը քննադատող թուրք մտավորականներին՝ Թաներ Աքչամի գլխավորությամբ), հիշատակվում է հայրենիքի դավաճանների մասին, թե նրանց հարցը անպայման կլուծվի, որին հաջորդում է «Սև ծովում երբեք մայր չի մտնում թուրքական և իսլամական արևը» նախադասությունը:

Ինչ վերաբերում է տեսահոլովակին, ապա այնտեղ մարդասպան Օզյուն Սամասթի և սպանության պատվիրատու Յասին Հայալի լուսանկարների ֆոնին պատկերվել է «Ակօսի» խմբագրատան մայթին անշունչ ընկած հանգուցյալ Դինքի աճյունը: Այլ կերպ, սպանության գովերգումն ակնհայտ է, իսկ հանցանքի տարրերի առկայությունը ինչպես երգի խոսքերում, այնպես էլ տեսահոլովակում ակնհայտ:

Հատկանշական է, որ Օզյուն Սամասթի և Յասին Հայալի պես տրապիզոնցի է նաև «Մուֆ ծրագրեր մի դյուբեք» երգի կատարող Իսմայիլ Թյուրուֆը: Հիշեցման կարգով նշենք նաև, որ Դինքի սպանությունից մեկ տարի առաջ մեծապես լազերով բնակեցված Տրապիզոնում էր կատարվել կաթոլիկ քահանա Սանտորոյի սպանությունը, այն էլ եկեղեցում, հենց աղոթքի պահին: Այսինքն՝ մարդասպանի պակասորդ չունեցող տրապիզոնցիները ինչո՞ւ ունենան սպանությունը գովերգողների պակասություն:

ԴԻՆՔԻՑ

Հիմա արդեն նրանց հետպայնդում է մեր հանգուցյալ հայրենակցի հիշատակը

Այսօր մեր հայրենակից Հրանտ Դինքի մահվան տարելիցն է: Մեկ տարի առաջ, հունվարի 19-ին, տեղական ժամանակով 15-ին Ստամբուլում՝ «Ալյոս» շաբաթաթերթի խմբագրական մուտքի մոտ Օգյուն Սամասթ կոչված մարդասպան ստահակը ատրճանակով թիկունքից երեք կրակոց էր արձակել Դինքի վրա, ապա և դիմել փախուստի: Իրավապահ մարմինները սպանությունից 36 ժամ հետո Սամսունի ավտոկայանում ձերբակալել էին Սամասթին: Սակայն Տրապիզոնի անվտանգության վարչությունում, վարչության աշխատակիցները, չթաքցնելով իրենց հիացմունքը պատանի ստահակի նկատմամբ, թուրքական մամուլի վկայությամբ հերթի էին կանգնել, որ լուսանկարվեն նրա հետ: Ավելին, որպեսզի լուսանկարը տպավորիչ լինի, նրանք մարդասպանի ձեռքին տվել էին Թուրքիայի դրոշը, կարծես ընդգծելու համար, որ դա ներկված է Օգյուն Սամասթի նման պատանի, թե մեծահասակ բազմաթիվ ստահակների զոհը դարձած ժողովուրդների, ինչպես նաև հազարավոր անմեղ մարդկանց արյունով:

Հրանտ Դինքի հուղարկավորությանը մասնակցել էր հայերի, հույների, ասորիների, թուրքերի, քրդերի, ալավիների ավելի, քան 200.000-անոց բազմությունը: Այս հանգամանքը, ինչպես նաև սգո թափորի «Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք» կարգախոսը Թուրքիայում աննախադեպ բնույթ էր հաղորդել թաղման արարողությանը: Եթե ոչ աննախադեպ, ապա ակնհայտ լիտիություն էր Դինքի նկատմամբ կարեկցանքի, իսկ ընտանիքին վշտակցություն արտահայտող այդ կարգախոսին ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքի ստեղծած ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցության, ազգայնական շարժում և վերջինի պես «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպությունը հանդիսացող «Մեծ միասնություն» կուսակցությունների բուն հակազդեցությունը: Իսկ թուրք խառնամբոխի «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք» մակագրությամբ օրեր, շաբաթներ, ամիսներ շարունակ մարզադաշտերում բարձրացրած ցուցապաստառներն ու ինքնամոռաց բացականչությունները լիտիության գագաթնակետն էին:

Ի դեպ, եթե վերոհիշյալ կուսակցությունները հակազդեցությամբ նախադրյալներ էին ստեղծում «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք» մակագրությամբ ցուցապաստառների բարձրացման համար, ապա թուրք խառնամբոխը ինքնամոռաց բացականչություններով արտահայտում էր մարդասպանին նմանվելու անզուսպ մոլուցքը, որ գովեր-

զի սպանությունը: Հատկանշական է, որ վերոհիշյալ կուսակցություններն առաջնորդվում են քեմալական ազգայնականությամբ, իսկ խառնամբոխին մարզադաշտեր էին առաջնորդում քեմալական մտածողության միությունները:

«Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք» կարգախոսին հակազդելու պատրվակով, մարդասպան Սամասթին պաշտպանության տակ առնելու քեմալական ազգայնականների արարքը, որոնց համար առաջամարտիկի դեր են կատարում քեմալական մտածողության միությունները, մասնակի հիմնավորում է Դինքի սպանության կազմակերպմանը «խորքային պետության» մասնակցության մասին թուրքական իրականության մեջ շրջանառվող կարծիքը: Այլ կերպ, «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք» բացականչություններով մարդասպանին պաշտպանելու քեմալական ազգայնականության փորձերն իրականում ոչ այլ ինչ են, քան հասարակության ուշադրությունը խառնամբոխի ագրեսիվ նկրտումների վրա բևեռելու միջոցով Դինքի սպանությանը «խորքային պետության» ուղղակի, կամ անուղղակի մասնակցությունը քողարկելու դրսևորում:

Թուրքիայում «խորքային պետությունը» գործում է քեմալական ազգայնականության քողի տակ: Իսկ դրա գործունեությունը վերահսկում է դեռևս Քեմալ Աթաթուրքի օրոք ձևավորված առանձնաշնորհյալ ընտրախավը, որի առանցքում «երջանիկ փոքրամասնության համայնք», «սպիտակ» կամ «վարդագույն թուրքեր» հորջորջվող «դյունմեներն» են: Թերևս այս հանգամանքը առիթ է տվել իսլամական մամուլին նշելու. «Դինքին սպանեցին նրանք, ովքեր Նոբելյան մրցանակի են արժանացրել Օրհան Փամուքին»:

Թեև Դինքի սպանության հարցը դրվեց Թուրքիայի ազգային մեծ ժողովի հունվարի 15-ի նիստի օրակարգում, որտեղ ՆԳ նախարար Բեշիր Աթալայն, ի պատասխան հետաքննության հասցեին արված քննադատություններին, ասաց, որ անում են այն, ինչ հնարավոր է, որպեսզի սպանության գործում չմնա ոչ մի մույթ կետ, և հավաստիացրեց. «Չի մնալու, որովհետև դրա բացահայտումը մեր «ճիտին պարտքն է», սակայն բուն կազմակերպիչներն առ այսօր մնում են անհասանելի՝ վարչապետ Էրդողանի կառավարությանը:

«Ենի շաֆաքի» հեղինակ, հանգուցյալ Դինքի մտերիմ ընկեր Այի Բայրամօղլուի դիպուկ արտահայտությամբ. «Կորուստը մեծ է, ամոթը անավոր, վայրագությունը՝ սարսափելի, հակառակ դրան, շարունակում են տեղում դուրս սպանության բացահայտման աշխատանքները: Գուցե և կատարվում է ճիշտ հակառակը, որովհետև հետաքննության ընթացքում ի հայտ եկած որոշակի իրողությունները, երկրում կիրառվող դատաիրավական քաղաքականությունն ու դրա մեթոդները, ոչ այնքան հանգեցնում են բուն հանցագործների բացահայտմանը,

որքան հանցագործության նոր ոլորտներ են ստեղծում: Բացահայտման ճանապարհին պետական գաղտնիքի արգելքն է դրված»:

Հրանտ Դինքի տարելիցին բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Երեկ Դինքի հիշատակին նվիրված լուսանկարչական ցուցահանդեսներ, կլոր սեղաններ և համաժողովներ են կազմակերպվել Քյոլնում, Բեռլինում, Ֆրանկֆուրտում, ինչպես նաև Վաշինգտոնում, Օտտավայում, Լոնդոնում և այլ քաղաքներում:

Գլխավոր միջոցառումներն, ինչ խոսք, «Հունվարի 19-ին, ժամը 15-ին, նույն տեղում, հանուն արդարության» կարգախոսով «Ալօսի» խմբագրատան առջև կազմակերպել են Դինքի զինակիցները, դատապարտելու համար ինչպես չարանենգ սպանությունը, այնպես էլ սպանության պատճառ դարձած թուրքական օրենսգրքի չարաբաստիկ 301-րդ հոդվածը:

Արձագանքելով մեր հանգուցյալ հայրենակցի զինակիցների դեռևս հունվարի 15-ին հրապարակած հաղորդագրությանը, որտեղ մասնավորապես ասվում է. «Ուղիղ մեկ տարի է անցել այն օրից, երբ մեզ դավադրաբար բաժանեցին ջերմ բարեկամ և ճշմարտության թարգման սիրելի Հրանտից: Նրա կորուստը սգալով անցավ ողջ տարին: Մենք՝ այս երկրի քաղաքացիներս, այլևս չենք ուզում վախվորած աղավնու անհանգստությամբ ապրել այն սպանությունների սովերում, որոնց բուն կազմակերպիչները չեն բացահայտվում», հասարակության լայն շրջանակներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել միջոցառումներին:

Նախքան «Ալօսի» խմբագրատան առջև բողոքի ցույց կազմակերպելը, միջոցառումների մասնակիցները, որոնց թվում եղել են արվեստի ու մշակույթի հանրահայտ գործիչներ, հայտնի գրողներ, լրագրողներ, մտավորականներ, ինչպես նաև հասարակայնության ներկայացուցիչներ, այցելել են Հրանտ Դինքի շիրմին: Երեկոյան միջոցառումները շարունակվել են «Լյուքսֆի Քըրդարի» անվան համագումարների պալատում, որը Ստամբուլի ամենաշքեղ համերգային համալիրն է: Այս միջոցառումներին պոլսահայոց «Լուսավորիչ» «Սահակյան», «Սայաթ-Նովա» երգչախմբերի կողքին մասնակցել են նաև Բոսֆորի թատրոնն ու հայտնի արվեստագետներ, որոնցից թերևս կարելի է առանձնացնել աշխարհահռչակ դաշնակահար Լեյլա Մանսուրին: Ինչ վերաբերում է Անկարային, ապա այնտեղ Դինքի համախոհները «Բիրգյուն» թերթի խմբագրության առջև սպանությունը դատապարտելուց հետո, բողոքի երթ են կազմակերպել դեպի մարդու իրավունքների հուշարձան, որտեղ հնչել են հայկական մեղեդիներ:

Թուրքիայում դեռևս չեն բացահայտվում Հրանտ Դինքի սպանության բուն կազմակերպիչները: Սակայն երկրում ավելի ու

ավելի են համախմբվում նրանք, ովքեր մտածում են Դինքի պես: Արալիսով, օրըստօրե աճում է բռնությունը դատապարտողների թիվը թուրք հասարակության մեջ, ի հակակշիռ պաշտողների: Բռնություն պաշտողները կենդանության օրոք վախենում էին Հրանտ Դինքից, հենց դրա համար էլ թիրախ ընտրեցին: Հիմա արդեն նրանք պետք է վախենան հիշատակից, որովհետև բռնություն պաշտողներին սկսել է հետապնդել Դինքի հիշատակը: Դրա վառ ապացույցը մահվան տարելիցի միջոցառումներն են:

27.02.2008

ՀԱՅԱԿԱՆ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ ԱՂՐԵՋԱՆՈՒՄ

Դրանք հանգեցնում են «Խոջալուի կոտորածներով» Հայոց ցեղասպանությունը հակակշռելու փորձերին

Հայ սպանելու համար Ռամիլ Սաֆարով կոչված մարդասպան-ստահակին Ադրբեջանում «տարվա մարդ» ընտրելիս, նա ազգային հերոս հռչակող ադրբեջանական հրոսակը ոչ մի կերպ չի կարողանում ձերբազատվել հայկական դավադրության որոնումներից: Դրանք մերթ հանգեցնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում PKK-ի այսպես կոչված ճամբարների հայտնաբերմանը, մերթ Խոջալուի հենակետերի լռեցումը վերածվում է ադրբեջանցիների նկատմամբ հայերի իրագործած «ցեղասպանության»:

Հայկական դավադրության որոնումներում քեմալական ազգայնականները ջանասիրությամբ աջակցում են ադրբեջանական հրոսակին և ջանք չեն խնայում, որ միջազգային հնչեղություն հաղորդեն դրանց: Հնչեղության առումով չափազանց հատկանշական կլինեք հայի ազգանունով Հայաստանում թուրք-ադրբեջանական քարոզչություն ծավալող հայաստաց տականքների արձագանքը, որոնք Իլիամի խոսափողը դառնալու մոլուցքով հայտնվել են այս քարոզչությունը Հեյդար Ալիևի գովերգությամբ համադրելու հարկադրանքի տակ: Գարեգին Նժդեհն իզուր չի ասել. «Ամեն ազգ իր տականքն ունի, հայի տականքը նմանը չունի»:

Համենայն դեպս, նախորդ համարներում «Ազգն» անդրադարձել էր Լեռնային Ղարաբաղում իբր տեղակայված PKK-ի ճամբարների շուրջ ադրբեջանցիների աղաղակին, տեղեկացնելով միաժամանակ Հաագայում «Խոջալուի զոհերի» հուշարձան կանգնեցնելու ադրբեջանական նախաձեռնության մասին: Փետրվարի 25-ին դրան արձագանքել են թուրքական կենտրոնական թերթերն ու հանրային հեռուստատեսությունը: Արձագանքներից պարզվում է, որ ադրբեջանական նախաձեռնության շրջանակներում ոչ միայն կատարվել է վերոհիշյալ հուշարձանի բացումը, այլև «Խոջալուի կոտորածները» թեմայով միջոցառումներ են կազմակերպվել Բեռլինում և Նյու Յորքում, ինչպես

նան «կոտորածները» դատապարտող ցույց Ստամբուլում: Ընդ որում բոլոր միջոցառումներում Խոջալուի կոտորածների և ՀՅ-ի միջև հավասարության նշան դնելու փորձ է արվել:

«Խոջալուի զոհերի» հուշարձանը, ինչպես նշում է «Հուրիեթը», Հոլանդիայի «Թուրք-ադրբեջանական մշակույթ» հիմնադրամի նախաձեռնությամբ փետրվարի 24-ին բացվել է Նիդեռլանդների Թագավորության կառավարության նստավայր Հաագայի Դեն Հաագ գերեզմանոցում: Բացման արարողությանը մասնակցել են Նիդեռլանդներում Ադրբեջանի դեսպան Իսրայիլ Գարոֆալ, ինչպես նաև Թուրքիայի դեսպանատան խորհրդարանն ու Ռոտտերդամում նույն երկրի հյուպատոս Այթուղը, Բելգիայում Ադրբեջանի դեսպանության առաջին քարտուղար Կարեթովը, Ալժիրի դեսպանատան մշակույթի կցորդ Մուունան, թուրքական հասարակական և կրոնական երկու կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ելույթում Ադրբեջանի դեսպանը և վերոհիշյալ հիմնադրամի նախագահն ասել են, որ «սա դեռ սկիզբն է, առաջիկայում նոր հուշարձաններ ենք կանգնեցնելու աշխարհի տարբեր երկրներում, նվիրված Խոջալուի զոհերին»:

Նույն օրը Բեռլինում Իգդիրի քաղաքապետարանի նախաձեռնությամբ, «Խոջալուն և ճշմարտությունը 1915-ի իրադարձություններում» թեմայով կազմակերպված միջոցառմանը, թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, մասնակցել են Թուրքական պատմական ընկերության նախագահ պրոֆ. Յուսուֆ Հալաջօղլուն, թուրք և ադրբեջանցի պատմաբանների հետ, որոնք մատնացույց անելով «Խոջալուի» կոտորածները, հանիրավի են համարել 1915-ի իրադարձությունների առնչությամբ Թուրքիայի Տեղասպանության մեջ մեղադրելու տարբեր խորհրդարանների ձեռնարկումները:

Նյու Յորքի միջոցառումը համատեղ ջանքերով կազմակերպել են Թուրք-ամերիկյան միությունների ֆեդերացիան, Ամերիկայի ադրբեջանական միությունը, Ադրբեջանի ամերիկյան խորհուրդը: Փետրվարի 25-ին, նշելով այդ մասին, «Թերջումանը» գրում է, որ «այսպես կոչված Տեղասպանության հայկական կեղծիքը Խոջալուի կոտորածներով արժանի պատասխան է ստացել ԱՄՆ-ում», ապա և ավելացնում. «1992-ին Խոջալուում հայերն սպանել են 613 մարդ, այդ թվում 106 կին և 83 երեխա»: Նյու Յորքում Թուրքիայի հյուպատոսարանի շենքում հրավիրված միջոցառման մասնակիցներն ընդգծել են Խոջալուի կոտորածների առումով աշխարհին իրազեկելու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է Ստամբուլի Թաքսիմ հրապարակի ցույցին, կազմակերպված «Ադրբեջանցիների համերաշխության» միության նախաձեռնությամբ, ապա ցուցարարները կրել են «Խոջալուի կոտորածը Տեղասպանություն է», «Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին» մակագրությամբ ցուցապաստառներ: Ցուցարարների թվում են

եղել Ստամբուլում Ադրբեջանի հյուպատոս Սալախլին, Միլի Մեջլիսի պատգամավոր Փաշաևան, որոնք էլ ելույթներում ասել են. «Հայաստանը Տեղասպանության մեջ է մեղադրում Թուրքիային, մինչդեռ իրենք են կատարել այդ ոճրագործությունը: Աշխարհը պետք է ճանաչի Խոջալուում հայերի իրագործած Տեղասպանությունը»:

«Չամանի» տվյալներով, ցույցին մասնակցել է 1000 մարդ: Թե որքան է եղել մյուս միջոցառումներին մասնակցողների թիվը, թուրքական թերթերը կամ հեռուստատեսությունը նպատակահարմար չեն գտնում նշել: Այսինքն, արձագանքներն անբավարար են:

28.03.2008

ՀՐԱՆՏ ԴԻՆԷԻ ԴԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
«ԼՐԳԵՆԵՔՈՆԻ» ՀԵՏ ԻՐԱՋԵԿ ԵՆ ԵՂԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարտի 20-ին Հրանտ Դինքի սպանության գործով դատական նիստում ծառայողական պարտականությունների մեջ թերացման մեղադրանքով կալանված ժանդարմերիայի ենթասպաներ Օքան Շիմշեքն ու Վեյսել Շահինը խոստովանել էին, որ իրենք նախապես զգուշացրել են Տրապիզոնի ժանդարմերիայի կայազորի հրամանատար մայոր Ալի Օզին և մյուս հրամանատարներին, թե Յասին Հայալը Ստամբուլում հայ լրագրողի է սպանելու:

Աղմկահարույց այս խոստովանությանն «Ազգը» անդրադարձել է մարտի 22-ի համարում: Թուրքական էլեկտրոնային մամուլի վկայությամբ, ենթասպաների այս խոստովանությունն էապես փոխել է դատավարության ընթացքն այն առումով, որ դա բացահայտել է պետական կառույցի նախապատրաստվող սպանության մասին ծանուցումը կոծկելու նպատակամղվածությունը: Այդ ընթացքում կատարվել են նոր բացահայտումներ:

Խոստովանությունից հետո խորացվել է հետաքննությունը և պարզվել է, որ Դինքի դեմ պատրաստվող սպանության մասին իրազեկված է եղել նաև պետական կառույցների հետ սերտորեն համագործակցող «Էրզենեքոն» ահաբեկչական կազմակերպության ղեկավարությունը:

Ի դեպ, «Էրզենեքոնի» գործով կալանված դոցենտ Էմին Գյուրսետը գեուև 2007-ի փետրվարին էր ասել, որ Հրանտ Դինքի սպանությունից 3 ամիս առաջ իրենց իրազեկել են մահափորձի մասին: Այնուհետև նա ավելացրել էր. «Նախքան Դինքի սպանությունը մեզ ծանուցել էին: Ծանուցումը մենք ստացել էինք սպանությունից 3 ամիս առաջ: Ծանուցման մասին իրազեկել էինք ինչպես անվտանգության ուժերին, այնպես էլ հետախուզական ծառայություններին, սակայն փորձիններս կանխարգելիչ որևէ միջոց չձեռնարկեցին»:

Ինչ խոսք, ես ծանուցումը չեմ հրապարակել, սակայն փոխանակել եմ համապատասխան մարմիններին: Մեզ ծանուցել էին տարրեր տեղերից: Ինձ հայտնել էին, ես էլ զգուշացրել եմ նրանց, ում պետք էր: Զգուշացրել եմ նաև Հրանտ Դինքին: Տեղեկացրել եմ նրա զինակիցներին, բայց պատասխան չեմ ստացել: Նրանք իմ ասածներն անուշադրության են մատնել»:

Ակնհայտ է, որ դոցենտ Գյուրսեսը «նախքան Դինքի սպանությունը մեզ ծանուցել էին» ասելով, նկատի ունի «Էրզենեքոն» ահաբեկչական կազմակերպությանը, որը 2007-ի փետրվարին դեռևս բացահայտված չէր: Համենայն դեպս, Թուրքիայի ազգային մեծ ժողովի Հրանտ Դինքի սպանության գործի հետաքննության հանձնաժողովի նախագահ Մեհմեդ Օջաթասը հայտարարել է ժանդարմերիայի վերոհիշյալ ենթասպաններին, նրանց հրամանատար Ալի Օզին և մյուս սպաններին հարցաքննելու հանձնաժողովի պատրաստակամության մասին:

Թե «Էրզենեքոն» ինչ առնչություն ունի Հրանտ Դինքի սպանության գործի հետ, դեռևս հայտնի չէ: Բայց որ ահաբեկչական այս կազմակերպությունը «Թալեաթ փաշա» կոմիտեի միջոցով ծրագրել է տարբեր գործողություններ իրականացնել նաև Ադրբեջանում, ակնհայտ է դարձել «Ուլուսալ կանալ» հեռուստատալիքի գլխավոր խմբագիր Ֆերիթ Իլսևերի հարցաքննությունից, որն օրերս ձերբակալվել էր «Էրզենեքոնի» գործով: Հարցաքննության ժամանակ Իլսևերին «Թալեաթ փաշա» կոմիտեի գործունեության մասին հարցեր են ուղղել, իսկ նա պատմել է, որ կազմակերպությունը պատրաստվում էր աղմկահարույց գործողություն իրականացնել Բաքվում և դրա իրականացման որոշումն ընդունվել է ադրբեջանցի-թուրք կանանց միության նախագահ Թենզիլե Ռուսթեմխանլիի հետ իր երկրորդ հանդիպումից հետո:

Իլսևերի ցուցմունքի համաձայն, Բաքվում «Էրզենեքոնի» ծրագրած գործողությունը կապված է եղել «Խոջալուի կոտորածներին» հետ, իսկ ադրբեջանական քաղաքացիական հասարակության 44 կազմակերպություններ հանդես են եկել «Էրզենեքոն» ահաբեկչական կազմակերպության պաշտպանությամբ, հրապարակելով հաղորդագրություն, որը ստորագրել է նաև ադրբեջանցի-թուրք կանանց միության նախագահ Ռուսթեմխանլին:

Վերոհիշյալ տեղեկությունները ոչ միայն աղճատված են, այլև կցկտուր: Այդ իսկ պատճառով ընդհանուր պատկերացում չեն տալիս Հրանտ Դինքի սպանությանը «Էրզենեքոնի» առնչության մասին: Սակայն դրանք բոլոր հիմքերը տալիս են ենթադրելու, որ «Թալեաթ փաշա» կոմիտեն, որը գլխավորում է «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» նախորդ նախագահ Ռաուֆ Դենքթաշը, գործել է «Էրզենեքոն» ահաբեկչական կազմակերպությանն առընթեր: Սա

կարևոր հանգամանք է այն առումով, որ «Թալեաթ փաշա» կոմիտեն պայքարում է ՀՅ-ի միջազգային ճանաչման դեմ, «Էրզենեքոն» կազմակերպությունը կապեր է հաստատում «Խոջալուի կոտորածներին» միջազգային հնչեղություն հաղորդելու համար պայքարող ադրբեջանական կազմակերպությունների հետ:

20.05.2008

«ՀՈՐԻԹԵՐ» ՄՊԱՆԵԼ ԵՆ ՀԱՅ ԳՐԱԸԱՅԻՆՆԵՐԸ»

«Որեղբայրը թուրք դիվանագետ էր, իսկ զարմիկը Լոնդոնի ներկայիս քաղաքապետն է»

Այդ մասին, «Հուրիթեր» վկայությամբ, գրել է անգլիական «Mail on Sunday» թերթը, նկատի ունենալով Իսպանիայում Թուրքիայի դեսպան Զեքի Կուներալիին, որը 1978-ին Մադրիդում դարձել է ԱՄԱԼԱ-ի թիրախը: Պարզվում է, որ սպանված թուրք դեսպանը Լոնդոնի նորընտիր քաղաքապետ Բորիս Զոնսոնի հորեղբայրն էր: Թերևս ազգակցական այս կապի պատճառով Անկարա կատարած այցի ընթացքում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի թագուհի Էլիզաբեթ 2-րդին են ներկայացրել Լոնդոնի քաղաքապետ Զոնսոնի հորեղբոր Զեքի որդուն՝ Սելիմ Կուներալիին:

«Հուրիթեր» ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ անգլիական թերթը թուրք դեսպանի սպանությունը նկարագրելիս, փոխանակ մատնանշելու «ԱՄԱԼԱ-ի ահաբեկիչներին», դա վերագրել է «հայ գրոհայիններին», միաժամանակ նշելով, որ Կուներալիը նախքան Մադրիդ գործուղվելը, որպես Մեծ Բրիտանիայում Թուրքիայի դեսպան աշխատել է Լոնդոնում:

Անգլիական թերթը հոդվածում անդրադարձել է Լոնդոնի քաղաքապետ Զոնսոնի օսմանյան արմատներին և նրան վերագրել չերբեզական ծագում: Թեև «Հուրիթեր» չի առարկում, սակայն Իսպանիայում Թուրքիայի դեսպան Զեքի Կուներալիը եթե Բորիս Զոնսոնի հորեղբայրն էր, ապա շատ ավելի հավանական է նրանց սալոնիկյան ծագումը, որովհետև սկսած 1912-13թթ. բալկանյան պատերազմներից, սալոնիկցիների գերակշռող մեծամասնությունը տեղափոխվել է Սոմաբուլ, Իզմիր և Օսմանյան կայսրության այլ քաղաքներ, իսկ մնացածները Հունգարիայով գաղթել են Արևմտյան Եվրոպայի երկրներ:

Ի դեպ, նույն ուղին է անցել Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի ընտանիքը: Հետևաբար Լոնդոնի քաղաքապետ Զոնսոնը պետք է լինի ոչ թե չերբեզ, այլ սալոնիկյան ծագումով հրեա, իսկ նրա հորեղբայր Կուներալիը՝ «դյոնմե», այսինքն նույն ծագումով առերևույթ կրոնափոխ հրեա: Համենայն դեպս BBC-ն հատուկ հաղորդում է պատրաստում Լոնդոնի քաղաքապետ Զոնսոնի տոհմի մասին, որը կթողարկվի առաջիկա ամիսներին:

«ԹՈՒՐԲ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ ԲՐԻԳԱԴ»

«խորքային պետության» ձեռքին զենքի «ձգան» Թուրքիայում

Նախորդ համարում «Ազգը» տեղեկացրել էր, թե «Թուրք վրիժառուների բրիգադը» (Turk Intikam Tugayi) ինչպես է սպառնացել հանգուցյալ Հրանտ Դինքի զինակից, «Ալլոսում» սյունաշարի հեղինակ Բասքըն Օրանին: Սպառնալիքի մասին Օրանը գրավոր իրազեկել էր դատախազությանը: Դիմումին առնչվող որևէ զարգացում առայժմ չկա: Այդ իսկ պատճառով որոշակի պարզաբանումներ ենք տալիս վերոհիշյալ բրիգադի մասին:

Հարկ է սակայն նշել, որ «Թուրք վրիժառուների բրիգադի» մասին թուրքական մամուլի տեղեկությունները կցկտուր են, երբեմն էլ իրարամերժ: Ըստ «Wikipedia»-ի հանրագիտարանի, ենթադրվում է, որ այս բրիգադին ահաբեկչություններ կատարելու և զինված գործողություններ իրականացնելու նպատակով Թուրքիայում օգտագործում է «խորքային պետությունը»: Բրիգադը սերտ հարաբերությունների մեջ է նաև հանցագործ աշխարհի հետ: Ուշադրություն է գրավում այն կապը, որը պաշտոնաթող բարձրաստիճան զինվորականների հետ պահպանում են բրիգադի անդամները: Հանցագործությունների հետապնդման միջազգային կազմակերպությունները հենց դրանով են պայմանավորում զինված գործողությունների համար բրիգադի անդամների բարձրակարգ պատրաստվածությունը: Նրանք միաժամանակ ընդգծում են, որ ժանդարմերիայի հետախուզության կազմակերպության (JITEM) հետ սերտորեն համագործակցող բրիգադը տարածայնություններ ունի Ազգային հետախուզական կազմակերպության (MIT) հետ, ինչը հաստատվել է վերջինի պաշտոնական զեկուցագրերում:

«Թուրք վրիժառուների բրիգադի» կազմավորման ճշգրիտ տարեթիվը հայտնի չէ: Ըստ երևույթին, բրիգադն ասպարեզ է իջել 60-ականների սկզբներին: Սակայն որպես այդպիսին վերջնականորեն կազմավորվել է 1969-ին, ընդ որում՝ Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետում ձևավորված ուսանողների «Ազգայնական օջախների» հետ համատեղ: Որոշ տվյալների համաձայն, բրիգադն այս օջախների ռազմականացված թևն է, իսկ օջախները դեռևս ուսումնառության տարիների պատրաստած կադրերով մեծապես նպաստել է ներկայիս «խորքային պետության» ձևավորմանը:

Ի դեպ, Բասքըն Օրանը, որին սպառնացել է «Ազգայնական օջախների» ռազմական թևը համարվող «Թուրք վրիժառուների բրիգադը», Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետի պրոֆեսոր է: Օջախներն այս ֆակուլտետի շրջանակներում գործել են մինչև 1980 թիվը, այսինքն՝ մինչև նույն թվի սեպտեմբերի 12-ի զինվորական

ինդաշրջումը, որից հետո հայտնի չէ, թե դրանք ում ենթակայության տակ են շարունակում գործել: Բրիգադը 1998-ին մահափորձ էր կատարել Մարդու իրավունքների միության նախագահ Աքըն Բիրդալի դեմ, իսկ այս տարի կազմակերպել է Դիարբեքրիի ահաբեկչական պայթյունը, որի հետևանքով զոհվել էր 12 մարդ, սպանվածների գերակշռող մասն ուսանողներ էին, հավանաբար քրդական ծագումով:

Վերջին տարիներին հետզհետե աճում են բրիգադի անդամների մուֆ և ամուր կապերը ազգայնական այլ կազմակերպությունների հետ: Դրան զուգընթաց բրիգադը կազմակերպում է նաև ահաբեկչական սադրիչ գործողություններ, ինչպես գերագույն դատարանի անդամների կամ «Ջումհուրիեթ» թերթի խմբագրության դեմ, հակակառավարական հանրահավաքներում զինված հեղաշրջման կոչեր է անում թուրքական բանակին, ինչպես նաև սերտորեն առնչվում է ընդհատակյա «Էրզենեքոն» ահաբեկչական կառույցին:

«Թուրք վրիժառուների բրիգադի» զինյալ գործունեության և ընդհատակյա ահաբեկչական կառույցների հետ կապի մասին տեղեկությունները 2006-ի մայիսի 20-ի համարում հաստատել է «Ջամանը»: Թուրքական այս թերթն անդրադառնալով Բիրդալի դեմ կատարված մահափորձին, նշել է, որ դա իրականացնող Սեմի Թուֆան Գյուլպայթայը 2004-ին ընտրվել է Ազգային միասնության կուսակցության նախագահի պաշտոնում, իսկ բրիգադը համագործակցության մեջ է եղել հատուկ նշանակության զորքերի հրամանատարությանը ենթակա «Թուրքական դիմադրության կազմակերպության» հետ, որը 1957-ին ստեղծվել էր Կիպրոսում:

2007-ի օգոստոսի 28-ի համարում «Սաբահը» վերոհիշյալ Գյուլպայթային ներկայացնում է որպես «Թուրք վրիժառուների բրիգադի» կազմակերպիչ, նշելով, որ նա դեռևս 1994-ից եղել է գերմանական գաղտնի ծառայությունների գործակալ: Ավելացնենք, որ «Ալլոսում» սյունաշարի հեղինակ պրոֆ. Բասքըն Օրանին սպառնացող բրիգադը 2007-ի հունվարին Հրանտ Դինքի սպանությունից ընդամենը մի քանի օր անց պայթուցիկի տպավորություն գործող փայտեթ էր տեղադրել Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի դռանը, որի վնասագերծման ընթացքում հայտնաբերվել էր մարդասպան Օզյուն Սամասթին և պատվիրատուն Յասին Հայալին ազատություն պահանջող զրույթուն:

«ՈՎՔԵՐ ԵՆ ԿԱՆԳՆԱԾ ՀՐԱՆՏ ԴԻՆԷԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՆԱԲԵՄՈՒՄ»
Հարցին պատասխանելիս, թուրք իսլամականների թերթը քննարկում է նաև Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների ինքնությունը
Խոսքը փոխալ դեպքում էլյազիզում հրատարակվող «Էլ Ազիզի» մասին է: Թեև այս շաբաթաթերթը տեղական բնույթ է կրում, սակայն ունի ինտերնե-

դրային կանոնավոր կայքէջ, նաև բաժանորդներ արգելակրում: Սա նշանակում է «էլ Ազիզ» շաբաթաթերթը հրատարակվում է նաև Եվրոպայում, ըստ ամենայնի՝ Գերմանիայում: Ինչ վերաբերում է խմբագրական խնդրոս առարկա հողվածին, ապա դա լույս է տեսել «էլ Ազիզի» 2007-ի հոկտեմբերի 3-ի համարում: Դա ներկայացնելով ընթերցողի ուշադրությանը, ոչ այնքան կարևոր ենք համարում մեր հայրենակցի սպանության մասին իսլամական այս թերթի հեղինակությունները, որքան սաբաթայականների (այսպես են կոչվում հրեա հոգևորական Սաբաթայ Ավիի հեղինակները, որը 17-րդ դարի 2-րդ կեսին նախ մեսիա էր հռչակվել, ապա ընդունել էր մահմեդականություն, սակայն առերևույթ միայն: Սաբաթայական հասկացությունն այնուհետև Թուրքիայում տարածվեց սալոնիկյան ծագումով կրոնափոխ բոլոր հրեաների վրա), ինչպես նաև քեմալականների նկատմամբ թուրք-իսլամականների վերաբերմունքը: Ահա թե ինչ է գրում թերթը:

«Երբ որոնում ես «սպանության թիկունքում ո՞ր ուժերն են կանգնած» հարցի պատասխանը, պետք է ելնել «թիրախը ո՞ւմ էր անհանգստացնում և ո՞ւմ էր ձեռնտու նրա ոչնչացումը» մոտեցումից: Անհանգստացման պարագայում խոսքը հայ մտավորական Դինքի տեսակետների և հրապարակավ արտահայտած կարծիքի մասին է:

Հրանտ Դինքը տեսախցիկների առջև ասել էր. «Վաղուց ի վեր համայնքում տարածված է «ինչ, որ եկել է մեր գլխին, հրեաների պատճառով է եկել» ասույթը»: Այո, Հրանտ Դինքը հենց այսպես էր ասել հեռուստահաղորդման ընթացքում...

Բարի, ինչե՞ր են այս երկրում եկել հայերի գլխին: Նախ, Օսմանյան կայսրության վերջին տարիներին նրանք տեղահանություն են ապրել... Հանրապետության շրջանում հույների հետ դարձել են ունեցվածքի արտակարգ հարկի թիրախը (1942-ին հրապարակված օրենքով իշխանությունները բնազավթել էին ազգային փոքրամասնությունների սեփականությունը), ապա և ենթարկվել 1955-ի սեպտեմբերի 6-7-ի ավազակային հարձակումների:

Այս ամենի հետևանքով հայերը երկրում դրամատիկական ձևով ամբողջովին կորցրեցին համայնքային երբեմնի ներկայությունը, քաղաքական ազդեցությունը, տնտեսական և մշակութային կարողություններն ու վերջնականապես սպառվեցին Թուրքիայում: Ինչ վերաբերում է հույներին, թեև ունեցվածքի հարկն ու սեպտեմբերի 6-7-ի ավազակությունները արտագաղթի հրամայականի առջև կանգնեցրին նրանց վերջին մնացորդներին, սակայն նրանք արդեն Բալկաններում բնակվող սաբաթայականների փոխանակման պատճառով, բառիս բուն իմաստովս գտվել էին երկրից...

Հատկանշական է, որ տեղահանության, փոխանակման, փոքրամասնություններին ուղղված աննախադեպ հարկի, ինչպես նաև հայերի և հույների կոտորածների նման պետական ծանր հանցագործությունների դիմաց արևմտյան տերություններն ու հասարակությունները

ծպտուն չեն հանել... Դա այսպիսի միջադեպերի համաշխարհային սիոնիզմի ծրագրերով և աջակցությամբ իրականացման վառ ապացույցն է: Այլապես Օսմանյան կայսրությունը հազիվ թե հանդգներ տեղահանության, երբ ինքն էր քայքայվում, իսկ Թուրքիայի Հանրապետությունը, առանց Արևմուտքի կարգադրության, ճակատագրական այդ տարիներին չէր համարձակվի նման բաներ կատարել:

Իսկ Հրանտ Դինքն ասել էր, որ հայ համայնքում տարածված համոզմունքի համաձայն, այս ամենը հայերի գլխին եկել է հրեաների պատճառով: Հույների գլխին եկածները՝ նմանապես...

Այս հետևությունը հաստատող մեկ այլ հանգամանքն էլ այն է, որ բոլոր ողբերգություններից օգտվել են միմիայն սաբաթայական հրեաները: Եթե բնությունների են ենթարկվել հրեական ինքնությամբ հանդես եկողները, ապա այն բանի համար, որ սիոնիստները ձգտում էին նրանց տեղափոխել Իսրայել: Ինչպես հայտնի է, Իսրայելը սաբաթայականներին չի ընդունում: Շնորհիվ այս ամենի, սաբաթայականները Թուրքիայում կարողացան գերիշխող դիրք գրավել պետական կառույցներում, վարչակարգում, քաղաքականության մեջ, տնտեսական, հասարակական և սոցիալական կյանքում, մամուլում, կինոյում, թատրոնում և ամենուր:

Մեր երկրում «հույնի վաստակ», «հայի վաստակ» արտահայտությունները որպես անարգանքի և նսեմացման միջոց մշտապես օգտագործվում են, սակայն հրեաներին ոչ ոք չի ասում. «Աչքի վերևը հոնք ունես»: Երկրում հայերի և հույների նկատմամբ թշնամանքին կազմակերպված բնույթ հաղորդեց իշխանության լծակները սեփականացրած սաբաթայական հրեա համայնքը: Քանի որ մահմեդական մեծամասնությանն անհնար էր ինչ-որ տեղ քշել, ուստի մահմեդականը հետամնացի, անտաշի, վայրենու պիտակներով մեղադրվեց և հետևողականորեն նսեմացվեց... Նրան ամենուր պաշտոնապես արգելվեց իսլամական կյանք վարելը: Մահմեդականները կանգնեցին ձուլվելու կամ մեծ քաղաքների ծայրամասերում թշվառության մեջ խղճուկ գոյությունը քարշ տալու երկընտրանքի առջև:

Կարճ ասած, երկիրը հույն և հայ փոքրամասնություններից զտելու, մահմեդական մեծամասնությանը ուժացման միջոցով գոյորշացնելու հետևանքով Թուրքիան դարձավ սաբաթայական հրեաների ազարակը, նրանց համար աննման դրախտ աշխարհում: Դա որևէ գաղտնիք չի պարունակում, ավելի քան ակնհայտ է:

Օսմանյան կայսրությունում հայերին տեղահանության է ենթարկել «Իթթիհադ վե Թերաքքին», որը Սալոնիկում հիմնադրել են սաբաթայական հրեաները: Հայերի տեղահանությունն իրականացրած օսմանյան մեծ վեզիր Թալեաթ փաշան ևս սաբաթայական էր,

միաժամանակ՝ մասուն: Հայերը, նկատի ունենալով նրա պատասխանատվությունը, սպանեցին Բեռլինում:

Մնացած հայերի դեմ պետականորեն կազմակերպված սեպտեմբերի 6-7-ի միջադեպը տեղի ունեցավ նախագահ Զելալ Բայարի («Հատուկ կազմակերպության» անդամ, քեմալական պատերազմների մասնակից և Թուրքիայի 3-րդ նախագահն է) և վարչապետ Ադնան Մեդեթերեզի օրոք, երկուսն էլ սաբաթայական են: Դրան նախորդած ունեցվածքի հարկն էլ նշանակեց մեկ այլ սաբաթայական Իսմեր Ինյունուի իշխանությունը (Աթաթուրքի զինակից, Թուրքիայի 2-րդ նախագահը): Թուրքիայի Հանրապետությունն արդեն ստեղծել են համաշխարհային սիոնիզմի վրա հենվող սաբաթայականները: Վերջերս մամուլում եղան հրապարակումներ, որ հրեա է նաև Քյազիմ Կարաբեքիրը: Միաժամանակ բացահայտվեց մարշալ Ֆելզի Չաքմաքի (քեմալական զորքերի ԳՇ պետ, Աթաթուրքի զինակից) հրեական ինքնությունը, այն ժամանակ, երբ նրա շիրմի մոտ սպանվեց Ուզեյր Գարիհը (Իցխակ Ալաթնի գործընկեր):

Թեև 1960-ի մայիսի 27-ի, 1971-ի մարտի 12-ի, 1980-ի սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումները լուրջ հարված են հասցրել Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների կամքի արտահայտություն հանդիսացող սաբաթայական համայնքի օլիգարխիային, սակայն վերջինը դեռևս իր ձեռքում է պահում որոշ միջնաբերդեր և վերահսկում «խորքային պետությանը»:

Հրանտ Դինքի սպանության հետևաբեմում կանգնած ուժը խորքային այս ավելցուկներն են, որովհետև մեր պետության մեջ անվտանգության կառույցների, դատաիրավական համակարգի վրա ազդելու, սպանության հարցում հասարակությանը մամուլին ուղղորդելու միջոցով ապակողմնորոշելու կարողություններ ունեն միմիայն սաբաթայական այս թափթփուկները: Երկար ժամանակ հետաքննությունն ու դատավարությունը որևէ տեղաշարժ չէր արձանագրում, սակայն սպանությունը կոծկելու ուժ, ինչ առաջ էր, սաբաթայականներն այլևս չունեն: Համոզված ենք, որ Հրանտ Դինքի սպանությունը կբացահայտվի, իսկ դա կդառնա երկրում խարդախության վարչակազմի և ստրկատիրական կարգերի վերացման կարևոր գործոնը»:

05.07.2008

«ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԱՅՈՈՒ ԵՆ ՎԵՐԱԾԵԼ, ՔԱՆԴՈՒՄ ԵՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ»

Վկայում է «Հայ սասունցիների միության» հիմնադիրը և ավելացնում՝ «բայց են սասունցի են, չեն թողնի իմ գերեզմանը»

«Ազգը» դեռևս հունիսի 3-ի համարում «Սասունցիները հայերի միություն են ստեղծել Թուրքիայում» վերնագրով նշել է, որ նրանք պահանջում են իրենց իրավունքների վերականգնումը Սասունի

հայկական եկեղեցիների և գերեզմանների վրա: Եկեղեցիների պարագայում խոսքը Մարութա սարի Սուրբ Պետրոս առաքյալի վանքի և Սուրբ Աստվածածին եկեղեցու մասին էր, իսկ գերեզմանները պատկանում են Գոմք և Արծվիկ գյուղերին:

Հրապարակման համար հիմք էր ծառայել թուրքական ATV հեռուստատեսության կայքէջը, որն իբրև սկզբնաղբյուր օգտագործել էր ներկայումս Սասունը ներառող Բաթմանի վիլայեթի տեղական «Բաթման փոստ» թերթի մայիսի 26-ի համարը: «Բիթլիսի, Բաթմանի, Մուշի, Վանի վիլայեթների, գյուղերի և գավառների հայ սասունցիների սոցիալական փոխօգնության, մշակույթի և համերաշխության» միությունը թեև 2006-ին Ստամբուլում է ստեղծվել, սակայն նրա նախագահ Ազիզ Դաղըն և մյուս ղեկավարները բնակվում են Բաթմանում: Հատկանշական է, որ նրանց թուրքական անուն-ազգանուններն ամենևին չեն խոչընդոտում, որ հավատարիմ մնան իրենց հայկական ինքնությանը և պահպանեն դա:

Միության հարցին «Անատոլիայի հայերը հարգանք են պահանջում սեփական արժեքների նկատմամբ» վերնագրով «Էվրենսել հայաթ» հանդեսի հունիսի 30-ի համարում անդադարծել է Էլիֆ Գյորգունը: Նրա հոդվածին ծանոթացել ենք Ստամբուլի «Հայթերթ» կայքէջում: Գյորգունը հոդվածն սկսում է հետևյալ կերպ. «Անատոլիայում մահմեդական ծերունին Հրանտ Դինքին հարցրել է հայերի թողած ոսկիների ու գանձերի մասին, իսկ նա պատասխանել է. «Կան, շատ գանձեր կան, բայց ոչ թե հողի տակ, այլ գետնի վրա: Այդ գանձերը մարդիկ են»: Ցավոք, խտրականության դրսևորումն այնպիսի իրավիճակ է ստեղծել երկրում, որ դարեր շարունակ միևնույն հողում բնակվող ժողովուրդներից մեկը կարողանում է անտեսել մյուս ժողովուրդների մշակութային, պատմական կամ հոգևոր արժեքները»:

Այնուհետև հոդվածագիրը հակիրճ ներկայացնում է «Հայ սասունցիների միության» ստեղծման պատմությունը, նշում է, որ հիմնադիրների ճնշող մեծամասնությունն ունեն Սասունում բնակվող նաև ազգականներ, ապա տալիս է նրանց անունները՝ Ազիզ Դաղըն, Էրդալ Յըլըզըրըմ, Ռահիֆ Յըլըզըրըմ, Բահրի Գեզ, Էտտո Օջալ, Խաչատուր Քեբաբքըն և Տիգրան Դեմիրջի:

Գյորգուն, պայմանավորելով միության ստեղծումը «հայրենի հողի ազգային արժեքները փրկելու» հայ սասունցիների նպատակամղվածությամբ, շարունակում է. «Հայ են և հանկարծ հետամուտ են լինում իրենց իրավունքների վերականգնմանը: Ծանր գործ է: Հայ լինելն արդեն դժվար է Ստամբուլում, իսկ Անատոլիայում՝ ավելի քան դժվար: Այն էլ սեփական եկեղեցիներին, գերեզմաններին և հողին տեր կանգնելու մտադրության դեպքում: Նրանք տեսնելով, որ Բաթմանի անշարժ գույքի և կադաստրի վարչությունը եկեղեցիները գրանցում է

իրևելի քվեաբան, իսկ գերեզմանները՝ ամայի տարածք պետական սեփականություն ձևակերպելու համար դիմում են նահանգապետին, ՆԳ, քաղաքաշինության նախարարություններին, ընդհուպ Թուրքիայի ազգային մեծ ժողովի մարդու իրավունքների հանձնաժողովին: Սասունցի հայերի ցանկությունը բնական է, իսկ պահանջները՝ համապատասխան երկրի սահմանադրությանն ու օրենքներին: Նրանք ընդամենը պահանջում են, որ իրենց գերեզմանները ձևակերպվեն որպես գերեզման և հարգվեն 1915-ից ի վեր քահանային կարոտ եկեղեցիները, որովհետև «այնտեղ դեռ ապրում են» և ամեն տարի հուլիսին ուխտագնացություն կատարում Մարութա սարի վանքը: Սեփական հողը մշակող բազմաթիվ հայ ընտանիքներ կան այնտեղ, որքան էլ նահանգապետը հերքի այդ փաստը: Ուշագրավ է, որ սասունցիների միությունը բողոքում է նահանգապետին, իսկ վերջինս ասում է, թե որևէ բողոք չեն ստացել: Այսինքն՝ Բաթմանի նահանգապետը անտեսում է նույնիսկ հայերի բողոքը:

Հողվածագիրն անտեսման պատճառը պարզաբանելու համար դիմում է միության հիմնադիրներից Էրդալ Յիլդըրմին և ստանում հետևյալ պատասխանը. «Ժամանակին (1915-ին) գյուղում հայտնված նոր աղաները մեզ՝ հայերիս բաժանել են միմյանց մեջ: Մեր ընտանիքի և Ազիզ եղբոր ընտանիքի աղաները տարբեր են: Քանի որ այդ տարիներին փրկել են մեզ, ուստի մեր սեփականությունը համարում են իրենցը: Եթե մենք թողնենք-հեռանանք, ապա մեր ունեցվածքը իրենց է մնալու: Այդ աղաները նույնիսկ մեզ են համարում իրենց սեփականությունը և անհարգալից վերաբերմունք են ցուցաբերում մեր եկեղեցիների և գերեզմանների նկատմամբ: Երբ գյուղում մեր պապերն էին բնակվում, մահմեդականներ չկային: Հետո են եկել, հաստատվել: Ասում են, որ հիմա հայ չի մնացել, ինչպես թե: Չէ՞ որ մեր եկեղեցիները հազարամյա պատմություն ունեն: Մնացել են նաև մեր գերեզմանները, չենք ուզում, որ կորչեն գնան: Եթե աղաները ժամանակին փրկել են մեզ, ապա միայն այն բանի համար, որ մենք արհեստավորներ ենք եղել, որոնց խիստ կարիքն են ունեցել: Այնուամենայնիվ փրկելու համար երախտապարտ ենք, սակայն արհամարհանքը վշտացնում է: Իրականում մասնատվել են նաև մեր ընտանիքները: Մի մասը մնացել է քրիստոնյա, մյուսը՝ մահմեդականություն ընդունել: 1915-ից ի վեր մեր գյուղը քահանայի երես չի տեսել: Չենք կարողանում կնքել մեր երեխաներին: Կնքվելու և պսակադրման համար ստիպված հասնում ենք Ստամբուլ: Մենք չենք հեռացել Սասունից, որտեղ կան ընտանիքներով բնակվող հայեր: Բիթլիսում 8 գյուղ ունենք, որոնց մի մասը գրանցված է իբրև մացառուտ: Որքան էլ ավերված լինեն, ունենք հարյուրավոր եկեղեցիներ: Ամեն տարի հուլիսի 25-ին ուխտագնացություն ենք կատարում Մարութա սար: Սուրբ Աստվածածին եկեղեցին

այնտեղ է: Հիմա ախող է վերածված: Բուրդուրներով քանդում են մեր գերեզմանները և կաղասուրը իբրև գերեզման չի գրանցում: Բայց ես սասունցի եմ, չեմ թողնի իմ գերեզմանը»:

02.10.2008

ՓԱԿՎԵՑ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԷՋԻ «ԲՈԼՈՐՍ ՀՐԱՆՏ ԴԻՆԵ ԵՆՔ»

ԲԱԺԻՆԸ

Փոխարենը գործում են մարդասպան Օգյուն Սամասթի անվան բաժինները
Կատարված բողոքների հիման վրա փակվել է ինտերնետային «Facebook» կայքէջի «Բոլորս Հրանտ Դինք ենք, բոլորս՝ հայ» բաժինը, որտեղ գրանցված է 2709 անդամ: Հակառակ դրան, շարունակում են ազատ գործել նույն կայքէջի «Օգյուն Սամասթին աջակցողների ակումբ» կամ «Հայրենասեր Օգյուն Սամասթը թող սպանի նաև Լեյլա Ջանային» բաժինները: Այս ամենի մասին «Հյուրիեթի» հոկտեմբերի 1-ի համարում գրել է թերթի առաջնորդողի հեղինակ Սեֆա Քափլանը: Հեղինակը նշում է, որ «Օգյուն Սամասթին աջակցողների ակումբ» բաժինն ունի 560 գրանցված անդամ, իսկ «Հայրենասեր Օգյուն Սամասթը թող սպանի նաև Լեյլա Ջանային» բաժինը՝ 52: Հիշեցման կարգով նշենք, որ Օգյուն Սամասթը սպանել էր Հրանտ Դինքին: Ինչ վերաբերում է Լեյլա Ջանային, ապա նա հայտնի քուրդ քաղաքական գործիչ է, 90-ականներին եղել է Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի պատգամավոր և Մեջլիսի ամբիոնից քրդերեն արտահայտվելու համար զրկվել է պատգամավորի մանդատից:

20.02.2009

ԴԱՂԱՐԵՑՎԵԼ Է «ՍԱՐԻ ԱՂՋԻԿ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄՈՒԹ ԾԱԼՔԵՐԸ»

ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ ԹՈՒՐԻԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Դա պարտապետ է կրթության նախարարությանն է ներկայացրել թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբը

Վերջերս թուրք մտավորականներն ու հասարակական որոշ կազմակերպություններ բռուն հակազդեցություն էին ցուցաբերում «Սարի աղջիկ. Հայկական հարցի մոթ ծալքերը» վավերագրականին՝ տեսագրված երկու առանձին DVD-ներում, առավել ևս դրանց օժանդակ դասընթացի կարգով ցուցադրմանը աջակերտներին երկրի 5-ամյա պետական և մասնավոր դպրոցներում: Մինչ հակազդեցության անդադառնալը, նշենք, որ այս DVD-ներից յուրաքանչյուրը 70 րոպեանոց է, թողարկվել են 7 լեզուներով՝ թուրքերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, իրաներեն, իսպաներեն և արաբերեն, տեսագրություններն արվել են 13 երկրներում, 45 հոգանոց անձնակազմով:

Անկարայի առևտրի պալատի նախագահ Սինան Ալգունը հավաստմամբ, որը ներկայումս կալանված է «Էրգենեքոնի» գործով DVD-ներում ներկայացվող փաստագրությունը «Յեղասպանության հայկական պնդումներին հակազդելու շատ ազդեցիկ միջոց է. DVD-ները որպես հավելված Եվրոպայում անգլիական «Թայմ», Լեհաստանում՝ Przekroj, իսկ Ռուսաստանում՝ ԺպվՖչԲ Ռ-ՉսՌրՅՅ հանդեսների միջոցով անվճար բաժանվել են ընթերցողներին»։ Նույն եղանակով Թուրքիայում բաժանված DVD-ները, չհաշված դպրոցները, շուրջ 600.000 օրինակ են։

Առաջին DVD-ում գետնդրված են, այսպես կոչված, վավերագրականի «Դարաշրջանի արյան վրեժը», «Սպանություններով ձեռք բերված ինքնություն», «Իրողության լուռ վկաները՝ արխիվներ», իսկ 2-րդում՝ «Հրավեր կոտորածներին», «Ճակատագրի միասնությունը», «Վերիիշել բարեկամությունը» բաժինները։ Արյունահեղության և սպանության տեսարաններով հագեցված այս վավերագրականը պատրաստել է թուրքական ՁՈՒ ԳՇ-ը, ապա ներկայացրել ազգային կրթության նախարարությանը, որպեսզի ապահովի վավերագրականի DVD-ների ցուցադրումը երկրի 5-ամյա դպրոցների աշակերտներին և ցուցադրման արդյունքների մասին հաշվետվություն կազմվի։

Գլխավոր շտաբի կարգադրության հիման վրա կրթության նախարարությունը, 2007-ի դեկտեմբերի 4-ից դպրոցներ է առաքել DVD-ները, իսկ 25.06.2008 թվակիր որոշումով հրահանգել է բոլոր վիլայեթների կրթության վարչություններին, որ դիտումների արդյունքների մասին դպրոցներից ստացած հաշվետվությունները, մինչև փետրվարի 27-ը ներկայացնեն նախարարության մշակութային բաժին։ DVD-ները ձեռքի տակ չունենք։ Սակայն «Բիրգյուն» կայքէջից տեղեկանում ենք, որ վավերագրականում Յեղասպանության թուրքական ժխտողականությունը «հիմնավորելու» համար մեծ տեղ է հատկացվել «Հայերի գոիր դարձած թուրքերի լուսանկարներին, Հայկական հարցը նենգափոխելու, ապա ևս միջազգայնացնելու ֆանատիկ հայ ծայրահեղականների չարանենգ գործունեությանը, ինչպես նաև Անատոլիայում հայկական ազգադավ ապստամբություններին»։

Այս ամենը վերաբերում է վավերագրականի առաջին մասին, իսկ դրա երկրորդ մասը, նույն աղբյուրի վկայությամբ, պատմում է «թուրքերի դեմ հայերի իրագործած արյունահեղ կոտորածների, սփյուռքահայերի հակաթուրքական միակողմանի գործունեության և սպանություններով ազգային ինքնություն ձեռք բերելու հայ ահաբեկիչների (խոսքը ԱՍԱԼԱ-ի մարտիկների մասին է) նկրտումների» մասին։ Վերջին բաժնում նկարագրվում է «ցեղասպանության հայկական պնդումների անհիմնությունը», դրանց տրվում է ժխտողականության

թուրքական թեզից բխող «արժանավայել» պատասխան, հերքվում է «Թալեաթ փաշային վերագրվող հեռագրերի» իսկությունը, կասկածի տակ է դրվում «Կապույտ գրքի», «Մուսա լեռան 40 օրը» վեպի, Մորգենթաուի և ծովակալ Բրիսթոլի զեկուցագրերի բովանդակությունը, թե հայերն են նենգափոխել։

Հարցը, սակայն, հայերին նենգափոխում վերագրելու չարագործությունը չէ, այլ վավերագրականի ցուցադրումը միաժամանակ Պոլստ հայկական վարժարաններում, քանի որ դրանք մասնավոր դպրոցի կարգավիճակ ունեն Թուրքիայում, ինչպես նաև այն հայ աշակերտները, որոնք հաճախում են թուրքական դպրոց։ Դժվար չէ պատկերացնել, թե թուրք աշակերտները վավերագրականը դիտելուց հետո ինչ աչքով են նայել հայ համադասարանցիներին, քանի որ վավերագրականը հագեցած է «հայ ազգայնամուլների սպանած թուրքերի լուսանկարներով», պատմում է այսպես կոչված հայկական դավադրության մասին, իսկ հայ դավադիրներն անխնա «կոտորում» են խաղաղ թուրք բնակչությանը։

Ահա թե ինչու թուրք մտավորականները իրավապաշտպան Ռազմի Ջարաքուլուի գլխավորությամբ, վավերագրականի համար հրապարակավ դատապարտեցին թուրքական ՁՈՒ ԳՇ-ին ու Թուրքիայի ազգային կրթության նախարարությանը, որոնց միացավ «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպության նախագահ Ալի Էրթեմը։ Իսկ մտավորականների մեկ այլ խումբ, որի կազմում է հայերից ներողություն խնդրելու նախաձեռնության համահեղինակ պրոֆ. Բասքըն Օրանը, վավերագրականի դեմ կազմակերպեց նոր ստորագրահավաք, տարակուսանք հայտնելով. «Ո՞րն է հայերի նկատմամբ երեխաների մեջ թշնամանք սերմանելու, ատելությունն ու քեներ խրախուսելու գլխավոր շտաբի և կրթության նախարարության նպատակը։ Եթե դա ապրիլի 24-ի նախօրյակին սփյուռքահայերի կամ Հայաստանի դեմ ուղղված հակաքայլ է, ապա միմիայն վնաս կպատճառի։ Իսկ եթե դրա նպատակը Թուրքիայի հայերին սաստելն է, վախեցնելը, ապա մեր պետությունը իրավական չէ»։

Վավերագրականի համար գլխավոր շտաբին և կրթության նախարարությանը հաղորդագրություններով դատապարտեցին հասարակական մի շարք կազմակերպություններ, մասնավորապես «Պատմություն» հիմնադրամն ու Մարդու իրավունքների միության Ատամբուլի մասնաճյուղը։ Պոլսահայությունը բաց նամակով դիմեց վարչապետ Էրդողանին։ Բոլորն էլ պահանջում էին դադարեցնել վավերագրականի ցուցադրումը 5-ամյա դպրոցներում՝ առաջին հերթին հայկական վարժարաններում։ Թեև փետրվարի 18-ին Թուրքիայի ազգային կրթության նախարար Չելիքը հրամանագրով

արգելեց «Սարի աղջիկ. Հայկական հարցի մուֆ ծալքերը» վավերագրականի ցուցադրումը դպրոցներում և դադարեցրեց DVD-ների տարածումը, սակայն դրանք դպրոցներ էին առաքվել դեռևս 2007-ի դեկտեմբերի 4-ից, ուստի ցուցադրվել են 6-14 տարեկան 12 միլ աշակերտի: Այսինքն, չար գործն արդեն կատարված է:

24.02.2009

«ՍԱՐԻ ԱՂՋԻԿ» ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԵԼ Է ԳՒԽԱՎՈՐ ՇՏԱԲԸ

Գեներալներն, ըստ Ահմեդ Ալթանի, բոլորից լավ են գիտակցում հայերի նկարմամբ թշնամի սերունդ դաստիարակելու օգտավետությունը Թուրքիային Առհասարակ, Թուրքիայի մասին խոսելիս հարկ է կատարել հետևյալ հարցադրումը. «Ո՞ր Թուրքիան, Ձև ԳՇ-ի միջոցով երկրի օրենսդիր և գործադիր իշխանություններին, Սահմանադրական դատարանի միջոցով դատաիրավական, իսկ Ոստանական բարձրագույն խորհրդի միջոցով կրթական համակարգը վերահսկող և դեռևս Քեմալ Աթաթուրքի օրոք ձևավորված առանձնաշնորհյալ ընտրախավին ենթարկվող «խորքային պետություն»-ը», թե խորհրդարանական վերջին ընտրություններում ձայների 46,7%-ով երկրում միանձնյա իշխանության եկած վարչապետ Էրդողանի «Արդարություն և բարգավաճում» կուսակցության ձևավորած պետաիշխանական մարմինների ամբողջականությունը»:

Հարցի պատասխանը միանշանակ չէ: Թուրքիայում Աթաթուրքի տարուն պահպանելու, քեմալիզմի անձեռնմխելիությունը պաշտպանելու միջոցով առանձնաշնորհյալ ընտրախավի արտոնյալ վիճակի հարատևությանը ձգտող «խորքային պետությունը» բազմաթիվ հարցերում հակադրվում է օրինական իշխանություններին, իսկ դա հաճախ խառնաշփոթ է առաջացնում: Թերևս դրա ցայտուն օրինակը երկրում իշխող «Արդարություն և բարգավաճում» կուսակցության գործունեությունը կասեցնելու համար գլխավոր դատախազի Սահմանադրական դատարան ներկայացրած հայցն էր:

Խառնաշփոթի առումով հատկանշական են նաև «Սարի աղջիկ. Հայկական հարցի մուֆ ծալքերը» վավերագրականը և դրա DVD-ների ցուցադրումը Թուրքիայի 5-ամյա դպրոցներում: «Ազգը» տեղեկացրել էր, որ ազգային կրթության նախարար Ջեմիլ Չիչեքի կարգադրությամբ դադարեցվել է վավերագրականի ցուցադրումը: Թուրքական թերթերը փետրվարի 19-ին այս կարգադրությունը պայմանավորել էին նախարարի վրա մամուլի գործադրած ճնշումներով: Նույն օրը հաղորդագրությամբ թերթերին արձագանքել էր նախարարության հասարակայնության հետ կապերի բաժանմունքը. «Իրականությանը չեն համապատասխանում փետրվարի 18-ին հարգարժան նախարար-

րի կարգադրությամբ վավերագրականի տարածումը կասեցնելու մասին մամուլի տեղեկությունները: Այդ վավերագրականը դպրոցներում տրամադրվել էր պատմության ուսուցիչներին լրացուցիչ գիտելիքներով օժտելու նպատակով: Սակայն, երբ հայտնի դարձան նպատակից շեղումները, հարգարժան նախարարը միջամտեց և 2008-ի հուլիսից կասեցրեց վավերագրականի ցուցադրումը: Ինչ վերաբերում է DVD-ների տարածմանը, ապա դա դադարեցվել էր 8 ամիս առաջ»:

Մինչդեռ վավերագրականի DVD-ները Թուրքիայի դպրոցների տրամադրվել էին վիլայեթների կրթության վարչությունների 25.06.2008 թվագիր հրամանագրով, իսկ նույն վարչությունները 23.01.2009-ի շրջաբերականով դպրոցներին կարգադրել էին DVD-ները ցուցադրել 6-14 տարեկան աշակերտներին և արդյունքների մասին ներկայացնել հաշվետվություն՝ նախատեսված կրթության նախարարության համար:

Այդ վարչություններն, ինչ խոսք, ենթակա են ազգային կրթության նախարարությանը: Հետևաբար վավերագրականը ցուցադրելու հրամանով եթե նրանք չեն անտեսել կրթության նախարարի հրահանգը, ապա նախարարությունը ստում է, կամ էլ այս վարչությունները, որքան էլ ենթակա լինեն նախարարությանը, ենթարկվել են Ձև ԳՇ-ին: Այսինքն՝ վավերագրականը ցուցադրելու հրամանը դպրոցներին ներկայացնելիս վարչությունները կատարել են գլխավոր շտաբից ստացած առաջադրանքը՝ առանց վերադասին իրազեկելու:

Հայտնի թուրք հրապարակախոս Ահմեդ Ալթանը «Խելագարների երկիր» վերնագրով «Թարաֆ» թերթի փետրվարի 19-ի համարում հրապարակած հոդվածով անդրադարձել էր այս խառնաշփոթին: Հոդվածը չափազանց հետաքրքրական է, ներկայացնում ենք դրա կրճատ տարբերակը.

«Օսմանյան արքայազներին մշտապես ուղեկցում էր մահվան սպանալիքը: Նույնիսկ նրանցից մեկը գողացել էր. «Ես գահ չեմ ուզում», երբ եղբոր փոխարեն նրան գահ էին բարձրացնում: Նրանցից ոմանք խելագարվում էին: Դա շատ փրամաբանական է: Եթե մարդը մրածի, որ շրջապատում միմիայն թշնամիներ են՝ պատրաստ ամեն պահի սպանելու, նա կդառնա խելառ: Մեր հանրապետությունում այլևս արքայազներ չկան: Սակայն արքայազների մոճավանջը պատճառում ենք մեր երեխաներին: Նրանց մշտապես սովորեցնում ենք, որ մեր թշնամին ամբողջ աշխարհն է և դաստիարակում որպես կասկածամիտ, ինքնավստահությունից զուրկ և բացի յուրայիններից, բոլորին պրող անհավեր: Եվ դա անշուն ենք հանուն «հայրենասիրության»: Դրա վերջին օրինակը «Սարի աղջիկ» վավերագրականն է: Դպրոցներում աշակերտներին ցուցադրվեցին «թուրքերի նկարմամբ հայերի իրագործած չարագործությունները» պատմող տեսագրություններ:

«Հայերին թշնամի» մի ամբողջ սերունդ դաստիարակելու անձնուրույն ջանք է գործադրվում: Ավելի քան 1 մլն հային սպանում են, Անապոլիսում ջնջում նրանց հետքը, հափշտակում գույքն ու ունեցվածքը, իսկ հետո երեխաներին պատմում են, թե «հայերն ինչպիսի չարագործություններ են արել մեր նկատմամբ»:

Աշխարհում բոլորն էլ գիտեն, որ «Իթթիհապ վե Թերաքի» կուսակցության ղեկավարները գիտակցաբար ցեղասպանության են ենթարկել հայերին: Նրանք մեծ փառապանքներ են կրել: Այս իրողությունից, չգիտես ինչու, միայն թուրքերն են անտեղյակ Պարզերացնում եք ինչ վիճակում կհայտնվեն «հայերի կողմից թուրքերի սպանության» սպերով մեծացած երեխաները, երբ բախվեն աշխարհին հայտնի ճշմարտություններին: Նրանք կմտածեն, որ իրենց ցեղի թշնամին ողջ աշխարհն է: Մենք խզում ենք նրանց կապը ճշմարտության հետ, աշխարհից կտրում և արհեստական վանդակում սպերով ենք դաստիարակում նրանց Պարզվեց, որ այս փարփոհնակությունը գլխավոր շրաքի գործն է: Դպրոցներին հակահայկական «Սարի աղջիկ» DVD-ները հենց գլխավոր շրաքն է բաժանել, ընդ որում առանց իրազեկելու ազգային կրթության նախարարությանը: Չէ՞ որ մեր երկրում գեներալներն ամեն ինչ բոլորից լավ գիտեն, հեղափոխություններ են վերածել Թուրքիայի համար աշխարհին թշնամի, իրականությունից կտրված երկրասարդ սերնդի դաստիարակման օգտավետությունը:

Գլխավոր շրաքը ջանք չի խնայում հայերի հանդեպ թշնամի սերունդ դաստիարակելու համար: Նրան միանում է ուսուցիչների բազմությունը: Եթե վերջիններս հասնեն իրենց նպատակին, իսկ աշխարհը, ասենք, 30 տարի հետո դառնա երջանիկ, ինչ են մտածելու մեր երեխաները: Մտածելու են, որ բոլորը ջանում են սպանել իրենց, խելագարվելու են օսմանյան արքայազնների նման և դառնալու «մենք երջանկություն չենք ուզում» գոռացող խելատներ:

29.05.2009

ԹՈՒՐԿ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ Է ՓՈՂՈՑԱՅԻՆ ՍՏԱՎԱԿ

Երբ խոսքը վերաբերում է Թուրքիայի հայերին և հրեաներին

Անցյալ տարվա վերջին Իսրայելն սկսեց լայնամասշտաբ ռազմական գործողություններ իրականացնել Գազայի հատվածում: Ավելի քան մեկ ամիս տևած այդ գործողությունների ընթացքում իսրայելական զինված ուժերը հիմնահատակ ավերեցին Գազան, բնակչությունը կանգնեց հումանիտար աղետի առջև, կատարվեցին անխնա սպանություններ, որոնց գլխավոր զոհը դարձան խաղաղ բնակիչները, հատկապես կանայք և երեխաները:

Իսրայելական ՁՈՒ-ի դաժանությունները վրդովմունքի բուռն այլընտրանքով բարձրացրին ողջ աշխարհում: Տարբեր երկրներում, այդ թվում՝ նաև արևմտյան, կազմակերպվեցին հակաիսրայելական ցույցեր: Հատկապես նշական է, որ Գազայում իսրայելական բանակի գործողությունները դատապարտեցին հենց Իսրայելի հրեաները: Այդ ցույցերը հատկապես հուժկու էին մահմեդական երկրներում, մասնավորապես Թուրքիայում, որին մեծապես նպաստում էին վարչապետ Էրդողանի գլխավորությամբ երկրի ղեկավարության Գազայում իսրայելական բանակի վայրագությունները մերկացնող հայտարարությունները:

Թուրք ցուցարարների մեջ, ինչ խոսք, կային անկեղծ հավատացյալներ, իսլամականներ, ինչպես նաև մահմեդականի քոլի տակ իսլամը քաղաքական կամ անձնական նպատակին ծառայեցնելու համար Իսրայելի հարձակումն իբրև պատեհ առիթ օգտագործող շրջանակներ: Այդ շրջանակների թերևս ամենակարկառուն դեմքը Էսքիշեհրի «Օսմանգազի» մշակութային միությունների ֆեդերացիայի գլխավոր նախագահ Նիյազի Չափանն է: Ինչ առումով, այն, որ նա հունվարի 7-ին իր սեփական արհեստանոցների կենտրոնում կազմակերպած մամուլի ասուլիսով Գազայում իրականացված ռազմական գործողությունների համար նախ դատապարտել էր Իսրայելին, ապա կարգադրել կենտրոնի մուտքին և ցուցափեղկերին կայցնել. «Արգելվում է մուտքը հայերի և հրեաների համար, իսկ շների՝ ազատ է» մակագրությամբ ցուցապաստառներ:

Մամուլում խնդրո առարկա ասուլիսի հրապարակումից և ցուցապաստառների լուսանկարների տպագրումից հետո փաստաբան էրեն Քեքքիի անձնական նախաձեռնությամբ դատական հայց էր ներկայացվել Չափանի դեմ, որի տակ ստորագրել էին ևս հարյուր մտավորականներ: Էսքիշեհրի դատարանը մեղավոր էր ճանաչել Չափանին և թուրքական քր. օր.-ի 216-րդ հոդվածով՝ «բնակչության որոշ հատվածին ազգային պատկանելության, կրոնի և դավանանքի համար հրապարակավ նսեմացնելու» մեղադրանքով դատապարտել էր 5 ամսվա ազատազրկման:

Ազատազրկման այս վճիռը, սակայն, ինչպես մայիսի 27-ին գրել է «Ռադիկալը», այնուհետև վերանայվել է դատարանում, դրա փոխարեն սահմանվել է 3.000 լիրա տուգանք և Չափանն ազատ է արձակվել: Տվյալ դեպքում խնդիր ոչ այնքան դատարանի արարքն է, որքան Չափանի զբաղեցրած պաշտոնը, դրան անհարիր՝ լկտիությունը: Եթե մի երկրում «Մուտքը հայերի և հրեաների համար արգելված է, իսկ շների՝ ազատ» մակագրությամբ պաստառները փակցնում են ոչ թե փողոցային խուլիգանները, այլ մշակութային ֆեդերացիաների նախագահները, ապա այդ երկրի մշակութային գործիչն իջնում է

փողոցային խուլիգանի մակարդակի և խուլիգանությունը դառնում է նրա մշակութային գործունեության առանձնահատկությունը:

Երկրորդ՝ չհաշված հրեա արմատական շրջանակներին, Գազայի դեմ իսրայելական բանակի ռազմական գործողություններն ամենևին չեն ոգևորել Իսրայելի ժողովրդին, ավելին՝ ժողովրդական հոծ գանգվածները կառավարությունից պահանջել են անհապաղ դադարեցնել դրանք:

Ինչ վերաբերում է Թուրքիայի հրեաներին, ապա նրանք այդ օրերին չէին էլ կարող ողջունել իսրայելական բանակի գործողությունները, քանի որ Գազայի վրա հարձակման համար Իսրայելին դատապարտելու նպատակով երկրով մեկ կազմակերպված ցույցերի հակահրեական ուղղվածությունն ահաբեկել էր նրանց, և նրանք վերհիշելով անցյալի փորձությունները, ինչպես ասենք՝ 1955-ի սեպտեմբերի 5-6-ի ջարդը, կաթվածահար էին եղել:

Թեև Թուրքիայի հրեաները որևէ առնչություն չեն ունեցել Գազայի հատվածում իրականացվող գործողությունների հետ, բայց և այնպես Իսրայելը նրանց հայրենիքն է, այսինքն՝ գոնե Իսրայելի հետ էթնիկ կապ ունեն: Իսկ հայերը, այս հարցի պատասխանն, ըստ երևույթին, պետք է որոնել թուրքական իրականության մեջ առկա անզուսպ հայատյացության մեջ: Ինչպես երևում է, թուրքական ժողովրդական գանգվածների ակտիվ մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը թուրք մարդու ենթագիտակցության մեջ արմատավորել է հային եթե ոչ մշտապես սպանելու, ապա գոնե շարունակաբար ահաբեկելու մոլուցքը: Լինի դա շարքային ստահակ, թե ի պաշտոնն մշակութային գործունեություն ծավալելու կոչված «մտավորական», ինչպիսին է ստահակից թերևս սոսկ մտավորականի պատմուճանով և իր գրադեցրած «Օսմանզագի» մշակութային միությունների ֆեդերացիայի գլխավոր նախագահի պաշտոնով տարբերվող Նիյազի Չափանը:

21.05.2010

ԱՂԹԱՄԱՐԻ ՍԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՆ ԶԱՆԿՎԵԼՈՒՑ ՓՐԿՎԵԼ Է 1951-Ի

ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ

Դա հնարավոր է դարձել հանրահայտ քուրդ գրող Յաշար Քեմալի անմիջական միջամտությամբ

Վերջին շրջանում թուրքական մամուլը հաճախակի է հրապարակում Վանա լճի Աղթամար կղզու Սբ Խաչ եկեղեցուն առնչվող նյութեր՝ կապված սեպտեմբերի 12-ին նախատեսված պատարագի մատուցումը հանրաքվեի պատճառով մեկ շաբաթ մինչև սեպտեմբերի 19 հետաձգելու նահանգապետարանի որոշման հետ: «Ազգը» մայիսի 18-ի համարում տեղեկացրել էր այդ մասին: Նույն օրը թուրքական «Ջաման» թերթն էլ Հիլմի Յավուզի

«Տպավորություններ Վանից» հոդվածով տեղեկացնում է, թե 1951-ին ուլթեր ինչպես են փրկել Սուրբ Խաչը անխուսափելի քանդումից:

Մինչ հոդվածի բովանդակությանն անդրադառնալը, նշենք, որ 1914-ի տվյալներով, ներկայիս Թուրքիայի տարածքում գործել են 2.538 հայկական եկեղեցի, հայապատկան 451 վանք և 2.000 դպրոց: 1915-ին, ձեռնամուխ լինելով հայերի բնաջնջմանը Օսմանյան Թուրքիայում, թուրք, քուրդ, չերքեզ հրոսակները սկսեցին հայկական եկեղեցիների, վանքերի, դպրոցների կողոպուտը: Դրան աստիճանաբար հետևեցին ավերումն ու պետականորեն քանդումը, որ ՀՅ-ից հետո ցնջվի նաև հայկական հետքը երկրի տարածքում:

Մինչդեռ քեմալականների ժամանակակից Թուրքիան 1923-ի հուլիսի 23-ին ստորագրված Լոզանի պայմանագրի 42-րդ հոդվածով պարտավորվել էր պահպանել ազգային փոքրամասնություններին, այդ թվում, ինչ խոսք, հայերին պատկանող եկեղեցիները, վանքերը, գերեզմաններն ու դպրոցները:

Չնայած Լոզանի պայմանագրով ստանձնած պարտավորություններին, 1974-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրապարակած զեկուցագրի համաձայն, Թուրքիայի տարածքում ընդամենը հայկական 931 եկեղեցի և վանք էին մնացել: Ինչպես վկայում է պատմաբան Այշե Հյուրը, 1974-ից հետո այս եկեղեցիներից ու վանքերից 464-ը հիմնահատակ քանդվեց, իսկ 252-ը անտեղության մատնվեց, որ քանդվի:

1951-ին պետականորեն քանդման ենթակա հայկական եկեղեցիների ցանկում, «Ջամանի» հեղինակ Հիլմի Յավուզի դիպուկ արտահայտությամբ, հայտնվել էր նաև «10-րդ դարում Վասպուրականի թագավոր Գագիկ Ա-ի կառուցած Աղթամարի արքունական հոյակերտ Սբ Խաչ եկեղեցին»: Քանդումը հնարավոր է եղել կանգնեցնել վերջին պահին միայն:

Թե դա ինչպե՞ս է կատարվել՝ հողվածագիրը պատասխանում է ազգությամբ քուրդ, հանրահայտ գրող «Յաշար Քեմալն իր մասին» գրքից մեջբերած հատվածով: 50-ականներին Յաշար Քեմալն աշխատում էր «Ջումհուրիեթ» թերթում: Պատահամբ հայտնվում է Վանում: Թերթի սեփական թղթակիցը նրան պատմում է Սուրբ Խաչին սպառնացող վտանգի մասին, ավելացնելով, որ ինքը հնարավորի հետ նաև անհնարինը անում է, սակայն ոչ մի կերպ չի կարողանում կանխել վերահաս քանդումը: Ըստ թղթակցի, նույն վիճակում է եղել նաև Վանի նահանգապետը, քանի որ կտրուկ հրաման է ստացել:

Յաշար Քեմալը, լսելով թղթակցի պատմածները, իսկույն հեռաձայնել է պատգամավոր Նադիր Նադիրին, ապա և եկեղեցու քանդումը կանխելու համար կապիտանի կոչումով զինվորական մի թշչի հետ ուղևորվել է Աղթամար կղզի: Երբ ափ են իջել, տեսել են, որ հերթը դեռևս Սուրբ Խաչ եկեղեցուն չի հասել, սակայն

բանվորներն արդեն հասցրել են քանդել կողքի մատուռը: Տեսնելով դա, գինվորական բժիշկը բանվորներին կարգադրում է. «Մինչև ի՞նչ գալը եկեղեցում ոչ մի քլունգ չեք խփելու: Ես հիմա գնում եմ նահանգապետին ներկայանալու»:

Բժշկի այս խոսքերից հետո բանվորները, Յաշար Քեմալի վկայությամբ, «զգաստ են» կանգնում, այդ ընթացքում պատգամավոր Նադին միջադեպի մասին հեռախոսով իրազեկում է կրթության նախագահ Ավի Բաշմանին, որն իր հերթին եկեղեցու քանդումը կասեցնելու կարգադրությամբ հեռագիր է հղում Վանի նահանգապետին: Այսպիսով, 1951-ի հունիսի 25-ին փրկվում է Աղթամարի Սբ Խաչ եկեղեցին:

23.06.2010

ԵԹԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՅՈՒՄԸ ՍՊԱՆՆՈՒՄ Է ԹՈՒՐԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Անհանդուրժողականությունն էլ պետք է համարվի ոչ մահմեդականների նկատմամբ թուրքական «հանդուրժողականության» առանձնահատկությունը

Վերջին շրջանում Թուրքիայի մշակույթի և զբոսաշրջության նախարարությունը ձեռնամուխ է եղել տարվա մեջ մեկ օր ժամերգության համար հայերի, հույների և ասորիների մեկական եկեղեցիներ բացելուն, որոնցից թերևս առաջինը Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցին է: Նախարարության այս նախաձեռնությունը բուռն հակազդեցություն է առաջացրել ընդդիմության շրջանում: Դրան հատկապես առարկել է «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության փոխնախագահ Իսմեթ Բույուքաթամանը:

Նա, «Էթիկհաբեր» կայքէջի վկայությամբ, հարցում է ներկայացրել Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահություն, պահանջելով, որ դրան գրավոր պատասխանի մշակույթի և զբոսաշրջության նախարար Էրթուրդուլ Գյունայը: Հարցապնդման մեջ Բույուքաթամանը հետևյալ կերպ է պատճառաբանել դրա անհրաժեշտությունը.

«Վարչապետ Էրդողանի «Արդարություն և բարգավաճում» կուսակցության իշխանությունների եկեղեցական նախաձեռնությունները վերջ չունեն: Վերջին անգամ օգոստոսի 15-ին մեկ օրով ժամերգության համար է բացվել Տրապիզոնի հունական Սումելա վանքը: Անցյալ տարի վանքը ժամերգության համար բացելու քրիստոնյաների նկրտումը խափանել էր Սումելա թանգարանի տնօրեն տկն Նիզյուն Յըլմազերը: Իսկ այս տարի կառավարությունը պաշտոնապես արտոնել է բացումը:

Օգոստոսի 15-ը պոնտական պետության կործանման ամսաթիվն է: Հետևաբար միանգամայն տրամաբանական է, որ ժամերգության

համար քրիստոնյաները հենց այդ օրն ընտրեին: Մշակույթի նախարարությունը պետք է գիտակցի այդ օրվա խորհուրդն ու ըստ այդմ որոշում ընդունի»:

Ինչ վերաբերում է նախարար Գյունային ուղղված հարցերին, ապա դրանք հետևյալն են.

- «Օսմանյան զորքերը 1461-ի օգոստոսի 15-ին են գրավել Տրապիզոնը: Ճի՞շտ է, որ Սումելա վանքը ժամերգության բացելու համար գիտակցաբար հենց օգոստոսի 15-ն է ընտրվել:

- Նախարարությունը չի մտածո՞ւմ օգոստոսի 15-ի փոխարեն այլ ամսաթիվ ընտրել:

Ինչ են մտածում Պոնտոսի հունական պետության կործանման օրը՝ օգոստոսի 15-ը իբրև ժամերգության օր ընտրողները, նրանք դրանով արդյոք չե՞ն ձգտում հռչակել Բյուզանդիայի վերականգնումը:

- Ժամերգության համար մինչ այդ բացված Վանի Աբդամար (Աղթամար) և Ալեքսանդրետի ասորական եկեղեցիներից հետո ժամերգության արտոնություն ո՞ր եկեղեցիներին է տրվելու: Հնարավո՞ր է, որ ժամերգության համար բացվի նաև Այա Սոֆիան:

- Նախարարությունը չի՞ մտածում մայիսի 29-ին՝ Ստամբուլի նվաճման օրը նամագի համար մահմեդական հավատացյալների առջև բացել Այա Սոֆիան»:

Ինչո՞ւ մահմեդականների, որովհետև 1453-ի մայիսի 29-ին, երբ Մեհմեդ Երկրորդը գրավեց Կ. Պոլիսը, Այա Սոֆիան մզկիթի էր վերածել: Քաղաքի փառահեղ մյուս եկեղեցիներն արժանացել էին նույն ճակատագրին կամ էլ՝ հիմնահատակ ավերվել: Ինչ վերաբերում է Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու տարվա մեջ մեկ օր՝ ընդամենը մի քանի ժամով ժամերգության համար բացմանը, ապա հիշեցնենք, որ 1914-ին, այն էլ՝ թուրքական տվյալներով, ներկայիս Թուրքիայի ասիական հատվածում գործում էին 2.538 հայկական եկեղեցի և 451 վանք:

1915-23թթ. թուրք մարդասպանները իթթիհատական թեթեմալական, բնաջնջել են արևմտահայությանը: Բնաջնջմանը հետևել է երկրի տարածքում հայկական հետքի վերացումը: Մինչև 1974թ. ցեղասպան իթթիհատականների իրավաժառանգորդները հասցրին հայկական 2.989 եկեղեցիներից և վանքերից 2.737-ը քանդել, մնացած 252-ն անտերության մատնեցին, որ քանդվի:

Պետականորեն քանդման էր ենթակա նաև Աղթամարի Սուրբ Խաչը, միայն վերջին պահին կասեցվեց քանդումը: Թերևս 2.989 եկեղեցիներից և վանքերից միակն է, որ շարունակում է կանգուն մնալ թեկուզ առանց խաչի, և վարչապետ Էրդողանի իշխանությունները տարվա մեջ մեկ օր թույլատրել են ժամերգություն կատարել Սուրբ Խաչում: Իսկ, ի դեմս Ազգայնական շարժում կուսակցության,

թուրքական ընդդիմությունն առարկում է, դեռ ժամերգությունն էլ դավադրություն է համարում միտված թուրք ազգի միասնականության և թուրքական պետության ամբողջականության դեմ:

Առարկումն անհանդուրժողականության դրսևորում է: Ըստ երևույթին այդ անհանդուրժողականությունն էլ պետք է համարվի ոչ մահմեդական ժողովուրդների նկատմամբ թուրքական դարավոր «հանդուրժողականության» առանձնահատկությունը:

31.07.2010

ԹՈՒՐԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՎԱԿԱՆ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

Կամ էլ խեղաթյուրված է «զգոն» թուրքի առանց այդ էլ հիվանդագին երևակայությունը «Ազգի» հուլիսի 27-ի համարում Իզդիիրում գործող «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի միության» նախագահ Գյոքսել Գյուլբեյի, կրթության նախարար Կլն Նիմեթ Չուբուքչուին հասցեագրած նամակին անդրադառնալիս, գրել էինք, որ հայկական դավադրության որոնումները հիվանդագին բնույթ են ստանում Թուրքիայում, ընդգծելով. «Դա թերևս պայմանավորված է թուրքական հասարակության ենթագիտակցության մեջ ամրապնդված հանցագործի հոգեբանությամբ»:

Ինչո՞ւ: Որովհետև Գյուլբեյը նախարարի միջոցով փորձում էր ճշտել, թե Սյրամբուլի հայկական վարժարաններում արդյոք հակաթուրքական քարոզչություն չի՞ ծավալվում, հայերեն դասագրքերը հարմարեցված չեն՞ այդ քարոզչության նպատակներին և աշակերտների շարքերում չկա՞ն հայաստանցի երեխաներ: Այլ կերպ, «Հայկական անհիմն պնդումների միության» նախագահի մտայնությամբ, հայկական վարժարանները, որոնք ընդամենն ունեն 2.000-ից մի քիչ ավելի աշակերտներ, սպառնալիք են ավելի քան 70 միլիոնանոց թուրքական պետության համար:

Մինչդեռ հայկական վարժարանները Սյրամբուլում են, իսկ միությունը գործում է Իզդիիրում: Կամ 15 միլիոնանոց Սյրամբուլում թուրք չկա, որ գիտակցի Թուրքիայի հանդեպ այս վարժարաններից բխող վրանգը, ինչպես Գյուլբեյն է գիտակցում է, կամ էլ հայկական դավադրության որոնումները թուրքական իրականության մեջ համադրվում են հայադյացության դրսևորումների հետ և խեղաթյուրում «զգոն» թուրքերի երևակայությունը:

Երևույթն իհարկե աննորմալ է, սակայն ոչ եզակի: Մեկ այլ աննորմալություն էլ Սյրամբուլի արվարձաններից Փենդիլի «Սոնսոզ» կայքէջում հրապարակել է Թուրքիայի Հեռագրություն: Հուլիսի 27-ի հրապարակման մեջ տեսալի էլ ինչ էլ գրել:

«Անգլիական «Ռոյթեր» գործակալությունը տեղեկացրել է, որ այն խաչը, որն առաջիկա սեպտեմբերի 19-ին հանդիսավոր արարողությամբ տեղադրվելու է Վանա լճի Աղթամար կղզու հայկական եկեղեցու վրա, այլևս չի հանվելու: Արևմտյան երկրները, որոնք դարեր շարունակ ջանք չէին խնայում, որ Անատոլիան դառնա քրիստոնեական երկիր, չեն հրաժարվել այս նկրտումից: Դրա վառ ապացույցը վերջին տարիներին մեր երկրում հետզհետե ակտիվացող միսիոներների հարածուն գործունեությունն է:

Թուրքիայում, բացի 3.000 եկեղեցիներից, գործում են շուրջ 70-80 ոչ պաշտոնական եկեղեցիներ, ինչպես նաև արդթարանի վերածված բազմաթիվ տներ: Ինչպես երևում է, այսքան մեծաքանակ եկեղեցիները բավարար չեն ոմանց համար, որ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին խաչի տեղադրմամբ բացվում է ժամերգության համար:

Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ սա աննախադեպ երևույթ է և առաջին անգամ է թույլատրվում, որ տեղադրվի այսպիսի կարևոր եկեղեցու խաչը: Ինչպես երևում է, վարչապետ Էրդոդանի «Արդարություն և բարգավաճում» կուսակցությունը դառնալու է մեր երկրի պատմության մեջ եկեղեցու խաչը տեղադրող առաջին մահմեդական իշխանությունը:

Կարծում ենք, եկեղեցուն, ինչպես նաև քրիստոնեությանը մատուցած այս ծառայությունների համար Արևմուտքը ինչ-որ ձևով կպարգևատրի իշխող կուսակցությանը: Գուցե 2004-ին Նյու Յորքում Ամերիկայի Հրեական կազմակերպության՝ Էրդոդանին պարգևատրած «Հանդգնության հրեական շքանշանը» հանդիսացող «Դավիթի եղջյուրի» նմանակն էլ տա... Հայաստանն էլ իր հերթին, «Էջ» չի, որ հնարավոր առատաձեռնություն չցուցաբերի...

Ցավոք, ԵՄ-ին անդամակցելու համար զիջում ենք բոլոր ասպարեզներում: Ժամանակին հոգևոր ճեմարան ունեցող և կաթողիկոսի նստավայր հանդիսացող այս եկեղեցին ժամերգության համար բացելը կնշանակի հայ հոգևոր ճեմարանի և տիեզերական պատրիարքի նոր խնդիրներ առաջացնել: Ո՞վ կերաշխավորի, որ այնուհետև Աղթամարի եկեղեցու պատրիարքը Հունաց պատրիարքի նման արևմտյան թատերաբեմերում թշնամական քարոզչություն չի ծավալի Թուրքիայի դեմ:

Մի՞թե կարելի է Արևմուտքին սիրաշահելու համար այսպիսի զիջումներ անել հայերին: Ինչքան շուտ ենք մոռանում այս շրջաններում տեղի ունեցած դառը իրադարձությունները: Ի՞նչ է լինելու հայերի ձեռքով կոտորածի ենթարկված թուրք բնակչությունը: Տեղադրվել եկեղեցու խաչը՝ հայերին պարգևատրում ենք: Ո՞ւմ հաղթանակն են ավետելու եկեղեցու զանգերը:

Մինչդեռ հայկական իշխանություններն առ այսօր ոչ մի հետքայլ կապված Թուրքիայի հետ, չեն կատարել: Նշանակում է՝ մեր հողերի նկատմամբ շարունակվում են նրանց հավակնությունները: Տասնյակ երկրներ, այդ թվում՝ ԱՄՆ-ն, ճանաչել են այսպես կոչված ցեղասպանությունը: Այդ առումով պատահական չէ պետքարտուղար Հիլարի Բլինթոնի այցը «ցեղասպանության» հուշահամալիր: Ըստ երևույթին, առաջիկա տարում այսպես կոչված ցեղասպանությունը պաշտոնապես կճանաչի նաև ԱՄՆ-ն:

Այլ կերպ, սեպտեմբերին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ, Թուրքիան ախպերանում է Հայաստանի հետ, որովհետև, սեպտեմբերի 11-17-ը Հայաստանում նախատեսվող ՆԱՏՕ-ի զորավարժություններին մասնակցում է նաև Թուրքիան, իսկ 19-ին՝ Վանի Աղթամարի հայկական եկեղեցում ժամերգություն է նշանակված: Իմացել ենք, որ Անկարան ջերմ է մոտենում զորավարժությունների համար անհրաժեշտ տեխնիկական փոխադրելու պատրվակով սահմանի բացմանը: Եթե Հայաստանը հավանություն տա, ապա կբացվի Կարսի սահմանադուրը: Պատրվակը ՆԱՏՕ-ն է, իսկ եկեղեցին՝ հրաշալի առիթ...

Շեղո ինչ, որ Ադրի (Արարատ) լեռը Հայաստանի սահմանադրության 13-րդ հոդվածի 2-րդ դրույթով «խորհրդանշում է Հայաստանի անկախությունը», իսկ Հայաստանի անկախության հռչակագրում Արևելյան Անատոլիան ներկայացվում է որպես Արևմտյան Հայաստան: Սա կնշանակի, որ Հայաստանը հողային պահանջներ ունի Թուրքիայից: Ինչ է ասում «Ռոյթերը»: Ասում է, որ Վանի Աղթամար եկեղեցու սեպտեմբերի 19-ին տեղադրվող խաչն այլևս չի հանվել»:

Նախ պեքք է ասել, որ Թուրքիայի տարածքում 3.000 եկեղեցի եղել է մինչև 1915-ի ցեղասպանությունը: Քանի որ հայերի հեղինակներն են ենթարկվել հույները, ասորիները և քաղղեացիները, ուստի ընչաքաղց թուրք հրոսակներն ու կիսավայրենի քուրդ աշիրաթները նախ կողոպտել, ապա և հրկիզել են այդ եկեղեցիները: Այնուհետև Քեմալ Աթաթուրքի ժամանակակից Թուրքիայի իշխանությունները պեքրականորեն քանդել են մինչ այդ ավերակի վերածված բոլոր եկեղեցիները: Միակ հայկական եկեղեցին, որը կանգուն է մնացել Թուրքիայի ասիական տարածքում, թերևս Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցին է, որի դեռ չտեղադրված խաչն էլ Թուրքիայի համար իբրև սպառնալիք է դիտարկում հողվածագիրը:

Քանի որ նա «զգոն» թուրքերից է, ուստի նրա տրամադրությունը ևս պեքք է խեղաթյուրված լինի, որպեսզի համապատասխանի ինչպես հայապոլսության, այնպես էլ հայկական դավադրության որոնումների պահանջներին:

05.03.2011

ՀՐԱՆՍ ԴԻՆՔԻ ԵՎ ՔԱՀԱՆԱ ՍԱՆՏՈՐՈՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ ՏՐԱՓԻՋՈՒՈՒՄ

Սպանություններով հպարտանում է ազգային կրթության քաղաքային վարչությունը

Մեր հայրենակից Հրանտ Դինքի սպանությունից հետո տասնյակ հազարավոր թուրք մարզասերներ տարբեր քաղաքների մարզադաշտերում ինքնամոռաց բացականչում էին. «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք»: Այս բացականչությունները հայ սպանելու պատրաստակամության արտահայտություններն էին՝ համեմված մարդասպանի հանդեպ բարի նախանձով: Ակնհայտ է, որ հայ սպանելու դեպքում մարզասերը հպարտանալու առիթ էր ձեռք բերելու, նրա հպարտությունից իրենց բաժինը անշուշտ ստանալու էին նաև մյուսները, իսկ դա Թուրքիայի պարծանքն էր դարձնելու մարզասերների «Մենք բոլորս Օգյուն Սամասթ ենք» բացականչող ուժակին:

Այլ կերպ, երբ խոսքը Թուրքիայում հային է վերաբերում, մարզադաշտը չի տարբերվում կառափնարանից, իսկ մարզասերը՝ ստոր մարդասպանից: Քանի որ վերջինին չեն ներգրավում սպանության մեջ, ուստի նա սպանությամբ հպարտանալու փոխարեն ստիպված է լինում բավարարվել մարդասպանին նախանձելով:

Այն, ինչ չի հաջողվում անել մարդասպան ստահակից չտարբերվող թուրք մարզասերին, արել է Տրապիզոնի նահանգի ազգային կրթության քաղաքային վարչությունը: Մարտի 2-ին Կ. Պոլսո «Հայթերթ» կայքէջի «Հաբերթուրք» թերթից արտատպած հոդվածի համաձայն, Տրապիզոնի ազգային կրթության վարչության պաշտոնական trabzon.meb.gov.tr կայքը քաղաքի ճանաչողության նպատակով նյութ է հրատարակել, որտեղ պատմության և մշակույթի մասին տեղեկությունների կողքին հիշատակվում է Հրանտ Դինքի անունը, ընդգծելով հպարտությամբ, թե նրա սպանությունը իրականացրած Օգյուն Սամասթը բնիկ տրապիզոնցի է:

Այդ կայքում ազգային կրթության քաղաքային վարչությունը միաժամանակ հպարտորեն նշել է, որ կաթոլիկ քահանա Անդրեա Սանտորոն սպանվել է Տրապիզոնում, և տրապիզոնցիները ցույցի պահին փորձել են Լինչի դատաստանի ենթարկել «Բոնադառվածների և կալանավորների ընտանիքների հետ համերաշխության» միության անդամներին:

Տրապիզոնի ազգային կրթության վարչության պաշտոնական կայքում քաղաքի ճանաչողության նպատակով առաջադրանքով տեղադրված 8 էջանոց այս նյութը նախ շփոթմունք է պատճառել թուրքական կենտրոնական թերթերին, ապա առաջ է բերել բուռն հակազդեցություն: Մամուլի արձագանքից հետո վարչությունը

հրապարակումից հանել է հողվածի այն հատվածը, որը վերաբերում է Հրանտ Դինքի, քահանա Սանտորոյի սպանությանն ու Լինչի դատաստան տեսնելու փորձին:

Դրա առնչությամբ կրթության քաղաքային վարչության պետն ասել է, որ թյուրիմացություն է կատարվել, իսկ ԺՀԿ քաղաքային վարչության նախագահ Գյուլջան Օզգյուլը, դատապարտելով կատարվածը, ավելացրել է. «Ոչ մի կերպ հավանություն չեմ տալիս: Տրապիզոնը պատմական կարևորություն ունեցող քաղաք է: Քաղաքի դեմ երկար ժամանակ դավեր են նյութում: Հատկապես փորձում են ցույց տալ, թե ոչ մահմեդականների և էթնիկ այլ խմբավորումների դեմ հակակրանքը համատարած բնույթ է կրում Տրապիզոնում: Սա սխալ մոտեցում է և բանականությանը հակասող: Մեր կուսակցությունը հետամուտ է լինելու այս գործի բացահայտմանը»:

Ի դեպ, «Բռնադատվածների և կալանավորների ընտանիքների հետ համերաշխության» միության անդամներին Լինչի դատաստանի ենթարկելու փորձը Տրապիզոնում կատարվել էր 2003-ի մայիսի 26-ին, 2006-ի փետրվարի 5-ին աղոթելու ժամանակ սպանվել է կաթոլիկ Սանտա Մարիա եկեղեցու քահանա Սանտորոն, իսկ 2007-ի հունվարի 19-ին Օզյուն Սամասթ կոչեցյալ ստահակը «Ակօսի» խմբագրատան առջև սպանել էր Հրանտ Դինքին:

29.04.2011

ՍՏԱՄԲՈՒՆՈՄ ՀՈՂԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ՍՊԱՆՎԱԾ

ԹՈՒՐԿԱԿԱՅ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԸ

Չի բացառվում, որ այս սպանությունը թուրքական ժխտողականության արձագանքը լինի

Այս տարի ապրիլի 24-ին Ստամբուլում, Անկարայում, Բողրումում և Դիարբեքիրում կազմակերպվել են ՀՅ-ի զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ: «Ռասիզմին և ազգայնականությանը՝ ոչ» նախաձեռնության կազմակերպած միջոցառումների կազմակերպիչները ցեղասպանության հետ դատապարտել են նաև ժխտողականությունը, պահանջելով թուրքական պետությունից վերջ տալ ժխտողականությանը:

Նույն օրը Բաթմանի Կոզլաք գավառի մոտակայքում տեղակայված զորամասում զորացրվելուց 15 օր առաջ սպանվեց թուրքահայ շարքային զինծառայող Սևակ Շահին Բալլըքչը: Հուղարկավորությունը ապրիլի 27-ին տեղի ունեցավ Կ. Պոլսո Սբ Վարդանանց եկեղեցում: Սևակին հողին են հանձնել Շիշլիի հայկական գերեզմանոցում: Երեկ թուրքական թերթերը, նաև հեռուստաալիքները անդրադարձել էին թաղման արարողությանը, որին վարչապետ Էրդողանի կառավարության անունից մասնակցել է պետնախարար Էգեմեն Բաղըշը,

իսկ թուրքական ԶՈւ-ի՝ գնդապետի կոչում ունեցող 30 զինծառայող: Արարողությունը հանդիսապետել է Պոլսո հայոց պատրիարքի տեղապահ Արամ արք. Աթեշյանը, միաժամանակ ներկա է եղել հանգուցյալ Հրանտ Դինքի այրին՝ Ռաքել Դինքը:

Թեև ծառայության վայրից Սևակի ծնողներին տեղեկացրել էին, որ նա սպանվել է պատահական գնդակից, սակայն հուղարկավորության օրը նրա սգակիր մայրը, «Բիանեթ» կայքէջի վկայությամբ, հայտարարել է. «Չեմ հավատում, որ իմ որդին ապրիլի 24-ին սպանված լինի պատահական գնդակից»: Պատահական գնդակի վարկածին չեն հավատում նաև Սևակի նշանածը՝ Մելանին, և նրա մայրը՝ Հոփսիմե Հակոբյանը:

Համենայն դեպս ապրիլի 26-ին տիկին Հոփսիմեն զանգահարել է «Այդընլըք» թերթի հեղինակ Մեհմեդ Ֆարաչին և ասել. «Մեր փեսային սպանեցին»: Այնուհետև նույն բանը կրկնել է Մելանին, միաժամանակ պատմելով, թե անցյալ ամիս զորամասի հրամանատարը ինչպես է ծեծել իր նշանածին, որին այնուհետև սպառնացել են՝ կվառենք քեզ:

Անկախ Սևակի հարազատների կասկածներից, առ այսօր չի հրապարակվել սպանության դատաբժշկական փորձաքննությունը, ոչ էլ հայտնում են պատահական կրակոց արձակող զինծառայողի անունը, որն իբր Սևակի ընկերն է, և նա կրակոցն արձակել է թյուրիմացաբար, ընկերոջ հետ կատակելիս:

Ապրիլի 24-ը խորհրդանշում է Հայոց ցեղասպանությունը: Չի բացառվում, որ թուրքահայ զինծառայողի հենց ապրիլի 24-ին կատարված առեղծվածային սպանությունն էլ թուրքական պետության յուրատեսակ ազդանշանը լինի հայերին և խորհրդանշի Թուրքիայի ժխտողականությունը:

06.05.2011

«ՄԵՎԱԿԻ ՄԻՋԱԳԵՊԸ ՈՉ ԹԵ «ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱԿԱՐ» Է, ԱՅԼ ԱՊՐԻԼԻ

24-ԻՆ ԾՐԱԳՐՎԱԾ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

Այս կարծիքն է հայտնել թուրքահայ զինծառայողի ընտանիքի դատապաշտպանը

Ապրիլի 24-ին, երբ համայն հայությունը ոգեկոչում էր Մեծ եղեռնի զոհերի հիշատակը, և աշխարհի տարբեր երկրներում՝ Թուրքիան ներառյալ, 1,5 միլիոն զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ էին կազմակերպվում, հանկարծ Դիարբեքիրից ոչ հեռու, Բաթմանի Կոզլաք գավառում, զորացրվելուց 23 օր առաջ սպանվեց թուրքահայ զինծառայող Սևակ Շահինը: Նրա հուղարկավորությունը տեղի ունեցավ ապրիլի 27-ին, Ստամբուլի Սուրբ Վարդանանց եկեղեցում:

Ապրիլի 29-ի համարում անդրադարձել էինք Սևակ Շահինի հուղարկավորությանը: Դրա հետ նաև նշել էինք, որ սպանության

պաշտոնական վարկածը կատակելու պահին Սևակի ընկերոջ արձակած պատահական կրակոցն է: Սակայն միաժամանակ հաշվի էինք առել սպանության կատարման օրը, թուրքական իրականությանը յուրահատուկ հայկական դավադրության որոնումների շարունակականությունը, որը թուրք հասարակության մեջ հայ էթնոմիլը հայիոյանք է դարձրել, ՀՅ-ի թուրքական պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականության մարտնչող բնույթը, թուրքական պետական կառույցների և քաղաքական կուսակցությունների հայատյացության դրսևորումները:

Ելնելով այս ամենից, չէինք բացառել, որ Սևակ Շահինի հենց ապրիլի 24-ին կատարված սպանությունը լինի դիտավորյալ, թուրքական ժխտողականության չարանենգ դրսևորման արձագանքը և կրի՝ որպես ազդանշան, համայն հայությանը սաստելու բնույթ:

Մայիսի 5-ին BIA լրատվական գործակալությունը, վկայակոչելով հանգուցյալ Սևակի ընտանիքի դատապաշտպան Ջեմ Հալավուրթին, մասամբ հաստատեց մեր կանխագուշակումը: Պարզվում է՝ Սևակի այսպես կոչված ընկերը, որի իբր պատահական կրակոցից սպանվել է Սևակը, Քըվանչ Աղաօղլուն է, հարում է ուլտրաազգայնամոլ «Մեծ միասնություն» կուսակցության հրոսակներին այնպես, ինչպես «Ալօսի» խմբագրապետ Հրանտ Դինքի սպանության կազմակերպիչներից Յասին Հայալը, որն անդամագրվել էր այս կուսակցությանն առընթեր գործող «Ալիերեն» օջախների Տրապիզոնի մասնաճյուղում:

Գալով Դինքի սպանության մյուս կազմակերպիչ Էրհան Թունջելին, ապա նա էլ Տրապիզոն այցելելու օրերին անբաժան ուղեկիցն է եղել «Մեծ միասնություն» կուսակցության առաջնորդ, երկու տարի առաջ առեղծվածային վթարի զոհ դարձած Մուսին Յազըջըղլուի, որի ուղղաթիռն առ այսօր չպարզաբանված հանգամանքներում խորտարկվել էր:

Ըստ երևույթին սրան 70-ական թվականներին որպես գործիք սպանությունների մեջ օգտագործելուց հետո ոչնչացրել են: Ի դեպ, եթե հիշողությունս չի դավաճանում, 1995-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի ամբիոնից վարչապետ Թանսու Չիլերը, նկատի ունենալով «Մեծ միասնություն» կուսակցության պատգամավորներին՝ առաջնորդով հանդերձ, բացականչել էր «Դուք մինչև կոկորդն արյան մեջ թաղված մարդասպաններ եք: Ես ամաչում եմ մարդկությունիցս, քանի որ դուք էլ եք մարդ կոչվում»:

Այս ամենի առումով հատկանշական են Սևակի ընտանիքի դատապաշտպան Ջեմ Հալավուրթի խոսքերը, որը մայիսի 1-ին եղել էր զորամասում: Նա, ըստ BIA գործակալության, ընդգծել է. «Որքան էլ միջադեպը համարվի «դժբախտ պատահար», հավանական է, որ սպանություն լինի»:

Դատապաշտպան Հալավուրթը, հիմնավորելու համար իր ննթադրությունը, հետևյալ փաստարկներն է բերել.

«Կասկածյալ Աղաօղլուի ֆեյսբուքն ուսումնասիրելիս տեսանք, որ նա համակրում է «Մեծ միասնություն» կուսակցությանն ու թուրք-խլամական սինթեզի կողմնակիցն է (սա այն տեսությունն է, ըստ որի՝ իսլամը միավորել է թուրքական ցեղերին, որոնք էլ իսլամական աշխարհը պաշտպանելով քրիստոնյաների ոսնձգություններից, նպաստել են վերջինի բարգավաճմանը, ընդարձակելով նրա սահմանները: Ի դեպ, այսպես կոչված այս տեսությունը պաշտպանում են ինչպես թուրք-ազգայնամոլները, այնպես էլ սոցիալ-դեմոկրատներն ու իսլամականները, այն տարբերությամբ, որ մի դեպքում առաջնային է դառնում պանթուրքիզմը, իսկ մյուս՝ պանիսլամիզմը, իհարկե, Թուրքիայի գլխավորությամբ):

Հանդիպեցինք կասկածյալի ազգայնամոլ դրսևորումներին, որոնցից են Մուսին Յազըջըղլուի տեսագրություններն ու Աբդուլլահ Չաթըրի (Հռոմի պապի դեմ մահափորձ կատարած Աղջայի վերադասն էր, թուրքական պետության հրահանգով ԱՍԱԼԱ-ի դեմ գործողություններ է իրականացրել, միաժամանակ Ղարաբաղյան պատերազմի թեժ օրերին եղել և մուֆ գործարքների մեջ է մտել Ադրբեջանում):

«Դժբախտ պատահարի» վարկածը մեզ չի բավարարում, որքան էլ մեր ուսումնասիրության ընթացքում միջադեպի վկաներն այդպես ներկայացնեն:

Միջադեպը տեղի է ունեցել առավոտյան ժամը 11.00-ին, իսկ զորամասում վկաներին լսել են 18.00-ին միայն:

Ի վերջո, զորամասում գործում է վերադաս-ստորադաս համակարգը:

Ականատեսների վկայությունները իրարամերժ են, հետևաբար մենք հավանական ենք համարում, որ այս միջադեպը ապրիլի 24-ին հատուկ ծրագրված սպանություն լինի»:

11.05.2011

«ԳՈՒՑԵ «ԳՅԱՎՈՒՐՆԵՐԻ» ՀՈՐԻՆԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒՏԵ ԱՄԵՆ ՏԱՐԻ ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ՊԵՏՔ Է ՀԱՅ ՍՊԱՆԵԼՈ՞Վ ՆՇԵԼ «ԹՎԵՄԻՄ» ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ»

Այս հարցադրումով է անդրադառնում «Ռադիկալը» Սևակ Շահինի սպանությանը

«Ալօսի» գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը 2007-ի հունվարի 19-ին սպանվեց Ստամբուլում: Դրան 2011-ի ապրիլի 24-ին հետևեց թուրքահայ զորակոչիկ Սևակ Շահինի սպանությունը Թուրքիայի

հարավարևելյան նահանգներից Բաթմանի Կոզլակ գավառում տեղակայված զորամասում: Դինքի սպանությունից անմիջապես հետո ձերբակալվեցին մարդասպան Օզյուն Սամասթը, նրան ուղղորդող Յասիմ Հայալն ու էրհան Թունջեյը: Այնուհետև ձերբակալվածների թիվը հասավ 19-ի:

Դինքի սպանության գործով դատավարությունը դեռևս շարունակվում է, կալանքն ի սկզբանե որպես խափանման միջոց է կիրառվում սպանությունն անմիջականորեն իրականացնողների նկատմամբ: Ավելին, ակնհայտ է սպանության քաղաքական բնույթը, ինչպես նաև դրա՝ անվտանգության ծառայությունների թողտվությամբ իրականացումը, սակայն առ այսօր բացահայտված չեն բուն կազմակերպիչները:

Պաշտոնական շրջանակներում Դինքի սպանությունն ակնարկի ձևով վերագրում են «խորքային պետությանը», բայց երբ խոսքը վերաբերում է սպանության գործի միացմանը «խորքային պետության» ռազմական թևը հանդիսացող «էրզենեքոնի» գործին, նրանք իսկույն հետքայլ են կատարում՝ կարծես հաստատելու համար Թուրքիայում պետական իշխանության մարմինների սերտաճումը «խորքային պետության» հետ:

Թերևս այդ առումով հատկանշական է Դինքի սպանության պահին Տրապիզոնի ոստիկանության քաղաքային վարչության պետ Ռեշաթ Ալթայի երեկ, այսինքն՝ միջադեպից ավելի քան 4 տարի հետո արած հայտարարությունը. «Դինքի դեմ պատրաստվող մահափորձի մասին որևէ տեղեկություն չեմ ունեցել: Եթե իմանայի, ապա կիրականացնեի կանխարգելիչ բոլոր միջոցառումները՝ Կմեկուսացնեի Հայալին և այն կազմակերպությանը, որին նա անդամակցում էր»: Մինչդեռ Դինքի ընտանիքը սպանության մեղսակից է համարում Տրապիզոնի ոստիկանությանը:

Սևակ Շահինի պարագայում իրավիճակն այլ էր: Այսինքն՝ սպանությունը ոչ թե քաղաքական երանգ ունի, այլ դժբախտ պատահար է, կատակելիս Սևակը իբր դարձել է իր մերձավոր ընկերոջ արծակած պատահական գնդակի զոհը: «Ազգը», ապրիլի 29-ի համարում անդրադառնալով Սևակի սպանությանը, նշել էր. «Ապրիլի 24-ը խորհրդանշում է Հայոց ցեղասպանությունը: Չի բացառվում, որ թուրքահայ զինծառայողի հենց ապրիլի 24-ին կատարված առեղծվածային սպանությունն էլ թուրքական պետության յուրատեսակ ազդանշանը լինի հայերին և խորհրդանշի Թուրքիայի ժխտողականությունը»:

Այսպիսի եզրակացության համար մեզ հիմք էին տվել թուրքական իրականությանը հատուկ հայկական դավադրության որոշումների շարունակականությունը, ՀՅ-ի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականության մարտնչող բնույթն ու թուրքական պետական կառույցների և քաղաքական կազմակերպությունների հարաճուն հայատյացությունը:

Մայիսի 5-ին, հանդես գալով հայտարարությամբ, Սևակի ընտանիքի դատապաշտպան Ջեմ Հալավուրթը մասամբ հաստատեց մեր ենթադրությունը, ասելով. «Սևակի միջադեպը ոչ թե «դժբախտ պատահար» է, այլ ապրիլի 24-ի առնչությամբ ծրագրված սպանություն»:

Նույն օրը, ի դեմս Ստամբուլի մասնաճյուղի, դատապաշտպանին միացավ Մարդու իրավունքների միությունը: Նրանց հետևությունն էլ մայիսի 9-ի համարում հաստատում է «Ռադիկալի» հեղինակ Յըլդըրըն Թուրքերը: Նախքան Թուրքերի «Ի՞նչ կատարվեց շաբաթային Սևակի հետ» վերնագրով հոդվածին անդրադառնալը, հիշեցնենք, որ Հրանտ Դինքի և Սևակ Շահինի սպանություններն իրականացնողները հավասարապես հարում են ուլտրա-ազգայնամոլ «Մեծ միասնություն» կուսակցությանը: Պարզապես Դինքի մարդասպանները ծառայել են «խորքային պետությանը», իսկ Սևակինը՝ որպես զորակոչիկ, ծառայում էր թուրքական ՁՈՒ-ին:

Ահա թե ինչ է գրում «Ռադիկալի» հեղինակը. «Ապրիլի 24-ին հայ երիտասարդի դժբախտ պատահարի հետևանքով զոհ դառնալու վարկածն այն հեքիաթը չէ, որ մենք, մոռանալով ՀՅ-ի հարցում մեր պետության պաշտոնական թեզը հանդիսացող սանձարձակ ժխտողականության մասին, հավատանք դրան: Նրանք, ովքեր Սևակի հուղարկավորությունը զինվորականության ցույցի են վերածել (նկատի ունի գնդապետի կոչում ունեցող 30 զինծառայողի ներկայությունը եկեղեցում), ծածկելով հանդերձ նրա դագաղը թուրքական դրոշով, նույնիսկ հարկ չհամարեցին նահատակ կոչել նրան: Թաղման արարողությանը կառավարության անունից մասնակցեց պետնախարար էզեմեն Բաղդըը, կարծես՝ հանդիսավոր երեկոն էր զարդարում իր ելույթով: Վսեմաշուք պարոնն ասաց. «Մահմեդական, ոչ մահմեդական, թուրք, քուրդ, չերքեզ, լազ, ալավի, սուննի, մենք բոլորս միասին էլ ավելի ենք զարգացնելու մեր համատեղ գոյակցությունը»: Հետաքրքրական է, թե ինչպե՞ս է պատկերացնում զարգացնել: Գուցե ամեն տարի ապրիլի 24-ին հայ սպանելով պե՞տք է նշել մեր ազգին մասնատելու համար «գյավուրների» հորինած ցեղասպանության սուտը «Թաքսիմ» հրապարակում»:

ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՍԱՀՄԱՆԱՓՎԱԿՎՈՒՄ ԹՈՒՐԲ
ԱԶԳԱՅՆԱՄՈՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՎ

Դրանով փառապում են նաև Թուրքիայից ԱՄՆ տեղափոխված վարձու ոչ թուրք գրչակները

«Ազգի» նախորդ համարում անդրադարձել էինք «Թուրք վրիժառուների բրիգադին»՝ ցույց տալու համար թուրքական իրականության մեջ արմատավազած հայապայացությունն, ու ազգայնական լինելով հանդերձ, դրսից ուղղորդվող այս կառույցի թուրքահայությանը ներկայացված սպառնալից վերջնագիրը:

Հայապայացության շրջանակները, ինչպես երևում է, չեն սահմանափակվում թուրքական իրականությամբ, ոչ էլ թուրք ազգայնամոլ կառույցներով, որքան էլ վերջիններս դրսից ղեկավարվեն: Հայապայացներ կան նաև դրսում, մանավանդ ԱՄՆ-ում, ընդ որում՝ ոչ թուրք: Խոսքը Օյա Բահինի մասին է: Օյա անունը հուշում է, որ նա կին է, իսկ Բահին ազգանունը՝ սաքայայականության, այսինքն՝ առերևույթ իսլամ ընդունած հրեական ծագման մասին:

Ըստ երևույթին այս խանումը Թուրքիայից տեղափոխվել է ԱՄՆ, քաղաքացիություն է ստացել, սակայն հայապայացությունից չի հրաժարվել: Օյա Բահինը թուրք չէ, բայց յուրացրել է թուրքական ազգայնամոլության բոլոր արարները: Կին է, բայց կանազի քնքշության փոխարեն ունի վարձու գրչակի հարկանիշներ: Ըստ երևույթին սրան բարձր են վարձապարում:

Համենայն դեպս Նյու Յորքի Turkishny.com կայքէջում հունիսի 27-ին հրապարակված Բահինի հոդվածը ամբողջացնում է ինչպես թուրքերի, այնպես էլ թուրքական ծառայությանն անցնելու պատճառով հայապայացությամբ փառապող և սիրահոժար հակահայ գործունեություն ծավալող ոչ թուրքերի մասին մեր պարկերացումները: Կրճարումներով ներկայացնում ենք Բահինի հոդվածը:

«Մինչ մոտենում են ամառային արձակուրդները, ԱՄՆ Կոնգրեսի հայկական և հունական ծագում ունեցող ներկայացուցիչներն ու մեզ քաջ հայտնի հակաթուրք կոնգրեսականները ԹՀ-ի դեմ ուղղված 4 անփառունակ օրինագծի անցկացման ջանքեր են գործադրում: Հայկական թիվ 304 օրինագիծը բաղկացած է 30 կետերից: Ունի 69 աջակցող, թիվ 306-ը առնչվում է ԹՀ-ի տարածքում գտնվող եկեղեցիներին ու քրիստոնյաներին, որի աջակիցների թիվը 32 է, իսկ թիվ 180-ը՝ հույն ուղղափառ պատրիարքին է վերաբերում: Դրա նպատակը Ստամբուլի հունական պատրիարքարանը տիեզերական դարձնելու միջոցով այս աթոռին ԹՀ-ում գործող օրենքներից վեր գործունեություն ապահովելն է: Աջակցողներից 63-ը դեմոկրատական են, իսկ 17-

ը՝ հանրապետական: Դեմոկրատները իզուր տանուլ չեն տվել 2010-ի ընտրություններում: Ամերիկյան ժողովուրդը զգվել է նման զագրակություններից: Այսինքն՝ օրինագծերը ամոթանքի աղբյուր են և միանգամայն անտեղի: Ըստ երևույթին Կոնգրեսում ոմանց որոշ օրգանները մեծ են ուղեղից... Ո՛ր են գնում մեր վճարած հարկերը: Ինչո՞ւ են մեր փողերը վատնում այս կարգի տխմարությունների համար:

Եկեք մտածենք, թե ինչու հունական և հայկական սփյուռքը հենց այս ամիսներին է ակտիվանում: Հուլիսը Թուրքիայի համար նշանավորվում է պատմական երկու կարևոր իրադարձություններով: 1974-ի հուլիսի 20-ին Կիպրոսում Թուրքիան վերջ տվեց հույների ահաբեկչությանն ու բռնություններին: 1923-ի հուլիսի 24-ին ստորգրված Լոզանի պայմանագրով Թուրքիան ի չիք դարձրեց Եվրոպայի ընչաքաղց, իսկ Ամերիկայի (Վիլսոնի) նեղմիտ ծրագրերը:

Թուրքական այս հաղթանակները դեռևս Եվրոպայում ու Ամերիկայում չեն մարսվել: Վերջին երկու տարիներին հուլիսի 20-ին մի խումբ թշվառ հույներ սկսել են հայտնվել մեր դեսպանատան առջև:

Մյուս պատճառն էլ Կոնգրեսի ուշադրությունը Եվրոպայի «հիվանդ մարդը» հանդիսացող Հունաստանից և Կովկասի սևանկացած պետության՝ Հայաստանից շեղելն է:

Մոտենում է 2015-ը: Հայերն անընդհատ կորուստներ են կրում: Լավ վիճակում չեն նաև հույները: Ֆինանսական ասպարեզում հույների շփացածությունը սկսել է ազդել Եվրոպայի և ԱՄՆ-ի գրպանների պարունակության վրա: Հիմա արդեն հույների նկատմամբ սերը վերածվել է հունական ալերգիայի:

Եթե դուք հայացք գցեք թիվ 304 օրինագծին, ապա պարունակած կեղծիքներից, զրպարտանքներից և ստերից կմնաք շփոթված: Տարեց տարի աճում է մահացածների թիվը և դա (նկատի ունի Հայոց ցեղասպանությունը), չգիտես ինչու, ներառում է նաև հանրապետական շրջանը:

Իրավիճակին ուշիուշով հետևում է Ամերիկայի թուրքական կազմակերպությունների համագումարը: Ի՞նչ պետք է անել:

1. Պետք է մտնել կայքէջ, որտեղ կա պատրաստի նամակ, մնում է դա ուղարկել ձեր նահանգից Ներկայացուցիչների պալատում ընտրված կոնգրեսականներին և երկու սենատորներին: Դա ընդամենը 1 րոպե է տևում:
2. Կայքէջ մտնել և հնարավոր միջոցներով մեծ կամ փոքր չափի օգնություն տրամադրել:
3. Ոչինչ չանել և հաշտվել վիրավորանքների, զրպարտանքների ու ստերի հետ:

Բարի արձակուրդ...»

ՄՏԱՄԲՈՒՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ԿՈՉՈՒՄ ԵՆ ԹՎԱԼԵԱԾ ՓԱՇԱՅԻ ԱՆՈՒՆՈՎ

Կամ մուտքին փակցնում են «Երանի նրան, ով իրեն թուրք է անվանում» մակագրությամբ ցուցաբերվող քարտեր

Վարչապետ Էրդողանի իսլամամետ «Արդարություն և բարգավաճում» կուսակցությունը ԹՀ-ում իշխանության է եկել դեռևս 2002թ. ին, առ այսօր շարունակում է միանձնյա իշխել: Անցած տարիներին այս կուսակցության կազմած կառավարությունները, որ հաջորդաբար գլխավորել է Ռեջեփ Թայիփ Էրդողանը, ձեռնամուխ են եղել երկրում կառուցվածքային փոփոխությունների իրականացմանը:

Դրանցից թերևս պետք է առանձնացնել երկրի քաղաքական կյանքում բանակի ավանդական դերի նվազեցումը, խոսքի ազատության հետ էթնիկ և կրոնական խմբավորումների իրավունքների ընդարձակումը, որոնց շրջանակներում ի հայտ են եկել բազմաթիվ հրապարակումներ ՀՅ-ի մասին, ճանաչվել է քրդերի գոյության և քրդական հարցի առկայության փաստը երկրում: Ավելին՝ Դերսիմի ապստամբության հետ կապված իրադարձությունները բնութագրվել են որպես «Դերսիմի կոտորածներ»:

Հատկապես 2005թ.-ին ԵՄ հետ անդամակցության բանակցությունների սկզբնավորումից հետո նկատելի դարձած այս երևույթները աննախադեպ են ինչպես թուրքական իրականության, այնպես էլ ԹՀ-ի պատմության մեջ: Աննախադեպ են նաև երկրի հայ, հույն, հրեա փոքրամասնություններից առգրավված համայնքային կալվածքները սեփականատերերին վերադարձնելու Էրդողանի կառավարության օգոստոսի վերջին արձակած օրենքի ուժ ունեցող հրամանագիրը:

Այլ կերպ, իսլամամետ «Արդարություն և բարգավաճում» կուսակցության իշխանություններն ու վարչապետ Էրդողանի կառավարությունը երկրում կառուցվածքային փոփոխություններ իրականացնելիս, պատճառներից անկախ, բարեհաճ են եղել Թուրքիայի ազգային փոքրամասնությունների, էթնիկ և կրոնական խմբավորումների հանդեպ, սակայն նախորդների համեմատ միայն: Այդ իսկ պատճառով էլ Էրդողանի կառավարության բոլոր ձեռնարկումները, որոնք էությանը դրական են, կիսատ են մնում, իսկ նախաձեռնություններն ընթացքից ձախողվում են:

Այդ պայմաններում միանգամայն տրամաբանական է, որ ազգային փոքրամասնությունների, էթնիկ և կրոնական խմբավորումների հետ կապված խնդիրները ոչ թե լուծում են գտնում, այլ ձգձգվում են: Դա հատկապես նկատելի է թուրքահայերի պարագայում, քանի որ նրանք տասնյակ տարիներ Թուրքիայում դիտարկվել են որպես ազգային անվտանգության սպառնալիք, թուրքական պետության հայկական դավադրության որոնումները հայերի նկատմամբ

թշնամանք է սերմանել հասարակության մեջ և պետական չդադարող հալածանքների հետևանքով հայատյացությունը դարձել է թուրքական իրականության առանձնահատկությունը:

Ինչպես երևում է, թուրք հասարակության մեջ հայերի նկատմամբ թշնամանքի, իսկ թուրքական իրականության մեջ հայատյացության արմատավորման պատճառը դարձած հալածանքները, չնայած երկրում իրականացվող կառուցվածքային փոփոխությունների, պահպանվում են Թուրքիայում, պարզապես դրանց ձևերն են փոխվում: Սա նշանակում է, որ հալածանքների հիմքում ընկած է պետական քաղաքականությունը, այլ ոչ թե՛ կառավարական: Ի դեպ, պետականը՝ որպես քաղաքականություն, ի տարբերություն կառավարականի, լինում է կայուն, իրականացվում է հետևողականորեն և չի կրում իշխանափոխության հնարավոր ազդեցությունը:

Ինչո՞վ է պայմանավորված հայերի հանդեպ թշնամանքն ու հայատյացությունը, որո՞նք են դրանց դրսևորումները Թուրքիայում: Այս հարցին, «Էվրենսել» թերթի հոկտեմբերի 5-ի համարում, պատասխանում է Մեհմեդ Աբգյուլը, հակիրճ, բայց բովանդակալից հողվածով: Նա գրում է, որ Շիշլիի հայկական վարժարանի մուտքին փակցված «Երանի նրան, ով իրեն թուրք է անվանում» մակագրությամբ ցուցատախտակը հալածական քաղաքականության դրսևորում է, ինչպես նաև հայ աշակերտներին ճնշելու հավելյալ լծակ: Ուսուցիչներն ու իրավաբանները, ըստ հեղինակի, դատապարտելով այս երևույթը, դա պայմանավորել են երկրում առկա ռասիզմի և խտրականության դսևորումներով:

Կրթական համակարգի աշխատողների միության նախագահ Ունսալ Յըլդըզը, պատասխանելով հողվածագրի հարցին, նշել է, որ երկրում ռասիզմը և խտրականությունը թուրքական կրթական համակարգն է խրախուսում, «Մեկ լեզու, մեկ ազգ և մեկ հայրենիք» կարգախոսով այս համակարգը բացահայտ միջամտում է աշակերտների ազգային ինքնագիտակցությանը:

Հողվածագիրը ցուցատախտակի առնչությամբ դիմել է նաև փաստաբան Էրդալ Դողանին: Ահա թե ինչ է ասել. «Դա այս հողերում 150 տարվա վաղեմություն ունեցող ռասիզմի և խտրականության հետևանքն է: Երկրում առ այսօր շարունակում են ՀՅ-ի կազմակերպիչների, հայկական կոտորածների մասնակիցների անուններով կոչել հայկական վարժարաններն ու հայերով բնակեցված փողոցները: Օրինակ, հայկական մի վարժարանի տալիս են Թալեաթ փաշայի անունը, իսկ հայերով բնակեցված թաղի պողոտան կոչում են «Էրզենեքուն»: Ցավոք, «Արդարություն և բարգավաճում» կուսակցության իշխանությունը ռասիստական այս մոտեցումն ու խտրականությունը վերացնելու ուղղությամբ ոչինչ չարեց»:

01.02.2012

«ԲՈՒՈՐՄ ՀԱՅ ՁԵՆՔ, ՓԱՆՔ ՏԻՐՈՋԸ, ՄԱՀՄԵՂԱԿԱՆ ԵՆՔ»

Այդ մասին, ինչպես հունվարի 29-ին կայքէջում նշել էր CNN-Turk-ը, հնչել է «Ժողովրդի ծայն» կուսակցության Անկարայի վարչության նիստում, որին մասնակցել է նաև Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը, հայտարարել է քաղաքական այս կազմակերպության նախագահ Նուման Քուրթուվմուշը:

Գյուլից հետո բարձրանալով ամբիոն, նա սկզբում անդրադարձել է այն 30 երիտասարդների խնդրին, որոնք Կեսարիայում իսրայելական կանանց բասկետբոլի թմի հետ թուրքականի հանդիպման ժամանակ «Կորչի Իսրայելը» վանկարկելու համար ձեռքակալվել էին: Ապա նրանց դեմ հարուցվել էր քրեական գործ, որը սակայն կարճել էր դատական նիստի նախագահը, պատճառաբանելով, թե այս կարգախուսը որևէ առնչություն չունի կրոնական և էթնիկ խտրականության հետ, իսկ «կորչի» արտահայտությունը՝ անարգանքի, քանի որ չքվել է նշանակում, ուստի անեծք պետք է համարվի:

Քուրթուվմուշը նախ արդարացրել է այս այլաոյաց թափափուկներին, ընդգծելով, որ նրանք ազատ են արձակվել կուսակցության իրավաբանների անմիջական միջամտությամբ և դրանով կանխվել է մի մեծ խայտառակություն: Այնուհետև նա ասել է. «Ֆուրքան Դողանը 19 տարեկան էր, երբ նահատակվեց «Մալի Մարմարա» նավի տախտակամածում: Կեսարիայի միջադեպը անարգանք էր նրա նրա նահատակությանը: Հնարավոր եղավ ժամանակին գործը կարճել և խուսափել խայտառակությունից»:

Այնուհետև «Ժողովրդի ծայն» կուսակցության նախագահն անդրադարձել է հանգուցյալ Հրանտ Դինքի գործին: Նա մասնավորապես ասել է. «Հրանտ դինքին սպանել են այն մուսուլմանները, որոնք մարդու ազատություններին դեմ են մեր երկրում: Այս մուսուլմանության բացահայտմանը նպաստելու համար պարտավոր ենք պաշտպան կանգնել տուժող կողմին: Սակայն որոշ չարանենգներ այն տպավորություն են ստեղծում, թե Դինքի գործը «Բոլորս հայ ենք» կարգախոսի պատճառով չի հետաքրքրում հավատացյալ զանգվածին: Բոլորս հայ չենք, փառք Տիրոջը, բոլորս մահմեդական ենք, այդ իսկ պատճառով էլ տեր ենք կանգնելու Հրանտ Դինքի գործին»:

11.02.2012

«Ի՞նչ ՎԱՏ ԱՐԵՑ, ՈՐ ՄՊԱՆԵՑ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻՆ»

Այդ մասին հունվար-փետրվար համարում գրել է Սամսուն քաղաքում հրատարակվող «Ստատուս քվո» հանդեսը՝ նկատի առնելով մարդասպան Օզյուն Սամասթին: Հրապարակման հեղինակը, ինչպես փետրվարի 7-ին նշել է CNN-Turk-ը,

վկայակոչելով DHA գործակալությանը, երկամյա այս հանդեսի խմբագիրներից Օքան Բաշն է, որի հոդվածը կրում է «Ի՞նչ են արել ձեզ ազգայնականները, պարոնայք» վերնագիրը:

Թուրքական իրականության մեջ հայատյացությունը հաճախ համադրվում է բռնության հանդեպ պաշտամունքի հետ և դառնում այդ իրականության տխուր առանձնահատկությունը: Խոսքը տվյալ պահին «Ստատուս քվո» կոչված Սամսունի տեղական հանդեսի մասին չէ: 2007-ի հունվարի 19-ին, երբ Հրանտ Դինքը սպանվեց, թուրքական իշխանություններն ու թուրք հասարակությունը կենտրոնական թերթերի մասնակցությամբ, փոխանակ քննարկելու թուրքահայ լրագրողի սպանության հանգամանքները, որ բացահայտմանը նպաստեն, քննարկեցին այն հարցը, թե հուղարկավորության մասնակիցները ինչո՞ւ «Մենք բոլորս հայ ենք» մակագրությամբ ցուցապաստառներ էին բարձրացրել:

Ավելին, օրեր, շաբաթ, ամիսներ շարունակ թուրք ֆուտբոլասերները մարզադաշտերում ինքնամոռաց վանկարկում էին. «Մենք բոլորս Օզյուն Սամասթ ենք», արտահայտելու համար իրենց անզուսպ սերը, համակրանքն ու նախանձով համեմված անկեղծ երախտագիտությունը վարձու մարդասպանին:

Այլ կերպ, Սամսունում հրատարակվող տեղական հանդեսի և դրա խմբագրի հոգատարությունը «հայկական ծագումով» ԹՀ քաղաքացի Հրանտ Դինքին սպանած մարդասպանի նկատմամբ ամենևին էլ զարմանալի չէ: Ի վերջո, շատ ժողովրդավարական ԹՀ-ն տառապում է «խոսքի ազատության» սկզբունքները պաշտպանելու մոլուցքով, հատկապես, երբ խոսքը հայի սպանությանն է վերաբերում, որքան էլ Թուրքիայում քաղբանտարկյալների թիվը հասնի ավելի քան 12.000-ի, որը կազմում է աշխարհի 35.000 քաղբանտարկյալի շուրջ 29%-ը: Ի դեպ այդ ցուցանիշը կոմունիստական Չինաստանում 7%-ի է հասնում:

Բայց դա Թուրքիայի խնդիրն է, թուրք ժողովրդի, ինչպես նաև սրանց ջերմ բարեկամների: Ինչ վերաբերում է «Ստատուս քվո» հանդեսի խմբագիր Օքան Բաշին, ապա նա ակնարկելով Օզյուն Սամասթի մասին, գրում է. «Ո՞րն է այս հակակրանքի պատճառը: Ի՞նչ նկատառումով այսպիսի անխիղճ վերաբերմունք է դրսևորվում այն քաղաքացիների նկատմամբ, որոնք ջանում են պաշտպանել թուրքական պետության ազգային և հոգևոր արժեքները: Ինչպես հայտնի է, Օզյուն Սամասթ անունով մի ամուր երիտասարդ «թուրքի արյան կեղտոտության» մասին ակնարկող Հրանտ կոչված փոխարին սպանելու համար ծանրազույն դատապարժի ենթարկվեց: Մի՞թե վատ էր արել: Կարծում եմ՝ մեր ազգին հիմնովին անարգող այդ մարդը արժանի էր սպանության:

Եթե պետությունը չի կատարում իր պարտականությունը, ավելին աչք է փակում այն օտարի դեմ, որը կեղտոտ էր համարել թուրքի արյունը, և հայերին սիրաշահելու համար օրը ցերեկով ուրնահարում է ազգայնականության սկզբունքը, թող ոչ ոք չնեղանա, բայց այդ դեպքում արդեն ասպարեզ է իջնում ազգը: Հեղափոխար այդ երկրասարդին դատապարտելն ավելորդ էր:

Չեմ հասկանում նաև թուրքական ծագումով քաղաքացիներին, որոնք «Բոլորս հայ ենք» երգելով, որպես սադրիչ փողոց էին իջել, որ համերգ փան:

Ո՛վ ընկեր, մենք պարմության մեջ միտնավոր նահապակ ենք փվել: Առ այսօր հայկական ծագումով քանի՞ քաղաքացի «Բոլորս թուրք ենք» կարգախոսով փողոց դուրս եկավ: Գոնե մեկին տեսել էք: Եթե շարունակելու եք «Մենք բոլորս հայ ենք» ասելով դիմել ստորանքի, հավանաբար Հայաստանի տերը գիտեք, ելեք, գնացե՛ք այնտեղ: Մի՛ մոռացեք, որ այստեղ Թուրքիա է, և իմացեք ձեր չափը:

03.03.2012

ԹՈՒՐԿԻԱՆ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԸ ՄԵՎ ԱԶԳԻ ԵՐԿՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ

Նրանց միավորում է հայապայացությունը, իսկ միևնույն «ազգի» երկու հարվածներին՝ բռնության պաշտամունքն ու միջնադարյան վայրագությունը: Մարտի 1-ին Ադրբեջանի հյուսիսում մեծապես ազգային փոքրամասնություններով բնակեցված Գուբայում բնակչությունը ընդվզել էր իշխանությունների դեմ: Տեղի էին ունեցել իրավապահ մարմինների հետ խռովարարների ընդհարումներ: «Դավաճան» անվանելու միջոցով տեղացի բնակչությանը վիրավորելու համար, վերջիններս այրել էին Գուբայի գործադիր իշխանության ղեկավար Ռաուֆ Հաբիբովի առանձնատունը:

Թուրքական «Դունյա բուլթեն» լրատվական գործակալությունը նույն օրն անդրադարձել էր Գուբայի իրադարձություններին, «Ադրբեջանում ապստամբություն, բնակչությունն այրեց քաղաքապետի տունը» վերնագրով և տեղեկացրել էր, որ կան ձերբակալվածներ, քաղաքում իրավիճակը հնարավոր եղավ վերահսկել ոստիկանության և բանակի համատեղ ջանքերով:

Հաջորդ օրը թուրքական գործակալությունը տեղեկացրեց Ադրբեջանում հոգևորականների շարունակվող ձերբակալությունների մասին, նշեց, որ վերջին օրը ձերբակալվել է 23 հոգևոր առաջնորդ, ընդ որում՝ զենք կրելու և թմրանյութեր ունենալու պատճառաբանությամբ: Ձերբակալվածներից տասը Նար Դարան գյուղաքաղաքից էր, որոնց դեմ քրեական գործ է հարուցվել «հայրենիքի դավաճանության» հոդվածով:

Մինչ «Մուսաֆաթ» կուսակցության նախագահ Իսա Ղամբարը, Ադրբեջանի դեմոկրատական կուսակցության նախագահ Սարդար Ջալալօղլին, Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության փոխնախագահ Ֆուադ Ղահրամանլին, «Ումուդ» կուսակցության նախագահ Իգբալ Ազազադեն և Մարդու իրավունքների միության ակտիվիստները բռնատիրության դրսևորումների համար քննադատում էին երկրի իշխանություններին, մասնավորապես նախագահին, Ազգային անվտանգության և ներքին գործերի նախարարություններին, թուրքական հանրային հեռուստատեսության 2-րդ ալիքի հարցերին պատասխանեց Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը:

Թուրքական հանրայինի եթերում մարտի 1-ի երեկոյան հեռարձակված հարցազրույցի տպագիր տարբերակը հեռուստատեսության պաշտոնական կայքէջում տեղադրվել է լուրջ սրբագրումներից հետո: Մինչդեռ Իլհամը թուրքական հեռուստատեսությամբ Հայաստանն անվանում էր ֆաշիստական պետություն, հայերին՝ ֆաշիստ, գովերգում էր այլ ժողովուրդների նկատմամբ ադրբեջանցի հրոսակի և Ադրբեջանում տիրող հանդուրժողականությունը, Լեոնային Ղարաբաղի հետ պատմականորեն ադրբեջանական հող էր անվանում նաև Ջանգեզուրը, Երևանը և ՀՀ գրեթե ողջ տարածքը, իսկ Խոջալուն՝ պատմության մեջ դաժանությամբ աննախադեպ ցեղասպանություն և հայտարարում. «Ադրբեջանը բազմազգ պետություն է, բոլորն իրավահավասար են, աշխարհում միայն Հայաստանում է, որ այլ ժողովուրդներ չեն ապրում, որովհետև հայերն այլազգիների նկատմամբ, ի տարբերություն ադրբեջանցիների, անհանդուրժող են, չեն թողնում ապրել իրենց երկրում»:

Ադրբեջանական հանդուրժողականության վառ դրսևորումը Սում-գայիթի, Կիրովաբադի, Բաքվի ջարդերն են և այդ ջարդերի միջնադարյան վարյագությամբ իրագործումը, ինչպես նաև Գուբայում կամ Նար Դարայում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին «ծախու դավաճաններ» անվանելը, ելնելով էթնիկ պատկանելությունից՝ նրանց նկատմամբ իրականացվող ձերբակալությունները:

Գալով պատմականորեն ադրբեջանական համարվող տարածքներին, Իլհամին պետք է հայտնի լինի, որ մինչև 20-րդ դարի 30-ական թվականներին ադրբեջանցի հրոսակին, ինչպես Արևմուտքում, այնպես էլ Ռուսաստանում անվանել են Կովկասի թաթար: Նախքան պատմական հող ունենալը, նախ պատմություն պետք է ունենալ: Իսկ պատմությունը յուրահատուկ է մարդկանց պատմականորեն կազմավորված սոցիալ-էթնիկ ընդհանրության ժողովրդին:

Մինչդեռ ադրբեջանցին հայ սպանելու համար ազգային հերոս հռչակելով մարդասպան ստահակին, ցույց է տվել, որ ինքը ժողովուրդ չէ, այլ բորենիների ոհմակ, ուստի չի կարող պատմություն ունե-

նալ: Այս ոհմակը, որ Կովկասի թաթար էր կոչվում, «ադրբեջանցի- էթնոնիմն էլ չէր ունենա, եթե չլիներ Խորհրդային Միությունը:

Իլիամը չի կարող չիմանալ այս պարզ և հանրահայտ ճշմարտությունը: Հակված չենք կարծելու, թե իրեն չիմացող տեղն է, դնում: Նա պարզապես թուրքական հանրային հեռուստատեսության հարցերին պատասխանելիս, հայատյացությունից անմասն չմնալու համար ձայնակցում է Ստամբուլի «Թաքսիմ» հրապարակում թուրքական կառավարության կազմակերպած և հայատյացության պողթյակման վերածված Խոջալուի «կոտորածի» ոգեկոչման հանրահավաքում հային լկտիաբար վիժվածք անվանող իր հրոսակաբարո ավագ եղբայրներին, ինչպես նաև ընդգծում է «Մեկ ազգ, երկու պետություն» ասույթի հակահայկական ուղղվածությունը:

Հատկանշական է, որ Ստամբուլի հանրահավաքում էլ այդ ընդգծումն արել էր Թուրքիայի ՆԳ նախարար Իգրիս Նահմ Շահեր, ասելով. «Թուրք ազգը ո՛չ Ղազախստանում, ո՛չ Թուրքիայում, ո՛չ Բալկաններում, ո՛չ էլ աշխարհի որևէ այլ վայրում մարդկայնության դեմ որևէ հանցագործություն չի գործել: 20-րդ դարը լինելու է թուրքերի դարաշրջան: 20 տարի առաջ այս օրը արյունարբու մարդասպանները, փոքրահոգի վախկոտները 613 մարդու արյուն են թափել: Այդ արյունն առ այսօր գետնին չի մնացել և չի մնալու: Քանի դեռ ազգը գոյատևում է, հետամուտ է լինելու այդ արյան վրեժին և հաշիվ է պահանջելու: Թուրք ազգը աշխարհում՝ որպես արդարության խորհրդանիշ, միշտ պահպանել է իր ուժը, ուժեղ է եղել, իսկ այդ ուժի կենարար աղբյուրը միասնությունն է»:

Եթե Թուրքիայի ՆԳ նախարար Շահինի այս խոսքերը որևէ կապ ունեն Խոջալուի հետ, ապա Թուրքիան և Ադրբեջանը հիրավի մեկ ազգի երկու պետություններն են, բայց հայատյացության պարագայում միայն: Այսինքն՝ սրանց հայատյացությունն է միավորում, իսկ մեկ ազգի երկու հատվածներին՝ բռնության նկատմամբ պաշտամունքն ու միջնադարյան վայրագությունը:

28.06.2011

ԹՈՒՐԿԻԱՅՈՒՆՎԵՐՍԻՏԻ ԱՄԳԱՐԵՋ Է ԻՋԵԼ «ԹՈՒՐԿ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ ԲՐԵՊԱՐԷ»

Հայերի հետ սպառնալիքի թիրախ են դառնում քրդերն ու առաջադեմ թուրք մրավորականները

Օրերս Ստամբուլում հրատարակվող «Էվրենսել» օրաթերթը, ինչպես թուրքական «Bianet.org» կայքն է նշում, «Թուրք վրիժառուների բրիգադ» ստորագրությամբ ստացել է բաց նամակ, որտեղ հայերից, քրդերից և մի շարք թուրք մտավորականներից պահանջվում է մինչև

օգոստոսի 15-ը Թուրքիան լքել, այլապես Դիարբեքիրում և Ստամբուլում կիրագործվեն արյունահեղ գործողություններ:

Նամակում ներկայացված է վեց պահանջ, որը շարադրվում է կարճ նախաբանով. «Ձեր «Էվրենսել» թերթը հրապարակումներով մշտապես նսեմացնում է թուրքերին և թուրքական մեծ պետությանը, թերևս դրանով էլ կրկնապատկում մինչ այդ թուրք տված սխալները: Դա մեզ տալիս է հակահարվածի իրավունք, որը մենք կօգտագործենք»:

Նախաբանին հետևում են հետևյալ պահանջները:

1. Մինչև օգոստոսի 15-ը դուք («Էվրենսելի» խմբագրությունը) և նրանք, ովքեր գործակցում են ձեզ հետ, պետք է հեռանաք Թուրքիայից և այդ մասին հաղորդագրություն տարածեք մամուլում:

2. Մինչև սահմանված ժամկետը Թուրքիայի տարածքը պետք է լքեն PKK-ի բոլոր համակիրներն ու գրոհայինները, անկախ պատգամավոր ընտրվելու հանգամանքից:

3. Առանց որևէ պահանջի և վերադարձի իրավունքի Թուրքիան պետք է լքեն նաև հայերը՝ համակիրների հետ:

4. Պետք է փակվեն «Ակոս» թերթն ու մամուլի այն օրգանները, որոնք համագործակցում են այս թերթի հետ, բոլորը՝ ողջ աշխատակազմով, պետք է հեռանան Թուրքիայից:

5. Երկրում փակվելու են «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցության բոլոր գրասենյակները, պայմանով, որ անդամներն ու համակիրները հեռանան Թուրքիայից:

6. Բասքըն Օրանը, Սեբահաթ Թունջելը, Օսման Բայդեմիրը, Ահմեդ Թուրքը (այս երեքը՝ «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցության ղեկավարներից են), Էթեմ Մահճուլայանն ու մյուսները մինչև նշված վերջնաժամկետը՝ առանց վերադարձի իրավունքի, պետք է լքեն Թուրքիայի տարածքը:

Նամակը վերջանում է հետևյալ տողերով. «Մինչև օգոստոսի 15-ը վերոհիշյալ պահանջների չկատարման դեպքում մենք PKK-ի առաջին զինյալ գործողության իրականացման օրվա (15 օգոստոսի, 1984թ.) տարեկիցին մեծապես քրդական տարրերով բնակեցված Դիարբեքիրում կիրականացնենք գործողություններ և ծանր կորուստներ կպատճառենք թշնամուն: Այդ գործողությունը նույն օրը կիրականացվի Ստամբուլի հայապատկան հիմնարկներում, որպեսզի չեզոքացվեն թշնամական տարրերը... «Թուրք վրիժառուների բրիգադի» անունից վերջին անգամ զգուշացնում ենք մտավորականի քրդի տակ պատասպարվող հայրենիքի դավաճաններին, որ մեր պայքարը կշարունակվի՝ ընդհուպ թուրք ազգի թշնամիներին վերացնելը»:

Որքան էլ «Թուրք վրիժառուների բրիգադը» սպառնա, հազիվ թե քրդաբնակ Դիարբեքիրում Քրդստանի աշխատավորական կուսակցության՝ PKK-ի կամ քրդերի դեմ ի վիճակի լինի ահաբեկչական

գործողություններ իրականացնել: Կարծում ենք, իրականացնելու դեպքում չարաչար կսխալվի՝ ստանալով արժանի հակահարված:

Խնդիրը սակայն սպառնալիքը չէ, այլ Թուրքիայում «Թուրք վրիժառուների բրիգադ» կոչվող այս ոհմակի անարգել գործունեությունն այն դեպքում, երբ երկրում բացահայտվել և դատաստանի առջև են կանգնել «խորհրդային պետության» հարվածող ուժ՝ «Էրզենեքոն» ահաբեկչական կազմակերպության ղեկավար կազմի անդամները:

Տարօրինակ է նաև կառույցի գրավոր սպառնալիքի հանդեպ դատախազության և հատկապես թուրքական անվտանգության ուժերի ահաբեկչության դեմ պայքարի վարչության հանդուրժողականությունն ու անտարբերությունը: Սա նշանակում է, որ «Էրզենեքոնի» գործով չեզոքացվել են «խորհրդային պետության» համար արդեն խոչընդոտ դարձած գործիչները միայն: Նրանց թվում բարձրաստիճան գինվորականների՝ գեներալների, ընդհուպ բանակի առկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ ահաբեկչական այս կառույցն անմիջականորեն ենթակա է եղել թուրքական ԶՈւ ԳՇ-ին, որն էլ, ըստ ամենայնի, հանդիսանում է «Էրզենեքոնի» գործի բացահայտման նախաձեռնողը, այլապես չէր վերահսկի դատավարության ընթացքը:

«Խորքային պետության» կառույցներից պետք է համարվի նաև «Թուրք վրիժառուների բրիգադը»: Եթե Թուրքիայում այս բրիգադը կարողանում է անկաշկանդ գործել, ուստի պետք է գործունեությունը շարունակի նաև «խորքային պետությունը» պարզապես առանց «Էրզենեքոնի»:

Համենայն դեպս, այս բրիգադը բավականին առեղծվածային կառույց է: Առ այսօր հայտնի չեն կառույցի հիմնադիրները, հիմնադրման ստույգ տարեթիվը, առաջնորդը և կառուցվածքային համակարգը: Պարզապես ենթադրվում է, որ «Թուրք վրիժառուների բրիգադը» կազմավորված պետք է լինի 1969-ին՝ Ստամբուլում: Թերևս հիմնադրման վայրն է հայտնի: Դա Ստամբուլի թաղամասերից Էդիրնեքափույում գտնվող պետական համալսարանին առընթեր հանրակացարանն է: Գերմանական հետախուզությունը «Թուրք վրիժառուների բրիգադին» համարում է «քաղաքական նպատակներ չհետապնդող հանցագործ խումբ, որի անդամներն ունեն կրթական շատ ցածր մակարդակ»: Իսկ Ստամբուլի անվտանգության ուժերի վարչության հետախուզական բաժնի նախկին վարիչ Բյուլենթ Օրաքոյուն ավելացնում է. «Ազգայնական կառույց է, բայց դրսից է ուղղորդվում»:

08.12.2011

«ՎԱՍԵՆԱՄ՝ ԷՐԴՈՂԱՆԸ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴԻՒ ՆԱԵՎ ՀԱՅԵՐԻԹ, ՀԵՆՑ ԴԱ Է ԴԵՐՄԻՄԻ ԱՌՆՉՈՒԹՅԱԲ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴԻՆԵՆԻ ԲՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ»

Հայկական դավադրության որոնումները թուրքական իրականության անբուժելի հիվանդությունն են: Դրանով տառապում են ինչպես իշխանությունները, այնպես էլ հասարակական-քաղաքական շրջանակները, ներառյալ ժողովրդական զանգվածները: Դա պատահական չէ, այլ պայմանավորված է հանցագործի այն հոգեբանությամբ, որով հավասարապես տառապում են թուրքական իշխանություններն ու հասարակությունը, որովհետև իշխանությունների կազմակերպած ՀՅ-ին սիրահոժար մասնակցել են ժողովրդական ընչաքաղց զանգվածները:

Ընց այդ մասնակցությամբ է բացատրվում ցեղասպանության ժխտողականության հարցում դրսևորվող իշխանություն-հասարակություն համերաշխությունը Թուրքիայում: Թուրքական իրականության մեջ հայկական դավադրության որոնումներն ունենում են տարբեր դրսևորումներ, սակայն անկախ տարբերությունից, դրանք վառ պահելով հայերի և Հայաստանի նկատմամբ շարքային թուրքի ենթագիտակցության մեջ արմատավորված ատելությունն ու թշնամանքը, երկրում հայատյացության ծավալման պատճառ են դառնում:

Հատկանշական է, որ Թուրքիայում հայատյացության ծավալումն էլ իբրև առաջադրանք ընդհանուր է «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ «Ազգայնական շարժում» կուսակցության հրոսակների ու թուրքական գաղտնի ծառայությունների ուղղորդած ձախակողմյան ստահակների համար: Մինչդեռ այս հրոսակներն ու ստահակները միշտ էլ եղել են ռիսերիմ թշնամիներ: 70-ականներին նրանք Թուրքիան դարձրել էին արյունահեղ բախումների թատերաբեմ, օրական փոխադարձաբար սպանելով մինչև 20 մարդ:

Համենայն դեպս, 1937-38թթ. Դերսիմի իրադարձությունների քննարկումները հայկական դավադրության որոնումների դրսևորման նոր առիթ հանդիսացան թուրքական շրջանակների համար: Քննարկումների հիմքը դեռևս 2009-ին դրել էր վարչապետ Էդդողանը, բնութագրելով թուրքական պատմագրության մեջ որպես ապստամբություն հիշատակվող իրադարձությունները Դերսիմի կոտորած:

Մինչ Թուրքիայում ծավալվում էին Դերսիմի իրադարձությունների քննարկումները, որոնց հետևանքով 1935-ին Թունջելի վերանվանված Դերսիմում սպանվել է 50.000 մարդ, բնակիչները աքսորվել, այսինքն տեղահանության են ենթարկվել, էլ չենք խոսում անհետ կորածների և այն հազարավոր երեխաների մասին, որոնց, ծնողազրկելուց հետո, որբանոցներ կամ թուրք ընտանիքներին հանձնելու միջոցով թուրքացրել էին:

Այլ կերպ, 1937-38-ին Դերսիմում շրջանառության մեջ էր դրվել ցեղասպանության մեկ այլ տարբերակ, անհամեմատ փոքր չափերով, որովհետև ժամանակակից Թուրքիայի հիմնադիր քեմալականները ազգային փոքրամասնությունների, էթնիկ և կրոնական

խմբավորումների հետ պետության հարաբերություններում ելակետ են ընդունել Հայկական հարցը հայ ժողովրդի բնաջնջմանը կարգավորելու երիտթուրքական սկզբունքը:

Ակնհայտ է, որ ՀՅ-ն ժխտող տրամաբանությունը պիտի ժխտեր նաև Դերսիմի կոտորածները, իսկ դրանց նմանությունը պետք է դրսևորման նոր առիթ հանդիսանար հայկական դավադրության որոնումների համար: Այդ առումով հատկանշական է Այի Ադամիասանի դեկտեմբերի 5-ին adanamedya.com հայքէջում հրապարակված հոդվածը: Դա քաղել ենք Ստամբուլի «Հայթերթից» ներկայացնում ենք հատվածաբար:

Ահա թե ինչ է գրել. «Իրադարձությունները պետք է գնահատել ելենլով տվյալ ժամանակի պայմաններից: Պարմական իրադարձությունը մեր օրերի չափանիշներով գնահատելու դեպքում դա նկրտում է ունենում: Նրանք, ովքեր առերեսման քողի տակ ձգտում են հաշիվ մաքրել մեր նախնիների հետ, շուտ տալով պարմական ճշմարտությունները, Դերսիմի հարցը մարցրին օրակարգ: Գորբալ սադրիչները Նոբելյան մրցանակով էին պարգևատրել Օրհան Փամուքին, որ հայերի ցեղասպանության մասին հայտարարություն էր արել: Տեսնում ենք, որ հերթի են կանգնում նրանք, ովքեր Դերսիմի հարցը փորփրելու շնորհիվ Նոբելյան մրցանակի են ձգտում:

Ո՞րն էր Դերսիմի հարցում պետության անունից ներողություն խնդրելու իմաստը: Մանավանդ որ դա արվել է ոչ թե նախազահականում կամ վարչապետարանում, այլ «Արդարություն և բարգավաճում» կուսակցության համաժողովում: 16-րդ դարից ի վեր ինքնիշխանություն էր Դերսիմում, պետությանը հարկեր չէին մուծում, զինձառայությունից խուսափում էին: Այսինքն՝ դեռևս օսմանյան շրջանում փորձ էր արվում վերահսկողություն սահմանել այնտեղ, բայց ապարդյուն: Վերջապես երկրում հաստատվեցին հանրապետական կարգեր, սակայն դերսիմցիները զինվելով՝ ըմբոստացան Թուրքիայի Հանրապետության դեմ: Յուրապեսակ պետություն էին դարձել պետության մեջ: Ո՞ր պետությունը կհանդուրժի 15.000 զինյալի ապստամբությունը: Տրամաբանական էր, որ այս ապստամբությունը Քեմալ Աթաթուրքի, վարչապետ Զելալ Բայարի և մարշալ Ֆեզի Չաքմաքի ձեռնարկումներով ճնշվեր: Երբ ճնշվում է պետության դեմ բարձրացված ապստամբությունը, ինչ կարևոր է, թե քանի մարդ է մեռնում: Երբ դուք կտրորածի մեջ եք մեղադրում նրանց, ովքեր ճնշել են Դերսիմի ապստամբությունը, ապա ինչո՞վ եք բացատրելու PKK-ի որջերի մերօրյա ոմբակոծությունն ու PKK-ականների սպանությունները:

Օսմանյան կայսրությունը փլուզվելիս, երբ մեծ տերությունները զավթում էին մեր երկիրը, չեզոքացվեցին թշնամիների հետ թուրք զինվորներին սպանող հայերը: Հեղափոխական է, «Արդարություն և

բարգավաճում» կուսակցության առաջնորդը (նկատի ունի էրդողանին) հայերից էլ ներողություն կխնդրի՞ թե՞ ոչ:

Վախենամ, որ նա ներողություն խնդրի նաև հայերից: Ի վերջո, ինքն է հանդես եկել հայկական նախաձեռնությամբ: Կարծում են, Դերսիմի առնչությամբ ներողություն խնդրելը նպատակ է հետապնդում դա հանգեցնել նաև Հայկական հարցին: Դերսիմի հայերի միության նախագահ Միհրան Փրկիչը Հայաստանում հայտարարել է. «Դերսիմի գյուղերում բնակչության 75%-ը հայեր են: Ընտրի՞վ «Արդարություն և բարգավաճում» կուսակցության, մենք՝ հայկական ծագումով քաղաքացիներս, կարողանում ենք արտահայտել մեր ինքնությունն ու հայկական եկեղեցի գնալ: Օսմանյան կայսրությունում իթթիհապական սկզբունքների արածումից հետո դերսիմցի հայերը դարձան ալավիներ: Երբ օսմանյան բանակները ներխուժեցին Դերսիմ՝ ոչնչացնելու հայերին, հայերը ապաստանեցին ալավի աշիրայթներին...»:

Ժամանակին այս հացն արծարծել էր Թուրքական պարմական ընկերության նախկին նախագահ Հալաջօղլուն: Նա զեկուցագիր էր ներկայացրել կառավարությանը, որտեղ բացատրում էր, որ PKK-ն մեր քրդական ծագումով քաղաքացիները չեն կազմավորել, այլ՝ քրդացած հայերը: Այս զեկուցագրից հետո նրան իսկույն ազատել էին պաշտոնից: Առ այսօր Դերսիմում մահացածների աճյունը թեև վերցնում են ալավիական աղոթարանից, սակայն նրանց թաղում են հայկական գերեզմանոցում: Գիտենք, որ նման կերպ են վարվել Քըլլըքարօղլուի (ժողովրդա-հանրապետական կուսակցության նախագահ) ազգականների հետ: Միաժամանակ հայրնի են նրանք, ովքեր ալավի են ձևանում, բայց մի կողմ թողած ալավիների ավանդույթները, գաղտնի հետամուտ են լինում հայկական մշակույթին ու դավանանքին:

Մի՞թե չեն զգում նրանք, ովքեր հանուն առերեսման փորփրելով անցյալի իրադարձությունները, արելությունն ու թշնամանք են սերմանում հասարակության մեջ: Խնդիրը ալավիները չեն, այլ երկրի սուննի առաջնորդները, որոնք ուզում են հաշիվ մաքրել մեր նախնիների հետ այն ժամանակ, երբ ալավի քաղաքացիները միահամուռ ձգտում են մոռանալ անցյալի դեպքերը»:

03.05.2012

«ԽՆԴՃԻ ՏԵՐ ՈՉ ՄԻ ՀԱՅ ՉԻ ԿԱՐՈՂ ԺԻՏԵԼ ԹՈՒՄԲԵՐԻ ԿՐԱԾ ՏԱՌԱՊԱՆՔԸ»

Հորդորում է Լաչիները՝ կարծելով, թե խիղճ ունենալու ցուցանիշը այլ ժողովրդին հրապարակավ վիժվածք անվանելն է

Նախագահ Օբամայի ապրիլի 24-ի ելույթի առթիվ Թուրքիայի ԱԳ նախարար Դավիթօղլուի խոսքերին՝ «Ապրիլի 23-ը կամ 24-ը, ինչ տարբերություն մեզ համար», տեղեկացել էինք «Ռադիկալի»

միջոցով: Այդ հարցը նրան ուղղել էին հենց ապրիլի 24-ին: Նույն օրը միևնույն հարցին Չանաքքալեում պատասխանել է նաև նախագահ Գյուլը, ինչի մասին էլ, ի դեմս Սեդաթ Լաչիների, մայիսի 1-ին տեղեկացնում է «Սամանյուլուհաբերը»:

Ահա թե ինչ է գրում այս հեռուստատեսության կայքէջում Լաչիները «Հավանաբար «արաբական գարնան» և տնտեսական ճգնաժամի պատճառով այս տարվա ապրիլի 24-ը մեղմ անցավ: Սակայն այս տարի հայկական հարցի առնչությամբ ամենախորհիմաստ ելույթը Չանաքքալե այցելության ընթացքում ունեցավ նախագահ Գյուլը: Մի հարցի առնչությամբ նա 1915-ի իրադարձություններին անդրադառնալիս ասաց, որ դրանք «համատեղ վիշտ» են, և ավելացրեց. «Վիշտը ոչ մեկին երջանկություն չի պարգևի: Իմ կարծիքով, ճիշտ չէ պատմությունը դարձնել թշնամության միջոց: Վիշտը մեր բոլորին է և բոլորիս համար ընդհանուր: Եթե դրանք նոր սերունդներին փոխանցվեն որպես թշնամանքի, վրեժխնդրության միջոց, ապա դա վերջ չի ունենա»:

Մեկ օր անց «Գյոքչեադա» լաստանավում ես նորից Գյուլի հետ էի: Նավարկության ողջ ընթացքում նա անդրադառնում էր «համատեղ վշտին», հետո ասաց, որ գլխավոր խնդիրը «արտահայտման ոճի փոփոխությունն» է, ու շարունակեց. «Իհարկե, կարևոր է, թե ով է արդարը, ով՝ ոչ, սակայն ավելի կարևոր է արտահայտման ոճի փոխադարձ փոփոխությունն ու փոխըմբռնումը»:

Եթե մենք լուծում ենք գտնելու այս հարցերին, ապա դրանք չենք կարող փոխադարձ վիրավորանքներով, ստորագնելով, գոռու-գոչյունով հասնել: Դա ակնհայտ է: Երկու կողմերն էլ մխիթարանքի, ըմբռնման կարիքն ունեն: Թուրքերը պարտավոր են հասկանալ, որ ավելի քան մեկ միլիոն հայ, անկախ պատճառներից, արմատախիլ է արվել հայրենի հողից, որտեղ գոյատևում էր հարյուրավոր տարիներ: Համապատասխանաբար, հայերն էլ պետք է հրաժարվեն տուժող միակ կողմ ձևանալուց և տեսնեն այն մեծ վիշտը, որն անցյալ դարի սկզբներին կրել են թուրքերը: Թուրքերը կործանվող կայսրության փլատակների տակ մնացին: Իսլամի տեր որևէ հայ չի կարող ժխտել 19-րդ դարի վերջերից մինչև 1923 թիվը թուրքերի կրած տառապանքը: Հատկապես այն դեպքում, եթե այդ տառապանքը մասամբ պատճառել են հայկական զինյալ որոշ խմբավորումներ»:

Որքան էլ Լաչիների խոսքերը մեկնաբանության կարիք չունենան, այնուամենայնիվ հարց է ծագում՝ ո՞րն է դրանց նպատակը: Այս հարցին ապրիլի 13-ին Turkishny.com կայքէջում պատասխանել էր տխրահոջակ Դեհր Ֆիլիպսը: Նա ասել է. «Եթե Թուրքիան առանց ցեղասպանություն բառն արտասանելու ներողություն խնդրեր հայերից, ինչպես Դերսիմի պարագայում քրդերից խնդրեց Էրդողանը, կարծում եմ՝ հաշտության համար նոր դռներ կբացվեն»:

Այդ ընթացքում մենք «Ազգի» ապրիլի 20-ի համարում ավելացրել էինք, որ նմանօրինակ ներողության դեպքում ոչ թե կհաշտվեն երկու ժողովուրդները, այլ միջազգային օրակարգից դուրս կմղվի ՀՅ-ի ճանաչման հարցը, համարելով, ի դեպ, Ֆիլիպսին, իր մոր ամենախելացի զավակը:

26.08.2012

ԵՐԲ ԽՈՍՒՐԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՀԱՅԵՐԻՆ, ԹՈՒՐԿԻ ԳՈՐԾԻՉԸ ՉԻ
ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԽՈՒԺԱՆԻՑ

Այդպիսին է վարչապետ Էրդողանի իշխող կուսակցության Էրզրումի պարզամավորը

Հայկական դավադրության որոնումները սովորույթ են դարձել մարդասպան թուրք հրոսակի համար, այդ իսկ պատճառով էլ հրոսակը հայաստանի պատմության անզուսպ մոլուցքով է դրսևորում իր փառապանծ ազգի շատ ավանդական լայնախոհ հանդուրժողականությունը մյուս ժողովուրդների նկատմամբ: Թուրքական իրականության մեջ հայաստանացույթամբ տառապում են հասարակության անխտիր բոլոր խավերը, և այդ առումով ուսուցիչները, գիտնականները, արվեստագետները, իրավաբանները, գործարարներն ու պետական պաշտոնյաները ոչնչով չեն տարբերվում փողոցային թուրք խուժանից:

Հայկական դավադրության որոնումների պարագայում պաշտոնյաների, գործարարների և մտավորականների հետ խուժանին են միանում նաև թուրք պետական և կուսակցական գործիչները: Նրանցից թերևս պետք է առանձնացնել վարչապետ Էրդողանի «Արդարություն և բարգավաճում» կուսակցության Էրզրումի պատգամավոր Մուհյեթթին Աքսաքին:

Ի դեպ, այս տարի՝ փետրվարի 26-ին Ստամբուլում «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» մակագրությամբ պաստառներով հանրահավաքի դուրս եկած հարյուրհազարանոց թուրք-աղբբեջանական վիժվածքների ոհմակի առջև ելույթ էր ունեցել Աքսաքի կուսակից, ՆԳ նախարար Իդրիս Նաին Շահինը: Հայկական դավադրության որոնումներում Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավոր Աքսաքը նախարար Շահինի հայատյաց ելույթի ազդեցությամբ՝ տակ է եղել, թե՛ որոնումներն արդյունք են ՔԿԻ-ի դեմ թուրքական ՁՈւ-ի ձեռնարկած լայնամասշտաբ գործողությունների՝ Թուրքիայի համար ավելի քան անբարենպաստ ընթացքի, չգիտենք: Բայց որ թուրք օրենսդիրն այդ որոնումներում հայտնվել է Էրզրումում, սպանված ՔԿԻ-ականի համար «չեզոքացվածի» փոխարեն «շանսատակ արվեց» արտահայտությունն օգտագործելու առաջարկով գանգվածային լրատվամիջոցներին դիմելիս, ակնհայտ է:

Օգոստոսի 23-ին «Ազն»-ն անդրադարձել էր օրենսդիր խուժանի առաջարկին: «Հյուրիերթի» օգոստոսի 23-ի և 24-ի համարներում էլ

հաջորդաբար Ամեդ Հաքանն ու Սեդաթ Էրզինն են անդրադառնում: Հաքանը գրում է. «Այն, ինչ տեղի էր ունեցել 80-ականներին, 90-ականներին, կրկնվում է 2012-ին: Ես սպասում էի, որ վերստին շրջանառության մեջ դրվի «ահաբեկիչները (PKK-ի) հայ են» արտահայտությունը: Երկար չսպասեցի: Մուհյեդին Աքաբ կոչեցյալ «Արդարություն և բարգավաճում» կուսակցության պատգամավոր ասպարեզ իջավ: PKK-ի մասին խոսելիս ասաց. «Սրանք կրոնափոխ հայերի վաստակներն են»: Պարոն Մուհյեդին, եթե ռասիզմով ես զբաղվելու և վատություն անելու, քեզ համար այլ ասպարեզ ընտրիր: Թիրախ մի դարձրու անմեղ հայ քաղաքացիներին»:

Նրան հավելում է Էրզինը. «Բացի «շանսատակ արեց» բառակապակցությունից, Աքաբը դուրս տվեց խնդրահարույց այլ խոսքեր: Ելույթում նա պահանջեց PKK-ականներին չնույնացնել քուրդ եղբայրների հետ, ապա շարունակեց. «Մենք մեր քուրդ եղբայրներին դրանցից զանազանում ենք: Դրանք արդեն կրոնափոխ հայերի վաստակ են կամ էլ Սիրիայից, Իրանից մեր երկիր ներթափանցած տակառներ»: Երկու նստաշրջան Թուրքիայի ազգային մեծ ժողովում իշխող կուսակցությանը ներկայացնող պատգամավորի «կրոնափոխ հայի վաստակներ» արտահայտությունն անարգանքի և նսեմացնելու դրսևորում են, որքան էլ դա Թուրքիայում տարածված լինի և չհարթահարված նյարդային գրգիռ հանդիսանա հասարակության լայն զանգվածների համար: Այս մտտեցման թիրախը սոսկ հայերը չեն: Դա ուղղված է ազգային բոլոր փոքրամասնությունների՝ հույների և հատկապես հրեաների դեմ: Ամեն անգամ, երբ որևէ գործիչ օգտագործում է «PKK-ականները կրոնափոխ հայերի վաստակ են» արտահայտությունը, Թուրքիայում բնակվող յուրաքանչյուր հայ իրեն վիրավորված է զգում: Իսկ երբ ասում են՝ «Նրա նախկին ամուսինը հրեա էր», ինչպես ասվեց պրոֆ. Էրսանլիի համար, վիրավորվում են բոլոր հրեաները»:

07.11.2012

«ԻՄ ՊԱՇՏՊԱՆՅԱԼԸ ՁԻ ԱՐԱՏԱՎՈՐԵԼ ԹՈՒՐԿԸ ՁԻՆՎՈՐԻ ՊԱՏՎԱԲԵՐ ՀԱՄԱԶԳԵՏՍԸ»

Դատապաշտպանը նկատի ունի Սևակ Շահինի մարդասպանին

2011-ի ապրիլի 24-ին, երբ Դիարբեքրի վիլայեթին հարող Բաթմանի գորամասերից մեկում այսպես կոչված պատահական կրակոցով սպանվեց ժամկետային զինծառայող Սևակ Շահինը, գրել էինք, որ սպանությունը ՀՅ-ի թուրքական ժխտողականության չարանենգ արձագանքն է:

Թուրքահայ Սևակի՝ Մեծ եղեռնը խորհրդանշող օրն իրականացված սպանությամբ թուրք հրոսակը փորձում էր ազդանշան տալ ՀՅ-

ն ճանաչելու պատրաստակամություն դրսևորող երկրներին, թե Թուրքիայի հայերը պատանդ են ինչպես թուրքական պետության, այնպես էլ արյունարբու թուրք զանգվածների համար, որոնք նույնիսկ 21-րդ դարում փոխանակ ձգտելու, որ գոնե մի քիչ մարդու կերպարանք ստանան, ստոր մարդասպանով են հիանում:

Այդ երկրներին շանտաժի ենթարկելիս, հրոսակը միաժամանակ սաստում էր երկրում ՀՅ-ի մասին հրապարակավ արտահայտվող հատուկենտ մտավորականներին, նրանց հետ թուրքահայերին, ինչու չէ՛ նաև Հայաստանին:

Այդ փորձով թուրք հրոսակն ընդամենը ցույց տվեց իր մարդասպան դեմքը: Խնդիրը, սակայն արյունարբու հրոսակի դեմքը չէ, հայ ժողովուրդը քաջածանոթ է այդ դեմքին, այլ Սևակ Շահինի սպանության վերաբերյալ մեր կարծիքի ականա հաստատումը դատական 9-րդ նիստում, որը, ինչպես նշել էինք նախորդ համարում, տեղի էր ունեցել երկուշաբթի օրը:

Սևակ Շահինի սպանության գործով ռազմական ատյանի դատական այս նիստին երեկ Դիարբեքրից անդրադարձել է «Էվրենսել» թերթը, վկայակոչելով քրդական «Դիջլե» լրատվական գործակալությանը, որի հրապարակումն արտատպել է Կ. Պոլսո հայոց պատրիարքարանի ոչ պաշտոնական խոսափող «Հայթերթ» կայքէջը:

Նիստը, ըստ «Էվրենսելի», տեղի է ունեցել Դիարբեքրի մարտավարական ՌՕ 2-րդ ուժերի հրամանատարությանն առընթեր ռազմական ատյանում: Ներկա են գտնվել մարդասպան Քըվանչ Աղաօղլուն, Սևակ Շահինի ընտանիքն ու նրանց դատապաշտպանները:

Մարդասպանի դատապաշտպան Իբրահիմ Գյոքը տուժող կողմին մեղադրել է դատական գործընթացն իրավական հարթությունից քաղաքական հարթություն փոխադրելու և քաղաքական կուսակցություններին դատական գործում ներգրավելու մեջ:

Այնուհետև դատապաշտպանն ասել է. «Այս գործը որևէ առնչություն չունի կուսակցությունների հետ: Դա դուրս մի բերեք իրավագիտական ոլորտից: Իմ կարծիքով, Հայկական որևէ հարց գոյություն չունի Թուրքիայում: Ճիշտ չէ, սպանության միջադեպի պայմանավորումը 1915-ի իրադարձություններով: Թուրքիայում Հայկական հարց չի եղել: Իմ պաշտպանյալը չի արատավորել թուրք զինվորի պատվաբեր համազգեստը: Կարծում եմ, այստեղ դատավարությունը քաղաքականացնելու փորձ է արվում»:

Դատավարությունը հետաձգվել է: Նիստում դատական կողմից մեղավոր է ճանաչել Սևակի սպանության ականատես, նույն գործում սում ծառայող շարքային Հայիկ Էքշիին՝ նախնական ցուցմունքը ետ առնելով փոխելու համար, ինչպես նաև մարդասպան Քըվանչի քեռուն:

«Էվրենսելը» այլ մանրամասներ չի հաղորդում: Սակայն թուրքական թերթի հրապարակումը, անկախ մանրամասնություններից, որքան էլ ականա լինի, երևան է հանում թուրքահայ զինծառայող Սևակ Շահինի Մեծ եղեռնը խորհրդանշող ապրիլի 24-ին սպանության և 1915-ի ցեղասպանության անմիջական առնչությունը:

Ինչ վերաբերում է արյունարբու թուրք հրոսակի մարդասպան դեմքին, ապա դա էլ բացահայտում է մարդասպանի դատապաշտպան Գյոքի խոսքերը, թե իր պաշտպանյալը չի արատավորել թուրք զինվորի պատվաբեր համազգեստը: Դատապաշտպանները մտավորական են, թե ոչ, չգիտենք, բայց որ Սևակ Շահինին սպանող Աղաօղլուի դատապաշտպան Գյոքը թուրք է, իսկ թուրքը նույնիսկ 21-րդ դարում հայ սպանելու մոլուցքով տառապող և մարդասպանին փառաբանող մարդկային տականք, ակնհայտ է: Կամ դատապաշտպան կոչված այդ արարածը զինվորին չի տարբերում մարդասպանից, կամ էլ, նրա համոզմամբ, զինվորը պետք է մարդասպան լինի, ինչպես նրա պաշտպանյալ Քըվանչ կոչված վարձկան հրոսակը:

15.11.2012

«ԵՐԱՆԻ ՆՐԱՆ, ՈՎ ԻՐԵՆ ԹՈՒՐԿ Ե ՀԱՄԱՐՈՒՄ»

Ասույթ, որն Ստամբուլում փակցվել է հայկական վարժարանի դռան վրա

Այդ ասույթը պատկանում է Քեմալ Աթաթուրքին, ինչել էր Թուրքիայում հանրապետական կարգերի հռչակման օրերին: Դրանով նա արտահայտում էր ժամանակակից Թուրքիայում ցեղասպանության տեղահանության և փոխանակման ենթարկված հայ, հույն, մասսեր նաև հրեա ազգային փոքրամասնություններին հնարավորինս թուրքացնելու և թուրքացման միջոցով բազմազգ երկրում միատարր թուրքազգ կերտելու գործընթացն արագացնելու քեմալական նկրտումները:

Աթաթուրքը ասույթի միջոցով ականա խոստովանում էր նաև, որ «ազգային թուրքական պետությունը» կազմավորվել է ոչ թուրք ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքում: Այդ ժողովուրդներն ասույթով միաժամանակ պատանդի կարգավիճակում էին դրվում, որպեսզի կաշկանդվածությունը նրանց զերծ պահի երկրում ազգային ինքնությամբ հանդես գալու գայթակղությունից:

Հանրապետության 1-ին տարիներին Թուրքիայում Ստամբուլի համալսարանի նախաձեռնությամբ ծավալված «քաղաքացի՛, թուրքերեն խոսի՛ր» արշավն ու Շեյխ Սահիդի 1925-ի ապստամբության պատրվակով երկրում հրապարակավ քրդերենի օգտագործման արգելումը ոչ թուրք ժողովուրդներին կաշկանդելու արտահայտությունն են:

Քեմալականների ժամանակակից Թուրքիայում հանրապետական կարգեր հռչակվել են 1923-ի հոկտեմբերի 29-ին: Անցած 89 տարիներին քրիստոնյա հայերն ու հույները «ես թուրք եմ» չեն ասել: Չհաշված աներևույթ թուրք ձևացող սալոնիկյան ծագումով սաբաթայականներին, չեն ասել հրեաները, նրանց հետ նաև մահմեդական քրդերը, ալավիները, նույնիսկ լազերի, ալբանացիների ու իսլամ ընդունած վրացիների զգալի մասը:

Եթե 89 տարվա վաղեմություն ունեցող ասույթը, այն էլ պաշտամունքի առարկա դարձած Աթաթուրքի, հանգում է տրամագծորեն հակադարձ արդյունքի և թուրքական իշխանությունները հրաժարվելու փոխարեն շարունակում են ամուր կառչել դրանից, ապա ասույթը կորցնում է սկզբնական թուրքացնելու նպատակը և դառնում երկրում ոչ թուրքերին շանտաժի ենթարկելու չարանենգ միջոց:

Քանի որ թուրքական իրականության հայատնյացության պատճառով թուրքահայերը դարձել են մարդասպան թուրք հրոսակի գլխավոր թիրախը երկրում, ուստի շանտաժը որպես սաստելու միջոց առավելապես նրանց նկատմամբ է գործադրվում, ընդ որում ամենաայլանդակ դրսևորումներով:

«Երանի նրան, ով իրեն թուրք է համարում» մակագրությամբ հունականի հետ հայկական եկեղեցիների, դպրոցների պատին ցուցանակ փակցնելը վաղեմի սովորույթ էր Թուրքիայում: Ըստ երևույթին դրսևորվող այլանդակության չափը սկսել էր չբավարարել թուրքերին, որ հիմա այդ ցուցանակը փակցնում են դպրոցի դռան վրա:

Խոսքը Ստամբուլի «Բոնոնտի» թաղամասի հայ կաթոլիկների տարրական դպրոցի մասին է, որի դռանը փակցված «Երանի նրան, ով իրեն թուրք է համարում» ցուցանակը գրավել էր «haber7» հեռուստատեսության թղթակից Էրքան Թուֆան Այթավի ուշադրությունը: Նոյեմբերի 13-ին հեռուստատեսության կայքէջում հրապարակված կոթը նա հագեցրել է հայկական վարժարանի դռան վրա փակցված ցուցանակի պատկերով, ապա և մեկնաբանել:

Ահա թե ինչ է գրում. «Ձեր կարծիքով ո՞րն է հայ աշակերտներին այս ցուցանակով պետության հաղորդած ազդանշանի իմաստը: Կամ

մեր պետությունը ուզում է հասկացնել. «Դու էլ ես թուրք, թուրքսուրք» հովանու ներքո և պետք է հպարտանաս դրանով», կամ էլ զգուշացնում է. «Տե՛ս, ես գիտեմ, որ դու թուրք չես, հետևաբար պետք է չստիպիմանաս»: Թուրքիայի Հանրապետության կազմավորման տարիներին տիրում էր այն կարծիքը, թե ինքնության բարձրագույն ձևը թրքությունն է, ուստի երկրում բնակվող ամեն ոք թուրք էր համարվում: Թեև գործող 1882-ի սահմանադրության 66-րդ հոդվածի 1-ին մասում գրված է. «Թուրք են բոլոր նրանք, ովքեր քաղաքացիական առնչություն ունեն թուրքական պետության հետ», սակայն գործնականում բոլորովին այլ մոտեցում է ցուցաբերվել: Պետությունը ամեն պատեհ առիթի դեպքում մեր երկրի ոչ մահմեդականներին հիշեցրել է, որ նրանք թուրք չեն: Որքան էլ հայերի, հրեաների, ասորիների, հույների համար վիրավորական լինի, այնուամենայնիվ վերջիններս ավելի նպաստավոր վիճակում կլինեին, քան հիմա, եթե պետությունը նրանց ընդուներ որպես թուրք:

Ժամանակն է, որ մեր պետությունը կողմնորոշվի. կամ ինչպես սահմանադրությունն է մատնանշում, ազգային փոքրամասնություններին թուրք պիտի համարի և ոչ մահմեդականներին դարձնի իրավահավասար քաղաքացիներ, կամ էլ նրանց ասի, որ ոչ թե թուրք են, այլ այլադավան, ու սահմանափակի փոքրամասնությունների քաղաքական և հասարակական իրավունքները մահմեդականների համեմատ: Ժամանակն է, որ երկրում վերանայվի քաղաքացիություն և թրքություն հարաբերակցությունը, որպեսզի մենք իմանանք ի վերջո՝ ոչ մահմեդականներն այս երկրում ի՞նչ են՝ ո՞ւղտ, թռչո՞ւն, թե՞ ջայլամ»:

Թուրքական պետությունն ազգային փոքրամասնությունների համար առաջադրված այս երեք փարբերակից ո՞րը կընտրի՝ չգիտենք, բայց որ Թուրքիան նույնիսկ 21-րդ դարում շարունակում է մնալ որպես այլանդակություն, կասկած չի հարուցում:

29.11.2012

ՄԱՏՆԱՑՈՒՅՑ ԵՆ ԱՐՎՈՒՄ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ, ԵՎԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ, ՈՐ ԳԱՌՆԱՆ ԽՈՒԺԱՆԻ ԹԻՐԱՆ

Հայատյացությունը անասնական բնագոյ է դարձել մարդասպան թուրք հրոսակի համար: Զանազան են բնագոյի դրսևորման ձևերը, հատկապես այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության նախագահ Գոթսել Գյուլբեյին: 21-րդ դարում բռնությունը պաշտող, մարդասպանով հիա-

ցող այս մարդակերպ արարածը նոյեմբերի 24, 25, 26-ին Twitter-ի իր էջում տեղադրել է Թուրքիայում գործող հայկական բոլոր վարժարանների, եկեղեցիների և հիմնադրամների ինտերնետային հասցեներն ու հեռախոսահամարները:

Նշելով այդ մասին՝ նոյեմբերի 27-ի համարում «Ռադիկալ» թերթը գրում է, որ մինչ այդ «Ստամբուլի հայոց պատրիարքարանին առընթեր եկեղեցիներ և հիմնադրամներ» վերնագրով այս կառույցների մասին տեղեկությունները ինտերնետում հրապարակող Գյուլբեյը, դրանից առաջ էլ բողոքի նամակ էր ուղարկել ՆԳ նախարարին, թե ի՞նչ գործ ունի ներկայումս գործող 57 հայկական հիմնադրամը ԹՀ-ում:

Ավելին, Գյուլբեյ կոչեցյալ այս թուրք տականքը «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության մյուս տականքների հետ ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովի ցուցապաստանների ֆունդին, ինչպես «Ռադիկալն» է նշում, «կախաղան» էր բարձրացրել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի տիկնիկը:

Ինչո՞վ պայմանավորել Twitter-ի իր էջում Թուրքիայում գործող հայկական վարժարանների, եկեղեցիների, հիմնադրամների հասցեն հրապարակելու Գյուլբեյի արարքը: Հարցի պատասխանը միանշանակ է՝ մատնացույց անելու նկրտումով: Ինչո՞ւ, որպեսզի հարձակման թիրախ դարձնի բռնությունը պաշտող մարդասպանին փառաբանող մյուս թուրք հրոսակների համար:

Հատկանշական է, որ այն պահին, երբ Գյուլբեյը մատնացույց էր անում հայկական վարժարանները, եկեղեցիներն ու հիմնադրամները, թուրքական կառավարությունն էլ մատնացույց արեց Ստամբուլում հայկական վարժարան հաճախող հայ աշակերտներին: Ինչպե՞ս՝ դպրոցներում ազատ հագուկապի մասին ընդունած օրենքով, որը չի տարածվում հայկական վարժարանների աշակերտների վրա միայն: Այսինքն՝ այսուհետև դպրոցական համազգեստ կրելու են բացառապես հայկական վարժարանների աշակերտները, որ նշմարելի դառնան նաև թուրք խուժանի համար:

Խուժանությունը թուրք տականքի էությունն է, այլապես այս տականքը նույնիսկ 21-րդ դարում չէր շարունակի պաշտել բռնությունը կամ հիանար ստոր մարդասպանով: Խնդիրը, սակայն, սոսկ թուրք խուժանը չէ, այլև Գյուլբեյի գլխավորած «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության ադրբեջանական ֆինանսավորումը:

Այլ կերպ, այդքան էլ արդարացի չէ Գյուլբեյին մեղադրելը: Օրինակ, ինչո՞ւ Էրդողանի կառավարությունը Ադրբեջանից ստացած

գումարներով Խոջալուի «կոտորածի» այսպես կոչված ոգեկրթական հանրահավաք կազմակերպի Ստամբուլում, ավելին, ուղարկի իր ԼՂ նախարարին, որ ելույթ ունենա «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» մակագրությամբ ցուցապաստառներ կրող 100-հազարանոց ռեմոնտի առջև, սպառնալու համար հայերի հետ նաև Հայաստանին, իսկ աղբրեջանական ֆինանսավորում ունեցող Գյուլբեյ կոչեցյալ տականքը Թուրքիայում թիրախ չդարձնի՝ հայկական վարժարանները, եկեղեցիներն ու հիմնադրամները:

11.12.20012

ՄԱՐԿԱՍՊԱՆ ԹՈՒՐԿ ՀՐՈՍԱԿԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 100-ԲԳ ՏԱՐԵԼՎՅՈՒՄ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

Թե՛ Խոջալուի 2-րդ հանրահավաքին նախապատրաստվելու աշխատանքներ կատարում

2007-ի հունվարի 19-ին Օզյուն Սամասթ կոչեցյալ ստահակը «Ակոս»-ի խմբագրատան առջև թիկունքից սպանեց Հրանտ Դինքին, կարծես ցույց տալու համար արյունարբու թուրք հրոսակի մարդասպան դեմքը: 2011-ի ապրիլի 24-ին էլ մարդասպան Քըվանջը Աղաօղլուն Դիարբեքիի վիլայեթին հարող Բաթմանի զորամասերից մեկում այսպես կոչված պատահական կրակոցով սպանեց նույն զորամասում ծառայող Սևակ Շահինին:

Սամասթ և Աղաօղլու կոչված տականքները վարձու մարդատուներ էին, կատարում էին թուրքական պետական կառույցների առաջադրանքը: Հրանտ Դինքի սպանության պարագայում Սամասթի առաջադրանքը Թուրքիայում ՀՅ-ի հարցի հրապարակավ արձարժումներով կանխելն էր, իսկ Սևակ Շահինի՝ Մեծ եղեռնի խորհրդանշող օրը իրականացված սպանությամբ թուրք հրոսակը նախ արձագանքում էր ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացին, նախազգուշացնում ճանաչման պատրաստակամություն ցուցաբերող երկրներին, թե Թուրքիայի հայերը պատանդ են թուրքական պետության ձեռքին և թուրքահայերի հետ սաստում էր նաև Հայաստանին և Սփյուռքին:

Հրանտ Դինքի սպանության կազմակերպիչները չքացահայտվեցին: Մեր հայրենակցի սպանությունից հետո նույնիսկ թուրք ֆուտբոլիստները երկրի զանազան մարզադաշտերում օրեր, ամիսներ շարունակ «Մենք բոլորս Օզյուն Սամասթ ենք» վանկարկումներով իրենց հիացմունքն արտահայտեցին ստոր մարդասպանին: Սա նշանակում է, որ թուրք ֆուտբոլիստները նույն մարդասպանն են, նույնիսկ 21-րդ

դարում ի վիճակի չեն մտածել գոնե մի քիչ մարդու կերպարանք ստանալու մասին:

Սևակ Շահինի սպանության դեպքում արդեն ոչ միայն չեն քացահայտվել կազմակերպիչները, այլև չի կալանավորվել մարդասպան Աղաօղլուն: Ավելին, այս տականքի դատապաշտպանը դեռ ռազմական առյուծի նոյեմբերի 5-ի նիստում լկտիաբար հայտարարել է. «Իմ պաշտպանյալը չի արատավորել թուրք զինվորի պատվաբեր համազգեստը»:

Խնդիրը, սակայն, արյունարբու թուրք հրոսակը չէ, ոչ էլ հրոսակի մարդասպան դեմքը, այլ «Երանի նրան, ով իրեն թուրք է համարում» սույթը Ստամբուլի հայկական վարժարանների դռան վրա փակցնելն ու թուրքահայության եկեղեցիները և հիմնադրամները մատնացույց անելը այդ վարժարանների հետ:

Նոյեմբերի 15-ին, անդրադառնալով սույթին, նշել էինք, որ դա պատկանում է Քեմալ Աթաթուրքին: Ասոյթն սկզբնական շրջանում հետապնդել է ազգային փոքրամասնություններին, էթնիկ և կրոնական խմբավորումներին թուրքացնելու միջոցով միաձուլ թուրք ազգ կերտելու նպատակ, այնուհետև, կապված ձախողման հետ, դարձել է հայերի գլխավորությամբ ոչ թուրքերին շանտաժի ենթարկելու արդյունավետ միջոց:

Ինչ վերաբերում է Թուրքիայի հայկական վարժարանները, եկեղեցիներն ու հիմնադրամները մատնացույց անելու հանգամանքին, ապա դրան էլ անդրադարձել էինք նոյեմբերի 29-ին, ընդգծելով. «Հաստատվածությունը անասնական բնազդ է մարդասպան թուրք հրոսակի համար: Զանազան են բնազդի դրսևորման ձևերը, հատկապես այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության և նրա նախագահ Գյոքսել Գյուլբեյին»:

Այս թուրք հրոսակը նոյեմբերի 24, 25 և 26-ին Twitter-ի իր էջում տեղադրել էր Թուրքիայում գործող հայկական բոլոր վարժարանների, եկեղեցիների և հիմնադրամների հասցեն, ինտերնետային կայքն և հեռախոսահամարները, որ դառնան առ այսօր մարդասպանին պաշտող խուժանի թիրախ: Մինչ այդ Գյուլբեյը հեռակա կարգով «կախաղան» էր բարձրացրել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, դրանից առաջ բողոքի նամակ էր ուղարկել ՆԳ նախարարին, թե ինչ գործ ունի ներկայումս գործող 57 հայկական հիմնադրամը Թուրքիայում, միջոցառումներ էր կազմակերպել հոգուտ Ռամիլ Սաֆարով կոչված մարդասպան-վիժվածքի:

Հաշվի առնելով այս ամենը Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղին աղընթեր գործող «Ընդդեմ ռասիզմի և ազգայնամոլության» նախաձեռնությունը, ինչպես նշել էր BIA լրատվական գործակալությունը, նոյեմբերի 29-ին դատական հայց էր ներկայացրել Գյոքսել Գյուլբեյի դեմ: Նախաձեռնության անդամներից Ջենգիզ Ալդանը գործակալությանը տված հարցազրույցում շարադրել էր Գյուլբեյի արարքները, ապա ասել էր, որ վերջինի գործունեությունը կրում է առաջիկա փետրվարի 29-ին նախատեսվող Խոջալուի 2-րդ հանրահավաքին պատրաստվելու, ինչպես նաև ՀՅ-ի 100-րդ տարելիցին դիմակայելու բնույթ:

Այնուհետև Ալդանը շարունակել է. «Ադրբեջանը նախարարների, պատգամավորների հայտարարություններով աջակցում է նրա գործունեությանը, միաժամանակ ֆինանսական միջոցներ տրամադրում: Ադրբեջանական և թուրքական պետությունների միջև առկա են որոշ համաձայնություններ: Կասկածներ ունենմ, որ այս նախապատրաստության շրջանակներում տեղի ունենան շատ ավելի ահավոր բաներ: Առաջին հայացքից գուցե երկրում ոչ ազդեցիկ թվան «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» նման միությունները, սակայն մեր հասարակությունն արդեն կանխակալ մոտեցում ունի հայերի նկատմամբ: Արդարադատության նախարարության տվյալներով, սկսած 2005-ից, յուրաքանչյուր 3-րդ օրը հարձակման է ենթարկվել ոչ մահմեդականների առնվազն 1 աղոթարան կամ գերեզմանատուն»:

Ինչպես երևում է, հարցի էությունը Գյուլբեյով չի սահմանափակվում, որովհետև այս ստահակի պաշտպանությամբ, ինչպես դեկտ. 9-ին տեղեկացրել էր թուրքական t24.com.tr-ն, հանդես է եկել Statuko հանդեսի գլխավոր խմբագիր Օքան Բաշը, չմոռանալով գովեստի խոսքեր շոայլել մեր հայրենակից Հրանտ Դինքի մարդասպան Սամաթի հասցեին: Դրանով էլ նա թերևս հիմնավորել է մարդասպան թուրք հրոսակների մասին մեր շարադրածը:

18.12.1012

«ՀՐԱՆՏ ԿՈՉԵՅՅԱԼ ՏԻՊԱՐԻՆ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՏԵՂԻ ՊԱՏԺՈՒՄ ԵՆ ՍԱՄԱԹԻ ՊԵՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ, ԿԱՐԾԵՍ ՎԱՏ ԲԱՆ Է ԱՐԵԼ»

Այս խոսքերը պատկանում են Statuko հանդեսի գլխավոր խմբագիր Օքան Բաշին: Հանդեսը հրատարակվում է Սև ծովի առափնյա Սամսուն քաղաքում, իսկ խոսքերը հրապարակվել են հանդեսի նախավերջին համարի առաջնորդող հոդվածում:

Դեկտեմբերի 11-ին «Մարդասպան թուրք հրոսակը Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին է պատրաստվում, թե՛ Խոջալուի 2-րդ հանրահավաքին նախապատրաստվելու աշխատանքներ կատարում» վերնագրով հոդվածում նշել էինք Թուրքիայի հայկական վարժարանները, եկեղեցիներն ու հիմնադրամները հարձակման թիրախ դարձնելու «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության նախագահ Գյոքսել Գյուլբեյի չարանենգ նկրտումների մասին: Միաժամանակ ավելացրել էինք, որ հարցի էությունը Գյուլբեյով չի սահմանափակվում, որովհետև այս ստահակի պաշտպանությամբ հանդես է եկել Statuko-ի գլխավոր խմբագիր Բաշը, չմոռանալով գովեստի խոսքեր շոայլել Հրանտ Դինքի մարդասպան Օգյուն Սամաթի հասցեին:

Ահա թե t 24.com.tr կայքէջի վկայությամբ, Statuko-ի առաջնորդողում, որը հրապարակվել է «Պարոնայք, ի՞նչ եք ուզում ազգայնականներից» վերնագրով, ինչ է գրել այս թուրք հրոսակը. «Ո՞րն է հակակրանքի պատճառը: Թուրքական կոչվող պետության մեջ մի՞թե կարելի է անխղճորեն հավածել ազգային և բարոյական արժեքների պահպանության պայքար մղող հարազատ քաղաքացիներին: Ինչպես հայտնի է, «թուրքերի արյան աղտոտության» մասին ակնարկող Հրանտ կոչեցյալ տիպարին վերացնելու պատճառով անտեղի պատժում են Սամաթի պես ամուր մի երիտասարդի, կարծես վատ բան արած լինի: Մի ամբողջ ազգին ամենայն ամբարտավանությամբ անարգող այդ անձնավորությունը իր արարքով արդեն արժանի էր սպանության: Եթե պետությունը աչք է փակում անարգանքին, հայերին շողոքորթելու համար օրը ցերեկով երկրում ոտնահարվում են ազգայնականության սկզբունքները, այդ դեպքում ինքնաբերաբար ասպարեզ են իջնում ազգի նվիրյալ զավակները, որոնց դատապարտելն առնվազն անհասկանալի է մնում ինձ:

Չեմ կարողանում հասկանալ նաև այն թուրքերին, որոնք «Բոլորս հայ ենք» սադրիչ կարգախոսով փողոց էին իջել: Մեր ժողովուրդը միլիոնավոր նահատակ է տվել: Երբևէ տեսե՞լ եք, որ հայկական ծագումով քաղաքացիներից որևէ մեկը «Բոլորս թուրք ենք» կարգախոսով փողոցում հայտնվի: Նրանք, ովքեր մտադիր են շարունակել «Բոլորս հայ ենք» կարգի սադրանքները, Հայաստանի տեղը հայտնի է: Գնացե՛ք այնտեղ: Բայց ձեր չափն էլ իմացեք, որովհետև մենք Թուրքիայում ենք»:

Ի դեպ, Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղի «Ընդդեմ ռասիզմի և ազգայնամոլության» նախաձեռնությամբ

է կտրել կոկորդը: Մինչ տուժողին հիվանդանոց են փոխադրել, հարձակվողը հեռացել է բնակարանից առանց դիպչելու որևէ իրի:

Հաջորդ հարձակումը իրագործվել է դեկտեմբերի 28-ին Սամաթիայում: Տուժողը Մարիցա Քյուչուկն է, 85 տարեկան, միայնակ էր ապրում: Դաժան ծեծի ենթարկվելուց հետո նա դաշույնի 7 հարված է ստացել իր բնակարանում, որտեղ էլ մահացել է:

Նույն օրերին Սամաթիայում բնակարան մտնելու պահին դաշունահարվել է 87-ամյա Թ.Ա.-ն, որը դաժան ծեծի պատճառով կորցրել է տեսողությունը: Նրան տեղափոխել են հիվանդանոց՝ վերակենդանացման բաժին:

Հունվարի 6-ին, հենց Սուրբ ծննդյան օրը հարձակման թիրախ է դարձել նույն թաղի բնակիչ մեկ ուրիշ հայ կին, որի անունը չի նշվում: Պարզապես հայտնի է, որ 3 անհայտ անձինք բռնություն գործելուց հետո փորձել են առևանգել նրան:

Վերջին հարձակումը իրականացվել է հունվարի 23-ին, 83-ամյա Սուլթան Այքարի դեմ: Բնակարանի դուռը բացելու պահին նա թիկունքից գլխին հարված է ստացել և երեսնիվայր տապալվել է գետնին: Հարձակվողը նրան ոտնատակ է արել, վրա են հասել հարևանները: Հիվանդանոցում պարզվել է, որ նրա աչքը կուրացած է:

Սամաթիայում հարձակման հետևանքով վիրավորվել է նաև մեկ ուրիշ հայ կին, որի անունը նմանապես չի հրապարակվում:

Այս հարձակումներն, ինչ խոսք, մտահոգիչ են: Սակայն ավելի քան մտահոգիչ է թուրքի անուն-ազգանուն կրող հարձակման թիրախների հայկական ինքնության մասին հարձակվողի կամ հարձակվողների իրազեկվածությունը: Օրինակ, հարձակվողները ինչպե՞ս են իմացել, որ Վեհբե Զելիքերը կամ Սուլթան Այքարը իրականում հայ են, կամ ո՞վ է իրազեկել սրանց: Իրազեկման հանգամանքը կազմակերպվածության բնույթ է հաղորդում Ստամբուլում միայնակ զառամյալ հայ կանանց նկատմամբ իրականացվող հարձակումներին, իսկ կազմակերպվածությունը անխուսափելիորեն ենթադրում է պետական կառույցների մասնակցություն:

Ըստ երևույթին այս հանգամանքն էլ ստիպել է Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղի վարչության անդամներին, որ հունվարի 23-ին դիմեն ոստիկանության թաղային բաժանմունք՝ զգուշացնելու. «Հարձակումները համակարգված բնույթ են կրում: Թեև դրանց կազմակերպվածության մասին չենք կարող հստակ եզրակացության հանգել, քանի դեռ բացահայտված չեն իրագործողները, սա-

կայն մտահոգված ենք, որ դրանք լինեն ատելության ու ռասիզմի դրսևորում, որովհետև հարձակումների ժամանակ գողության դեպքեր չեն գրանցվել»:

Երեկ Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղը ոստիկանության բաժանմունք է ներկայացրել հայ կանանց նկատմամբ իրականացվող հարձակումների առնչությամբ պատրաստած զեկուցագիրը: Այս ձեռնարկումներում մասնաճյուղին աջակցել են «Նոր զարթոնքը», Հեղափոխական բանվորա-սոցիալիստական կուսակցությունը, «Ոչ ռասիզմին և ազգայնամոլությանը» նախաձեռնությունը, «Աշխատանքի կուսակցությունը», «Կանաչների երիտասարդական միությունը» և այլն:

Ի՞նչ արդյունքի կհանգեցնի Մարդու իրավունքների միության և նրանց աջակցող կազմակերպությունների նախաձեռնությունը, չգիտենք: Բայց որ տկն Մարիցայի սպանությունից հետո հունվարի 4-ին Միջազգային համայնքում կազմակերպությունը արձագանքել է Ստամբուլի հայաշատ թաղամասերում իրականացվող հարձակումներին, այդ արձագանքի հիման վրա Ամերիկայի հայ դատի հանձնախումբը, ինչպես երեկ կայքէջում նշել է CNNturk-ը, Սամաթիայում իրականացվող հարձակումների վրա ուշադրություն սևեռելու խնդրանքով դիմել է ԱՄՆ պետքարտուղարություն, փաստ է:

30.01.2013

ՄԱՐԱԹԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 100-ԲԳ ՏԱՐԵԼԻՑԻ

ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՆ

Այդ մասին քրդամեդ «Խաղաղություն և Ժողովրդավարություն»

կուսակցության պարզամակրների հեղ վկայում է նաև

Ժողովրդահանրապետական կուսակցության փոխնախագահը

«Ազգը» դեռևս հիմնադրման օրից ուշադրության կենտրոնում է պահել Թուրքիայի քաղաքական զարգացումները: Միանգամայն տրամաբանական է, որ այդ նույն մոտեցումը ցուցաբերվեր Ստամբուլի հայաբնակ Սամաթիա թաղամասում զառամյալ հայ կանանց դեմ ուղղված չարանենգ հարձակումներին: Պարզապես ձեռքի տակ եղած ինֆորմացիան կցկտուր է ու թերի: Թեև այդ հարձակումների արձագանքը հասել է Վաշինգտոն, ԱՄՆ պետքարտուղարություն, դրանց առնչությամբ մտահոգություն է հայտնել Միջազգային ներում կազմակերպությունը, իսկ BBC-ի, CNN-ի թուրքական ծառայությունները

արձագանքել են, սակայն թուրքական կենտրոնական թերթերը հատուկենտ բացառությամբ, նախընտրում են շրջանցել:

Թերևս դա է պատճառը, որ հարձակումներին անդրադառնում ենք «Էվրենսել», «Թարաֆ», «Բիանեթ» կայքէջերի միջոցով Դրանցից «Բիանեթի» կիրակնօրյա հրապարակումից պարզվում է, որ Սամաթիայում օրը ցերեկով հենց փողոցի մեջտեղում դաժան ծեծի ենթարկվելու հետևանքով 2 շաբաթ վերակենդանացման բաժնում տանջվող Ս. Ա.-ն, որի աչքը ստացած հարվածից կուրացել է, 87-ամյա Թուրքանդա Աշքըն է: Նա հարձակման է ենթարկվել ոչ թե դեկտեմբերի սկզբին, ինչպես նշվում էր, այլ՝ նոյեմբերի 28-ին:

Ստամբուլի նահանգապետը հարձակումներին անդրադարձել է հունվարի 26-ին միայն: Այսինքն՝ երկու ամիս ուշացումով, այն է՝ դրանք գողության նկատառումներին վերագրելով նկրտումով, որ կոճկի դրանց ռասիստական բնույթը:

«Ֆաթիհի» քաղաքապետարանը, որի վարչական տարածքում է Սամաթիան, հարձակումներին արձագանքեց հունվարի 27-ին: Ինչ վերաբերում է հասարակական-քաղաքական կազմակերպություններին, ապա դրանցից առաջինը Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղն է արձագանքել, դիմելով հունվարի 23-ին ոստիկանության «Ֆաթիհի» բաժանմունք, որ զգուշացնի: Հունվարի 25-ին նույն մասնաճյուղը միևնույն բաժանմունքին հարձակումների առնչությամբ զեկուցագիր է ներկայացրել:

Հունվարի 25-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահության գրավոր հարցում էր ներկայացրել ժողովրդահանրապետական կուսակցության փոխնախագահ Սեզգին Թանրըքուլուն, պահանջելով, որ հարցմանը գրավոր պատասխանեն ինչպես Մեջլիսի նախագահությունը, այնպես էլ վարչապետ էրդողանը:

Հաջոր օրը «Ազատություն և համերաշխություն» կուսակցությունը բազմաթիվ այլ կազմակերպությունների մասնակցությամբ «Ուս ուսի՛ ընդդեմ ֆաշիզմի» կարգախոսով բողոքի ցույց էր կազմակերպել Սամաթիայում, որի ամսաթիվը «Ազգի» նախորդ համարում սխալմամբ հունվարի 27 էինք նշել: Մինչդեռ, հունվարի 27-ի ցույցը «Մի դիպի՛ր հայ հարևանիս», «Ատելությունը ձեզ, մարդկությունը՝ մեզ», «Հայ ժողովուրդը միայնակ չէ», «Քուրդ եմ և այստեղ եմ» մակագրությամբ ցուցապատառներով նախաձեռնել է «Ժողովուրդների դեմոկրատական կոնգրեսը», որին Մարդու իրավունքների միության «Ռասիզմի և խտրականության դեմ պայքարի հանձնաժողովի» գլխավորությամբ

մասնակցել են այլ կազմակերպություններ, ինչպես նաև քրդամետ «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցության պատգամավորներ Էրթուլու Քյուրքչուն, տկն Սեբահաթ Թունջելը և Սըրըր Սուրեյա Օնդերը, որոնք միաժամանակ այս կոնգրեսի գործադիր կոմիտեի անդամներն են:

Առաջին հայացքից գուցե ժամանակավրեպ թվա, բայց նրանց ելույթները հստակ պատկերացում են տալիս Սամաթիայում հայ կանանց դեմ իրականացվող հարձակումների ռասիստական բնույթի մասին, բացահայտում են դրանց առաջադրանքը և ամբողջացնում թուրքական պետության այս հարձակումներով հետապնդած նպատակների վերաբերյալ մեր պատկերացումները:

Որո՞նք են դրանք: Նախքան հարցին պատասխանելն անդրադառնանք Նիլայ Վարդարի հունվարի 27-ին «Բիանեթում» հրապարակված հոդվածին: Հեղինակը նշում է Ստամբուլի, մասնավորապես Սամաթիայի հայության ահաբեկվածության ու շփոթվածության մասին: Գրում է, որ խաչի նշանով թռուցիկներ են գցում հայերի տների դռանը, երեկոյան վերջիններս վախից չեն կարողանում դուրս գալ, չնայած չգրանցված այլ հարձակումների մասին բերնեբերան տարածվող լուրերին, ոստիկանությունն առ այսօր հապաղում է անվտանգության միջոցառումներ իրականացնել Սամաթիայում, թողնելով անպաշտպան և՛ եկեղեցին, և՛ հայ բնակիչներին:

Համենայն դեպս, հարձակումներով թուրքական պետության հետապնդած նպատակների մասին Սամաթիայի հրապարակում արտահայտվել է «Ժողովուրդների դեմոկրատական կոնգրեսի» Ստամբուլի վարչության անդամ Ահմեդ Սայմադին, հրապարակելով իր կազմակերպության հարձակումների առնչությամբ հաղորդագրությունը:

Նա, համարելով հարձակումները ռասիստական, ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ մինչև տկն Մարիցայի սպանությունը, հարձակումների առնչությամբ իրավապահ մարմինները որևէ հետաքննություն չեն սկսել և ավելացրել է. «Այս հարձակումներում ոստիկանությունը հանցակից է»: Սայմադին ավելացրել է. «Հարձակումներով մատնանշվում է այն քաղաքականության բնույթը, որը մեր պետությունը պատրաստվում է վարել մինչև ՀՅ-ի 100-րդ տարելիցը հանդիսացող 2015 թվականը»:

Նրան հետևել է Քյուրքչուն: Նա հնարավոր է համարել, որ հարձակումների պատասխանատուն հենց իրավապահ մարմինները լինեն և դատապարտել է ՆԳՆ անգործությունը: Քյուրքչունի հավելել

է տկն Թունջելը: Նա խոսքն ուղղելով թուրքական կառավարությանը հայտարարել է. «Մեկ լեզու, մեկ կրոն, մեկ ազգ» ասելով, ընդամենը ատելություն եք սերմանել երկրում: Մինչդեռ բազմակրոն, բազմամշակույթ և բազմազգ Թուրքիայում ժողովուրդները պետք է եղբայր լինեն ու իրավահավասար»:

Հատկանշական է, որ Սամաթիայի հարձակումները «Ժողովուրդների դեմոկրատական կոնգրեսի» ներկայացուցչի նման Մեծ եղեռնի 100-րդ տարելիցով է պայմանավորել նաև հարցումով Մեջլիսի նախագահություն դիմած ժողովրդահանրապետական կուսակցության փոխնախագահ Թանրըքուլուն, նույնպես համարելով ռասիստական: Նա մասնավորապես ընդգծել է. «Հայ քաղաքացիների նկատմամբ իրականացվող ռասիստական հարձակումների աճը կամա թե ակամա մեզ հիշեցնում է 1915-ի մոտեցող 100-րդ տարելիցը: Եթե այդ հարձակումները կազմակերպված բնույթ ունեն, անհապաղ պետք է բացահայտել այդ կազմակերպությանն ու դատաստանի առջև կանգնեցնել մեղավորներին: Այլապես, կստեղծեն կազմակերպվածության տպավորություն գործող այս հարձակումների շարունակականության համար անհրաժեշտ նախադրյալներ: Դա կխորացնի հայ քաղաքացիների կյանքի ու գույքի անվտանգության մտավախությունը: Չմոռանալ, որ հարձակումների շարունակման դեպքում դրա պատասխանատուն կառավարությունն է լինելու:

27.02.2013

«ՑԱՎՈՔ, ՄԱՐԴԻԿ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ ՃԻՇՏ ՉԵՆ ԸՄԲՈՆՈՒՄ ԽՈՋԱՊՈՒ ԿՈՏՈՐԱԾԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ»

Գանգաղվում է թուրք գիտնականը՝ բնութագրելով դա «ցեղասպանություն»

Հունվարի վերջին, երբ երկու ամիս ուշացումով թուրքական իրավապահ մարմիններն արձագանքեցին Ստամբուլի հայաշատ Ֆերիքոյ և Սամաթիա թաղամասերում տեղի ունեցած հարձակումներին, որոնց հետևանքով երկու գառամյալ հայ կին դաժանաբար, կոկորդը կտրելու միջոցով սպանվել, երկուսի աչքն էր կտրացել դաժան ծեծի պատճառով, «Ազգի» էջերում գրել էինք, որ էթնիկ բնույթի այս հարձակումները Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի թուրք հրոսակին յուրահատուկ պատրաստությունն են, ինչպես նաև Խոջալուի «կոտորածի» այսպես կոչված ոգեկոչման նոր հանրահավաքի չարանենգ փորձը:

Նախորդը անցյալ տարվա փետրվարի 26-ին կազմակերպվել էր Ստամբուլի «Թաքսիմ» հրապարակում, որտեղ հայատյացության

ընազդով տառապող թուրք-ադրբեջանական հարյուրհազարանոց ոհմակը «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք» ցուցապաստառներով փառաբանում էր Օզյուն Սամասթին, իսկ վերջերս պաշտոնանկ արված ՆԳ նախարար Իգրիս Նաիմ Շահինը «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» կարգախոսով վերժխնդրություն էր քարոզում:

Ի դեպ, հանրահավաքին ուղիղ էթերում արձագանքել էին միջազգային լրատվամիջոցները, կարծես ցույց տալու համար, թե մեկ այլ ժողովրդին վիժվածք անվանող և հայատյացության բնազդով տառապող թուրք-ադրբեջանական ոհմակի առկայությունը միանգամայն պետք է բնորոշ լինի Թուրքիայի հայեցողությամբ «մշակույթի համաշխարհային մայրաքաղաք» հռչակվող Ստամբուլին:

Սամաթիայի հարձակումներն, ըստ երևույթին, դադարել են: Հավանաբար կանգ է առել նաև հարձակումների հետաքննությունը: Ինչպես երևում է, թուրքական իրավապահ մարմինները հակված չեն բացահայտելու հարձակումները, կանխավ գիտակցելով, որ հանցագործներին հայտնաբերելու դեպքում բաց են թողնելու, ինչպես թողել են 2011-ի ապրիլի 24-ին զորամասում սպանված, ժամկետային զինծառայող Սևակ Շահինի մարդասպանին:

Պարզապես շարունակվում են Խոջալուի այսպես կոչված կոտորածի զոհերին ոգեկոչելու փորձերը, ընդ որում՝ որպես կանոն մոռացության տալով «գորշ գայլերի» առաջնորդ Ավիարսլան Թյուրքեշի Լեռնային Ղարաբաղ գործուղած, նաև Խոջալուում տեղակայված այն «զգոն թուրքերին», որոնց մի մասը չեզոքացվել էր, իսկ մյուսն էլ զենքը շարտելով՝ ազերի եղբայրների հետ հայ ազատամարտիկների տրամադրած միջանցքով խուճապահար փախել:

Խոջալուի կոտորածի, այսպես կոչված, ոգեկոչման միջոցառումներն այս տարի կազմակերպվել են փետրվարի 24-ին ինչպես Ստամբուլում, այնպես էլ Անկարայում: Մասնակիցների թիվը եղել է խիստ սահմանափակ, մինչև 150 մարդ, որոնք ցույցի ընթացքում վանկարկել են. «Մեկ ազգ՝ երկու պետություն», «Խոջալուին արդարություն»:

Դրա նախորդ օրը Չոնգուղաքում Բյուլենթ Էջևիթի անվան համալսարանի ռազմավարական հետազոտությունների սևծովյան կենտրոնը «Խոջալուի կոտորածն ու Հայկական հարցը» թեմայով կլոր սեղան է կազմակերպել: Ինչպես «Դունյա բուլթենի» կայքէջն է վկայում, միջոցառմանն ընթերցվել են «Օսմանյան շրջանի խնդիրներն ու 1915-ի իրադարձությունների բուն պատճառները», «Հայկական ահաբեկչական կազմակերպությունների գործունեությունը և մերօրյա դրսևորումները» և «Խոջալուի կոտորածն ու ազերիների դեմ ուղղված պարբերական բռնությունները» թեմաներով զեկուցումներ:

Միջոցառումը վարող Նուրբեթյին Խաթունօղլուն գանգատվել է, որ քաղաքական գործիչների ծամծամելու պատճառով չեն կարողանում Խոջալուի կոտորածի մասին ճշմարտությունը պատմել մարդկանց: Նա ավելացրել է. «Ցավոք, դա մեզ չի հաջողվում նաև մեր երկրում: Մարդիկ ճիշտ չեն ըմբռնում: Մինչդեռ այդ կոտորածը սև բիծ է ոչ միայն պատմության, այլևս համայն մարդկայնության համար: Դա ցեղասպանություն է, որը, սակայն, մարդիկ անտեսում են»:

Մուստաֆա Չոլաքն անդրադարձել է 1915-ի իրադարձություններին՝ ասելով. «Հայկական հարցը ներկայումս դադարել է լինել սոսկ պատմական խնդիր: Ունի քաղաքական և տնտեսական հայեցակետեր: Հարցին մոտենալու մեր տրամաբանությունը սխալ է: Ահա թե ինչու մեզ առավելապես վշտացնում են եվրոպական երկրների խորհրդարաններում ընդունված որոշումները: Խորհրդարանների որոշումները գիտական չեն, այլ՝ քաղաքական: Հետևաբար տրամաբանական չէ, երբ պատմաբանները փորձում են հերքել խորհրդարաններում ընդունված որոշումները: Պատմաբաններն այդ հարցը միայնակ լուծել չեն կարող: Թուքիան այդ հարցում կզորանա, եթե համագործակցի Ադրբեջանի հետ և Հայկական հարցում գիտական աշխատություններ կատարելիս հնարավորինս պիտի հեռանա 1915-ի իրադարձություններից, քանզի 1915-ի առնչությամբ մեր թեզը պաշտպանող շատ քիչ բան ունենք»:

Նրան հավելել է դոցենտ Էրքան Գյոքսուն. «613 տղամարդ, կին և երեխա Խոջալուում սպանվել են ոչ թե թուրքական ծագում, այլ մահմեդական լինելու պատճառով: Հետևաբար այստեղ կարող ենք օգտագործել ցեղասպանություն արտահայտությունը»:

Այդ ընթացքում «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր Ռեշադ Դողրուն կոչ է արել Թուրքիայի ազգային մեծ ժողովին, որ փետրվարի 26-ը հռչակի «Խոջալուի ցեղասպանության հիշատակի օր»: Նա ավստսանքով է նշել, որ 2011-ին ինքը օրինագիծ է ներկայացրել, սակայն դա մերժվել է թուրքական խորհրդարանի լիազումար նիստում:

01.03.2013

**ԱՌՐԲԵՋԱՆՑԻ ՀՐՈՍԱԿԻ ԽՆԴԻՐԸ ՊԱՏԵՐԱՋՄՈՒՄ ԿՐԱԾ ԽԱՅՏԱՆՈՒՄ
ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԷ**

*Նա չի մարտում Սումգայիթից հեկո նաև Արցախում նախճիր սարքելու
հնարավորությունից զրկվելը*

Կան ժողովուրդներ, որոնց մինչև չես պատժում, չեն գիտակցում
իրենց արած չարագործությունը: Ելնելով սումգայիթյան չարագործու-

թյուններից, այդպիսի ժողովուրդների թվին կարելի էր դասել ադրբեջանցիներին: Սակայն ժողովուրդը մարդկանց պատմականորեն կազմավորված սոցիալ-էթնիկ ընդհանրությունն է, իսկ Կովկասի երբեմնի թաթարը, որը 20-րդ դարի 30-ականներին միայն ստացավ ադրբեջանցի էթնոնիմը, այն էլ շնորհիվ խորհրդային կարգերի, ոչ թե մարդկանց ընդհանրություն է, այլ պոչատ բորենիների ոհմակ:

Պոչը կորցրել է արցախահայությանը բնաջնջելու առաջադրանքով Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած պատերազմում: Ըստ երևույթին Սումգայիթում սարքած նախճիրի համը մնացել էր ադրբեջանցի վիժվածքի բերանը: Սակայն բախվելով մի բուռ ազատամարտիկի դիմադրությանը, ադրբեջանական ոհմակը ցաքուցրիվ եղավ: Մի մասը շանսատակ արվեց կամ հեզ ոչխարի կերպարանք ընդունելով, հանձնվեց հաղթողների ողորմածությանը, մյուսն էլ՝ զենքը շպրտեց և հայ ազատամարտիկի տրամադրած միջանցքով, առանց հետ նայելու, ճողպրեց ռազմի դաշտից:

Ղարաբաղյան պատերազմում ադրբեջանական բորենին ոչ միայն խայտառակ պարտություն կրեց, այլև պատճառ դարձավ, որ այդ պարտությունը միևնույն խայտառակությամբ համտեսելիս, հայ ազատամարտիկի առջև գլուխ խոնարհեն նաև «զգոն թուրքերը», որոնց «գորշ գայլերի» առաջնորդ Ավիարսլան Թյուրքեշը ցեղակիցներին օգնելու նկատառումով Լեռնային Ղարաբաղ էր գործուղում:

Հարկ է, սակայն, նշել, որ ադրբեջանցի բորենիների խնդիրը պատերազմի խայտառակ պարտությունը չէ, այլ պարտության հետևանքով անպաշտպան կանանց, ծերերին, երեխաներին տանջամահ անելու հաճույքից զրկվելը: Արժանապատվությունից զուրկ այս բորենին ոչ թե չի մարտում խայտառակ պարտությունը կամ ամաչում դրա համար, այլ ավստսում է Սումգայիթից հետո նաև Արցախում նախճիր սարքելու հնարավորությունը կորցնելու համար:

Քանի որ Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցի բորենու ճակատագրին են արժանացել նաև «զգոն թուրք» կոչեցյալ արյունարբու վիժվածքները, այսինքն՝ նմանապես շանսատակ են արվել, գերի հանձնվել և խուճապահար փախել են ռազմի դաշտից, ուստի սրանք նույնպես ավստսում են առիթը բաց թողնելու, այլ ոչ թե ամաչում վարձկան մարդասպանի կարգավիճակ ստանալու համար:

Ի դեպ, ամոթը մարդկանց համար է, ոչ թե նույնիսկ 21-րդ դարում գոնե մի քիչ մարդ դառնալու փոխարեն մարդասպանով հիացող վիժվածքների: Թուրք վիժվածքն առ այսօր հիանում և փառաբանում

է Օգյուն Սամասթին, սրա եղբայրակից աղբրեջանցի վիժվածքի Ռամիլ Սաֆարով կոչված տականքին: Իզուր չեն ասել «Մեկ ազգի երկու պետություն» կամ «Շունը՝ շնից, երկուսը՝ մի տնից»: Թերևս այս ասացվածքներով պետք է բացատրվի աղբրեջանական բորենու վայնասունին թուրքական վիժվածքի արձագանքը:

Խոսքը փետրվարի 26-ին Ֆրանսիայի Ազգային ժողովին շենքում «Սումգայիթի դեպքերը 25 տարի անց. ներկա վիճակն ու հեռանկարները Լեռնային Ղարաբաղի բնակչության համար» թեմայով խորհրդարանական Ֆրանսուա Ռոշբլանի նախաձեռնությանը կազմակերպված միջոցառմանը «Խոջալուի զոհերի հիշատակը» հարգելու աղբրեջանցի երկու վիժվածքի սաղրանքի մասին է:

Մինչ սաղրանքի առնչությամբ Աղբրեջանը նոտա է տալիս Ֆրանսիային, իսկ աղբրեջանական բորենու ծագերը բողոքի ցույց են կազմակերպում Բաքվում Ֆրանսիայի դեսպանատան առջև, «Դունյա բուլթենի» լրատվական գործակալությունը շտապում է իրազեկել հայատյացության անասնական բնազդով տառապող թուրք վիժվածքին, թե դաշնակցականները Ֆրանսիայի Ազգային ժողովում դաժան ծեծի են ենթարկել Փարիզում «Աղբրեջանի տան» տնօրեն Ֆաթալիևային և ուսանող Հուսեյնովին, որոնց վիրավոր վիճակում տեղափոխել են հիվանդանոց:

Թուրքական կայքէջը, ինչ խոսք, հարկ չի համարում նշել, որ միջադեպի հետևանքով չեղյալ է հայտարարվել Ֆրանսիայի «Նոր սերունդ» կազմակերպության փետրվարի 27-ին Ֆրանսիայում Աղբրեջանի դեսպանատան առջև ծրագրված բողոքի ակցիան:

Խնդիրը, իհարկե, բողոքի ակցիան չեղյալ հայտարարելը չէ, այլ Սումգայիթում աղբրեջանցիների ձեռքով գազանաբար սպանված անպաշտպան հայ կանանց, երեխաների, ծերերի հիշատակը նույնիսկ Ֆրանսիայի Ազգային ժողովի շենքում անարգող սումգայիթյան մարդասպանի լկտիությունն անպատիժ թողնելը: Ծեծը հազիվ թե արդյունավետ պատիժ լինի աղբրեջանցի վիժվածքի համար: Ղարաբաղյան պատերազմում այս վիժվածքը շան ծեծ արդեն կերել է իր զգոն եղբայրների հետ: Հետևաբար պետք է մտածել մեր քույրերի, եղբայրների վրեժը լուծելու և սումգայիթյան մարդասպանին ինչպես հարկն է պատժելու մասին, այլապես անհնար կլինի զսպել աղբրեջանական բորենու լկտիությունը:

07.03.2013

«ԹՈՂ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴԻՆՆ ՆՐԱՆԵՐ, ՈՎՔԵՐ»

ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՀԱՅՏՆԵԼ ՍԱՄԱԹԻԱՅԻ ՀԱՅԵՐԿՆ»

Այդ մասին «Սթարի» մարտի 5-ի համարում գրել է Մուրադ Քելքիթազյուն: Նկատի ունի քաղաքացիական հասարակության այն կազմակերպություններին, որոնք Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղի, «Ազատություն և համերաշխություն» կուսակցության, ինչպես նաև «Ժողովուրդների դեմոկրատական կոնգրեսի» գլխավորությամբ դատապարտում էին Ստամբուլի հայաշատ թաղամասերում տարեց հայ կանանց դեմ իրականացված հարձակումները, հարձակումներին թուրք իրավապահ մարմինների անտարբերությունը և Սամաթիայում հունվարի 26-ին ու 27-ին կազմակերպում հայերի հետ համերաշխության ցույցերը:

Ի դեպ, այդ ցույցերին մասնակցել էին Թուրքիայի ազգային փոքրամասնությունների, էթնիկ և կրոնական խմբավորումների բոլոր ներկայացուցիչները՝ բացառությամբ հրեական համայնքի ու սաբաթայականների, այսինքն՝ սալոնիկյան ծագումով առերևույթ մահմեդականություն ընդունած հրեաների, որոնք հետնաբեմից կառավարելով երկիրը, որպես կանոն հայերի դեմ են ուղղում թուրք ժողովրդի ագրեսիվ նկրտումները:

Համենայն դեպս, համերաշխության երկու ցույցից և հատկապես Մարդու իրավունքների միության ոստիկանությանը ներկայացրած հունվարի 24-ի գրավոր դիմում-բողոքից հետո մինչ այդ անգործության մատնված իրավապահ մարմինները սկսեցին հետաքննել հարձակումները: Նրանք ավելի քան 3 ամիս հետո հայտնաբերեցին ոմն Մուրադ Նազարյանին և նրա վրա բարդեցին բոլոր 5 հարձակումների պատասխանատվությունը, չմոռանալով, իհարկե, հարձակումները կրճատել 4-ի, սպանվածներին 2-ից՝ 1-ի, ընդգծելով, որ դրանցից միայն 3-ն են ուղղված եղել հայ կանանց դեմ:

Թուրքական ոստիկանության տվյալներով, Մուրադ Նազարյանը ծագումով հայ է, մահմեդականություն է ընդունել, բայց, չգիտես ինչու, պահպանում է հայի ազգանունը, հաճախում մզկիթ նամազ անելու, սակայն եկեղեցուց օգնություն է ստանում, դեռ ավելին, հիվանդանոցում բուժում ստացած հոգեկան հիվանդ է նաև:

Այլ կերպ, Մուրադ Նազարյան անուն-ազգանունը կամ որևէ առնչություն չունի այդ անձնավորության ինքնության հետ, այսինքն՝ հորինված է, կամ էլ հարձակումները նրան են վերագրում, որպեսզի

քողարկեն դրանց ռասիստական բնույթը: Ընդ որում՝ հոգեկան հիվանդի մեղմացուցիչ հանգամանքով, միաժամանակ պաշտպանության տակ են առնում և արդարացնում ինչպես հանցագործին, այնպես էլ իրագործած հակահայ հանցագործությունը:

Այս ամենը, սակայն, չի խանգարել «Սթար» թերթի հեղինակին ընդվզելու քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունների դեմ, որոնք հարձակումները համարելով ռասիզմի և հայատյացության դրսևորում, պայմանավորել էին ՀՅ-ի 100-րդ տարելիցի պատրաստությամբ:

Ահա թե ինչ է գրել «Սթարի» հեղինակը. «Վերջին շաբաթներին, երբ հայկական ծագում ունեցող մեր քաղաքացիներով բնակեցված Սամաթիայում տարեց կանանց նկատմամբ իրար հետևից իրականացվեցին հարձակումներ, մեր «զգոն քաղաքացիները» առանց մտածելու, թե դրանք կարող են լինել սովորական հանցագործություն, «Բոլորս սամաթիացի ենք» կարգախոսներով ճանապարհ ընկան: Երթեր, բողոքի ցույցեր կազմակերպող այս ընկերները, ըստ որոնց, հարձակումները պայմանավորված էին հայատյացությամբ, «չենք թույլ տալ վարի տալ հայերին» վանկարկումներով փողոցներում ախուժախ արեցին: Մինչդեռ բոլոր հարձակումներն անխտիր գողության միտում են ունեցել: Նրանք, իհարկե, հարկ չհամարեցին կանգ առնել այս վարկածի վրա: Ըստ նրանց, ճշմարտությունը մեկն էր. Լինչի դատատանի ենթարկել հայերին: Հետո ի՞նչ եղավ: Ձերբակալվեց հանցագործը: Պարզվեց, որ հայկական ծագումով Թուրքիայի քաղաքացի Մուրադ Ն.-ն է: Շատ բարի: Հիմա ի՞նչ անել: Եվ ի՞նչ են անելու քաղաքացիական հասարակության այն կազմակերպություններն ու կուսակցությունները, որոնք բողոքի ցույցերում «բոլորս սամաթիացի ենք» էին գոռում-գոչում, աշխարհն իրար խառնում: Կարծում ենք, կարիք կա, որ նրանք արդեն «ներողության» ցույց կազմակերպեն:

29.03.2013

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ Է ԾՆԿԻ ԻՋՆԵԼՈՒՄ»

Ասում է թուրք գործիչը՝ անտեսելով և՛ «զգոն թուրքերի», և՛ Ադրբեջանի ծնկած վիճակը

Ժողովրդական ասացվածքին համապատասխան՝ «Հավը երազում կորեկ է տեսնում»: Իսկ թուրքերը այլ ժողովուրդներին ուզում են իրենց առջև ծնկի իջած տեսնել: Օրինակ՝ Իսրայելի վարչապետ Նաթանյահուի ներողության առնչությամբ վարչապետ Էրդողանը

հայտարարել էր, թե Իսրայելին ծնկի են բերել թուրք ազգի առջև, առանց հաշվի առնելու, որ այդ ներողությունը չի բավարարում թուրքական գեթ մեկ պահանջ:

«Գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր և փոխնախագահ Մևուրա Քարաքայան էլ, ինչպես երեկ նշել էր turkishny.com կայքէջը, հայերին ծնկի բերելու մտավարժանքներ է անում: Թուրք ազգի շատ փառապանձ այս զավակը ադրբեջանական Gun.az գործակալության հարցերին պատասխանելիս ասում է, որ Հայաստանն իսկույն պետք է հեռանա Ղարաբաղից, օկուպացված այս տարածքը պատկանում է թուրքերին, հետևաբար անհրաժեշտ է հանձնել տիրոջը:

Քարաքայան կարծիք է հայտնում, որ Հայաստանն ի վիճակի չէ երկար ժամանակ օկուպացված պահել Ղարաբաղը, նա դատապարտված է ծնկի իջնելու հետզհետե հզորացող Ադրբեջանի առջև, և հայ ժողովուրդը պարտավոր է հասկանալ այս իրողությունը:

Այս արարածը հիրավի շատ հոգատար է հայ ժողովրդի հանդեպ, պարզապես նրան հիշողությունն է դավաճանում: 1994-ին Ադրբեջանը զինադադարի աղերսագին խնդրանքով, բացի Հայաստանից, դիմել էր նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, այսինքն՝ ծնկի էր իջել հայկական երկու պետությունների առջև:

Ինչ վերաբերում է շատ փառապանձ թուրք ազգին, ապա նրա զգոն զավակներին էլ՝ շուրջ 3000 մարդ, 90-ականների սկզբին Ղարաբաղ էր գործուղել «գորշ գայլերի», հետևաբար Քարաքայայի առաջնորդ Ալիարսլան Թյուրքեշը: «Զգոն թուրք» կոչեցյալ այս վարձու մարդասպանները տեղաբաշխվել էին Ղարաբաղի տարածքում, մասնավորապես Շուշիում և Խոջալուում: Սակայն մի մասը շանսատակ արվեց, մյուսը՝ զենքը շարտելով ազերի եղբայրների հետ հայ ազատամարտիկների բացած միջանցքով ճողոպրեց ռազմի դաշտից, մի մասն էլ հանձնվեց հաղթողների ողորմածությանը, այսինքն՝ ծնկի իջավ հայ ազատամարտիկի առջև: Քարաքայան հավ չէ, որ կորեկ տեսնի երազում, սակայն թուրք է, ծնկադիր վիճակում ուզում է ուրիշներին ծնկի բերել:

ՀԱՅԱՍՏԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆ Է

Սակայն Թուրքիայում արելությունից չեն խուսափում նաև ոչ թուրք մահմեդականները

Որքան էլ հայապոլացությունը լինի թուրքական իրականության ատանձնահարկությունը, արելությունից չեն խուսափում մյուս քրիստոնյաները, հրեաները, նույնիսկ ոչ թուրք մահմեդականները, ինչպիսիք են սուննի լազերն ու քրդերը: Ընդ որում արելության այդ ծնր չի համարվում ռասիզմ, քանի որ դրսևորվում է մարդկանց ոչ թե հասարակական, այլ դավանանքային միավորման՝ «ումմաթի» շրջանակում:

Դիլա Քարամը «խորականության բառարանում» քննության է առել սուննի մահմեդական համայնքի այդ արարը, որի հողվածը ապրիլի 8-ի համարում արտաստեղ է «Բադիկալ» թերթը: Ահա թե ինչ է գրել:

«Ինչի մասին է հուշում «գյավուր» բառը: Դա սովորական ածական է, անվնաս բնութագրում, իրավիճակի գնահատում կամ հավաթ, թոչուն, ծաղիկ, թե՛ ինքնաթիռ... Վերջապես ի՞նչ: Ձեր կարծիքով ո՞րն է բանաստեղծի «այսօր կիրակի է, գյավուրների կատղելու օրը» խոսքերի իմաստը: Կամ ինչպես հասկանալ «գյավուրի մեռել», «գյավուրի վաստակ», «գյավուրի ծնունդ» արտահայտությունները: Քանի որ մենք ռասիզմի հետ բացարձակ առնչություն չունենք, հետևաբար չենք իմանում այս արտահայտությունների իմաստը: Նույնիսկ կարող ենք հետևյալ կերպ մտածել. «Գյավուր ասելիս որևէ ցեղի անուն չտալու պատճառով չենք նսեմացնում ազգերից ոչ մեկին, ուստի ռասայական խտրականություն դրսևորել չենք կարող»:

Միանգամայն հնարավոր է, սակայն գյավուրի փոխարեն եթե ասելու լինենք քուրդ, հայ կամ հույն, այդ դեպքում մենք արդեն ծայրահեղ ռասայականություն այնուամենայնիվ կդրսևորենք: Կարծում եմ՝ բոլորը համամիտ կլինեն ինձ հետ: Եթե այդպես է, եկեք իրենք մեր ասացվածքները:

- «Գնչուն նվագում՝ քուրդը պարում է»,
- «Փայտից՝ ունելի, քրդից փաշա չի լինի»,
- «Իշուն ասել են՝ քուրդ ես,
- երկու շաբաթ խոսք չի կերել»,
- «Պտուղվել հայի լապտերի պես»,
- «Լազը քրդի ծով տեսած տարբերակն է»,

«Դրուզ»:

«Դրուզ» էթնոնիմը որպես հայիոյանք ուշագրավ է: Ազգայնամուները հաճախ են օգտագործում, թեև բռնելու տեղ չունեն: Ինդիքը հետևյալն է՝ վերոհիշյալ բանաստեղծությունը ինչ էլ որ արտահայտի, ահավոր ռասիզմ է պարունակում, և ոչ ոք չի հարցնում. «Ինչո՞ւ եք վիրավորում դրուզներին»:

Իմ կարծիքով, այս ամենի իմաստը ռասիզմը «ումմաթի» շնորհիվ մաքրագարդելն է: Չէ՞ որ «ռասիզմը շատ վատ, անիծյալ բան է, իսկ համայնքայնությունը բոլորովին այլ բան, ինչպիսի հոգատարության է ընդգրկում նույն դավանանքի մարդկանց և առանց հաշվի առնելու ազգային պատկանելությունն ու լեզուն, միավորում նրանց»: Այսպես մտածողները միաժամանակ ասում են. «Քուրդը գյավուրի համեմատ է մահմեդական»: Ըստ սրանց. «Լիարժեք մահմեդական չէ, բայց և այնպես գյավուրից ավելի լավ է: Գյավուր լինելն ահավոր է: Չէ, մենք ռասիստ չենք, մենք «ումմաթ» ենք: Մահմեդականը լավ է, իսկ ոչ մահմեդականը՝ անպետք: Սակայն սուննի մահմեդականն է լավը՝ մնացածը՝ հեքիաթ: Մահմեդականը չի կարող հավասար լինել ոչ մահմեդականի հետ, որովհետև առաջնային է, քանի դեռ ոչ մահմեդականը հնազանդվում ու գլուխ է խոնարհում մահմեդականի առջև, աշխարհը կմնա անվտանգ: Համատեղ գոյակցությունը հնարավոր է այն դեպքում միայն, եթե ոչ մահմեդականը ենթարկվի մահմեդականին: Քանի որ մահմեդականները երկրպագում են ալլահին, ոչ մահմեդականներն էլ պիտի երկրպագեն սատանային: Բայց մենք ռասիստ չենք: Ի՞նչ ռասիստ: «Ումմաթ» ենք, իսկ դա առանց խտրականության գրկում է բոլորին»:

Այս տողերը կարդալուց հետո ակամա մտածում ես, մի՞թե սրանք ռասիզմի դրսևորում չեն կրոնի միջոցով: Օրինակ, «հեռու սեղանից՝ հույն է», «շեկ հրեա» ասելու նման: Այսինքն ցեղը կրոնով փոխարինելու դեպքում կարծես ստորացումն ու վիրավորանքը դադարում են այդպիսին լինելուց: Այսպիսով մաքուր էջ է բացվում, թե՛ իրականում դրսևորվում է ռասիզմի կրոնով համեմված ավելի ընդգրկուն տարբերակը: Մի ռասիզմ, որն իր օրինականությունը երկնքից է ստանում»:

10.04.2013

«ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԵՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՄՏԱԾՈՒՄ ԹՈՒՐԻՔ ԱԶԳԻՑ ՎՐԵԺ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հայրարարում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի պարզամավորը

«Ազգի» էջերում թուրքական իրականության առանձնահատկություն հայատյացության դրսևորումներին անդրադառնալիս բազմիցս գրել ենք, որ հայատյացությունը անասնական բնագր է դարձել մարդասպան թուրք հրոսակի համար: Այդպիսի եզրակացության հիմքը թուրքական էլեկտրոնային և տպագիր մամուլի հրապարակումներն են, այլ ոչ թե հրոսակին վիրավորելու մեր ցանկությունը: Ընդ որում, հրոսակի պարագայում խոսքը տոսկ փողոցային խուժանին չի վերաբերում, որովհետև հայատյացության անասնական բնագրով առնվազն խուժանի չափ տատապում են նաև թուրք քաղաքական գործիչները:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ internethaber.com-ի ապրիլի 6-ի հրապարակմանը, որտեղ կայքէջը մեջբերում է Թուրքիայի ազգային մեծ ժողովի Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր Ահմեդ Դուրան Բուլուֆի հայտարարությունները, որը նա արել է Բալլըքեսիր քաղաքում, մասնակցելով «գորշ գայլերի» առաջնորդ Ալիարսլան Թյուրքեշի մահվան տարելիցի առթիվ կազմակերպված միջոցառմանը:

Լրագրողները պատգամավոր Բուլուֆից կարծիք են հարցնում PKK-ի առաջնորդ Օջալանի հետ բանակցություններից հետո թուրք քրդական հաշտեցմանը նպաստելու համար իշխանությունների նախաձեռնությամբ կազմավորված «իմաստուն գործիչների» ցանկում ընդգրկվածների մասին: Նա թուրք հասարակության մեջ որոշակի դիրք ունեցող արվեստի, գրականության, գիտության և մշակույթի հանրահայտ գործիչներին նախ անվանում է «կեղտոտ մարդիկ», ապա ասում է, որ նրանք գործիք են դառնում երկրի աղտոտման ու մասնատման նկրտումներին, խրտնում թուրքական ինքնությունից և նրանցից շատերի ցեղը արատավոր է:

Այնուհետև Ազգայնական շարժում կուսակցության պատգամավորը շարունակում է. «Այս ցանկում կան նաև հայեր: Սրանք էլ իմաստուն գործիչ են: Սիրեմ իմաստությունդ: Հայի խելքը ինձ պետք չէ: Ի՞նչ կարող է նախատեսել հայը թուրք ազգի համար: Թուրքիայում ունենք հայ քաղաքացիներ: Ես նրանց հարգում և սիրում եմ: Սակայն մի՞թե կարելի է «իմաստուն գործիչների» հանձնաժողովում ընտրել

նրանց, ովքեր մինչև վերջերս թուրքական պետության դեմ էին գործում և մտածում թուրք ազգից վրեժ լուծելու մասին»:

Ի դեպ «իմաստուն գործիչների» մեջ հայ հայտնաբերող Ահմեդ Դուրան Բուլուֆը որևէ հայի անուն չի տալիս, ըստ երևույթին նրա այդ հայտնագործությունը հանձնաժողովին վարկաբեկելու նպատակ է հետապնդում, քանի որ «հայ» արտահայտությունը Թուրքիայում համազոր է հայիոյանքի:

02.05.2013

ՎԵՐԱՓՈՒՎՈՂ ԹՈՒՐԻՔԻԱՅՈՒՄ ԱՅԼԵՎՍ ՉԻ ԲԱՅԱՀԱՅՏՎԻ ԴԻՆԵՔ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտոնի բարձրացման է արժանացել սպանության պարասիանապուն

Ինչպես հայտնի է, անցյալ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ստամբուլի հայաշատ Ֆերիքոյ և Սամաթիա թաղամասերում հարձակման թիրախ էին դարձել տարեց հայ կանայք: Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղը այդ հարձակումները որակել էր ռասիստական, դատապարտելով անգործության համար հարձակումները 3 ամիս շարունակ ողջամտորեն շրջանցող իրավապահ մարմիններին:

Հարձակվողները բնակարանում միայնակ ապրող տարեց հայ կանանց երկուսին դաժան ծեծի ենթարկելուց, դաշունահարելուց հետո, կոկորդը կտրելով սպանել են, երկուսի աչքը կուրացրել, մեկին էլ այն աստիճանի են հասցրել, որ 2 շաբաթ պատկի հիվանդանոցի վերակենդանացման բաժնում:

Ստամբուլի հայ համայնքը դեռևս չէր հաղթահարել հայ կանանց դեմ իրագործված հարձակումների ցնցումը, ապրիլի վերջերին մարդասպան թուրք հրոսակը նոր հարձակումներ է իրականացնում, այս անգամ՝ խմբակային: Հարձակման թիրախ են դառնում Ստամբուլի ասիական հատվածի արվարձաններից Աթաշեհիրի «Նոր հոյս» քրիստոնեական եկեղեցին, Մարմարա ծովի Իշխանաց կղզիներից Բուրգազի հունական եկեղեցին:

Հատկանշական է, որ այս հարձակումներն էլ նույն ողջամտությամբ շրջանցում են թուրքական լրատվամիջոցները, «Ակոս»-ն է միայն արձագանքում: Ստամբուլի հայաշատ թաղամասերում տարեց հայ կանանց կոկորդը դաշույնով կտրելն ու դաժան ծեծի ենթարկելով կուրացնելը, իսկ արվարձաններում եկեղեցիների վրա 15-18 տ. պատանի հրոսակների ձեռնարկած հարձակումները ԵՄ-ին անդա-

մակցելու հաշվարկով վերափոխվող Թուրքիայի իրական պատկերն են, որքան էլ աղաղակող այս փաստերն անընդունելի լինեն Հայաստանում թուրք-աղբբեջանական քարոզչություն ծավալող պնակալեզ հայատյաց տականքներին:

Ի դեպ, այլատյացության պարագայում ԹՀ-ի խնդիրը սոսկ քրիստոնյա հայերը, հույները, ասորիները չեն: Թուրք հրոսակն այդ նույն ատելությամբ վերաբերվում է նաև ալավիներին, այն պատճառով, որ վերջիններս դավանանքով տուննի չեն, էլ չենք խոսում քրդերի մասին:

Ստամբուլի հայաշատ թաղամասերում հայ կանանց, իսկ արվարձաններում քրիստոնեական եկեղեցիների վրա հարձակումները կանխելու թերևս ամենաարդյունավետ միջոցը Հրանտ Դինքի սպանության բուն կազմակերպիչների բացահայտումն էր:

Սակայն բացահայտվեցին միայն Օզյուն Սամասթ կոչեցյալ մարդասպանին սպանության գործում աջակցողները, որոնցից Յասին Հայալն է, որ Սամասթի հետ ազատագրվման է դատապարտվել: Հակառակ դրան, Տրապիզոնի հետախուզական վարչության իրազեկիչ Էրհան Թունջելը բազմաթիվ այլ ամբաստանյալների հետ ազատ է արձակվել:

Եթե Դինքի սպանությունը լիարժեք բացահայտվեր, գուցե հնարավոր լիներ կանխել ժամկետային զինծառայող Սևակ Շահինի զորամասում 2011-ի ապրիլի 24-ին իրականացված սպանությունը: Սակայն սա ՀՅ-ի հարցում Թուրքիայի ժխտողականության յուրատեսակ արձագանքն է, հետևաբար սպանությունը պետականորեն կազմակերպվածություն է ենթադրում: Իսկ այդ կարգի սպանությունները, որպես կանոն, չեն բացահայտվում, ինչպես Հրանտ Դինքի պարագայում էր:

Բացահայտումները դեռ մի կողմ, սպանության պատասխանատուների պաշտոնն են բարձրացնում Թուրքիայում: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում է Էնգին Դինչին: Այս արարածը Տրապիզոնի հետախուզական վարչությունում բաժնի վարիչի կարգավիճակով առաջինն էր ծանուցում ստացել Դինքի դեմ կազմակերպվող սպանության մասին: Նրա պաշտոնի բարձրացմանը ապրիլի 30-ի համարում «Տնցող նշանակում» վերնագրով անդրադարձել է Odatv.com կայքէջը:

Ահա թե ինչ է գրել. «Ինչպես «Հյուրիեթն» է տեղեկացնում, նշանակումը կատարվել է երեկ երեկոյան, այսպիսով Էնգին Դինչը դարձել է Տրապիզոնի անվտանգության գերատեսչության հետախուզական վարչության պետը: Հետախուզության նոր դեկավարը մեր հասարակությանը հայտնի դեմք է: Հրանտ Դինքի դեմ

ծեռնարկվող սպանության մասին առաջին ծանուցումը ինքն էր ստացել: Նա էր, որ սպանությունը ծրագրելու մեջ մեղադրվող Էրհան Թունջելին դարձրել էր իրազեկիչ: Դինքի սպանության առնչությամբ Դինչը բացատրություն է տվել Թուրքիայի ազգային մեծ ժողովի մարդու իրավունքների հանձնաժողովին: Նա ասել է, որ նախապատրաստվող սպանության ծանուցումն ստանալուն պես իրազեկել է Ստամբուլի հետախուզական վարչությանը, միաժամանակ հատուկ խոսակցություն է ունեցել Թունջելի հետ, որպեսզի վերջինս սպանությունից հետ կանգնելու հարցում համոզի Յասին Հայալին»:

03.07.2013

ՈՉ ԹՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՒՐԿՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ Է ՍԱՇՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ

Օտարման պայմաններում հազիվ թե արդյունքի հասնի քրդական հարցի կարգավորման գործընթացը

Նախորդ համարում, նշելով Թուրքիայում քրդական հարցի կարգավորման վարչապետ Էրդողանի նախաձեռնությամբ սկզբնավորված գործընթացի վրա «Գեզիի» դեպքերի բացասական ազդեցությունը, այնուամենայնիվ, որպես կանխարգելիչ գործոն մատնացույց էինք արել Թուրքիայի գործող սահմանադրության ներածությունը, անձեռնմխելի հողվածների հետ նաև ուսուցման և քաղաքացիության մասին 42-րդ ու 66-րդ հողվածները:

Թուրքական ազգային պետության ամբողջականությունն ու այսպես կոչված փառասան թուրք ազգի միասնականությունն ապահովող սահմանադրության այս ներածությունն ու հողվածները ամրագրում են երկրի ոչ թուրք ժողովուրդների, էթնիկ և կրոնական խմբավորումների իրավազուրկ վիճակը: Դա միանգամայն տրամաբանական է այն առումով, որ քեմալականները թուրքական ազգային պետություն են ստեղծել ոչ թուրք ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքում և փորձել են միասնական թուրք ազգ կերտել բազմազգ երկրում:

Այսինքն՝ քեմալականների այս մոտեցումն է ի սկզբանե պայմանավորել ոչ թուրքերի օտարումը Թուրքիայում: Ուստի, օտարման ամրագրումը սահմանադրության մեջ ներածականով ու հողվածներով, բացի քրդերից կարևոր է նաև հայ, հույն, ասորի, հրեա ազգային փոքրամասնությունների, էթնիկ և կրոնական բոլոր

խմբավորումների իրավական դրության մասին ճշգրիտ պատկերացում կազմելու առումով:

Թուրքիայի գործող սահմանադրությունն ընդունվել է 1982-ին: Որքան էլ դրա համար մեղադրվի 1980-ի սեպտեմբերի 12-ի պետական հեղաշրջման ղեկավար գեներալ Քենան Էլբեռնի խունտան, չմոռանանք, որ դրա անձեռնմխելի հողվածները եղել են դեռևս 1924-ի սահմանադրության մեջ, որն արդեն քեմալականների նախաձեռնությունն էր:

Համենայն դեպս, սահմանադրության ներածականն ասում է. «Թուրքական հայրենիքի և ազգի հավերժ գոյությունն ու երկնասլաց թուրքական պետության անքակտելի միասնականությունը սահմանող տվյալ սահմանադրությունը, ելնելով Թուրքիայի հանրապետության հիմնադիր, անմահ առաջնորդ և անզուգական հերոս Աթաթուրքի ազգայնականության ըմբռնումից, նրա բարեփոխումների ոգուց և սկզբունքներից, հաստատում է.

Ոչ մի գործունեություն չի կարող գերադասելի լինել թուրքական ազգային շահերին, թուրքերի գոյությանը, պետության և երկրի անբաժանելիությանը, թուրքական ինքնությանը, պատմական և բարոյական արժեքներին, Աթաթուրքի ազգայնականությանը, սկզբունքներին, բարեփոխումներին և քաղաքակրթության ըմբռնմանը»: Դրան հետևում են խնդրո առարկա հողվածները հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 3 – Թուրքիայի պետությունը անբաժանելի ամբողջականություն է իր երկրով և ազգով: Լեզուն թուրքերենն է:

Հոդված 4 – Սահմանադրության 1-ին, 2-րդ և 3-րդ հողվածներն անձեռնմխելի են, ենթակա չեն փոփոխության առաջարկի:

Հոդված 42 – Որևէ այլ լեզու, քան թուրքերենը չի կարելի կրթական և ուսումնական հաստատություններում ուսուցանել որպես մայրենի լեզու Թուրքիայի քաղաքացիներին:

Հոդված 66 – Թուրք է յուրաքանչյուր ոք, ով Թուրքիայի քաղաքացիություն ունի»:

Սահմանադրության ներածության և մի քանի հողվածների մասնակի թարգմանությունն անգամ բավական է ենթադրելու, որ դրանց հիմքում Աթաթուրքի հանրահայտ ասույթն է. «Երանի նրան, ով իրեն թուրք է համարում»: Չհամարելը քաղաքացու համար ըստ ասույթի օտարում է նշանակում: Այսինքն՝ ոչ թուրք քաղաքացուն հասարակությունից նախքան սահմանադրությունը օտարել է Աթաթուրքի ասույթը.

որը հանդիսանում է քեմալական ազգայնականության հիմնադրույթը: Սահմանադրությունը հիմք ընդունելով այս հիմնադրույթը, ամրագրել է ոչ թուրք քաղաքացու օտարումը, որ նրանք այլընտրանք չունենան, քան թուրքանալու միջոցով երանության հասնել:

Ակնհայտ է, որ իրեն թուրք չհամարող քաղաքացին ինքնաբերաբար մերժում է «թուրքական ազգային շահերի, թուրքերի հարատևության, պետության և երկրի անբաժանելիության, թուրքական ինքնության, պատմական ու բարոյական արժեքների, Աթաթուրքի ազգայնականության» սահմանադրությամբ ամրագրված գերակայությունը: Այսպիսով, նա դառնում է Թուրքիայի հանրապետության գոյությանը սպառնացող դավադիր:

Թուրք հասարակությունն ու քեմալականները թուրքական ազգային պետությունը ի սկզբանե նույնիսկ ցեղասպանությունից հետո որպես դավադիր են դիտել թուրքահայերին, որոնց հետ նաև հույներին, ասորիներին, հրեաներին: Ինչ վերաբերում է քրդերին, ապա նրանց իթթիհատականներն օգտագործել են հայկական ջարդերում, իսկ քեմալականները՝ ազգային պատերազմներում, որ ՀՅ-ն ժխտելիս ժխտեն նաև քրդական ինքնությունը երկրում:

PKK-ի 30-ամյա զինյալ պայքարը էապես փոխեց իրերի դրությունը Թուրքիայում: Երկրում բնակչության մեջ 4-րդը կազմող քրդերը շնորհիվ այդ պայքարի դարձան գործոն Թուրքիայի համար, ընդ որում՝ ռազմական, քաղաքական և ազգագրական տեսանկյունից: Դա թուրքական պետությանը զրկեց քրդերի ինքնությունը ժխտելու հնարավորությունից: Չինյալ պայքարի դադարեցման հրամայականով պետությունը հաշտեցման ուղիներ որոնեց PKK-ի հետ և շրջանառության մեջ դրեց քրդական հարցի կարգավորման գործընթացը:

Ինդիրը, սակայն, PKK-ն կամ թուրքական պետությունը չէ, այլ փոխանվտառությունը: Թուրքերը չեն վստահում PKK-ի առաջնորդ Օջալանի հաշտեցման պատրաստակամությանն ու առհասարակ քրդերին: Քրդերն էլ՝ թուրքական պետությանն ու թուրք ժողովրդին: Մտածել, որ փոխանվտառության պայմաններում PKK-ի հետ հաշտեցման և քրդական հարցի կարգավորման գործընթացը արդյունքի կհանգեցնի, իրատեսական չէ: Մանավանդ որ դրանց տրամաբանությանը հակասում են սահմանադրության ներածությունն ու մի քանի հողվածներ:

«ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՇԻՆՈՒՄ Է»

Ահազանգ «Ակօսից»

Ահազանգը օգոստոսի 30-ի համարում հնչեցրել էր «Ակօս» օրաթերթը: Խոսքը Ստամբուլում բնակվող հայության մասին է: Պոլսահայ արտահայտությունը չենք օգտագործում, որովհետև նրանք վաղուց են լքել իրենց ծննդավայրը: Նրանց փոխարինել են այսպես կոչված Անատոլիայի տարբեր քաղաքներից Ստամբուլ մեկնած հայերը, որոնք մեծապես թուրքախոս էին: Թերևս դրա պատճառով որքան էլ հայկական վարժարաններ հաճախեին, հայերենը այս հայերի երեխաների համար մայրենի լեզու չէր դառնում:

Ինչ վերաբերում է նրանց ազգանուններին, որոնք հաճախ «օղլու» վերջավորությունն ունեն, ապա դա էլ պետք է բացատրել «Անատոլիայի» հայության ավելի քան իրավագուրկ վիճակով: Թուրքիայում հայերի նկատմամբ չդադարող հալածանքները, համատարած հայատյացությունը, մշտական վախի պայմաններում գավառաբնակ հայերին զրկել էին անձնագրային թուրք աշխատողին հակաճառելու ամեն մի հնարավորությունից, որը կամայականորեն «յան» վերջավորությունը փոխարինում էր «օղլու»-ով, իսկ լավագույն դեպքում՝ «օղլու» չէր գրում: Թուրքահայը Քեմալ Աթաթուրքի ժամանակակից Թուրքիայում հետզհետե հայտնվում էր թուրքի ազգանունը կրելու հարկադրանքի տակ:

Գալով «Ակօսի» հոդվածին՝ ապա դա պատրաստել է Արմեն Տառըրը: Ստամբուլում հայ բնակչության փոշիացումը համարելով թուրքահայ համայնքի կենսական խնդիրներից, հեղինակը փոշիացման մասին պարզաբանումներ ստանալու խնդրանքով դիմել է Սահակ արք. Մաշայանի կարծիքին:

Նախքան սրբազան հոր պազաբանումներին անդրադառնալը, նշենք, որ ներկայումս Ստամբուլում բնակվում է շուրջ 60.000 թուրքահայ: Մինչդեռ այդ ցուցանիշը 1927-ին Թուրքիայի Հանրապետությունում անցկացված առաջին մարդահամարի տվյալներով 140.000 էր կազմում, ընդ որում ցուցանիշը չէր ընդգրկում ինչպես կաթոլիկ, այնպես էլ բողոքական հայերին:

Սահակ սրբազանը «Ակօսի» հեղինակի խնդրանքն ընդառաջելիս մատնանշել է, որ վերջին տարիներին թաղման արարողությունները մշտապես կրկնապատկվում, նույնիսկ գերազանցում են մկրտության խորհրդակատարությունները: Նա բերել է 2012-ի օրինակը և

ընդգծել, որ 2012-ին 482 թաղման ծեսի դիմաց կատարվեցին 236 մկրտություն և 191 պսակադրություն:

Այնուհետև Սահակ սրբազանը շարունակել է. «Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ այս տարբերությունը ապագայում էլ ավելի կաճի: Հողասահք ենք ապրում, որի ընթացքին ամեն ինչ սպառվելու է: Հազիվ մի քանի աշակերտներով պիտի ջանանք բաց պահել մեր դպրոցները: Երբ վախճանվեն ներկայումս եկեղեցի փոթացող տարեցները, ապա նույն պատկերին ականատես կլինենք նաև եկեղեցիներում:

Այս ամենին պետք է ավելացնել նաև 30%-ին հասնող խառը ամուսնությունները և նրանց սերնդի հավանական կորուստը: Ավելին, որքան էլ դանդաղ ընթանա, արտագաղթն այնուամենայնիվ շարունակվում է: Դեռ պետք է նկատի առնել երկրից փախչելու տրամադիր փոքրամասնության հոգեբանությունը:

Մի պահ մտածենք. կարո՞ղ է ստամբուլահայությունը դիմանալ այնպիսի նոր սարսափի, ինչպիսին էր Հրանտ Դինքի սպանությունը: Ի՞նչ ազդեցություն կունենա Սամաթիայի հարձակումների կրկնությունը համայնքի վրա: Որքա՞ն կհարատևի փոքրամասնությունների նկատմամբ ներկայիս մեղմ քաղաքականությունը Թուրքիայում: Ի՞նչ վիճակում կհայտնվենք, եթե երկրում իշխանության գան ազգային դիմագծով կառավարություններ, ինչպես եկել էին 70-ական թթ.: Աստված մի արասցե, Միջին Արևելքի բախումները տարածվեն մեր երկրում կամ բռնկվեն թուրք-քրդական բախումներ: Եթե ներկա դրությամբ բացվի հայ-թուրքական սահմանը, ապա անկասկածելիորեն բնակչության ներհոսքը տեղի կունենա դեպի մեր կողմը: Բայց առկա է նաև դրա հակապատկերը: Եթե Հայաստանը բարեկարգի իր խնդիրները, ապա Սփյուռքի համար կդառնա ձգողականության կենտրոն և այս անգամ մենք կգաղթենք հայրենիք»:

27.12.2002

ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԻՃԵԼԻՈՐԵՆ ԲԱՐՁՐ ՈՐԱԿ Է ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Հ Հ ԳԱԱ-ն, նախագահության որոշմամբ, վերահրատարակելով ակադ. Մ.Գ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի թուրքական բռնապետության դեմ 1850-90թթ.» ստվարածավալ աշխատությունը: Սա մեծանուն գիտնականի հետմահու հրապարակված առաջին գործն է և մասնիկը գիտական այն հարուստ ժառանգության, որը նա տասնյակ տարիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ կարողացել է թողնել իր ժողովրդին:

Հայագիտության մեջ ազգային-ազատագրական պայքարի ուսումնասիրությունը սերտորեն առնչվում է Մ. Գ. Ներսիսյանի գիտական գործունեությանը և ամբողջացնում նրա խոշոր վաստակն իր մշակած՝ հայ-ռուսական պատմաքննական հարաբերությունների, հայ հասարակական մտքի պատմության և, վերջապես, ՀՅԻ հիմնարար թեմաների ուսումնասիրության բնագավառներում:

Սույն վերահրատարակությունը «Ակադեմիկոս Մ.Գ. Ներսիսյանի աշխատության նոր հրատարակության առթիվ» ենթախորագրով ընթերցողին է ներկայացնում նրա խմբագիր, պ.գ.դ., պրոֆ. Ա.Ա. Խառատյանը: Աշխատությունը սկսվում է հեղինակի նախաբանով, կազմված է 10 առանձին գլուխներից, ունի հավելված, որտեղ զետեղված են արխիվային փաստաթղթերը, և հազեցված է աղբյուրների ու գրականության, ինչպես նաև անձնանունների և տեղանունների ցանկերով:

Շնորհիվ հանգուցյալ ակադեմիկոսի անձամբ կատարած հավելումների, ուղղումների և լրացումների, ներկա վերահրատարակությունը նախորդ՝ 1955թ. հրատարակության համեմատ ոչ միայն որակական կարևոր փոփոխությունների է ենթարկվել, այլև նպատակաուղղվածությամբ միանգամայն արդիական բնույթ է ստացել:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության հրատարակած այս աշխատությունը 488 էջ է և լուսարանում է օսմանյան բռնապետության դեմ 1850-1890թթ. ծավալված հայ ազգային-ազատագրական շարժումը: Արխիվային հարուստ նյութերի ու սկզբնաղբյուրների հիման վրա շարադրված է թուրքական լծի տակ հեծող հայ ժողովրդական զանգվածների խիզախ ընդվզումների և ինքնապաշտպանական կռիվների պատմությունը: Առանձնակի ուշադրություն է դարձված

հայրենասիրական գաղտնի խմբակների ու կազմակերպությունների, ինչպես նաև կամավորական խմբերի գործունեությանը:

Աշխատության մեջ հանգամանորեն խոսվում է նշված ժամանակաշրջանի հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության, քաղաքական կապերի և կողմնորոշման մասին: Միաժամանակ բազմաթիվ փաստերի ու տվյալների հիման վրա ցույց է տրվում Օսմանյան կայսրությունում հայկական ջարդերի կազմակերպման պետական ծրագրի առկայությունը, Արևմտյան Հայաստանում հայ բնակչության զանգվածային կոտորածների ծրագրին համապատասխան իրագործումը և կոտորածներում օսմանյան կանոնավոր զորքերի հետ նաև քրդական ցեղերի օգտագործումը:

Հեղինակն առանձնակի ուշադրություն է դարձնում պատմությունը կեղծելու փորձերին և ընդգծում, որ դրանք հատկապես իրենց արտահայտությունն են գտել թուրքական պատմագիտական և հրապարակախոսական գրականության մեջ: Ակադ. Ներսիսյանի սույն աշխատությունը գիտական մեծ արժեք է և, դոկտ., պրոֆ. Ա.Ա. Խառատյանի պատկերավոր արտահայտությամբ, անվիճելիորեն բարձր որակ հայ պատմագրության մեջ:

Հուսանք, որ ՀՀ ԳԱԱ-ն ձեռնամուխ կլինի ակադ. Մ.Գ. Ներսիսյանի նոր աշխատությունների հրատարակմանը, որպեսզի մեր հասարակությունը նրա գիտական հարուստ ժառանգությանը հաղորդակցվելիս այդ ժառանգության միջոցով միաժամանակ հաղորդակից դառնա նաև մեծ պատմաբանի՝ շատ-շատ գիտնականների համար օրինակելի ազնիվ վարքագծին, սկզբունքայնությանը և հայ պատմագրությանն անսահման նվիրումին:

17.04.2003

ՍՏԱԲՐՈՒՈՒՄ ԹԱՐԳՄԱՆԱԲԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԵՑ «ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ԳԻՐՔԸ

1921թ. մարտի 15-ին Բեռլինում հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանի դիպուկ կրակոցով սպանվեց ՀՅԻ գլխավոր կազմակերպիչ, արյունարբու Թալեաթ փաշան: Նույն թվականի հունիսին Բեռլինի նահանգային երկրորդ ատյանի դատարանը քննեց Թալեաթի սպանության գործը և արդարացրեց Սողոմոն Թեհլերյանին: Թերևս դրանով էլ Գերմանիայում հաստատվեց ՀՅԻ մեջ Թալեաթի անմիջական պատասխանատվությունը:

Թալեաթ փաշայի սպանության գործի քննումը 20-րդ դարի սկզբների թերևս կարևորագույն դատավարությունն էր: Ահա թե ինչու Ստամբուլի «Ակօս» շաբաթաթերթն ապրիլի 4-ի համարում

գրում է. «Ոչ միայն իրավաբանական, այլև քաղաքական պատմության տեսակետից մեծ կարևորություն է ներկայացնում Թալեաթ փաշայի սպանության դատավարությունը»:

«Ակօսը» միաժամանակ տեղեկացնում է «Թալեաթ փաշայի սպանության դատավարությունը» վերնագրով գրքի մասին: Դա 2003թ. փետրվարին լույս է տեսել Ստամբուլում թարգմանությանը Դողան Աքհանլըի: Գիրքը 182 էջ է, հրատարակել է «Բելգե» հրատարակչությունը: Վերոհիշյալ դատավարության նյութերը 1921 թվին Արմին Վեգների, իսկ 1980թ. դրկ. Թեսա Հոֆմանի աշխատասիրությանը հրատարակվել էին Գերմանիայում: Ուրեմն, Աքհանլըն թարգմանելով վերոհիշյալ արձանագրությունները, ՀՅ-ի հետ սերտորեն առնչվող այդ դատավարությանը ծանոթանալու հնարավորություն է ընձեռել թուրք ընթերցողին:

Սա կարևոր է այն առումով, որ դատավարությունը Մեծ եղեռնի ականատեսների մասնակցությանը վերաժվել էր 1915թ. ՀՅ-ի քննարկմանը նվիրված պատմական ֆորումի: 1915-16թթ. օսմանյան բանակում ծառայող Արմին Վեգներն իր գրքում ոչ միայն ականատեսի աչքերով նկարագրում, այլև լուսանկարներով հաստատում է հայերի ցեղասպանությունը:

Նա դատավարությունը քննելով ժողովուրդների պատմության տեսանկյունից, իր գրքի նախաբանում գրում է. «Ներքին գործոց նախարարի կյանքին ուղղված հայ ուսանողի գործողությունն ու դրան հետևող դատավարությունը գերմանացի ժողովրդի ուշադրությունը հրավիրեցին Առաջին համաշխարհային պատերազմի ամենաարյունոտ իրադարձությունների վրա: Ճշմարտությունն իր ողջ մերկությանը երևան հանվեց: Երիտթուրքերը պարբերաբար կոտորածի էին ենթարկել ողջ ժողովրդին: Դատավարության ընթացքում կատարվեց աներևակայելի՝ տանջվող մեղադրյալն առանց որևէ բառ արտասանելու Մեծ եղեռնի տպավորությամբ հանկարծ տուժողի դերում հայտնվեց: Նա արդեն մեղադրյալ Սողոմոն Թեհլերյանը չէր, այլ գոհի արյունոտ ուրվականը»:

Ի դեպ, «Ակօսը» մեր ուշադրությանը ներկայացնելով Վեգների՝ դատավարության վերաբերյալ այս դիտարկումը, որին Աքհանլըի շնորհիվ հաղորդակից է դառնում թուրք ընթերցողը, մեջբերում է կատարում նաև նրա մեկ այլ դիտարկումից, որտեղ նա, նկատի ունենալով դատարանում Թեհլերյանի արդարացումը, գրում է. «Այս վճիռը թուրք ժողովրդին դատապարտելու միտում չունի: Կոտորածը ոչ թե նա, այլ թուրքական իշխանություններն են իրագործել: Գերմանացի հյուպատոսներն իրենց զեկուցագրերում բազմաթիվ վկայություններ

են բերում տեղացի այն պաշտոնյաների մասին, ովքեր խուսափում էին կիրառել կոտորելու վերաբերյալ իշխանության հրամանները: Նրանք ոչ միայն թուրք ժողովրդի, այլև հայ ժողովրդի բարեկամն են»:

Մենք էլ տեղեկացնենք, որ «Թալեաթ փաշայի սպանության դատավարությունն» աշխատության թարգմանիչ Դողան Աքհանլըն գերմանաբանակ թուրք գրող է, Ալի Էրթեմի «Միություն ընդդեմ ցեղասպանության» կազմակերպության փոխնախագահը: Այլ կերպ, ՀՅ-ի ճանաչման խնդիրը նրան ամենևին խորթ չէ: Ինչ վերաբերում է «Բելգե» հրատարակչությանը, ապա դա հիմնադրել է հայտնի թուրք մտավորական Ռազրի Զարաքլուն: Ուրեմն, պրն Զարաքլուի ղեկավարությամբ գործող հրատարակչությանն առավել ևս չպետք է խորթ լինի այդ խնդիրը, ինչի միջազգային ճանաչման ուղղությամբ ջանքեր են գործադրում ինչպես Ալի Էրթեմն, այնպես էլ Դողան Աքհանլըն և Ռազրի Զարաքլուն:

28.06.2003

«ՀԱՅ ԱԶԳԻ ԱՌԱՋՆԱՇՐԹ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄՆ Է»

Լույս տեսավ Արմեն Այվազյանի նոր աշխատությունը

Օրերս Երևանում լույս տեսավ Արմեն Այվազյանի «Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի» աշխատությունը: Մատենադարանի ավագ գիտաշխատող, Հայաստանի ամերիկյան և Երևանի պետական համալսարանների քաղաքագիտության ու պատմության դասախոս Արմեն Այվազյանը բազմաթիվ մենագրությունների հեղինակ է: Դրանցից թերևս կարելի է առանձնացնել «Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը» և «Հայաստանի պատմության լուսաբանումն ամերիկյան պատմագրության մեջ» մենագրությունները, որոնք լույս են տեսել 1998-ին, նույնպես Երևանում:

Աշխատություններից առաջինը, որտեղ հեղինակը միանգամայն իրավացիորեն ղարաբաղյան հիմնահարցին մոտենում է Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից, վրիպեց գիտական, առավել ևս քաղաքական շրջանակների պատշաճ ուշադրությունից: Իսկ երկրորդը՝ բուռն հակազդեցություն առաջ բերեց ինչպես սփյուռքում, այնպես էլ Հայաստանում, թե հեղինակը հանդգնում է քննության ենթարկել մի շարք ամերիկահայ աշխարհահռչակ գիտնականների աշխատությունները: Մինչդեռ այդ գիտնականներից ոմանք, որքան էլ աշխարհահռչակ լինեն, տուրք տալով ամերիկյան պատմագրության միտումներին, խեղաթյուրել էին հայ ժողովրդի ծագումնաբանությանը,

մշակույթին, պատմությանն առնչվող կարևորագույն խնդիրները, նույնիսկ չէին խորշել կասկածի տակ դնել ՀՅ-ի հարցը:

Այլ կերպ, Այվազյանի «Հայաստանի պատմության լուսաբանումն ամերիկյան պատմագրության մեջ» աշխատությանը փոխանակ գիտական մոտեցում ցույց տալու, որպեսզի երևան հանվեն դրա առավելություններն ու թերությունները, որոշ սփյուռքահայ ու հայաստանցի գիտնականներ սկսեցին քննադատել անձամբ հեղինակին: Այսպիսով, աշխատության շուրջ գիտությանը միանգամայն անհարիր աղմուկ-աղաղակ բարձրացավ:

Ինչ վերաբերում է «Հիմնատարեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի» մենագրությանը, ապա դա հրատարակվել է Աթենքում գործող «Հայաստան» մշակույթային հասարակական կենտրոնի մեկենասությամբ: Բաղկացած է 6 գլուխներից, ունի ներածություն, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ: Ծավալը 260 էջ է:

Օրաթերթի տարողությունը թույլ չի տալիս մանրամասն անդրադառնալ աշխատության բովանդակությանը՝ քննարկելով գլուխ առ գլուխ: Պարզապես ասենք, որ դա, չհաշված մեկ-երկու թերթային հոդվածները, ՀՀ-ում եզակի է իր բնույթով: Աշխատության մեջ օգտագործվել են հայկական և օտարերկրյա բազմաթիվ աղբյուրներ, հարուստ գրականություն: Աշխատությունը քննում է Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգային գրեթե բոլոր խնդիրները, լուրջ վերլուծության է ենթարկում հայության համակարգային ճգնաժամի պատմաքաղաքակրթական և քաղաքական պատճառները, ՀՅ-ի ռազմավարական հետևանքները, նոր աշխարհակարգի առանձնահատկությունները, ՀՀ-ի աշխարհաքաղաքական դրությունը, դարաբաղյան հակամարտության կարգավորման ռազմավարական սկզբունքները, ԹՀ-ի ռազմական նոր հայեցակարգը, ՀՀ-ի պաշտպանական ռազմավարությունը և ռազմական քաղաքականությունը, ինչպես նաև Հայաստան-սփյուռք փոխհարաբերությունները:

Հատկանշական է, որ հեղինակը Հայաստանի առջև ծառայած այս կարևորագույն խնդիրներին մոտենում է ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից՝ ելակետ ընդունելով միջազգային իրադրության առանձնահատկությունները: Նրան հաջողվել է բնույթով զուտ ռազմավարական և քաղաքական խնդիրները քննարկել գիտական դիրքերից և դրանք կուռ տրամաբանությամբ վերլուծելու ու ընդհանրացնելու կարողություններ դրսևորել: Այս ամենն առանձնակի նշանակություն է հաղորդում Արմեն Այվազյանի աշխատությանը: Կարծում եմ, դա օգտակար կլինի ոչ միայն

գիտական և քաղաքական շրջանակների, այլև բոլոր նրանց համար, ովքեր ուղղակի կամ անուղղակի առնչվում են Հայաստանի ազգային անվտանգության խնդիրներին:

22.11.2005

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՐՋ ՆԵՐԿՐՈՒՄ Է ՄԵԾ ԵՂԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Դա գործնական նշանակություն ունի նաև ցեղասպանության ժառանգների և փոխհատուցելու համար

ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացը շարունակում է ծավալվել: Զուգընթաց դրան, ինքնաբերաբար օրակարգ է մտնում ցեղասպանության հետևանքների վերացման հարցը: Դրա լուծումն, ինչ խոսք, չափազանց բարդ հարց է: Սակայն, որքան էլ բարդ լինի, այդ ուղղությամբ որոշակի քայլեր արդեն կատարվում են: Ցեղասպանության ժառանգներին ապահովագրական վկայականների դիմաց վճարվող փոխհատուցումը դառնում է դրանց առանձնահատկությունը:

Ինչպես հայտնի է, ամերիկյան «Նյու Յորք լայֆ» ապահովագրական ընկերությունը համաձայնել էր 20 մլն դոլար փոխհատուցում վճարել ցեղասպանության ժառանգներին: Ամերիկյան ընկերության օրինակին է հետևել ֆրանսիական «Աքսան», որը պատրաստվում է վճարել 17 մլն դոլար: Այդ ընթացքում ցեղասպանության ժառանգները փոխհատուցման պահանջով դատական հայց են ներկայացնում գերմանական «Դոյչեբանկի» դեմ:

Ակնհայտ է, որ միջազգային ասպարեզում ցեղասպանության ճանաչումը դրա հետևանքների վերացման գլխավոր նախապայմանն է: Ինչ վերաբերում է ցեղասպանության ժառանգներին փոխհատուցում վճարելու ապահովագրական միջազգային ընկերությունների պատրաստակամությանը, ապա դա էլ տարբեր երկրների խորհրդարաններում ընդունված ճանաչման որոշումներն ամրագրելիս միաժամանակ դառնում է հետևանքների վերացման նախապայման:

Այլ կերպ, եթե փոխհատուցումը կարևոր է ինչպես ցեղասպանության ճանաչման որոշումներն ամրագրելու, այնպես էլ հետևանքների վերացման համար, ապա փոխհատուցման համար էլ կարևոր պետք է համարվի հայ ժողովրդի նյութական կորուստները հաստատող փաստաթղթերի հրապարակումը:

Թերևս այդ առումով լուրջ ներդրում է ՀՀ Ազգային արխիվի Մեծ եղեռնի 90-րդ տարելիցի առթիվ «Ես մեղադրում եմ. գործ թիվ

1.500.000» վերնագրով 2005թ. Երևանում ռուսերեն հրատարակված փաստաթղթերի ժողովածուն:

Վարուժան և Ժուլիեթ Սալաթյանների, նրանց որդիներ Արամի և Հայկի մեկենասությամբ «Մոտնի» հրատարակչությունում հրատարակված ժողովածուն կազմել է Սոնյա Միրզոյանը: 543 էջանոց այս ժողովածուն ունի հայերեն և ռուսերեն նախաբան, հավելված, ինչպես նաև անվանացանկ: Ժողովածուում ընդգրկված են ՀՀ ազգային արխիվում պահպանվող 511 վկայականներ: Դրանց զգալի մասը դեռևս 1918թ. Հովհաննես Թումանյանի անմիջական նախաձեռնությամբ Անտանտի տերությունների խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու համար հավաքել էր Առաջին աշխարհամարտի ընթացքում մեր ժողովրդի կրած վնասների չափն ուսումնասիրող քյոլոն:

Վկայականները պարունակում են տուժողի բնակության, կոտորածի երբ, որտեղ և ում կողմից իրականացման, շարժական և անշարժ գույքային ինչպես քանակական, այնպես էլ գումարային առումներով կորուստների և ընտանիքի անդամների մասին ճշգրիտ տվյալներ: Հրապարակվող փաստաթղթերի շրջանակը սահմանափակվում է Վանի, Բիթլիսի, Էրզրումի, մասամբ Խարբերդի վիլայեթներով, իսկ իրադարձությունների ժամանակագրությունը՝ հիմնականում 1914-15թթ.: Վկայականները հրապարակվել են ռուսերեն բնագրով, բոլորն անխտիր ձեռագրից են:

Ժողովածուի փաստաթղթերը կարող են որպես փաստավավերագրական նյութ օգտագործվել ՀՅ-ի պատմությունն ուսումնասիրելիս: Սա նշանակում է, որ ՀՀ Ազգային արխիվի հրատարակած փաստաթղթերի վերոհիշյալ ժողովածուն ցեղասպանության ժառանգների համար ունեցած փոխհատուցման գործնական նշանակությունից բացի ունի նաև պատմագիտական մեծ նշանակում:

13.12.2005

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՅԱՌԻԿ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Պրոֆ. Յուրի Բարսեղովի կազմած ժողովածուն ունի նաև պրակտիկ քաղաքական նշանակություն

ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացը փաստի առջև կանգնեցրեց թուրքական իշխանություններին: Գործընթացի ծավալումը կասեցնելու հրամայականով նրանք դիմեցին հակաքայլերի: Ժխտողականությունը դարձավ այդ հակաքայլերի առանձնահատկությունը: Դրա «հիմնավորմանը» ձեռնամուխ եղավ դեռևս նախորդ վարչապետ Բյուլենթ Էջևիթի օրոք «ՀՅ-ի անհիմն պնդումների» դեմ պայքարի կարգադրություն ստացած Թուրքական

պատմական ընկերությունը՝ հրատարակելով «Թուրքերի նկատմամբ հայերի իրագործած եղեռնը» թեմայով մի շարք աշխատություններ:

Այդ ընթացքում Թուրքիայում վարչապետարանին առընթեր գործող արխիվների պետական վարչությունը, դիմելով օտարերկրյա գիտնականներին, հրավիրեց նրանց, որ ծանոթանան, այսպես կոչված, ճշմարտությունը բացահայտող արխիվային փաստաթղթերին:

Արխիվների պետական վարչության հրավերը որևէ արձագանք չի ստացել: Թուրքական պատմական ընկերության հրապարակումներն ընդամենը հանգեցրել են ժխտողականության դիրքերի սպառնասը: Ցեղասպանության ճանաչման գործընթացի ծավալումն ի հայտ է բերել թուրքական հակաքայլերի սնանկությունը: Ավելին, գործընթացի ծավալմանը զուգընթաց հետզհետե օրակարգ է մտնում ցեղասպանության հետևանքների վերացման հարցը: Մեծ եղեռնի զոհերի ժառանգներին փոխհատուցում վճարելու ամերիկյան և ֆրանսիական ապահովագրական ընկերությունների պատրաստակամությամբ ընդգծվում է հարցի արդիականությունը:

Սակայն դրա միջազգայնացման համար անհրաժեշտ է ՀՅ-ի հարցում Թուրքիայի պատասխանատվության և միջազգային հանրության պարտավորությունների գիտական հիմնավորումը: Դա իր հերթին անհրաժեշտ է դարձնում, որ հիմնավորվի նաև ՀՅ-ն սոսկ 1915թ.-ով սահմանափակելու սնանկությունը: Թերևս այս ամենի առումով չափազանց լուրջ ներդրում է «Հայոց ցեղասպանությունը. Թուրքիայի պատասխանատվությունն ու միջազգային հանրության պարտավորությունները: Փաստաթղթեր և մեկնաբանություններ» վերնագրով Մոսկվայում հրատարակված ռուսերեն երկհատոր ժողովածուն:

Ռուսաստանի հայերի միության ու Մոսկվայում միջազգային իրավունքի և քաղաքագիտության հայկական ինստիտուտի համատեղ ջանքերով հրատարակված այս ժողովածուն կազմել է իրավագիտության դոկտոր, պրոֆ. Յուրի Բարսեղովը: Նա միաժամանակ ժողովածուի պատասխանատու խմբագիրն է, գրել է աշխատության առաջաբանն ու մեկնաբանությունները, իսկ վերջաբանը՝ Համաշխարհային հայկական կոնգրեսի և Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը: Աշխատության առաջին հատորը լույս է տեսել 2002թ., իսկ երկու մասից կազմված երկրորդ հատորի առաջին և երկրորդ մասերը՝ համապատասխանաբար 2003 և 2005թթ.:

Ժողովածուն բաղկացած է յոթ բաժիններից, որոնցից առաջինում ընդգրկված են ցեղասպանության համար պետությունների ու

անհատների պատասխանատվությունն ընդհանուր նորմերին և միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխան հաստատող փաստաթղթերը: Երկրորդ և երրորդ բաժիններում գետեղված են 1876-1923թթ. իրագործված կոտորածներում ինչպես թուրքերի, այնպես էլ Օսմանյան կայսրության և Թուրքիայի պատասխանատվությանն անմիջականորեն առնչվող այն բոլոր փաստաթղթերը, որոնք պաշտոնական բնույթ են կրում:

Չորրորդ բաժնում ընդգրկված են ԹՀ-ի պատասխանատվության մասին միջազգային իրավունքի և ցեղասպանության գծով փորձագետների կարծիքները, իրավաբանական մարմինների համապատասխան եզրակացություններն ու դատավճիհները: 5-րդ բաժինը նվիրված է Հայկական հարցի քաղաքական պատմությանը: 6-րդում ներառված են ՀՅ-ի միջազգային ճանաչումն արտացոլող փաստաթղթերը, իսկ 7-րդում՝ մեկնաբանությունները, որոնք, ընդգծելով ժողովածուի կարևորությունը, միաժամանակ ընդգծում են ցեղասպանության հետևանքների վերացման առումով դրա նշանակությունը:

Մեկնաբանությունների բաժնում քաղաքական գնահատական է տրվում Հայկական հարցին առնչվող միջազգային բոլոր պայմանագրերին, որոնց թվում են նաև Կարսի, Մոսկվայի և Լոզանի պայմանագրերը: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ դոկտոր, պրոֆ. Յուրի Բարսեղովի «Հայոց ցեղասպանությունը. Թուրքիայի պատասխանատվությունն ու միջազգային հանրության պարտավորությունները» ժողովածուն հայկական իրականությունում եզակի է ոչ միայն փաստաթղթերի ընտրության և դրանց մեկնաբանությունների, այլև Հայկական հարցին միջազգային իրավունքի տեսանկյունից մոտեցման և հարցին առնչվող միջազգային պայմանագրերի գնահատման առումով:

Կարծում ենք, ժողովածուի թարգմանությունը անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն, որպես լուրջ ներդրում ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի հետագա ծավալմանը նպաստելիս միաժամանակ կնպաստի ցեղասպանության հետևանքների վերացման նախադրյալների ստեղծմանը: Թերևս դրանով միջազգային բնույթ կստանա նաև ցեղասպանության հետևանքների վերացման հարցը, իսկ դրա համադրումը միջազգային ճանաչման հարցի հետ զգալիորեն կսահմանափակի Մեծ եղեռնի պատասխանատվությունից խուսափելու Թուրքիայի հնարավորությունները: Այս հանգամանքը, բացի գիտականից, պրակտիկ նշանակություն է հաղորդում վերոհիշյալ ժողովածուին՝ դարձնելով բացառիկ:

24.12.2005

ՍՏԱՄԱԲՈՒՆՈՒՄ ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՎԱՀԱԳՆ ՏՍՏՐՅԱՆԻ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Դա յուրաքանակ մարտահրավեր է Հայոց ցեղասպանության թուրքական պաշտոնական թեզին

Դեկտեմբերի 13-ին «Ազգն» անդրադառնալով իրավագիտության դոկտոր, պրոֆ. Յուրի Բարսեղովի «Հայոց ցեղասպանությունը. Թուրքիայի պատասխանատվությունն ու միջազգային հանրության պարտավորությունները» վերնագրով Մոսկվայում հրատարակված երկհատոր աշխատությանը, մասնակիորեն անդրադարձել էր նաև Թուրքական պատմական ընկերության գործունեությանը: Նշվել է, որ դրա հիմքում ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի կասեցումն է, դեռևս նախորդ վարչապետ Բյուլենթ Էջևիթի օրոք «հայերի ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարի» կարգադրություն ստացած այս ընկերությունը հրատարակում է «թուրքերի նկատմամբ հայերի իրագործած եղեռնի» թեմայով տարբեր գրքեր:

Պայքարի հարցում ընկերությանն աջակցում են Էրզրումի համալսարանի գլխավորությամբ բարձրագույն ուսումնական մի շարք հաստատություններ և հատկապես «Հայերի անհիմն պնդումների դեմ պայքարի ֆեդերացիան»՝ ASEF-ը: Եթե ընկերությունը գրքեր է հրատարակում և Էրզրումի համալսարանի «թուրքերի զանգվածային գերեզմաններ» է հայտնաբերում, ապա մյուսները ֆեդերացիայի գլխավորությամբ կազմակերպում են պետական թեզին համապատասխանող այսպես կոչված գիտաժողովներ:

Երբ թուրքական պետական թեզի անվերջ «հիմնավորումը» հանգեցնում է ժխտողականության դիրքերի սպառնանք, միանգամայն անխուսափելի է դառնում հակաթեզերի առաջադրումը, ընդ որում հենց երկրի գիտական հասարակական շրջանակներում: Այսպիսով թեզի հետ վիճարկվում է նաև դրա «հիմնավորմանը» լծված հաստատությունների գործունեությունը:

Վիճարկման առումով ուշագրավ էր այս տարվա սեպտեմբերին Ստամբուլի «Բիլգի» համալսարանում «Օսմանյան հայերը կայսրության անկման շրջանում» թեմայով հրավիրված աղմկահարույց գիտաժողովը: «Ազգը» ժամանակին արձագանքել էր դրա աշխատանքներին՝ նշելով, որ գիտաժողովի շուրջը ծավալվող բանավեճերը նպաստել են մի շարք թուրք հեղինակների պաշտոնական թեզին հակասող հոդվածների հրատարակմանը:

Չպետք է սակայն մոռանալ, որ մինչ գիտաժողովը, որի հրավիրմանն է վերագրվում Հայկական հարցի վրա դրված տաքուի վերացու-

մը Թուրքիայում, առանձին թուրք գործիչներ իրենց անձնուրաց գործունեությամբ ստեղծել էին պետական թեզի վիճարկման անհրաժեշտ բոլոր նախադրյալները: Միաժամանակ նրանք հրատարակել էին ՀՅ-ի մասին ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում լույս տեսած աշխատությունները՝ թերևս դրանով էլ նպաստելով հասարակության իրազեկմանը: Այդ գործիչների մեջ առանձնակի տեղ ունի հայտնի իրավապաշտպան, հրապարակախոս և հրատարակիչ Ռազրի Զարաբյուր: Շնորհիվ նրա ջանքերի միայն 2005թ. «Բելգե» հրատարակչությունը Ստամբուլում թուրքերեն հրատարակեց բան.գ.դ. Վերժինե Սվազյանի «ՀՅ-ն և պատմական հիշողությունն» ու «ՀՅ-ն թուրքական աղբյուրներում» վերնագրով դոկտ., պրոֆ. Վահագն Տատրյանի հոդվածների ժողովածուի երկրորդ հատորը, որի առաջին հատորը հրատարակվել էր 2004թ.-ին:

Ի դեպ, 2005թ.-ին հետևելով Զարաբյուրի «Բելգե» հրատարակչության օրինակին, «Փենջերե» հրատարակչությունն էլ Ստամբուլում թարգմանաբար հրատարակել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ., պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն. Հայասպանություն: Պատճառները, նպատակները, հետևանքները» աշխատությունը, որի բնօրինակը 2002թ. լույս էր տեսել Երևանում:

Տատրյանի ժողովածուն կազմել է ինքը՝ Ռազրի Զարաբյուր: Դա ունի նախաբան, վերջաբան և հավելված: 384 էջանոց աշխատությունն ամփոփել է սփյուռքահայ գիտնականի տարբեր ժամանակներում հրապարակված 7 հոդվածները: Դրանք առնչվում են ՀՅ-ի թուրքական աղբյուրներին, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայերին բնաջնջելու որոշումը հաստատող օսմանյան փաստաթղթերին, դրանց խեղաթյուրման թուրք գիտնականների փորձերին, թուրքական ժխտողականությանը, հայերի ու հրեաների ցեղասպանությունների համեմատական նմանություններին և տարբերություններին, ցեղասպանությանը զոհ դարձած հայ երեխաներին, երիտթուրքերի գաղտնի խորհրդակցությանը, որտեղ ընդունվել էր հայերին բնաջնջելու մասին անգլիական աղբյուրներում «10 պատվիրան» կոչվող որոշումը, որը պարունակում էր որոշման իրականացումն ապահովող 10 հրահանգներ պետական իշխանության մարմիններին:

Հոդվածների ընտրությունը որևէ կասկած չի թողնում ընթերցողին, որ ՀՅ-ն եղել է պետականորեն ծրագրված, իսկ հաջորդականությունը հստակ պատկերացում է տալիս բնաջնջման հայ ժողովրդի համար կործանարար հետևանքների մասին: Սա յուրատեսակ մարտահրավեր է թուրքական պաշտոնական թեզին, և դա նետում է հենց Զարաբյուրն, որովհետև ինքն է ընտրել պրոֆ. Տատրյանի հոդվածներն ու որոշել դրանց տեղադրման հաջորդականությունը ժողովածուում:

14.07.2006

ՀԱՍԱՆ ՎԱՍՖԻԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՏ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԸ

Հայերի տեղահանության մասին նրա հուշերի հրատարակումը լուրջ հարված է թուրքական ժխտողականությանը

Որքան ծավալվում է ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացը, ԹՀ-ի պաշտոնական շրջանակներն այնքան ամուր են կառչում ժխտողականությունից և հարցը վիճարկման ոլորտ ներքաշելու համար անընդմեջ կրկնում են համատեղ հանձնաժողով ստեղծելու, արխիվները փոխադարձաբար բացելու պետական առաջարկները: Նրանց խնդիրը, ինչ խոսք, արխիվները չեն, ոչ էլ հարցի ուսումնասիրության անհրաժեշտությունը, այլ Ցեղասպանության ճանաչման գործընթացի կասեցումն է ու հարցի նկատմամբ թուրքական հասարակությունում առաջացած հետաքրքրությունների սահմանափակումը:

Ակնհայտ է, որ մշտապես վերարձարձման պայմաններում Ցեղասպանության հարցը մնում է երկրի օրակարգում, իսկ դա նախադրյալներ է ստեղծում, որ վերաիմաստավորվեն դեպքերի ժամանակակից թուրք պետական գործիչների այն աշխատությունները, որոնցում հեղինակները հպարտությամբ են արձանագրում իրենց մասնակցությունը հայերի բնաջնջմանը կամ դատապարտելու համար «Իթթիհադ վե Թերաքքիին», վկայում են բնաջնջման փաստերի մասին:

Այս գործիչների մեջ թերևս առանձնակի տեղ ունի Հասան Վասֆին, որը կովկասյան ծագման պատճառով հասարակությանը հայտնի է եղել «Չերքեզ Հասան» մականունով: Իթթիհադական ընդդիմադիր ճամբարում հայտնված այս գործչին Ջեմալ փաշան 1914թ., որպես քարտուղար նախ աշխատանքի է տեղավորել իր գլխավորած ծովային նախարարությունում, ապա կանչել է Սիրիա և նշանակել «հայ տեղահանվածների տեսուչ»: Առաջին Համաշխարհային պատերազմի ավարտին Հասան Վասֆին վերադարձել է Ստամբուլ: 1919թ. նա, հրապարակելով հայերի տեղահանության մասին իր հուշերն ու նամակները «Ալեմդար» օրաթերթում, որից ֆրանսերեն թարգմանությամբ արտատպել է «Ռենեսանս» թերթը, սկսել է մերկացնել իթթիհադականների հայաջինջ քաղաքականությունը:

Չնայած «Իթթիհադ վե Թերաքքիի» հետ սուր հակասություններին, քեմալականները «Ալեմդարի» էջերում «թուրքերի դեմ հայերի օգտին» հոդվածների շարք գրելու համար սպառնացել են ոչնչացնել Հասան Վասֆին: Թեև վերջինս հրաժարվել է հուշերի հետագա շարադրությունից, սակայն խուսափելու համար քեմալականների

հաշվեհարդարից նախ փախել է Հունաստան, որտեղից էլ ստիպված անցել Բուլղարիա:

20-ականթթ. վերջին վերադառնալով Ստամբուլ, Հասան Վասֆին հրատարակել է մի շարք աշխատություններ իթթիհադականների հանցավոր գործունեության մասին: Դրանց մեջ ՀՅ-ի լուսաբանման տեսակետից կարևորագույնը նրա «Տեղահանություն և ոչնչացում. հայերի տեղահանության իրականությունը» վերնագրով 1915թ. «Ալեմդարում» լույս տեսած նամակն ու անավարտ հուշերն են:

Նամակում հեղինակը պահանջում է հայերի «տեղահանության» պետական որոշումը հայտարարել «հայ ժողովրդի ոչնչացման» որոշում, ընդգծում է, որ դա «ընդունել է Իթթիհադ վե Թերաքքիի հրոսակախումբը», երևան է հանում տեղահանությունը «ուազմական անհրաժեշտությամբ» պայմանավորելու սնանկությունը և հարցնում, թե «ի՞նչ իրավունքով է կառավարությունը բռնատիրանում իր հպատակության տակ գտնվող որևէ անձի տանը, ընտանիքին, ունեցվածքին և դրամին», ավելացնելով. «Եթե կան մարդիկ, որոնք պաշտպանել են հայերին տեղահանությունից, ոչնչացումից և կոտորածից, նրանց գործելակերպն ու գործողությունները, ելնում էին անձնական խիզախությունից, մարդասիրությունից և խղճից»:

Ինչ վերաբերում է Հասան Վասֆիի ցեղասպանության վկայության բնույթ կրող հուշերին, ապա Ջեմալ փաշայի հետ նրա անձնական մտերմությունն ու Սիրիայում վարած «հայ տեղահանվածների տեսուչի» պաշտոնը ոչ միայն հիմնավորում են դրանք, այլև պաշտոնական բնույթ են հաղորդում հիմնավորումներին: Այս ամենին մենք ծանոթանում ենք շնորհիվ ՀՀ ԱԳՆ-ի խորհրդական, պ.գ.դ. Արսեն Ավագյանի «Հասան Ամջա. Շատ լավ, հարյուր հազարավոր հայերին ո՞վ սպանեց: Տեղահանություն և ոչնչացում» աշխատության, որը 2006թ. երևանում հրատարակել է ՀՀ ԳԱԱ ՀՅ-ի թանգարան-ինստիտուտը, խմբագրությամբ Լ. Ա. Բարսեղյանի:

60 էջանոց այս գրքում բացի հայերի տեղահանության մասին Հասան Վասֆիի նամակից ու հուշերից, զետեղված են նաև Ահմեդ Քադրիի «Դահիճների մասին», «Տիրան Քելեկյան էֆենդիի դրությունը», «Ձոհրապ և Վարդգես էֆենդիները Դիարբեքրի ճանապարհին» վերնագրերով 1918-1919թթ. նույնպես Ալեմդարում հրատարակված վկայությունները: Բնագրից թարգմանված այս նյութերը աշխատության հեղինակ Ա. Ավագյանը հագեցրել է բովանդակալից ներածականով և արժեքավոր ծանոթագրերով, որոնք հայ մասնագետներին հստակ պատկերացում են տալիս, որ

ՀՅ-ի փաստը պաշտոնապես հաստատող դեպքերի ժամանակակից թուրք պետական գործիչների խոստովանությունները չեն սահմանափակվում Հասան Վասֆիի վերոհիշյալ հուշերով:

Հետևաբար, Հասան Վասֆիի նամակի և հուշերի հայերեն հրատարակումը կարևոր է ՀՅ-ի միջազգային ճանաչման առումով, որովհետև թուրքական ժխտողականությանը Ցեղասպանության մասնակից թուրք պետական գործիչների խոստովանություններով հակադրվելու հնարավորություն է տալիս մեր մասնագետներին: Այդ դեպքում արդեն վիճարկման ոլորտ կներքաշվի ոչ թե Հայոց ցեղասպանությունը, այլ ցեղասպանության ժխտողականությունը: Քանի որ ժխտողականության վիճարկումը չի կարող ընդունելի լինել Թուրքիայի համար, ուստի նա ստիպված կվերանայի Հայաստանին հասցեագրած համատեղ հանձնաժողով ստեղծելու իր առաջարկը, իսկ դրանով անիմաստ կդառնա առաջարկի շահարկումը միջազգային ասպարեզում:

09.01.2007

Ֆեթհիթե Չեթին և Ռ. Միսն Ներհասնում է Մեծ Մոթ ԳԱՌՆԱԿՄԿԻԾ ԱՊՐՈՒՄՆԵՐԸ

Այլ նրա հեղ վերապրում է Մեծ եղեռնի բոլոր սարսափները

2005թ. սեպտեմբերին Ստամբուլի «Բիլգի» համալսարանում հրավիրվեց «Օսմանյան հայերը կայսրության անկման շրջանում» թեմայով գիտաժողովը: Թեև կազմակերպիչները հրավիրել էին այն թուրք գիտնականներին, որոնք դատապարտել են ՀՅ-ի թուրքական պաշտոնական թեզը, այնուամենայնիվ զեկուցումներում ցեղասպանություն բառը չէր հնչել: Մինչ թուրքական մամուլը գիտաժողովի հրավիրումը հանգեցնում էր Թուրքիայում ՀՅ-ի հարցի վրա դրված տարւի վերացմանը, մտավորականներն ընդգծեցին դրա կարևորությունը 1915թ. իրադարձությունների առնչությամբ թուրք հասարակությանն իրազեկելու համար:

Մինչդեռ այդ հասարակությունը եղել է հայերի բնաջնջման ականատեսը, բնաջնջումն իրագործվել է թուրք զանգվածների ակտիվ մասնակցությամբ, Թուրքիայում ցեղասպանությունից մազապործներին առ այսօր անվանում են թրի կամ կացնի ավելցուկ, իսկ 1915թ.-ը՝ կոտորածի տարի: Այսինքն՝ թուրք հասարակությունն իրազեկման կարիքը բոլորովին չունի: Քանի որ անհնար է վերացնել ցեղասպանության վրա դրված տարուն՝ խուսափելով ցեղասպանություն արտահայտության օգտագործումից, ուստի գիտաժողովի գլխավոր արդյունքը պետք էր համարել

Թուրքիայում հայերի կոտորածների հրապարակավ քննարկումն ու թուրքական ժխտողականության քննադատումը, որոնք տաբուի վերացման անհրաժեշտ նախապայմաններն են:

«Բիլգի» համալսարանում հրավիրված գիտաժողովն էլ ուղղակի արդյունքն էր այն թուրք մտավորականների, որոնք Ռազրի Ջարաքուլի և նրա հանգուցյալ տիկնոջ՝ Այշե Նուրի գլխավորությամբ Թուրքիայում թարգմանաբար հրատարակել են օտարերկրյա, սփյուռքահայ և հայաստանցի մասնագետների Մեծ եղեռնին նվիրված աշխատությունները, ինչպես նաև ցեղասպանության անմիջական զոհերի հուշերը:

Այդ զոհերի մեջ զգալի թիվ են կազմում հայ երեխաները, որոնց ծնողներից խլել և մահմեդականացրել են: Այդպիսի երեխաներից էր էլագիկի Բալու (Մադեն) գավառի Հավալ (Հաբաբ) գյուղում Կատարյան ընտանիքի դուստր Հրանուշը, որին տեղահանությունից առաջ զինվորները խլում են մորից, դառնում է Սեհեր և մեծանում թուրք ընտանիքում: Թեև ամուսնանում, երեխաների ու թոռների տեր է դառնում, իր թոռնուհու՝ Ֆեթիյե Չեթինի դիպուկ արտահայտությամբ՝ «մոռանում է իր լեզուն և կրոնը, բայց երբեք չի մոռանում իր գյուղը, մորը, մերձավորներին և նրանց միանալու հույսով ապրում է 95 տարի»:

Տատիկի մահից հետո ԱՄՆ-ում, շնորհիվ երջանկահիշատակ Մեսրոպ արք. Աշճյանի, նրա հարազատներին հանդիպում է Ֆեթիյե Չեթինը և որոշում է գրել տատիկի մասին: Սեհեր տատիկի հայկական ծագման մասին Ֆեթիյե Չեթինը իմացել է հասուն տարիքում միայն, երբ տատիկը ընտանիքի մյուս անդամներից գաղտնի նրան է պատմել իր դառնակակիժ պատմությունը, որը նաև Մեծ եղեռնի խտացված պատմությունն է: Մինչ դրա բովանդակությանն անդրադառնալը, նշենք, որ Չեթինի գիրքը լույս է տեսել 2004թ. Ստամբուլում և ունեցել է լայն արձագանք: Նրա օրինակով երկրում հրապարակվել են այլ գրքեր, բազմաթիվ հոդվածներ, որոնց հեղինակները նույնպես խոստովանել են, որ իրենց մեծ հայրը կամ մայրը եղել է հայ:

Չեթինի գիրքը վերջերս Ռուբեն Մելքոնյանի թարգմանությամբ «Մեծ մայրս» վերնագրով հրատարակվեց Երևանում: Երևանյան հրատարակչությանն օժանդակել է Հայաստանի հանրապետական կուսակցությունը: Հարկ է սակայն նշել, որ մինչ այդ նույն գիրքը Հալեպում «Մեծ մայրիկս» վերնագրով հրատարակել էր Բերիո հայոց թեմը, որը թարգմանել է Սալբի Գասպարյանը, զետեղելով միաժամանակ գրքում Ֆեթիյե Չեթինի կենսագրական հակիրճ

տվյալներ: Թեև երևանյան հրատարակությունում չի նշվել Սալբի Գասպարյանի թարգմանության մասին, այնուամենայնիվ, այս երկու թարգմանություններն էլ ողջունելի են:

Ըստ Ֆեթիյե Չեթինին իր տատիկի՝ Հրանուշ Կատարյանի պատմածների, երբ եղանակն սկսում է տաքանալ, հանկարծ գյուղ են ներխուժում թուրք զինվորները: Հրանուշն այդ տարի փոխադրվում է հայկական դպրոցի չորրորդ դասարան: Չինվորները գյուղի բնակիչներին հավաքում են հրապարակում, տղամարդկանց առանձնացնում, զույգ-զույգ իրար են կապում, և բոլորին քշում-տանում են: Գյուղում մնում են միայն կանայք և երեխաները: Նույն օրը երեկոյան, սակայն, թուրք հրոսակն առևանգում է երիտասարդ կանանց ու աղջիկներին, իսկ մնացածներին զինվորները քշում են Բալու, հավաքում եկեղեցու բակում:

Հրանուշն ընկերուհու միջոցով իմանում է, թե ինչպես տղամարդկանց մորթում և լցնում են գետը: Մինչ բակում հավաքվածները, հրամանի համաձայն, գյուղ են վերադառնում, հարևան գյուղերից թուրքերը թալանում են նրանց տները: Այնուհետև զինվորներն արձակում են գաղթի հրամանը: Ճանապարհին սովից, ծարավից, հոգնածությունից մեռնում են մեծ թվով մանուկներ, իսկ քարավանից հետ մնացածներին էլ սպանում են թուրք զինվորները: Քարավանն ուժասպառ հասնում է Չերմիք: Այդ ընթացքում ճանապարհի երկայնքով շարված չերմիքցիները ոսկեղենի և դրամի դիմաց հաց ու ջուր են առաջարկում նրանց, ովքեր տեղահանության դեռևս առաջին օրը զրկվել էին ոչ միայն տուն ու տեղից, ունեցվածքից, այլև հորից, ամուսնուց և բոլոր հարազատներից:

Հենց Չերմիքում էլ Հրանուշին, բազմաթիվ այլ երեխաների պես, խլում են մոր ձեռքից: Քանի որ դա արվում էր հայ երեխաներին որպես ծառա թուրք ընտանիքներին բաժանելու նպատակով, ուստի զինվորներն ընտրում են որոշակի տարիքի երեխաների, որպեսզի նրանք մանուկների պես խնամքի կարիք չունենան: Այդ է պատճառը, որ Հրանուշի հորեղբոր երկու աղջիկներին, որոնք թերևս փոքր էին, կամուրջն անցնելիս՝ քայլել անկարող լինելու համար ճարահատյալ ջուրն է նետում տատիկը: Աղջիկներից մեկն իսկույն ջրասույզ է լինում, իսկ մյուսին, որը գլուխը դուրս է հանել ջրից, գետի մեջ է մխրճում տատը: Փոքրիկը մեկ անգամ ևս գլուխը բարձրացնում է, ապա ջուրը նետված տատիկի հետ անհետանում գետում:

Եթե ամփոփենք Հրանուշի պատմածները, ապա ակնհայտ կդառնա, որ Մեծ եղեռնը իրագործվել է նախքան տեղահանությունը: Դրա նախօրյակին թուրք զինվորներն առանձնացնելով հայ

տղամարդկանց կանանցից, սպանել էին: Բացառապես կանանցից և երեխաներից կազմված բնակիչներին դուրս էին բերել իրենց բնակավայրերից, որպեսզի թալանի հնարավորություն տան թուրք գյուղացիներին, երիտասարդ կանանց և աղջիկներին առևանգել էին, երեխաներին խլել իրենց մայրերից: Այսինքն՝ արյունաքամ էին արել, ապա և տեղահանել՝ սպանելով նաև ճանապարհին նրանց, ովքեր հետ էին մնում քարավանից:

«Ես, գրում է Չեթինը, չէի հավատա այս ամենին, եթե պատմողը մեծ մայրս չլիներ»: Ֆեթիյե Չեթինն անմիջականությամբ և հուզականությամբ ոչ միայն կարողանում է ներկայացնել իր տատիկի պատմածները, այլև նրա հետ վերապրում է Մեծ եղեռնի բոլոր սարսափները: Մզկիթում մեծ մոր թաղմանը, երբ մոլլան հարցնում է հուղարկավորության մասնակիցներին, թե իրենք բախշում են հանգուցյալին արած լավությունները՝ ներելով նրա մեղքերը, թոռնուհի Չեթինը չի դիմանում՝ բացակայելով. «Թող նա իր արածները բախշի ձեզ, թող նա ների ձեզ, մեզ և բոլորիս»:

Այնուհետև Ֆեթիյե Չեթինը գրում է. «Լսածներս բոլորովին չէին համապատասխանում իմ իմացածներին: Աչքերիս առջև եկեղեցու բակում հավաքված բազմությունն էր, երեխաների սևեռուն բիբերը, ջուրը նետված մանուկները, ապրելու բնագոյով նրանց ջրից հանած փոքրիկ գլուխները և մորից հափշտակված Հրանուշը: «Փառավոր անցյալին» նվիրված բանաստեղծությունները, որոնք դպրոցում սրտիս խորքից եկած բացականչություններով ես էի արտասանում, կտոր-կտոր էին լինում, բախվելով երեխաների սարսափից բացված աչքերին, ջրերում խեղդվող մանուկների գլուխներին և օրերով կասկարմիր հոսած գետի ջրերին»:

17.07.2007

«ԲԵԼԳԵ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՅՍ Է ԸՆԾԱՅԵԼ ՎԱՀԱԳՆ ՏՍՏՐՅԱՆԻ ՆՈՐ ԳԻՐՔԸ

Հրանտ Դինքի հիշարարկին նվիրված այս գիրքը հայ պրոֆեսորի՝

Ստամբուլում թարգմանաբար հրատարակված երրորդ աշխատությունն է:

Մայիսի սկզբներին, ինչպես մայիսի 23-ի համարում նշում է Փարիզում լույս տեսնող «Յառաջ» օրաթերթը, հայտնի թուրք հասարակական գործիչ Ռազլի Զարաբուլուի «Բելգե» հրատարակչությունը թուրքերեն թարգմանությամբ լույս է ընծայել պրոֆ. Վահագն Տատրյանի «ՀՅ-ն եղյակ դաշինքի պետական արխիվային վավերագրերում» աշխատությունը: Սա վաստակաշատ հայ գրտնականի՝ Ստամբուլում

թարգմանաբար հրատարակված երրորդ աշխատությունն է, որը նվիրվում է հանգուցյալ Հրանտ Դինքի հիշատակին:

411 էջանոց այս գիրքը, որը գրվել է Օսմանյան կայսրության հետ եղյակ դաշինքի մաս կազմող Գերմանիայի և Ավտրո-Հունգարիայի արխիվային փաստաթղթերի հիման վրա, կազմված է 8 գլուխներից, ունի 3 հավելվածներ: Գրքի «ՀՅ-ի մասին Գերմանիայի արտաքին գործոց նախարարության արխիվի պաշտոնական վավերագրերը» վերնագրով առաջին գլխում, որը պրոֆ. Տատրյանը պատրաստել է գերմանացի պատմաբան Վոլֆգանգ Գուեթի կազմած ժողովածուի համար, երևան է հանում ինչպես 1915թ. ցեղասպանության, այնպես էլ 1894-96թթ. կոտորածների և 1909թ. Ադանայի ջարդերի առնչությամբ թուրքերին քաջալերելու Վիլիելմ կայսրի չարանենգ քաղաքականությունը:

Երկրորդ գլուխը կոչվում է «ՀՅ-ի մանրամասն փաստարկները գերմանական և ավստրիական պետական արխիվներում»: Դրանում հեղինակն ընդգրկել է 5 դեսպանների, 3 հավատարմատարների, ինչպես նաև Գերմանիայի բարձրաստիճան 11 սպաների տեղեկագրերը, որոնք փաստում են համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում բնակվող 2,5 միլիոն հայերից 1,5 միլիոնի բնաջնջումը:

Երրորդ գլուխը կրում է «ՀՅ-ի մեջ գերմանական մեղսակցության փաստերը», 4-րդը՝ «1894թ.-ի Սասունի կոտորածը», 5-րդը՝ «1909թ. Ադանայի ողջակիզման հանգամանքները» վերնագիրը: «Հայկական ցեղասպանությունը Կեսարիո մարզում» վերնագրով 6-րդ գլխում թուրք դահիճների գազանային վայրագությունները վավերագրերով հաստատելիս, պրոֆ. Տատրյանը միաժամանակ անդրադառնում է կառավարիչ Ահմեդ Ռիֆաթի պատերազմի ավարտին Կեսարիայում կազմած դատական առյուծի և այն ամբաստագրին, որտեղ նա բոլոր ոճրագործներին մեղադրել է քրեական հանցագործության մեջ: Սակայն հունական զորքերի դեմ քեմալականների հաղթանակն ի չիք է դարձրել Ռիֆաթի արդարամիտ այս ձեռնարկումը:

«ՀՅ-ն և դրա կանխումը կամ պատժումը խոչընդոտող իրավական և քաղաքական պայմանները» վերնագրով 7-րդ գլխում հեղինակը Մեծ եղեռնին մոտենում է ՄԱԿ-ի Ցեղասպանության կանխարգելման և պատժման կոնվենցիայի տեսանկյունից, իսկ ութերորդում, որը կոչվում է «ՀՅ-ն և «հավասարակշռված» վերլուծականի պահանջի տակ քողարկված միտումները» վերնագիրը, նա պատասխանում է Ռոնալդ Սյունիին:

Պրոֆ. Տատրյանն այս գլխում, ցույց տալու համար Սյունիի տեսակետների սնանկությունը, երևան է հանում ջարդարար քաղաքականության պատմական հետևողականությունն Օսմանյան Թուրքիայում, բացահայտում է սուլթան Աբդուլ Համիդի և իթթիհատականների խորհրդապահական կապերը, մատնացույց է անում հայերին իսպառ բնաջնջելու երիտթուրքական կառավարության որոշումն ու դրա իրագործման գլխավոր հանձնառու «հատուկ կազմակերպությանը»: Նա դրանք հակադրում է հայկական ջարդերին տարերային բնույթ հաղորդելու միջոցով ՀՅ-ի պետականորեն ծրագրումը հերքելիս, նաև ցեղասպանության փաստը հերքելու Սյունիի նպատակամղված թուրքամետ փորձերին:

18.09.2007

ՆՈՐ ԳԻՐՔ ԹԱՒԵԱԹԻ, ԷՆՎԵՐԻ ԵՎ ՋԵՄԱԼԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հեղինակել է Թուրքական պատմական ընկերության հայկական ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար պրոֆ. Օզդեմիրը

Թուրքական պատմական ընկերության հայկական ուսումնասիրությունների կենտրոնի ղեկավար պրոֆ. Հիքմեթ Օզդեմիրը ի հայտ է բերել այսպես կոչված պատմաբանների ցնցող վավերագրեր: Նա այդ վավերագրերը, ինչպես սեպտեմբերի 17-ի համարում նշում է «Վաթան» թերթը, հրապարակել է «Երեք երիտթուրքերի մահը» վերնագրով աշխատությունում:

Խնդրո առարկա երիտթուրքերը հայ ազգի դահիճներից Թալեաթ փաշան, Էնվերը և Ջեմալն են: Իսկ պրոֆ. Օզդեմիրի «հայտնաբերած» վավերագրերն ապացուցում են, որ սպանությունը կատարել են հայ վրիժառուները: Ահա թե ինչ է գրում Օզդեմիրի օրերս լույս տեսած գրքի մասին «Վաթան» թերթը. «Թուրքիայի քաղաքական պատմության գծով կարևոր ուսումնասիրությունների հեղինակ Օզդեմիրը վերջին գրքում «առ այսօր անհայտ» փաստաթղթերի հիման վրա լույս է սփռում Թալեաթ փաշայի Գերմանիայում, Էնվեր փաշայի Տաջիկստանում և Ջեմալ փաշայի Թբիլիսիում կատարված սպանությունների վրա: Իթթիհադ վե թերաքքի կուսակցությունը որպես քաղաքական դպրոց բնութագրող Օզդեմիրը միաժամանակ ցույց է տալիս, որ դրա գործունեությունը «հայրենասիրական շարժման» բնույթ էր կրում: Կուսակցության առաջնորդները Բալկանյան պատերազմում, Լիբիայում և Առաջին համաշխարհային պատերազմում առանց երկմտելու իրենց կյանքը նվիրաբերել էին հայրենիքին:

Նվիրաբերության ճանապարհին ճակատագիրը նրանց դարձրեց վրիժառուության նպատակով իրագործված սպանությունների զոհը»:

Գրքում հեղինակը մեջբերել է «Հորիզոն» հանդեսից, որտեղ նշվում է ծագումով արցախցի Հակոբ Մելքումյանի հետևյալ վկայությունը. «Մատախուղի պատճառով կարողացանք աննկատ մոտենալ թշնամուն: Իմանալով, որ Էնվերն իր թիկնազորով այնտեղ է, ուրախացա: Սարիղամիշում նրան ձեռքից բաց էի թողել: Այս անգամ այդպիսի հնարավորություն չէի տալու: Երբ մեր սրերը փայլատակում էին այն տան պատուհանների առջև, որտեղ թաքնվել էր Էնվերը, նա դեռևս անկողնում էր: Չհասցրեց հագնվել, ոտաբոբիկ, ծիով փախուստի դիմեց: Շուրջ 30 կմ հետապնդելով նրան պաշարեցինք Չաղան դշլաղի մոտակայքում: Արյունահեղ կռվի ընթացքում մեզ հաջողվեց սվիններով սպանել Էնվերին և ոչնչացնել նրա վավազակախմբին»:

Հիքմեթ Օզդեմիրի մեջբերած մեկ այլ վկայության համաձայն, Տաջիկստանում 1922-ի օգոստոսի 5-ին, մզկիթից դուրս գալու պահին, Էնվերին սպանել է նույնպես արցախցի Սարուխանը, որը ծառայում էր Մելքումյանի գնդում:

Օզդեմիրի գիրքը ձեռքի տակ չունենք: Պարզապես ասենք, որ մինչ նա Թալեաթի, Էնվերի, Ջեմալի պես դահիճներին կարեկցելու միջոցով իթթիհադականների գովքն է անում, Թուրքիայի հասարակական, քաղաքական շրջանակներում անընդմեջ վերարծարծվում է հուլիսի 22-ի խորհրդարանական ընտրություններում ջախջախիչ պարտություն կրած Ժողովրդահանրապետական կուսակցության իթթիհադական ծագումը, որի հիման վրա ստեղծվել են ընդդիմադիր մյուս կուսակցությունները:

Թուրքական կայքէջերը լրացնում են այս շրջանակներին, ընդգծելով, որ Իթթիհադ վե թերաքքիի հենքի վրա ստեղծված Ժողովրդահանրապետական կուսակցությունը նույնպես «ոյնմենների» նախաձեռնությունն է, կուսակցություններից առաջինը հանգեցրել է Օսմանյան կայսրության կործանմանը, իսկ երկրորդը՝ հրեական ծագումով «երջանիկ փոքրամասնության» գերիշխանության թուրք ազգի վրա:

Այլ կերպ՝ Օզդեմիրի գիրքը, որտեղ իթթիհադականների գովքն է արվում, հագիվ թե նպատակին ծառայի: Ինչ վերաբերում է նրա ի հայտ բերած փաստաթղթերին, ապա Թալեաթի հետ նաև Էնվերի և Ջեմալի սպանությունը հայերին վերագրելու համար դրանց կարիքը ամենևին չկար, որովհետև վրիժառուների ինքնությունը գաղտնիք չէր ոչ միայն հայ պատմագրության մեջ:

10.05.2008

**«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ, ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ»
ՎԵՐՆԱԳՐՈՎ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԿԱՐԱՅՈՒՄ**

Դրա հրատարակումը թուրքական ժխտողականությունը հիմնավորելու հերթական փորձ է

Օրերս Անկարայում գործող ԵՌՈՒԿ-ի ՀՀ-ն հրատարակել է «Հայկական հարց, հիմնարար գիտելիքներ և վավերագրեր» վերնագրով ծավալուն աշխատությունը: 440 էջանոց աշխատության նախաբանը գրել է ինստիտուտի տնօրեն, նախկին դեսպան Օմեր Էնգին Լյութեմը: Դա ունի «Հայկական հարցի պատմական ընդգրկումը», «Հայկական հարցի իրավաբանական ծավալները», «Հայկական հարցի հոգեբանական և սոցիոլոգիական առանձնահատկությունները», ինչպես նաև «Թուրքիայի և Ադրբեջանի խնդիրները Հայաստանի հետ» վերնագրված հինգ առանձին գլուխներ:

Աշխատության հավելվածը ներառում է 71 վավերագրերի ամբողջական տեքստը, որոնց թվում են «Օսմանյան կայսրությունում հայերի ապստամբություններին», Սևրի, Կարսի, Լոզանի պայմանագրերին, «հայկական» ահաբեկչության և ահաբեկիչների զոհը դարձած թուրք պետական ծառայողներին առնչվող նյութեր, այդ թվում նաև՝ ԵԽ-ի, տարբեր երկրների խորհրդարանների ՀՅ-ի ճանաչման որոշումները, ԱՄՆ նախագահների ապրիլի 24-ի ուղերձը, ճանաչման առնչությամբ Հռոմի պապի և պետության ղեկավարների ելույթներն ու Լեոնային Ղարաբաղի առնչությամբ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի և «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության ընդունած որոշումները:

Ի դեպ, հավելվածում ներառված Յեղասպանության ճանաչման բոլոր որոշումները, դրա առնչությամբ կատարված ելույթներն ու հայտարարությունները գրքում ներկայացված են անգլերեն: Գրքին կցված են նաև 6 քարտեզներ, որոնցից 3-ը կազմվել են ըստ Սայգ-Պիկոյի, Փարիզի հաշտության կոնֆերանսի և Սևրի պայմանագրերի: Իսկ մյուսները 1945-ին ԽՍՀՄ-ի Թուրքիային ներկայացրած հողային պահանջի աշխարհագրության, Լեոնային Ղարաբաղի և «Ղարաբաղը ներառյալ հայկական օկուպացման ենթարկված ադրբեջանական տարածքների» քարտեզներն են:

Գրքի առաջին գլխում անդրադարձ է կատարվում Հայկական հարցի պատմությանը մինչև Լոզանի պայմանագիրն ու դրանից հետո: Այստեղ «Թողեք պատմաբանները որոշեն» և «Օսմանցիներն ու հայկական ապստամբությունները» ենթավերնագրերով ընդգրկված են թուրքական ժխտողականության առաջամար-

տիկներից Ջաթին Մակքարթիի 2 հոդվածները: 2-րդ գլխում Լյութեմը «Հայկական հարցը մեր օրերում» և «Հնարավոր զարգացումներ Հայկական հարցում» ենթավերնագրերով անդրադառնում է ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացին և դրա ծավալման հավանականությանը: 3-րդ գլխում ԵՌՈՒԿ-ի ղեկավար և նախկին դեսպան Գյունդուզ Աքթանը Հայկական հարցը «ներկայացնում» է պետությունների իրավական տեսանկյունից, որին «Հայկական հարցը և 1915-ի իրադարձությունները ըստ միջազգային իրավունքի նորմերի» ենթավերնագրով հավելում է Սադի Չայջըն:

Թուրքական նկրտումների առումով պետք է ուշագրավ լինի հատկապես 5-րդ գլուխը, որն ունի «Թուրքիա-Հայաստան հարաբերությունները 1918-2007թթ.» և «Ղարաբաղի հիմնահարցը» ենթագլուխները: Վերջինը նույնպես գրի է առել Լյութեմը:

«Հայկական հարց, հիմնարար գիտելիքներ և վավերագրեր» աշխատությունը ձեռքի տակ չունենք: Բովանդակությանը ծանոթացել ենք Հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի www.eraren.org կայքէջում: Թերևս դա է պատճառը, որ գրախոսելու փոխարեն նախընտրեցինք ներկայացնել միայն: Սակայն, ելնելով այն հանգամանքից, թե այս ինստիտուտը ինչ առաջադրանքով է ստեղծվել և ինչպիսի հայացքների տեր է տնօրեն Օմեր Էնգին Լյութեմը, դժվար չէ կռահել, որ այս աշխատությունը ՀՅ-ի թուրքական ժխտողականության ու ղարաբաղյան հիմնահարցում Թուրքիայի ադրբեջանամետ դիրքորոշման հիմնավորման հերթական փորձ է: Քանի որ աշխատության բոլոր 5 գլուխները կազմված են տարբեր հեղինակների առանձին հոդվածներից, ուստի պետք է ասել, որ սա առանձին ուսումնասիրություն չէ, այլ հոդվածների ժողովածու է, որոնք ընդգրկելով տարբեր գլուխներում, կազմողը փորձել է գիտական ուսումնասիրության տեսք հաղորդել դրան:

08.06.2010

ՄՏԱԲՈՒՆՈՒՄ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԵՑ ԹԵՌԳԻԿԻ «ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՊՐԵԼԻ 11-Ի (24-Ի)» ԳԻՐԲԸ

Դա առաջին անգամ ևս՝ 1919-ին հրատարակվել էր այնպեղ

1915-ի ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը Կ. Պոլսում իթթիհադական իշխանությունները Վանի հայկական ընդվզումների պատճառաբանությամբ ձերբակալում են 235 հայ մտավորականի: Դրան հետևում է ևս 600 մտավորականի ձերբակալությունը: Մայիսի 24-ին ձերբակալված հայերի թիվը քաղաքում հասնում է 2345-ի, որոնք, հատուկենտ բացառությամբ, սպանվում են քարոտի ճանապարհին:

Նույն թվի մայիսի 27-ին իթթիհադականներն ընդունում են «Պատերազմական իրավիճակում կառավարության ձեռնարկումներին հակադրվողների համար գինվորականության նախատեսած միջոցառումների ժամանակավոր օրենքը», որը պատմագրությանը հայտնի է «Տեղահանության օրենք» կրճատ տարբերակով:

Այսպիսով, պաշտոնապես սկսում է հայերի զանգվածային սպանություններով ուղեկցվող տեղահանությունը Օսմանյան կայսրության հայաբնակ բոլոր վայրերից, ներառյալ՝ Թրակիան: Քանի որ 1914-ի օգոստոսի հրամանագրով նախ զորակոչի էին ենթարկվել 20-45 տարեկան հայ տղամարդիկ, ապա նաև թուրքական բանակի համար պարեն, ռազմամթերք կրելու նպատակով 15-20 և 45-60 տարեկանները, որոնք անխտիր սպանվեցին աշխատանքային գումարտակներում, ուստի տեղահանությունը տարածվեց երեխաների, անպաշտպան կանանց և 60-ից բարձր տարիքի տղամարդկանց վրա:

Հետևաբար, արևմտահայության բնաջնջման իրականացումը մարդասպանների համար առանձնակի դժվարություն չներկայացրեց: 1918-ի հոկտեմբերի 30-ին Մուդրոս նավահանգստում ստորագրվեց գինադադարի պայմանագիր, դրանով օսմանյան Թուրքիան հանձնվեց հաղթողների ողորմածությանը: Չինադադարի ստորագրումից երեք օր անց՝ նոյեմբերի 2-ին երկիրը լքեցին ՀՅ-ի գլխավոր պատասխանատուներ Թալեաթը, Էնվերն ու Ջեմալը: Այնուհետև Անտանտի զորքերը օկուպացրին Ստամբուլը:

Հակաիթթիհական տրամադրություններն ու Անտանտի առջև արդարանալու հրամայականը ստիպեցին օսմանյան Մեջլիսին, որ 1918-ի դեկտեմբերի 21-ի որոշումով ստեղծի «պատերազմի և տեղահանության հանցագործությունների հետաքննության» հանձնաժողով: Մինչև 1919-ի հունվարի վերջը չարագործներից 112-ն արդեն ձերբակալված էին: Հանձնաժողովը նրանց հարուցեց «մեկ միլիոն հայի, 550.000 հույնի սպանության, ինչպես նաև աշխատանքային գումարտակներում 250.000 զորակոչիկի ոչնչացման» մեղադրանք: Դրա հիման վրա ձերբակալվածների գործը հանձնվեց ռազմական ատյան, իսկ 1919-ի փետրվարի 5-ին սկսվեց «պատերազմի և տեղահանության» հանցագործների դատավարությունը:

Այս ամենը հնարավորություն տվեց պոլսահայության բեկորներին ոգեկոչելու իր զոհերի հիշատակը: Որքան էլ կաթվածահար և արյունաքամ լինեին, Մեծ եղեռնից 4 տարի հետո՝ 1919-ին նրանք Ստամբուլում ստեղծեցին «Ապրիլի 11-ի սգո հանդեսի» հանձնախումբ, որն էլ նախաձեռնեց Թեոդորոս Լափչինճյանի՝

Թեոդիկի «Հուշարձան ապրիլի 11-ի» հրատարակումը: Նույնիսկ Ստամբուլի Թաքսիմ հրապարակի շրջակայքում կանգնեցվեց Մեծ եղեռնի առաջին հուշարձանը, որն այնուհետև ոչնչացրին մարդասպան ստահակները: Քանի որ ապրիլի 11-ը մեր տոմարով համապատասխանում է ապրիլի 24-ին, ուստի պետք է ասել, որ բացի հուշարձանի կառուցումից, առաջինը 1919-ին հենց Ստամբուլում է նշվել Մեծ եղեռնի զոհերի հիշատակը:

Այս տարվա ապրիլի 24-ի նախօրեին Ստամբուլում հայտնի իրավապաշտպան, հրատարակիչ Ռազրի Ջարաքլուն իր «Բեզե» հրատարակչությունում վերահրատարակեց Թեոդիկի «Հուշարձանը», ընդ որում եռալեզու՝ թուրքերեն, հայերեն և անգլերեն: Գիրքն ունի ներածական բաժին, որը հագեցված է Ջարաքլուի բովանդակայից «Առաջաբանով», Հրանտ Դինքի կենսագրությամբ, ինչպես նաև նրա «Վախվորած աղավաղ հոգեվիճակում եմ» հոդվածով և Թեոդիկի կենսագրությամբ:

Կենսագրական բաժնում ներկայացվում են Պոլսից տարագիր հայ մտավորականները, ազգային և կրթության գործիչները, արքայազնություն հիվանդության պատճառով մեռնողները, նաև նրանք, ովքեր կախաղան են հանվել հենց Պոլսում: Երկրորդ բաժինը նվիրված է գավառին, որը ներառում է Արևմտահայաստանի գրեթե բոլոր քաղաքները, ինչպես նաև Իզմիրը: Գրական բաժնում զետեղված են Բյուզանդ Պոզաճյանի «Դեպի Այազ», Միքայել Շամտանճյանի «Չանքըրից վերհիշումներ» հուշագրություններն ու նահատակ եկեղեցականները, իսկ վերջաբանի փոխարեն՝ «Ապրիլի 11-ի սգո հանդեսի» հանձնախմբի դիմում-կոչը հայրենակիցներին: Կա նաև անվանացանկ:

Թուրքական «Թարաֆ» թերթի մայիսի 31-ի համարում Մարգար Եսայանն անդրադարձել էր Ստամբուլում Թեոդիկի «Հուշարձանի» վերահրատարակմանը, որտեղ ըստ արժանվույնի գնահատել է պրն Ջարաքլուի հանդուգն ներդրումը, նշել է, թե ինչպես էր երազում այս գրքի վերահրատարակումը հանգուցյալ Հրանտ Դինքը: Սակայն ոչ գրքի բովանդակությունն էր ներկայացրել, ոչ նշել է, որ գիրքը հավասարապես թուրքերեն, հայերեն, անգլերեն ներկայացված է, ոչ էլ հարկ է համարել պրոֆ Դորա Սաքայանի անունը հիշելու: Մինչդեռ Ջարաքլուն, իբրև հրատարակիչ, եռալեզու կոթողային այս գրքի հրատարակման գործը նախաձեռնելու և գլխավոր խմբագրի պաշտոնն ստանձնելու համար անձամբ գրքում իր երախտագիտությունն է հայտնում Դորա Սաքայանին:

ԼՈՒՅՍ ՏԵՍԱՎ ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԳԱԹՈՒՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1945-1946ԹԹ. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Դա իր բովանդակությամբ առաջինն է ոչ միայն հայ պատմագրության մեջ

Առաջին համաշխարհային պատերազմը հստակ սահմանագիծ անցկացրեց Հայկական հարցի միջազգային շահարկումների և դրա լուծման հնարավորությունների միջև: Երիտթուրքերը, օգտվելով պատերազմական իրավիճակից, ցեղասպանության ենթարկեցին արևմտահայերին: Չնայած ողբերգական հետևանքներին, արևմտահայության բնաջնջումը չհանգեցրեց Հայկական հարցի ամբողջական սպառմանը, այլ փոխադրեց որակական նոր հարթություն, որ պահպանի իր տեղը մեծ տերությունների ծրագրում:

Դրա վկայությունը դարձան 1920թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրի ստորագրումն ու Թուրքիայի տարածքում «Հայկական ազգային օջախ» ստեղծելու մեծ տերությունների Լոզանի կոնֆերանսում ցուցաբերած նախաձեռնությունը, որն արժանացավ այն ճակատագրին, ինչ Սևրով մեծ Հայաստան կերտելը: Քանի որ Մեծ եղեռնն արդեն իրողություն էր, ուստի շահարկումներում շեշտադրությունն ընկավ զանգվածային կոտորածների վրա: Դրանով փոխվեց հարցի ավանդական ընկալումը: Այսպիսով, մեծ տերությունների օրակարգում Հայկական հարցին հետզհետե փոխարինեց Հայոց ցեղասպանությունը:

1923-ի հուլիսի 24-ին Լոզանի պայմանագրով մեծ տերությունները ճանաչեցին քեմալական Թուրքիայի ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունն ու անկախությունը: Նրանք օրինականացրին նաև հայերի նկատմամբ նորաստեղծ Թուրքիայի ղեկավարության թշնամական վարքագիծը: Օրինականացման առումով Լոզանը եկավ լրացնելու 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը, այն տարբերությամբ, որ եթե Կարսում ոտնահարվում էր Մեծ եղեռնի միջազգային ճանաչման համար պայքարելու հայ ժողովրդի իրավունքը, շնորհելով «լիակատար ներում այն զանցանքների ու հանցանքների համար, որոնք բխել են կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած գործողություններից», ապա 1923թ. մայիսի 31-ի նիստում Լոզանի կոնֆերանսը «հնարավոր չհամարեց քննարկել Թուրքիայից հեռացած որոշ անձանց, մասնավորապես հայերին, ներման ուժով իրենց երկիրն ազատ վերադառնալու իրավունք շնորհելու հարցը»: Փոխարենը քննարկման դրվեց «տեղահանության և կոտորածների գործով մեղադրյալների հարցը»: Կոնֆերանսը ոչ միայն ներում շնորհեց մեղադրյալներին, այլև ներումը տարածեց 1

օգոստոսի 1914-20 նոյեմբերի 1922թթ. իրագործված հանցանքների վրա, արդարացնելով թուրք ջարդարարներին:

Ոգևորված Կարսի և Լոզանի պայմանագրերի ընձեռած հնարավորությունից, քեմալական Թուրքիայի ղեկավարները ձեռնամուխ եղան մոռացության մատնելու միջոցով թուրք ժողովրդի հասարակական հիշողությունից ջնջել ՀՅ-ն ու ապակողմնորոշել միջազգային հանրությանը:

Հայկական հարցն անխնա շահարկելու, արևմտահայության իղձերը մշտապես շահախնդիր շահարկումների առարկա դարձնելու պատասխանատվության գիտակցումով մեծ տերությունները ցեղասպանության հարցում տուրք տվեցին թուրքական նկրտումներին: Ինչ վերաբերում է թուրք ժողովրդին, ապա դրա հոծ զանգվածները քուրդ աշիրաթների հետ սիրահոժար մասնակցել էին հայերի կոտորածներին: Հետևաբար, տրամաբանական է, որ ՀՅ-ն մոռացության մատնելու առումով թուրք հասարակությունը համերաշխ լինե՞ր երկրի ղեկավարների հետ և այդ հարցում անվերապահորեն պաշտպանե՞ր պետական դիրքորոշումը, որովհետև հանցագործի հոգեբանությունը նրան այլընտրանք չէր թողել:

Մինչ Թուրքիան, մոռացության մատնելով ՀՅ-ը, Հայկական հարցը համարում էր փակված, իսկ ոճրագործության միջազգային պատասխանատվությունից խուսափելու առաջադրանքը՝ կատարված, ահա 1933-ին Վիեննայում լույս է տեսնում Վերֆեյի «Մուսա լեռան 40 օրը», որը 1934-36-ին հրատարակվում է ԱՄՆ-ում և Ֆրանսիայում: Գրքի միջազգային լայն արձագանքը ահազանգի ներգործություն է ունենում Թուրքիայում: Նրա ղեկավարները սկսում են կասկածանքով վերաբերվել միջազգային հանրությանը, զգալով ոճրագործության համար պատասխանատվության Հայկական հարցի միջազգային օրակարգում պահպանումից բխող անխուսափելիությունը:

Թեև Թուրքիային հաջողվում է ձախողել վեպը էկրանավորելու ամերիկյան կինոընկերության նախաձեռնությունը, սակայն 50-ականթթ. Լիբանանում, Իրանում, Հունաստանում և այլուր ակտիվանում են աշխարհով մեկ սփռված հայերը: 1965-ին Մեծ եղեռնի 50-րդ տարելիցին երևանում կազմակերպվում են հուժկու ցույցեր, որոնց 100.000-ի հասնող մասնակիցները «Մեր հողերն ենք ուզում՝ պատմական հայրենիքը» կարգախոսով ցեղասպանության համար դատապարտում են երիտթուրքերին և Թուրքիային, իսկ 70-ականներին ասպարեզ է իջնում ԱՍԱԼԱ-ն:

Այս ամենը նպաստում է, որ ապրիլի 24-ը ցեղասպանության զոհերի հիշատակման օր հռչակվի աշխարհի շատ երկրներում: Դրան

հետևում է ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի սկզբնավորումը, որի ծավալմանը թափ է հաղորդել նորանկախ ՀՀ-ն, դարձնելով ճանաչումը արտաքին քաղաքականության օրակարգի հարց:

Ներկայումս ավելի քան 20 երկիր պետականորեն կամ խորհրդարանի մակարդակով ճանաչել է ՀՅ-ը: Դա անդառնալի է դարձնում գործընթացի հետագա ծավալումը, իսկ ծավալման պայմաններում ոչ միայն սպառվում են թուրքական ժխտողականության դիրքերը ու սահմանափակվում ոճրագործության միջազգային պատասխանատվությունից խուսափելու Թուրքիայի հնարավորությունները, այլև նախադրյալներ են ստեղծվում, որ հետզհետե միջազգայնացվի նաև ցեղասպանության հետևանքների վերացման հարցը:

Մանավանդ որ այդ հարցը «Թուրքիայի բռնի անջատած բուն հայկական տարածքները՝ Կարսի և Արդահանի մարզերը (ներառյալ Սուրմալուն) Հայկական ԽՍՀՄ-ին վերադարձնելու» պահանջով 1945-46թթ. դրվել է խորհրդա-թուրքական հարաբերությունների առանցքում և բուռն քննարկումների առարկա է դարձել ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի ղեկավարների հանդիպումներում:

Խնդրո առարկան, ինչ խոսք, եղել է հայկական պահանջատիրությունը: Ընդ որում, պահանջատիրոջ դերում հանդես է եկել այնպիսի գերտերություն, ինչպիսին էր ԽՍՀՄ-ը, այն էլ համայն հայության անունից, որն իր վճռականությունը հաստատել էր կազմակերպելով տասնյակհազարավոր սփյուռքահայերի հայրենադարձությունը:

Պահանջատիրության առումով չափազանց կարևոր են «հետպատերազմյան Թուրքիայի վերակառուցման առաջարկություն մշակելու և ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի քննարկմանը ներկայացնելու» Ստալինի 1945-ի փետրվարին Միկոյանին և կենտկոմի քարտուղար Մալենկովին տված կարգադրությունն ու 1925թ. խորհրդա-թուրքական պայմանագիրը չեղյալ համարելու արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մոլոտովի առաջարկը, որը նա 1945-ի մարտի 15-ին պաշտոնապես ներկայացրել է թուրքական կողմին:

Եթե Վերջելի վեպը ահազանգի ներգործություն էր ունեցել Թուրքիայի վրա, ապա ԽՍՀՄ-ի պահանջն էլ խուճապի է մատնել նրան, համոզելով, որ Հայկական հարցը միջազգային օրակարգում է, դա չի սահմանափակվում ցեղասպանության ճանաչման նախաձեռնություններով, այլ ենթադրում է դրա հետևանքների վերացումն ու կատարած ոճրագործության համար պատասխանատվության ստանձնումը:

Ցեղասպանության հետևանքների վերացման հարցը չափազանց նորը է, պահանջում է ավելի քան լուրջ մոտեցում և բազմակողմանի ուսումնասիրություն: Չնայած որոշ աշխատությունների առկայու-

թյանը, Հայաստանում հարցի ուսումնասիրությունը դեռևս լիարժեք չէ: Դրա գլխավոր պատճառը դիվանագիտական անհրաժեշտ փաստաթղթերի անմատչելիությունն էր: Թվում է, թե այս բացը լրացնում է օրերս Երևանում ՀՀ փոխարտգործնախարար, պ.գ.դ. Արման Կիրակոսյանի խմբագրությամբ լույս տեսած «Հայաստանը և խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1946թթ. դիվանագիտական փաստաթղթերում» աշխատությունը, որն իր բովանդակությամբ առաջինն է ոչ միայն հայ պատմագրության մեջ:

330 էջանոց այս աշխատությունը ռուսերեն է, այսինքն՝ Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած «բուն հայկական տարածքները Հայկական ԽՍՀ-ին վերադարձնելու» պահանջին առնչվող փաստաթղթերը մատուցվում են բնագրով: Կազմված է «Առաջաբանից», առաջին և երկրորդ բաժիններից, ունի ծանոթագրություններ, անձնանունների և տեղանունների ցուցիչ, ինչպես նաև Հայկական հարցի պատմության առանցքային դրվագներն արտացոլող 9 քարտեզ:

Առաջաբանում Արման Կիրակոսյանը հետահայաց անդրադառնում է ռուս-թուրքական հարաբերություններին, բաժանելով դրանք «բարիդրացիության և բարեկամության», «վստահության ճգնաժամի» և «բարիդրացիության և փոխըմբռնման» փուլերի, հակիրճ, բայց բովանդակալից ներկայացնում է Հայկական հարցի պատմությունը, ցեղասպանությանը ներառյալ, ապա և միջազգային փաստաթղթերի լույսի տակ մանրամասն շարադրում է «Թուրքիայի կողմից բռնի անջատված բուն հայկական տարածքները Հայկական ԽՍՀ վերադարձնելու» ԽՍՀՄ-ի պահանջի շարժառիթները, զարգացումները, հետևանքներն ու դրան առնչվող բանակցությունները Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և Թուրքիայի հետ:

Ժողովածուի առաջին բաժնում զետեղված են ԽՍՀՄ փոխարտգործնախարար Կավտարաձեի «Թուրքիային անցած հին հայկական հողերի և սփյուռքահայերի հայրենադարձության հավանականության» մասին զեկուցագիր ներկայացնելու պահանջով Հայկական ԽՍՀ արտաքին գործերի ժողկոմիսար Կարապետյանին հղած նամակը, նամակին ի պատասխան գրված հանգամանալից զեկույցը, սփյուռքահայերի դիմումը ՄԱԿ-ին, միջազգային կառույցներին և մեծ տերություններին:

Ներկայացված փաստաթղթերից թերևս ամենակարևորը ՀԽՍՀ ԱԳ նախարար Կարապետյանի զեկուցագիրն է, որտեղ նա շարադրում է Թուրքիայի կողմից հայկական տարածքների գրավման պատմությունը, անդրադառնում է ցեղասպանությանը, ապա ԽՍՀՄ ԱԳՆ-ին առաջարկում է հայկական հողերի վերադարձման 3

տարբերակ: Ըստ առաջինի, Հայկական ԽՍՀ-ին պետք է միանային Կարսի մարզը, Արդահանն ու Սուրմալուն, երկրորդ տարբերակը ենթադրում էր 1878-ի Սան Ստեֆանոյի պայմանագրով հաստատված ռուս-թուրքական սահմանի վերականգնումը, համաձայն որի՝ Կարսի մարզից զատ պահանջվում էր նաև Ալաշկերտի հովիտը Բայազետ քաղաքով, իսկ 3-րդ տարբերակը նախատեսում էր բացի Կարսից, Սուրմալուից, Ալաշկերտից, նաև հայկական 6 վիլայեթներից Էրզրումի, Վանի, Բիթլիսի միացումը ԽՍՀՄ-ին:

Կարապետյանի զեկույցը ցույց է տալիս, որ պահանջատիրությունը ի սկզբանե յուրահատուկ է եղել նաև հայ բուլշևիկներին, և նրանք երբևէ չեն հրաժարվել պատմական հայրենիքի տարածքներից: Ժողովածուի 2-րդ մասում ներկայացված են հայկական հողերի վերադարձին առնչվող՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի դիվանագիտական փաստաթղթերն ու Պոտսդամի կոնֆերանսի նյութերը:

ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի ծավալման ներկա փուլում պ.գ.դ. Արման Կիրակոսյանի «Հայաստանը և խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1946թթ. դիվանագիտական փաստաթղթերում» ժողովածուն չափազանց կարևոր ներդրում է Մեծ եղեռնի հետևանքների վերացման հարցին լուրջ մոտեցումներ մշակելու առումով: Աշխատության մեջ ներառված դիվանագիտական փաստաթղթերը մատնանշում են, որ Հայկական հարցը, անկախ Բրեստ-Լիտովսկի, Մոսկվայի, Կարսի և Լոզանի պայմանագրերից, ամենևին չի սպառվել, ընդհակառակը, պահպանել է իր տեղը մեծ տերությունների ծրագրերում, շարունակելով զբաղեցնել միջազգային օրակարգը, ոչ էլ սահմանափակվում է ցեղասպանության միջազգային ճանաչումով, այլև ենթադրում է ոճրագործության հետևանքների վերացումը:

09.06.2011

«ՍԵՎ ԳԻՐՔ. ՆՇԱՆԱՎՈՐ ՕՏԱՐԵԿՐԱՑԻՆԵՐԸ ԹՈՒՐԿԱԿԱՆ ՈՃԻՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Բացառիկ այս աշխատությունը թուրքական ժխտողականության դեմ պայքարելու արդյունավետ միջոց է նաև

ՀՅ-ի միջազգային ճանաչման գործընթացի ծավալումը հետզհետև սպառում է թուրքական ժխտողականության դիրքերը: Սակայն որքան էլ ժխտողականության դիրքերը սպառվեն, կամ նախկին ԱԳ նախարար Իլթեր Թուրքմենը, նախկին դեսպան Յալըմ Էրալիը, մի շարք մտավորականներ ի լուր սեփական իշխանությունների հայտարարեն, որ Հայաստանը երբևէ չի հրաժարվի ցեղասպանության ճանաչման քաղաքականությունից, ընդ որում բացառելով «պատմաբանների հա-

մատեղ հանձնաժողովում հայկական կողմի հետ 1915-ի իրադարձությունների շուրջը ընդհանուր հայտարարի գալու» հավանականությունը, այնուամենայնիվ Թուրքիան ժխտողականությունից հրաժարվելու որևէ նախանշան չի ցուցաբերում: Ընդհակառակը, ճանաչման գործընթացի ծավալմանը զուգընթաց ՀՅ-ի հարցում Թուրքիայի պաշտոնական թեզը հանդիսացող ժխտողականությունը դառնում է մարտնչող, ստանում հետզհետե ագրեսիվ բնույթ:

Ըստ երևույթին Թուրքիան այլ «հնարավորություն» էլ չունի, որովհետև ժխտողականությունից հրաժարվելը նրա համար կնշանակի ինքնակամ վերացնել երկրում Հայկական հարցի վրա դրված տաբուն: Դա թուրք գիտնականների առջև կբացի ՀՅ-ն ոչ թե ժխտողականության դիրքերից, այլև գիտականորեն՝ որպես պատմական փաստ ուսումնասիրելու հեռանկարը:

Թուրքիայում ՀՅ-ի հարցի գիտական ուսումնասիրության դեպքում լիարժեք կբացահայտվի ճշմարտությունը թուրք հասարակության առջև: Միաժամանակ կպարզվի, որ քեմալականների ազգային պետությունը ստեղծվել է այլ ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքում, Մուստաֆա Քեմալը շրջապատված է եղել հայ ժողովրդի դահիճներով, հետևաբար ժամանակակից Թուրքիայի հիմնադիրները ցեղասպանության իրագործած մարդասպաններ են:

Այս ամենը անհրաժեշտ կդարձնի ինչպես քեմալական շարժման, այնպես էլ Թուրքիայի Հանրապետության ստեղծման պատմության վերանայումը: Այսպիսով, անխուսափելի կդառնա Աթաթուրքի տաբուի վերացումը երկրում: Այլ կերպ՝ քանի դեռ գոյություն ունի այս տաբուն, Թուրքիան չի կարող առերեսվել սեփական պատմության հետ: Հետևաբար նա շարունակելու է կառչած մնալ ՀՅ-ի ժխտողականությունից: Այս հանգամանքը ցեղասպանության միջազգային ճանաչման ներկա փուլում առանձնակի կարևորում է թուրքական ժխտողականությունը հակակշռելու նշանակությունը, իսկ դա հաշվենկատ հակահարված է ենթադրում:

Հակահարվածի թերևս ամենաարդյունավետ ձևը հայկական կոտորածների և ՀՅ-ի մասին օտարերկրացի հասարակական, քաղաքական, գիտական, գրական և արվեստի գործիչների վկայությունների հանձնումն է միջազգային հանրության ուշադրությանը: Այս առումով հատկանշական է վերջերս ՀՀ վարչապետ *Տիգրան Սարգսյանի* մեկնեստությամբ երևանում լույս տեսած *«Սև գիրք. նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և Հայոց ցեղասպանության մասին»* աշխատությունը, որը նվիրվում է Մեծ եղեռնի 100-ամյակին:

«Հայագիտակ» հրատարակչության լույս ընծայած այս գիրքը, *Պետրոս Հովհաննիսյանի* խմբագրությամբ, հրատարակության է պատրաստել Ալբերտ Իսոյանը: Ինքն էլ գրի է առել հակիրճ, բայց բովանդակալից առաջաբանը, որտեղ մասնավորապես գրում է. «Ընթերցողը գրքի բազմաթիվ էջերում կգտնի հայ ժողովրդի անշահախնդիր, ազնիվ, նվիրյալ բարեկամների ճշմարիտ կերպարը և արևմտյան դիվանագիտության անթափանց, բազմաշերտ, բազմակողմանի դեմքը: ...«Սև գրքի» հեղինակները, որպես միջազգային մի բազմազգ, յուրահատուկ խորհրդարան, այս արտակարգ վեհաժողովում ի լուր աշխարհի ճանաչում և դատապարտում են Հայոց ցեղասպանությունը»:

«Սև գիրքը» 715 էջ է, բացի նախաբանից ունի ուղեցույց և անվանացանկ: Գրքում զետեղված են հայկական կոտորածների և ՀՅ-ի մասին վկայող օտարերկրացի ավելի քան 100 անվանի գործիչների հոդվածներ, ելույթներ, հուշեր, գեղարվեստական ստեղծագործություններ, հատվածներ աշխատություններից, որոնց զգալի մասը առաջին անգամ է ներկայացվում:

Այս գործիչներից թերևս առանձնացնենք թուրքական կոտորածներից պաշտպանելու համար իրեն և իր բարեկամներին հայ ժողովրդի տրամադրության տակ ղնելու պատրաստակամություն հայտնող Իտալիայի ազգային հերոս Զուգեպպե Գարիբալդիի կրտսեր որդուն՝ Ռիչիոտի Գարիբալդիին և Հարավսլավիայի նախագահ Իոսիֆ Բրոզ Տիտոյին, որն ի լուր աշխարհի հայտարարել էր. «Հայ ժողովուրդը երկու աշխարհամարտերի ընթացքում միշտ կանգնած է եղել դաշնակիցների կողքին և միշտ պայքարել է նրանց դատի համար: Հայ ժողովրդի արդար իրավունքն է ունենալ մեծ Հայաստան»: Տիտոն դրանով կարծես նախապես կանխագուշակել էր ՀՅ-ի հետևանքների վերացման փուլը, որը հաջորդելու է միջազգային ճանաչման փուլին:

Գրքում ներկայացված են ոչ միայն մեր ժողովրդի անկեղծ բարեկամները, այլև այնպիսի օտարերկրացի գործիչներ, որոնք ամենևին էլ աչքի չեն ընկել հայամետությամբ: Սակայն այս գործիչները ևս, անկախ հայերի նկատմամբ վերաբերմունքից, իթափատականների գազանային էությունն ու օսմանյան Թուրքիայում Հայկական հարցը հայերին իսպառ բնաջնջելու միջոցով լուծելու երիտթուրքական հրեշավոր ծրագիրը բացահայտելու հարցում միացել են հայ ժողովրդի բարեկամներին:

Այլ կերպ՝ «Սև գրքում» ներկայացված գործիչների ընտրությունը ճիշտ է կատարվել: Դա ենթադրում է գրքում ընդգրկված օտարերկրացի գործիչների հոդվածների, հրապարակախոսությունների,

ստեղծագործությունների խորը իմացություն, մատենագիտական լուրջ բազա, ինչպես նաև բազում տարիների քրտնաջան աշխատանք: Եթե օտարերկրացի գործիչների ճիշտ ընտրությունը անաչառություն է ապահովում «Սև գրքին», ապա գործիչների ստեղծագործության իմացությունն ու մատենագիտական բազան բացառիկ նշանակություն են հաղորդում ամենայն բժախնդրությամբ պատրաստված այս աշխատությանը: Ընդ որում, գիտական պատճառ մակարդակ և հրատարակչական բարձր որակ ունեցող այս աշխատությունը բովանդակությամբ նույնպես բացառիկ է ինչպես Հայաստանում, այնպես էլ հայկական սփյուռքում:

«Սև գրքի» արժեքը, սակայն, սոսկ բացառիկությամբ չի պայմանավորում: Աշխարհին ներկայացնելու և ճիշտ օգտագործելու դեպքում այս բացառիկ աշխատությունը միաժամանակ դառնում է թուրքական ժխտողականությունը չեզոքացնելու արդյունավետ միջոց: Թեև «Սև գիրքը» ՀՅ-ի հարցին նվիրված ուսումնասիրություն չէ, սակայն թուրքական ժխտողականության սնանկությունը օտարերկրացի գործիչների ցեղասպանության մասին անմիջական վկայություններով բացահայտելու հարցում անհամեմատ ազդեցիկ է լինելու, քան բազմախառոր ուսումնասիրությունները: Այս աշխատությունը հրատարակության պատրաստելիս Ալբերտ Իսոյանը լուրջ ներդրում է արել ժխտողականության դեմ պայքարին: «Սև գիրքը», բացի բացառիկությունից, ՀՅ-ի միջազգային ճանաչման գործում ունի նաև պրակտիկ քաղաքական նշանակություն:

13.09.2012

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ԹՈՌՈՒ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
Նրա գիրքը վեր է հանում 1915-ի իրադարձությունների առնչությամբ Ջեմալի ընդհանրապես փրկող կարծիքը

Օրերս Թուրքիայում լույս է տեսել «1915. Հայերի ցեղասպանությունը» գիրքը, հեղինակը Հասան Ջեմալն է, հայտնի լրագրող և հրապարակախոս: Ժամանակին եղել է Աթաթուրքի հիմնադրած ժողովրդահանրապետական կուսակցության պաշտոնաթերթ «Ջումհուրիեթի» գլխավոր խմբագիր՝ անուղղակի մասնակցելով երկրի ներքին և արտաքին քաղաքականության ուղղորդմանը:

Կարևոր է նաև Հասան Ջեմալի գրքի լույս ընծայումը Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի նախաշեմին, երբ թուրքական իշխանությունները նախահարձակ միջոցներով փորձում են կասեցնել ՀՅ-ի ճանաչման ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի ու հայկական սփյուռքի ջանքերը, որպեսզի տարելիցին Թուրքիան չկանգնի փաստի առջև:

Հասան Ջեմալի պարագայում գիրքն առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ այնքան հեղինակի հանրաճանաչության ու դիրքի կամ քեմալական գաղափարախոսության ջատագովը լինելու առումով, որովհետև ՀՅ-ի ժխտողականության հիմքերը Թուրքիայում հենց քեմալականներն են դրել, այլ Իթթիհատ վե Թերաքքիի պարագլուխներից Ջեմալ փաշայի հետ ազգակցական կապի շնորհիվ: Նա Ջեմալ փաշայի թոռն է, և թոռան կարգավիճակով գրքում պատմում է 1915-ի իրադարձություններում փաշայի դերի, այդ իրադարձությունների առնչությամբ իրենց գերդաստանում տիրող կարծիքի մասին:

Հասան Ջեմալի գիրքը, ըստ «Ակօսի», բաղկացած է 4 գլուխներից: Նախաբանի բնույթ կրող առաջին գլխում, որն ունի հետևյալ վերնագիրը. «Պատմության ձեռքը ճիշտ ուղին ցույց կտա նրանց, ովքեր տեսնելու ցանկություն ունեն», հեղինակը պատմում է, որ 1915-ի իրադարձությունների հետ սկսել է առերեսվել 2000-ի առաջին կեսից, ապա անդրադառնում 2006-ի փետրվարի 7-ին Հրանտ Դինքի չարաբաստիկ 301-րդ հոդվածով դատապարտմանը, թե ինչպես են «ազգի դավաճան» հոչակել մեր հայրենակցին: Երկրորդ գլխում նկարագրում է ոսանողության տարիներից մինչև 2000 ընկած ժամանակահատվածում հայերի և 1915-ի մասին ձեռք բերած գիտելիքները, իր մոտեցումներն ու դրանց աստիճանաբար փոփոխությունը:

«Ջեմալ փաշայի գերդաստանը» վերնագիրը կրող երրորդ գլխում հեղինակը թոռան կարգավիճակով պատմում է իր ընտանիքի և մեծ հոր մասին ընտանիքում պահպանված հուշերը:

Ահա թե ինչ է ասում. «Որքան էլ թաքուն լինի, մեր գերդաստանը հպարտանում էր Ջեմալ փաշայով: Թեև ոչ ընդգծված ձևով, բայց գերդաստանի անդամներից ոմանք, ելնելով արյունակցական կապից, օսմանյան ազնվականության բաժին էին հանում իրենց: Գերդաստանում պատմում էին, որ Ջեմալ փաշան եղել է հմուտ զինվորական, լավ պատկերացում է ունեցել քաղաքաշինության մասին, և Քեմալ Աթաթուրքը էնվերին ու Թալեթին ատելիս, համակրել է իմ պապին, և եթե մահափորձի զոհը չդառնար, ապա փաշան վերադառնալու էր Անկարա, հայտնվելու Աթաթուրքի կողքին»:

Ինչ վերաբերում է 1915-ի իրադարձություններում Ջեմալ փաշայի դերին, ապա գրքում Հասան Ջեմալը դրանց առնչությամբ հետևյալ տողերն է շարադրում. «Երբ խոսք էր բացվում 1915-ի իրադարձություններից, ընդհանուր առմամբ ես նույն բաներն էի լսում, թե Առաջին աշխարհամարտին հայերը համագործակցել են թշնամի ռուսների հետ... Դրա պատճառով ենթարկվել են րոնի

տեղահանության... պատերազմ էր, համաճարակ... և այս պայմաններում հայերի մի մասը մահացել է: Ընդամենն այսքանը: Իհարկե, 1915-ին, երբ տեղահանության ընթացքում տեղի ունեցածը, տիրող կարծիքի համաձայն, տխուր փաստեր էին, սակայն դրանք պայմանավորված են եղել «պատերազմական իրավիճակով»: Միաժամանակ գերդաստանում տիրել է այն համոզմունքը, թե Ջեմալ փաշան էապես տարբերվել է էնվերից ու Թալեթից, և ընդգծվել, որ նա պատասխանատվություն չի կրում 1915-ի համար: «Երբ ես առարկում էի. «Սակայն պատասխանատու էր որդեգրած քաղաքականության համար», գերդաստանի անդամներն իսկույն հակազդեցությամբ ինձ էին արձագանքում», գրում է Հասան Ջեմալը:

Վերջին գլխում Հասան Ջեմալը անդրադառնում է Թուրքիայում ՀՅ-ի հարցի վրա դրված տաբուին և այն հակազդեցությանն ու սպառնալիքներին, որոնց թիրախն են դառնում նրանք, ովքեր փորձում են ճեղքել այդ տաբուն:

Հասան Ջեմալի գրքի նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չէ Թուրքիայում: Սակայն դա առանձին խնդիր է, հետևաբար մասնավոր մոտեցում է պահանջում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՏԱՑԱ ՔԵՄԱԼ ԱԹԱԹՈՒՐՔՆ ՈՒ 3
 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 3
 ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ՔՐԻՍՏՈՆՅԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԵՎ
 ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՎԱՅԵԼ Է ՔԵՄԱԼ ԱԹԱԹՈՒՐՔԸ 3
 ԵՎՐՈՒՍՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՍՈՍԿ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԿՈՉ ՉԻ
 ԱՆՈՒՄ 5
 «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՆ ԱԹԱԹՈՒՐՔԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՄԲ» 7
 ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՎԵՐԱՆՈՒՄ ԵՆ ՏԱՐՈՒՆԵՐԸ 8
 ԱԹԱԹՈՒՐՔԻ ԾԱՂԱՐԱՆԿԱՐՆԵՐ ԱՎՏՈՐԱԼԻԱՅՈՒՄ՝ ՁԵՌՔԻՆ «ՀԱՅՈՑ
 ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԹԵՐԹԻԿՈՎ 10
 ՕՐՀԱՆ ՓԱՊՈՒՔԸ ԴՐԱԿԱՆ ԿԱՐԾՔ Է ՏՎԵԼ ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄԻ ՆՈՐ ԳՐՔԻՆ 11
 «ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ» ՎՐԱ ԴՐՎԱԾ ՏԱՐՈՒԻ ՎԵՐԱՅՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼԻ Է
 ԴԱՐՁՆՈՒՄ ԱԹԱԹՈՒՐՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ 12
 «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԳՐՈՒՄՆ ԱԹԱԹՈՒՐՔԻՆ
 ԻՐԱՐԱՆՅՈՒՄ Է ԱՌԱՋԱՅՐԵԼ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 14
 «ՆԵՍԱՇՏՁԱՆԻ ԲԱՅՄԱՆ՝ ԱԹԱԹՈՒՐՔԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ
 ԺՈՂՈՎՈՒՄ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԵՐԿՎԱՏՈՐ Է 15
 ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՆ ՏԱՐՈՒ Է ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 18
 ՔԵՄԱԼ ԱԹԱԹՈՒՐՔԸ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՄԱՆՆԵՐԻՆ ՈՉ ԹԵ ՓՐԿԵԼ Է, ԱՅԼ
 ՀԱՆԴԻՄԱՆԵԼ ՓՐԿՈՂՆԵՐԻՆ 20
 «Եթե ես ֆաճիս եմ, աղա ինչպե՞ս անվանել Դերսիսի աղասաբո՞ւԹՅՈՒՆԸ
 ՃՆՇՈՂ ԱԹԱԹՈՒՐՔԻՆ, ՆԱ Է՛Լ Է ֆաճիս» 21
 ՔԱՆԻ ԴԵՐ ՉԻ ՎԵՐԱՅԵԼ ԱԹԱԹՈՒՐՔԻ ՏԱՐՈՒՆ, ԹՈՒՐՔԻԱՆ ԿԱՌՉԱԾ ԿՆՆԱ
 ԺԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ 24
 ԳՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԷՐ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԱԹԱԹՈՒՐՔԻ 80 ՏԱՐԻ ՔՈՂԱՐԿՎԱԾ ՆԱՄԱԿԸ 26
 «1915-ԻՆ ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻՑ ՇԱՏԵՐԸ ՀԱՐՏԱՅԵԼ ԵՆ, ԹԵՐԵՎ ԱՂ Է ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
 ՀԵՏ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՌԵՐԵՍՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ» 28
 ԱՐԽԻՎՆԵՐ, ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐ
 31
 ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ԲԱՅՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՂԾՔ ԵՆ 31
 ԹՈՒՐՔԻԱՆ ՇԱՀԱՐԿՈՒՄ Է ԱՐԽԻՎՆԵՐԻ ԲԱՅՄԱՆ ԿԵՂԾՔԸ 33
 ԹՈՒՐՔԵՐԸ ԲՆԱՋՆԵԼ ԵՆ ՆԱՐԵԿԱՎԱՆՔԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԸ 36
 «ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆՆԵՐԸ ԳԻՏԵՆ, ԹԵ ՈՎՔԵՐ ԵՆ 1915Թ. ԲՈՒՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ, ...» 39
 ԹՈՒՐՔԻԱՆ ՉԻ ԳԱՂՏԱԶԵՐԾՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ
 41
 ԵՄ-Ն ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ
 ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՇՏԱՐԱԿԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ 43
 «ՄԵՆՔ ԿՎՃԱՐԵՆՔ ԳՈՒՄԱՐԸ, ԱՐԽԻՎՆԵՐԸ ԲԱՅԵՔ» 45
 «ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ԱՐԽԻՎԸ ԹՈՂ, ՕՍՄԱՆՅԱՆՈՎ ԶԲԱՂՎԻՐ» 47
 ԲԵՐՔԹԱՅԸ ՀԱՎԱՍՏԻԱՅՆՈՒՄ Է ՕՍՄԱՆՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ
 ՈՉՆՉԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ 50

«ԻՆՋԻՆԷՐ» ՈԱԶՄԱՔԱԶԱՆ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ Է ՀԱՅԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՎԱԾՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
 51
 800.000 ՕՍՄԱՆՅԱՆ ՈՍԿԵՐԴԱՄ ՇՎԵՅՏԱՐԱԿԱՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ 54
 «ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱԶԻՎ ԹԵ Ի ԶՈՐՈՒ ԼԻՆԻ ԲԱՅԵԼ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱՐԻ
 ԱՐԽԻՎՆԵՐԸ» 57
 ԷՐԶՐՈՒՄԻ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ ԷՐ ՀՐԱԿԻՐՎԵԼ ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ
 ԱՌԱՋԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ 58
 «ՓՈԽԱՆԱԿ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ ՊԱՀԱՆՁԵԼՈՒ, ՀԱՅԵՐԸ ԹՈՂ ԴԻՄԵՆ
 ԱՆԳԼԻԱՅԻՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻՆ» 59
 ԹԱՔՄԻՄԻ «ԳԵՁԻ» ԱՅԳԻՆ ԵՂԵԼ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՀԱԿՈՐ ԳԵՐԵՋՄԱՆՈՅԻ
 ՏԱՐԱԾՔ 61
 ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
 ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՐԱՄՆՈՒՍՈՒՄԸ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ 64
 ՇԻՄՈՆ ՊԵՐԵՍԸ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱՔԱՆԻ ԿԵՑՎԱԾՔ Է
 ԸՆԴՈՒՆՈՒՄ. «ՉԻ ԿԱՐԵԼԻ ԽԵՂԱԹՅՈՒՐԵԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» 64
 ԹՈՒՐՔԵՐԸ ՎԱՇԽՆԳՏՈՆՈՒՄ «ՀԱՅԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ» ՀՈՒՇԱՐՁԱՆ
 ԵՆ ԿԱՌՈՒՅՈՒՄ 65
 ԿԵՂԾՔԸ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՏՆԵԼՈՒ ԵՎ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ
 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՐՁ
 ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 66
 ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՓ Է ՍՏԱՆՈՒՄ 68
 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ
 Է 69
 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ
 ՊԱՏՄԱՔԱՆՆԵՐՆ ԵՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ 71
 ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՀԱՐՅՈՒՄ ԽՍՐԱՅԵԼԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՀԱՄԱՀՈՒՆՉ ԵՆ
 74
 «ՀԱՅԵՐԸ 518.105 ԹՈՒՐՔ ԵՆ ՍՊԱՆԵԼ» 76
 ԹՈՒՐՔԻԱՆ ՍԿԱԵԼ Է ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ՆԵՐԳՐԱՎԵԼ
 ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ 77
 ԹՈՒՐՔԻԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ԲԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՑ,
 ՆԵՐԳՐԱՎՈՒՄ Է ՆԱԵՎ ԵՐԿՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻՆ 78
 ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ
 ՆՈՐ ՀԱՅՏՆԱԳՐՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԱՆՈՒՄ 81
 ԹՈՒՐՔԻԱՆ ՓՈՐՁՈՒՄ Է ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՈՂԱՐԿԵԼ ՑԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՄԲ ... 83
 «1915-ԻՆ ՍՊԱՆՎԱԾ ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ 8.500 Է» 85
 «ԱՂԻՔԵՋԱՆՑԻ ԹՈՒՐՔԵՐԻ ԴԵՄ ՀԱՅԵՐԻ ԻՐԱԳՈՐԾԱԾ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ»
 ԹԵՄԱՅՈՎ ԹՈՒՐՔ-ԱՂԻՔԵՋԱՆԱԿԱՆ «ԳԻՏԱԺՈՂՈՎ» ԲԱՔՎՈՒՄ 87
 «ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԳՈՐԾԵԼ ԵՆ ՀԵՆՑ ՀԱՅԵՐԸ» 88
 «ԵՐԿՈՒ ՀԱՅ ԲԺԻՇԿ ԿՈՒՐԱՅՐԵԼ ԵՆ 15.000 ԹՈՒՐՔԻ» 89
 ԹՈՒՐՔԵՐԻ «ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆՉԵՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ
 ՆԿՐՏՈՒՄՆԵՐ ԱՄՆ-ՈՒՄ 91
 «ՀԱՅԵՐՆ ԱՆԱՏՈՒԹՅՈՒՄ 500.000 ԹՈՒՐՔ ԵՆ ՍՊԱՆԵԼ» 92

«ՀԱՅ ՀՐՈՍԱԿԱՆՄԲԵՐԸ 518.000 ՄԱՐԴՈՒ ԵՆ ՍՊԱՆԵԼ».....	93
«1915-ի ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՆՁՈՒԹՅԱՐ ԹՈՒՐԹԻԱՆ ԴԵՌԵՎՍ	
ԱՐԴԱՐԱՑՎԵԼ ԷՐ ՄԱԼԹԱՅՈՒՄ».....	95
«ՎԵ՛ՐՁ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏԵՐԻՆ» ԿԱՐԳԱԽՈՍՈՎ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ.....	96
«ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄՈՏ 8.500 ՀԱՅ Է ՍՊԱՆՎԵԼ».....	98
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐԹԱԿԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	102
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՉ ԹՈՒՐԹԱԿԱՆ ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....	102
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՄՈՒՄՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....	102
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԼՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐՈՎ.....	102
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԹՈՒՐԹԱԿԱՆ ԺՄՈՒՄՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԼՈՒՄ	
Է ԱՆՓՈՓՈՒՄ.....	104
ՓԵՐԻՆՉԵՔԸ ԶԵՐԲԱԿԱԿԱՆ Է ԾՎԵՅՄԱՐԻՅՈՒՄ.....	105
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐԹԱԿԱՆ ԺՄՈՒՄՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	107
ԳԻՐՔԵՐԸ.....	107
ՖՐԱՆՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՄԵՐԺԵԼ Է ԺՄՈՒՄՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ	
ՊԱՏԺԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ.....	109
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ՆԱԵՎ ԼՈՒԴՈՒՄԲԵՐԱԿ ԱՐԱ	
ՍԱՐԱՖՅԱՆԸ.....	111
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՄՈՒՄՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՕՐԻՆԱԳԻԾԸ ՆԱԽԱՁԵՂՈՒԹՅՈՒՆ	
ՆԱԵՎ ՀՈԼԱՆԴԻԱՅՈՒՄ.....	114
«ՔԱՆԻ ԴԵՌ ԹՈՒՐԹԻԱՆ ՈՒՐԱՆՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԸ, ՀԱՐՑԸ	
ԼՈՒԾՈՒՄ ԶԻ ԳՏՆԻ».....	115
ԳԵՐՄԱՆԻԱՆ ԶԳՏՈՒՄ Է ՊԱՏԺԵԼԻ ԴԱՐՁՆԵԼ ԲՈԼՈՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՈՒՐԱՅՈՒՄԸ ԵՄ-Ի ԵՐԿՐՆԵՐՈՒՄ.....	118
ԾՎԵՅՄԱՐԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԳՈՐԾ Է ՀԱՐՈՒՑԵԼ ԲՐԻՏԱՆԱՅԻ ՊԱՏՄԱՐԱՆԻ ԴԵՄ.....	119
ԼԻՈՒՆՈՒՄ «ԿԱՆԱՁԵՆԵՐԻ» ԸՆՏՐԱՅՈՒՑԱԿԻՑ ՀԱՆՎԵԼ Է ԹՈՒՐԹ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱՆՈՒՆԸ	
.....	120
ԺՄՈՒՄՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐԻ ՄՊԱՌՈՒՄԸ ՀԱՆԳԵՑՆՈՒՄ Է ԹՈՒՐԹԱԿԱՆ	
ՀԱԿԱՔԱՅԼԵՐԻ ՄՊԱՌՄԱՆԸ.....	121
ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԵՎ ԹՈՒՐԹ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԷ.....	124
«ԹՈՒՐԹԻԱՆ ԱՄՆ-ՈՒՄ ԱԵԽԱՍՎԱՐՁԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՐՁԱՏՐՈՒՄ Է	
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՄՈՒՄՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻՆ»..	126
ՊԱՏԵԱՃ ԶԷ, ՈՐ ՖՐԱՆՍԻԱՆ ՀՐԱԺԱՐԿԻ ՍԵՆԱՏԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ, ԱՌԱՎԵԼ ԵՎ՝	
ԸՆԿՐԿԻ ԹՈՒՐԹԱԿԱՆ ԱՌՁԵՎ.....	128
ՑՅՈՒՐԻԽԻ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ Է ՍԿՍԵԼ ՆԱԽԱՐԱՐ ԲԱՐՇԵՒ	
ԴԵՄ.....	130
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐԸ ԽՈՍՔԻ ԱՋԱՏՈՒԹՅԱՆ	
ՍԿՁԲՈՒՆՔԸ ԶԷ.....	132
«ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ» ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ ԹՈՒՐԹԱԿԱՆ,	
ԿՆՇԱՆԱԿԻ ԽՐԱԽՈՒՍԵԼ ԹՈՒՐԹԱԿԱՆ ԺՄՈՒՄՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	135
ՕՐԱՄԱՆ ԱԿԱՄԱ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ Է ԹՈՒՐԹԱԿԱՆ ԺՄՈՒՄՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	137
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՐԱՅՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆԱՅՆՈՂ ՕՐԻՆԱԳԻԾ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ	
ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ.....	138

ՀԱՅԱՑՅԱՑՈՒԹՅԱՆ ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ	
ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՄ.....	140
ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ, ՍԱԿ ՇԱՀԻՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ	
ՍԱՄԱԹԻԱՅԻ ԳԱՋԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	140
«ՍԱՐԻ ԱՐՁԻԿ» ԲԱՋԱՄԱԵՐԻԱՆՈՑ ՖԻԼՄԸ, ՍՅԵՆԱՐԻՍՏԻ ՊՆԴՄԱՐ, Ե՛Վ	
ՓԱՏՏԱԿԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ Է, Ե՛Վ ԱՆՁԱՌ.....	140
«ԹՈՒՐԹԵՐԻ ՆԿԱՏԱՐԱՐ ՀԱՅԵՐԻ ԻՐԱԳՈՐԾԱՆ ԵՂԵՈՒՄ» ԹԵՄԱՅՈՒՄ	
ՇԱՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ ՊՈԼՍՈՎ ԿԱՐԺԱՐԱՆՆԵՐԻՆ.....	141
«ԳՈՐԾ ԳԱՅԼԵՐԻ» ՆԵՐԿԱՅԻՍ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱՀՉԵԼԻՆ ՀԱ՛Յ Է.....	142
«ՀԱՅԵՐԻ ՊԵՍ ՓՈՔՐԻԿ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՀԵՐՈՍՆԵՐ ԶԵՆ ՈՒՆԵՆՈՒՄ».....	144
«ՀՐԵԱՆԵՐԸ ՀԱՄՈՋԱԿԱՆ ԵՆ, ՈՐ ԱՍԵՆԱՃԻՇՏԸ ԱՅԼ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՎՐԱ ԹՔԵԼՆ	
Է».....	147
«ԵԿԵՂԵՑԻՆ ՔԱՆԴԵՑԻՆ, ՈՐ ՄՁԿԻԹ ԿԱՌՈՒՑԵՆ».....	149
ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՅԵՐԸ ՎՐԱՅԻ ՍՏԱՀԱԿԻ ՀԱՄԱՐ ՔՅՆԱՆՔԻ ՄԻՋՈՑ ԴԱՌՆԱԼ.....	150
«ՈՒՆՇԵԼ ԷՆՔ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ՍՏԱՐՈՒԼԻ ՀԱՅԵՐԻ ՇՈՋԱՆՈՒՄ»..	152
«ՈՐՈՇԵԼ ԷՆՔ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ՍՏԱՐՈՒԼԻ ՀԱՅԵՐԻ ՇՈՋԱՆՈՒՄ»..	154
«ԱՊՐԻ ԻՄ ՈՐԴԻՆ, ՈՐ ՔԱՀԱՆԱ Է ՍՊԱՆԵԼ ՀԱՆՈՒՆ ՄԵՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ՄԵՐ ԱՋԳԻ ԵՎ	
ԱԼԼԱՀԻ».....	155
ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑՆՑԵԼ Է ԹՈՒՐԹ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ.....	156
ՍՏԱՐՈՒԼԻ ՈՍՏԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՅՏԻ Է ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈՐԱՑՈՒՆ	
.....	157
«ՍՏԱՐՈՒԼԸ ԵՐԲԵՎԷ ԱՅՊԻՍԻ ՀՈՒՐԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԶԻ ՏԵՍԵԼ.....	159
ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է «ԲՈԼՈՐ ՀԱՅ ԵՆՔ, ԲՈԼՈՐ ՀՐԱՆՏ»	
ԿԱՐԳԱԽՈՍԸ.....	160
«ԹՈՒՐԹ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ ԲՐԻԳԱԴԸ» ՏԵՐ Է ԿԱՆԳՆՈՒՄ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻՆ	
ՍՊԱՆՈՂՆԵՐԻՆ.....	162
«ՄԵՆՔ ԲՈԼՈՐ ՀՐԱՆՏ ԶԵՆՔ, ԻՄ ԱՆՈՒՆ ԻՆՆԱՆ Է».....	162
«ՔԻՉ ԷՐ ՄԵՆՔ ՄԱՐԿԱՊԱՆԻ ԾԱԿԱՏԸ ՀԱՐՈՒՐԵՆ».....	164
«ԲՈԼՈՐ ՏՐԱՊԵՁՆՑԻ ԵՆՔ, ԲՈԼՈՐ՝ ԹՈՒՐԹ, ԲՈԼՈՐ՝ ՕԳՅՈՒՆ ԱՄԱՄԱԹ, ԲՈԼՈՐ՝	
ԱԼԻ ԱՂՁԱ».....	165
«ՍՆ ՎԵՐՁԻՆ ՀՈՒՇԱԳԻՐՆ Է, ԶԻ ԿՐԿՆՎԵԼՈՒ».....	167
«Ի՛ՆՉ ԱՆԵՔ, ՈՐ ՉԱՆՔԱՅԱՅԻ ՊԱԼԱՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՐԸ ՀԱՅ Է ԵՂԵԼ.....	168
«ՄԱՀ ՀԱՅԵՐԻՆ».....	170
«ՎԱՐՁԱՊԵՏ ԷՐԴՈՂԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԷՐՁՐՈՒՄԸ ՀԱՆՁՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»..	171
ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՎԵՐԳՈՂ ԵՐԳՉԻ ԴԵՄ.....	172
ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՇՏՈՂՆԵՐԸ ԿԵՆԴԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ ՎԱԽԵՆՈՒՄ ԷՆ ԴԻՆՔԻՑ..	174
ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՒՆՈՒՄՆԵՐ ԱԴՐԵՋԱՆՈՒՄ.....	177
ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ԴԵՄ ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ «ԷՐԳԵՆՔՈՒՄ» ՀԵՏ	
ԻՐԱՋԵԿ ԵՆ ԵՂԵԼ ԱԴՐԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՋԱԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..	179
«ՀՈՐԵՂՈՐԸ ՍՊԱՆԵԼ ԵՆ ՀԱՅ ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԸ».....	181
«ԹՈՒՐԹ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ ԲՐԻԳԱԴ».....	182
«ՈՎՔԵ՛Ր ԵՆ ԿԱՆԳՆԱԾ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՐԵՄՈՒՄ».....	183
«ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԱՍՈՌԻ ԵՆ ՎԵՐԱԾԵԼ, ՔԱՆԴՈՒՄ ԵՆ ԳԵՐԵՋԱՆՆԵՐԸ».....	186

ՓԱԿՎԵՑ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԷՋԻ «ԲՈԼՈՐՍ ՀՐԱՆՏ ԴԻՆՔ ԵՆՔ» ԲԱԺԻՆԸ	189
ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է «ՍԱՐԻ ԱՂՋԻԿ. ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՅԻ ՄՈՒԹ ԾԱԼՔԵՐԸ»	
ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ	189
«ՍԱՐԻ ԱՂՋԻԿ» ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ԲԱԺԱՆԵԼ Է ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱՔԸ ..	192
ԹՈՒՐԹ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՓՈՂՈՑԱՅԻՆ ՍՏԱՀԱԿ	194
ԱՂԹԱՄԱՐԻ ՍԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՅԻՆ ՔԱՆԴՎԵԼՈՒՑ ՓՐԿՎԵԼ Է 1951-Ի ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ	
.....	196
ԵԹԵ ԵԿԵՂԵՅՈՒ ԲԱՅՈՒՄԸ ՄՊԱՌՆՈՒՄ Է ԹՈՒՐԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ	
ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ	198
ԹՈՒՐԹԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՎԱԿԱՆ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ	
ՀԱՄԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՑԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ	200
ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ԵՎ ՔԱՀԱՆԱ ՍԱՆՏՈՐՈՅԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈԳԵՎՈՐՈՒԹՅԱՆ	
ԱՂԲՅՈՒՐ ՏՐԱՊԻՋՈՆՈՒՄ	203
ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ՀՈՂԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ՄՊԱՆՎԱԾ ԹՈՒՐԹԱՀԱՅ	
ՋԻՆՇԱՌԱՅՈՂԸ	204
«ՄԵՎԱԿԻ ՄԻՋԱԴԵՊԸ ՈՉ ԹԵ «ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐ» Է, ԱՅԼ ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ	
ԾՐԱԳՐՎԱԾ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ»	205
«ԳՈՒՅԵ «ԳՅԱՎՈՒՐՆԵՐԻ» ՀՈՐԻՆԱԾ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՆ ԱՄԵՆ ՏԱՐԻ	
ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ՊԵՏՔ Է ՀԱՅ ՄՊԱՆԵԼՈ՞Վ ԵՇԵԼ «ԹԱՔՄԻՄ» ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ»	207
ՀԱՅԱՑԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎՈՒՄ ԹՈՒՐԹ ԱՁԳԱՅԱՄՈԼՆԵՐԻ	
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՎ	210
ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ՀԱՅՎԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ԿՈՉՈՒՄ ԵՆ ԹԱԼԵԱԹ ՓԱՀԱՅԻ	
ԱՆՈՒՆՈՎ	212
«ԲՈԼՈՐՍ ՀԱՅ ՉԵՆՔ, ՓԱՌՔ ՏԻՐՈՋԸ, ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԵՆՔ»	214
«Ի՞ՆՉ ՎԱՏ ԱՐԵՑ, ՈՐ ՄՊԱՆԵՑ ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻՆ»	214
ԹՈՒՐԹԻԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՄԵՎ ԱՁԳԻ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ	216
ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ՎԵՐՍՏԻՆ ԱՊԱՐԵՉ Է ԻՋԵԼ «ԹՈՒՐԹ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐԻ ԲՐԻԳԱԴԸ»	
.....	218
«ՎԱԽԵՆԱՄ՝ ԷՐԴՈՂԱՆԸ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԻ ՆԱԵՎ ՀԱՅԵՐԻՑ. ՀԵՆՑ ԴԱ Է	
ԴԵՐՄԻՄԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՔ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԲՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ»	220
«ԽՂՃԻ ՏԵՐ ՈՉ ՄԻ ՀԱՅ ՉԻ ԿԱՐՈՂ ԺԽՏԵԼ ԹՈՒՐԹԵՐԻ ԿՐԱԾ ՏԱՌԱՊԱՆՔԸ»	223
ԵՐԲ ԽՈՍՔԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՀԱՅԵՐԻՆ, ԹՈՒՐԹ ԳՈՐԾԻՉԸ ՉԻ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ	
ՓՈՂՈՑԱՅԻՆ ԽՈՒԺԱՆԻՑ	225
«ԻՄ ՊԱՀՏՊԱՆՅԱԼԸ ՉԻ ԱՐԱՏԱՎՈՐԵԼ ԹՈՒՐԹ ՋԻՆՎՈՐԻ ՊԱՏՎԱԲԵՐ ՀԱՄԱՁԳԵՍՏԸ»	
.....	226
«ԵՐԱՆԻ ՆՐԱՆ, ՈՎ ԻՐԵՆ ԹՈՒՐԹ Է ՀԱՄԱՐՈՒՄ»	228
ՄԱՏԱՅՈՒՑ ԵՆ ԱՐՎՈՒՄ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ,	
ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻՆ ՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ, ՈՐ ԴԱՌՆԱՆ ԽՈՒԺԱՆԻ ԹԻՐԱՆ	230
ՄԱՐԴԱՄՊԱՆ ԹՈՒՐԹ ՀՐՈՍԱԿԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻՆ Է ՊԱՏՐԱՏՎՈ՞ՒՄ	
.....	232
«ՀՐԱՆՏ ԿՈՉԵՅՅԱԼ ՏԻՊԱՐԻՆ ՎԵՐԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՏԵՐԻ ՊԱՏԺՈՒՄ ԵՆ	
ՍԱՄԱԹԻ ՊԵՍ ԵՐԻՏԱՄԱՐԴԻՆ, ԿԱՐՇԵՍ ՎԱՏ ԲԱՆ Է ԱՐԵԼ»	234
ՍԵՎԱԿ ՇԱՀԻՆԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԳՈՀԱՅՆՈՒՄ ԹՈՒՐԹ ՀՐՈՍԱԿԻՆ	236

ՀԱՅԱՑԱՑՈՒԹՅԱՆ ՊՈՌԹՎՈՒՄ	237
ՍԱՄԱԹԻԱՅԻ ՀԱՐՋԱԿՈՒՄՆԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԻ ՑՈՒՄԱՀԱՏՈՒԿ	
ՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՆ	239
«ՑԻՎՈՔ, ՄԱՐԴԻԿ ՄԵՐ ԵՐԿՐՈՒՄ ՃԻՇՏ ՉԵՆ ԸՄԲՈՆՈՒՄ ԽՈՋԱԼՈՒԻ ԿՈՏՈՐԱԾԻ	
ՃԵՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ»	242
ԱԴՐԲԵՋԱՆՅԻ ՀՐՈՍԱԿԻ ԽՆԴՐԸ ՊԱՏԵՐԱՋՄՈՒՄ ԿՐԱԾ ԽԱՅՏԱՌԱԿ	
ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԷ	244
«ԹՈՂ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵՆ ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ ԵՆ	
ՀԱՅՏՆԵԼ ՍԱՄԱԹԻԱՅԻ ՀԱՅԵՐԻՆ»	247
«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ Է ԾՆԿԻ ԻՋՆԵԼՈՒ»	248
ՀԱՅԱՑԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է	
.....	250
«ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍ ԵՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՄՏԱԾՈՒՄ ԹՈՒՐԹ ԱՁԳԻՑ	
ՎՐԵԺ ԼՈՒՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ»	252
ՎԵՐԱՓՈԽՎՈՂ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԱՅԼԵՎԱ ՉԻ ԲԱՅԱՀԱՅՏՎԻ ԴԻՆՔԻ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
.....	253
ՈՉ ԹՈՒՐԹ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ Է	
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՔ	255
«ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՇԽԱՆՈՒՄ Է»	258
ԳՐԱԽՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ	260
ԱՎԱԴԵՄԻԿՈՍ ՆԵՐՄԻՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՆԿԻՃԵԼԻՈՐԵՆ ԲԱՐՁՐ ՈՐԱԿ Է ՀԱՅ	
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ	260
ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ԹԱՐԳՄԱՆԱՔԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԵՑ «ԹԱԼԵԱԹ ՓԱՀԱՅԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ	
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ԳԻՐՔԸ	261
«ՀԱՅ ԱՁԳԻ ԱՌԱՋԱՀԵՐԹ ԽՆԴՐԸ ՀԱՅՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄ Է»	263
ՀՀ ԱՁԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՈՋ ՆԵՐԴՐՈՒՄ Է ՄԵԾ ԵՂԵՌՆԻ	
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ	265
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՅԱՌԻԿ ԺՈՂՈՎԱԾՈՒ	266
ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆԻ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ	
.....	269
ՀԱՄԱՆ ՎԱՅՖԻԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀՏՈՆԱՊԵՍ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆ	
ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՏՏԸ	271
ՖԵԹՇԻՅԵ ՉԵԹԻՆՆ ՈՉ ՄԻԱՅՆ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՒՄ Է ՄԵԾ ՄՈՐ ԴԱՌՆԱԿՍԿԻՑ	
ԱՊՐՈՒՄՆԵՐԸ	273
«ԲԵԼԳԵ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՅՍ Է ԸՆԾԱՅԵԼ ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆԻ ՆՈՐ	
ԳԻՐՔԸ	276
ՆՈՐ ԳԻՐՔ ԹԱԼԵԱԹԻ, ԷՆԿԵՐԻ ԵՎ ՋԵՄԱԼԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	278
«ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՑ. ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ» ՎԵՐԱԱԳՐՈՎ ՆՈՐ	
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԿԱՐԱՅՈՒՄ	280
ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՎԵՑ ԹԵՆՈՂԻԿԻ «ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՊՐԻԼԻ 11-Ի (24-Ի)»	
ԳԻՐՔԸ	281

Լուիզա Տեսսպ Արման Կիրակոսյանի «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1945-1946ԹԹ. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐՈՒՄ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ.....	284
«ՍԵՎ ԳԻՐՔ. ՆՇԱՆԱՎՈՐ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՈՃԻՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»	288
ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ԹՈՌԸ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....	291

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

9(97.925)
9-31 հ?

Հակոբ Չաքրյանը ծնվել է 1953թ. դեկտեմբերի 15-ին Կեսարիայում (Թուրքիա): Միջնակարգ կրթությունը ստացել է Կ. Պոլսոս հայկական վարժարաններում: 1968-ին ընտանիքով ներգաղթել է հորհրդային Հայաստան: 1970թ. ընդունվել, 1975-ին ավարտել է Երևանի պետական համալսարանը՝ ստանալով արևելագետ-պատմաբանի դիպլոմ: Նույն թվին աշխատանքի է հրավիրվել ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում: 1976-ին գործուղվել է Մոսկվա, 1978-1981թթ. եղել է ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ: 1990թ. պաշտպանել է «Փոքր Ասիայի սելջուկյան նվաճումը» առեմախոսությունը: Պատմական գիտությունների թեկնածու է: 1998թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող: 2000-2003թթ. եղել է Պատմության ինստիտուտի աշխատակիցը: 1991-ից Հ. Չաքրյանը համատեղման կարգով, որպես հիմնադիր կազմի անդամ, աշխատել է «Ազգ» օրաթերթում, իսկ 1994-ից նույն կարգավիճակով Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնում:



Մասնակցել է 1998թ. Թեհրանում Իրանի Իսլամական Հանրապետության ԱԳՆ-ի, 1999թ. մայիսին Երևանում Իրանագիտության կովկասյան կենտրոնի, 2000թ. հունիսին Փարիզում Ֆրանսիայի Սենատի նախագահի, իսկ 2001թ. մարտին Մյուխայում Գերմանիայի ԱԳՆ-ի և Ավետարանական ակադեմիայի նախաձեռնությամբ կազմակերպված միջազգային գիտաժողովներին: Չեկուցումներն արտասահմանում միաժամանակ հրապարակվել են գերմաներեն, անգլերեն և թուրքերեն:

Նրա՝ տարածաշրջանին, Հարավային Կովկասին, ռուս-ամերիկյան մրցապայքարին, Թուրքիային, Իրանին, Իրաքին, Սիրիային, արաբա-իսրայելական հակամարտությանը, դարաբաղյան հիմնահարցին և հատկապես հայ-թուրքական հարաբերություններին ու Հայոց ցեղասպանությանն առնչվող հոդվածները մեծապես արտատպվել են սփյուռքահայ թերթերում: Հ. Չաքրյանը 2005-ին «Հայոց ցեղասպանության դատապարտման ուղղությամբ ծավալած գործունեության» համար պարգևատրվել է Ֆրիտյոֆ Նանսենի ոսկյա հուշամեդալով: 2006-ին արժանացել է Թեբեյան մշակութային միության մամլո մրցանակին, իսկ 2015թ. ՀՀ պաշտպանության նախարարության «Ծովակալ Հ.Ս. Իսակով» մեդալին:

Հ. Չաքրյանը գիտական մի շարք աշխատությունների հեղինակ է, որոնց թվում կարելի է նշել «Ազգային հարցի ակունքները Թուրքիայում. բրդական շարժումը Հայ դատով հակակշռելու թուրքական միտումների ելությունը», ՌԱՀՀԿ, Եր. 1994 և «Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում», ՀՀ ԳԱԱ, Եր. 1998 աշխատությունները: Ունի հոդվածներ՝ հրապարակված Մոսկվայում, Թբիլիսիում և Ստամբուլում: Նա ներկայումս աշխատում է Կովկաս-կասպյան տարածաշրջանի բնիկ ժողովուրդների ինստիտուտում:

